ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW

ՊԷՅՐՈՒԹ, 2006

Յատուկ շնորհակալութիւն՝
Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան,
որուն նիւթական օժանդակութեան շատ բան կը պարտի
այս հատորին հրատարակութիւնը

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՀԱՏՈՐ ԻԶ.



ՊԷՅՐՈՒԹ, 2006

PUBLISHED BY THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN UNIVERSITY

HAIGAZIAN
ARMENOLOGICAL REVIEW
VOLUME 26



BEIRUT, 2006

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐԹԸ, ՈՐ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Պէյրութի մէջ, 35 տարիներ առաջ լոյս տեսած *Հայկազեան Հայագիտական Հանդէսը* շուտով դարձաւ Սփիւռքի փնտռուած հայագիտական հրատարակութիւններէն մին:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին պարտադրած ընդհատումէն ետք, 1991ին, Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնին շուրջ բոլորուած հայագէտներու խմբակ մը, Համալսարանի տնօրէնութենէն քաջամղուած, ձեռնարկեց արդէն քսանամեայ աւանդ ունեցող *Հանդէսի* վերահրատարակումին:

Խմբագրական կազմը համալրուեցաւ նոր անդամներով ու այսպէս ապահովուեցաւ սերնդափոխութիւնը: Ապա ստեղծուեցաւ Խորհրդատու Մարմին մը, իսկ Հայաստանի մէջ՝ մնայուն ներկայացուցչութիւն. *Հանդէսի* հերթական հատորներուն նուիրուած շնորհանդէսները Երեւանի մէջ առիթ հանդիսացան, որ հայրենի հայագէտներու ընդարձակ խումբ մը բոլորուի *Հայկազեան Հայագիտական Հանդէսի*ն շուրջ: Նաեւ համակարգչային ու հաղորդակցութեան արդի միջոցներու օգտագործումով կանոնաւոր կապ հաստատուեցաւ արտասահմանի եւ հայրենիքի հայագիտական կեդրոններու եւ անհատ հայագէտներու հետ: Այս բոլորը աւելի՛ նպաստեցին *Հանդէսի* համահայկական բնոյթին եւ Սփիւռք-Հայրենիք կապերուն:

Կազմակերպչական այս զարգացումներուն առընթեր, ժառանգուած աւանդը եւս տակաւ ուռճացաւ: Ապահովուեցաւ նիւթերու բազմազանութիւնը եւ առաւել գիտականութիւնը, շեշտուեցաւ բազմակարծութիւնը, ասպարէզ տրուեցաւ նորանոյն հեղինակներու: Այս զարգացումները, որոնք հասունացումն էին խմբագրականներուն ընդմէջէն արտայայտուած սկզբունքներուն եւ համոզումներուն, նպաստեցին *Հանդէսի*ն բովանդակութեան աճին, եւ ուրոյն ուղի գծեցին *Հայկազեան Հայագիտական Հանդէսի*ն:

Կը համարինք, թէ այսպէս *Հանդէսը* յաջողեցաւ դրսեւորել հայագիտութեան նոր մօտեցում մը, որ կը կայանայ զայն իր աւանդական սահմանումէն դուրս բերելուն եւ այժմէականացնելուն մէջ:

Այսուհանդերձ, *Հայկազեան Հայագիտական Հանդէսը* տակաւին երկար ճամբայ ունի նուաճելիք: Չգտնումը յաւելեալ բարձրորակութեան, հետեւողական պայքարը միջակութեան դէմ, Սփիւռքի հայագաղութներու կեանքի այլազան երեսակներու համակարգուած ուսում-

նասիրութիւնը, Միջին Արեւելքի մէջ հայագիտութեան հաստատութենականացումը մարտահրաւէրներ են, որոնք պէտք է իմաստութեամբ դիմագրաւել: Նման առաջադրութիւն մը, իբրեւ նախաքայլ կը պահանջէ հայագիտութեան գիտա-հետազօտական հումքի՝ արխիւային, վիճակագրական, մատենագիտական պաշարի գիտական մշակում եւ մատչելիութիւն:

Հանդէսը հայոց պատմական մշակոյթի գիտատեսական քննութիւնը կարեւորագոյն միջոցը կը նկատէ ազգի ինքնաճանաչողութեան: Անոր իրականացումը կ'երաշխաւորէ հայապահպանման ռազմավարութիւնը՝ ի խնդիր ինքնութեան հաւատարմութեան ու ապագայի յանձնառութեան:

Հայկազեան Հայագիտական Հանդէսը կը հաւատայ, թէ այս իրագործումներով հայագիտութիւնը պիտի դառնայ ազգային էութեան հիմնատարրերը բիւրեղացնող կենսական գործօն եւ ազգային մշակոյթի իւրօրինակ մարտկոց: Նման մօտեցումով, հայագիտութիւնը պիտի շարունակէ յաւելեալ կամուրջներ յառաջացնել այլ ժողովուրդներու ազգագիտութեան հետ, միջ-ազգային հասարակագիտութեան քարտէսին վրայ ամրագրելով հայագիտութիւնը:

Այս յանձնառութեամբ *Հայկազեան Հայագիտական Հանդէսը* կը շարունակէ իր երթը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կոանեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Արտա Էքմէքճի (ի պաշտօնէ) - Արշալոյս Թոփալեան - Արմէն Իւրնէչլեան - Անդրանիկ Տագէսեան (պատասխանատու քարտուղար)

ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐՈՒ ՄԱՐՄԻՆ
Սիլվիա Աճէմեան - Ժիրայր Դանիէլեան - Երուանդ Երկանեան - Հրանոյշ Խառատեան - Մուրատ Հասրաթեան - Հրաչ Չիլինկիրեան - Մկրտիչ Յ. Պուլտուքեան - Սեդա Տատոյեան - Սիւզըն Փեքի - Պերճ Ֆազլեան

Հայաստանի մէջ ՀՀՀի ներկայացուցիչ՝ Արծուի Բախչինեան

EDITORIAL

THE TRACK THAT IS CONTINUING

The *Haigazian Armenological Review* was launched in Beirut 35 years ago. In a few years it became one of the highly sought after Armenological magazines.

After the interruption forced by the Lebanese civil war, in 1991 a group of Armenologists gathered around the Armenian Department of Haigazian University, prompted by the University administration, resumed the publication of the *Review*, which already had a twenty-year tradition.

In the past few years the editorial board has added new members who complement the old and represent the new generation. An Advisory Body has been formed and permanent representation has been established in Armenia. The launching ceremonies of the *Review* in Yerevan gave a large group of Armenologists in Armenia the chance to gather around the *Review*. Moreover, recent developments in the fields of computer technology and communications have enabled the *Review* to maintain systematic relations with Armenological centers in Armenia and the Diaspora, as well as with individual Armenologists. All these have further enhanced the pan-Armenian nature of the *Review* and its role in Diaspora-fatherland relations.

In line with these organizational developments, the Armenological legacy has grown. Both the scientific aspect and variety of articles have been maintained, pluralism has been accentuated and a venue has been offered to new contributors. These developments are the reflection of the ripening principles and beliefs that have been expressed through the editorials. They have contributed to the growth of the contents of the *Review* and put the *Haigazian Armenological Review* on a unique track.

We believe that, the *Review* has succeeded in exhibiting the new approach of Armenology, which conceptualizes Armenology as going beyond its traditional limits and makes it more contemporaneous.

Nevertheless, the *Haigazian Armenological Review* still has a long way to go. The drive for articles of higher quality, the steady fight against mediocrity, the systematic study of diverse aspects of the life of the Diaspora communities, and the institutionalization of Armenology in the Middle East are challenges that need to be wisely addressed. As a first step, such an undertaking requires the classification and accessibility of the archival, statistical, and bibliographical raw material pertaining to Armenology.

The *Review* is well aware that the scientific and theoretical examination of Armenian heritage is the most important means for the self-recognition of the nation. Realization of the steps listed above empowers the strategy of Armenian survival and identity and commitment to the future.

The *Haigazian Armenological Review* believes that by implementing these, Armenology will become an essential factor in crystallizing the core matters of the national substance. It will become a unique battery of national culture. With such an approach Armenology will continue to establish further bridges with the social and humanities studies of other nations and consolidate Armenology on the international map of social sciences.

With such an undertaking the *Haigazian Armenological Review* proceeds on its way.

EDITOR IN-CHIEF
The Very Rev. Father Antranik Granian

EDTORIAL BOARD
Antranik Dakessian (executive secretary) – Arda Ekmekji (ex-officio) – Arshalouyse Topalian – Armen Urneshlian

CONSULTATIVE BODY
Sylvia Agemian – Megerditch H. Bouldoukian – Seta B. Dadoyan – Berj Fazlian – Murad Hasratian – Hranush Kharatian – Susan Pattie – Jirayr Tanielian – Hratch Tchilingirian – Yervand Yerkanian

The Representative of the *Haigazian Armenological Review* in Armenia: Artsvi Bakhchinyan

PHILOLOGICAL CONSIDERATIONS REGARDING THE ARMENIAN TRANSLATION OF JOHN CHRYSOSTOM'S *LETTER TO THEODORE*

ANDREA SCALA
silvasc@tin.it

In 1966, after a long examination of the Greek textual tradition, J. Dumortier produced a critical edition of John Chrysostom's *Letter to Theodore* and of its old Latin translation.[1] The rich and detailed philological studies of Dumortier about the text of the *Letter*[2] seem however to ignore the existence of an old Armenian translation which, because of its antiquity, can be considered a very interesting source for the history of the Greek text. The Armenian text of the *Letter* was published in 1861 in Venice by the printing press of S. Lazzaro. The edition does not contain the name of the editor.[3]

The Armenian translation is preserved in six manuscripts: Matenadaran (Mat.) 989 (1198 A.D.), the Library of the Armenian Patriarchate of St. James, in Jerusalem (Jerus.) 972 (1714 A.D.), Mat. 9787 (1735 A.D.), Jerus. 62 (1849 A.D.), the Mekhitarist Monastic Library of Venice-San Lazzaro (S. Lazzaro) 71 (1846 A.D.) and the Mekhitarist Monastic Library of Vienna 232 (1851 A.D.). On the base of personal investigations, I can assert that the manuscript Mat. 989 is the *archetypus* of all other known manuscripts, which have been copied directly or indirectly from it.[4]

In the following pages I will present some philological evidence of a comparative analysis of the Armenian text with the Greek manuscript tradition in order to show the philological position of the Armenian translation as regards the Greek manuscripts.

1. THE GREEK MANUSCRIPTS AND THEIR FAMILIES

As it is well known, John Chrysostom (ca 345-407) was bishop of Constantinople (397-403) and a writer of exquisite eloquence. He ended his days in exile at the feet of the Caucasus. His works (especially the exegetical writings, the treaties on the ascetic life and the homilies) were well known during the whole of the Greek Middle Age, and many of them were translated into other languages (Syriac, Armenian, Latin, Arabic, Georgian) not long after his death. Also his *Letter* seems to have been highly regarded during the Greek Middle Age. Dumortier has been able to find the following 28 codices prior to the XV century[5]:

A *Parisinus graecus* 814 (XI saec.)
B *Basileensis* B II 15 gr. 39 (IX saec.)
C *Parisinus graecus* 801 (XI saec.)
D *Laurentianus* IX 35 (XI saec.)
E *Stavronikita* 25 (XI saec.)
F *Berolinensis* gr. 35 *Phill.* 1439 (XI-XII saec.)
G *Berolinensis* gr. 94 *Phill.* 1442 (XII-XIII saec.)
H *Taurinensis Bibl. nat.* 89 (X-XI saec.)
I *Marcianus* 565 (XI saec.)
K *Marcianus App. gr.* II 27 (XI saec.)
L *Laurentianus IX 22* (X saec.)
M *Vaticanus graecus* 565 (XI saec.)
N *Vaticanus graecus* 566 (XI saec.)
O *Vaticanus graecus* 568 (XI saec.)
P *Parisinus graecus Coislin* 245 (XI saec.)
R *Panteleimon* 768 (XIII saec.)
S *Vaticanus graecus* 1628 (XI saec.)
T *Vaticanus graecus* 1629 (XI saec.)
V *Vaticanus graecus* 1639 (XI saec.)
W *Moscoviensis Bibl. synod. III* (X saec.)
d *Vatopedinus* (Mons Athos) 336 (XII-XIII saec.)
h *Marcianus* 108 (XIV saec.)
m *Vaticanus graecus* 567 (XIV saec.)
o *Vaticanus graecus* 571 (XIV saec.)
p *Palatinus* (*vat. gr.*) 228 (XIII-XIV saec.)
r *Parisinus graecus* 816 (XIV saec.)

v *Vaticanus graecus* 1645 (XI saec.)
w *Vatopedinus* 116 (XIV saec.)

The meticulous studies of Dumortier have permitted him to individuate three families of manuscripts, whose definitions are based on common errors and common lacunas. Here are the three families individuated by Dumortier:[6]

fam. *x*	codd. B I N S V m p v
fam. *y*	codd. A C D E F G K L M P R W d o w
fam. *z*	codd. H O T h r

2. THE PHILOLOGICAL POSITION OF THE ARMENIAN TRANSLATION

The systematic comparative examination of the Armenian translation with the Greek text permits us, through a work of interlinguistic hermeneutics,[7] to define in a sufficiently clear way the position of the translation as regards the Greek manuscript tradition.

In a high number of conflict cases among the Greek manuscripts, it is possible to establish with precision which reading is postulated by the Armenian translation. In a small number of other cases, it is not possible to determine it with a high degree of certitude.

The computation of the concordances between the Armenian translation and each Greek codex has been made in two ways: 1) a computation with inclusion of the common omissions, whose independence is always possible, but not very likely; 2) a computation with exclusion of the common omissions. These two computations do not give very different results.

In a not negligible number of cases, the Armenian translation presupposes a text which does not find correspondences in any known Greek manuscript and can not be explained by misreading or special choices of the translator.

Here are the detailed results of the systematic comparison between the Armenian translation and Greek manuscripts:[8]

The Armenian translation agrees:

with B 195 cases	with A 169 cases	with H 156 cases
with I 174 cases	with C 145 cases	with O 156 cases
with N 172 cases	with D 170 cases	with T 169 cases
with S 184 cases	with E 173 cases	with h 157 cases

with V 172 cases	with F 180 cases	with r 157 cases
with m 174 cases	with G 172 cases	
with p 172 cases	with K 171 cases	
with v 177 cases	with L 171 cases	
	with M 163 cases	
	with P 165 cases	
	with R 173 cases	
	with W 174 cases	
	with d 115 cases	
	with o 173 cases	
	with w 173 cases	
fam. *x* average	fam. *y* average	fam. *z* average
177,5 cases	171,30 cases[9]	159 cases
62.50 %	60.31 %	55.95 %

with exclusion of the common omissions:

with B 143 cases	with A 120 cases	with H 120 cases
with I 120 cases	with C 104 cases	with O 121 cases
with N 133 cases	with D 121 cases	with T 124 cases
with S 130 cases	with E 125 cases	with h 125 cases
with V 133 cases	with F 130 cases	with r 122 cases
with m 130 cases	with G 123 cases	
with p 128 cases	with K 130 cases	
with v 123 cases	with L 122 cases	
	with M 114 cases	
	with P 118 cases	
	with R 132 cases	
	with W 124 cases	
	with d 82 cases	
	with o 124 cases	
	with w 124 cases	
fam. *x* average	fam. *y* average	fam. *z* average
130 cases	123,61 cases[10]	122,4 cases
62.80 %	59.71 %	59.13 %

According to this evidence, the Armenian translation seems to have a moderate preference for the readings of fam. *x* and, among the codices of

that family, especially for B, with which the highest number of cases agree (195 cases, 68.66% with inclusion of the common omissions, 143 cases 69.08% with exclusion of the common omissions).

Obviously it is not correct to state *tout court* that the Armenian translation has sprung from an unknown codex of fam. *x*, because it is possible to document some cases in which the translation agrees exclusively with fam. *z* or with only one codex of that family: cfr. arm. զիւր պատիւն (20,8) = τὴν οἰκεῖαν ἀξίαν (3,13) 'his own honor': h only conserves this variant. The textual sequence զի իւրաքանչիւր ոք առնու մարմնով զգործեցեալսն երբ բարի եւ երբ չար (19,3-4) supposes ἵνα ἕκαστος κομίσηται τὰ διὰ τοῦ σώματος πρὸς ἃ ἔπραξε εἴτε ἀ γαθόν, εἴτε κακόν 'in order that everyone obtains the actions made with the body, both good actions and bad actions' which is present only in HOhr.

The preference of the translation for B is based on 13 cases of exclusive concordance with this manuscript, but it is possible to find 14 cases in which the Armenian translation agrees with all manuscripts, except B: τῶν κόπων (2,48) '...of the efforts, of the works' is present in all manuscripts except B, which has τῶν κακῶν '...of the evils'. The translation with աշխատութեանց (19,24) '... of the works' rejects the variant of B.

The philological evidence seems to show the eclecticism of the Armenian translation, which does not reflect the image of any known Greek manuscript and seems to be based on a codex not very far from B and from fam. *x*, but which had 91 cases unknown to B and 10 unknown to fam. *x*.

The tradition on which the Armenian translation is based looks more ancient than the formation of the three families identified by Dumortier. Therefore, the Armenian translation conserves a textual phase not attested in the Greek manuscripts.

An interesting example, in order to illustrate what we are saying, could be the following: in the first chapter of the *Letter* (1,29) we find that the Greek manuscripts are divided between the two variants ἐξέβης and ἐξῆλθες, two verbal forms having the same meaning, 'you (2nd sing.) went out'. The Armenian translation with արտաքսեալ ընդեցար (17,31) "you (2nd sing.) were thrown out" does not agree with any of the two Greek variants and supposes the reading ἐξεβλήθης "you were thrown out". In

fact, the Greek form postulated by the Armenian translation could be considered as an archetypical form of the two variants ἐξέβης and ἐξῆλθες. It is possible to consider ἐξέβης and ἐξῆλθες corruptions of an older reading ἐξεβλήθης, but it is not plausible to think the contrary. Indeed, the reading ἐξεβλήθης is *lectio difficilior* than ἐξέβης and ἐξῆλθες. Here the Armenian translation conserves a phase of the Greek tradition which is not attested in the surviving Greek manuscripts, but which is credible as the source of the two variants which are testified by the Greek codices.

The independence from the different families of the Greek manuscript tradition is incontestable in those cases in which the Armenian translation conserves some textual reductions unknown to all Greek manuscripts. Here are two examples: Arm. զերկրորդ նաւարկութիւնն առնուլ (17,17-18) 'he obtains the second navigation' supposes τὸν δεύτερον ἀνακταται πλοῦν; the Greek manuscripts, with very small variants, have τὸν πρότερον ἀνακτᾶται πλοῦτον (1,15-16) 'he obtains the former wealth'. Only B knows the nearer variant τὸν πρότερον ἀνακτᾶται πλοῦν 'he obtains the former navigation'; Arm. ի վերայ իրերաց (24,27) 'one on another' postules ἐπ' ἀλλήλοις instead of the not very clear ὑφάλοις (5,31), in the textual sequence τοὺς δὲ ὑφάλοις προσαράσσοντας (5,31).

3. THE PHILOLOGICAL VALUE OF THE ARMENIAN TRANSLATION

The philological analysis of the Armenian translation of John Chrysostom's *Letter to Theodore* allows us to find concrete elements to substantiate the antiquity of the translation. Those elements can be useful in discussing and confuting the information of two identical colophons (Mat. 9787, XVIII century and Jerus. 972, XVIII century,[11] but the probably common *antigraphus* was much more ancient), which attribute the translation of the *Letter* to Nersēs Lambronac'i (XII century). Nersēs was probably just the buyer of the ms. Mat. 989, the *archetypus* of all known Armenian manuscripts containing the *Letter*.

Since the 1960s, the importance and the philological value of the old Armenian translations for the investigations regarding the history of the Greek texts has been demonstrated. In this case, too, the Armenian translation of John Chrysostom's *Letter to Theodore*, because of its

antiquity and especially because of its independence from the different families of conserved Greek manuscripts, can make a noteworthy contribution to the study of the Greek text and of its history. Among the many interesting examples of philological evidence which the Armenian translation contains, of special value are some readings conserved by the Armenian text but lost in the whole known Greek manuscript tradition.

ENDNOTES

[1] Jean Chrysostome, *A Théodore*, introduction, texte critique, traduction et notes par J. Dumortier, Sources Chrétiennes 117, Éd. du Cerf, Paris 1966.

[2] J. Dumortier, "De Quelques Principes d'Ecdotique Concernant Les Traités De Saint Jean Chrysostome," *Mélanges De Science Religieuse*, IX (1952), pp. 63-72; Idem, "La Tradition Manuscrite Des Traités A Théodore," *Byzantinische Zeitschrift*, LII (1959), pp. 265-275; Idem, "L'Ancienne Traduction Latine De l'Ad Theodorum," *Studia Patristica* vol. VII, Berlin 1966, pp. 178-183.

[3] *Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսեցւոյ Եպիսկոպոսապետի, Ճառք, ի Վեհեսիկ ի վանս Սրբոյն Ղազարու* 1861, pp. 17-26.

[4] A. Scala, "L'Antica Traduzione Armena Della Lettera A Teodoro Di Giovanni Crisostomo," *Ricerche Linguistiche E Filologiche*, Alessandria 2005, chapter 2.

[5] Cfr. J. Dumortier, "La Tradition Manuscrite," pp. 265-275 and especially Chrysostome, *A Théodore*, p. 29. Interesting for general considerations about the critical editions of John Chrysostom's works: Dumortier, "De Quelques Principes."

[6] Chrysostome, *A Théodore*, p. 29.

[7] For methodological references cfr.: G. Bolognesi, "La Traduzione Armena Dei "Progymnasmata" Di Elio Teone," *Rendiconti Dell' Accademia Nazionale Dei Lincei*, Classe Di Scienze Morali, Storiche E Filologiche, 1962, serie VIII, vol. XVII, pp. 86-125 e pp. 211-257; Idem, "Traduzioni Armene Di Testi Greci," *Studia Classica Et Orientalia Antonino Pagliaro Oblata*, Roma 1969, I, pp. 219-291; Idem, "Note Sulla Traduzione Armena Delle "Leggi" Di Platone," *Chaiers Ferdinand De Saussurre*, XXXI (1977), pp. 47-56; Idem, "Grecismi Velati Da Apparenze Armena," *Scritti In Onore Di Alberto Grilli*, in *Paideia*, XLV (1990), pp. 23-30; B. Coulie, "Style E Traduction: Réflexions Sur Les Versions Arméniennes De Textes Grecs," *Revue Des Etudes Arméniennes*, n. s. XXV (1994-1995), pp. 43-62; G. Fermeglia, "Studi Sul Testo Delle Due Versioni (Slava E Armena) Dello "Hexaemeron" Di Giorgio Pisida," *Memorie Dell' Istituto Lombardo*, Accademia di Scienze e Lettere, Classe di Lettere, XXVIII (1964), pp. 227-333; R. B. Finazzi, "La Versione Armena Del Minosse," *Rendiconti Dell'Istituto Lombardo*, Classe di Lettere, Scienze morali e storiche, CXI (1977), pp. 27-34; Idem, "Una Traduzione Armena Di Platone," *Autori Classici In Lingue Del Vicino E Medio Oriente*, Atti del III, IV e V seminario sul tema: "Recupero Di Testi Classici Attraverso Recezioni In Lingue Del Vicino E Medio Oriente," Roma 1990, pp. 65-75. The most important studies of prof. G. Bolognesi about the Armenian translations of Greek texts have now been collected in: G. Bolognesi, *Studi E Ricerche Sulle Antiche Traduzioni Armene Di Testi Greci*, Alessandria 2000.

[8] There are 284 useful cases (207 with exclusion of the common omissions).
[9] Mss. Cd have been not included in the computation, because they are fragmentary.
[10] Mss. Cd have been not included in the computation, because they are fragmentary.
[11] *Մաշտոց Յուցակ Ձեռագրաց Մրբոց Յակոբեանց*, հատոր Գ, *Երուսաղէմ*, 1968, pp. 548-556.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԹՈՒՂԹ ԱՌ ԹԷՈԴՈՐՈՍԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

(Ամփոփում)

ԱՆՏՐԷԱ ՍՓԱԼԱ

Այս յօդուածին մէջ Անտրէա Սքալա ի յայտ կը բերէ բանասիրական կարգ մը տուեալներ՝ հաստատելու համար հայերէն թարգմանութեանց տեղը՝ յունական բնօրինակներուն դիմաց։

Այս ծիրին մէջ, Սքալա կը հաւաստէ թէ պահպանուած են Յովհաննէս Ոսկեբերանի Թուղթ Առ Թէոդորոսի հայերէն վեց ձեռագիր թարգմանութիւններ, որոնց հնագոյնը Մատենադարանի 1198 թուականի ձեռագիրն է։

Հեղինակը այս պարագային եւս բնագրային բաղդատութեան դնելով Ոսկեբերա-նի Թուղթ Առ Թէոդորոսի հայերէն թարգմանութիւնները յունարէն բնօրինակներու հետ, կ՝ապացուցէ որ հայերէն թարգմանութիւնը կրնայ յաւելեալ նպաստ մը բերել յունական բնագրի ուսումնասիրութեան եւ անոր պատմութեան։

ՇԻՐՈՒԱՆ ՏԵՂԱՆՈՒԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

ՏՈՐՔ ԴԱԼԱԼԵԱՆ
torq@frenet.am

Ժամանակակից Ադրբեջանի Հանրապետութիւնը (ԺԱՀ), ընդհուպ մինչեւ Ի. դարի սկզբները, առաւելապէս յայտնի էր Առան եւ Շիրուան անուններով։ Առանը հնագոյն Աղուանք երկրի միւս անուանումն է, իսկ Շիրուանը սկզբնապէս մի փոքրիկ երկրամաս էր Կասպից Ծովի արեւմտեան ափին՝ Գիլգիլ-Չայ եւ Շաբրան-Չայ գետերի միջեւ։

Շիրուանի հնագոյն յիշատակութեանը հանդիպում ենք Ի. դարի Աշխարհացոյցում։ Ըստ այդ աղբիւրի՝ «Եւ ապա Կասկաս բաժանի յերկուս բազուկս, մինն գնայ դէպ ուղիղ կոյս, յորում Շրուան եւ Խսրուան ազգ՝ մինչեւ գԽորսվէմ։ Եւ միւս բազուկն արձակէ նախ վտակ մի զԱրմ գետ, որ դէպ ուղիղ հիւսիսի՝ յԱթլ գետ»[1]։

Այսպիսով, Շրուան երկրամասը (երբեմն կոչուած նաեւ Շարուան) սահմանակից էր Խսրուան երկրամասին, որոնց բաժանում էր Գիլգիլչայ գետը։ Շրուանն ընկած էր Գիլգիլ գետից հիւսիս, եւ նրա կենտրոնը նոյնանուն՝ Շրուան քաղաքն էր, որը համապատասխանում է ներկայիս Շարուան գիւղին՝ Շաբրանի մօտերքը[2]։ Իսկ Խսրուան ազգագաւառը տարածւում էր Գիլգիլ գետից դէպի հարաւ՝ մինչեւ Սումգայիթ գետը։ Խսրուանի կենտրոնը Խայզան ամրոցն էր (خيزان), որը Շաքիի եւ Բար քաղաքի (= Դերբենտ) հետ միասին յիշատակւում է Թ. դարում՝ որպէս Հայաստանի (Արմինիա) մի մաս[3]։ Խայզանը ներկայիս Խըզը թաթարնակ գիւղն է. այս բնակավայրի անունով յաճախ Ապշերոնի (Սումգայիթի) չրջանը կոչուել է Խըզըի (Khizinskii Rayon)։

Ինչ վերաբերում է վերոյիշեալ Խորսվէմին (Խորսվէմ), ապա դա մեծ պարիսպ էր, որն արաբների կողմից յետագայում կոչուեց Խուրսանի պատուար։ Այն գտնւում էր Գիլգիլ գետի ձախ ափին եւ սահմանազատում էր Շրուանը Խսրուանից[4]։

Յատկանշական է, որ դեռեւս Դ. դարի 30ականներին՝ մասկութների նչանաւոր արչաւանքի ժամանակ, Շրուան եւ Խսրուան ազգագաւառները (կամ ինչպէս Աշխարհացոյցում է գրուած՝ ազգերը) բոլորովին չեն յիշատակւում։ Ե. դարի մատենագիր Փաւստոս Բուզանդի հաղորդմամբ՝ «Յայնմ ժամանակի թագաւորն Մազքթաց Սանէսան անհնա-

րին նիւթեաց զսրտմտութիւն ոխութեան ընդ իւրում ազգակցին Խոսրովու արքային Հայոց, եւ գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց եւ Փոխաց, Թաւասպարաց, Հեճմատակաց, Իժմախաց, Գաթաց, Գղուարաց, Գուգարաց, Շղրաց եւ Ճղրաց եւ Բաղասճաց եւ Եգերսուանաց, եւ այլոց խառնաղանճ բազմութեամբ անթիւ անբնակն վաչկատուն զօրութեանց, որում մի անգամ ինքն իշխէր զօրացն բազմաց: Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, եւ եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհին»[5]:

Ինչպէս տեսնում ենք՝ մասկութների արքայ Սանեսան Արշակունին միաւորել էր Կուր գետից այն կողմ գտնուող բազմաթիւ կովկասեան ցեղերի, բայց նրանց մէջ Շրուան եւ Խսրուան անուններով ցեղ կամ երկրամաս չկայ: Սա տեղիք է տալիս կարծելու, որ աւելի ուշ ժամանակներում յայտնուած Շրուան եւ Խսրուան անունները զուտ աշխարհագրական եզրեր են եւ որեւէ էթնիկ իմաստ չեն պարունակում, կամ էլ առնուազն Դ. դարում այդ գաւառները ունէին այլ էթնիկ կազմ եւ բնակեցուած էին այլ ցեղերով, քան, ասենք, է. դարում: Մասնաւորապէս, միանգամայն հաւանական է, որ Սանեսանի օրօք Շրուան եւ Խսրուան գաւառները բնակեցուած էին շղրաց եւ ճղրաց կովկասեան ցեղերով, որոնց, ի դէպ, յիշատակում են նաեւ յունահռոմէական պատմագիրները Ա. դարում (Σιλβιου/Silvii անուամբ)[6]:

Մասկութների հայկական արշաւանքից մէկ հարիւրամեակ անց՝ Ե. դարում, արդէն յիշատակւում է Խրսան տեղանունը, որը երբեմն համարւում է Խսրուան տեղանուան մի տարբերակ. այն հաղորդում է Ե. դարի պատմիչ Եղիշէն՝ Վասակ Սիւնու ապստամբութեան առնչութեամբ: Ըստ Եղիշէի՝ Վասակը հայոց քրիստոնէամէտ նախարարների հետ դաշինք կնքած հոների ճանապարհը փակելու համար նրանց դէմ հաւաքեց Արեաց (= պարսից) այրուձին, իսկ այնուհետեւ «յղէր եւ կոչէր գունդս բազումս ի պահակն Ճորայ, եւ զՎրաց աշխարհն բովանդակ անդ գումարէր, զզօրսն Լփնաց եւ զՃղրաց, եւ զՎատն, զԳաւն եւ զԳղուարն եւ զԽրսանն եւ զՀեճմատակն, զՓասխն եւ զՓոսխն, եւ զՓիւրսան եւ զամենայն զօրսն Թաւասպարանն, զլեռնայինն եւ զդաշտայինն, եւ զամենայն ամրակողմն լերանցն»[7]:

Եթէ ընդունենք, որ հայ հեղինակները նշուած ցեղերին թուարկել են աշխարհագրական հերթականութեամբ (ինչը շատ հաւանական է), ապա Բուզանդի, Եղիշէի եւ է. դարի պատմիչ Մովսէս Կաղանկատուացու յիշատակած լեռնական ժողովուրդների տարածքները հարաւից հիւսիս

յաջորդաբար դասաւորելու դէպքում՝ ստանում ենք հետեւեալ համապատասխանութեան պատկերը.

Բուզանդ (Եգերսուանք)	Եղիշէ (Վիրք)	Կաղանկատուացի (Աղուանք)
1. Բաղասիճք	1. Լփինք	1. Լփնացիք
2. Ճիղրք	2. Ճիղրք	2. Ճիղրք
3. Շիղրք	3. Վատ(ն)	3. Վարդեգրուակ (լեռ)[8]
4. Գուգարք	4. Գաւ	(?) 4-7. Չորայ
5. Գղուարք	5. Գղուար	
6. Գաբք	(?)6-7. Խրսան	
7. Իժմախք		
8. Թաւասպարք	8. Փասխ (Թաւասպարան)	
9. Փոխք	9. Փոսխ (Թաւասպարան)	
10. (Հոնք)	10. Փիւքռա (Թաւասպարան)	

Համաձայն բերուած աղիւսակի՝ Խրսան ազգագաւառը պէտք է որ գտնուէր Ճիղրքից (յետագայի Շրուանից) բաւական դէպի հիւսիս, եւ ոչ թէ հարաւ, ինչպէս ունենք Խսրուան գաւառի դէպքում։ Եղիշէի Խրսանը, հաւանաբար, իր մէջ միաւորում էր գաբ եւ իժմախ ցեղերի տարածքները եւ տեղադրուած էր Մասկթաց (Չորա) երկրի հիւսիսում՝ Թաւասպարանի սահմանների մօտ։ Հրանուշ Խառատեանը Խրսան տեղանունը նոյնացնում է Դաղստանում ապրող ռուտուլների՝ ցայսօր պահպանուած Խրրսան բնակավայրի անուան հետ[9]։ Հետեւաբար, վերոնշեալ վկայութեան մէջ կա՛մ գործ ունենք այլ տեղանուան հետ, որը բոլորովին էլ Խսրուանի աղճատուած տարբերակը չէ, կա՛մ էլ Եղիշէի նշած Խրսանում բնակուող ցեղը յետագայում տեղաշարժուել է դէպի հարաւ եւ իր «երկրի» անունը տուել նախկին Լփնաց «երկրին»։

Հետաքրքիր է, որ Կաղանկատուացին Խսրուանի եւ Շրուանի տարածքները կոչում է համապատասխանաբար Լփինք եւ Ճիղրք. այսպէս է Կաղանկատուացին նկարագրում Զ. դարում Աղուանից եպիսկոպոսի երթուղին դէպի Դերբենտ. «անցանէին ընդ գետն մեծ Կուր, հատեալ անցանէին ընդ սահմանս Աղուանից ... Գային հասանէին ի քաղաքն Լփնացւոց ... Եւ անտի գնացեալ անցանէին յաշխարհն Ճղրաց առ ստորոտով լերինն մեծի ...եւ նոքօք հանդերձ ելեալ ի լեառնն, որում Վարդէգրուակ անուն էր ... Որ եւ անտի յետ աւուրց ինչ հասանէին ի դուռն Չողայ [տարբերակ՝ Չորայ], որ է մերձ ի Դարբանդ»[10]։

ԺԹ. դարավերջին այս երկրամասերն այցելած Մակար վարդապետ Բարխուտարեանցը, հետեւելով կաղանկատուացուն, Խսրուան գաւառը կոչում է Լփնաց, իսկ Շրուան գաւառը՝ Ճղրաց. Բարխուտարեանցը գրում է, որ «Լփնաց ցեղն բնակում էր Սուղայիդ [= Սումգայիթ] եւ Դաւաչի [=Գիլգիլ-չայը Դիւիչիի շրջանում] գետերի մէջ եւ Կովկասեան սարի հիւսիսահայեաց լանջերի վերայ», իսկ «Ճղրաց ցեղն բնակում էր Դաւաչի եւ Ղուբա կոչուած գետերի եւ ծովի միջավայրում եւ լեռնամասում»[11]:

Ինչպէս տեսնում ենք, հարաւից հիւսիս գնալիս՝ իրար յաջորդում էին Լփինքը, Ճիղրքը եւ ապա Ջողա երկիրը, ինչը նոյնութեամբ համապատասխանում է Խսրուան, Շրուան, Ջողա երկիր յաջորդականութեանը: Ջողա երկիրը Մասկթաց թագաւորութեան բուն տարածքն էր եւ գտնւում էր ԺԱՀի Կուսարի, Խուդաթի, Խաչմասի, Ղուբայի եւ Ղոնաղքենդի շրջանների տեղում, որոնց ափամերձ տարածքները հայ մատենագրութեան մէջ յայտնի էին Վարդանեան (Վատնեան) դաշտ ընդհանուր անուամբ[12]: *Այսինքն՝ մասկութների բուն երկիրը հարաւից Խաչմասի շրջանով անմիջականօրէն սահմանակցում էր Շրուան գաւառին, վերջինս մօտաւորապէս համապատասխանում էր ներկայիս Դիւիչիի շրջանին՝ Գիլգիլ գետից հիւսիս:*

Աստիճանաբար հզօրանալով՝ մասկութները գրաւել էին նախ Շիղրքը եւ Ճիղրքը, ապա շարժուելով հարաւ՝ Լփինքը: Հենց այս շրջանում էլ՝ հաւանաբար Դ. դարի երկրորդ կէսին, այդ ազգագաւառները սկսեցին կոչուել Շրուան եւ Խսրուան: Ջի բացառւում, որ վերը բերուած վարկածի համաձայն՝ հենց մասկութների օրօք հիւսիսային Խրսան/ *Խսր(ու)ան գաւառի անունը փոխադրուեց Լփինքի վրայ: Սակայն հաւանական է նաեւ, որ Խսրուան տեղանունը առաջացած լինի անկախ Խրսանից, մանաւանդ որ Խսրուանի ստուգաբանութիւնը, ինչպէս կը տեսնենք, ցոյց է տալիս արեալային որոշակի առնչութիւններ Կուրի հարթավայրի հետ: Ինչեւէ, մասկութների թագաւորութեան վերացումից յետոյ՝ մօտ 510ին, նշուած երկրամասերը անկախացան, եւ Շրուանի տիրակալը ստացաւ Շարուան-շահ տիտղոսը, իսկ Խսրուանի տիրակալը՝* Խուրսան-շահ[13]:

Շարուան-շահ եւ Խուրսան-շահ կոչուող տիրակալների «անկախութիւնը» սակայն, երկար չտեւեց: Ջ. դարում Սասանեան պետութեան բաղկացուցիչ մասը կազմող Աղուանից մարզպանութեանը միացուեցին Ռոտբատակ (տարբերակ՝ Հրաքոտ-Պերոժ) գաւառը, Բագկանը, Խսրուանը, Շրուանը, Ջողան, Ղեկաց (Լեկաց), Թաւասպարների ազգա-

գաւառները եւ Դարբանդ քաղաքը իր ամրութիւններով։ Է. դարի բ. կէսերին Աղուանից մարզպանութիւնը ընդգրկում էր հետեւեալ երկրամասերը՝ Բուն Աղուանք (= ԺԱՀ Շաքիի, Վարդաշէնի, Կուտկաշէնի, Իամախլրի, Գյոքչայի, Աղդաշի, Ուլջարըի, Զարդոբի շրջանները), Արցախ, Ուտիք (յետագայում՝ Գարդմանք), Ռոտբստակ (= ժամանակակից Միլի դաշտը եւ Փայտակարան-Բայլականի քաղաքային տարածքը), Բազկան (տարբերակ՝ Հէրան, ապագան Շամախու եւ Աղսուի շրջաններըը), Դարբանդ (ապագ՝ Դերբենտ), Թաւասպարք (տարբերակ՝ Թաւասպարան, Տապասարան, ապագ՝ Թարասարանի շրջանը Դաղստանում), Ղեկք (տարբերակ՝ Լեկք, ներկայիս լեզգիների [լեկգի] տարածքը), Չողա, Շրուան, Խսրուան (տե՛ս վերը)[14]։

Սասանեան Պարսկաստանի անկումից եւ արաբական արշաւանքներից յետոյ պատկերը փոխուեց։ ԺԱ. դարում Շիրուանն արդէն ընդգրկում էր Ապշերոնի թերակղզուց հիւսիս-արեւմուտք ընկած ողջ մերձկասպեան տարածքը՝ Շրուան եւ Խսրուան գաւառները միասին վերցրած։ Շիրուանն ընդլայնեց իր տիրոյթները նաեւ ի հաշիւ Աղուանքի արեւելեան մասերի, եւ Շիրուանի մայրաքաղաքն այդ ժամանակ դարձաւ Շամախին, որը նախկինում Բազկան (Բայգանք / Բագանք) «երկրի» կենտրոնն էր։ Այնուհետեւ Շիրուան հասկացութիւնն արդէն ներառնում էր Շիրուանշահերի պետութեան ամբողջ տարածքը[15]։

Մնունդով Թարարիստանից արաբագիր հեղինակ Իբն-Խորդադբէհը Թ. դարում գրում է, որ Արդաշիրին [= պարսից չահին] ենթակայ թագաւորներից մէկը Ադրբեջանում կոչւում է Շիրեան-շահ (شاه شيريان)[16]։ Առաջին անգամ հենց արաբագիր հեղինակներն են՝ Առանի եւ Շիրուանի համար չրջանառութեան մէջ դնում Ադրբեջան անունը։ Սակայն մէկ այլ տեղ նոյն հեղինակը՝ Իբն-Խորդադբէհը, Շիրուանը տեղադրում է «Առաջին Հայաստան»ում. «Արմինիա I. Սիսաջան [= Սիսական], Առան, Թիֆլիս [= Վիրք], Բերդա՛ա [= Պարտաւ], Բայլական [= Փայտակարան], Կաբալա [= Կապաղակ] եւ Շրվան» (ارمينية الاولى السيسجان وآران و تفليس و برذعة و البيلقان و قبلة و شروان)։ Այնուհետեւ արաբագիր հեղինակը չարունակում է, որ «պարսիկները գրաւել են ամբողջ տարածութիւնը մինչեւ Շրուանի երկիրը, որտեղ գտնւում է Մովսէսի ժայռը, որից բխում է անմահական ջրի աղբիւրը»[17]։

Իբն-Խորդադբէհը Խուրզան անունով երկիր է յիշատակում «Երկրորդ Հայաստան»ում։ Բնագրում վրիպակի հետեւանքով այդ երկրանունը վկայուած է Ջուրզան (جرزان) ձեւով, սակայն ակնյայտ է, որ դա չի

կարող լինել Վիրքը, քանի որ նախորդ պարբերութեան մէջ հեղինակը նշել էր Վիրքի՝ «Առաջին Հայաստան»ի մէջ ընդգրկուած լինելու մասին։ Հետեւաբար «ջիմ» տառի կէտը պէտք է տեղադրել ոչ թէ ներքեւում, այլ վերեւում, եւ ամբողջ տեղանունը կարդալ ոչ թէ جرزان (Ջուրզան), այլ خرزان (Խուրզան)։ Այս Խուրզան երկիրը Իրն-Խորդադբէհը նշում է լեզգիների երկրի հարեւանութեամբ. «Արմինիա II. Խուրզան, Սուղդաբիլ, Քար-Ձէյռուգ-Կուբադ եւ ալ-Լակզ».
(ارمينية الثانية جرزان و صغديل و باب فيروز قبذ و اللكز)։ Այնուհետեւ նա յաւելում է, որ Սուղդաբիլը եւ Քար-Ձէյռուգ-Կուբադը Անուշրուան արքայի կառուցած քաղաքներն են Խուրզան «երկրում»[18]։

Ցաւօք, այս նախադասութիւններից դժուար է եզրակացնել՝ արդեօ՞ք Խուրզան/Խուրսան երկիրը Թ. դարում գտնւում էր Շրուանի անմիջական հարեւանութեամբ՝ այսինքն համապատասխանում էր Խսրուան ազգագաւառին, թէ՞ գտնւում էր շատ աւելի դէպի հիւսիս եւ համապատասխանում էր Եղիչէի Խուրսանին։

Այս համառօտ պատմական եւ տեղագրական ակնարկից յետոյ փորձենք պարզել, թէ ինչ ծագում ունի Շիրուան տեղանունը։

Սարգիս Արք. Ջալալեանցը (1819-1879) գրում էր, թէ Շիրուան տեղանունը բացատրւում է պարսկ. **šīr** شير «կաթ» բառով. «բայց զիսկական ստուգութիւն իրացն քողում դատաստանի հմուտ հնագիտաց» գրում է նա[19]։ Հաւանաբար, Շիրուան տեղանուան՝ նման մեկնութիւնը տարածուած է եղել ժողովրդի մէջ։ **šīr** արմատը, ամենայն հաւանականութեամբ, հնում նշանակել է նաեւ «քաղցր», ինչի վկայութիւնն են պարսկ. **šīre** شيره «ղոշաբ» (> հայ.բրբ. շիրա), **šīrīn** شيرين «քաղցր» բառերը[20]։ **šīr** «քաղցր» > **šīre** «ղոշաբ» իմաստային զարգացումը ամենեւին խորթ չէ պարսկերէնին, ինչպէս zard «դեղին» > zarde «դեղնուց», sefid «սպիտակ» > **sefide** «սպիտակուց» գոյգերում, որոնցում կրկին **-e(h)** վերջածանցի միջոցով գոյականից ստեղծւում է ածական։

Արեւելաիրանական լեզուներում այս նոյն **šīr** արմատը պահպանուել է հին իրանական /xš/ կապակցութեամբ. իրանական նախալեզուի համար վերականգնուող ***xšīra-** նախաձեւից, ի տարբերութիւն պարսկերէնի, քրդերէնի, բելուջերէնի **šīr** «կաթ» ժառանգի, Աւեստայի լեզուում ունենք **xšīr-** «կաթ» արմատը՝ **apa-xšīrā-** երկրանուան մէջ, որը բառացիօրէն նշանակում է «անթերրի», այսպէս ասած՝ «ապակաթնային», պամիրեան մունջաներէնում՝ **xšīra**, պամիրեան իդդա լեզուում՝ **xšīr** համանիշները, իսկ օսերէնում՝ ***xsǯr** (օսերէնի դիգորական բարբառում՝ **æxsir**) «կաթ» գուգահեռը[21]։

Բերուած բոլոր գուգահեռներից օսերէնի իրոնական բարբառի ᵐxsᵹr ձեւն է, որ ամենամօտն է Շրուան «երկրի» հարեւանութեամբ գտնուող Խսրուան երկրանուան արմատին։ Վերջինիս համար կարելի է վերականգնել հին *xsᵹr-(u)ān կամ *ᵐxsᵹr-wāna «կաթի երկիր» ձեւը։ Ինչո՞վ կարող էր բացատրուել Խսրուան երկրանուան ծագումը արեւելաիրանական արմատից։

Օսերի կամ նրանց նախնի ալանների բնակութեան սահմանները դժուար թէ հասնէին մինչեւ Հիւսիսարեւելեան Կովկասի մերձկասպեան շրջաններ։ Թէեւ հայ մատենագրութեան մէջ երբեմն «Դարբանդ աշխարհը» համարւում էր «սահմանակից Օգաց եւ Աղուանից»[23], սակայն այդ բնորոշման մէջ «օս» ցեղանունը, առաւել մեծ հաւանականութեամբ, հիւսիսային Կովկասի լեռնական ժողովուրդներին տրուող ընդհանուր հաւաքական անունն է։ Ուրեմն, որտեղի՞ց կարող էր գալ xsᵹr արմատը։

Ամենաիրատեսականը մասկութական վարկածն է։ Մասկութների լեզուի մասին թէպէտ ոչինչ չգիտենք, սակայն յայտնի է, որ մասկութները սկիւթական ժողովուրդ էին։ Հայ մատենագրութեան մասկութ / մասքութ / մազքութ ցեղանունը անտիկ հեղինակների երկերում վկայուած է Μασσαγέται ձեւով, որը ստուգաբանւում է կա՛մ սկիւթական *man-sag «մարդ-եղջերու» կազմութեան միջոցով (հրան. manu «մարդ», օս. moynæ «ամուսին» եւ sak սակերի կամ սկիւթների տոտեմը՝ եղջերու)[23], կա՛մ էլ որպէս հրան. mas/maz «մեծ» բառի եւ սակ ցեղանուան բարդութիւն՝ «մեծ սակեր» նշանակութեամբ։ Հռոմէացի պատմիչներ Դիոն Կասիոսը եւ Ամիանոս Մարկելինոսը, ի դէպ, հաղորդում են, որ մասկութները («մասսագէտներ») ալանների ամենամերձաւոր ազգակիցներն են։ Իսկ ամենակարեւորն այն է, որ Μασσαγέτ ցեղանուան մէջ -ét վերջածանցը արեւելաիրանական լեզուներում տարածուած յոգնակիակերտ վերջաւորութիւնն է (օս. -tæ, -ᵹtæ)։

Այսպիսով, գրեթէ կասկած չի մնում, որ Խսրուան երկրանուան մէջ առկայ է արեւելաիրանական (հաւանաբար մասկութական) *xsᵹr- արմատը։ Հետեւաբար եւ աւելի հաւանական է դառնում այն ենթադրութիւնը, որ Խսրուան երկրանունն աւելի հին է, քան Շրուանը, քանի որ արեւմտաիրանական ժողովուրդները եւ նրանց լեզուն համեմատաբար աւելի ուշ են ներթափանցել Հիւսիսարեւելեան Կովկասի վերոնշեալ շրջաններ։ Ուստիեւ զարմանալի չէ, որ առաջին անգամ Խսրուան տեղանունը հանդէս է գալիս «միաչեակ»՝ առանց Շրուանի (իհարկէ, եթէ,

իրօք, Խրսան երկրանունը Խսրուանի աղճատուած տարբերակն է)։ Իսկ յետագայում Խսրուան / Շրուան տարբերակների գոյութիւնը կողքկողքի՝ իրար հարեւանութեամբ, կարելի է բացատրել բարբառային գուգաբանութիւնների առկայութեամբ (արեւմտահիրանակա՞ն-արեւելահիրանակա՞ն)։ Թերեւս, միմեանց հարեւանութեամբ խօսուող երկու բարբառախմբերում կիրառուել են նոյն բառի գուգահեռ երկու տարբերակները՝ *xs**i**r- եւ *šir (šīr)[24] «քաղցր, կաթ» (Կովկասի «թաթական» խօսուածքներում ներկայումս գործածւում է միայն երկրորդ՝ արեւմտահիրանական ձեւը)։

Ինչ վերաբերում է երկրանուան կազմութեանը «քաղցր» նշանակող արմատից, ապա դա, մեծ հաւանականութեամբ, կապուած է այն հանգամանքի հետ, որ տուեալ երկրամասն ունէր տաք եւ բարերեր կլիմայ, հարուստ էր յորդառատ աղբիւրներով ու գետակներով, քաղցրահամ մրգերով։ Նմանատիպ օրինակներ կարելի է շատ բերել։ Օրինակ, Մատիենէ (Ματιηνη) երկրի անուանումը պէտք է որ ծագէր հ.-ե. *mad- կամ *médhu- «քաղցր», «մեղր, մեղրաջուր» արմատից[25] (որի *mad, քմայնացուած տարբերակից ունենք հայ. մաճար (*մաճ-ար) «քաղցու, խակակուռ գինի» բառը[26])։ Ցոյն աշխարհագրագէտ Ստրաբոնի հաղորդմամբ՝ Մատիենէում խաղողի մի որթից ստացւում էր մօտ 40 լիտր գինի, իսկ մեղուները փեթակ էին չինում հենց ծառերին, եւ մեղրը ցած էր ծորում տերեւների վրայից։ Նման երեւոյթ, ըստ նրա, լինում էր միայն Հայաստանի Շակաշէնում (= Գարդմանք) եւ Արաքսենէում, ինչպէս եւ Վրկանաց երկրում[27]։

Կարելի է բերել եւ մէկ ուրիշ՝ աւելի մօտ օրինակ. այսպէս, Արեւմտեան Հայաստանում Բիթլիսի նահանգի Սղերդի գաւառի մի մասը նոր ժամանակներում կոչւում էր Շիրուան, եւ այն համապատասխանում էր Մեծ Հայքի Մոկք աշխարհի Արգաստվիտ գաւառին[28]. այն է՝ «արգասարեր, բարերեր հովիտը» ուշ դարերում ստացել էր իրանական համարժէք անունը։

Նմանապէս՝ Սիւնիքի Արեւիք գաւառի հարաւային՝ արաքսամերձ մասը (միգուցէ սա՛ է Ստրաբոնի Արաքսենէն) կոչւում էր Մեղրի՝ հարաւային տաք եւ բարերեր կլիմայի, այստեղ աճող քաղցրահամ մրգերի պատճառով։ Մեղրի (կամ Մեղրոյ ձոր) գաւառակում էր գտնւում Շ(հ)րուանիձոր գիւղը, որը ներկայիս Շուանիձորն է Մեղրու ենթաշրջանում, այս բնակավայրը յատկապէս յայտնի է իր ընտիր գինով[29]։

Շիրուան տեղանուանական տարբերակների կապը «քաղցր» նշանակող արմատի հետ աւելի հաւանական է դառնում, յատկապէս,

եթէ յիշենք հարեւան Աղուանք *տեղանուան հայերէն ժողովրդական ստուգաբանութիւնը* աղու «քաղցր» *բառի միջոցով։ Այս տեղանունների իմաստային նմանութիւնը նկատել է դեռեւս Ջալալեանցը, որը ենթադրելով, թէ Շամախին հին Շրուան քաղաքն է, այդ առթիւ գրում է.* «Գուցէ սա իցէ հին քաղաքն Շրուան հրաշակերտեալ ի Սիսակայ կամ յԱռանայ, յորոց եւ ստացեալ զանուն Շրուան, որ համարի ի մի եւ նոյն թարգմանութիւն Աղուան բառի. ըստ որում որպէս Աղուն ի հայ լեզու նշանակէ զքաղցր, նոյնպէս եւ Շիրն ի լեզուս Պարսից եւ Մարաց նշանակէ որպէս զառիւծ եւ զատամ նոյնպէս եւ զկաթն, ուրեմն մա՛րթ Հայոց եւ Պարսից կցելով զբառն աւան ընդ քաղցր բառին՝ Հայք ասացին Աղուաւան եւ Պարսիկք Շիրաւան, ի մի եւ ի նոյն միտս վերածելով»[30]։

Աղուանք տեղանուան նչուած ստուգաբանութեան աղբիւրը Ե. դարի պատմիչ Մովսէս Խորենացու հաղորդած ծննդաբանական աւանդութիւնն է։ Նա պատմում է թէ ինչպէս հայոց Վաղարշակ Արշակունի արքան Ք.ա. Բ. դարում Սիսական (Սիւնեաց) իշխանական տոհմի մի ճիւղից հաստատում է Աղուանից մեծ նախարարութիւնը. «Յետ սորա մեծ եւ անուանի եւ բազմաբիւր զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի եւ յամենայն գործ մտաւորութեան եւ հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր։ ... եւ աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա»[31]։

Նոյն աւանդութիւնը փոքր-ինչ այլ երանգաւորմամբ հաղորդում է նաեւ ԺԳ. դարի պատմիչ Ստեփանոս Օրբէլեանը. «Եւ հրամայէ Սիսականացն հրամանատար լինել ի վերայ ամենայն արքունի զօրացն, եւ երկրորդ թագաւորութեան իւրոյ. եւ ընդդէմ կալ հանապազ պատերազմաւ դրանն Հոնաց որոյ անուն առաջնոյն Սիսակ կոչիւր։ Իսկ ի զաւակէ սոցա ընտրեալ այր մի յոյժ արի եւ գեղեցիկ եւ քաղցր բարուք՝ զԵռան (Առան) անուն. եւ կարգէ նահապետ ի վերայ մեծ դաշտին Առանայ, յերասխայ մինչեւ ցՀունակերտ։ Եւ վասն քաղցր բարուցն աղու ձայնէին զնա. որ եւ աշխարհն յանուն նորա Աղուանք (Աղվանք) կոչեցաւ։ Ահա այս սակաւ մի տեղեկութիւն քեզ զի՛ գիտասցես զսուսա ոչ միայն Սիւնեաց եւ Աղվանից գոլ նախնի նաեւ երիցագոյն քան զնոսա»[32]։

Օրբէլեանի եւ Խորենացու պատումներին նոր բան չի աւելացնում կաղանկատուացու հաղորդումը. «Ապա կարգեաց նոցա առաջնորդ եւ վերակացուս, յորոց գլխաւոր ոմն ի Սիսական տոհմէ Յաբեթական

ծննդոցն կարգի հրամանաւ Վաղարշակայ, Առան անուն, որ ժառանգեաց զդաշտս եւ զերինս Աղուանից՝ ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն Հնարակերտ: Եւ աշխարհն յաղագս քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, զի աղու ձաինէին զնա վասն քաղցրութեան բարուցն»[33]:

Այսպիսով, Աղուանք *երկրանունը, ինչպէս եւ* Շրուան *եւ* Խսրուան *տեղանունները, իր բնոյթով զուտ աշխարհագրական է, քանի որ* աղուան *անունով ցեղ երբեւէ չի յիշատակուում*[34]: *Ստրաբոնը դեռեւս Ա. դարում է տեղեկացնում, որ Աղուանքը* (Αλβανια) *բնակեցուած է 26 տարբեր ցեղերով: Նոյնիսկ երբ որ Խորենացին գրում է, որ Մաշտոցը այբուբէն յօրինեց աղուանների համար, այնուհետեւ մանրամասնում է՝ «գարգարացիների կոչտ եւ խժական լեզուի համար»· այսինքն՝ աղուան բառի գործածութիւնը նրա մօտ էլ լոկ աշխարհագրական է*[35]:

Անգամ եթէ Աղուանք *երկրանուան ծագումը կապուած է այլ արմատի, եւ* աղու *բառին նրա առնչութիւնը սոսկ ժողովրդական մեկնաբանութիւն լինի, միեւնոյն է, դա ցոյց է տալիս արեւելային ստուգաբանական աւանդութեան յարատեւումը նոր ժամանակներում: Պատահական չէ, որ այսօր* Շիրուանի *դաշտ է կոչւում հենց երբեմնի Առանի դաշտավայրը, այսինքն՝ կուրի ձախափնեայ շրջանը Բուն Աղուանքում:*

Այդպիսով, Աղուանք եւ Շիրուան տեղանունների ստուգաբանութիւնը կամ դրանց կապուած ժողովրդական աւանդութիւնները ցայտունօրէն ցոյց են տալիս, թէ ինչպէս տեղային հնագոյն պատկերացումները արտաքնապէս՝ ձեւով, կարող են փոխուել, սակայն բովանդակութեամբ եւ պարունակուող իմաստային լիցքով՝ մնալ նոյնը: Ուշագրաւ է նաեւ, որ Շրուան եւ Խսրուան երկրանունների՝ առաջարկուող ստուգաբանութեան հաստատման պարագայում՝ ի յայտ է գալիս վաղմիջնադարեան մասկութական ցեղի լեզուից կարեւոր մի վկայութիւն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Ս. Երեմեան, Հայաստանը Ըստ «Աշխարհացոյցի», Երեւան, Հայկ. ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա, 1963, 102-103:*

[2] *Երեմեան, 74: Այս Շարքանը, ըստ Թ. դ. հեղինակ Իբն-Խորդադբէհի, հիմնադրել է Սասանեան արքայ Անուշրուանը (Անուշարուան), Svedenya Arabskikh Pisateley O Kavkaze. Armenii I Aderbeyzhane (Արաբ Գրողների Տեղեկութիւնները Կովկասի, Հայաստանի եւ Ադրբէջանի Մասին)* (SAPKA). *Թիֆլիս 1876, էջ 15:*

[3] SAPKA, *էջ 14-15:*

[4] *Երեմեան, էջ 55-56:*

[5] *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց (բնագիրը Ք. Պատկանեանի, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Ստ. Մալխասեանցի), Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1987, III դպր., է գլ., էջ 28:*

[6] Պլինիոս Աւագ, «Բնական պատմութիւն», Հայ ժողովրդի պատմութեան Քրեստոմատիա, հ. I, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, Երեւան, 1981, էջ 366:

[7] Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին (Թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Ե. Տէր-Մինասեանի), Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1989, IV եղանակ, էջ 190:

[8] Այս ցեղն, ըստ երեւոյթին, բնակւում էր Վատնեան կամ Վարդանեան դաշտում: Վարդեգրոսակ լեռան ստորոտում: Վարդեգրուակը, ըստ Բարխուտարեանցի, Ջողի Խաչմասի շրջանի Խալթան կոչուող սարահարթն է (Մ. Բարխուտարեանց, Ազուանից երկիր եւ Դրացիք (Միջին-Դաղստան), Թիֆլիս, Մ. Շարամէ, 1893, էջ 145):

[9] Հ. Խառատեան, «Ուդիներ (Աղուանների Առաստլը)», Բազմ-Նամէ, 1994, N 2(9), էջ 13:

[10] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Ազուանից Աշխարհի (Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1983, Բ, գլ. ԼԲ, էջ 238-239: Երեմեանը Լփինքը կամ Լփնաց երկիրը տեղադրում է Աղուանքի եւ Վիրքի միջեւ՝ Այազան գետի մօտ, ինչը, սակայն, հակասում է Կաղանկատուացու եւ Եղիշէի վերոբերեալ տեղեկութիւններին:

[11] Բարխուտարեանց, էջ 76:

[12] Երեմեան, 76: Մասկութների մայրաքաղաքը՝ Ծողան (Ծողայ, Ծորայ, Ճորայ) գտնւում էր Սամուր գետի ղեկտայի շրջանում ժամանակակից Բիլիջի երկաթուղային կայարանից ոչ հեռու՝ Թոփրաղ-կալէի աւերակների տեղում:

[13] Երեմեան, էջ 56, 74:

[14] Երեմեան, էջ 34, 63, 120:

[15] Երեմեան, էջ 42, 74:

[16] SAPKA, էջ 4-5:

[17] SAPKA, էջ 12-13:

[18] SAPKA, էջ 12-13, 15:

[19] Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Բ, Տփխիս, 1858, էջ 403:

[20] Հմմտ.՝ P. Horn, *Grundriss Der Neupersischen Etymologie*, Strassburg, 1893, էջ 178:

[21] V. I. Abayev, *Istoriko-etimologicheskii Slovar Osetinskogo Yazika* (Օսական լեզուի պատմաստուգաբանական բառարան), Հտ. Դ., Լենինկրատ, 1989, էջ 241-242:

[22] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Բ. տպագրութիւն, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1898, էջ 3-4:

[23] B. I. Abayev, *Skifskii Yazik* (Սկիւթական լեզու), էջ 172, 173, 179; *Osetinskii Yazik I Folklor* (Սկիւթական լեզու եւ բանահիւսութիւն), Հտ. 1, Մոսկուա-Լենինկրատ, 1949, էջ 147-195:

[24] Ծրոսան ձեւը ցոյց է տալիս, որ նրա հիմքում ընկած է կարճ /i/ ձայնաւորը պարունակող մի արմատ, եւ ոչ թէ ժամանակակից իրանական լեզուներում վկայուած՝ երկար /ū/ով šīr արմատը:

[25] Ն. Ադոնց, Հայաստանը Ճուստինիանոսի Դարաշրջանում, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1987, էջ 466, նաեւ՝ Տ. Դալալեան, «Հայ Իշխանական Տների Հետքերը Հարաւարեւմտեան Հայաստանում (Քրդական Որոշ Ցեղանունների եւ Ցեղերի Մագման Հարցի Շուրջ)», Պատմաբանասիրական Հանդէս, 2004, N 2, էջ 177-181:

[26] Գ. Ջահուկեան, Հայոց Լեզուի Պատմութիւն. Նախագրային Ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 136, 179, 211:

[27] Ստրաբոն, II, 1, 14, 79; XI, 7, 2, էջ 482:

[28] Թ. Խ. Ճակրեան, Ստ. Մելիք-Բախշեան, Ց. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ Ճարահից Շրջանների Տեղանունների Բառարան, հ. 4, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1998, էջ 135:

[29] Նոյն, հ. 3, 1991, էջ 782, նաեւ՝ հ. 4, էջ 154։
[30] Ջալալեանց, էջ 403։
[31] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց* (քննական բնագիրը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանի), Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 1981, II գ. Ը գլ., էջ 126-128։
[32] *Պատմութիւն Նահանգին Սիսական Արարեալ Մատենադրութեամբ Օրբէլեան Արքեպիսկոպոսի Սիւնեաց*, Թիֆլիս, Ազանեան, 1910, էջ 16։
[33] Կաղանկատուացի, Ա, գլ. Դ, էջ 8։
[34] Խառատեան, էջ 12։
[35] *Հնարաւոր է, որ* Աղուան-ը *ձեւը* Առան *տեղանուան մի տարբերակը լինի՝ միգուցէ եւ աւելի հին, քանի որ անտիկ աղբիւրներում, օրինակ, երբեք* Առան *ձեւը չի օգտագործւում, այլ միշտ նշւում է երկրի* *Aluan > Αλβανια / Albania *ռոտացիզմին չենթարկուած հայկական տարբերակը։ Սակայն, միւս կողմից, եթէ ընդունենք միանգամայն հաւանական մի վարկած, որ Վանի թագաւորութեան սեպագրում յիշատակուող* KUR a-ri-a-i-ni (Ara[i]n) *«երկիրը» Առան տեղանուան հին տարբերակն է, ապա դրա վկայութիւնն արդէն ժամանակով յունահռոմէական աղբիւրներից էլ անցնում է։* KUR a-ri-a-i-ni *երկրանունը նշւում է Ք.ա. է. դարում՝ Ռուսա Ա-ի «Մովինարեանդ արձանագրութեան մէջ, որը փորագրուած է Սեւանայ Լճի հարաւային առափնեայ ժայռին* (N.V. Arutiunian, *Toponimika Urartu* (*Ուրարտուի Տեղանունների Ցանկ*), Երեւան, 1985, էջ 35։ *Այն թուարկւում է «լճից այն կողմ գտնուող» 19 «երկրների» շարքում։*

ON THE ETYMOLOGY OF THE GEOGRAPHIC NAME 'SHIRVAN'
(Summary)

TORK DALALIAN

Up until the early 20th century the Republic of Azerbaijan was usually known as Aran and Shirvan. Aran is the other name of Aghvank, an area east of historic Armenia.

Basing his research on data from contemporary historiographers as well as analysing historical facts of the 5th-7th centuries, the author deduces that 'Shirvan' was not identified with any ethnicity, nor did it cover the geographic area it does now. However, as of the 7th century the name 'Shirvan' engulfed areas to the south of the originally denoted area on the north-western shores of the Caspian Sea. Thus, he concludes that the name 'Shirvan' spread between the 5th and 7th centuries. The author notes as well that historiographers of the time mention a number of ethnicities and communities inhabiting the area, but none mentions 'Shirvan' as an ethnic or tribal grouping.

Quoting Armenian and Arab historians of the Middle Ages, the author tries to unfold the evolution of the name 'Shirvan', which was first used by Arab historians of the Middle Ages. The author questions whether the name of an area in northern Azerbaijan, 'Kheservan' could have been transformed to the name 'Shirvan' and carried down from that area when the natives moved to the south and settled in the current Shirvan area, or whether this is simply a coincidence.

The author delves into the meaning and the source of the name Shirvan. Shir means milk in Persian, or something sweet. He tries to make a connection between the meaning of this word and the root of the name Aghvank, namely **agh**, which means something good and sweet.

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԵԱՆՆ ԱՌՆՉՈՒՈՂ ՑԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ Ե.-ԺԵ.ԴԴ. ՁԵՌԱԳՐԵՐԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՅԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Հայ միջնադարեան երաժշտա-տեսական խնդիրների համալիր քննութեան մէջ ընդունուած է տարանջատել գործնական եւ գիտական ոլորտներ։ Ընդհանուր հիմնադրոյթների համակարգի մէջ այդ տարանջատումը, իհարկէ արհեստական բնոյթ է կրում։ Մինչդեռ երաժշտութեան գործնական տեսութիւնը ի մի է բերում հոգեւոր երգեցողութեան «կիրառական» որոշակի հասկացութիւնների, եզրերի եւ գործնական ցուցումների ամբողջութիւն։ Այս առանձնայատուկ բնորոշիչների չնորհիւ միջնադարեան աղբիւրներում տեղ են գտել այնպիսի փաստեր, որոնք առնչւում են երաժշտութեան գործնական տեսութեանը։ Դրանք յատկապէս մեծ թիւ են կազմում ձեռագրերի յիշատակարաններում։ Այստեղ յայտնաբերում ենք արժէքաւոր փաստեր հայ միջնադարեան մասնագիտացուած երաժշտութեան՝ որպէս գիտութեան եւ գիտական դասընթացի տեղի ու նշանակութեան, մասնագիտացուած երգեցողութեանն առնչուող հասկացութիւնների ու եզրերի, ձայնեղանակների համակարգի, ինչպէս նաեւ երաժշտական խազագրութեան արուեստի, խազաւոր մատեանների եւ խազագրութեան նշանաւոր կենտրոնների մասին։ Անդրադառնանք դրանց առաւել հանգամանօրէն։

[LETTER OF RECOMMENDATION OF THE MARONITE HIERARCHY IN FAVOUR OF MONSEIGNOR APRAHAM]

Holy Father,

We, the undersigned, Joseph Patriarch of Antioch and the humble servants of your Holy authority, the Maronite prelates, certify herewith, that the most honorable Bishop Apraham of the Catholic Armenian Community in Aleppo, after being persecuted by the government officials, the Orthodox Armenians and their patriarch in Constantinople, and after imprisonment, exile and blame, was finally rescued by seeking refuge among us in the Mount Lebanon, in the district of Kisrawan, where he founded a monastery for his monks after the decrees of Saint Antony. Being among us for twenty years, he did not cease to struggle for the faith. Last year, the Catholic Armenians in Aleppo elected him patriarch of Cilicia.

Now, regarding his request for the pallium from your Holiness, we certify that he is an ardent Catholic and beseach you to bestow on him the Pallium and confirm him in the patriarchal seat.

Soliciting the grace of your benediction for us and for the newly elected patriarch and wishing long life to your Holiness, we once again proscript humbly and offer our deepest thanks.
Mount Lebanon, September 10, 1741.

The Humble servants of your
Holiness
Yusuf Butros Khazin, Patriarch of Antioch
Sim'an Aouad, Archbishop of Damascus
Elias, Bishop of Arca
Atallah, Bishop of Beirut
Istiphan, Bishop of Batrun
Bulos, Bishop of Byblos
Yuhanna, Bishop of Lattakia
Ighnatius, Archbishop of Tyre
Mikhail, Bishop of Banias
Jibrail, Bishop of Acra
Tubiyya, Archbishop of Cyprus

APPENDIX D
[RECOMMENDATION OF THE ALEPPINE MONKS OF THE MONASTERY OF LUWAYZEH]

Eminentissimi e Reverendissimi Signori,

Esponiamo alle VV. EE. dopo il baccio della sagra porpora che la cattolici armeni hanno spontaneamente eletto per loro Patriarca il Reverendissimo Monsignore Abraham Archivescovo d'Aleppo, insigne nella professione della cattolica fede, per la quale ha combattuto virilmente e sofferto carceri, esigli et angustie gravissime fin al di d'oggi. Supplica ora la benignità delle VV. EE. ad impetrargli dalla Santità del Sommo Pontefice la confermazione nella dignità patriarcale, della quale si è reso ben meritevole: accio munito della Apostolica Benedizione e conferma nel grado, a cui è stato chiamato, possa sempre piu dilatare la vera fede. Tanto noi attestiamo alle VV. EE. circa la probità et i meriti di questo prelato, stanteche per spazio di 20 anni ha dimorato tra di noi in queste parti. Percio speriamo che le VV. EE. esaudiranno i nostri voti in di lui favore, e pregandole a compartire ancora a noi la loro S. Benedizione, baciamo diratamente la s. porpora.

Dal Monastero nostro di S. Maria di Lovaize
15 Settembre 1741

Delle Vostre Eminenze umilissimi servi
Arsenio Domenico, Vicario Generale
Michele Scander, 1° Definitore
Abdalla Habacuc, 2° Definitore
Benedetto Hobaid, 3° Definitore
Tomaso Rescalla, 4° Definitore


Source: Mesrob Terzian, *Le Patriarcat De Cilicie Et Les Arméniens Catholiques (1740-1812)* (Beyrouth: Imprimerie La Photo-Pres), 1955, pp. 75-6.

Most respectful and honorable Sirs,

We, hereby certify to your most respected authorities that the Catholic Armenians elected as their patriarch, the reverend Monseignor Apraham Archbishop of Aleppo, well recognized for his Catholic faith, for which he ardently struggled and bore with patience imprisonment, exile, and blame. Now, he requests that you solicit from his Holiness the Pope, his confirmation in the patriarchal dignity, which he deserves fully. Thus, armed by apostolic benediction and confirmed in his degree, he will be enabled to propagate further the true faith. We duly testify to the merits of this prelate, who has been with us for twenty years. We hope that you will accept our votes in favour of Patriarch Apraham and beseech once more your benediction.

Monastery of Luwayzeh,
September 15, 1741

Your humble servants
Arsenios Dominica
Abdallah Habacuc
Mikhail Iskandar
Benedetto Hobaid
Tuma Rizkallah



Source: Monastery Of Bzummar, Box year 1834.

To our beloved Armenian Archbishop Ya'qub, may God preserve him safe.

Greetings and a fervent hopes that you are in good health. Thereafter, in view of our belief in your friendship, and as we are now traveling by the grace of God, we hope that on all occasions you will keep visiting our Seat and look into our affairs as you deem appropriate. There is no need for us to stress more on the necessity of your frequent visits to us, and we hope that your favor will not go unrewarded.

22 Sh. 56

Amin Shihab




Source: Monastery Of Bzummar, Box year 1835.

To our beloved and honorable Patriarch Gregory, may God preserve him.

In the first instance we wish to express our heartiest wishes that you are well. The motive for our letter is to enquire about your health; we hope you are very well. Thereafter, we wish to inform you that we are in need of two books in Turkish, to be furnished to us either by sale or on loan. Please arrange to send the same to us, and let them be different in form in order for us to acquire knowledge of this language, and we wish that the explanations they contain be set up according to the rules of the language.

In closing, we hope that you will always let us have news regarding your health and anything you require.

Emir Bashir Shihab 22 Th. 1251




Source: Monastery Of Bzummar, Box year 1834.

To our beloved and honorable Patriarch Gregorios, may he remain safe.

Heartiest greetings and fervent hopes to hear comforting news that all is well with you.

The motive for writing this letter is to have your news and enquire about your health, which we hope is excellent. For our part, many thanks and great gratitude to the Lord; we live in the generosity of the Gracious almighty. At this date, we are extremely well and most cheerful, and hope you are so too. Be reassured. Now, it is for the sake of asking for your news and enquiring about your situation that we found it expedient to write to you. Always keep us informed of your good news and we send our prayers.

Date 27 ch. 250 [1834] Husn Jahan



Source: Monastery Of Bzummar, Box year 1838.


To our beloved and honorable Patriarch Gregorios, may he remain safe.

Greetings and love,

We have today issued our order for distributing alms to the needy in the country. We have, hence, allotted one thousand piasters to the poor of your Community. Said amount shall reach you through our dear Archbishop Ya'qub, and you are earnestly requested to distribute it to the most needy poor of your Community at your discretion, and always keep us posted about your good news.

May you remain safe,

Date: 10 B 254 Bashir



Source: Monastery Of Bzummar, Box year 1836.

To our beloved and honorable Patriarch Gregory, May he remain safe.

Our fervent hopes that you are in good health. We wish to inform you that our brother Khattar Okaily is now on the way to your monastry at Bzummar in order to see and draw for us a picture of the lightning rods placed on the monastery against thunderbolts, so that, according to these drawings, we may order the same for our buildings at Beit Ed-Din.

Enquiring about your health and hoping that you will always keep us informed of your good news.

Date: 22T 252 Bashir Shihab

ԱՐԵՒՄՏԱՀԱՑ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՆՐԱ ԴԵՐԸ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՊՐՈՑԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (1870-1920 ԹԹ.)

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆԵԱՆ

ՄՈՒՏՔ

Ժ-Թ. դարի 70-80ականներին արեւելահայ իրականութեան մէջ նկատելի դրական տեղաշարժեր կատարուեցին մամուլի զարգացման գործում: Այդպիսի առաջընթացն առաջին հերթին պայմանաւորուած էր ինչպէս հասարակական-քաղաքական իրադարձութիւններով, այնպէս էլ լրատուական մարմինների քաղաքական ուղղուածութեամբ, բովանդակային ու կառուցուածքային որոշակի փոփոխութիւններով: Այդ տարիներին Թիֆլիսում հիմնադրուեց *Մշակ* (1872-1921) գրական եւ քաղաքական չաբաթաթերթը, որն ունէր ազատախոհ-բուրժուական ուղղուածութիւն: 1872-1892 չաբաթաթերթը խմբագրել է հանրայայտ լրագրող եւ հրապարակախօս Գրիգոր Արծրունին (1845-1892): *Մշակը* ժամանակ առ ժամանակ խմբագրել են նաեւ Ալեքսանդր Քալանթարը (1855-1913), Համբարձում Առաքելեանը (1855-1918), Լեւոն Քալանթարը (1891-1959), Լէօն (1860-1932), Անդրէաս Արծրունին (1847-1898) եւ ուրիշներ: *Մշակին* մինչեւ 1884 թղթակցել է նաեւ անուանի վիպասան Րաֆֆին (1835-1888), որն իր քննադատական եւ հրապարակախօսական յօդուածներով կատաղի պայքար է ծաւալել կղերապահպանողական մտայնութեան դէմ՝ պահանջելով առաջադիմական հիմքերի վրայ դնել լուսաւորութիւնն ու դպրոցը:

Գրեթէ նոյն տարիներին ազգային-պահպանողական գաղափարական ուղղութեան ներկայացուցիչ Արգար Յովհաննիսեանը (1849-1904) Թիֆլիսում հիմնադրեց երկու պարբերական՝ *Փորձ* (1876-1881) միամսեայ հանդէսը եւ *Արձագանք* (1882-1898) գրական եւ քաղաքական չաբաթաթերթը, որոնք բացառիկ դեր խաղացին հայ նոր գրականութեան զարգացման գործում: Այս պարբերականներին աշխատակցել են հանրաճանաչ գրողներ ու հասարակական գործիչներ Ռափայէլ Պատկանեանը (1830-1892), Պերճ Պռօշեանը (1837-1907), Քաջբերունին (Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեան, 1837-1920), Գաբրիէլ Սունդուկեանը (1825-1912), Ղազարոս Աղայեանը (1840-1911), Ալեքսանդր Երիցեանը (1841-1902), Նիկողայոս Տէր-Ղեւոնդեանը (1848-1920), Նիկողայոս Տէր-Յարութիւնեանը (Հարօն - Շ.Ո.), Գէորգ Եւանգուլեանը (1843-1901) եւ ուրիշներ:

Աւելի ուշ՝ 1889-1907ին, Թիֆլիսում Աւետիք Արասխանեանցի (1857-1912), այնուհետեւ՝ Փիլիպոս Վարդազարեանի (1858-1935) խմբագրութեամբ հրատարակուեց Մուրճ գրական, հասարակական եւ քաղաքական ամսագիրը: Մուրճի շուրջ համախմբուած ազգային-պահպանողականներն էլ բոլորի նման քաղաքեղեակ էին Արեւմտահայաստանում տեղի ունեցող իրադարձութիւններին եւ սերտ առնչութիւններ ունէին տեղի մտաւորականների եւ հասարակական-քաղաքական գործիչների հետ: Նրանք մեծ յոյսեր էին փայփայում Արեւմտեան Հայաստանի ապագայի հանդէպ: Նոյնիսկ նրանցից ոմանք հակուած էին պաշտպանելու այն կարծիքը, որ եթէ հայերին վիճակուած է մի օր ազատ չունչ առնել եւ դուրս գալ իրենց ծանր վիճակից, ապա այդ պէտք է լինի Արեւմտեան Հայաստանում:

ԺԹ. դարի վերջին քառորդում սոցիալ-տնտեսական եւ ազգային-քաղաքական իրադարձութիւնների թափանիւը նոր շրջան բացեց նաեւ արեւմտահայ, մասնաւորապէս, պոլսահայ մամուլի պատմութեան մէջ: Ջնայած թուրքական գրաքննութեան ծայրայեղ խստութիւններին՝ այնուամենայնիւ, արեւմտահայ մամուլն օրաւուր զգալի առաջընթաց էր ապրում: Մինչ այդ գործող պարբերականներից բացի կեանքի էին կոչուել նոր թերթեր, որոնք թէ՛ իրենց բովանդակային ընդգրկումներով, թէ՛ ազգային հիմնահարցերի արծարծումով եւ թէ՛ հրապարակախօսական արուեստի ընդհանուր մակարդակով, մէկ քայլ առաջ էին նրանցից:

ԺԹ. դարի 70ականներին Թուրքիայում հրատարակւում էին մէկ տասնեակից աւելի պարբերականներ, որոնցից մէկը՝ Արեւելեան Մամուլը, խմբագրութեամբ Մատթէոս Մամուրեանի (1830-1901) լոյս է տեսել Զմիւռնիայում 1871ին եւ շարունակել է գործել մինչեւ 1909: Հանդէսը մինչեւ 80ականների վերջերը բուրժուա-ժողովրդավարական դիրքերից լուսաբանում էր սոցիալ-քաղաքական եւ կրթական հրատապ խնդիրներ, սակայն յետագայում, երբ քաղաքական յետադիմութիւնը ուժեղ թափով մոլեգնում էր ինչպէս ցարական Ռուսաստանում այդպէս էլ սուլթանական Թուրքիայում, շատ մտաւորականների եւ պարբերականների նման, Արեւելեան Մամուլը աստիճանաբար կորցնելով երբեմնի յեղափոխական, մարտունակ ոգին՝ յայտնուեց ազատախոհութեան դիրքերում:

Հրատարակութեան հենց առաջին տարուանից Արեւելեան Մամուլի էջերը տրամադրւում են լուսաւորութեան, դպրոցի եւ կրթութեան հիմնահարցերի ըստ ամենայնի քննարկմանը: Հանդէսում խորութեամբ լուսաբանւում էին Զմիւռնիայի Մեսրոպեան եւ Հռիփսիմեան վարժա-

րանների ուսումնադաստիարակչական աշխատանքները, քննարկում կրթութեան բովանդակութիւնը, ուսումնական յայտագրերին, ծրագրերին ու դասագրքերին ներկայացուող պահանջները, կարեւորում դրանց առջեւ դրուած խնդիրների նորովի լուծման անհրաժեշտութիւնը։ Թերթը բարձրացնում էր Զմիւռնիայում կրթական խորհուրդ ստեղծելու հարցը, որի բացակայութիւնը, բնականաբար, բացասաբար էր անդրադառնում վարժարանների կառավարման եւ ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպչական աշխատանքների վրայ։ Արեւելեան Մամուլում զգալի տեղ էր յատկացուած եւրոպական դպրոցների կառուցուածքի, առարկաների դասաւանդման դրուածքի, դաստիարակութեան համակարգի, կրթական ծրագրերի վերաբերեալ յօդուածներին։ Ակապէս՝ հանդէսի մի շարք համարներում տպագրուել են Յովհաննէս Իփեքճեանի «Գերմանական Մանկավարժութեան կարեւորութիւնը»[2], «Կրթութիւն ի Լոզան եւ Մանկավարժական Հրահանգք»[3], Դելփեանի «Ենայի Համալսարան»[4] եւ այլ յօդուածներ։

Արեւելեան Մամուլում զգալի թիւ են կազմում եւրոպական ու ռուսական դասական մանկավարժներին ու նրանց ստեղծագործութիւններին նուիրուած յօդուածները, որոնց հիմնական նպատակը եւրոպական ու ռուսական մանկավարժական մտքի նուաճումները հայ մանկավարժներին հաղորդելն էր։ Արեւելեան Մամուլի էջերում տպագրուում են մանկավարժական բնոյթի յօդուածներ, որտեղ դիտարկուել են կանանց կրթութեան, դպրոցի դերի, լեզուի ուսուցման, ուսուցման տեսութեան, կրթութեան բովանդակութեան, ուսուցիչների պատրաստման համար վարժապետանոցներ ստեղծելու, ուսուցիչների բարոյահոգեբանական եւ նիւթական վիճակը բարելաւելու հիմնահարցերը։

Արեւելեան Մամուլը տպագրեց «Կրթութեան Խնդիրը Հայոց Մէջ» ծաւալուն յօդուածաշարը[5], որտեղ անանուն յօդուածագիրը, համեմատական զուգահեռներ անցկացնելով եւրոպական բարեկարգ վարժարանների եւ արեւմտահայ դպրոցների միջեւ, բացայայտում է ազգային կրթութեան թերութիւնները, միաժամանակ բարձրացնում դպրոցն արմատապէս վերափոխելու խնդիրը։ Արձանագրւում է, որ ազգային դաստիարակութեան գլխաւոր թերութիւններից մէկը դպրոցներում տարբեր առարկաների գծով որակեալ ուսուցիչների բացակայութիւնն է։ Հանդէսի էջերում տարիներ շարունակ դիտարկուել են ուսուցիչների քաղաքացիական որոշակի իրաւունքների ապահովման, նրանց բարոյական ու նիւթական վիճակի կայունացման, մասնագիտական պատրաստութեան հիմնահարցերը, որոնք դառնալով Արեւելեան Մամուլի

ծրագրային հիմնադրոյթներ, մնացել են նրա օրակարգում նաեւ յետագայ տարիներին։

Թուրքական գրաքննութիւնը, գրուանի տակ դնելով պոլսահայ մշակոյթը եւ իր ուշադրութիւնը սեւեռելով դրա վրայ, իր հսկողութիւնից դուրս էր թողել արեւմտահայ գաւառների մշակութային կեանքը, հետեւաբար՝ Արեւելեան Մամուլը բաց դուռ էր նաեւ ազգային որոշ հրատապ խնդիրներ առաջադրելու համար, մի հանգամանք, որով նա առանձնանում էր միւս պարբերականներից՝ վայելելով բազմահազար ընթերցողների բարոյական աջակցութիւնն ու ջերմ համակրանքը[6]։ Եւ պատահական չէ, որ ժամանակի մամուլը եւ առաջադէմ մտաւորականութիւնը ըստ արժանւոյն են գնահատել հանդէսի եւ նրա բազմավաստակ խմբագրի տեղն ու դերը հայ լրագրութեան ու մամուլի պատմութեան զարգացման ասպարէզում։ Լուսաւորութեան ու կրթութեան այդ մեծ երախտաւորի մասին Արշակ Ալպոյաճեանը (1879-1962) գրում է. «Մամուրեան իբրեւ գրագէտ անսովոր տիպար մը եղած է Թուրքիոյ հայոց մէջ, իբր գաղափարի ժիր մշակ մը եւ ազգային բազմահմուտ ու արդիւնաւոր գործիչ մը։ Այս բեղուն միտքը շարունակեց Տէտէեաններու սկսած գործը, ազգին ընծայելով բազմաթիւ ինքնագիր եւ թարգմանուած գործեր, որոնք մինչեւ հիմա չեն դադրած իրարու յաջորդող սերունդներու ընթերցանութեան առաջին գրքերը ըլլալէ...»[7]։ Իսկ Գաբրիէլ Զարիհանալեանն (1827-1901) նշում է. «Եռանդով եւ հմտութեամբ լի թերթ մ'է Արեւելեան Մամուլ կոչուածը, զոր'ի[8] Զմիւռնիա կը հրատարակէ Մ. Մամուրեան, եւ որուն գրչի զգուշաւորութիւն եւ կարծեաց նուազ ազատականութիւն՝ առաւել փափաքելի եւ օգտակար պիտի ըլէ իր թերթին շարունակութիւնը»[9]։ Իր գնահատանքի մէջ չափաւոր, գուսպ եւ խստապահանջ Եղիա Տեմիրճիպաշեանն (1851-1908) այսպէս է գնահատել Արեւելեան Մամուլը՝ «Զմիւռնի մէջ ութ ամերէ ի վեր հրատարակուող այս պատուական Հանդէսին գրեթէ ամէն մէկ թերթին մէջ ազգային, գրական, իմաստասիրական, պատմական, քաղաքական, տնտեսական, կրթական եւ գրադատական ընտիր յօդուածներ կը տեսնուին, ոգիով, գաղափարներով, ոճով ու լեզուով ընտիր յօդուածներ, որոնք,- արդարեւ զարմանալի գլուխ եւ զարմանալի ձեռք,- որոնք ամէնն ալ նոյն գրչէն կ'ելնէին, որ ոչ այլ է, բայց նոյն ինքն Պ. Մատթէոս Մամուրեան...»[10]։

Այդ չրջանում օրաթերթը դարձաւ կեանքի հրամայականը։ Թիֆլիսում դեռեւս 50ականներից հրատարակւում էր ազգային-պահպանողական ուղղութիւնը ներկայացնող Մեղու Հայաստանի (1858-1886) քաղաքական, բանասիրական եւ առեւտրական օրաթերթը՝ Սեդրակ Ման-

դինեանի (1844-1915), աշխուհետեւ Պետրոս Սիմէոնեանի (1830-1911) խմբագրութեամբ, իսկ 80ականներից Նոր Դար (1884-1916) քաղաքական-գրական օրաթերթը՝ Սպանդար Սպանդարեանի (1849-1922) խմբագրութեամբ: Այս երկու օրաթերթերն էլ մշտապէս գաղափարական պայքարի մէջ էին Մշակի հետ: Պոլսահայ պարբերականների շարքում Մասիս (1852-1908, հիմնադիր խմբագրապետ՝ կարապետ Իւթիւճեան (1823-1904), Հայրենիք (1870-1896, 1909-1910, խմբագրապետ՝ Արփիար Արփիարեան (1851-1908), Արեւելք (1884-1912, խմբագրապետ՝ Բիւզանդ Քէչեան (1859-1927), ապա՝ Զարեհ Եուսուֆեան (1870-1940) եւ Բիւզանդիոն (1896-1918, հիմնադիր խմբագրապետ՝ Բիւզանդ Քէչեան) օրաթերթերն առանձնանում էին ոչ միայն իրենց երկարակեցութեամբ, այլեւ նշանաւոր էին մեծ պահանջարկով եւ ընթերցողների լայն շրջանում ունեցած բարձր հեղինակութեամբ: Հետաքրքրութեան արժանի է այն փաստը, որ սկզբնական շրջանում Մասիս եւ Հայրենիք օրաթերթերը գտնուել են ազգային-պահպանողական դիրքերում, սակայն յետագայում Արփիար Արփիարեանի, Գրիգոր Զօհրապի (1861-1915), Լեւոն Բաշալեանի (1868-1943) եւ առաջադէմ միւս գործիչների գաղափարական ազդեցութեան շնորհիւ ստացել են ժողովրդավարական ուղղուածութիւն՝ դառնալով հզօր կամուրջ հայ-ռուսական կապերի ստեղծման համար: Դրա ցայտուն օրինակը Արեւելքն է, որի հիմնադրումով աւելի գործնական ու կանոնաւոր յարաբերութիւններ հաստատուեցին հայ ժողովրդի երկու հատուածների միջեւ[11]: Այդ մասին Հրանտ Ասատուրը (1862-1928) գրում է. «Նորահաստատ կապերը հզօրապէս պիտի ազդէին ազգային կեանքին եւ Պոլսոյ օրագրութեան վրայ: Ազգային ամէն խնդիր թէ «Մշակի» եւ թէ «Արեւելքի» մէջ գաղափարներու կատարեալ համերաշխութեամբ կը քննուէին: Զգացումներու եւ մտածողութիւններու համանմանութիւնը երեւան կու գայ հանրային եւ ուրիշ գործերու մէջ ալ»[12]:

ԱՐԵՒԵԼՔ

Մանկավարժութեան նկատմամբ հետաքրքրութիւնն Արեւելքում ակնյայտ էր նրա հիմնադրման առաջին իսկ օրերից: Դպրոցին եւ կրթական գործին նուիրուած յօդուածների թիւը տարէցտարի աճում էր, որը բնականաբար, բարձրացնում էր Արեւելքի պահանջարկը եւ հեղինակութիւնը նաեւ մանկավարժական լայն հասարակայնութեան շրջանում[13]: Օրաթերթը մանրակրկիտ տեղեկութիւններ էր հաղորդում Արեւմտահայաստանի եւ Թուրքիայի հայաչատ կենտրոններում գործող ազգային դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանք-

ների, կրթութեան բովանդակութեան, գիտութեան տարբեր ճիւղերի հիմունքների ուսուցման եւ առարկաների դասաւանդման դրուածքի մասին։ Օրաթերթը բարձրացնում էր ուսուցման բովանդակութիւնը բնագիտամաթեմատիկական առարկաներով համալրելու պահանջը, առաջ էր քաշում ուսուցման սկզբունքներն ու մեթոդներն արմատապէս բարեփոխելու հիմնահարցը, առաջարկում էր ժամանակի պահանջներին համապատասխան դասագրքեր ստեղծելու համար կազմակերպել մրցութային յանձնախմբեր, լուրջ քննարկման նիւթ էին դարձել դպրոցական ընթացիկ եւ տարեվերջեան քննութիւնները եւն. (տես՝ 1884ի թիւ 162, 222, եւ 1885ի թիւ 358, եւն.)։

Արեւելքը հրատարակում էր նաեւ անուանի մտաւորականների եւ հասարակական գործիչների կեանքին ու գործունէութեանը նուիրուած յօդուածներ[14]։ Արեւելքը յաջորդական համարներով հրատարակել է «Ֆրէօպէլ եւ Իր Դրութիւնը» յօդուածաշարը[15], որտեղ հանգամանօրէն լուսաբանւում են Ֆրեդերիկ Ֆրէօբէլի մանկավարժական հայեացքները։ Ֆրէօբէլի պաշտպանած հիմնադրոյթներից մէկը կանանց կրթութեան հարցն էր։ Ֆրէօբէլն այն կարծիքին էր, որ երեխաներին կրթելու համար պէտք են կրթուած մայրեր, առանց որոնց նոյնիսկ մանկավարժական լաւագոյն ու կատարեալ համակարգերը միշտ կը մնան անիրագործելի։ Ֆրէօբէլը կնոջ դաստիարակութեան մէջ էր տեսնում հասարակութեան առողջացման եղբը։ Եթէ Պեստալոցցին (1746-1827), կարծում էր, որ «Ժողովրդի ապագան մայրերի ձեռքի մէջ է» ապա Ֆրէօբէլն աւելացնում էր. «Վերափոխենք կնոջը եւ դրանով կը վերափոխենք ընտանիքը, ընտանիքը վերափոխենք, դրանով պիտի վերափոխենք դպրոցը եւ հասարակութիւնը»[16]։

Արեւելքի էջերում խորութեամբ քննարկւում էր նաեւ գաւառահայութեան կեանքը։ Օրաթերթի կրթական բաժնում լուսաբանւում էին գաւառի դպրոցը եւ կրթական կեանքն իր տարաբնոյթ հիմնահարցերով։ Դեռեւս 70ականներին Սմբատեան Ընկերութիւնը Խարբերդում բացել էր իր վարժարանը, որը կենտրոնական վարժարանի դեր էր կատարում գաւառի գիւղերի համար։ 80ականներին դպրոցին կից գործում էր նաեւ ծաղկոց-մանկապարտէզը։ Սակայն դպրոցը գտնւում էր ծայրաստիճան անմխիթար վիճակում. դպրոցի շէնքը ենթակայ էր քանդման, աշակերտների թիւը 60ից չէր անցնում, ուսուցիչները գրեթէ չէին վարձատրւում, դպրոցը չունէր գրագէտ ուսուցիչներ, չկային նաեւ համապատասխան դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, գրենական պիտոյքներ եւն.։ Ահա թէ ինչու ծնողները նախընտրում էին իրենց երեխաներին ուղարկել Խարբերդի ամերիկեան միսիոնէրների

հիմնած Եփրատ Քոլէջը (գործել է 1876-1915), որը բարեկարգ դպրոց էր, սակայն հայ մանուկներին տալիս էր օտար դաւանաբանական կրթութիւն։ Արեւելքը 1885ի ապրիլեան համարներում ահազանգեց այդ մասին եւ հասարակութեան ուշադրութիւնը սեւեռեց այդ երեւոյթի վրայ։ Հայուի առնելով Ամրատեան Ընկերութեան նիւթական սուղ պայմանները՝ Սրբազան առաջնորդը վճարեց ուսուցիչների ամսավարձը՝ խոստանալով տարեկան մէկ-մէկ ամսավճար տալ այսպէս եւ կոչ արեց հարուստ ազգայիններին հոգալ վարժարանի ծախսերը[17]։

Իրրեւ թերթօն Արեւելքի համարներում տպագրուեցին Րաֆֆու Խաչագողի Քիչատակարանը[18] եւ այլ գործեր։ Օրաթերթի գիտական բաժնում տպագրւում էին մանկավարժա-հոգեբանական բնոյթի ուշագրաւ յօդուածներ։ Այսպէս՝ թիւ 162ում (1884) տպագրուել է Յովսէփ Եուսուֆեանի (1855-1913) «Իրագիտութեան Ուսումը Վարժարանաց Մէջ» յօդուածը։ Ուշադրութեան է արժանի նաեւ Յ. Եուսուֆեանի «Հոգեբանական Խորհրդածութիւններ» շարքը, որտեղ արւում են կենդանի վիճակից մահուան վիճակին անցնելու գիտական մեկնաբանութիւններ։ Արեւելքը թարմ ու առատ լուրերից բացի կանոնաւոր ձեւով հրապարակում է եւրոպական հանրայայտ թերթերից թարգմանուած եւ լաւ խմբագրուած քաղուածքներ, ազգային-քաղաքական լուրջ տեսութիւններ, գրական, գիտական, կրօնական յօդուածներ ու թղթակցութիւններ[19]։

Ժամանակի մամուլը եւ առաջադէմ գործիչները Արեւելքի գործունէութիւնը գնահատել են ըստ արժանւոյն։ Այսպէս՝ Գրական Եւ Իմաստասիրական Շարժումը գրում է, որ Արեւելքը հայկական թերթերից ամենալաւագոյնն էր եւ շատ կողմերով բարձր էր նաեւ Պոլսում հրատարակուող եւրոպական օրաթերթերից։

Նոյնը կարելի է ասել նաեւ Արփիարեանի եւ Բաշալեանի խմբագրութեամբ հրատարակուող Հայրենիք եւ Քեչեանի խմբագրած Բիւզանդիոն օրաթերթերի մասին, որտեղ քաղաքական ու ազգային հիմնահարցերին զուգահեռ տպագրւում էին նաեւ կրթութեան հարցերի մասին ուշագրաւ յօդուածներ, մանկավարժական տեսական քննարկումներ ու դպրոցական տեղեկատուութիւններ։

ԿՐԹԱԼՈՒՍԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ռուս-թուրքական պատերազմի տարիներին (1877-1878) պարբերական մամուլի ծրագրային հիմնախնդիրներից մէկը Հայկական Հարցն էր, երբ ամբողջ խորութեամբ քննարկւում էր արեւմտահայութեան սոցիալ-տնտեսական եւ ազգային-քաղաքական իրավիճակը։ Այս հիմ-

նախնդիրը մշտապէս դարձաւ ինչպէս արեւելահայ, այնպէս էլ արեւմտահայ առաջադէմ պարբերականների օրակարգային քննարկման նիւթ։ Թէ՛ արեւելահայ, թէ՛ արեւմտահայ պարբերականները մեծ ուշադրութիւն են յատկացրել նաեւ ազգային մշակոյթի հարցերին՝ նոր թափ հաղորդելով գրականութեան, երաժշտութեան, թատրոնի, դպրոցական ցանցի զարգացմանն ու ծաւալմանը։

ԺԹ. դարի 80ականներին զարգացման նոր փուլ մտաւ կրթալուսաւորական չարժումը։ Այն գլխաւորում էր 60ականների սերունդին փոխարինած եւ մասնագիտական կրթութիւնը տեղի եւ եւրոպական երկրների բարձրագոյն կրթօջախներում ստացած մտաւորականների մի նոր սերունդ՝ Մամուրեան, Գրիգոր Օտեան (1834-1887), Մկրտիչ Պեշիկթաշլեան (1828-1868), Ռեթէոս Պէրպէրեան (1848-1907), Տեմիրճիպաշեան, Մինաս Ջերազ (1852-1919), Զօհրապ, Յովհաննէս Հինդլեան (1866-1950), Ասատուր, Լեւոն Շանթ (1869-1951), Արշակ Զօպանեան (1872-1954), եւ շատ ուրիշներ։ Այդ չարժման մասին Ասատուրը գրում է. «Քնազանցասէր գրողներու սերունդը հետզհետէ տեղի կուտայ գրական լուրջ ձգտումներով տոգորուած նորերուն եւ նորագոյններուն»[20]։ Առաջադիմական ժողովրդավարական գաղափարներով գինուած մանկավարժները պաշտպանում էին ռէալական կրթութեան գաղափարը եւ հանդէս գալիս դպրոցը արմատապէս վերափոխելու պահանջներով։ Նրանք քննադատում էին ուսուցման միջնադարեան մեթոդները՝ փոխարէնը առաջարկելով ուսուցման բովանդակութիւնը համալրել այնպիսի առարկաներով, որոնք սովորողներին կը գինեն բնութեան եւ հասարակութեան վերաբերեալ անհրաժեշտ գիտելիքներով։ Դաստիարակութեան արդիական գաղափարների պաշտպանութեամբ նրանք հանդէս էին գալիս ոչ միայն մանկավարժական մամուլում, այլեւ բոլոր տիպի պարբերականներում եւ հրապարակումներում։

Հայ մանկավարժական մամուլի առաջին մուննետիկը դարձաւ 1864ին Թիֆլիսում Խորէն Ստեփանէի (1840-1900) հիմնադրած Հայկական Աշխարհը, որը հանգամանքների բերումով, Թիֆլիսից բացի (1864-1871) հրատարակուել է նաեւ Գանձակում եւ Շուշիում (1874-1875), Բաքւում եւ Երեւանում (1877-1879)։ Հայ մանկավարժական մամուլի պատմութեան մէջ իրենց առանձնայատուկ տեղն ունեն Վահան Բաստամեանցի (1835-1881) Դպրոց (1874-1876, Վաղարշապատ), Յակոբ Տէր-Յովհաննիսեանի Մանկավարժական Թերթ (1878-1879, Թիֆլիս), Իսահակ Յարութիւնեանի (1863-1928) Նոր Դպրոց (1908-1913, Թիֆլիս) ամսագրերը եւ 1892ին Մոսկուայում հրատարակուած Մանկավարժական Գրադարան տարեգիրը։

Տասնամեակներ չարունակ ազգային թերթերը դարձել էին ոչ միայն հայ մտաւորականների գաղափարների արձանագրման տոմարներ, այլեւ այդ գաղափարների տարածման ակունքներ։ գաղափարներ, որոնք աստիճանաբար անցնում էին հայրերից որդիներին, աւագ սերնդից՝ կրտսերին։

Հայ մտաւորականների ջանքերի չնորհիւ աճում էր առաջադիմական գաղափարներով առլեցուն, նորովի մտածող մի նոր սերունդ։

Պատահական չէր, որ ԺԹ. դարի առաջին տասնամեակներին հասարակական-ժողովրդավարական չարժումների ազդեցութեան տակ Անդրկովկասում եւ այլուր կազմակերպուեցին աշակերտական-ուսանողական գաղտնի խմբակներ, որտեղ քննարկւում էին նաեւ ազգային-քաղաքական հարցեր։ Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուների Ֆակուլտետի ուսանողների նախաձեռնութեամբ 1908ին լոյս ընծայուեց *Ուսանող* պարբերականը, որի նշանաբանն էր՝ «Քննիլ, Դատիլ, Ստեղծիլ», Գէորգեան Ճեմարանի սանները հրատարակեցին ձեռագիր-խմորատիպ *Կոդոմ* (1910), *Նոր Փարոս* (1912), *Երաժշտութիւն* (1914) թերթերը[21], Շուշիի թեմական դպրոցի աշակերտների նախաձեռնութեամբ 1913ին կազմակերպուեց *Աշակերտ* խմորատիպ գրական-գեղարուեստական չարաթաթերթը։ Այս թերթերը տեղեկացնում էին սովորողների ուսման մէջ ունեցած առաջադիմութեան, նրանց նախասիրութիւնների եւ հետաքրքրութիւնների մասին։ Թերթերում ծանրակչիռ տեղ էր յատկացւում սովորողների գեղարուեստական ստեղծագործութիւններին, որոնք խօսում էին ճեմարանականների բազմակողմանի գիտելիքների եւ գեղագիտական բարձր ճաշակի մասին։ Հարկ է նշել, որ խմորատիպ ձեռագիր մամուլի առկայութիւնը կարեւոր էջ է արեւելահայ մամուլի պատմագրութեան մէջ, որը քիչ թէ շատ պատկերացում է տալիս դարասկզբի առաջին տասնամեակներին հայ դպրոցի աշակերտական կեանքի, դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների, կրթութեան բովանդակութեան, ուսուցման մակարդակի եւ այլ հարցերի մասին։ Սխալուած չենք լինի, եթէ ասենք, որ այն հանդիսացաւ ազգային մանկապատանեկան մամուլի նախատիպը, որի հիմքի վրայ յետագայում ստեղծուեցին մանկավարժական մամուլի նոր, աւելի կատարեալ տեսակներ՝ *Հասկերը*, *Փնջիկը*, *Պատանին* եւ այլ պարբերականներ։

Մասնագիտական մամուլի առաջընթաց նկատւում էր նաեւ արեւմտահայ կեանքում. այստեղ մէկը միւսի յետեւից լոյս էին տեսնում մարզական, երաժշտական, թատերական, գրական-գեղարուեստական ուղղուածութիւն ունեցող պարբերականներ։ Այդ շրջանում լայն թափ

ստացաւ նաեւ մանկավարժական մամուլը։ Լոյս տեսան՝ *Մանկավարժ* (1870-1880, Պոլիս), *Երկրագունդ* (1870-1871, Պոլիս), *Աւետարեր Տղայոց Համար* (1872-1915, Պոլիս), *Թատրոն Բարեկամ Մանկանց* (1876-1878, Պոլիս), *Բուրաստան Մանկանց* (1882-1889, Պոլիս), *Լեզու* (1887-1888, Պոլիս), *Կրթարան* (1888-1889, Պոլիս), *Մաղիկ Մանկանց* (1889-1893, Պոլիս), *Վտակ* (1907, Վան, խմորատիպ), *Դպրոց-Դաստիարակ* (1909, Նորաշէն, (Մուշ), խմորատիպ), *Հայ Ուսանող* (1910-1911, Պոլիս), *Շող* (1910-1913, Պոլիս), *Կրթասիրաց* (1910-1914, Մալաթիա), *Ուսումնարան* (1911-1915, Պոլիս), *Հայ Դպրոց* (1914, Պոլիս) եւ այլ պարբերականներ։

Քանի որ, հասկանալի պատճառով, հնարաւոր չէ վերոնշեալ բոլոր պարբերականները լուսաբանել առանձին-առանձին, ուստի չթերագնահատելով դրանց կրթադաստիարակչական դերն ու նշանակութիւնը՝ հիմնականում կ՚անդրադառնանք այն թերթերին ու հանդէսներին, որոնք իրենց մանկավարժական ուղղուածութեամբ, ներքին դրսեւորումներով ու ծաւալումներով, կրթութեան հիմնահարցերի լուսաբանման խորութեամբ եւ ուսումնադաստիարակչական արուեստի ընդհանուր մակարդակով առաւել աչքի ընկնող դեր են խաղացել մատաղ սերնդի դաստիարակութեան գործում։

ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

Դեռեւս ԺԹ. դարի 60ականներին Կարապետ Շահնազարեանը (1814-1865) Մանչեստրում հիմնադրեց տպարան եւ 1864-1865ին հրատարակեց *Երկրագունդը*, որը նրա մահից յետոյ Ներսէս եպիսկոպոս Վարժապետեանի (1837-1884) ջանքերով տեղափոխուեց Պոլիս։ Նուպար-Շահնազարեան վարժարանի[22] սանները, յաւերժացնելով իրենց բարերարի յիշատակը, 1870ին կազմակերպեցին *Երկրագունդի* վերահրատարակման գործը, որի տնօրէն-հրատարակիչներն էին Յովհաննէս Խրիքճեանը եւ Մ. Միքայէլեանը, իսկ խմբագիրը՝ Զերազը[23]։ Հարկ է նշել, որ մինչ այդ հրատարակուած աշակերտական-ուսանողական պարբերականների չարքում *Երկրագունդը* բնութեան ու հասարակութեան վերաբերեալ անհրաժեշտ գիտելիքների տարածման եւ հրապարակախօսական ինքնատիպ ճաշակով ունէր գթալի առաւելութիւններ։ Դրանում, անշուշտ, մեծ էր պատանի Զերազի՝ ապագայ հրապարակախօսի ու գրաքննադատի դերը։

Իր խմբագրութիւններում Զերազը լուսաւորական-ժողովրդավարական դիրքերից համարձակ քննադատում եւ խարազանում էր ազգային կեանքում տեղ գտած արատաւոր երեւոյթները, որոնք կասեցնում էին ազգային առաջընթացը։ Զերազը կարեւոր տեղ էր յատկացնում հայ

եւ եւրոպական դասականների ստեղծագործութիւններին։ Նա բարձր էր գնահատում Վիկտոր Հիւգոյին (1802-1885), որի գրիչը համարում էր «սուր մը ազատութեան», իսկ լեհ բանաստեղծ Ադամ Միցկեւիչի ստեղծագործութիւնների մասին խօսելիս ափսոսանք էր յայտնում, որ այդ տաղանդաշատ բանաստեղծի ստեղծագործութիւններն անյայտ են հայ ժողովրդին՝ միաժամանակ յուսադրելով, որ Երկրագունդը կը ծաուայի այդ վեհ նպատակին եւ թերեւս «օր մը կարենայ ծանօթացնէ զանի»[24]։ Նա բարձր կարծիք ուներ եւ մեծ համակրանքով էր խօսում նաեւ Փարիզում հրատարակուող Արեւելք եւ Արեւմուտք պարբերականների խմբագիր Ստեփան Ոսկանի (1825-1901) մասին. «Հայ է խմբագիրը, եւ սքանչելի ոճ մ'ունի ֆրանսերէն։ Պ. Ստեփան Ոսկան, որոյ անցեալն անծանօթ է ինձ, օտարաց օգուտ եւ ազգայնոց պատիւ կը բերէ այն ընտիր յօդուածներով, յ'որս լիաբուռն ցանուած են լուսաւոր ու ազատ գաղափարներ. եւ որ աւելին է, շրջահայեաց լեզու մը կը գործածէ»[25]։

Մեծ է Երկրագունդի դերը յատկապէս մանուկներին հայրենասիրութեան, ազգասիրութեան ու մարդասիրութեան ոգով դաստիարակելու գործում։ Այդ նպատակով թերթի տարբեր համարներում տպագրուել են եւրոպական գրականութիւնից եւ հայոց պատմութիւնից ընտիր հատուածներ, ազգագրական պօէմներ, բարոյախօսական թեմաներով գրոյցներ եւ մանրապատումներ։ Թերթի «Գրականական» բաժնի տարբեր համարներում տպագրուել են Ռ. Պատկանեանի «Քաջ Վարդան Մամիկոնեանի Մահը» պօէմը, ինչպէս նաեւ «Մշակ» եւ «Գանգատ» բանաստեղծութիւնները։

Ի շարս այլ հարցերի Երկրագունդը հետեւողականօրէն արծարծում էր նաեւ հայ ժողովրդի երկու հատուածների, ինչպէս նաեւ հայ-ռուսական գրական ու մանկավարժական կապերի ամրապնդման կարեւոր խնդիրները, մի հանգամանք, որը գնալով աւելի էր կարեւորւում եւ ազգային միաբանութեան ճեւաւորման ճանապարհին ճեռք բերում մշակութային նորանոր արժէքներ։ Այս տեսակէտից չարաթաթերթը լայն ժողովրդականութիւն էր վայելում ոչ միայն մանուկների ու պատանիների, այլեւ մեծահասակ ընթերցողների շրջանում։ Գրիգոր Օտեանը, որը Երկրագունդի մշտական բաժանորդներից էր եւ աչալուրջ հետեւում նրա բոլոր համարներին, գրում է. «...Երկրագունտին պէս թերթ մը, թէ եւ մանուկներէ խմբագրեալ, կու գայ յիշեցնել...ուր ուրեմն թէ մենք ալ ունինք դեռ հայերէն լեզու մը, եւ այդ լեզուով կրնան եղեր գրուիլ լուրջ ու զգօն յօդուածներ...»[26]։

Շարաթաթերթում առանձին բաժին է յատկացուել նաեւ թարգմանական գործին։ Թարգմանութիւնների նկատմամբ դրսեւորում էր մեծ զգուշաւորութիւն եւ բարձր ընտրողականութիւն, քանի որ կան գործեր, որոնք «վնասակար են ազգին ներկայ դրից նկատմամբ, ու աղիտաբեր ազդեցութիւն կ'ունենան», կան գործեր, որոնք դեռեւս ժամանակավրէպ են ժողովրդի համար «ու անկէ չ'են կրնար ընդունելութիւն գտնել»[27]։ Այս դէպքում կարեւորւում էր թարգմանչի դերը, նրա դիտունակութիւնը, գգօնութիւնը, խորագիտութիւնը, թարգմանչական արուեստի կուլտուրան, գրական ճաշակը։ Օտար գրական նմոյշներից նա պէտք է ընտրէր այնպիսի հատուածներ, որոնք իրաւամբ կարող են նպաստել երեխաների բարոյական ու մտաւոր զարգացմանը։ Ահա թէ ինչու Երկրագունդը նախընտրում էր Ֆրանսիացի գրողներ Լամընէի (1782-1854), Հիւգոյի, ռուս դասականներից՝ Իւան Կռիլովի եւ այլոց գործերի թարգմանութիւնները։ Լամընէի ստեղծագործութիւններից Տեմիրճիպաշեանի թարգմանութեամբ Երկրագունդում տպագրուել է «Արի Զինուոր» սքանչելի բանաստեղծութիւնը։

Շարաթաթերթն ունի ազգային բաժին, որտեղ տպագրուել են պատմագիտական ու հայագիտական արժէքաւոր ստեղծագործութիւններ՝ «Ցիշատակ Աւարայրի», «Հայոց Պատմութիւն» եւն., ինչպէս նաեւ պատմակենսագրական, ճանաչողական արժէք ներկայացնող ակնարկներ, որոնք հարուստ տեղեկութիւններ են հաղորդում հանրահռչակ գիտնականների եւ անուանի մարդկանց մասին։[28]

Հանդէսի նպատակներից մէկը, որը ցայտուն երեւում է նաեւ նրա ծրագրային յօդուածներից, այն էր, որ մի կողմից ընթերցողներին հաղորդակցուր դարձնէր եւրոպական մանկավարժութեան առաջաւոր սկզբունքներին եւ դպրոցի օրինակելի փորձին, իսկ միւս կողմից՝ ազգային դպրոցը զերծ պահէր կոյր մեխանիկական ազդեցութիւններից, այլապէս այն կը նմանուէր «Օտար կլիմայի տակ սնած, աճած ուրիշ կլիմայի օդ ծծած եւ ուրիշ կլիմայի ջրով ոռոգուած ծառէն փրցուած շիւղին (կամ նոյն իսկ ծառին), որ ուրիշ կլիմայի մը տակ տեղափոխուած ատեն չ'արգասաւորիր ու կը չորնայ»[29]։ Այդ նպատակով այստեղ տպագրւում էին մանկավարժական հիմնահարցերի վերաբերեալ ուշագրաւ յօդուածներ, որտեղ ըստ ամենայնի ներկայացւում էին նաեւ եւրոպական դպրոցների առաջաւոր փորձը։ Առաջարկւում էր՝ չանտեսելով ազգային դպրոցի առանձնայատկութիւնները՝ քննադատաբար եւ ստեղծագործաբար այն օգտագործել դաստիարակութեան ինքնուրոյն համակարգ մշակելու համար։ Այսպէս՝ հանդէսի «կրթա-

կան» բաժնում տպագրուեց Գոթայի ուսուցչական սեմինարիայի տեսուչ Գեհռի «Գերմանական Վարժապետարաններու կազմութիւնը՝ ժողովրդական Դպրոցներու Նկատմամբ եւ Անդի Պահանջմանց Համեմատ» ծաւալուն յօդուածի թարգմանութիւնը (թարգմանիչ Ս. Մ.[30]), որտեղ բարձրացւում է ժամանակի պահանջներին համապատասխան ուսուցչական կադրերի պատրաստման հիմնահարցը։ Հարցի կարեւորութիւնը շեշտադրելու համար Գեհռը յիշեցնում է գերմանացի փիլիսոփայ եւ աստուածաբան Ֆրիդրիխ Շլայէրմախերի հետեւեալ միտքը. «Որչափ ազգ մը սակաւ զարգացած է, այնչափ ալ ժողովրդական վարժապետներու սակաւ կարօտութիւն ունի, բայց որչափ ազգի մը հոգեկան կեանքը աւելի ծլի, այնչափ ալ աւելի մեծամեծ պահանջողութիւններ պէտք է դրուի վարժապետներու կրթութեան համար»[31]։

Հանրայայտ ճշմարտութիւն է, որ դպրոցն ու կեանքը մշտապէս գտնուել են փոխադարձ կապի մէջ, ուրեմն հասարակական կեանքի առաջընթացին զուգահեռ՝ դպրոցները նոյնպէս պէտք է առաջընթաց ունենան։ Յօդուածագիրը բարձրացնում է նաեւ ուսուցչական սեմինարիաների ստեղծման ու ծաւալման, կրթութեան բովանդակութեան վերափոխման, կրթական ծրագրերի բարեփոխման, ուսուցման նոր սկզբունքներին համապատասխան դասագրքերի եւ ուսումնական ձեռնարկների ստեղծման հարցերը։

Երկրագունդը կարեւոր տեղ էր յատկացնում նաեւ Նուպար-Շահնազարեան վարժարանի ուսումնադաստիարակչական աշխատանքների վերլուծութեանը՝ հանգամանօրէն ներկայացնելով վարժարանի կրթական համակարգը, ուսուցման բովանդակութիւնը, դաստիարակութեան եւ ուսուցման դրուածքը եւ այլ հարցեր։ Տպագրուել են վարժարանի մրցանակարաշխութեան հանդէսներին արտասանուած՝ Վարժապետեանի, Ամբրոսիոս Լուսինեանի (1828-1906), Նազարէթ Ներսիսեանի (1864-1922) եւ այլոց ուսուցողական բանախօսութիւնները[32]։

Երկրագունդը խորութեամբ լուսաբանել է նաեւ բարոյական դաստիարակութեան հիմնահարցերը։ Այսպէս՝ «Ուսումնական» բաժնում Երուսաղէմում լոյս տեսնող Միռն ամսագրից արտատպելով[33], Երկրագունդը տպագրել է «Ազաքինի Ու Քաղաքակիրթ Պատանի» չարքը[34], որտեղ հանգամանօրէն քննարկուել են բարոյական դաստիարակութեան նպատակը, բովանդակութիւնը, խնդիրները, մեթոդները, չօշափուել դաստիարակութեան այնպիսի հարցեր, ինչպիսիք են հայրենասիրութիւնը, աշխատասիրութիւնը, գթասրտութիւնը, ծնողասիրութիւ-

նը՝ միաժամանակ խարազանուել են դաւաճանութիւնը, անմիաբանութիւնը, քաղքենիութիւնը, օտարատենչութիւնը եւն.։

Հանդէսը ի չարս այլ հարցերի անդրադարձել է նաեւ աղջիկների դաստիարակութեան եւ կրթութեան հիմնահարցին։ Իր համարներից մէկում Երկրագունդը տպագրել է «Ֆիրխովի Մտածութիւնները կանանց Դաստիարակութեան Վրայ» յօդուածը, որտեղ չօշափւում են աղջիկների ֆիզիկական, մտաւոր, բարոյական, եւ աշխատանքային դաստիարակութեան հարցերը, ինչպէս նաեւ նրանց՝ իրրեւ ապագայ մօր եւ քաղաքացու, հասարակական դերի բարձրացման հրատապ խնդիրը։ Սոցիոլոգիական վիճակագրական հակիրճ վերլուծութեամբ յօդուածագիրը տալիս է նաեւ ընտանիքի եւ ամուսնական կեանքի մի շարք բարոյահոգեբանական գիտական մեկնաբանութիւններ։

Հանդէսը յատուկ ուշադրութիւն է նուիրում կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, աշխարհագրութիւն, աստղագիտութիւն, առողջապահութիւն եւ բնագիտութիւն առարկաների գիտական հիմունքների քննութեանը, որն, անշուշտ, նպաստում էր սովորողների ճանաչողական ուժերի զարգացմանը եւ նրանց աշխարհայեացքի ձեւաւորմանը։ Երկրագունդը անդրադառնում էր նաեւ փիլիսոփայական հարցերի մեկնաբանմանը եւ մի շարք համարներում տպագրուել է «Տեսութիւն Փիլիսոփայութեան Վրայ» յօդուածաշարը։

ԱԻԵՏԱԲԵՐ ՏՂԱՑՈՑ ՀԱՄԱՐ

1872ին Պոլսում Ամերիկահայ Միսիոներական Ընկերութիւնը հիմնադրեց Աւետարեր Տղայոց Համար ամսագիրը, որը Աւետարերի յաւելուածն էր՝ նախատեսուած նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների համար։ Թերթը մինչեւ 1897 ունեցել է նաեւ հայատառ եւ յունատառ թուրքերէնով տպագրութիւններ՝ հրատարակուելով չորս, իսկ յետագայում՝ ութ էջից բաղկացած ծաւալով։ Պարբերականի արտօնատէրն էր Հ. Ք. Կրինը, իսկ տնօրէն-խմբագիրը՝ Հ. Մ. Պարնըմը, ապա՝ Ե. Պլէդը եւ Գրիգոր Գալուստեանը (1879-1963)։ Ամսագրին թղթակցում էին միսիոներական կազմակերպութեան անդամներ Մարտիրոս Դաւիթեանը, Ա. Պոյաճեանը, Յակոբ Մատթէոսեանը եւ ուրիշներ։ 1908ից թերթը վերանուանուել է Աւետարեր Մանկանց. Ամսագրում տպագրուող նիւթերի գերակշիռ մասը ներկայացում էր անատոլիագիր։ Պարբերականի հիմնական ուղղութիւնը քրիստոնէական բարոյախօսութիւնն էր՝ բողոքական դաւանանքի եւ Սուրբ Գրքի միջոցով։

Պարբերականի չուրջ կէս դարեայ գործունէութիւնը պայմանականօրէն կարելի է բաժանել երկու շրջանի՝ 1872-1908, եւ՝ 1909-1915։ Ու-

շագրաւ է, որ առաջին շրջանում հանդէսը կրում էր զուտ կրօնական ուղղուածութիւն եւ նրանում զետեղուած նիւթերը ներծծուած էին քրիստոնէական բարոյախօսութեամբ։ Մինչեւ անգամ հանելուկներն ընտրուած էին Աւետարանից, որոնք չարադրուում էին «Հանելուկ Սուրբ Գրքէն» խորագրի տակ։ Հրաժարուելով դաստիարակութեան նոր մեթոդներից ու ձեւերից՝ ամսաթերթն ամբողջովին ապաւինում էր աւետարանական պատգամներին ու փորձում էր մատաղ սերնդի դաստիարակութիւնը հիմնականում կառուցել քրիստոնէական վարքագրութեան կանոնների հիման վրայ՝ «Քու երկնաւոր հայրդ կը հոգայ քեզի համար։ Ան կ'ուզէ, որ բարի ըլլաս, եւ կը ցաւի, եթէ չես ըլլար։ Քեզի համար տեղ մը պատրաստած է երկնքին մէջ եւ կ'ուզէ որ հոն երթաս»,- *գրում է թերթը*[35]։ *Քրիստոնէութիւնը, որ մարդաբանութեան զարգացման վերաբերեալ ունի իր ուրոյն տեսակէտը, իւրովի էր մեկնաբանում համամարդկային սիրոյ գաղափարը՝ դրա հիմքում դնելով խոնարհութիւնը, հնազանդութիւնը, քրիստոնէական բարեպաշտութիւնը, խոր հաւատը։ Հանդէսը պատանի ընթերցողին համոզում էր, որ* «Հեզերն են, որ կ'օրհնուին, խոնարհներն են, որոնք շնորհ կը գտնեն», *եւ այս գաղափարը դարձնելով գործունէութեան հիմնական նպատակ՝ նա քարոզում էր կրօնաբարոյական գաղափարախօսութիւն։ Այս եւ այլ պատճառներով ամսագիրը խիստ քննադատուել է առաջադէմ մտաւորականների եւ ժողովրդավարական ուղղութիւնը ներկայացնող պարբերականների՝ առաջին հերթին Յակոբ Պարոնեանի Թատրոնի եւ Մանզումէի խմբագրի կողմից։ Այդ մասին բանասէր Գառնիկ Ստեփանեանը գրում է.* «Նա [*Աւետաբեր Մանկանցը*] չէր տպագրում հայ իրականութեան հետ կապուած եւ ոչ մի նիւթ, հայ ժողովրդի անցեալն ու ներկան արտացոլող որեւէ պատմուածք, չէր հրապարակում առհասարակ աշխարհիկ որեւէ բան»[36]։

Սակայն իր գործունէութեան երկրորդ շրջանում, որը համընկնում էր 1908ի Օսմանեան կայսրութեան սահմանադրական շրջանին, հանդէսում զգալի դրական փոփոխութիւններ կատարուեցին։ Այդ երեւոյթն աւելի ցայտուն դարձաւ, երբ թերթը խմբագրում էր Գ. Գալուստեանը, որի շնորհիւ թերթի էջերում կրօնաչունչ յօդուածների հետ մէկտեղ չուտով երեւան եկան նաեւ աշխարհիկ բովանդակութեամբ եւ ազգային հարցեր չօշափող հետաքրքիր եւ ուշագրաւ յօդուածներ։ Այդ մասին Հալէպում լոյս տեսնող Բուրաստանը գրում է, որ Աւետաբեր Մանկանցի 44 տարիների ընթացքում «...քացառիկ յիշատակութեան արժանի են վերջին 6 տարիները միայն, երբ այն լոյս տեսաւ կրկնա-

պատկուած ծաւալով եւ այլազան ու ճոխացած բովանդակութեամբ...»[37]: *Այս շրջանում տպագրւում են հայ եւ այլազգի նշանաւոր մարդկանց կենսագրականները, դասական գրողների ստեղծագործութիւններից ընտիր հատուածներ, հրատարակւում են իրական կեանքը պատկերող յօդուածներ եւն.: Հետաքրքրութեան արժանի է այն փաստը, որ 1914ին ամսագրում բացուեց «Մեր Նամակատուփը» բաժինը, որի նպատակը օտար ափերում ծուարած հայ մանուկների կեանքի մասին տեղեկութիւններ հաղորդելն էր: Այդ մասին Թերթը գրում է.* «Այս էջին վրայ դուք եւ ես նամակներ կը գրենք իրարու եւ մեր վիճակին եւ գործելու վրայ տեղեկութիւններ կու տանք: Հետաքրքրական չը՞լլար ամէն ամիս նամակներ կարդալ խարբերդցի տղայէ մը, կամ վանեցի աղջիկէ մը, կամ հայ մանուկէ մը, որ Ամերիկա գաղթած է, եւ իմանալ, թէ այն տեղերուն մէջ ինչ կ՚ընեն եւ ինչպէս կ՚ապրին»[38]:

Անկախ այն բանից, որ Աւետարեր Մանկանոցը ունէր կրօնական ուղղուածութիւն եւ նպատակ էր դրել կրօնական դաստիարակութեան միջոցով սրբագործել միսիոներական դաւանաբանական ուսմունքի պատուիրանները, այդուհանդերձ, արեւմտահայ պարբերական մամուլի պատմութեան մէջ այն թողել է լրագրական արուեստի ուսանելի աւանդոյթներ՝ գեղեցիկ ձեւաւորում, ճաշակով ընտրուած պատկերազարդ նկարներ, բուսական ու կենդանական աշխարհի վերաբերեալ գիտահանրամատչելի ակնարկներ, բարոյախօսական հետաքրքիր գրոյցներ եւ մանրապատումներ, որոնք գիտելիքներին զուգընթաց գեղագիտական հաճոյք են պատճառել պատանի ընթերցողներին:

Ժամանակի պարբերական մամուլը, ըստ արժանւոյն գնահատելով Աւետարեր Մանկանոցի դերը մատաղ սերնդի դաստիարակութեան գործում, գրում է. «Երեսուն տարուան մէջ 100-120 տեսակ Լրագիր ու Հանդէս ի լոյս ընծայուեցան զանազան նիւթոց վրայ խօսող, բայց կ՚ամաչեմք ըսել, որ անոնցմէ տասն իսկ մինչեւ այսօր չմնացին: ...Այսչափ Լրագրաց եւ Հանդէսներու մէջ մին՝ Թատրոն բարեկամ մանկանց եւ միւսը Աւետաբեր տղայոց, իրենց նպատակ ընտրեցին Տղայոց հետ խօսիլ. սակայն առաջինը հազիւ երկու տարուոյ չափ տղայոց հետ խօսելու տարաբաղդութիւնը եւ վերջինը շնորհիւ Ամերիկացի Պատ. միսիոներաց մինչեւ ցայսօր շարունակելու բարեբաղդ վիճակն ունեցան»[39]: *Այս երկու հանդէսների գործունէութիւնը նպատակային էր եւ շատ կարեւոր՝ երեխաների դաստիարակութեան համար. դրանց հրատարակութիւնը աւելի էր կարեւորւում, երբ եւրոպական երկրներում գրեթէ ամէն օր մէկը միւսի յետեւից լոյս էին ըն-*

ծայրում անհամար քանակութեամբ մանկական նմանատիպ գեղեցիկ հանդէսներ։

Զափազանց տխուր եւ յուսահատական տպաւորութիւն էր թողնում այն իրողութիւնը, որ արեւմտահայ հասարակայնութիւնը դեռեւս ամբողջովին չէր գիտակցում եւ արժեւորում մանկական պարբերականների անհրաժեշտութիւնը եւ դերակատարութիւնը երեխաների դաստիարակութեան գործում։ Դեռ աւելին, իշխում էր այն թիւր կարծիքը, որ այդօրինակ նախաձեռնութիւնն անպտուղ աշխատանք եւ աւելորդ չռայլութիւն է ազգի համար[40]։

ԹԱՏՐՈՆ ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ

ԺԹ. դարի 70ականներին հրապարակախօսական ասպարէզ իջաւ Պարոնեանը։ Նա իր լրագրական եւ հրապարակախօսական առաջին քայլերը կատարել էր *Ծիծրատ* եւ *Մասիս* պարբերականներում։ 1872ից նա թղթակցում է նաեւ Յակոբ Սվաճեանի *Մեղու* ամսագրին, եւ կարճ ժամանակով դառնում նաեւ նրա խմբագիրը։ Թերթի փակուելուց յետոյ (1874) Պարոնեանը հիմնում է *Թատրոն* (1874-1877) եւ *Թիւեաթրօ* (1874-1875) պարբերականները։ 1876ին նա լոյս ընծայեց *Թատրոն Բարեկամ Մանկանց* պատկերազարդ մանկական հանդէսը։ Միեւնոյն ժամանակ նա խմբագրում էր նաեւ *Հոյսը* (1874-1885)[41] եւ թղթակցում *Փորձ* եւ *Փարոս Հայաստանի* (1879-1881) պարբերաթերթերին։ Ջալ գիտակցելով, որ մանկավարժական մամուլը երիտասարդ սերնդի դաստիարակութեան կարեւորագոյն օղակներից մէկն է, Պարոնեանը հնարաւորութեան սահմաններում ձգտում էր օժանդակել դպրոցին, բաւարարել պատանի ընթերցողների կրթասիրական պահանջները, զարգացնել նրանց ճանաչողական հետաքրքրութիւնները ու աչխարհայեցողութիւնը։ «Խօսք Առ Մնողս եւ Պաչտպանս Տղայոց» ծանուցման մէջ[42] ուրուագծուում են հանդէսի նպատակն ու խնդիրները, ուղղութիւնն ու ծրագիրը։ Խորապէս գիտակցելով, որ դեռ վաղ է երեխաներին հաղորդակից դարձնել համաչխարհային գիտական յայտնագործութիւններին եւ գիտելիքներ ու ծանօթութիւններ հաղորդել հանրահռչակ գիտնականների ու փիլիսոփաների մասին՝ հանդէսն իր առջեւ նպատակ էր դրել նախ եւ առաջ նրանց մէջ սերմանել բարոյական բարձր յատկանիշներ՝ առաջնորդուելով հին հռոմէացի փիլիսոփայ Սենեկայի՝ «Սկզբում սովորիր բարի բարքեր, յետոյ՝ իմաստութիւն, այլապէս առանց առաջինի դժուար է սովորել երկրորդը» պատուիրանով։ Հանդէսի ուղղութիւնը բխում էր խմբագրի համոզմունքներից եւ նրա պաչտպանած առաջադիմական գաղափարներից։ Հանդէսի առաջին

համարի՝ «Ծառաջարան իմ Պզտիկ կարդացողներս»[43] խմբագրականում հանգամանօրէն լուսաբանուում են թերթի ծրագիրը, բովանդակութիւնը, նպատակը, առաջադիր խնդիրները եւ նրա գործունէութեան յետագիծը: Առաջին հերթին ներկայացուում է թերթի հասցէատէրը, սահմանուում նրա իրաւունքներն ու պարտաւորութիւնները: «Այս Թատրոն լրագիրը 15 օրը հեղ մը պիտի տպուի յատկապէս ձեզի համար: Ինտոր որ ձեր հայրերը կամ ձեր մեծերը ամէն օր խոշոր խոշոր լրագիրներ կը կարդան բան հասկնալու համար, նոր բաներ իմանալու համար, անանկ ալ դուք այս Թատրոնը կարդալով ձեր չգիտցած շատ բաները պիտի սորվիք»[44]:

Հանդէսն ուղիղ կապ էր հաստատել իր շատ ընթերցողների միջեւ՝ ստանձնելով դպրոցի դեր, որտեղ իրագործւում էր աշխոյժ եւ հետաքրքիր ուսուցման գործընթաց. «Շատ դասեր պիտի տամ ձեզի, եւ ամէն շաբթու համարնիդ պիտի նայիմ. երբ որ դասերնիդ աղէկ սերտած ըլլաք, պիտի փոխեմ համարնիդ, նորըզնոր դասեր պիտի տամ, զբօսանքներ ալ պիտի սահմանեմ ձեզի, աղուոր պատմութիւններ պիտի պատմեմ, խաղեր պիտի սորվեցուցնեմ, հանելուկներ (պիլմեճէ) պիտի ըսեմ ձեզի որ լուծէք»[45]:

Թատրոն Մանկանոցը հրատարակւում էր իւրաքանչիւր ամսուայ 1ին եւ 16ին, ընտիր թղթի վրայ, գեղեցիկ նկարներով պատկերազարդուած, որը մի կողմից՝ նպաստում էր նիւթի հեշտ ընկալմանը, իսկ միւս կողմից՝ լուծում նաեւ գեղագիտական դաստիարակութեան խնդիրներ: Հանդէսի բովանդակութիւնը, նիւթերի հերթագայութիւնը կառուցուած էր այնպէս, որ այն համատեղ լուծում էր նախադպրոցական ու կրտսեր դպրոցական տարիքի երեխաների դաստիարակութեան խնդիրներ: Այսպէս՝ մտաւոր դաստիարակութեան համար անսպառ նիւթ էին ուսումնական ու հանրամատչելի գիտելիքները, բազմաբնոյթ գիտական հրահանգներն ու ծանօթութիւնները, պատմաաշխարհագրական կարեւոր տեղեկութիւնները, գրավարժութեան համար՝ նամակներն ու երկխօսութիւնները, բարոյական դաստիարակութեան համար՝ բարոյախօսական գրոյցներն ու բարոյագիտական մանրապատումները, կրօնական դաստիարակութեան համար՝ Աստուածաշնչի ու Աւետարանի պատուիրանները եւ Մ. Հայրապետների վարդապետութիւնները եւ վերջապէս՝ հատընտիր առակներն ու հանելուկները, գուարճալի խաղերն ու երեխաների ընթերցասիրութիւնը զարգացնող գրական ընտիր հատուածները, որոնք բոլորն էլ գրուած էին գեղարուեստական բարձր ճաշակով եւ գրական գեղեցիկ ոճով: Հանդէսը տալիս էր մանկական գրադարան ստեղծելու գաղափարը՝ «...աւոր

համար չըլլայ, որ այս լրագիրը պատռտէք կարդալէն ետքը, հապա պահեցէք... գալ անգամ նոր Թատրոն մըն ալ պիտի խրկեմ ձեզի, ասոր քովը դրէք եւ իրարու կարեցէք. ասանկ ամէն անգամ մէյ մէկ նոր Թատրոն առնելով՝ մէկ տարուան մէջ խոշոր գիրք մը ունեցած կ'ըլլաք»[45]:

Հանդէսի ծրագրային խնդիրներից մէկը երեխաների հետ մայրենի լեզուով խօսելը եւ այն անաղարտ պահելու ձգտումն էր, որի համար արւում էր ամէն ինչ՝ չխնայելով ջանք ու եռանդ: Դիմելով պատանի ընթերցողներին՝ Հանդէսը գրում է. «Ձեր մէջ կան շատեր որ գիտուն տղու մը չվայելելիք բառեր կը գործածեն անոնց հայերէնը չգիտնալով. կան տղաքներ, որ իրենց հօրը աղըպպա կը կանչեն՝ չգիտնալով որ Հայրիկ պէտք է ըսել. ասանկ ալ չեն գիտեր որ Մայրիկ պէտք է կանչէլ տուտու (*այս եւ յաջորդ ընդգծումները բնագրային են - Շ.Ո.*) ըսելու տեղ:

Ասոր պէս շատ բառեր կան՝ որոնց հայերէնը չէք գիտեր դուք. ահա այս Թատրոնին մէջ ես անանկ բառերուն ամէն մէկին առջեւ հայերէնը պիտի դնեմ՝ որ դուք աշխատելով սորվիք եւ պէտք եղած ատենը սխալ բառ չգործածէք»[47]: *Պարոնեանը կարեւորելով մայրենի լեզուի դերը՝ միաժամանակ բարձրացնում է այն օտարամուտ բառերից ձերբազատելու պահանջը.* «Մեծ ամօթ է հայ տղու մը համար երբոր չգիտնայ թէ օտային հայերէն սեւեակ կ'ըսեն, պաղճային պարտէզ կ'ըսեն...», *իսկ աւելի նուաստացուցիչ է, երբ երեխան* «բառերուն հայերէնը գիտէ եւ չը գործածեր»: *Հանդէսի էջերում խարազանւում էր օտարամոլութիւնը, կոյր մեխանիկական ընդօրինակումը եւ առաջադրւում էր ուսուցումը մայրենի լեզուով կազմակերպելու խնդիրը. հարցադրում, որն այդ ժամանակաշրջանում բախտորոշ էր արեւմտահայութեան համար:*

Հանդէսի ծրագրային հիմնադրոյթներից մէկն էլ հայ մանուկներին այն ամէնը սովորեցնելն էր, ինչն անհրաժեշտ էր «կրթեալ եւ գովելի տղայ ըլլալու համար», *ուրեմն՝ մտաւոր գիտելիքներից զատ Հանդէսը կարեւորում էր նաեւ դրական վարքագծի ձեւաւորման եւ բարոյական գիտելիքների դերը: Այն հանգամանքը, որ ոչ բոլոր ընտանիքներում երեխաները կարող էին բարոյական ճիշտ դաստիարակութիւն ստանալ, խմբագրութեանը պարտաւորեցնում էր, որ մանուկների ուշադրութիւնը հրաւիրի իրենց նիստուկացի, բարեկիրթ վարուեցողութեան եւ կենցաղային քաղաքավարութեան տարրական կանոնների պահպանման վրայ: Այլ կերպ ասած՝ Հանդէսը երեխաների հետ քննարկում էր*

այն ամէնը, ինչը բացակայում էր դասագրքերում եւ չէր ուսուցանւում դպրոցում եւ ընտանիքում։

Թատրոն Բարեկամ Մանկանոցը իր ծրագրային հիմնադրոյթներով ծառայում էր որպէս մանկական հանրագիտարան, որտեղ 3ից 15 տարեկան երեխաներին հաղորդւում էին կարեւոր, օգտակար եւ հանրամատչելի գիտելիքներ։ Պարոնեանի պարբերականը եւ ընդհանրապէս նրա բոլոր ստեղծագործութիւնները արժէքաւոր էին ոչ միայն նրա համար, որ առաջադրում էին բարոյական դաստիարակութեան նոր մօտեցումներ, քննարկում հասարակական-քաղաքական, սոցիալական-կենցաղային, արդիական, դեռեւս ոչ մէկի կողմից չառաջադրուած խնդիրներ, այլեւ դրանք լուսաբանւում էին ոչ քարոզչաբար, ոչ տեսական դատողութիւններով, այլ կեանքից բխած օրինակները, երեւոյթները սպանիչ հումորով ներկայացնելու մեթոդով։ Ջրաւարարուելով այդ ամէնով՝ Պարոնեանն իր պատանի ընթերցողներին յորդորում էր որ նրանք թերթում տպագրուած նիւթերը «իրենց պզտիկ եղբօրը կամ քրոջը հասկցնեն եւ սորվեցնեն»։ Այդ եղանակով կը լուծուէր երկու կարեւոր խնդիր. մի կողմից՝ կրկնելով սովորածը՝ աւելի լաւ կ՚իւրացնեն նիւթը, միւս կողմից՝ կ՚օժանդակեն նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակութեան գործին։

Հանդէսը կարեւորում էր նաեւ աշխատանքային դաստիարակութեան դերը, որի հիմքերը պէտք է դրուեն վաղ տարիքում։ Աշխատանքային դաստիարակութեան ճիշտ կազմակերպումն իր հերթին օգնում է պատանիների մասնագիտական կողմնորոշմանը։ Այդ մասին հանդէսը գրում է. «Մանչերուն համար արհեստներուն (զէնաաք) պատմութիւնը՝ պիտի ընեմ, որ երբոր մեծնան իրենց ուզած արհեստն ընտրեն։ Շատ տղայ կ՚ուզէ որ իր մեծցած պտենը բանելիք արհեստն այսօրուընէ որոշէ. տղայ մը պզտիկուց կուզէ որ ժամագործ (սահաթճի) ըլլայ, ուրիշ տղայ մը կը փափաքի որ բժիշկ (հեքիմ) ըլլայ, ուրիշ մըն ալ սեղանաւոր (սարաֆ) ըլլալ կուզէ, բայց կը կարծէ որ այս արհեստներէն մէկուն հետեւելու համար հերիք է որ մեծնայ. չգիտեր որ ժամագործ կամ սեղանաւոր եղողը աղէկ թուաբանութիւն եւ գիր գրել գիտնալու է, եթէ ոչ ձիավարէն (պեկիրճի) ուրիշ բան չկրնար ըլլալ»[48]։

Թերթն ունէր նաեւ կրօնական բաժին, որտեղ տպագրւում էին Աստուածաշնչից եւ այլ կրօնական գրքերից խնամքով ընտրուած բարոյախօսական գրոյցներ, որոնք նպաստում էին երեխաների կրօնաբարոյական դաստիարակութեանը. դրանք հիմնականում ծառայում էին իրրեւ օժանդակ միջոցներ՝ բարոյագիտական նոր գրոյցներ ստեղծելու համար, որի չնորհիւ հեղինակի ասելիքը դառնում էր աւելի դիպուկ եւ

համոզիչ։ Այսպէս, օրինակ, «Ադամ Եւային Խարուիլը» գրոյցի միջոցով հեղինակը հետամտում է երկու կարեւոր նպատակ, նախ՝ երեխաներին ծանօթացնել Աստուածաշնչի բովանդակութեանը եւ երկրորդ՝ դրա հիման վրայ հիւսել բոլորովին նոր բովանդակութեամբ պատմութիւններ։ Տուեալ դէպքում յօրինւում է «Թագաւորի եւ Փայտ կտրող Ամուսինների» պատմութիւնը եւ տրւում դրանից բխող բարոյական ուսանելի դասերը։ Այս պատմուածքում չօչափւում է այն միտքը, որ չատ յաճախ ծոյլ ու անբան մարդիկ մեղադրում են Ադամին ու Եւային, որ նրանք խաբուեցին օձի կերպարանք առած սատանայի գայթակղութիւններից եւ կերան արգելուած պտուղը, որի համար Աստուած նրանց վռնդեց դրախտից՝ պատուիրելով, որ այսուհետեւ նրանք ապրեն իրենց սեփական քրտինքով վաստակած աշխատանքով։ Նրանց մեղադրողներից մէկն էլ անտառում փայտ կտրող կինն էր, որն իր ամուսնուն դժգոհելով ասում էր. «Ախ թէ որ Աստծոյ դէմ անհնազանդութիւն չըննէին, մենք հիմա չպիտի դատապարտուած ըլլայինք ասանկ օրն ի բուն աշխատելու եւ մեր հացը ճակտի քրտինքով վաստակելու»[3]։ Երբ այս խօսակցութիւնը լսում է աղքատի չորերով ծպտուած թագաւորը, եւ որպէսզի ցոյց տայ, որ մարդ արարածը զերծ չէ սխալներ գործելուց, նրանց տանում է իր պալատը եւ ենթարկում զանազան փորձութիւնների՝ այն ժամանակ պարզ է դառնում, որ ամէն մարդ էլ ենթակայ է գայթակղութեան, ուրեմն մարդն անթերի չէ եւ ցանկացած առիթով կարող է սխալուել։ Զրոյցի հիմնական գաղափարն այն է, որ մարդը դաստիարակւում է աշխատանքի մէջ, եւ նրա առաջին դաստիարակն իրական կեանքն է՝ իր բոլոր դժուարութիւններով եւ կենսական պահանջներով հանդերձ։

Հանդէսի ծրագրային խնդիրներից մէկն էլ կենդանական եւ բուսական աշխարհի մասին անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելն էր։ Թերթի իւրաքանչիւր համարում տպագրւում էին կենդանիների եւ թռչունների մասին հետաքրքրաշարժ պատմուածքներ, որոնք հարստացնում էին երեխաների կենդանաբանական եւ բնագիտական գիտելիքները («Կապիկը», (թիւ 2, 1876), «Վարդան Եւ Մեղու», (թիւ 3, 1876), «Գայլ», (թիւ 3, 1876), «Նապաստակ», (թիւ 14, 1876), «Եղնիկ», (թիւ 5, 1876), «Կարապ», (թիւ 3, 1877) եւն.)։

Հանդէսի հոգեբանամանկավարժական եւ ճանաչողական կարեւոր արժէքն այն է, որ խնամքով ընտրուած մանրավէպերի ու պատմուածքների նախատիպը անծանօթ չէր երեխաներին. դա իրենց միջավայրում ապրող գիւղացին էր, մշակն էր, արհեստաւորն էր, ուսուցիչն էր, բժիշկն էր, որոնք մարմնաւորելով այս կամ այն կերպարը՝ աւելի տր-

պական էին դարձնում այն եւ իրենց օրինակով, վարքագծով, նիստուկացով օգնում էին երեխաներին ճիշտ դատելու իրենց եւ ուրիշների բարոյական արարքների մասին։ Հանդէսի մի շարք համարներում «Մանրվէպեր» խորագրի տակ տպագրուեցին Մամուրեանի, մանկական ընտրանի չափածոյ պատմուածքները, որոնցով անուանի մանկավարժը բարոյագիտական դասեր էր տալիս մանուկներին, սովորեցնում նրանց ճանաչել կեանքն իր բոլոր կողմերով, զգուշացնում չհրապուրուել իրերի ու երեւոյթների արտաքին տեսքով, կարողանալ ճիշտ կողմնորոշուել ցանկացած իրավիճակում։

Մանկագրի յատուկ բծախնդրութեամբ Պարոնեանը Թատրոն Բարթկամ Մանկանցի համար որպէս ընթերցանութեան նիւթ ջոկում էր հայ եւ եւրոպական գրողների լաւագոյն ստեղծագործութիւններից ընտիր հատուածներ, հեքիաթներ, առակներ, հանելուկներ, որոնք գարգացնում էին երեխաների ստեղծագործական երեւակայութիւնը, ընդլայնում ճանաչողական հետաքրքրութիւնների շրջանակը եւ նպաստում նրանց լեզուամտածողութեան ունակութիւնների զարգացմանը։ Արեւմտահայ կեանքում հայ մանուկը թերեւս առաջին անգամ Թատրոն Բարթկամ Մանկանցի միջոցով հնարաւորութիւն ստացաւ ծանօթանալու եւրոպական ժողովրդական հեքիաթներին։ Ուշագրաւ է այն, որ շատ հեքիաթներ անուանի գրողի գրչի տակ ստանում էին ազգային կերպաւորում՝ նպատակ ունենալով հայ մանուկների համար աւելի մատչելի եւ դիւրըմբռնելի դարձնել հեքիաթի իմաստն ու բովանդակութիւնը։ Պարոնեանը պարզ, անկաշկանդ եւ հետաքրքիր երկխօսութիւն է ծաւալել թերթի եւ ընթերցողների միջեւ։ Նա անկեղծօրէն խոստովանում է, որ հանդէսում տպագրուած շատ պատմութիւններ ինքը լսել ու սովորել է իր փոքրիկ բարեկամներից։

Հանդէսի ծրագրային բաժիններից մէկը առակների, խրատիկների, առածների, հանելուկների եւ վանկահանելուկների, ասոյթների եւ ասացուածքների շարքն էր, որոնք ծառայում էին որպէս կարեւոր միջոցներ բացատրական ու արտայայտիչ ընթերցանութեան համար։ Առակներում ցայտուն ու վառ գոյներով պատկերւում է չարի եւ բարու պայքարը՝ մարմնաւորուած դրական ու բացասական կերպարներով։ Անչափ մեծ է առակի ճանաչողական եւ կրթադաստիարակչական դերը մատաղ սերնդի դաստիարակութեան գործում։

1877 ծնունդից Հանդէսի խմբագրութիւնը ստանձնեց կարապետ Եզամճեանը, որը շարունակեց Պարոնեանի որդեգրած գաղափարաբարոյական ուղղուածութիւնը՝ ստեղծելով նաեւ ծրագրային նոր բաժիններ՝ «Բարոյական Վէպեր», «Բարոյական Դասեր», «Մտաւոր Վար-

ժուքիւններ» եւ «Զուարճալի Խաղեր»։ Բարոյական վէպեր բաժնում մէկը միւսի յետեւից տպագրւում են «Որբ Տղան» (թիւ 1, 1877), «Հպարտութիւն եւ Վեհանձնութիւն» (թիւ 3), «Ժամանակին Ծարգը Գիտցէք» (թիւ 5), «Բժիշկ եւ Գիւղացի» (թիւ 7) եւ այլ պատմուածքներ, որոնք հարստացնում են երեխաների բարոյագիտական գիտելիքները եւ նրանց մէջ դաստիարակում ազնուութիւն, ընկերասիրութիւն, ճշմարտախօսութիւն, երախտագիտութիւն, աշխատասիրութիւն եւ բարոյական դրական այլ յատկութիւններ։ Հանդէսում առանձնակի տեղ են գրաւում հայրենասիրական, մարդասիրական ու ազգասիրական բնոյթի բարոյական վէպերն ու պատմուածքները։

Սակայն Թատրոն Բարեկամ Մանկանցի հրատարակութիւնը նոյնպէս երկար չտեւեց։ Համապատասխան թուով բաժանորդներ չունենալու պատճառով 1878 ծունիսին այն ընդմիշտ փակուեց։

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

1882ին Պոլսում Նշան Պէրպէրեանը (1842-1907)՝ կարապետ Գարակիւլեանի (1866-1920) եւ Սարգիս Տէօվլէթեանի խմբագրութեամբ, հրատարակեց Բուրաստան Մանկանց պատկերազարդ կիսամսեայ հանդէսը, որը բարոյական, կրօնական, պատմական, ուսումնական, աշխարհագրական եւ այլ անհրաժեշտ գիտելիքների, մանկական գրական չափածոյ պատմուածքների, զուարճալի խաղերի, այլաբանական զրոյցների, ասացուածքների, չուտասելուկների, առածների ու հանելուկների մի իւրօրինակ եւ հետաքրքիր հաւաքածու էր։ Հանդէսն իր ծրագրային տարբեր բաժիններով, հարուստ բովանդակութեամբ, նիւթերի ընտրութեամբ եւ մատուցման ձեւով կրել է եւրոպական մանկապատանեկան նմանատիպ հանդէսների ազդեցութիւնը։ Պատահական չէր, որ նրա խմբագիր-հրատարակիչները սերտ կապեր ունէին եւրոպական հանրայայտ խմբագրութիւնների հետ։ Բուրաստան Մանկանցը համագործակցում էր նաեւ Ազբիւրի հետ, որի մասին գրում է. «Ազբիւրը՝ որ ռուսահայ Բուրաստանն է, ճիշտ մեր դերն կը կատարէ զարգացնելով եւ ընդարձակելով՝ մանկանց բարոյականն, ուստի եւ արժանի է ամէն տեսակ բաջալերութեան»[50]։ Հանդէսն ունէր գիտահանրամատչելի բնոյթ, որի համար յաճախ քննադատւում էր «տղայոց համար չափազանց լուրջ» լինելու պատճառաբանութեամբ[51]։ Սակայն հանդէսի խմբագիրներն իրենց ընդդիմախօսներին տալիս են սպառիչ պատասխան՝ հիմնաւորելով, որ Հայաստանում մանկական լրագրերը, ինչպէս եւրոպական երկրներում, դեռեւս կանոնակարգուած չեն ըստ տարի-

քային շրջանների, հետեւաբար՝ մայրենի լեզուով հրատարակութիւնները պէտք է համապատասխան լինեն երեխաների տարիքային առանձնայատկութիւններին, նրանց հետաքրքրութիւններին ու նախասիրութիւններին, այսինքն՝ «նրանց նիւթերն աստիճանաւոր եւ խառն լինին»[52]: Հանդէսը, որ լոյս է տեսել վեց տարի, համապատասխանաբար բաղկացած էր վեց հատորից, հատորը՝ 24 տետրից, տետրը՝ 16 էջից՝ հետեւեալ բաժիններով.

1) նշանաւոր մարդկանց մանկութեան եւ կեանքի յիշարժան դէպքերի մասին պատմուածքներ՝ լուսանկարներով հանդերձ,

2) մանկական վէպեր, բարոյական մանրավէպեր, գիտութիւնների ու արուեստների վերաբերեալ հանրամատչելի ծանօթութիւններ ու տեղեկութիւններ,

3) չուրջերկրեայ ճանապարհորդութիւնների մասին ուսումնագիտական հանրամատչելի պատմուածքներ,

4) գուարճալի խաղեր, չուտասելուկներ, հանելուկներ, առակներ,

5) քաղաքավարութեան եւ մարմնակրթութեան վերաբերեալ դաստիարակող եւ ուսուցանող դասեր:

Ծրագրային նիւթերն ընտրելիս ու դասակարգելիս խմբագրութիւնն ամենայն հաւանականութեամբ առաջնորդուել է եւրոպական համանման հանդէսների ու լրագրերի սկզբունքներով ու ընդօրինակել նրանցից: Ծրագրային նիւթերը ժամանակագրական որոշ կտրուածքով դիտարկելիս՝ ակնյայտ երեւում է, որ խմբագիր-հրատարակիչները ջանք չեն խնայել միջազգային չափանիշներին համապատասխան թերթ հրատարակելու համար:

Հանդէսի առաջին հատորը, որը բաղկացած էր 384 էջից, պարունակում է աւելի քան 170՝ մէկը միւսից գեղեցիկ եւ ճաշակով կատարուած նկարներ, որոնց հեղինակները խմբագիր-հրատարակիչներն էին: Հանդէսին թղթակցում էին ինչպէս Պոլսի, Զմիւռնիայի եւ Թուրքիայի հայաշատ կենտրոնների հայկական դպրոցների աշակերտները, այնպէս էլ անուանի գրողներն ու հրապարակախօսները:

Բուրաստան Մանկանցում մեծ թիւ են կազմում այլաբանական փոքրածաւալ գրոյց-պատմուածքները, որոնց միջոցով երեխաները ծանօթանում էին կեանքում եւ կենցաղում տեղ գտած ինչպէս բացասական, յոռի երեւոյթներին, այնպէս էլ կեանքի գեղեցիկ կողմերին:

Այսպէս, օրինակ, «Ցորենի Հասկերը» փոքրածաւալ գրոյցում ցոյց է տրուած, թէ ինչպէս մի հողագործ իր որդու հետ դաշտ է դուրս գալիս՝ տեսնելու՝ ցորենի հասկերը հասունացե՞լ են, թէ՞ ոչ: Փոքրիկ տղան, ցո-

բենի հասկերը տեսնելով, հարցնում է հօրը. «Հա՛յր իմ, ըսաւ տղան, ինչէ՞ն է որ սա ցօղուններէն ոմանք ծռած են, ոմանք ալ ուղիղ կը կենան: Անշուշտ ուղիղներն աղէկ են եւ ծռածները գէշ»: Հայրը, լսելով այդ, վերցնում է երկու հասկ եւ տղային ասում. «Նայէ՛ տղաս, այս հասկը որ, պարկեշտութեամբ ծռած էր, գեղեցիկ հատիկներով լի է. ընդհակառակն՝ միւսը որ հպարտութեամբ գլուխը բարձր բռնած էր, բոլորովին պարապ է: Այսպէս է ահա՛ աշխարհի մէջ ամէն բան. տգէտներն հպարտ, իսկ գիտուններն համեստ են»[53]:

Երեխաների մէջ բարոյական զգացմունքներ (խիղճ, գթասրտութիւն, բարութիւն, ուրախութիւն, տխրութիւն եւն.) դաստիարակելու համար չափազանց արժէքաւոր են բուսական ու կենդանական աշխարհից քաղուած մանրապատումները:

Հանդէսի ծրագրային բաժիններում առանձնայատուկ տեղ են գրաւում ժողովրդական բանահիւսութեան նիւթերը՝ հեքիաթներն ու ասացուածքները, հանելուկներն ու առածները: Այստեղ տպագրուել են ոչ միայն հայ, այլեւ համաշխարհային ժողովրդական բանահիւսութեան գանձերը: Հանդէսի մի չարք համարներում տպագրուել են «Նաւապետի Շուները», «Բիէմոնթէի Հովիւը» (տետր 1ից՝ 18ը) եւ այլ պատմուածքներ: Իրենց գեղարուեստական բարձր արժէքով աչքի են ընկնում Ռ. Պատկանեանի, Ադեքսանդր Փանոսեանի (Ալփասլան, 1858-1919), Ա. Մեհրաբեանի (1865-1921) եւ այլոց բանաստեղծութիւնները, որոնք տպագրուել են «Տղայոց Համար» խորագրի տակ: Այստեղ են տպագրուել Ռ. Պէրպէրեանի «Առաւօտ» (տետր 19, 1882թ., էջ 299), «Իմ Հայրիկ» (տետր 21, 1882, էջ 326), «Աստուած» (տետր 22, 1882թ., էջ 342), «Աչուընն Ալ Կ'անցնի» (տետր 24, 1882, էջ 376), Հայր Ղեւոնդ Ալիշանի (1820-1901) «Յարեաւ Ջէ Աստ», «Ի Ծնունդն Քհաւսի» (տետր 1, 1883, էջ 4) եւ այլ բանաստեղծութիւններ:

Բուրաստան Մանկանցի կարեւոր ձեռքբերումներից մէկն այն էր, որ նա սկիզբ դրեց գրականութեան գիտահանրամատչելի ակնարկի ժանրին, որն իր յետագայ զարգացումը գտաւ միւս պարբերականներում: Այսպէս՝ տպագրուել է «Շոգեչարժ Մեքենայի Գիւտը» (տետր 2, 3, 4, 1882), որտեղ պատմւում է, թէ ինչպէս դեռեւս Քրիստոսի ծնունդից 120 տարի առաջ Հերոն Ալեքսանդրիացին արդէն ունէր շոգու հզորութեան վերաբերեալ աշխատութիւններ, «Ճանապարհորդութիւն Տոքթէօր Քրրուոյի» (տետր 3, 5, 7, 1882), որտեղ պատմւում է, թէ ինչպէս Ֆրանսիացի ծովային առաջին կարգի բժիշկ դոկտոր Քրուոն կատարել է երկու մեծ ճանապարհորդութիւն Ամերիկայում, «Քրիստափոր

Գոլոմպոս կամ Ամերիկայի Գիւտը», «Նոր Գալեոնիա» (տետր 5ից՝ 20ը) եւ գիտաակնարկային այլ պատմուածքներ։

Նշանաւոր մարդկանց կենսագրութիւններ շարքից հանդէսում տպագրուեցին Ջէյմս Ուատտի, Կոլումբոսի, Ռիչարդ Ագրոյթի, Ռոբերտ Ֆուլտոնի, Մոցարտի, Յովհաննէս Այվազովսկու եւ այլոց կեանքն ու գործունէութիւնը մեկնաբանող գեղարուեստական ակնարկներ։ Երեխաներին ընթերցանութեան հետաքրքիր նիւթ էր տալիս «Մանկութիւն Երեւելի Արանց» շարքը, որտեղ գեղարուեստական մանրապատումներով ներկայացւում էին հանրայայտ մարդկանց մանկութեան եւ պատանեկութեան տարիները։ Գեղարուեստական առումով այդ շարքից ուշագրաւ է «Փոքրիկ Աստղաբաշխն՝ Բիեռ Կասանդին», «Փոքրիկ Դատարկասուն-Ամիոյ» պատմակենսագրական պատումները։

Հանդէսի ծրագրային բաժիններից մէկը «Վարժութիւն Բարոյական»ն էր, որը երեխաներին օգտակար գիտելիքներ ու ծանօթութիւններ էր հաղորդում բնութեան երեւոյթների, երկրի, արեգակի, լուսնի, նաեւ մարդու բնաւորութեան դրական ու բացասական գծերի, մարդկային արատների ու առաքինութիւնների մասին։

Հանդէսի ուշադրութեան կենտրոնում երեխաների բարոյական դաստիարակութիւնն էր, որին մեծապէս նպաստում էր «Հօրեղբօր Մը Նամակները» շարքը (տետր 1ից՝ 13ը), որտեղ բարոյախօսական-բարոյախրատական զրոյցների միջոցով երեխաների մէջ դաստիարակւում են բնաւորութեան դրական գծեր՝ պարկեշտութիւն, արդարամտութիւն, ազնուութիւն, ճշմարտախօսութիւն, աշխատասիրութիւն, ընթերցասիրութիւն եւն.։ Յատկապէս կարեւորւում է օրինակի դերը երեխայի վարքագծի ձեւաւորման գործում։ Այդ մասին հօրեղբայրն իր սիրելի եղբօրորդուն գրում է. «Սիրելիս, մարդս բնութեամբ ուրիշներուն ըրածին կը հետեւի։ Օրինակը իրեն վրայ մեծ ազդեցութիւն կ'ընէ։ Բայց թէ՛ աղէկ եւ թէ՛ գէշ օրինակներ կան։ Բարեկիրթ տղան պէտք է որ երկուքէն ալ օգուտ քաղէ»[54]։

Հանդէսում ծանրակշիռ մաս են կազմում աստղագիտական, բնագիտական, աշխարհագրական եւ պատմագիտական նիւթերն ու ծանօթութիւնները, ինչպէս նաեւ՝ Հայաստանի աշխարհագրութեան եւ պատմական նշանաւոր վայրերի նկարագրութիւններն ու կարեւոր տեղեկութիւնները։ «Աստղագիտական Տեղեկութիւններ» բաժնում բարձր դասարանցիների համար տպագրուել է «Արեգակը» գիտահանրամատչելի յօդուածաշարը, որտեղ գիտելիքներ են հաղորդւում արեգակնային համակարգի կառուցուածքի մասին (տետր 21, 1882, էջ 337)։

Բուրաստան Մանկանոցում կարեւոր նորամուծութիւն էր ֆիզիկական դաստիարակութեան հիմնահարցերին նուիրուած «Մարմնամարզութիւն» ծրագրային բաժինը, որտեղ տպագրւում էին լողի, ցատկի, վազքի, մարմնամարզութեան եւ սպորտի այլ ձեւերի վերաբերեալ յօդուածներ (տեսր 7, 1882, էջ 111-113, տեսր 12, էջ 187-188, տեսր 13, էջ 208-209 եւ այլն), որոնք կարեւորում էին ֆիզիկական դաստիարակութեան դերը մատաղ սերնդի համակողմանի եւ ներդաշնակ դաստիարակութեան գործում:

Հանդէսի նորամուծութիւններից մէկն էլ «Ընտանեկան Դեղեր» բաժինն էր, որտեղ գետեղուած բարոյախօսական գրոյցների միջոցով երեխաների մէջ մշակւում էին առողջապահական կանոններից օգտուելու, մարմինը, միտքը եւ հոգին առողջ պահելու եւ զարգացնելու կարողութիւններ եւ հմտութիւններ: Բուրաստան Մանկանոցը երեխաներին հաղորդում էր՝ «...մարմինդ ու միտքդ առողջ պահելու միջոցներն բոլորովին գիտութեան մէջ մի փնտռեր, աշխարհիս երեք լաւագոյն բժիշկներ՝ Աշխատութիւն, Ժուժկալութիւն եւ Զոհունակութիւնն են»[55]:

ՄԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑ

Բուրաստան Մանկանոցը հարուստ է նաեւ թարգմանական նիւթերով, որոնց մէջ առանձնակի տեղ են գրաւում եւրոպական եւ ռուսական առաջադէմ գրողներ՝ Ջարլզ Դիքենսի, Հենրի Լոնգֆելոյի, Կռիլովի, Ժան Լաֆոնտէնի, Հանս Քրիստիան Անդերսէնի, Հիւգոյի եւ այլոց ստեղծագործութիւնները:

Առաջադէմ մտաւորականները բարձր են գնահատել հանդէսի գործունէութիւնը: Տեմիրճիպաշեանը գրում է. «Ջերմապէս կը յանձնարարենք բոլոր հայ ընտանեաց Բուրաստան մանկանց անուն պատկերազարդ շաբաթաթերթն, որ թէ նիւթոց ու թէ պատկերաց կողմէն օր ըստ օրէ կը կատարելագործուի՝ ջանիւք ու զոհողութեամբք իր անխոնջ եւ քաջարուեստ հիմնադիր-տնօրէն Պարոն Նշան Պէռպէռեանի»[56]:

Սակայն Բուրաստան Մանկանոցը 1888ին կանգնեց փակման եզրին՝ համապատասխան թուով բաժանորդներ չունենալու պատճառով:

Իրրեւ Բուրաստան Մանկանոցի շարունակութիւն Նշան Պէրպէրեանը 1889ին ձեռնամուխ եղաւ Մաղիկ Մանկանց կիսամսեայ հանդէսի հրատարակմանը, որի արտօնատէրն էր Անտոն Սագայեանը (?-1927): 1891ին Միհրան Ասքանազի (1854-1904) խմբագրութեամբ հանդէսը լոյս տեսաւ իրրեւ դաստիարակութեան եւ կրթութեան հիմնահարցերին նուիրուած շաբաթաթերթ: Այն 16 էջ ծաւալով լոյս էր տեսնում ամիսը

երկու անգամ։ Հանդէսին թղթակցում էին անուանի գրողներ ու հրապարակախօսներ՝ Մամուրեանը, Ռէթէոս Պէրպէրեանը (1850-1907), Միհրան Մոգեանը (1866-1922), Զօպանեանը եւ ուրիշներ։

Հանդէսի ծրագրային յօդուածներից մէկում Մաղիկ Մանկանցի նպատակը սահմանուել է այսպէս՝ «Մեր հանդէսը իւր նոր շրջանին մէջ միեւնոյն նպատակին պիտի ծառայէ. պիտի պարունակէ մանկանց օգտակար յօդուածներ, շահաւէտ ծանօթութիւններ ամէն հետաքրքրական իրերու վրայ. գիտական եւ ուսումնական յօդուածներ, պատմութիւններ նոր գիւտերու վրայ, նշանաւոր անձանց կենսագրութիւններ»[67]։

Մաղիկ Մանկանցը վերը նշուած հանդէսների հետ համեմատած իր ձեւաբովանդակային կառուցուածքով, նիւթերի բովանդակային ընտրութեամբ ու շարադրման իրատեսական եղանակով եւ թարգմանական արուեստով աւելի կատարեալ էր եւ մէկ աստիճան բարձր նրանցից։ Հանդէսի նորոյթներից մէկն այն էր, որ նրանում տպագրուում էին կեանքի իրական պատկերը ներկայացնող մանրապատումներ, որտեղ յատակօրէն ուրուագծուում էին հասարակութեան տրոհուածութիւնը՝ հարուստների եւ աղքատների։ Հանդէսն ունէր եւս մէկ առաւելութիւն. այստեղ գետեղուած թարգմանութիւնները համապատասխանում էին բնագրերին, եւ, ի տարբերութիւն նախորդների, թարգմանչի կողմից այլ մեկնաբանութիւններ չէին ստանում։ Մաղիկ Մանկանցում նոյնպէս տպագրուում էին Լաֆոնտէնի, Լոնգֆելոյի, Կռիլովի առակներն ու բանաստեղծութիւնները, Ալֆոնս Դոդէի, Անդերսէնի, Դիկընզի, Ջորջ Բայրոնի, Վուչետիչի եւ այլոց պատմուածքներն ու հեքիաթները։

Մաղիկ Մանկանցը՝ Բուրաստան Մանկանցի անմիջական շարունակութիւնն էր՝ նոյն խմբագրութեամբ։ Այստեղ բոլոր ծրագրային բաժինները մանանակի փոփոխութիւններով պահպանուած էին։ Այսպէս՝ «Գիտական Զբօսանք» բաժնում տպագրուում էին գիտութեան տարբեր բնագաւառների վերաբերեալ գիտահանրամատչելի ակնարկներ։ Առանձին շարքով՝ «Մանկութիւն Երեւելի Արանց» խորագրի տակ, լոյս էին տեսնում հայ եւ այլազգի ժողովուրդների կեանքն ու պատմական անցած ուղին նկարագրող պատմատեսական յօդուածներ։

1891ին հանդէսի կարեւոր բաժիններից մէկը դարձաւ «Մանկավարժական Նամականի» շարքը, որը լոյս տեսաւ «Զանազանք» խորագրի տակ։ Այստեղ հետաքրքիր եւ աշխոյժ երկխօսութիւն էր ծաւալուում ոչ միայն պատանիների, այլեւ ծնողների եւ ուսուցիչների հետ, լուսաբանուում էին նաեւ պատմագիտական, հայագիտական, բարոյագիտական, հոգեբանական եւ մշակութային տեսական հարցեր։ «Գրական վէպն ի

Ֆրանսիա» (թիւ 15, 1891, էջ 235-238) ծաւալուն յօդուածում ընդարձակ մեկնաբանութիւններով եւ քննադատական դիտողութիւններով հանդէս եկաւ անուանի հրապարակախօս Մամուրեանը, որը հանգամանօրէն լուսաբանեց Ֆրանսիական նատուրալիստական վէպի գաղափարաբովանդակային միտումները եւ նրա թողած անառողջ ազդեցութիւնը յատկապէս պոլսահայ ընտանիքների բարոյահոգեբանական նկարագրի ձեւաւորման վրայ: Մաղիկ Մանկանցում Մաթէոս Մամուրեանի սոյն յօդուածի լոյս ընծայումը բոլորովին պատահական չէր, եւ ունէր հեռահար նպատակներ. այն է՝ Ֆրանսիական կենցաղագրական վիպագրութեան փոխարէն մանկական գրականութիւնը կառուցել իրապաշտական գրականութեան ամուր հիմքերի վրայ:

Հանդէսի հրապարակման առիթով Յակոբ Ոսկանը (1824-1907) մի քանի լուրջ դիտողութիւններով եւ առաջարկութիւններով հանդէս եկաւ Յովնան Փալագաչեանի (1860-1950) Մաղիկ չարաթաթերթում: Յակոբ Ոսկանը պահանջում էր որոշակիութիւն եւ յատկութիւն մտցնել գրեթէ նոյն խորագիրը կրող հանդէսների ձեւաբովանդակային կառուցուածքներում: Նրա կարծիքով նպատակայարմար էր, որ Մաղիկ Մանկանցը, ուսումնադաստիարակչական նիւթերի գերակշռութեան պատճառով, հրատարակուէր Մաղկունք խորագրով: Մաղիկ Մանկանցը ընթերցողին ներկայանում էր իբրեւ կրթութեան եռաստիճան համակարգ՝ տարրական, միջին եւ բարձրագոյն դասընթացներով: Իր տեսակի մէջ այս հանդէսը եզակի էր: Դիմելով երկու Մաղիկներին՝ Ոսկանն առաջարկում է համագործակցութեան մի ծրագիր, ըստ որի Փալագաչեանի հանդէսը կը ստանձնէր միջին եւ աւագ տարիքի երեխաների, իսկ Մաղիկ Մանկանցը կրտսեր տարիքի երեխաների դաստիարակութեան ու կրթութեան գործը:

Անուանի հրապարակախօսը հետամուտ լինելով քաղաքակիրթ ժողովուրդների առաջադէմ փորձին, բարձրացնում էր տարբեր տարիքի երեխաների համար մանկական յատուկ հանդէսներ ստեղծելու գաղափարը: Իր խօսքն ուղղելով Մաղիկ Մանկանցին՝ նա գրում է. «Օ՜ն ուրեմն, գործդ փոքրիկ ստահակներու եւ սիրունիկ փոքրիկ օրիորդներու հետ է, ամէնն ալ 5-9-ը տարեկան... մինչեւ 10-էն 15 տարու եղողներ միջին կարգի կը վերաբերին, դու անոնց հետ գործ չունիս, միայն փոքրագոյներուն համար քիչ մ'աւելի պիտի յոգնիս, զի առտնին դաստիարակութեան թերին ալ առ մեզ մանկավարժք պարտին ընուլ, բայց ի՞նչ ընենք: Փոքրիկ մանկանց դաստիարակէ ալ կը պահանջուի հարկաւ գիտութիւն, բայց աւելի բան մ'ալ, այն է անչափ երկայնամտութիւն...»[58]:

Հանդէսի բուն նպատակն էր՝ օժանդակել ընտանեկան դաստիարակութեանը, նպաստել բարեկարգ ծրագրերի ու համապատասխան դասագրքերի ստեղծման գործին, քանի որ ազգային դաստիարակութեան թերութիւններից գլխաւորը թերեւս որակեալ ուսուցչական կազմի բացակայութիւնը եւ կրթական ծրագրերի ու պիտանի դասագրքերի պակասն էր: Կարեւորելով տարրական դասարանների ուսուցչի մասնագիտութիւնը՝ Ոսկանը գրում է. «Եթէ աշակերտներդ փորրագոյնքն են, պաշտօնդ մեծագոյնն է իրրեւ դաստիարակ: Եթէ սերմանողը լաւ չը սերմանէ, հնձողը չունենար երբեք լաւ հունձք, կրթութեան արտին դու ես սերմանող մշակ, պաշտօնիդ կարեւորութեան զգացում ունեցիր, որպէսզի լաւ կատարես զանի, եւ պատուով կատարես»[50]: Ինչ վերաբերում է դասագրքերին, ապա այս հարցում առաջին հերթին պէտք է հաշուի առնել կրտսեր դպրոցականի տարիքային առանձնայատկութիւնները, նրանց նախասիրութիւններն ու հետաքրքրութիւնները:

Ձեռնարկի՝ հանդէսի կարեւոր բաժիններից մէկը «Դպրոցական Դասընթաց» խորագիրը կրող բաժինն էր, որտեղ տպագրւում էին այնպիսի նիւթեր, որոնք կրտսեր դպրոցականին ծանօթացնում էին իր շրջապատի իրերին, երեւոյթներին եւ դրանց առանձնայատկութիւններին, հանրամատչելի գիտելիքներ հաղորդում գիւղերի ու քաղաքների, լեռների ու սարահարթերի աշխարհագրական դիրքի, երկրի բնակլիմայական պայմանների, կենդանական ու բուսական աշխարհի մասին: «Միջին Դասընթացք» խորագիրը կրող բաժնում հիմնականում տպագրւում էին հայերէնագիտութեան ժամանակակից հիմնահարցերի վերաբերեալ նիւթեր, բերւում քերականական կանոնների դիւրուսոյց օրինակներ ու դիդակտիկ նիւթեր, գործնական պարապմունքների համար մշակուած յատուկ բնագրեր, օտար լեզուների՝ գլխաւորապէս ֆրանսերէնի ուսուցման համար բացատրական թղթուածներ, ինչպէս նաեւ եւրոպական առաջադէմ գրողների ստեղծագործութիւններից ընտիր հատուածներ ու բանաստեղծութիւններ: Հանդէսի կրթական բաժիններից վերջինը «Բարձրագոյն Ընթացքն» էր, որտեղ տպագրւում էին պատմագիտական, հայրենագիտական նիւթեր աւագ դպրոցականների համար: Դրանց շարքում յատկապէս ուշագրաւ էր հայ վիպասանութեանը եւ հայ պատմիչների կեանքին ու գործին նուիրուած՝ Մատաթիա Գարագաշեանի (1818-1909) ընդարձակ մեկնութիւններով ու ծանօթագրութիւններով վարքաբանական թղթուածները:

Անդրադառնալով հանդէսի եռաստիճան կրթական համակարգին՝ Ոսկանը յանգում է այն ճիշտ մտքին, որ կրթութեան հիմքը նախակրթութիւնն է, եւ եթէ ազգն ունի բարեկարգ նախակրթարան-

ներ, ապա դա ամուր հիմք կը դառնայ նաեւ բարեկարգ եւ օրինակելի միջնակարգ դպրոցների ստեղծման համար: Բարձրացնելով դպրոցի, դաստիարակութեան մէջ նրա ունեցած դերի, եւ ուսուցման տեսութեան մի չարք հրատապ հարցեր, աշնուամենայնիւ, Ոսկանը քաջ գիտակցում էր, որ ազգային դաստիարակութեան թերութիւնները միայն դպրոցներով չեն պայմանաւորուած: Ազգային դաստիարակութեան թերութիւնների բացայայտման համար իրրեւ կարեւոր գործօն անհրաժեշտ է հաշուի առնել նաեւ արեւմտահայութեան սոցիալ-տնտեսական եւ ազգային-քաղաքական վիճակը: Առաջնորդուելով «Ջկայ առաջադիմութիւն առանց աշխատութեան» կարգախօսով՝ նա պահանջում էր գործնական կապ ստեղծել ուսուցման եւ աշխատանքային դաստիարակութեան միջեւ: Վաղ տարիքից երեխաների մէջ դաստիարակել սէր՝ աշխատանքի եւ աշխատաւոր մարդու նկատմամբ, իսկ այդ ուղղութեամբ մեծ անելիքներ ունեն նաեւ մամուլն ու մանկական հանդէսները, այդ թւում նաեւ՝ Մատիկ Մանկանցը:

ՏԱՃԱՐ ՄԱՆԿԱՆՑ

Մանկապատանեկան մամուլն առաջընթաց զարգացում ապրեց նաեւ Ի. դարի սկզբին: Այսպէս՝ Զարմայր քահանայ կեզիւրեանի (1865-1955) խմբագրութեամբ 1913ին Պոլսում հրատարակուեց Տաճար Մանկանց պատկերազարդ ամսագիրը, որի արտօնատէրը Հմայեակ քահանայ Էքսերճեանն (1861-1941) էր: Հանդէսը հրատարակւում էր 16 էջ ծաւալով:

Տաճար Մանկանցը նոյնպէս ունեցել է գործունէութեան կարճատեւ շրջան (1913-1915), սակայն իր որոշակի աւանդն ունի մանկապատանեկան մամուլի զարգացման գործում: Հանդէսին թղթակցում էին անուանի մանկագիր-հրապարակախօսներ Գէորգ Մեսրոպը (1881-1948), Տիգրան Չիթճեանին (1861-1960), Ա. Սերունին (Արշակ Թիւթիւնճեան, 1878-1915), Ա. Զուգասզեանը, Արշակ Թիւթիւնճեանը, Այփասլանը, Համաեակ Պախթիարեանը (1877-1960), Արաքս Հեռլեանը եւ ուրիշներ:

Ամսագիրն ունէր կրօնաբարոյական ուղղութիւն. նրա նպատակը քրիստոնէական բարոյախօսական ընտրանի գրոյցների միջոցով երեխաներին կրօնական գիտելիքներ հաղորդելը եւ կրօնաբարոյական դաստիարակութիւնն էր: Այդ նպատակը յաջողութեամբ իրագործում էր «Ցիսուսի կեանքէն» խորագիրը կրող բաժինը, որտեղ տպագրւում էին մէկը միւսից հետաքրքիր եւ ուսանելի գրոյցներ եւ աւետարանչական պատմուածքներ («Ցիսուս-մանուկը Եւ Հովիւները», «Ցիսուս-մա-

նուկը Տաճարին Մէջ», «Տէրունական Ընթրիքը», «Սերմնացանին Առակը», «Արեւելքի Մոգերը», «Յիսուս Եւ Կծծի Ջաղացպանը» եւն.)։[80]

Հանդէսի խմբագրականներում տպագրւում էին գիտահանրամատչելի ակնարկներ ու պատմուածքներ, որոնք ընթերցանութեան հրաշալի նիւթեր լինելուց զատ՝ նպաստում էին նաեւ երեխաների մտածողութեան, դատողութեան, ճանաչողական ուժերի, ստեղծագործական երեւակայութեան, լիչողութեան զարգացմանը։ Այդ շարքում իրենց ճեւաբովանդակային կառուցուածքով եւ գեղարուեստական արտայայտչական դրսեւորումներով առանձնանում էին «Երկնքի Փառքը. Քիչ Մը Աստեղագիտութիւն», «Պատերազմը Եւ Իր Անուղղակի Հետեւանքները», «Մաղիկներուն Մէջ», «Փոքրիկ Առնէտի Մը Պատմութիւնը», «Թռչուններու Վերադարձը», «Մ՚ւրկէ Առաջ Կու գայ Շոգիի Ոյժը», «Ձիւնը», «Երկու Մուկերու Տխուր Պատմութիւնը» եւ այլ պատմուածքներ (թիւ 8, 9, 10, 11, 1914)։

Տաճար Մանկանցում գերակշիռ տեղ է յատկացուած հին Յունաստանի դիցաբանական պատմութիւններին, աւանդապատումներին ու հեքիաթներին, որովհետեւ դրանցում ցայտուն գոյներով ներկայացւում է չարի ու բարու, գեղեցիկի ու տգեղի համադրութիւնը («Մեծ Արջ Եւ Պզտիկ Արջ Համաստեղութիւնը», «Թագաւորն Ու Գեղացին», «Բարի Տէրն Ու Չար Մառան» եւն.)։

Մոզեանի, Տ. Եաղուպեանի, Հ. Մարգարեանի եւ այլոց թարգմանութեամբ տպագրուել են «Հրաշալի Կոճղը», «Ոսկեղէն Պատուհանները», «Երկու Ձիերը», «Սեւ Ցորենը» եւ այլ պատմուածքներ, որոնք բուսական ու կենդանական աշխարհի մասին անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելուց բացի՝ երեխաների մէջ դաստիարակում էին բարոյական դրական յատկութիւններ՝ աշխատասիրութիւն, գթասրտութիւն, ճշմարտախօսութիւն, մաքրասիրութիւն, ազնուութիւն եւն.։

Հանդէսի էջերում առանձնապէս աչքի են ընկնում Անդերսէնի, Լեւ Տոլստոյի եւ ուրիշների հեքիաթներն ու ժողովրդական բանահիւսութեան այլ նիւթերը («Ոլոռնի Մաղիկը», «Լուցկի Վաճառող Աղջիկը», «Բարի Տէրն Ու Չար Մառան», «Դեղձերը» եւն.)։ Կենդանիների մասին գիտահանրամատչելի պատմուածքները տպագրուել են «Մեր Բարեկամ Կենդանիները» խորագրի տակ։

Հանդէսի կարեւոր նորամուծութիւններից մէկը «Մանկական Թատերախաղ» բաժինն էր, որտեղ տպագրւում էին Լաֆոնտէնի «Ձպուռն Ու Մրջիւնը» (թարգմանութիւնը եւ բեմականացումը Մենտորի), «Շիք Աղջիկը» (մենախօսութիւն, բեմականացումը՝ Նարդուհի Ճեզուէճեանի) եւ այլ գործեր։

Երեխաների դեղագիտական դաստիարակութիւնը հանդէսի առաջնահերթ խնդիրներից մէկն էր։ Այդ նպատակով «Ձայնագրուած երգեր» խորագրի տակ, որը նոյնպէս նորոյթ էր, նոտագրուել են Ռուբէն Որբերեանի (1874-1931), Աստուրի, Ալփասլանի, Հեռլեանի, Անմահունու (1864-1924) եւ այլոց երգերը («Համբերութիւն», «Ուղերձ Ամանորի», «Ցարատեւ», «Օրօրոցը», «Տղոց Երգը» եւն.)։

Հանդէսը հարուստ է նաեւ նշանաւոր մարդկանց կեանքն ու գործը պատկերող պատմակենսագրական մանրապատումներով։ Այսպէս՝ «Գիծեր Մեծ Մարդոց Կեանքէն» խորագրի տակ տպագրուել են «Շարլ Կառնիէի Մանկութիւնը», «Պզտիկ Արուեստագէտ Մը», «Բարմանթիէ, Մարդկութեան Բարերար Մը» եւ այլ գործեր։

Գեղարուեստական ընթերցանութեան հարուստ եւ ուսանելի նիւթեր են նաեւ առակները եւ նրանցից բխող բարոյախօսական խրատները։ Այսպէս, «Առակներ» խորագրի տակ տպագրուել են հայ, եւրոպացի եւ ռուս առակագիրների ընտրանի հատաքածուները («Իժն Ու Ժիժին - Ադուէսն Ու Աքլորը», «Խոյնկն Ու Հողմաղացին Թեւը», «Խոյնկն Ու Ձնճղուկը», «Ձին Եւ Եղջերուն», «Գայլն Ու Արագիլը» եւն.)։

Նիւթի մատուցման ձեւով ուշագրաւ է «Ձանագանք» խորագիրը կրող բաժինը, որը առանձնապէս հետաքրքրական ու գուարճալի է այլազան հանելուկ-չուտասելուկներով, առած-ասացուածքներով, մտքի զբօսանքներով ու թուաբանական հետաքրքրաշարժ խնդիրներով, իրրեւ տնային աշխատանքներ յանձնարարելիք առաջադրանքներով ու հարցարաններով, որոնք երեխաների արագ եւ ինքնուրոյն մտածելու կարողութիւնը եւ տրամաբանական մտածողութիւնը զարգացնելուց բացի՝ նրանց մէջ դաստիարակում են ինքնագիտակցութիւն, երբ երեխան ոչ միայն ճանաչում է ինքն իրեն, գիտակցում իր իրաւունքներն ու պարտականութիւնները, ինքնագնահատում իր արժանիքներն ու զգացմունքները, այլեւ մղում ինքնագործունէութեան, որը բարեկիրթ եւ արժանավայել ապրելու կարեւոր նախապայմաններից մէկն է։ Այս խորագրի տակ տպագրուել են նաեւ մանկավարժական բնոյթի յօդուածներ, որոնք հետաքրքիր եւ ուշագրաւ տեղեկութիւններ են հաղորդում եւրոպական դպրոցի փորձից («Շուէտական Վարժարաններու Մէջ»)։ Մանրակրկիտ ներկայացուել է անգլիական, գերմանական, ֆրանսիական, ամերիկեան դպրոցն ու դաստիարակութեան համակարգը («Անգլիացի Դպրոցականի Տասը Պատուէրները», «Ամերիկացի Տղոց Երդումը» եւն.)։ Այսպէս, օրինակ, «Ամերիկացի Տղոց Երդումը» փոքրածաւալ ակնարկում մատնանշւում է, թէ ինչպէս իւրաքանչիւր նոր

ուսումնական տարում աշակերտներն իրենց ուսուցչին տալիս են հետեւեալ երդումը.-

«Կ'ԵՐԴՆՈՒՄ

Չվնասել ո՛չ ծառերուն եւ ոչ ծաղիկներուն:

Պաշտպանել թռչունները.

Յարգել ուրիշին ստացուածքը, որպէս զի ուրիշն ալ իմս յարգէ.

Միշտ բարեկիրթ խօսուածք մը ունենալ.

Չթքնել ո՛չ թրամուէյին, ո՛չ դասարանին մէջ եւ ո՛չ ալ փողոցը.

Թուղթ եւն. չնետել հանրային պարտէզներու կամ զբօսավայրերու մէջ»[61]:

Այդպիսի կարեւոր պահանջներ եւ գեղեցիկ սովորոյթներ Տաճար Մանկանոցը ձգտում էր վաղ տարիքից դաստիարակել նաեւ հայ մանուկների մէջ: Սոյն խորագրի տակ պարբերաբար տպագրուել են նաեւ Զիթունու «Մանուկներուն Դիցաբանութիւնը», Զուգասզեանի «Գաւառի կաղանդը», Մոգեանի թարգմանութեամբ «Սեւ Ցորենը», Արրճեանի «Ուսուցչի Մը Խօսքերը» եւ այլ պատմուածքներ ու քերթուածներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, ԺԹ. դարի երկրորդ կէսին եւ Ի. դարի սկզբին Արեւմտահայ իրականութեան մէջ լոյս տեսած պարբերականները, օրաթերթերն ու մանկական հանդէսներն արձագանգելով ժամանակի լուսաւորական ու կրթութեան չարժման առաջադրած խնդիրներին եւ դաստիարակութեան ու կրթութեան հիմնահարցերը լուսաբանելով մանկավարժութեան նորագոյն ուղղութիւնների հիմնադրոյթներով, կարեւոր դեր են կատարել մատաղ սերնդի դաստիարակութեան, նրա աչխարհայեացքի ձեւաւորման եւ աչխարհճանաչողութիւնն ընդլայնելու ուղղութեամբ:

Պարբերական մամուլի խմբագրականներում եւ ծրագրային յօդուածներում առանձնայատուկ տեղ են յատկացուել լուսաւորութեան, դպրոցի եւ կրթութեան հարցերի ըստ ամենայնի լուսաբանմանը, որը բարձր պատասխանատուութեամբ ստանձնել են հայ առաջադէմ գրողները, ազգային գործիչներն ու հրապարակախօսական միտքը:

Ցաղթահարելով բազմաթիւ դժուարութիւններ եւ անյուծելի խնդիրներ, այնուամենայնիւ, արեւմտահայ տպարանների կազմակերպման եւ լրագրութեան գարգացման գործը ԺԹ. դարի երկրորդ կէսին եւ Ի. դարի առաջին երկու տասնամեակներին անցել է գարգացման որոշակի փուլերով՝ տարէցտարի ընդլայնելով իր գործունէու-

թեան շրջանակները՝ հիմնել տարեգրեր եւ ամսագրեր, օրաթերթեր եւ մասնագիտական հանդէսներ ոչ միայն Պոլսում եւ Զմիւռնիայում, այլեւ արեւմտահայ գաւառներում եւ Օսմանեան կայսրութեան հայաչատ կենտրոններում։

Մամուլի զարգացման աստեղային շրջանը՝ պայմանաւորուած Արեւմտահայաստանի ազգային-քաղաքական իրադարձութիւններով, ԺԹ. դարի 70ականներն էին, երբ մէկը միւսի յետեւից լոյս ընծայուեցին անհամար քանակութեամբ մամուլի նոր, աւելի կատարեալ տեսակներ. դրանց շարքում նշանակալից էին Արարատը, Արեւելեան Մամուլը, Մշակը, Հոյսը, Արձագանքը, Բիւրակնը, Հանդէս Ամսօրեան, Հնչակը, Մուրճը, օրաթերթերից՝ Մասիսը, Նոր Դարը, Հայրենիքը, Արեւելքը, Բիւզանդիոնը եւն.։

Թէ՛ արեւելահայ, թէ՛ արեւմտահայ կեանքում առաջընթաց գարգացում էր ապրում նաեւ մասնագիտական՝ այդ թւում մանկավարժական մամուլը, որի աւետարերը դարձաւ Ստեփանէի Հայկական Աչխարհը, այնուհետեւ՝ Երկրագունդը, Աւետարեր Մանկանցը, Բաստամեանցի Դպրոցը, Պարոնեանի Թատրոն Բարեկամ Մանկանցը, Նիկողայոս Խոսրովեանի Վարժարանը, Տիգրան Նազարեանի (1858-1926) Ազդիւրը, Նշ. Պէրպէրեանի Բուրաստան Եւ Մաղիկ Մանկանցը, Կեզիւրեանի Տաճար Մանկանցը եւ մանկական այլ հանդէսներ։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հայաստանի Ազգային Արխիւ, ՊՖ 312, թ. 57, վաւ. 3, 4, 7։

[2] Արեւելեան Մամուլ, Զմիւռնիա, Մայիս, 1873։

[3] Նոյն, Դեկտեմբեր, 1875։

[4] Նոյն, Փետրուար 1876։

[5] Նոյն, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, 1874։

[6] Հանդէսի ազգային բաժնում տպագրւում էին Մամուրեանի ընդարձակ տեսութիւնները՝ նուիրուած Արեւմտեան Հայաստանին, հայ գաղթօջախների տնտեսական ու քաղաքական իրավիճակին, «Հայկական հարցի»ն եւ դրա շուրջ ծաւալուած դիւանագիտական պայքարին, Արեւմտեան Հայաստանի բարեկարգութիւնների խնդրին եւն.։

[7] Մաշտոցի Անուան Մատենադարան, Արշակ Ալպոյաճեանի Ֆոնդ, Թղթ. 15, վաւ. 33-1-2, 878 թերթ, «Տպագրութեան Արուեստը Եւ Հայք» (ձեռագիր)։

[8] Մէջբերուած հատուածների ուղղագրութիւնն ու կէտադրութիւնը թողնում ենք անփոփոխ։

[9] Գարեգին Զարբհանալեան, Պատմութիւն Հայերէն Դպրութեան ի Պէտս Ուսման Ազգային Վարժարանաց, Վենետիկ, 1878, էջ 504։

[10] Ծղնա Տեմիրճիպաշեան, Փիլիսոփայական Բառարան Ժողովրդական, Կ. Պոլիս, 1879, էջ 32։

[11] *Արեւելքում առանձին բաժին է յատկացուել Ռուսաստանին, նրա վարած ներքին եւ արտաքին քաղաքականութեանը, համաշխարհային քաղաքականութեան ասպարէզում նրա խաղացած դերին, ռուսական մչակոյթին, մամուլին եւ գրականութեանը։ Դրանց մեծ մասը խմբագրական յօդուածներ են, որոնք գրուել են Արփիարեանի եւ Քեչեանի կողմից։ Ռուսաստանի նկատմամբ ցուցաբերուած Արեւելքի հետաքրքրութիւնը ունէր իր պատճառները։ Հայ ժողովրդի արեւելեան հատուածը ապրում էր այդ կայսրութեան տարածքում, հետեւապէս, նրա վարած քաղաքականութիւնը ամէն դէպքում ազդում էր հարազատ ժողովրդի այդ հատուածի չահերին։*

[12] *Հրանտ Ասատուր, «Հրապարակագրին էջերէն» (ձեռագիր), ԳԱՓ, Թորոս Ազատեանի ֆոնդ, թիւ 139։*

[13] *Խմմա Կոստանդեան, Կոստանդնուպոլսի «Արեւելք» Օրաթերթը, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, Երեւան, 2003, էջ 46-53։*

[14] *Արեւելք, 1885, թիւ 342, 346, 358։*

[15] *Նոյն, 1900, թիւ 4398, 4399, 4401, 4402, 4403։*

[16] *Նոյն, թիւ 4։*

[17] *Նոյն, 1885, թիւ 387։*

[18] *Նոյն, 1883 թիւ 158, 159; 1884 թիւ 160, 161։*

[19] *Գրական Եւ Իմաստասիրական Շարժում, Պոլիս, 1884, տետր 5, էջ 100։*

[20] *Արեւելք, 1885, թիւ 4087։*

[21] *Հայաստանի Ազգային Արխիւ, ՊՖ. 312, թ. 57, վաւ. 3, 4, 7։*

[22] *Կարապետ Շահնազարեանի կտակի համաձայն կիլիկիայում պէտք է բացուէր ազգային դպրոց, սակայն Ներսէս Վարժապետեանը նպատակայարմար գտաւ դպրոց հիմնել Պոլսում. նա խնդրեց եդիպտահայ մեծահարուստ Նուպար փաշայի միջնորդութիւնը, որպէսզի Շահնազարեանի կտակած 1000 ոսկին տրամադրուի Պոլսի Խասգիւղ թաղում դպրոց բացելու նպատակին։ 1866ին Խասգիւղում հիմնադրուեց Նուպար-Շահնազարեան դպրոցը։*

[23] *Շարաթաթերթը երկու տարի գործելուց (1870-1871) յետոյ փակուեց։ Պարոնեանի խմբագրութեամբ այն վերստին հրատարակուեց 1883ին եւ 1884-1888ին։ Երկրագունդը խմբագրել է նաեւ Տեմիրճիպաշեանը։*

[24] *Երկրագունդ, Պոլիս, 1870, թիւ 15, էջ 238։*

[25] *Նոյն տեղում։*

[26] *Նոյն, թիւ 2, էջ 17։*

[27] *Նոյն, թիւ 20, էջ 323։*

[28] *Նոյն, թիւ 11, էջ 161-163, թիւ 18, էջ 113-114։*

[29] *Նոյն, թիւ 6, էջ 84։*

[30] *Երկրագունդ, թիւ 52, 1870, էջ 571-590։*

[31] *Նոյն, թիւ 52, էջ 572։*

[32] *Նոյն, թիւ 30, էջ 466-475։*

[33] *Միռն, 1866 Նոյեմբեր, Ա. տարի, թիւ Ա.-Բ., էջ 164։ Ընդօրինակող Ց. Ս. Քիւրքճեանով, Հալէպ 1 Նոյեմբեր 1866։*

[34] *Նոյն, թիւ 50, էջ 50, 51, 52 եւն.։*

[35] *Աւետարեր Տղայոց Համար, Պոլիս, թիւ 6, 1895։*

[36] *Գառնիկ Ստեփանեան, Բակոր Պարոնեան. Կեանքը Եւ Հրապարակախօսութիւնը, Երեւան, 1964, էջ 173։*

[37] *Բուրաստան*, Գ. տպրակ, Հալէպ, 1952., էջ 59։
[38] *Աւետարեր Տղայոց Համար*, թիւ 1, 1914։
[39] *Բուրաստան Մանկանց*, Պոլիս, տետր 1, 1882, էջ 1։
[40] Նոյն, էջ 2։
[41] Պարոնեանը Լոյսը խմբագրել է 1879 Սեպտեմբերից մինչեւ 1880 Ապրիլը։
[42] *Թատրոն Բարեկամ Մանկանց*, Պոլիս, թիւ 1, 1876, էջ 8։
[43] Նոյն։
[44] Նոյն, էջ 2։
[45] Նոյն, էջ 3։
[46] Նոյն, էջ 2։
[47] Նոյն։
[48] Նոյն, էջ 3։
[49] Նոյն, թիւ 2, 1876, էջ 12։
[50] *Բուրաստան Մանկանց*, տետր 3, 1884, էջ 48։
[51] Նոյն, էջ 48։
[52] Նոյն։
[53] Նոյն, տետր 15, 1882, էջ 231։
[54] Նոյն, տետր 13, 1882, էջ 202։
[55] Նոյն, տետր 1, 1882, էջ 11։
[56] *Գրական եւ Խմբասուսիրական Շարժուած*, տետր 2, 1883, էջ 120։
[57] *Մատիկ Մանկանց*, Պոլիս, թիւ 23, 1890, էջ 359-360։
[58] *Մատիկ*, թիւ 20, 1891, էջ 1։
[59] Նոյն։
[60] *Տաճար Մանկանց*, Պոլիս, թիւ 9, 10, 11, 1913։
[61] Նոյն, թիւ 10, 11, 12, 1914, էջ 140։

THE WESTERN ARMENIAN PRESS AND ITS ROLE IN THE DEVELOPMENT OF THE ENLIGHTENED SCHOOL (Summary)

SHOGHIK VOSKANIAN

The development of periodicals which were an integral part of Armenian history and culture was the product of historical development and the national revival of Armenian public life in the 19th century.

Indeed, the 1870s marked the turning point in this regard. In line with national revival, a number of newspapers were published (like *Byuzandion, Haykakan Ashkharh, Mshak, Pordz, Ardzagank, Arevelyan Mamul,* etc.) that discussed issues of enlightenment, development, growth and the upbringing of the young generation and directed the attention of the communal authorities to the importance of schooling in building the nation among both the Eastern and Western Armenians. These newspapers portrayed the existing public-political life of the period.

Against the backdrop of this public life, the author highlights the contribution Western Armenian children's newspapers had on child rearing. Voskanian brings to the spotlight a number of Western Armenian children's biweeklies and magazines, like *Arevelk, Arevelyan Mamul, Avetaber Mankants, Burastan Tsaghik Mankants, Tatchar Mankants, Tatron Barekam Mankants,* and *Yerkragund.*

In a comprehensive manner, these papers raised the concerns of Armenian schools. Articles, elaborations and discussion on issues having to do with the curriculum and syllabus, school buildings, and teaching methods were commonplace. Besides, pedagogical tenets and psychological aspects were raised and properly discussed, and they called upon the communal authorities to pay proper attention to such educational concerns. Furthermore, through translations, these children's magazines promoted reading habits and literary taste, and broadened the perspective and world perception of children. Through various literary and theoretical translations the young readers shared the experiences of other nations in education, their value systems and world perceptions.

The author notes that this enlightening effort was conducted by a large number of renowned Armenian writers, public figures and clerics.

BEFORE THE ARMENIAN GENOCIDE: DANISH MISSIONARY AND RESCUE OPERATIONS IN THE OTTOMAN EMPIRE, 1900-1914[1]

Matthias Bjørnlund
matthiasb@webspeed.dk

From the time of the Abdul Hamid massacres 1894-96 – the systematic annihilation of some 100-300,000 Ottoman Armenians, combined with the forced Islamization of perhaps a further 100,000 Armenians[2] – the persecution of this Christian minority had a significant impact on leading Danish public figures, as well as on the general public. Ranging from the then famous secular author and literary critic of Jewish descent, Georg Brandes (1842-1927), who in 1900 forcefully exposed the indifference of the European governments to the sufferings of the Armenians,[3] to bishop and minister of cultural affairs H. V. Styhr (1838-1905), who denounced what he called Abdul Hamid's "holy war of extermination,"[4] these public figures raised awareness of the Armenian atrocities and their political implications in speeches, articles, and books.[5] In addition, just before the turn of the century, the German priests Ernst Lohmann and his brother Johannes Lohmann from the German missionary organization, Deutsche Hülfsbund (DH), had toured Denmark and Sweden, where they spoke at public meetings organized by KFUM (YMCA) in Denmark about their experiences among the survivors of the massacres.[6]

Like in other parts of the western world, the Abdul Hamid massacres were the main factors leading to a wave of relief work and missionary efforts directed towards the Ottoman Armenians. Unlike similar American and, to some extent, German organizations, which received both political support and substantial funding from their governments, the Danish missionary and relief organizations were privately funded and without any significant governmental backing.[7] Even though they generally had significant institutional and/or personal connections to the established Danish Lutheran state church, the organizations were independent, voluntary, and self-supporting, and were often viewed as secterian.[8] Due to

these factors, as well as to the initial lack of experience and organization, the Danish efforts were closely connected to first of all German, and later on American, organizations.

These included DH, Deutsche Orient Mission (DOM) and its Armenisches Hilfswerk, a relief organization founded and led by the famous German theologian, Johannes Lepsius, and, as the oldest, largest and most important of all the Western organizations in the Empire, the American Board of Commissioners for Foreign Missions (ABCFM, American Board).[9] Originally, Lepsius had established DOM in order to proselytize among Muslims, but in the wake of the Abdul Hamid massacres, he was among the first Europeans to establish an effective, comprehensive organization aimed at aiding first and foremost Armenian children from all over the empire, more than 100,000 of whom were either fatherless or orphaned.[10] Obviously, the missionaries and rescue workers were not facing an easy task. The British relief worker, Professor J. Rendel Harris, stated that, "It is like putting together a clock that has been smashed: it is a piece of broken society, and you have to study the conditions of life, beginning at the bottom – food, clothing, shelter – working up."[11]

In 1897, the Danish linguist, writer, and secular intellectual Åge Meyer Benedictsen (1866-1927), the son of a Danish-Jewish merchant from Copenhagen and an Icelandic actress, had started off on a series of research journeys that brought him to places like India, Russia, Persia, and to the Armenian, Arabic, and Kurdish parts of the Ottoman empire. The main purpose of Benedictsen's journeys in Persia and Eastern Anatolia was to study the dialects of Kurdish tribes. But when visiting DOM's projects in Van in Eastern Anatolia, Khoi in Persia, and Urfa (Edessa) in Southern Anatolia – orphanages, workshops, etc., run by well educated, European men and women – he was inspired to establish a similar Danish relief organization.[12] Shortly after his return to Denmark in 1902, he founded Danske Armeniervenner (DA; Danish Friends of Armenia), but since the organization initially did not have the capacity to carry out its own projects, DA became closely associated with DOM.

Among other things, this was reflected in the fact that the DA sponsored a number of Armenian children in DOM's orphanages, or paid the salaries and travel expenses for Danish relief workers who were trained by DOM and worked alongside DOM's relief workers in places like Khoi

and Urfa. The most important Danish representative of this DA-DOM cooperation was Karen Jeppe (1876-1935), school teacher, relief worker, and later, from her base in Aleppo, Syria, one of three members of the Commission of Inquiry for the Protection of Women and Children in the Near East. This League of Nations commission was established in 1920 to deal with the problem of the tens of thousands of mainly Armenian women and children who had survived the genocide, many of them only to be forcibly converted to Islam, who were still kept in captivity in the Turkish, Arabic, and Persian areas of the former Ottoman empire.[13]

In 1902, inspired by articles and speeches by Benedictsen about the suffering of the Ottoman Armenians, Karen Jeppe became a volunteer for DA, and the organization's only "member in the field." After meeting Lepsius in Berlin, she was sent to Urfa in 1903, where the legendary American missionary Corinna Shattuck greeted her.[14] Jeppe immediately ventured to learn Armenian, Arabic, and Turkish, and soon after her arrival she became leader of the German orphanage in the city, which housed 350 Armenian boys, ten of whose care was paid for by DA.[15] Though Jeppe was deeply rooted in the relatively liberal Danish Lutheran movement called "Grundtvigianism" -- one of the two most influential Danish theological movements of the nineteenth century -- she did not consider herself a missionary.[16] She believed from the beginning that Protestants ought not to speak of the "dead" Gregorian Church, inasmuch as the Protestant Church could tear away the national roots of the Armenians, separate them from the people.[17]

Faced by the effects of massacre, persecution, and poverty, she, as well as the DA, considered it more important and appropriate to help build up industrious Armenians rooted in their national culture, which to a large degree was regarded as synonymous with the Gregorian Church. Thus she concentrated her efforts exclusively on teaching, as well as on creating possibilities for Armenians to support themselves through farming, factory work, trade, and various crafts, all in close cooperation with German and American missionaries, and with the support of local Kurdish and Arab tribes. Karen Jeppe stayed in Urfa until 1919, witnessing every aspect of the Armenian genocide – death marches, massacres, starvation, and resistance – in the region.[18]

WOMEN MISSIONARY WORKERS

While the DA was a relief organization with little or no intention of proselytizing among the primarily Gregorian Ottoman Armenians, thereby following the trend of the similar British organization, The Friends of Armenia,[19] for the other large, Danish relief organization in Armenia, Kvindelige Missions Arbejdere (KMA; Women Missionary Workers), mission first and foremost equalled proselytizing. KMA was founded in Copenhagen in 1900 on the basis of a bible study group founded by upper-class women, and was ideologically rooted in the second of the two most influential Danish theological movements of the nineteenth century, namely the evangelical Indre Mission (Home Mission). But KMA was also very much influenced by foreign religious movements and organizations, like the British revivalist "Keswick" movement, and by the Swedish KMA, founded in 1894, as well as by visits to Copenhagen by the Welsh Pentecostal author and activist Jessie Penn-Lewis, and by the German Reverend Johannes Lohmann, leader of DH.[20] The direct reason for the founding of the Danish KMA was the continued suffering of Armenians in the Ottoman empire, but the further aim was to follow what was considered to be one of the key messages of the New Testament: "It was clear to the founders of KMA that what was needed was not only temporal aid, there was also a missionary task to fulfill, and Armenia became the first mission field of the society."[21] Like their American Board colleagues, they too believed that, "...it was their moral duty to redeem an errant mankind through active intervention."[22]

Many of the Western missionaries, including most of the Danes, had a rather arrogant, "cultural imperialist," attitude towards not only Muslims, but also towards non-Protestant Churches like the Gregorian Armenian Church, which they considered to be dead or dying, and it was the stated goal of KMA and other organizations to convert Armenians to what was considered true Christianity, i.e. Protestantism, which was viewed as an intermediate step towards reaching the local Muslim populations as well.[23] Other contemporary Danish missionary organizations, like Østerlandsmissionen (ØM, "The Eastern Mission"), founded in 1898 by the Reverend Einar Prip, were initially directed solely towards almost completely futile attempts at proselytizing among Muslims in the Ottoman Empire, more precisely among Arab muslims in Syria, but the attitude towards both non-Protestant Christianity and Islam was equally hostile. As

Prip himself wrote in a letter sent from Jerusalem, 1898: "Cold, barren, and rigid forms [of religion] are more than plentiful here, but Death has marked them."[24]

But that is not the whole picture. Especially during the genocide, when relief (rather than "spiritual salvation") was needed on an unprecedented scale, even the most fundamentalist Danish Protestant missionaries provided aid to the Ottoman Armenians and other groups of the Empire, often risking their lives in the process. But the missionaries were also instrumental in bringing medical assistance and education to the Ottoman Empire during peacetime, although this could have been motivated less by purely altruistic motives than by a desire to win the "hearts and minds" of the local population.[25] According to Djurdjis Katibe, an Arab Christian teacher working for ØM in Nebk, Syria, educating Muslims and Christians in the same schools "...prevents hatred and envy between them and puts out the fire of fanaticism and their hatred of the idolaters, which is what [the Muslims] call the Christians."[26] And schools run by missionaries were not only for boys. Rather, emphasis was put on educating and employing first and foremost Armenian, but also Muslim as well as other Christian girls and women, a large majority of whom were illiterate in the Ottoman Provinces.[27] This was something that was not only necessary, considering the lack of Armenian men due to the massacres, but also something which, in the often very conservative Christian and Muslim environment of Anatolia and Arabia, could have a sometimes disruptive, but also genuinely emancipatory effect.[28]

It was no coincidence that such attempts to soften rigid gender structures were made at a time when European and American female missionaries, including the missionary wives, began to outnumber male missionaries by two to one. Being a missionary gave these women opportunities for religious, vocational, and personal development that they lacked at home, and the female missionaries often wanted to give similar opportunities to girls and women of the local population.[29] Overall, this movement of what has been called "missionary feminism"[30] could be seen as a direct consequence of what Hans-Lukas Kieser calls, "...the [19th-century] utopia of the Protestant missionaries in Turkey [which] consisted in an almost millenarian belief in a new social and symbolic order, promoted by their own evangelistic, educative, and civilizing efforts, and linking their modern belief in progress with evangelical spirituality."[31]

Promoting some form of female emancipation had now, in the early part of the 20th century, become part of being progressive, and the mainly female missionaries had no trouble in linking this ideal with the ideal of evangelism.

JENSINE ØRTZ AND THE ABDUL HAMID MASSACRES

In the course of their work, Danish missionaries collected testimonies of Armenian massacres preceding the First World War. One example is trained nurse and KMA missionary Jensine Ørtz, who was stationed in Malatia in Central Anatolia from 1906 until May 1914. Here she worked together with the German Reverend Ernst Jakob Christoffel, and his sister, Hedwig, who had founded the organization, Christoffel Blindenmission (Christian Blind Mission), which was aiding both Christians and Muslims of the region. The authorities would not allow Ørtz to proselytize in the area, a ban which she ignored in the first year of her stay by handing out bibles to seven Turks, some of whom were, as she puts it, "secret believers," knowing that such acts put not only her own life, but the life of the involved Turks in acute danger.[32] Her actions were detected fairly quickly by the local authorities, which led to her being interrogated by the local police, but she managed to avoid further trouble. According to Ørtz, Mustapha Arra, mayor of Malatia and one of the secret Christians of the city, was not so lucky: he was later killed by his Muslim son for his transgressions.[33]

Ստեղծուած դրութիւնը Սոչիի ՀԱՄը բնութագրում էր որպէս աղէտ։ Կառավարութեան ներկայացուցչի հետ համատեղ իրականացուած ՀԱՄի միջոցառումները՝ բախման դադարեցման ուղղութեամբ, անարդիւնք մնացին եւ այդ պատճառով ՀԱՄը խնդրում էր հասցէատէրերին՝ միջամտել ու պահանջել Վրաստանի իշխանութիւններից անյապաղ վերջ տալ մարտական գործողութիւններին՝ եւ քաշելով զօրքերը հայկական գիւղի մատոյցներից[52]։ Ելոյթը ՀԱՄը դիտում էր որպէս գիւղացիների ինքնապաշտպանական կռիւ[53]։ Փետրուարի 3ին Սոչիի ՀԱՄը անյապաղ միջամտութեան խնդրանքով դիմել էր Այսրկովկասում բրիտանական հրամանատարութեանը՝ խաղաղ միջոցներով միջադէպի վերացման համար։ ՀԱՄը մտահոգութիւն էր յայտնում, որ մասնակի ելոյթը Գոռնոյ Լօո գիւղում կը վերածուի ընդհանուր բախման։ Դիմումի բովանդակութիւնը անգլիացիները հեռախօսակապով ազդարարել էին Վրաստանի կառավարութեանը[54]։

1919 Փետրուարի 4ին Սոչիի ՀԱՄի պահանջին արձագանգեց սոցիալիստ-յեղափոխականների Երջանայլին կոմիտէն, որը իր յայտարարութիւնում պահանջում էր անյապաղ նշանակել քննչական յանձնաժողով եւ պատասխանատուութեան կանչել մեղաւորներին։ Միաժամանակ, կոմիտէն չեչտում էր, որ բռնութիւնների եւ թալանների դէմ ելած գիւղացիներին «իշխանութիւնները ճնշում են ցարական ժամանակների պատժիչ արշաւանքները յիշեցնող դաժանութեամբ»[55]։ Փետրուարի 5ին Սոչիի Ուկրաինական Գրոմադայի (Միութեան) նախաձեռնութեամբ անցկացուեց չրջանի հասարակաքաղաքական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հաւաք, որը որոշեց. «1. Պահանջել դադարեցնել ռազմական գործողութիւնները եւ բռնութիւնները՝ խաղաղ բնակչութեան դէմ; 2. Ընտրել յանձնաժողով երեք անդամից՝ տեղի իշխանութիւնների հետ միասին քննելու բռնութիւնների բոլոր դէպքերը՝ ինչպէս զօրքերի, այդպէս էլ ցածրադիր վարչակազմի կողմից կատարուած; 3. Շտապ հեռագրով առաջարկել Թիֆլիսի

անգլիական միսիայի՝ պատուիրակութիւն յղել Սոչի; 4. Պատուիրակութեան առջեւ հարց բարձրացնել հանրաքուէի մասին, որպէսզի բնակչութիւնը առանց զօրքերի եւ վարչակազմի որեւէ ճնշման կարողանայ արտայայտուել տեղական իշխանութեան կազմակերպման, շրջանի քաղաքական ու տնտեսական ճակատագրի մասին...; 6. Դուրս բերել զօրքերը»[56]: *Փաստաթղթի բովանդակութիւնը որոշուել էր յայտնել նաեւ Կամաւորական Բանակի չտաբին: 32 ձայն քուէարկել էր որոշման օգտին, իսկ դէմ էին արտայայտուել տեղի սոցիալ-դեմոկրատների ղեկավարները (Իգմայլով, Յանդէր): Շրջանային Վրացական Ագգային Խորհրդի (ՎԱԽ) ներկայացուցիչները (Խոփերիա, Ջիփաձէ) ձեռնպահ մնացին*[57]:

Տեղի ՎԱԽը յղել էր պատասխան Սոչիի ՀԱԽի Փետրուարի 2ի շրջաբերականին, թէ՝ «Վրաց հասարակութիւնը արտայայտում է իր ափսոսանքը որոշ վրաց գինուորների կողմից կատարած էքսցեսների վերաբերեալ: Միաժամանակ, վրաց հասարակութիւնը պատուիրակների միջոցով բարեխօսել է բարձրագոյն ռազմական եւ քաղաքական իշխանութիւնների առջեւ՝ հայ բնակչութեան եւ զօրքերի միջեւ հակամարտութիւնը անյապաղ վերացնելու մասին: Վրաց հասարակութիւնը յոյսով է, որ բարեկամութիւնը՝ հայ եւ վրաց եղբայր ժողովուրդների միջեւ, չի խախտուի եւ առաջացած թիւրիմացութիւնները ու առանձին մութ անձանց սադրանքները յետագայում կը կանխուեն ոգով բարեկամ երկու ժողովուրդների միացեալ ուժերով»[58]: *Յիչեալ նամակի կրկնօրինակը յղուել էր մերձսեւծովեան երկրամասում Վրաստանի կառավարութեան ներկայացուցիչ Մուխրան Խոչոլաւային:*

Փետրուարի 6ին կառավարութեան քարտուղարութիւնում սղագրել էին Խոչոլաւայի զեկուցումը: Նա յայտնում էր, որ Փետրուարի 3ից ղէպքերը քննելու նպատակով իր գլխաւորութեամբ սկսեց գործել յատուկ յանձնաժողով[59]: *Նչուած են երկու զոհ հայերից եւ վիրաւորներ՝ վրացական գինուորականների շարքերում: Ջնայած, որ սկզբնական տեղեկութիւններով Խոչոլաւայի մօտ ստեղծուել էր իրական ապստամբութեան տպաւորութիւն, նա հաղորդում է հակամարտութիւնը ի վերջոյ խաղաղ միջոցներով վերացնելու մասին: Վերլուծելով ելոյթի պատճառները, նա նչում է չրջանային կոմիսար Ջնելաձէի թեթեւամիտ վերաբերմունքը տեղի բնակչութեան կարիքներին եւ պահանջներին: Վրաց բարձրաստիճան պաշտօնեան չէր բացառում իր համար անյայտ նաեւ որեւէ այլ ոյժի չար կամքը: Միաժամանակ նա վկայում է.* «Ես անձամբ տեսել եմ հետեւանքները մի շարք անբոյլատրելի գործերի,

յափշտակումների եւ կոպիտ վերաբերմունքի՝ բնակչութեան նկատմամբ [վրաց] զինուորականների կողմից»։ *Խոչորաւաչի գեկուցագրում չկայ որեւէ մեղադրանք տեղի հայերի վարքագծի վերաբերեալ եւ փաստաթուղթը բարեացակամ ոգով է ներշնչուած նրանց նկատմամբ*[60]։ *Վրաստանում ՀՀ դեսպանորդը Երեւան գեկուցեց Սոչիի հայերի ապատամբութեան պատճառների մասին. թէ՝ ապստամբութիւնը ուղղուած էր անկարգութիւն անող վրացական զօրքերի դէմ, որի հետեւանքը եղաւ - նրա կարծիքով - Կամաւորական Բանակի կողմից շրջանի գրաւումը։* «Վրաց իշխանութիւնների բշնամական վերաբերմունքը՝ դէպի այդ շրջանի հայերը, ոչ ոքի մէջ կասկած չպիտի յարուցի»[61], *գրում է դեսպանորդը։*

Վրաստանի կառավարութեան ոտնձգութիւնները բախման բերեցին Վրաստանին՝ Ռուսաստանի հարաւում հզօրացող «Սպիտակ Շարժման» հետ։ Ինչպէս գրում էր Կամաւորական Բանակի գեներալ Ալեքսանդր Լուկոմսկին. «Վրաստանի համար Սոչիի շրջանը ունէր հսկայական նշանակութիւն՝ որպէս գօտի, որն առանձնացնում էր Կամաւորական Բանակը Սուխումի շրջանից։ Վրաստանի կառավարութիւնը մտավախութիւն ունէր, որ Կամաւորական Բանակի անմիջական հարեւանութիւնը կը տանի Աբխազիայի տարանջատմանը Վրաստանից»[62]։ *1919 Փետրուարի 6ին Կամաւորականները Սոչիից դուրս քշեցին վրացական զօրքերը, ապա նուաճեցին Գագրայի տեղամասը։ Առաջացաւ Սոչիի ռազմաճակատը, որը Կամաւորական Բանակի կողմից պաշտպանւում էր նաեւ 1500 հայերից կազմուած զօրամասով*[63]։ *Վրաց իշխանութիւնների կարծիքով Կամաւորական Բանակի հետ ընդհարման պատճառը հայերն էին*[64]։ *Կամաւորականների յարձակման անցնելու օրը վրացական իշխանութիւնները Սոչիում ցրել էին պարեկային խմբեր, նրանց յանձնարարելով ձերբակալել ՀԱՄի անդամներին, որպէս այդ գործի անմիջական յանցաւորներ*[65]։ *Որ դա այդպէս չէր՝ վկայում է 1919 Փետրուարի 19ի Սոչիի ՀԱՄի նամակը Վրաստանի ՀԱՄի նախագահութեանը։ Նամակում յստակօրէն ասուած էր, որ* «Ազգային Խորհուրդը մինչեւ վերջին պահը մնացել է հաւատարիմ [Վրաստանի կառավարութեանը] եւ ոչ մի կապ չի ունեցել Կամաւորական Բանակի հետ»[66]։ *Փաստերը վկայում են, որ հայ բնակչութեան մասնակի ելոյթը չէր կարող պատճառ դառնալ Սոչիի եւ Գագրայի գրաւմանը։ Կամաւորականների եւ Վրաստանի բախման հիմքում ընկած էր տարածքային վէճը։ 1918 Սեպտեմբերին նախարար Գեգեճկորին համոզում էր վարչապետ Նոյ Ժորդանիային՝ օգտուել յարմար պահից*

եւ պաշտօնապէս միաւորել Սուչիի շրջանը Վրաստանին, նշելով, որ հակառակ վարքագիծն աններելի է եւ նոյնիսկ յանցանք կը լինի վրաց կառավարութեան համար։ Միաժամանակ նախարարը չեշտում էր, որ շրջանի միացումը փաստի առջեւ կը դնի կամաւորական Բանակի հրամանատարութեանը[67]։ Նոյն ժամանակ, կառավարութեան ներկայացուցիչ Անջափարիձէն զգուշացնում էր ռազմական նախարարին, թէ շրջանին տիրելու ցանկութիւնը կը յանգեցնի լուրջ բախման։ Նրա կարծիքով տարածքը կարելի էր պահել միայն գերմանացիների օժանդակութեամբ, որոնց զօրամասը 1918ին գտնւում էր Ադլէրում։ Հակառակ պարագայում Անջափարիձէն առաջարկում էր ուշադրութիւնը սեւեռել Վրաստանի պատմական սահմանի վրայ[68]։ Յետագայում, անտեսելով դաշնակից Գերմանիայի պարտութեան փաստը եւ բրիտանական զօրքերի հրամանատարութեան ոչ-նպաստաւոր դիրքորոշումը[69], վրացական իշխանութիւնների եւ տեղի սոցիալիստական կազմակերպութիւնների ջանքերով 1918 Դեկտեմբերին հրաւիրուած Սուչիի շրջանի գիւղացիութեան համագումարը կողմ քուէարկեց Վրաստանի կազմում լինելու առաջարկին, թէպէտ ժամանակաւոր՝ մինչեւ Ռուսաստանի Դեմոկրատական Դաշնային Հանրապետութեան ձեւաւորումը[70]։

Սուչիի ՀԱՒի կարծիքով, Վրաստանի կառավարութեան ներկայացուցիչները եղան անանկ եւ չկատարեցին խոստումը՝ դատի յանձնել բռնութիւններ գործողներին։ Այդ իսկ պատճառով, ՀԱՒի տեսակէտից, նրանք ոչ միայն չկարողացան անիշխանութեանը վերջ տալու առաքելութիւն ունենալ, այլեւ ինքները տարածում էին շրջանում «անիշխանութիւն»։ Ելնելով եղածից, Սուչիի ՀԱՒը շահագրգիռ կողմերին առաջարկում էր այլեւս չենթարկել Սուչիի շրջանը Վրաստանի իշխանութեանը եւ միջոցներ գտնել Արխազիայի հայ բնակչութեան տարրական իրաւունքների պաշտպանման համար[71]։

Գագրայի տեղամասում կամաւորականների տիրապետութեան օրերին, ումն Դերենիկեան[72] հակավրացական թեւին պատկանող արխազ գործիչների հետ գաղտնի դաշինք էր կնքել, իր ասելով՝ «Հայ եւ արխազ ազգութիւնների փոխյարաբերութիւնները կանոնաւորելու համար»[73]։ Տուեալ փաստին ՀՀ Արտաքին Գործերի Նախարարութիւնում (ԱԳՆ) բացասական էին վերաբերուել եւ Դերենիկեանի գործունէութիւնը որակել էին «ինքնագլուխ»։ Բացի այդ, ԱԳՆում կարծում էին, թէ. «Ընորհիւ նրա ակտիւ գործունէութեան, որը միշտ պարզ կերպով ուղղուած է եղել վրացիների դէմ, հայ-վրացական յարաբերութիւնները այս շրջանում դարձել են սոսկալի թշնամական եւ ստեղծուել է մի

շատ պարարտ հող՝ պրովոկացիայի համար»։ *Այսպիսով, Դեքենիկեանը համարուեց* «վնասակար եւ ինքնակոչ անձնաւորութիւն, որի վնասակար ազդեցութիւնը հայ գաղութի վրայ Սոչիում անհրաժեշտ է չեզոքացնել»[74]։ *Պարզ է, որ ՀՀ կառավարական շրջանակները ստիպուած աչք փակելով բռնութիւնների բազմաթիւ դէպքերի, միաժամանակ խիստ բացասական էին վերաբերուում հայերի հակավրացական գործունէութեան որեւէ մասնակցութեանը։ Վրաստանի հայութեան վիճակի բարելաւումը ՀՀ իշխանութիւնները տեսնում էին բանակցութիւնների եւ բարիդրացիական յարաբերութիւնների հաստատման ճանապարհով։*

Ինչպէս գրում էր Լուկոմսկին. «Սոչիի շրջանում վրացական իշխանութեան թօթափումից յետոյ քիւրիմացութիւնները շարունակւում էին հարեւան Սուխումի շրջանում՝ հայերի եւ աբխազների նկատմամբ վրացական իշխանութիւնների վերաբերմունքի պատճառով»[75]։ *Երկու կողմերը՝ ե՛ւ վրացական, ե՛ւ կամաւորական, միջնորդութեան խնդրանքով դիմում էին Այսրկովկասում տեղակայուած բրիտանական բանակի հրամանատարութեանը։ 1919 Մարտի 11ին Անտոն Դենիկինը*[76] *նամակ էր յղել Բրիտանական Ռազմական Միսիայի պետ գեներալ Բրիգգին, որտեղ մասնաւորապէս ասուած է.* «Ինձ դիմել էին Սոչիի շրջանի հայկական ազգային միութեան պաշտօնական ներկայացուցիչները խնդրանքով՝ պաշտպանել Սուխումի շրջանի հայ բնակչութիւնը... վրացական զօրքերի բռնութիւններից[77]...Վրացական զինուորական իշխանութիւնները ռազմատուգանք են դրել Սուխումի շրջանի Գուդաուտայի տեղամասի հայաբնակ գիւղերի վրայ... Բնակիչները... չունէին միջոցներ՝ կատարելու իրենց առջեւ դրուած պահանջները։ Փետրուարի 23ին վրացական զօրքերը, շրջապատելով գիւղերը, սկսեցին խաղաղ բնակչութիւնը գնդակոծել հրանօթներից եւ գնդացիրներից... Խնդրում եմ ... հասցնել ... իմ բողոքը՝ անպաշտպան հայ բնակչութեան նկատմամբ բռնութիւնների վերաբերեալ, եւ խնդրում եմ գործադրել եռանդուն ճնշում՝ վրացական կառավարութեան վրայ՝ վայրագութիւններին վերջ տալու համար»[78]։ *Վրաց պատմաբանները կեղծարար եւ սադրանք են համարում Դենիկինի կողմից հայերի եւ աբխազների չահերի պաշտպանութեան առաքելութիւնը, որի նպատակն էր արդարացնել վերջինիս զաւթողական քաղաքականութիւնը Վրաստանի նկատմամբ*[79]։ *Վրաց հեղինակի կարծիքով բնակչութիւնից անցանկալի բռնագրաւումները - որոնք զանգուածների բնական դժգոհութիւն էին առաջացնում - պայմանաւորուած էին*

Վրաստանի տարածքային ամբողջականութեան եւ իրաւակարգի պաշտպանութեան ուղղութեամբ գործադրուած միջոցառումներով[80]:

1919 Ապրիլին վրացական զօրքերը անցան հակայարձակման եւ ետ խլեցին Գագրայի տեղամասը: Բրիտանական հրամանատարութեան նախաձեռնութեամբ Գագրայի տեղամասում կողմերի միջեւ հաստատուել էր «չէզոք գօտի»: Հայարնակ Պիլենկուօ աւանը յայտնուեց սահմանագծին, կիսուելով՝ «չէզոք» եւ «վրացական» մասերի[81]: Ինչպէս տեղեկացնում էր ՀՀ հիւպատոսը Սուխումում, Գագրայի տեղամասի հայ բնակչութիւնը կամաւորների եւ վրացական զօրքերի բախումների ժամանակ ենթարկուել էր սնանկացման, քանի որ զինուորները սնւում էին հայերի հաշուին: Հիւպատոսի վկայութեամբ տեղամասի հայերի վիճակը աննկարագրելի ծանր էր եւ դիտորդի վրայ ճնշող տպաւորութիւն էր թողնում[82]: Վրաց զինուորականները կասկածում էին հայերին՝ կամաւորականներին աջակցութեան գործում եւ վրէժ էին լուծում նրանց նկատմամբ[83]: Մէկ այլ զեկոյցում, հիւպատոսը ԱԳ նախարարին գրում է, որ վրացական բանակը հրով եւ սրով անցաւ Գագրայի տեղամասով, օգտագործելով այն պատրուակը, որ հայերն էին հրաւիրել կամաւորականներին Սոչիի շրջան: Հիւպատոսը ոչինչ չի ասում որոշակի դէպքերի մասին, նշելով միայն, որ վրացական ռազմական իշխանութիւնների անօրինութիւնները այս տեղամասում հնարաւոր չէ նկարագրել: Նա յայտնում է, որ Աբխազիայում Վրաստանի կառավարութեան ներկայացուցիչ Իսիդոր Բամիշուիլու խոստովանութեամբ՝ առանց վրաց իշխանութիւնների օգնութեան հնարաւոր չէր վերացնել հասցուած կորուստը: Այդպիսով՝ չէր ժխտւում մնասը[84]:

1919 Մարտի 16ին, Սուխումի շրջանի 170 հայերի ստորագրութիւններով վաւերացուած նամակ է ուղարկւում Թիֆլիսում ՀՀ դեսպանատուն. դիմողները յայտարարում էին իրենց Հայաստանի հպատակներ եւ բողոքելով անպաշտպան լինելուց, խնդրում էին ներկայացուցչութիւն բացել Սուխումում[85]: 1919 Հոկտեմբերի 28ին ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսեանը, նաեւ որպէս արտգործնախարար ստորագրում է շրջաբերական նամակ, որտեղ կարեւորում է հիւպատոսութիւնների բացման հարցը, քանի որ ՀՀ կառավարութիւնը տեղեակ չէր հայ գաղութների կեանքի մասին[86]: 1919 Յունիսի 25ին, Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Լեւոն Եւանգուլովի զեկուցագրում ԱԳՆին առաջարկւում է հպատակութեան հարցը վճռելիս նկատի առնել այն հանգամանքը, որ Սուխումի եւ Սոչիի հայերի կողմից Հայաստանի քաղաքացիութիւն ըն-

դուներու պարագայում, փաստը, յամենայնդէպս, կ՝օգտագործուի Վրաստանի կառավարութեան կողմից՝ հայերին հողային սեփականութեան իրաւունքից զրկելու նպատակով, իրրեւ օտարների[87]: Ինչպէս յայտնի է դառնում 1919 Սեպտեմբերի 26ի Եւանգուլովի զեկուցագրից, նրան այցելել էր Սուխումի Երջանայինն ՀԱՄի անդամ Խ. Աւդալբեկեանը եւ պնդել, որ հիւպատոսարանի բացումը Սուխումում անհրաժեշտ չէ, քանի որ կարող է փչացնել յարաբերութիւնները վրաց իշխանութիւնների հետ: Աւդալբեկեանի կարծիքով ՀԱՄը ոչ միայն հոգում էր գաղութի կարիքների որոշ մասը, այլեւ կարող էր վարել հիւպատոսական գործ[88]: Սակայն 1919 Օգոստոսի 1ին Եւանգուլովը ՀՀ կառավարութեան անունից դիմել էր Վրաստանի իշխանութիւններին խնդրանքով, որտեղ ասուած է. «Սուխումի շրջանում բնակւում են մեծ թուով նախկին թուրքահպատակ հայեր: Նրանց շահերի պաշտպանութեան համար Հայաստանի կառավարութիւնը նպատակայարմար է գտնում հիմնել հիւպատոսարան Սուխում քաղաքում՝ հիւպատոսի նստավայրով: Խնդրում եմ տեղեկացնել՝ Վրաստանի կառավարութեան կողմից այս առաջարկի իրականացումը կարո՞ղ է հանդիպել որեէ խոչընդոտի»[89]: Արդէն Օգոստոսի 7ին Վրաստանի կառավարութիւնը դրական որոշում է կայացնում[90]: 1919 Նոյեմբերի 15ին Եւանգուլովը առաջարկում է ՀՀ ԱԳՆին բացել հիւպատոսարան նաեւ Սոչիում՝ հիմնաւորելով դիմումը, թէ՝ ժամանակին ներկայացուցչութիւն ունենալու պարագայում համապատասխանօրէն կը պաշտպանուէին հայերի շահերը եւ կը կանխուէր նրանց ապստամբութիւնը: Ա.Ժ.Մ, Եւանգուլովի կարծիքով, ներկայացուցիչը պէտք է նպաստէր հայերի չէզոքութեանը եւ հայրենադարձութեանը[91]: Սակայն ՀՀ արտգործնախարարի հրահանգով Սոչիի չրջանը ընդգրկուեց Սուխումի հիւպատոսարանի գործունէութեան գօտում[92]: Եւանգուլովի առաջարկութեամբ, Նոյեմբերի 1ից[93] ՀՀ ԱԳՆն Սուխումում հիւպատոս նշանակեց Թիֆլիսի ներկայացուցչութեան խորհրդական Վաղարշակ Սահակեանին:

Հասնելով Սուխում, Սահակեանը տեղեկացնում էր իր նախարարին, որ Վրաստանի կառավարութեան իշխանութիւնը Արխազիայում վերջնականօրէն չի հաստատուել, քանի որ պայքար է ընթանում երկրամասի լայն ինքնավարութեան կողմնակիցների եւ վրաց իշխանութիւնների միջեւ, որի պատճառով կառավարման բնագաւառում տիրում է խառնաչփոթ[94]:

1919 Փետրուարին ընտրուել էր Արխազիայի Ժողովրդական Խորհուրդը (Ա.Ժ.Խ), որն էլ ձեւաւորեց տարածքային գործադիր իշխանու-

թիւն՝ կոմիսարիատ անուանումով։ Սուխումի հայութեան գերակշռող մասը, համարուելով թուրքահպատակ, գուրկ էր ընտրութիւններին մասնակցելու իրաւունքից։ Ձայնի իրաւունք ունեցողները տուեցին այն Վրաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական կուսակցութեանը, որի ցուցակով ԱԺԽ անդամ ընտրուեց Սուխումի ՀԱԽի նախագահ Խաչատուր Աւդալբեկեանը։ Վրաց հեղինակները չեչտում են նրա եռանդուն աջակցութիւնը՝ Վրաստանի կառավարութեան քաղաքականութեանը[96]։ Սուխումի շրջանում գործող ՀՅԴ Տեղական Կոմիտէն որեւէ կերպ չարտայայտեց իր դիրքորոշումը[96]։ Երկրամասի վերջնական իրաւական կարգավիճակը պէտք է որոշէր Վրաստանի ապագայ սահմանադրութիւնը եւ, որպէս վերջինիս գումարելին՝ «Ինքնավար Աբխազիայի կանոնակարգը»։ ԱԺԽն ենթադրւում էր որպէս օրէնսդրական մարմին, սակայն մինչեւ ինքնակառավարման մասին կանոնակարգի հաստատումը, նրա լիազօրութիւնների շրջանը չէր սահմանուած։ Այդ իսկ պատճառով ԱԺԽն ունէր ներկայացուցչական ֆունկցիա։ Ժամանակակիցների վկայութեամբ ե՛ւ ԱԺԽի, ե՛ւ Կոմիսարիատի դերը ձեւական էր. իրական իշխանական լծակները գտնւում էին վրացական զինուորական հրամանատարութեան ձեռքում։ Թիֆլիսի մամուլը կասկածի տակ էր առնում Արխազիայի ինքնավարութեան անքակտելիութեան մասին Վրաստանի կառավարութեան հաւաստիացումները[97]։ 1920 Յունուարի 21ին ԱԺԽին բողոքով դիմել էին Գագրայի տեղամասում բնակուող հայերի պաշտօնական ներկայացուցիչները. «Վրաց զինուորականները,- գրում էին նրանք,- գիշերով յարձակւում են խաղաղ բնակիչների վրայ, եւ սպառնալով գնդակահարել, դրամ են պահանջում։ Ստանալով մի քանի հազար ռուբլի, հեռանում են, հակառակ դէպքում՝ սպանում են... Շարքայինների եւ սպաների վերաբերմունքը հայերի նկատմամբ վերին աստիճանի արհամարհական է եւ սպառնացող»[98]։ Ձեկուցագրերից մէկում Սահակեանը առաջարկում է Բամիչուիլու առջեւ բարձացնել Գագրայում փոխհիւպատոս ունենալու հարցը, քանի որ արխազական իշխանութիւնների ազդեցութիւնը շրջանում աննշան է[99]։

Հիւպատոսութեան գործունէութեան առաջին իսկ օրից կարեւորւում էին մի շարք հարցեր, ինչպէս՝ հայրենադարձութեան, Սուխումի շրջանի հայերի քաղաքացիական պատկանելիութեան եւ նրանց զօրակոչի հարցերը, որոնց լուծումը բարդանում էր հիւպատոսի եւ տեղի ՀԱԽի միջեւ անբարեացակամ յարաբերութիւններով։ Նոյնիսկ նրանց անհամաձայնութիւնները տարածւում էին Սուխումի շրջանում բնակ-

ուող հայերի թուի չուրջ. Սահակեանը նչում է 25000[100], իսկ ՀԱՄԸ՝ 30000[101]:

1920 Մարտի 2ին հիւպատոսը կազմում է Արխագիայում հայերի քաղաքական եւ տնտեսական իրավիճակի մասին հաշուետուութիւն: Նա նչում է, որ Վրաստանի կառավարութեան կողմից ծխախոտի առեւտրի պետական մենաշնորհի հաստատումից յետոյ, հայերը կարծում էին, որ Արխագիայում այլեւս ապրել հնարաւոր չէ եւ պահանջում էին իրենց տեղափոխել Հայաստան: Հակառակ դէպքում՝ սպառնում էին արտագաղթել ցանկացած այլ երկիր[102]: 1920ի ամռանը, Թիֆլիսում գտնուող Ա.Ժ.Մի պատուիրակութիւնը բողոքում էր Վրաստանի վարչապետ Ժորդանիային, թէ՝ ծխախոտային մենաշնորհը գիւղացիների միջավայրում ուժգին բողոք է առաջացրել եւ կործանել այս գիւղատնտեսական կուլտուրայի մշակումը[103]: Եւ իրօք, եթէ 1914ին ծխախոտի տնկաստանների ընդհանուր տարածքը կազմում էր 14325 հեկտար, ապա 1920ին՝ միայն 1311[104]:

Միւս հարցը, որը յուզում էր բնակչութեանը, 21 տարին լրացած հայ երիտասարդների զօրակոչն էր Վրաստանի բանակ: Այս որոշումը առաջացրեց տեղի հայերի զայրոյթը: Սա տեղի ունեցաւ այն պարագայում, երբ աբխազները Վրաստանի կառավարութեան կողմից ազատուած էին զօրակոչից եւ կարող էին ծառայել բանակում՝ կամաւոր[105]: Հիւպատոսարանի բացումից անմիջապէս յետոյ 700 հայ ընտանիք ձեւակերպեց Հայաստանի քաղաքացիութիւն[106]: Թիֆլիսում ընթացող բանակցութիւններում Հ.Հ պատուիրակութիւնը դիմեց վրացական կողմին եւ նրա իշխանութիւնները հրաժարուեցին ուժային գործօնից: Կալանքից ազատուեցին զօրակոչից խուսափողները, բանակի շարքերից զօրացրուեցին Վրաստանի քաղաքացիութիւն չունեցող հայերը: Միաժամանակ, Սուխումի հիւպատոսը հանդէս եկաւ միջնորդութեամբ՝ զինակոչը չտարածել չրջանում բնակուող Հայաստանի քաղաքացիների վրայ՝ մինչեւ իրենց հայրենիք տեղափոխուելը[107]: 1919 Դեկտեմբերի 9ի պատասխան նամակում նչուած է, որ թէպէտ Ռազմական նախարար Ք. Արարատովը անցանկալի էր համարում իրականացնել զօրակոչը Հայաստանի սահմաններից դուրս, միաժամանակ նա նպատակայարմար էր գտնում առաջարկել երիտասարդներին, որոնք հանդիսանում էին Հ.Հ զինակոչիկները, իրենց հաշուին մեկնել Հայաստան: Հակառակ դէպքում նրանք կը համարուէին Վրաստանի քաղաքացի եւ պէտք է ծառայէին տեղում[108]:

Սպիտակ Բանակի հրամանատարութեան կարգադրութեամբ, վերջինիս տիրապետութեան ներքոյ յայտնուած Սոչիի եւ Գագրայի տարածքում, 1919 Ապրիլի 12ից յայտարարուել էր զօրահաւաք։ Տեղի ռուս գիւղացիները, չցանկանալով ներքաշուել քաղաքացիական պատերազմին, իրենց հաւաքում ընդունել էին բանաձեւ, որը մերժում էր հրամանը[109]։ Հայերը, որոնք ողջունում էին «Սպիտակների» տիրապետութիւնը, որպէս ազատութիւն՝ վրացական լծից, համերաշխ չեղան ռուս գիւղացիների հետ[110]։ Այն պարագայում, երբ ռուս գիւղացուն նոյնիսկ գնդակահարում էին դասալքութեան համար, համշէնահայ բնակչութիւնը բաւական թուով կամաւորներ տուեց։ Արդիւնքում, Կամաւորական Բանակի կազմում գոյացաւ Հայկական Զօրամաս[111]։ Վերջինս գործել է վրաց զօրքերի դէմ Սոչիի ռազմաճակատում[112]։

Հայերի մասնակցութիւնը վրաց բանակի դէմ կռիւներին՝ ճիշտ չէ ընկալել որպէս ազգամիջեան բախում, քանի որ յայտնի է տեղի վրաց եւ համշէնահայ համայնքների միջեւ բարիդրացիական յարաբերութիւնների փաստը։ Զօրամասի ձեւաւորումը հարկաւոր է դիտել որպէս բողոքի դրսեւորում՝ վրացական իշխանութիւնների սխալ կառավարման դէմ՝ երբ համշէնահայ համայնքն այլեւս չէր ցանկանում յայտնուել Վրաստանի կազմում։ Խուսափելով վրաց իշխանութիւնների կողմից աւելորդ մեղադրանքներից, Սուխումի շրջանի ՀԱՄԸ հայկական ռազմիկներին հռչակեց զօրամասի եկուորներ[113]։ 1919 Նոյեմբերին Սուխումի ՀԱՄԸ դիմել էր ՀՀ Թիֆլիսի դեսպանորդին խնդրելով ջանք գործադրել Հայկական Զօրամասը ռազմաճակատից հեռացնելու ուղղութեամբ, քանի որ նրա մասնակցելը կամաւորականների եւ վրաց բանակի միջեւ բախումներում, նիւթ էր տալիս Աբխազիայի հայերի դէմ սադրանքներ կազմակերպելու։ Որպէս հետեւանք սրւում էին յարաբերութիւնները վրաց իշխանութիւնների հետ, ինչը լուրջ վտանգում էր Սուխումի շրջանում հայերի վիճակը, որոնք ՀԱՄԻ պնդմամբ, ցանկանում էին հանգիստ ու խաղաղ ապրել իրենց հարեւանների հետ։ ՀԱՄԻ կարծիքով զօրամասը հայերի որեւէ շահին չէր ծառայում եւ նրա հեռանալուց յետոյ շրջանի հայութեան դրութիւնը կը բարելաւուէր[114]։

1919 Նոյեմբերի 25ին Վրաստանում ՀՀ ներկայացուցչութեան ռազմական կցորդը հաղորդում էր իր կառավարութեանը, որ Դենիկինը համաձայնութիւն է տուել Սպիտակ Բանակում ծառայող մի քանի հազար հայերի ՀՀ տեղափոխութեանը։ Բացի այդ, ինչպէս հաւաստիացնում էր Եկատերինոդարում գտնուող Ռուսաստանի Հարաւային Ռազմական Ուժերի գլխաւոր հրամանատարութեան եւ «Յատուկ խորհր-

դակցութեանը»[115] կից ՀՀ ներկայացուցիչ Հ. Սաղաթելեանը, Դենիկինը խոստանում էր զէնքը թողնել հայ ռազմիկներին եւ նրանց ապահովել զինամթերքով: Իսկ Եւանգուլովը հաղորդում էր, որ Վրաստանի կառավարութիւնը նրանց համար չի ստեղծի որեւէ խոչընդոտ եւ որպէս «գաղթականների» բաց կը թողնի իր տարածքով[116]:

Սակայն այս ծրագիրը չյաջողուեց, քանի որ 1920 Յունուար-Փետրուարին Ռուսաստանի հարաւում «Սպիտակ Շարժում»ը պարտութիւն էր կրել կարմիր Բանակի հարուածներից: 1920 Յունուարի 18ին Սահակեանը զեկուցում էր նախարարութիւն, որ Սոչիի ռազմաճակատում գտնուող հայ ռազմիկների շարքերում կայ հայրենադարձութեան մտադրութիւն եւ նպատակայարմար էր գտնում հայկական զօրամասը տեղափոխել ՀՀ՝ Վրաստանի վրայով, միաժամանակ պահպանելով հանդերձանքը եւ զէնքը: Հիւպատոսը համոզուած էր, որ վրաց իշխանութիւնները դէմ չէին լինի այս ծրագրին: Բացի զօրակոչիկներից, զօրամասը համալրում էին նաեւ կամաւորներ եւ ժամանակակիցներին յայտնի էր, որ այն խռովայոյզ ժամանակ վերջիններս ծառայում էին ոչ թէ որեւէ կուսակցական շահերի, այլ նախկին Ռուսաստանի սահմաններում յանուն միասնական պետականութեան[117]: Այս առումով Սահակեանը մտահոգուած էր, որ նրանք կարող էին հեշտութեամբ հրապուրուել «նոր եւ ուժեղ», արդէն Խորհրդային Ռուսաստանի կարգախօսով ու դարձեալ օգտագործուել Վրաստանի դէմ[118]: Այդ հարցում հիւպատոսի հետ համաձայն էին նաեւ ՀՀ ԱԳՆում[119]:

Յետագայ դէպքերը ունեցան արագ զարգացում: 1920 Յունուարի 28ին Սոչիի եւ Սուխումի շրջանների սահմանագծին տեղի ունեցաւ ելոյթ՝ Կամաւորական Բանակի դէմ: Ելոյթը գլխաւորում էր «Սեւծովեան Ափի Ազատագրման Կոմիտէ»ն[120]: Նրան ենթարկուող «Սեւծովեան Գիւղացիական Աչխարհագօրը» ընդհարումներից յետոյ՝ Փետրուարի 1ին գրաւեց Սոչին: Շարժման սկզբից հայերի ժողովը որոշեց խիստ չէզոքութիւն պահպանել եւ դիմել ինքնապաշտպանութեան՝ եթէ նրա գոյութեան սպառնայ վտանգ: Ա. Յակոբեանի վկայութեամբ հայ բնակչութեան դիրքորոշումը՝ որեւէ մարտնչող կողմի նկատմամբ, կարող էր վճռական դեր ունենալ: Երկու ճամբարում էլ դժգոհութիւն էին յայտնում չէզոքութեան վերաբերեալ, քանի որ հայերը, չնայած բազմաթիւ խնդրանքների՝ նոյնիսկ սպրանքների, չներքաշուեցին կռուին: Իսկ Կամաւորական Բանակի շարքերում ծառայողների վերաբերեալ Յակոբեանը յայտնում է, որ «Չնայած զինուորների՝ մանաւանդ անդրկովկասցիների բուռն ցանկութեան՝ վերադառնալ Հայաստան, եւ

մեր ջանքերի, [Չմշկեանի գումարտակը] մնաց Սոչիում եւ մասնակցեց կռիւներին, տալով մի քանի սպանուած եւ վիրաւոր: Կամաւորական Բանակի նահանջի ժամանակ բաւական թուով հայ սպաներ եւ զինուորներ մնացին Սոչիում եւ մեծ մասամբ թէեւ ձերբակալուեցին, բայց հետեզհետէ ազատ արձակուեցին»[121]: *Նաեւ յայտնի է, որ հայկական գումարտակը, լինելով Սոչիի կայազօր, մինչեւ քաղաքի զիջումը մասնակցել էր Մացեստա գետի վրայ 1920 Յունուարի 31ի մարտին: Միւս կռիւը հայ զինուորները մղել էին Փետրուարի 13ին՝ Շախէ գետի վրայ: «Կանաչների» շտաբը խոստանում էր, որ գերի ընկած կամ ապստամբների կողմը կամաւոր անցած Հայկական Զօրամասի զինուորները եւ սպաները որեւէ պատժամիջոցների չեն ենթարկուի:*

«Սպիտակների» անյաջողութիւնների հետեւանքով չարքաշին հայ զինուորների տրամադրութիւններում բեկում էր առաջացել: Բացի այդ, ակնյայտ էր որ ապստամբների կողմից հայ բնակչութեան շահերին որեւէ վտանգ չէր սպառնում: Ապստամբութեան ղեկավարութեանը ներկայացել էին հայ բանագնացները, որոնք քննարկում էին զէնքը ցած դնելու պայմանները: Լազարեւսկոյէ բնակավայրի մօտ Հայկական Զօրամասի մնացորդը, հիմնականում լինելով ներկայացուած կամակոր սպայական անձնակազմով, բոլորովին ջախջախուել էր, իսկ նրաց հրամանատար Չմշկեանը ընկաւ ռազմի դաշտում[122]: *«Սեւծովեան Գիւղացիական Աչխարհազօր»ի հրամանատար Ն. Վ. Վորոնովիչը յետագայ դրուքիւնը նկարագրում է հետեւեալ կերպ. «Կամաւորականների պարտուելուց յետոյ հայերը կտրուկ փոխեցին իրենց քաղաքական ուղղութիւնը եւ փորձեցին վերականգնել նախկինում եղած բարիդրացիական յարաբերութիւնները ռուս գիւղացիների հետ*[123]: *Սակայն վերջինները չէին ուզում խաղաղուել [Կամաւորականների] նախկին դաշնակիցների հետ եւ նրանց վերաբերում էին բացայայտ թշնամանքով: Լուրեր էին պտտւում հայերի դէմ նախապատրաստուող ջարդի մասին»*[124]: *Այդ անբարեացակամ մթնոլորտում Յակոբեանը այցելել էր «Ազատագրման Կոմիտէ»ի արտաքին յարաբերութիւնները վարող Վադիմ Զայկինին, որը սիրալիր վերաբերմունք ցուցաբերեց եւ ընդառաջեց Յակոբեանի միջնորդութեանը՝ հայ զինուորականներին տեղափոխել ՀՀ: Նա նոյնիսկ խոստացաւ օգտագործել իր կապերը վրացական կառավարութիւնում՝ այդ հարցին դրական ընթացք տալու համար*[125]: *Հանդիպման մասին Յակոբեանը 1920 Փետրուարի 29ին տեղեակ էր պահել Եւանգուլովին, չեչտելով, որ խռովարար ռուս գիւղացի-*

ներին դէմ գործողութիւններում «մասնակից հայերի (թուով 80-100[126]) Սոչիում մնալը չափազանց անյարմար կողմեր ունի ազգերի յարաբերութիւնների տեսակէտից: Բացի այդ, նրանց պահելը մեզ վրայ չափազանց ծանր է նստում»[127]: Ճակոբեանը ուշացրել էր իր լրատուութիւնը, քանի որ Չայկինը կատարելով իր խոստումը Փետրուարի 23ին, գնուելով Թիֆլիսում, այցելել էր Եւանգուլովին: Տալով որոշակի տեղեկութիւններ Սոչիում տիրող դրութեան մասին նա նաեւ ասել էր, թէ «Հայկական գունդը մասնակցելիս է եղել զանազան պատժիչ խմբերի եւ մեծ վայրագութիւններ էր թոյլ տուել... Ապստամբած գիւղացիների դէմ գործում էր առանձին հայկական գումարտակ՝ սպայ Չմշկեանի գլխաւորութեամբ: Այդ գումարտակը միշտ ուղարկւում էր առաջաւոր ու վտանգաւոր դիրքեր եւ այդ պատճառով շատ զոհեր է տուել[128]: Նրա կազմից մնացել է այժմ շատ քիչ մարդ՝ մի մասը փախել է լեռներ, իսկ փոքր մասը գերի է ընկել եւ զինաթափ արուել: Գումարտակի գործերը զայրոյթ են առաջացրել տեղի բնակչութեան մէջ, ինչպէս նաեւ, մասամբ, տեղի հայերի նկատմամբ եւ գերիները՝ հենց նրանց կեանքի ապահովութեան համար տեղաւորուել էին բանտում»: Եւանգուլովը նաեւ տեղեկացնում էր իր վերադաս մարմնին, որ «Չայկինի խօսքերով, նրան յաջողուել է ժամանակի ընթացքում մեղմացնել հասարակութեան զայրոյթը[129] եւ այժմ այդ տպաւորութիւնը գրեթէ անցել է: Այժմ Չայկինը անհրաժեշտ է գտնում - եւ այդ մասին գրում է նաեւ Սահակեանը - դուրս հանել գումարտակի մնացորդները՝ մօտ 100 հոգի եւ ուղարկել տրանզիտով Վրաստանի վրայով Հայաստան: Հակառակ դէպքում կարող են անցանկալի երեւոյթներ տեղի ունենալ»[130]: Յանգելով որոշակի պայմանաւորուածութիւնների՝ Եւանգուլովի հետ, Չայկինը տեղեկացրել էր լրագրողներին, որ գէնքը ձեռքին գերի ընկած հայերը, եթէ կը պարտաւորուեն հայրենիք մեկնել, ապա Հայաստանի կառավարութեան երաշխաւորութեամբ ազատ են արձակուելու:

Այսպիսով, Սոչիի եւ Սուխումի շրջանների սահմանամերձ տարածքում չուրջ մէկ տարի գործող Հայկական Զօրամասի ճակատագիրը աննախանձելի աւարտ ունեցաւ: Կամաւորական Բանակի կործանումից յետոյ տեղի զինուորները ցրուել էին իրենց տները: Եթէ 1920 Յունուարի կէսին Սահակեանը յիշատակում է 1500 ռազմիկի առկայութիւն, ապա Փետրուարի վերջերին ընթացիկ գրագրութեան մէջ խօսք է գնում չուրջ 150 զինուորի մասին, այն էլ որպէս կապիտան Չմշկեանի գումարտակի մնացորդներ: Սկզբից նրանց համարում էին «Ազատագրական Կոմիտէ»ի ռազմագերիներ, թէպէտ չուտով ազատ

արձակեցին։ Զինելով տեղարնիկ, նրանք մնացել էին զուրկ որեւէ պաբենային մատակարարումից։ Զինուորների ճակատագրով խիստ մտահոգուած էին Սոչիի ՀԱՄը, Սուխումի հիւպատոս Սահակեանը եւ Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Եւանգուլովը։ Նրանց հեռագրերի եւ դիմումների չնորհիւ[131] գործը դրական լուծում ստացաւ ՀՀ կառավարութեան մակարդակով։ Ցայտնի է, որ 1920 Մարտի 29ին Սոչիից տեղափոխուած 200 զինուոր արդէն գտնւում էր Թիֆլիսում[132]։ Իսկ Սոչիի հայ բնակչութեան զինակոչութեան հարցը նորից արծարծուեց, երբ շրջանում հաստատուեցին խորհրդային կարգեր։ 1920 Յուլիսի 12ին ՀՀ արտգործնախարարը յանձնարարել էր Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Տիգրան Բեկզադեանին կանխել նրանց զօրակոչը՝ կարմիր բանակի շարքերը, Սերգէյ Կիրովի միջոցով[133]։

Սոչիի շրջանը Խորհրդային Ռուսաստանի կազմում յայտնուելուց իվեր, տեղի հասարակաքաղաքական կազմակերպութիւնների հետ մէկտեղ, արգելուեց նաեւ տեղի ՀԱՄի գործունէութիւնը[134]։ Այսպիսով շրջանի հայութիւնը զրկուել էր իր կամքը արտայայտող եւ նրա շահերը հնարաւոր չափով պաշտպանող մարմնից։ ՀԱՄները Վրաստանում եւս հանդիպում էին լուրջ խոչընդոտների՝ իրենց գործունէութեան մէջ։ Թիֆլիսում գտնուող Վրաստանի ՀԱՄը կարեւորագոյն էր համարում Վրաստանում հայ քաղաքացիներին ազգամշակութային ինքնավարութիւնով ապահովման հարցը։ Քանի որ, հիմնահարցին նուիրուած բազմաթիւ դիմումները եւ յայտարարութիւնները կառավարութեան կողմից մատնւում էին անուշադրութեան, Վրաստանի ՀԱՄը, նախագահ Բ. Թոփչեանի ստորագրութեամբ յատուկ թռուցիկ էր տարածել։ «Դիմումը» կոչ էր անում հայ բնակչութեանը՝ պահանջել Վրաստանի Սահմանադիր Ժողովից՝ ապահովել ապագայ Սահմանադրութիւնում մշակութային ինքնավարութեան սկզբունքը։ Նոյն թռուցիկում տպագրուել էին ենթադրեալ «Հայկական Ազգային ինքնավարութեան»[135] նուիրուած թեզեր։ Սակայն վրացական պաշտօնական շրջանակները բազմիցս զարմանք էին յայտնում փոքրամասնութիւնների՝ ազգամշակութային ինքնավարութիւն ունենալու ցանկութեան վերաբերեալ։ Վրաց գործիչները որպէս թաքնուած անջատողականութիւն էին դիտում այդ ձգտումը[136]։ Նրա կանխման նպատակով, Վրաստանի Ներքին Գործերի Նախարարութիւնն արգելում էր հայ բնակչութեանը՝ Վրաստանի ՀԱՄը կազմել ուղղակի ընտրութեան միջոցով։ Բացի այդ, իշխանութիւնները գործող ՀԱՄերին նոյնիսկ չէին տրամադրում իրա-

ւական անձի կարգավիճակ եւ, հետեւապէս, չէին ճանաչում նրանց հասարակաքաղաքական լիազօրութիւնները[137]:

Զարմանալի չէ, որ Վրաստանի հայերի միջավայրում տարածում ունէր արտագաղթի տրամադրուածութիւն: Հիւպատոս Սահակեանի տուեալներով Արխագիայի կոմիսարիատի որոշ անդամներ մտահոգութիւն էին յայտնում հայերի վերոյիշեալ ցանկութեան վերաբերեալ: Իսկ Արխագիայի լայն ինքնավարութեան կողմնակիցները դէմ էին դրան, քանի որ հայերի մեկնումից յետոյ նրանց տեղը կը զբաղեցնէին վրացի վերաբնակիչները[138]: Ազգային ուժերի յարաբերակցութիւնը դեռեւս հնարաւորութիւն չէր տալիս նորաստեղծ վրացական պետականութեանը ամուր ոտքով կանգնել Արխագիայում: Սահակեանի կարծիքով, վրաց ղեկավար շրջանակները մտադրութիւն ունէին ուժեղացնել վրացական ազդեցութիւնը երկրամասում ու այդ նպատակին հասնելու համար նրանք չէին խուսափի որեւէ միջոցներից: Փափաք էր առաջացել այդ նպատակին ծառայեցնել նաեւ հայկական գործօնը՝ որպէս լրացուցիչ հակակշիռ անջատամէտ արխազներին: Երբ Արխագիայի իշխանութիւնները, օգտագործելով Սուխումի ՀԱՄի հեղինակութիւնը, առաջարկեցին հայ բնակչութեանը ընդունել Վրաստանի քաղաքացիութիւն, ՀԱՄը - ինչպէս հեգնանքով գրում է Սահակեանը - իր կամակատարութիւնով գերագանցեց վրացիների բոլոր սպասելիքները: ՀԱՄի նախագահութիւնը, որը բաղկացած էր 20 հոգուց, խորհրդակցութեան հրաւիրեց հայաբնակ գիւղերի 10 կոմիսար (գիւղապետ) եւ 10 ներկայացուցիչ գիւղացիներից: Ինքնակոչ համագումարի անունից յայտարարուեց Սուխումի շրջանի հայութեան կամքը՝ ընդունել Վրաստանի քաղաքացիութիւն[139]: Հայերի կողմից Վրաստանի քաղաքացիութիւն ընդունելու պարագայում, հիւպատոսի կարծիքով, Հայաստանը կը զրկուէր նրանց հովանաւորելու իրաւունքից: Միաժամանակ կար ձգտում՝ ուժեղացնել վրացական տարրը հայերի հաշուին: Հիւպատոսը համոզուած էր, որ երբ վրացական իշխանութիւնների համար կը վերանար հայերի աջակցութեան անհրաժեշտութիւնը, ապա հայերը վաղ թէ ուշ դուրս կը մղուէին Արխագիայից: Հետեւապէս, վտանգ էր առաջանում, որ ՀՀ պաշտպանութիւնից զուրկ հայերը, որոնք կազմում էին երկրամասի բնակչութեան 25%ը[140], կը կորցնեն նաեւ չարժական գոյքը եւ կը դառնան ծանր բեռ՝ Հայաստանի համար[141]: 1920 Յունիսի 2ի զեկուցագրում Սահակեանը յայտնում էր, որ հողօգտագործման առումով Սուխումի շրջանի հայութիւնը բաժանուում է 4 կարգի: 80%ը մշակում էր պետական ֆոնդի հողերը՝ կապալավարձի հիմունքներով, որից իրա-

ւունք ունէր օգտուել եւս մէկ տարի։ Ցաղորդ 5%ը ձեռք էր բերել հողերը՝ ուրիշի անունով, բայց իշխանութիւնները չէին ճանաչում նրանց իրաւունքները։ Եւս 5%ը կազմող հայերը, օգտուելով կառավարական խառնաշփոթից, կարողացել էին ձեւակերպել հողի սեփականութիւնը իրենց անունով, սակայն կոմիսարիատը չէր ճանաչում սեփականատէրերի իրաւունքները՝ մինչեւ Վրաստանի քաղաքացիութեան ընդունումը։ Միայն 5%ը, որը ժամանակին ձեւակերպել էր Ռուսաստանի կայսրութեան հպատակութիւնը եւ ճանաչւում էր օրէնքով որպէս Վրաստանի քաղաքացիներ, օգտւում էր լիակատար սեփականատիրոջ իրաւունքից[142]։ Ա.Ժնի պատուիրակութիւնը 1920ի ամռանը բողոքում էր Վրաստանի հողագործութեան նախարար Նոյ Ժոմերիկիին, որ Գագրայի տեղամասում կատարւում է վրացիների վերաբնակեցում՝ Գուրիայի մարզից, մինչ տեղացիներին հողը նոյնիսկ կապալավարձով չէր տրւում։ Այս ամէնն ասելով, պատուիրակները չեչտում էին միայն արխազների եւ մեգրէլների իրաւունքները, իսկ հայերի մասին խօսք չկար[143]։

1920ի ամռանը Երեւան ժամանած Սուխումի ՀԱԽի լիազօրներ Եղիա Մուսելիմեանը եւ Երուանդ Մինասեանը Յուլիսի 8ին «Զեկուցագիր» յղեցին ՀՀ վարչապետին։ Այստեղ նրանք բացատրում էին ՀԱԽի նախագահութեան վրացամէտ դիրքը, գտնելով, որ Սուխումի չրջանի հայերի չահերին սպառնալիք էին ստեղծել հայ-վրացական պատերազմը եւ Սոչիի հայութեան աջակցութիւնը՝ Դենիկինին։ Բացի այդ, վրաց տիրապետութիւնը բերել էր հայերի նկատմամբ մեգրէլների[144] ագրեսիւ վերաբերմունքին, որոնք մինչ այդ ունէին հաչտ դիրք։ Քանի որ հողագուրկ մեգրէլ գիւղացիները 1918ին դարձել էին բոլշեւիզմի կողմնակիցները Արխազիայում, իշխանութիւնները տարածում էին նրանց չրջանակներում ագգայնական տրամադրութիւններ՝ սոցիալական պահանջներից գերծ պահելու նպատակով[145]։ Այդ պահին, մեգրէլները իրենց համարելով արտօնեալ եւ առաջին հերթին պետութիւն ձեւաւորող տարր, սկսել էին մրցել հայերի հողաբաժիններին եւ կարողութեանը տիրելու համար, քանի որ վերջիններս ժամանակին վերցրել էին ամենալաւ հողամասերը։

Հողային բարեփոխման իրականացման կապակցութեամբ կատարւում էր Վրաստանի քաղաքացիութիւն ունեցող գիւղացիներին արխազ իշխաններից եւ ռուս խոշոր հողատէրերից բռնագրաւուած հողի վաճառքը։ Ստեղծուել էր իրական հնարաւորութիւն տեղի հայերի համար՝ սեփականել տարիներով կապալավարձի հիմունքներով մշակուող հողը։

Սուխումի ՀԱՄի կարծիքով, պահից օգտուելու համար կար միակ միջոց՝ հաշտ դիրք ունենալ Վրաստանի կառավարութեան նկատմամբ։ Այդ նպատակով Հայ Համագումարը որոշեց առաջարկել տեղի հայութեանը ընդունել Վրաստանի քաղաքացիութիւն եւ ծառայել նրա բանակում։ Այդ քայլից յետոյ, կարճ ժամանակահատուածում իշխանութիւնները գործադրեցին կտրուկ միջոցներ, վերջ տալով հայերի դէմ ուղղուած մեգրէլ եւ արխազ տարրերի հալածանքներին։ Մխախոտի հայ «սպեկուլեանտները» սակայն, տուժել էին պետական մենաշնորհից եւ հակավրացական քարոզչութիւն էին տանում։ Այդ իսկ պատճառով, ՀԱՄի պատուիրակների խօսքերով, տարածւում էին ասէկոսէներ, թէ Վրաստանի քաղաքացիութիւն ընդունողները ընդմիշտ կը զրկուեն հայրենադարձութիւնից։ ՀԱՄը համոզուած էր, որ Վրաստանի կառավարութիւնը միշտ էլ կ՝աջակցի հայերի հայրենադարձութեանը, նպատակ ունենալով փոխարէնը Աբխազիայում բնակեցնել վրացիներին։ ՀԱՄի կարծիքով հայրենադարձութեան համար նպաստաւոր պայմաններ դեռեւս չէին ստեղծուել[146]։ Որպէս վրաց իշխանութիւնների բարեացակամ դիրքորոշման եւ ՀԱՄի եռանդուն աշխատանքի ապացոյց աստում է, որ հայկական դպրոցների թիւը աճել էր 12ից 30ի, որտեղ ուսանում էին 1567 աշակերտ, այդ թուում 511 աղջիկ։ Դպրոցներում դասաւանդում էր 57 ուսուցիչ[147], որոնց աշխատանքը հսկում էին շրջանային տեսուչը եւ հրահանգիչը։ Այս առումով պատուիրակները բողոքում էին հիւպատոս Սահակեանից, որը, չճչտելով իրավիճակը, սկսեց բաժանել Հայաստանի անձնագրերը գինակոչիկներին։ Քանի որ հիւպատոսարանը լայն գործունէութիւն էր ծաւալել հայրենադարձութեան ուղղութեամբ, փոխուեց վրաց պետական շրջանակների վերաբերմունքը Աբխազիայի հայերի նկատմամբ՝ որպէս ժամանակաւոր տարրի[148]։ Այնինչ, Սուխումի ՀԱՄի անդամների մէկ այլ վկայութեամբ, նրանք դեռեւս 1918ին դիմել էին Թիֆլիսի ՀԱՄին եւ ՀՀ կառավարութեանը՝ հայրենադարձութեան խնդրանքով, սակայն մերժուել էին միջոցների եւ յարմար բնակելի տարածքների բացակայութեան պատճառով[149]։ Պատուիրակները ՀԱՄի անունից առաջարկում էին կամ փակել հիւպատոսարանը, կամ էլ փոխել հիւպատոսին՝ նշանակելով Սուխումի ՀԱՄի հետ համաձայնեցուած անձ (ցանկալի էր՝ համշէնահայ)[150]։

Համադրելով Սահակեանի եւ Սուխումի ՀԱՄի կարծիքները, ՀՀ կառավարութիւնը եկաւ այն եզրակացութեան, որ Սուխումի հայութիւնը վաղ թէ ուշ աբխազների եւ մեգրէլների ճնշման տակ ստիպուած է լինելու լքել շրջանը։ Մարտավարական նկատառումներով, Վրաստա-

նի կառավարութիւնը դեռ ապակցում էր տեղի հայերին՝ որպէս լրացուցիչ հակակշիռ անջատամէտ արխազներին։

Նորաստեղծ ՀՀն ունէր հայ բնակչութեան սուր կարիք եւ, կառավարութեան անդամների կարծիքով, պէտք էր ամէն կերպ ապակցել հայրենադարձական տրամադրութիւններին, միաժամանակ ընդդիմանալով Վրաստանի քաղաքացիութեան ընդունմանը։ Կառավարութիւնը կասկածում էր, որ դառնալով քաղաքացի եւ հողի լիիրաւ սեփականատէր, հայ գիւղացին այլեւս չի ցանկանայ բռնել հայրենադարձութեան ճանապարհը։ Որոշուել էր ՀՀ կառավարութեան մակարդակով պաշտպանել տեղի հայերի չահերը եւ նրանց չարժական գոյքը, որը հնարաւորութիւն կը տար հայրենիքում ստեղծել նոր տնտեսութիւն։ Ելնելով նշուածից, նպատակայարմար էր համարուել՝ առաջարկել Վրաստանի կառավարութեանը Սուխումի չրջանի բոլոր հայերին ՀՀ քաղաքացի ճանաչել, բացառութեամբ առանձին հրաժարուողների, խնդրել պահպանել իրենց կապալավարձի իրաւունքները եւս 2-3 տարով, որից յետոյ թոյլատրել հայրենադարձութիւնը ամբողջ չարժական գոյքով[181]։

Վրաստանի խորհրդայնացումից յետոյ, Աբխազիայի հայ համայնքի համար մշակուած ՀՀ կառավարութեան ծրագիրը մոռացութեան մատնուեց, իսկ տեղի հայութեան կեանքում սկսուեց նոր ժամանակաչրջան։ Համչէնահայ համայնքը կոմունիստական ամբողջատիրութեան տարիներին այլեւս չէր կարող խաղալ որեւէ գործօնի դեր՝ Աբխազիայի ներքաղաքական կեանքում, եւ տեղի ՀԱՄի ցրուումից յետոյ նոյնիսկ զրկուել էր ենթադրեալ մշակութային ինքնավարութիւն ունենալու հնարաւորութիւնից։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Մինչեւ 1936ը Աբխազիայի կենտրոնը կոչուել է Սուխում, որից յետոյ գործադրուել է վրացացուած տարբերակ՝ Սուխումի։ Աբխազներն անուանում են իրենց մայրաքաղաքն Ակուա, իսկ երկիրը՝ Ափսուա։

[2] Աւելի քան հազար հինգ հարիւր տարի համչէնահայերն ապրել են պոնտական ամենաբարձր լեռնալանջերին, Քալքար կոչուող լեռան ստորոտում, կիսանկախ եւ ինքնուրոյն կեանքով։ Թուրքական ազգահալած քաղաքականութեան հետեւանքով համչէնահայերի մեծ մասը ստիպուած է եղել հեռանալ իր մայրենի ոստաններից՝ Համչէնից եւ նրան յարակից Սիւրմէնէ գաւառներից ու հիմնականում բնակուիլն հաստատել Տրապիզոն, Օրդու, Սամսոն գաւառներում (Բարունակ Թոռլաքեան, «Համչէնահայեր», Գրական Թերթ, 24 Մայիս 1968)։

[3] Istoria Abkhazii (Աբխազիայի Պատմութիւն), Գուդաուտա, «Այաշարա», 1993, էջ 207։

[4] Mikhayil Minasian, "Pereseleniye Amshenskikh Armyan Na Chernomorskoye Pobereg'ye Kavkaza I Perviye Shagi Ikh Khozyaystvennoy Deyatel'nosti (Poslednyaya Chetvert' XIX v.)" (*Համշէնահայերի Գաղթը Կովկասի Սեւ Ծովեան Ափին եւ Նրանց Տնտեսական Գործունէութեան Առաջին Քայլերը (XIX դ. վերջին քառորդ)*, *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1977, (409) Յունուար, 1, էջ 64-73։

[5] *Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), Արտաքին Գործերի Նախարարութեան Ֆոնդ* 200, ց. 1, գ. 409, թ. 11-12 (*ռուս.*)։

[6] *Նոյն*, թ. 46 (*ռուս.*)։

[7] Gemal Gamakhariya, Badri Gogiya, *Abkhaziya-Istoricheskaya Oblast' Gruzii (Istoricheskie Dokumenti, Materiali, Kommentarii S Drevnejshih Vremen Do 30-h Godov XX veka)* (*Աբխազիա՝ Վրաստանի Պատմական Մարզ (Պատմական Փաստաթղթեր, Նիւթեր, Մեկնաբանութիւններ Վաղեմի Ժամանակներից Մինչեւ Ի. դարի 30ական-ները)*, Թբիլիսի, «*Ագդգոմա*», 1997, էջ 411, վաւ. No. 221 (*ռուս.*)։

[8] *Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութիւնը 1903ին պա-տակտուել էր երկու հակամարտող թեւերի։ Մէկը կազմեցին բոլշեւիկները (մեծա-մասնականներ, կոմունիստներ), իսկ երկրորդը՝ չափաւոր սոցիալ-դեմոկրատները (մենշեւիկներ)։ Վերջինիս պատկանում էին նաեւ վրաց սոցիալ-դեմոկրատները, ո-րոնք 1918ին ձեւաւորեցին սեփական կուսակցութիւն։*

[9] Gamakhariya, Gogiya, էջ 404, վաւ. No. 219։

[10] Georgi Dzidzariya, *Kiaraz* (*Կիարազ*), *Սուխումի*, «*Այաչարա*», 1981, էջ 30, 34, 36, 38, 43։

[11] Gamakhariya, Gogiya, էջ 396, վաւ. No. 213։

[12] *ՀԱԱ*, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 61։

[13] *Ertoba* (*Միաբանութիւն*) *թերթ*, 17 *Ապրիլ* 1918 (*վրաց.*)։

[14] Gamakhariya, Gogiya, էջ 404, վաւ. No. 219։

[15] *1918 Յունուարի 7ին բոլշեւիկների կառավարութիւնը լուծարեց Ռուսաստանի Սահ-մանադիր Ժողովը։ Այսրկովկասի բնակչութեան կողմից ընտրուած նրա անդամները 1918 Փետրուարի 10ին Թիֆլիսում ձեւաւորել էին նոր մարմին՝ Սէյմ, որը նախագա-հում էր վրաց սոցիալ-դեմոկրատ Ն. Ժորդանիան։ 1918 Ապրիլի 9ին Սէյմը հռչակեց ան-կախ Անդրկովկասի (Այսրկովկասի) Դեմոկրատական Դաշնային Հանրապետութիւնը, որը տարրալուծուեց 1918 Մայիսի 26ին։*

[16] *ՀԱԱ*, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 61, *նաեւ՝* Gamakhariya, Gogiya, էջ 90։ *1926ի մարդահա-մարը հաստատում է հայաթափումը մեծամասամբ արխազ բնակչութիւն ունեցող Կոդորի եւ Գուդաուտայի գաւառներում, որտեղ հայերը հիմնականում փոխարինուե-ցին ռուսներով* (Grigori Legava, *Izmeneniye Klassovo-Nacional'noy Strukturi Naseleniya Abkhazii* (*Աբխազիայի Բնակչութեան Դասակարգազգային Կառուց-ուածքի Փոփոխում*), *Սուխումի*, «*Այաչարա*», 1989, էջ 16-20, աղիւսակ 5։

[17] *Istoria Abkhazii*, էջ 299-301, *նաեւ՝* Gamakhariya, Gogiya, էջ 81-82։

[18] *ՀԱԱ*, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 61։

[19] *Sakartvelo* (*Վրաստան*) *թերթ*, 4 *Յուլիս* 1919 (*վրաց.*)։

[20] *ՀԱԱ*, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 60։ *Հայերը չրջանի գիւղացիական ընդհանուր բնակ-չութեան 30%ն էին կազմում* (Denikin-Judenich-Vrangel, *Memuary* (*Յուշեր*), *Մոս-կուա-Լենինգրադ, Պետական Սոցիալտնտեսական Հրատարակչութիւն*, 1931, էջ 165)։

[21] ՀԱԱ, Վրաստանի ՀԱԽի ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8 (ռուս.):
[22] Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ (ՎԿՊՊԱ), Վրաստանի Դեմոկրատական Հանրապետութեան կառավարութեան քարտուղարութեան ֆ. 1861, ց. 2, գ. 28, թ. 4 (ռուս.):
[23] ՀԱԱ, Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչութեան ֆ. 276, ց. 1, գ. 62, թ. 1:
[24] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8 (ռուս.):
[25] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 62, թ. 1:
[26] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8, 11 (ռուս.):
[27] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 11-11 շրջ. (ռուս.):
[28] Նոյն, թ. 12 շրջ. (ռուս.): Վրաստանի կառավարութիւնը Սոչիի շրջանին ներքին ինքնավարութիւն տրամադրելու խոստումը չկատարեց: Նա ձգձգում էր ինքնակառավարման մարմինների ընտրութիւնները (Denikin-Judenich-Vrangel, էջ 161-162):
[29] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8-8 շրջ. (ռուս.): Վրաստանի կառավարութիւնը ճանաչել էր կայսերական Գերմանիայի հովանաւորութիւնը եւ հրաւիրել էր երկիր՝ գերմանական բանակը, ցանկանալով կանխել Թուրքիայի ոտնձգութիւնները: Աչիարհամարտի աւարտից յետոյ գերմանացիներին փոխարինեցին բրիտանական զօրամասերը:
[30] Նոյն, թ. 11 շրջ. (ռուս.):
[31] ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 26, թ. 38-40 (ռուս.):
[32] «Ք. Սոչիի Սոցիալիստական կուսակցութիւնների Խորհրդի Բանաձեւ, 18 Սեպտեմբեր 1918», *Dokumenty I Materialy Po Vneshney Politike Zakavkazya I Gruzii* (Փաստաթղթեր եւ նիւթեր Անդրկովկասի եւ Վրաստանի Արտաքին Քաղաքականութեան Մասին), Թիֆլիս, 1919, էջ 388-389, վաւ. No. 193 (ռուս.):
[33] «Պատերազմի Վերջը», *Ertoba*, 29 Դեկտեմբեր 1918 (վրաց.): Այդպէս էին մտածում սոցիալ-դեմոկրատները, իսկ ազգային-դեմոկրատների մամուլը գրում էր. «Այժմ մենք մղում ենք հայերի դէմ իրական ցեղային պայքար: Այս պատերազմը պէտք է որոշի ո՞վ կը գերիշխի Կովկասում: Մեր օգտին է կենսաբանական եւ մշակութային առաւելութիւնը, ինչպէս նաեւ պատմական աւանդոյթները» («Ցեղային Պատերազմ», *Sakartvelo*, 22 Դեկտեմբեր 1918 (վրաց.):
[34] ՀԱԱ, Բաքուի ՀԱԽի ֆ. 223, ց. 1, գ. 60, թ. 1-2: Փաստերի իսկութիւնը հաստատում է Վրաստանի Ռուսական Ազգային Խորհրդի նախագահ Ֆ. Լեբեդեւի նամակում (Նոյն, թ. 32):
[35] Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Երեւան, «Հայաստան», 1993, էջ 243-244: Մանրամասն տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 238, թ. 1-55: Այդ տհաճ դէպքերը համաձայն յիշատակում են վրաց հեղինակները (Avtandil Menteshashvili, *Oktyabr'skaya Revolyuciya I Nacional'no-Osvoboditel'noye Dvijeniye V Gruzii 1917-1921* (Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը եւ Ազգային-ազատագրական Շարժումը Վրաստանում 1917-1921 թթ.), Թբիլիսի, «Գանաթլեբա», 1987, էջ 131):
[36] ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 116, թ. 15 (ռուս.):
[37] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 7 (ռուս.):
[38] Նոյն, թ. 9 (ռուս.):
[39] Թէպէտ մէկ այլ փաստաթղթում նա տրտնջում էր, որ երկար ժամանակ ՀԱԽը ծանր բեռ էր տանում տեղի հայերին գերծ պահելով վրացական իշխանութեան դէմ բաց ելոյթից (ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 9 շրջ. (ռուս.):

[40] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 12-12 շրջ. (ռուս.):
[41] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 9-9 շրջ. (ռուս.):
[42] Կրոնական սպասկան կոչում:
[43] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 13-13 շրջ. (ռուս.):
[44] Նոյն, թ. 13 շրջ. (ռուս.):
[45] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 140, թ. 3,4 (ռուս.), Նաեւ՝ նոյն, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 2-3 (ռուս.), Նաեւ՝ նոյն, գ. 56, թ. 9 շրջ. (ռուս.):
[46] ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 116, թ. 22 (ռուս.):
[47] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 14 (ռուս.):
[48] Նոյն:
[49] Նոյն, թ. 9 շրջ. (ռուս.):
[50] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 140, թ. 3,4 (ռուս.):
[51] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 2-3 (ռուս.):
[52] Նոյն:
[53] Նոյն, թ. 9 շրջ. (ռուս.):
[54] ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 38, թ. 17-21 (ռուս.):
[55] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 7 (ռուս.):
[56] Նոյն, թ. 4-5 (ռուս.): Պարզ պատճառներով փաստաթուղթը չէր հրապարակուել Վրաստանի կառավարութեան կողմից, ի տարբերութիւն 1919 Յունուարի 5ի հաւաքի բանաձեւի, որը դեռեւս արտայայտում էր կողմ Վրաստանի կառավարմանը, իսկ շրջանի ճակատագիրը նպատակայարմար էր գտնում լուծել միջազգային վեհաժողովում (Dokumenty, էջ 415-416, վաւ. No. 199):
[57] Եւդենի Գեգեճկորիի տուեալներով Սոչիի շրջանում վրաց բնակչութիւնը կազմում էր 21-22%, որոնք հիմնականում բնակւում էին Պլաստունսկոյէ գիւղում (մեգրէլների չուրջ 2000 տնտեսութիւն), Dokumenty, էջ 403, 409-410: Այլ տեղեկութիւններով նա չէր գերազանցում 5%ը ("Dobrovol'cheskaya Armiya I Gruziya" (Կամաւորական Բանակը եւ Վրաստանը), Zakavkazskoye Slovo (Անդրկովկասեան Խօսք) Թերթ, Թիֆլիս, No 23, 14.02.1919):
[58] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 6-6 շրջ. (ռուս.):
[59] Անդամներ՝ Կուպրաշուիլի եւ Տէր-Գրիգորեան (ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 9 շրջ. (ռուս.): Նախկին սպայ, սոցիալիստ-յեղափոխական Տէր-Գրիգորեանը վարում էր կառավարութեան Ներկայացուցչի Գրասենեակի պետի պաշտօնը, իսկ մինչ այդ եղել էր Սոչիի Քաղաքային Դումայի եւ Բանուորական Պատգամաւորների Խորհրդի Գործկոմի նախագահ (Denikin-Judenich-Vrangel, էջ 164-165):
[60] ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 116, թ. 22-27 (ռուս.):
[61] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 350, թ. 2 շրջ. 3:
[62] Istoria Abkhazii, էջ 305:
[63] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 450, թ. 3, 5 (ռուս.):
[64] Նոյն, գ. 350, թ. 3: Հակահայկական քարոզչութեան արձագանգը պարզ երեւում է 1922ին հրատարակուած գեղագիտ Վորոնովիչի յուշերում: Նա գրում է, թէ «Սոչիի շրջանի գիւղացիութեան միջավայրում չկար Կամաւորական Բանակի այլ կողմնակից՝ բացառութեամբ վրացիներին ատող հայերի: Կամաւորականների գործակալները, օգտագործելով հայերի եւ վրացիների միջեւ թշնամութիւնը, կապ էին

հաստատել տեղի դաշնակցականների կոմիտէի հետ, որոնց միջոցով նախապատրաստում էին հայերի ելոյթը ընդդէմ վրացական տիրապետութեան։ Թէպէտ Կամաւորականները յարձակուեցին աւելի վաղ, քան բռնկուեց ապստամբութիւնը, հայերի ջոկատները աջակցելով նրանց՝ հարուածեցին վրացական զօրքերի թիկունքին» (N. V. Voronovich, "Zelyoniye" Povstanci Na Chernomorskom Poberegye" (*«Կանաչ» Ապստամբները Սեւ Ծովի Ափին*), Denikin-Judenich-Vrangel, էջ 162, 164)։ *Հայերի դերի մասին ոչինչ չի ասում Լուկոմսկին, նշելով, որ՝* «Փետրուարի 4ին վրացական զօրքերը կատարել էին անբարեացակամ (՞) գործողութիւններ մեր դէմ եւ գեներալ Դենիկինը հրամայեց անցնել յարձակման եւ գրաւել Սոչին» (Denikin-Judenich-Vrangel, էջ 99)։ *Պարզ է, որ չրջանին պատասխանատու վրաց պաշտօնեաները արդարանալու կարիք ունէին անպատասխան պարտութեան համար, թէեւ ժամանակակիցներին յայտնի էր տեղում վրացական զօրքերի պետ՝ գեներալ Ղոնիեւի կատարեալ ապաշնորհութիւնը ռազմական ոլորտում* (Voronovich, էջ 162)։ *Սոչիի իրադարձութիւնների պատճառով Թիֆլիսում 1920 Յուլիսի 30ից Օգոստոսի 2ը տեղի ունեցաւ դատ։ Սոչիի եւ Սուխումի չրջաններում վրացական զօրքերի հրամանատարութիւնը մեղադրւում էր ծառայողական անփութութեան մէջ։ Դատի ժամանակ խօսք եղաւ նաեւ հայերի մասին։ Դատախազի հարցին՝ մի՞թէ եղել էին բռնութիւններ հայերի նկատմամբ, նախկին ռազմական նախարար Գէորգաձէն պատասխանեց.* «Եթէ էլ եղել են, ապա առանձին դէպքեր»։ *Իսկ երկրորդ հարցին, թէ արդեօք կամաւորականների առաջխաղացումը պայմանաւորուած էր վրաց զինուորների անկարգութիւններով, վկայի պատասխանը եղաւ.* «Այդպէս էին բացատրում անգլիացիները» (*Slovo* (*Խօսք*), 03.08.1920, No. 173, (*ռուս.*))։ *Բրիտանական Միսիայի պետ Բրիգզը հրաւիրել էր արտգործնախարար Գեգեձկորիի ուշադրութիւնը Սոչիում վրացական զօրքերի վատ պահուածքի վրայ* (*Բանակցութիւնների տպագրութիւն, Թիֆլիս*, 23.05.1919, Avtandil Menteshashvili, *Iz Istorii Vzaimootnosheniy Gruzinskogo, Abkhazskogo I Osetinskogo Narodov 1918-1921* (*Վրաց, Աբխազ եւ Օս ժողովուրդների Փոխյարաբերութիւնների Պատմութիւնից 1918-1921 ԹԹ.*), Թբիլիսի, «Ջնանիէ», 1990, էջ 29)։

[65] *ՀԱԱ*, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 14 (*ռուս.*)։

[66] *Նոյն*, գ. 56, թ. 1-1 շրջ. (*ռուս.*)։

[67] *ՎԿՊՊԱ*, ֆ. 1861, ց. 2, գ. 26, թ. 38-40 (*ռուս.*)։

[68] *ՎԿՊՊԱ*, ֆ. 1861, ց. 2, գ. 28, թ. 28-30 շրջ. (*ռուս.*)։

[69] *Բրիտանական հրամանատարութիւնը պաշտօնապէս առաջարկել էր վրացական կողմին չէզոքացնել վիճելի Սոչիի չրջանը՝ տեղում ամբողջ իշխանութիւնը բնակչութեան կողմից ընտրուած ինքնակառավարման մարմիններին յանձնելով։ Չէզոքութեան պահպանման համար նախատեսւում էր չրջանում անգլիական զօրամաս տեղակայել* (Denikin-Judenich-Vrangel, էջ 163)։

[70] *ՎԿՊՊԱ*, ֆ. 1861, ց. 2, գ. 28, թ. 91-93 (*ռուս.*), նաեւ՝ *«Սոչիի Բնակիչների Հաւաքի Բանաձեւը Վրաստանին Միանալու Մասին, 20 Սեպտեմբեր 1918», Dokumenty*, էջ 390, վաւ. No. 195։ *Ռուսաստանի Սահմանադիր Ժողովը 1918 Յունուարի 5ին հռչակել էր Ռուսաստանի Դեմոկրատական Դաշնային Հանրապետութիւնը։ Բոլշեւիկների կառավարութիւնը լուծարելով Սահմանադիր Ժողովը ի չիք արեց այդ որոշումը։*

[71] *ՀԱԱ*, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 10 (*ռուս.*)։

[72] *ՀՀ ԱԳ նախարարին յղած նամակում նա ներկայանում էր որպէս Սոչիի շրջանի Պիչենկուս եւ Գագրա աւանների ներկայացուցիչ (ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 14).*

[73] *Նոյն, թ. 14*

[74] *ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 15.*

[75] Denikin-Judenich-Vrangel, էջ 100.

[76] *Կամաւորական բանակի հրամանատար, քաղաքացիական պատերազմի ընթացքում հակակոմունիստական «Սպիտակ Շարժման» ղեկավար Ռուսաստանի հարաւում.*

[77] *Վրաց պատմաբանները գրում են, թէ «Պատահաբար չէ, որ Դենիկինը ապաւինել էր նուաճած Սոչիի շրջանի Հայկական Ազգային Խորհրդի «ծառայութեանը», քանի որ նա որեւէ կերպ չէր կարող համաձնմամ կեղծաթուղթ ստանալ Աբխազիայի հայ բնակչութեան «պաշտօնական ներկայացուցիչներից», Gamakhariya, Gogiya, էջ 91. Իրօք, եթէ որպէս օրինակ ունենանք - մինչեւ վրացական զօրքերի հեռանալը Սոչիի շրջանից - հայերի ահաբեկման բազմաթիւ արձանագրուած դէպքերը, պարզ է դառնում Սուխումի շրջանի ՀԱՄի լուծիւնը.*

[78] Denikin-Judenich-Vrangel, էջ 100.

[79] Gamakhariya, Gogiya, էջ 90-91.

[80] Menteshashvili, էջ 24.

[81] *ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 1 շրջ.*

[82] *Նոյն, գ. 409, թ. 3, 4 (ռուս.).*

[83] *Նոյն,, թ. 5 (ռուս.).*

[84] *Նոյն, թ. 11-12 (ռուս).*

[85] *Նոյն, գ. 350, թ. 6.*

[86] *ՀԱԱ, Ֆ. 276, ց. 1, գ. 33, թ. 199, 200 (ռուս.).*

[87] *Նոյն, թ. 136-136 շրջ.*

[88] *ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 350, թ. 8.*

[89] *ՎԿՊԱ, Ֆ. 1861, ց. 2, գ. 95, թ. 2 (ռուս.). Փաստաթուղթը չիշատակւում է՝ ՀԱԱ, Ֆ. 276, ց, 1, գ, 155, թ. 2 (ռուս.).*

[90] *ՀԱԱ, Ֆ. 276, ց. 1, գ. 155, թ. 7 (ռուս.).*

[91] *ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 3.*

[92] *Նոյն, գ. 409, թ. 52 (ռուս.), Նաեւ՝ Նոյն թ. 53 (Հայ.).*

[93] *ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 350, թ. 9 (ռուս.).*

[94] *Նոյն, գ. 409, թ. 20, 21 (ռուս.).*

[95] Gamakhariya, Gogiya, էջ 91.

[96] *Հայկազ Ալւրցեան, «Արեւագիալի Հայկական Համայնքը», Հայրենի Քաւսրեք, Պէյրութ, Ազդակ օրաթերթի Հրատարակչութիւն, 2002, էջ 380.*

Յունական եւ հայկական եկեղեցու համար այս շաբաթը տօն է: Նրանք օգտագործում են հին եղանակը, ինչպէս մենք ենք գործածում այստեղ Շուէդիայում[12]:

Հայերը ցուցադրեցին նոյն գործողութիւնը (ոտնլուայի ծէսը - Ա.Բ.) կէսօրին[13], սակայն դա նման չէր այն տեսարանին, որ յոյները կատարեցին: Այն խորանի առջեւ իրականացրեց գլխաւոր քահանաներից մէկը (քանի որ նրանք այդտեղ բնակուող եպիսկոպոս չունեն), այլ ուրիշ միաբանութիւնների եպիսկոպոսներին ներկայ մէկը, որը հիմա եւ յետագայում այցելում է նրանց: Պատարագն առաջինն ընթերցեց մի քահանայ, հագին չուրջառ՝ արծաթէ ծիսական անկիւնակապով: Նա նստած էր գորգի վրայ[14], դիմացն աթոռ էր դրուած, որի վրայ պիտի նստէր նա, ում ոտքերը պէտք է լուան: Վերջինները հերթով տեղ զբաղեցրին աթոռի վրայ: Առաջինը լուացին տասներկու քահանաների ոտքերը, սակայն խոնարհութիւնն այստեղ շատ աւելի էր, քան յոյների մօտ, քանի որ այստեղ ողջ միաբանութիւնն ունէր այդ արժանիքը, ամենահարուստ վաճառականից մինչեւ ախոռի ամենացածր ծառան, որոնք կազմում են միաբանութեան գլխաւոր տարրը: Քահանաները լուացին եւ չորացրին իրենց ոտքերը՝ դրանք օծելով բարմ իւղով, որը, ինչպէս նրանք ասացին, պատրաստուած է ջահել կովի առաջին անգամ կթած կաթից: Նա, ում ոտքերը լուացել եւ օծել էին, համբուրում էր քահանայի ձեռքը եւ աշխուժօրէն հեռանում՝ տեղ տալով յաջորդին: Քահանայի երկու կողմում մարդկանց մեծ բազմութիւն էր՝ ծեր եւ երիտասարդ, որոնք երգում էին միեւնոյն տհաճ տոնով, ինչպէս յոյները, սակայն նրանք երգում էին գրական հայերէնով, որը նաեւ գործածւում է հասարակական երկրպագութեան ընթացքում եւ որը նոյնքան տարբեր է իրենց խօսած հայերէնից, որքան որ գրական յունարէնն է տարբերւում ժամանակակից յունարէնից[15]:

Հայերն ունէին մեծ եւ հրաշալի պատարագ ամսի 14ին, Զատկուայ նախօրէին, որին ես ներկայ գտնուեցի: Խորանից վար գտնուող աթոռի վրայ մի գրակալ է զետեղուած, որի վրայ դրուած են աւետարանիչների գրքերը՝ գրուած գրական հայերէն, վրան կարմիր եւ ոսկեգոյն կտորի կազմ քաշած: Գրակալի մի կողմում զետեղուած է մի ամրացուած աթոռ, որը զբաղեցնում է գլխաւոր քահանան (որը ղեկավարում է արարողութիւնը՝ եպիսկոպոսի փո-

խարէն)՝ հագած իր սեւ քահանայական զգեստը: Նրա ամէն կողմում նստում է մի-մի քահանայ՝ նոյն կերպ հագնուած: Վեց ամուսնացեալ քահանաներ իրար ետեւից գնում են դէպի գրակալը: Ոմանք կարդում են, իսկ ոմանք՝ գրքից ինչ-որ բան երգում: Նրանց հագին իրենց սեւ քահանայական զգեստն է, եւ երբ նրանք անցնում են իրենց պարտականութիւնների կատարմանը՝ մի գեղեցիկ շուրջառ են գցում իրենց վրայ: Ամբիոնի իւրաքանչիւր կողմում մի քահանայ է կանգնում՝ շուրջառով եւ խոյրով, ձեռքներին մոմեր պահած, իսկ նրանց կողքին կանգնած են սպիտակ ժամաշապիկ հագած եւ խաչեր բռնած տղաներ: Երբ այս շրջանն ամբողջացաւ, տասներկու վայելչատես երիտասարդ տղամարդիկ մտան նոյն տեղը, հագներին՝ մինչեւ գետին հասնող սպիտակ ժամաշապիկ, մէջքի եւ բեւեռի մասերում կարմիր խաչերով զարդարուած: Նրանք գլխաբաց էին, մինչեւ ականջները սափրուած, գլխի գագաթը ճաղատ, ինչպէս Հռոմի վանականներինը: Որքան որ կարողացայ իմանալ՝ նրանցից ոմանք հոգեւոր դասի աշակերտներ են, ոմանք՝ եկեղեցու ընդհանուր սպասաւորներ[16]: Նրանք, ովքեր բախտ են ունեցել լինել Երուսաղէմի շրջակայ սուրբ վայրերում՝ ձեռք են բերել «հաջի» անունը: Ընդորմէ էլ գեղեցկատես եւ բարեկազմ երիտասարդներ էին, եւ թւում էր, որ գտնւում են ոչ թէ եպիսկոպոսի, այլ գնդապետի ենթակայութեան ներքոյ: Նրանք, երբ առաջ գնացին, համբուրեցին փոխեպիսկոպոսի ձեռքը, նոյնը կատարեցին վերադարձին: Նրանցից իւրաքանչիւրը կարդաց կամ երգեց ինչ-որ բան գրքից, նոյն եղանակով, ինչ որ նախորդները, եւ նրանց իւրաքանչիւրի երգեցողութեան արանքում քահանաներից մէկը, որ նստած էր յատակին, վեր էր կենում եւ կրկնում որոշ բառեր երեք անգամ: Ես չհասկացայ, թէ դրանք ինչ բառեր են, բայց ինձ ասացին, որ «փառք» է: Նրանց երգն աւարտուեց. նրանցից մէկը, որ արդէն երգել էր, մի քանի աստիճան բարձրացաւ եւ կանգնեց խորանի առջեւ, որ փակուած էր վարագոյրով: Երբ նա միեւնոյն գրքից մի հատուած երգեց, խորանի առջեւ հնչեց երգ եւ գործիքային երաժշտութիւն: Վերջինս կազմուած էր փոքր երկաթեայ սրինգներից (նման մի տեսակ ծնծղաների), որ ագուցուած են իրար, եւ երկու հաստ արոյրէ թերթերից, որոնք ճիշտ ժամանակին իրար են բախում[17]: Դա թուրքական երաժշտութիւն է եւ երգի մէջ այնքան էլ վատ չի հնչում[18]: Որոշ ժամանակ անց փոքրիկ զանգերի ձայն լսուեց: Երբ երաժշտութիւնը միաժամանակ դադարեց, վարագոյրը, որ թաքցնում էր խորանը, բացուեց: Այնժամ տեսանելի եղաւ ծեր մեծարգոյ քահանան, կանգնած խորանից մի փոքր հեռու, գլխին՝ թանկարժէք քարերով զարդարուած ոսկեզօծ եպիսկոպոսական թագ[19]: Նրա երկու կողմում կանգնած էին սեւ հագուստով մէկական քահանայ, որոնք մինչ այդ բեմում էին, ձեռքներին՝ բուրվառ եւ մոմեր: Քահանան սկսեց երգել եւ օրհնաբանել, որին միաբանութիւնը պատասխանում էր երգով եւ երաժշտութեամբ: Մի փոքր անց հաղորդութիւն բերին խորանի առջեւ գտնուող մի փոքր խցից: Այն բերեց վերոյիշեալ աշակերտներից մէկը՝ պահած իր գլխին հաւասար եւ դրեց խորանին: Միեւնոյն ժամանակ եկաւ մէկ ուրիշը, որը քահանայից վերցրեց խոյրը: Վերջինս այժմ պէտք է օրհնի հաղորդութիւնը եւ ցոյց տայ միաբանութեանը:

Իւրաքանչիւրը վառեց այն բազմաթիւ մոմերը, որոնք նախապէս փողի դիմաց տալիս էին ամբողջ եկեղեցում: Երկուսը վառեցին միաճգամից, այնքան արագ, որքան արարողութիւնն էր առաջ ընթանում: Ամենամեծ մոմը, որ գտնւում էր խորանի առջեւ եւ մօտաւորապէս վեց մատնաչափ շրջագիծ ունէր, վառեցին զգացմունքով, երբ հաղորդութիւնն էր օրհնւում: Քահանաները երգում էին, եւ միաբանութիւնը ձայնակցում էր, մինչեւ որ արարողութիւնն աւարտուեց: Երկու կողմի քահանաներն ունէին ափսէներ՝ ամրացուած մի երկար գաւազանի, որոնք նրանք զրնգացնում էին, երբ պատարագի հերթական մասն էր կատարւում, նաեւ՝ երբ բուրվառակիր քահանան կատարում էր իր պարտականութիւնը՝ յաճախ ճօճելով եւ տարածելով իր անուշահոտութիւնը խորանի եւ երգչախմբի կողմը: Վարագոյրը մինչեւ վերջ բացուեց, որը նշանակում էր, որ ամէն ինչ վերջացաւ, եւ բոլորը պիտի տուն գնան: Հիմնական խորանի երկու կողմում կային մէկական փոքր խորան, որոնց վրայ ոչ մի արարողութիւն չկատարուեց, սակայն եկեղեցուց դուրս գտնուող գեղեցիկ մատուռում ուրիշ քահանաներ պատարագ էին մատուցում նրանց համար, որոնց համար տեղ չէր եղել եկեղեցում[20]:

Ամսի 15ին, Զատկուայ օրը, հայերի եւ յոյների տօնը սկսուեց: Ուշագրաւ է, թէ ինչ եռանդով էին վերջինները կատարում այդ տօնը, քանի որ այն վկայում է, թէ որքան է այս ժողովուրդը պահում նախկինում ունեցած իր հակումը դէպի սանձարձակ զուարճութիւնները՝ տօների ժամանակ... Նրանք ազատ են՝ իրենց տներում եւ փողոցներում հարբելու, կռուելու, պարելու եւ անելու ամէնը, ինչ որ իրենց սիրտն է փափագում.... [Ի տարբերութիւն յոյների] հայերն աւելի հանդարտ եւ իմաստուն ժողովուրդ են եւ իրենց տօները չեն նշում այսպիսի ծայրայեղութիւններով: Ես երբեք չտեսայ նրանց պարելիս, հարբելիս կամ փողոցում աղմկելիս, սակայն եթէ նրանք ցանկանում են զուարճանալ՝ գնում են որեւէ տուն կամ խան, որտեղ հայ սպասաւորները հաւաքւում են եւ վայելում անմեղ զուարճանքներ, կամ որեւէ խումբ հեծելավարժ է, որը նրանց հաճոյք է պատճառում եւ ցոյց է տալիս, որ նրանք իրենց նախնիներից ժառանգել են յաւ հեծելավարութեան արուեստը[21]:

Մենք չենք ակնկալում թուրքական ճարտարապետութեան մէջ գտնել հետքերն այն փառահեղութեան, որ տակաւին երեւում են հին եգիպտացիների, յոյների կամ արաբների մօտ: Թուրքը չգիտի, թէ ինչպէս է պէտք քարը յարմար կերպով գետեղել. շատ աւելի քիչ է նրա՝ պատ չինելու կարողութիւնը: Հայերն են նրանց ճարտարապետները: Սրանք բնական հակում ունեն դէպի այս արուեստը: Եւ օժտուած այն բոլորով, ինչ որ տեսել եմ Արեւելքում իրենց ուղեւորութիւնների ընթացքում՝ կառուցում են այնքան յաւ, որքան որ կարելի է ակնկալել մի ժողովրդից, որն իր ողջ իմացութեան համար կարծես թէ պարտական է բնութեանը: Եթէ այս ժողովուրդը կարողանայ Եւրոպա ուղեւորուել եւ այնտեղ զարգացնել իր կարողութիւնները, մենք գուցէ Արեւմուտքում ունենանք բոլոր օգտակար կառոյցների մէջ վարպետներ, որոնք հաւասարաբար մրցեն հների հետ եւ անցնեն նորերից շատերին[22]:

Այդ տեղը (Հայֆաև - Ա.Բ.) մի քանի տարի առաջ հիմիկուանից շատ աւելի վատ վիճակում էր, սակայն մի կոստանդնուպոլսեցի հայ[23], ինձ անյայտ պատճառներով, իրաւունք ստացաւ բարելաւել շինութիւնները, որը նա կատարեց՝ վերաշինելով նաւակայանը եւ ափին կանգնեցնելով մի քանի քարէ կառոյց ու շտեմարան՝ շատ աւելի նախընտրելի այն ողորմելի պատկերից, որ եղել է նախկինում: Քաղաքի միւս տները խղճուկ խրճիթներ են, որտեղ բնակւում են մեծ մասամբ թուրքեր եւ արաբներ՝ որոշ յոյների եւ հայերի հետ միասին, վերջիններիս վանականները այստեղ իջեւանատներ ունեն ուխտաւորներին ընդունելու համար[24]:

[Երուսաղէմում] այն տեղը, որտեղ նախկինում կանգնած է եղել [քահանայապետ] Անանայի պալատը եւ որտեղ Քրիստոսին տանջել են, պատկանում է հայերին, որոնք մի փոքր եկեղեցի ունեն այնտեղ[25]: ...Մէկ այլ հայկական եկեղեցի կառուցուել է այն տեղում, որտեղ, ասում են, Քրիստոսին հարցաքննել է Կայափասը, առաջինից ոչ շատ հեռու, սակայն քաղաքի դարպասներից դուրս[26]: Երկու եկեղեցիներում էլ կայ գեղեցիկ զարդարուած առանձին փոքր սենեակ՝ ճիշտ այդ դէպքի կատարման վայրի վրայ եւ հարցաքննութեան տեսարանի պատկերով հանդերձ:

Ամսի 9ի առաւօտեան ես այցելեցի հայերի պատրիարքին[27], որի հետ ծանօթացել էի Զմիւռնիայում[28]: Նա նստում է այդ ժողովրդի վանքում, որն ամենամեծն է Երուսաղէմում, աւելի մեծ, քան լատիններինը, եւ հարուստը՝ նրանցից յետոյ[29]: Վանականների սենեակներից բացի նա ունի նաեւ հազարից աւելի սենեակ ուխտաւորների համար: Հարուստ հայ ժողովուրդը, որն Արեւելքի բոլոր ժողովուրդներից ամենից շատ է հակուած դէպի աստուածավախութիւնը, եթէ ոչ սնահաւատութիւնը, ուխտագնացութիւնների միջոցով Երուսաղէմում իրենց այս հոգեւոր բնակութիւնն այնքան պատուաւոր դիրքի է հասել: Տարի չի անցնում, որ հազարից աւելի [հայ] ուխտաւորներ այստեղ չգան Հայաստանից, Պարսկաստանից եւ Թուրքիայից, որոնք Երուսաղէմից չեն հեռանում՝ առանց նշանակալից նուիրատուութիւն կատարելու: Վանքում նրանց ունեցած մատուռը Երուսաղէմում եղած անկախ մատուռների մէջ ամենագեղեցիկն է: Այն ամբողջովին զարդարուած է շքեղ վարագոյրներով, գեղեցիկ նկարներով եւ անթիւ բանակութեամբ արծաթէ ջահերով, մի մասը ոսկէզօծուած եւ գրեթէ բոլորն էլ պատրաստուած ակնառու վարպետների ձեռքով[30]:

[Նկարագրում է Երուսաղէմի մի յունական եկեղեցի, որին] «կցուած էր մի սրահ, որի մի մասը պատկանում էր հայերին, բաղկացած մի տարածքից, որ պարունակում էր եօթ սիւն՝ իրենց եկեղեցու համար»[31]:

[Ծննդեան տօներին եպիսկոպոսից սուրբ կրակը վերցնելու արարողութեան առթիւ] Որոշ հարուստ վաճառականներ, որոնց մեծ մասը հայեր կամ ասորիներ (քանի որ յոյները մեծ մասամբ աղքատ են) իրենց առաջարկում են այդ նպատակի համար: Երեք տարի առաջ մի պարսկաստանցի հայ առաջին կրակի համար 30 հազար ցեխին[32] վճարեց, մի գումար, որ երբեւէ չի վճարուել դելփեան պատգամաբերի պատասխանի համար[33]:

...Ամսի 18ին, երբ ես պիտի հրաժեշտ տայի հայոց պատրիարքին, նա ինձ առաջարկեց ուղեկցել իր վանքում գտնուող Սուրբ Յակոբեան եկեղեցին՝ տեսնելու համար նրա սպասքը: Դրանք տեսարժան են, լինելով ամենահարուստը եւ ամենաարժէքաւորը, որով Արեւելքի ցանկացած եկեղեցի կարող է պարծենալ, ու թերեւս հաւասար է Եւրոպայի ամենամեծ եւ ամենահարուստ քրիստոնէական եկեղեցիների կարասիներին: ...Ոմանք մաքուր ոսկուց են, ոմանք՝ ոսկեջրած արծաթից, եւ զարդարուած են թանկարժէք քարերով: Քահանաների հանդերձանքն ամբողջովին կարուած է Հնդկաստանից բերուած ամենահրաշալի նիւթերից, եւ նրանց մեծ մասը զարդարուած է թանկարժէք քարերով: Եկեղեցու բոլոր ջահերն արծաթից են, լաւ մշակուած եւ կանոնաւոր շարքով կախուած, եւ բաւական թանկ արժեն: Բոլոր այդ սպասքեղէնն այդ օրը դրել էին մեծ սեղանին՝ Սուրբ Յակոբի օրն այն հասարակութեանն ի ցոյց դնելու համար: Լատինների կարասիները սքանչելի են եւ թերեւս աւելի լաւ ճաշակով են պատրաստուած, սակայն իրենք նոյնպէս խոստովանում են, որ հայերինն աւելի հարուստ է[34]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Fredrick Hasselquist, *Iter Palaestinum Eller Resa Til Helige Landet, Förrättad Ifrån år 1749 Til 1752, Med Beskrifningar, Rön, Anmärkningar, öfver De Märkvärdigaste Naturalier*, ed. by C. Linnæus, Stockholm: Trykt på L. Salvii kåastnad, 1757: Ռուս գրքի լուսատիպ հրատարակութիւնը տպագրուել է Ստոկհոլմում, 1969ին:

[2] Նրանց մասին տե՛ս մեր՝ *Հայաստան-Սկանդինաւիա. Պատմամշակութային Առնչութիւններ* գրքում, Երեւան, 2003, էջ 67-71:

[3] Հասելքուիսթից յետոյ շուէդներից երուսաղէմ այցելել է Լարս Քիմբլինը, որը 1770ին Ստոկհոլմում հրատարակել է *Պաղեստինի կամ Յուդայի երկրի Աշխարհագրական Նկարագրութիւնը* շուէդերէն գիրքը:

[4] Fredrick Hasselquist, *Voyages And Travels In the Levant In The Years 1949, 50, 51, 52. Containing Observations In Natural History, Physics, Agriculture, And Commerce; Particularly On The Holy Land, And The Natural History Of The Scriptures*, ed. by Charles Linnæus, London: Printed for L. Davis and C. Reymers, 1766, էջ 11: Ուփսալայի Համալսարանի գրադարանում մենք ծանօթացանք նաեւ այս անգլերէն թարգմանութեան ձեռագրին, որ պահում է Հասելքուիսթի ֆոնդում (թիւ X:392a): Ռուս թարգմանութիւնը որոշ չափով ծանօթ է եղել հայ բանասէրներին եւ պատմաբաններին, արտացոլուել Արմենակ Սալմաստեանի *Հայկական Մատենագիտութիւն* հատորի մէջ (Երեւան, 1969, էջ 251):

[5] Տեղեկութիւններ չկան, որ Հասելքուիսթը տիրապետած լինի հայերէնին, սակայն դա բացառուած չէ: Նրա յիշատակագրքում իր հայ ծանօթը մակագրութիւն է թողել հայերէն, նա հինգ ամիս ապրել է հայերով բնակեցուած Զմիւռնիայում, ուստիեւ միանգամայն հնարաւոր է, որ նա որոշ չափով ծանօթ եղած լինէր հայերէնին: Այդ ժամանակաշրջանում Զմիւռնիայում եղել է շուէդական հիւպատոսարան, որի գլխաւոր հիւպատոս Անդրէաս Ռիտելիուսը (Rydelius) օժանդակել է Հասելքուիսթին (տե՛ս Hasselquist, *Voyages*, էջ IV): Զմիւռնիայում եղած ժամանակ շուէդ ճանապարհորդը բերեւս առիթ ունեցած լինի ծանօթանալ տեղի շուէդական հիւպատոսարանի առաջին թարգման հայազգի Ժան Մուրաջայի (Յովհաննէս Մուրատ-

ճայեան, 1721-1787) հետ: Վերջինս եղել է շուէդական ականաւոր դիտանագէտ եւ պատմաբան Իգնատիուս Մուրաջա դ'Օսսոնի հայրը եւ շուէդական դիտանագէտ եւ արեւելագէտ Աբրահամ Կոնստանտին դ'Օսսոնի մեծ հայրը: Ժան Մուրաջան էլ կարող էր Հասելքուիսթին որոշ չափով հայերէն սովորեցնել: Չի բացառուում նաեւ, որ Հասելքուիսթն առիթ ունեցած լինէր ծանօթանալ 1721ից մինչեւ մահը Պոլսի շուէդական հիւպատոսարանում որպէս թարգման պաշտօնավարած ականաւոր թարգմանիչ Յակոբ Ճամճիօղլուի (1695-1775) հետ:

[6] Միջնադարում աստուածաշնչեան երկիրը շատ եւրոպացի ճանապարհորդների է գրաւել, որոնք յետագայում հրատարակել են ուղեգրութիւններ եւ ճանաչողական գրքեր: Դրանցից յատկապէս արժէքաւոր են Hadrianus Relandus, *Palaestina* լատիներէն երկհատոր աշխատութիւնը (հրատարակուած 1714ին), օժտուած մի շարք բարտէզներով եւ ֆրանցիսկեան բահանայի հեղինակած *Lamentavel Relacão* պորտուգալերէն գրքոյկը (Լիսաբոն, 1756), որտեղ նկարագրուած է Երուսաղէմում բնակուող արաբների ճնշումը տեղի քրիստոնեաների հանդէպ:

[7] Հասելքուիսթը միակը չի եղել Լինէյի ուսանողների մէջ, որ չի վերադարձել գիտական ճանապարհորդութիւնից: Իրենց մահկանացուն օտարութեան մէջ են կնքել նաեւ Լինէյի ուսանողներ, երիտասարդ բուսաբաններ Օսբէկը եւ Լօէֆլինգը, որոնք ճանապարհորդութեան են մեկնել Հասելքուիսթից մէկ տարի անց՝ 1750ին (առաջինը՝ Չինաստան, երկրորդը՝ Իսպանիա, ապա՝ Հարաւային Ամերիկա): Ի դէպ, Վենեսուելայում վախճանուած 25ամեայ Պետրուս Լօէֆլինգի (Petrus Löefling, 1729-1756) ճամփորդական նորերը նաս յետմահու, 1758ին հրատարակել է Լինէյը (տես Yevgenij Grigorevich Bobrov, *Karl Linej*, Լենինգրադ, 1970, էջ 171, ռուսերէն): Ումէօյի Համալսարանի շրջակայ միջավայրի պատմութեան պրոֆեսոր Սվերքէր Սէօրլինը Լինէյի մասին գրած իր ճանաչողական յօդուածում այսպէս է գնահատել շուէդ գիտնականի երիտասարդ ճանապարհորդ ուսանողներին. «*Ան պետահետազօտական ծրագիրը եւ ժողովրդական տնտեսութեան նպաստող նախագիծը, որ իրականացրել են Լինէյը եւ նրա ճանապարհորդ առաքեալները՝ մեծ մասամբ 25ամեայ երիտասարդներ, եղել է ամէնից երկարաժամկէտ, հետեւողական ու անգիջում ծրագիրը Շուէդիայում: 1746ին յաջորդած երեք տասնամեակի ընթացքում...մինչեւ 1770ը, Լինէյի աշակերտները առաջատար էին ոչ միայն գիտական ճամփորդութիւնների մէջ, այլեւ բուսական մեծ բաժին ունէին նրա կատարած բոլոր հետազօտութիւնների մէջ: Լինէյի հաւաքագրած ընդամէնը քառնամեայ երիտասարդներն իրենց լաւագոյն տարիները նուիրաբերում էին այն գաղափարին, որ իրենք ոչ միայն պէտք է գիտական սխրանք իրագործեն, այլեւ հնարաւորութիւն ունենան գոյատեւելու դժուարագոյն պայմաններում, ինչը յաճախ չափազանց բարդ խնդիր էր: Նրանցից մի քանիսը մահացել են, ոմանք կորցրել են ողջ ունեցուածքը եւ ձախողուել, իսկ առնուազն մէկը խենթացարուել է: Լինէյի հետաքրքրութիւնը տարէցտարի մարում էր, հաւանաբար այն պատճառով, որ չնայած գործադրուած ջանքերին, արդիւնքը հազուադէպ էր համապատասխանում ծախսուած միջոցներին եւ մարդկային կորուստներին*» (Sverker Sörlin, "Naturens hämnd på Linné," *Månads Journalen*, Ապրիլ, համար 4, 1999, էջ 59):

[8] Տես ծանօթ 4:

[9] Hasselquist, *Voyages*, էջ 33:

[10] Նոյն, էջ 165:

[11] Ուփսալայի Համալսարանի Գրադարան, Ձեռագրերի Բաժին, Ֆրեդրիք Հասելքուիսթի արխիւ, վաւերագիր Y62:

[12] Hasselquist, *Voyages*, էջ 42:

[13] Հասելքուիսթը պատարագին ներկայ է եղել Զմիւռնիայի մեծագոյն հայկական եկեղեցում՝ Ս. Ստեփանոսում (որը նախապէս կոչուել է Ս. Թադէոս-Բարթուղիմէոս): Այս վանքի մասին մանրամասն տե՛ս՝ Յակոբ վ. Քոսեան, *Հայք Ի Զմիւռնիա եւ Շրջակայս*, հ. Ա., Վիեննա, 1899, էջ 45-77: Այժմ վանքը գործածում են որպէս պահեստ (տե՛ս՝ *Հայրենիքի Ձայն*, Երեւան, 7.11.1990):

[14] Հասելքուիսթի վկայութիւնը, որ ոտնլուայի արարողութիւնը կատարող քահանան նստած է եղել գորգի վրայ, անսովոր է թւում: Թերեւս պէտք է լինի «ծնկի էր եկած»:

[15] Hasselquist, *Voyages*, էջ 45-46:

[16] Ակնարկուած երիտասարդները կարող էին լինել ինչպէս դպիրներ կամ մոնթեր, այնպէս էլ աշխարհիկ մարդիկ, որոնք կարդացել են Դանիէլի մարգարէութիւնից՝ Ճրագալոյցի պատարագին ընթերցուող հատուածները:

[17] Հասելքուիսթի հաղորդած տեղեկութիւնը՝ հայ եկեղեցում երաժշտական գործիքների գործածութեան վերաբերեալ՝ արժանի է ուշադրութեան, քանի որ ցարդ յայտնի էր, որ հայ եկեղեցում գործիքային երաժշտութիւն սկսել են օգտագործել ԺԹ. դարից: Սակայն երաժշտական գործիքների հարցը մնում է չպարզուած: Սոյն հատուածում ակնյայտ չփոթութիւն է առկայ. իրականում միմեանց բախտող երկու հաստ արոյրէ թերթերն են նման ծնծղաների, այլ ոչ երկաթեայ սրինգները, իսկ այդ ծնծղաներն էլ պիտի որ լինեն ոչ թէ երաժշտական գործիք, այլ հայոց պատարագի ժամանակ օգտագործուող բշոցը, որը հեղինակը եւս մէկ անգամ յիշատակել է այս նոյն հատուածում՝ որպէս երկար գաւազանին ամրացուած ափսէներ:

[18] Այն, որ հայկական պատարագի մէջ եւրոպացին լսել է բուրքական երաժշտութիւն՝ չպէտք է տարօրինակ թուայ: Կոմիտասի վկայութեամբ՝ Օսմանեան կայսրութեան քաղաքների հայկական եկեղեցիներում հայ հոգեւոր երաժշտութեան մէջ մեծապէս մուտք էին գործել բուրքական երաժշտութեան տարրեր. «*Պատարագի երգերն գրեթէ անխտիր օտարամուտ եւ անճաշակ եղանակներ են. Տաճկաստանում՝ տաճիկ-արաբ-յոյն, Պարսկաստանում՝ պարսիկ-արաբ...*» (Կոմիտաս, *Նամակներ*, Երեւան, 2000, էջ 61): Համեմատութեան համար արժէ մէջբերել Հասելքուիսթից մի քանի տասնամեակ անց Էջմիածնում հայ հոգեւոր երաժշտութիւն ունկնդրած մէկ այլ եւրոպացի ճանապարհորդի կարծիքը, որն ապացուցում է, թէ բուն հայ միջավայրում հայ հոգեւոր երաժշտութիւնը համեմատաբար անխաթար է մնացել. «*Քահանաները հագնում են սպիտակ շապիկ եւ արեւածագին սկսում են լսուել նրանց ռամկական մեղեդիները. Եթէ Իտալիայի կախարդիչ մեղեդիները չունեն, յամենայն դէպս նրանց չափ վեհ ու յուզիչ են. Մի եւրոպացի առանց յուզմունքի չի կարող լսել նրանց. լինի դա հոգու խորքը թափանցող պարզութեան պատճառով կամ իր հայրենիքը յիշելուն համար եւ կամ մանկութեան առաջին տպաւորութիւնների վերապրումի հետեւանքով, քաղցր եւ ուժեղ տպաւորութիւններ, մանաւանդ հեռու երկրներում*» («Ուղեգրութիւններ Պիէր Ամեդէ Ժոբէրի (1805-1806)», Յովհաննէս Յակոբեան, *Աղբիւրներ Հայաստանի եւ Անդրկովկասի Պատմութեան. Ուղեգրութիւններ*, հ. Զ, Երեւան, Պետհրատ, 1934, էջ 203):

[19] Բացառում է, որ կուսակրօն քահանան կրէր եպիսկոպոսական բաճ: Ամենայն հաւանականութեամբ Հասելքուիսթը չի հասկացել, որ տեսել է հենց եպիսկոպոսին եւ կամ քահանայի գլխի խոյրն է սխալմամբ անուանել եպիսկոպոսական բաճ:

[20] Հասելքուիսթից առաջ Զմիւռնիայի Սուրբ Ստեփանոս հայկական եկեղեցու վերաբերեալ չուէդ ճանապարհորդ Միքայէլ Էնեմանը գրել է հետեւեալը. «*Նրանք այստեղ*

կառուցել են մի մեծ եւ գեղեցիկ եկեղեցի եւ բարելաւել են այն մեծ հրդեհից յետոյ (իրականում այս եկեղեցին վերակառուցուել է 1689ին՝ 1688ի երկրաշարժի աւերածութիւնից յետոյ - Ա.Բ.), դրա յատակը ծածկուած է փոքրիկ գեղեցիկ թուրքական գորգիկներով, այն նպատակով, որ հայերը, թուրքական սովորութեան համաձայն, կօշիկներ են հետներն առնում եւ դրանցով մտնում իրենց եկեղեցին, իրենց պահում են թուրքերի նման, այնպէս որ չուտով գնալով աւելի կը նմանուէին թուրքերին, եթէ եկեղեցում չունենային խորան եւ պատկերներ։ Եկեղեցին կրում է սուրբ Ստեփանոսի անունը, որի պատերին նկարներ են կախուած՝ խորանից վեր կամ աջ։ Եկեղեցու դռան վերեւում նոյնպէս սուրբ Ստեփանոսի եւ Երրորդութեան պատկերներն են։ Առաջինը Հօր նկարն է՝ ծերունու տեսքով եւ եռածայր պապական թագով, Որդին՝ խաչով եւ Սուրբ Հոգին՝ աղաւնու տեսքով։ Ինչ վերաբերում է եկեղեցական արարողութեանը, այն իրականացւում է լիակատար ազատութեամբ։ Նրանք այստեղ ունեն ութ քահանայ, որոնցից ամենատարէցը յուծում է նրանց մէջ հնարաւոր տարաձայնութիւնները ու վէճերը։ Նրանք առաջնորդւում են թուրքական օրէնքներով, միայն թէ, իմ կարծիքով, նրանք դրան քիչ են դիմում իրենց հարցերով։ ...Աստծոյ խօսքը, գրքերը, որոնցով նրանք կատարում են պատարագը, տպագրուած են Վենետիկում եւ Մարսէյում եւ այլ պապական վայրերում։ Այդպիսով կարելի է մտածել (եւ ես ինքս էլ նկատել եմ), թէ որքան սերտ են նրանք կապուած այդ կաթոլիկներին։ Ամենատարէց քահանայի անունն Իսահակ է, միջին տարիքի մի մարդ, խաղաղ, պարզ, միամիտ եւ կենսուրախ, այդպէս միւսներն էլ մօտեցան ինձ, առնուազն իմ հանդէպ ամենայն սիրալիրութիւն ցուցաբերեցին, ինչպէս եկեղեցում, այնպէս էլ տանը» (տես՝ Michael Eneman, *Resa i Orienten 1711–1712. Utgivfen af K. U. Nylander. Förra Delen. Mindre Asien Och Egyptien. Senare Delen. Sinai Halfön Och Palestina*, Ուփսալա, 1889, էջ 43-45):

[21] Hasselquist, *Voyages*, էջ 46-51:

[22] Նոյն, էջ 101: Այս հատուածն արեւմտահայերէն թարգմանութեամբ մէջ է բերուած՝ Արշակ Ալպօյաճեանի, *Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի Նահանգը եւ Հայերը* գրքում, Գահիրէ, տպարան «Նոր Աստղ», 1960, էջ 50-51:

[23] Նկատի ունի հոգեւոր եւ հասարակական եռանդուն գործիչ, 1715-1749ին Երուսաղէմի Հայոց պատրիարք Գրիգոր Զ. Շիրուանցուն (Շղթայակիր, 1670-1749), որը կառուցողական մեծ գործունէութիւն է իրականացրել Երուսաղէմում եւ շրջակայ բնակավայրերում:

[24] Hasselquist, *Voyages*, էջ 118:

[25] Նկատի ունի Երուսաղէմի հայկական Ս. Հրեշտակապետաց վանքը, որը գտնւում է բաղաքի հարաւային կողմում՝ պարսպի մօտ եւ հայոց բաղային եկեղեցին է:

[26] Հաւանաբար նկատի ունի Երուսաղէմի հայոց Ս. Փրկչի վանքը:

[27] Հասելքուիսթի՝ Երուսաղէմ այցելած տարին Հայոց պատրիարքը եղել է ականաւոր հոգեւոր-մշակութային գործիչ, գրող Յակոբ Բ. Նալեան Զմմառացին (1701-1764), որը Երուսաղէմում գործել է 1749-1752ին, այնուհետեւ դարձել Պոլսի պատրիարք:

[28] Այդ ծանօթութեան մասին Հասելքուիսթը վկայել է 1749ի Դեկտեմբերի 16ին Զմիւռնիայից Լինէյին գրած նամակում. *«Ես նաեւ լսել եմ, որ այստեղ կարճ ժամանակում լաւ հնարաւորութիւն կը լինի Հայոց պատրիարքի ընկերակցութեամբ մեկնել Երուսաղէմ, որը ներկայումս այստեղ է»* (Hasselquist, *Voyages*, էջ 407-408):

[29] Նկատի ունի Երուսաղէմի գլխաւոր Ս. Յակոբի վանքը, որը գտնւում է Սիոն լեռան գագաթին: Հասելքուիսթի այցելած հայկական վայրերը (ու նաեւ հայոց պատրիարքին տուած այցելութիւնը) մշտապէս կրկնել են Երուսաղէմ ճանապարհորդած եւրոպացիները: Յիշենք մէկ օրինակ. Հասելքուիսթից մի քանի տասնամեակ անց Ֆրանսիացի նշանաւոր գրող Շատոբրիանը «Ուխտագնացութիւն Փարիզից Երուսաղէմ» գրուածքում կատարել է հետեւեալ նշումները. «*Ձիթենիի տունը, որը գտնւում է Դաւթի դարպասների մօտ, Սիոն լեռան ստորոտը, այս տան աւերակների վրայ հիմա կառուցուած է մի եկեղեցի, որը պատկանում է հայերին: ...Սուրբ Յակոբ Մեծի նահատակութեան վայրը, որն այժմ հայկական վանք է՝ իր չքեղ ու հարուստ եկեղեցիով: Հիմա գնում եմ հայկական պատրիարքին հանդիպելու*» (Շատոբրիան, «Ուխտագնացութիւն Փարիզից Երուսաղէմ», ֆրանս. թարգմանեց Ռուբէն Խաչատրեանը, *Լուսաւորիչ*, 6.01.1993):

[30] Hasselquist, *Voyages*, էջ 123-124:

[31] Նոյն, էջ 135:

[32] Ցեխին (անգլերէն՝ sequin), ոսկեդրամ, շրջանառութեան մէջ է եղել Իտալիայում եւ Օսմանեան կայսրութիւնում:

[33] Hasselquist, *Voyages*, էջ 138:

[34] Նոյն, էջ 139-140:

THE SWEDISH TRAVELLER FREDRICK HASSELQUIST ABOUT THE ARMENIANS
(Summary)

ARTSVI BAKHCHINIAN

There are interesting observations and information about the Armenians in the traveling notes of the Swedish botanist and physician Frederick Hasselquist (1722-1752), *Iter Palaestinum*. He traveled in Ottoman Turkey, Palestine, and Egypt and described the peoples of these countries, including Armenians. He attended an Armenian church service in Smyrna and gave some information about the Armenians in Jerusalem and Jaffa.

Hasselquist appreciated the skills of the Armenians: "The Armenians are the architects of the Turks. By their natural inclination for the arts, assisted by what they have seen on their travels in the East, build as well as can be expected from a people who owe all their knowledge, in a manner, to nature. If these people were to travel to Europe, and there cultivate their parts, we might see in the East masters in every useful science, who might probably vie with the ancients and surpass many of the moderns."

«ԹՂԹԵԱՅ ՁԱՒԱԿՆԵՐՈՒ ՀԱՅՐ»Ը՝ ԹԷՈԴԻԿ

ՎԱՀԷ ՂԱՋԱՐԵԱՆ

Թէոդիկ (1873-1928), որուն անունով Թէոդորոս Լապճինճեան՝ հայ իրականութեան մէջ իր հոչակը ամէն բանէ վեր կը պարտի իր «Թղթեայ զաւակներուն» Ամէնուն Տարեցոյցը տարեգիրքերուն, եւ պիտի չարունակէ ամէն բանէ վեր յիշատակուիլ անոնցմով: Փոքրիկ հանրագիտարաններ՝ բացուած ժամանակի անցքերուն եւ անձերուն վրայ, Թէոդիկի տարեգիրքերը կը ծառայեն իրենց սկզբնաղբիւր, ուր խմբագիրին բծախնդրութիւնը՝ հանդէպ հայոց լեզուին եւ իրողութիւններու ճշդրտութեան, կը մնայ ամէն կասկածէ հեռու:

Անոր միտքի ծնունդներն են այլ գործեր ալ, ոմանք անտիպ: Իր Ծուչարժան Ապրիլ Տասնմէկին ժողովածուն (Պոլիս, 1919), որ 1985ին «Ծուչարժան Ապրիլ (11) Քառընդօրսիկ» խորագրով պիտի վերահրատարակուէր Պէյրութ, կը մնայ առաջին լուրջ փորձը սեղմ պարունակի մը մէջ ներկայացնելու հայ միտքին եւ հոգիին կորուստը ցեղասպանութեան տարիներուն:

Հոս ներկայացուող նամակները քաղուած են տրցակէ մը, որ մեր տրամադրութեան ներքեւ դրած է բարեկամ մը: Տրցակէն լոյսի բարիքին արժանանալու համար ուրիշ առիթի մը սպասող նամակներն ալ Թէոդիկ ուղղած է Մեսրոպ Եպսկ. Նշանեանի, բացառութեամբ երկու նամակներու, որոնց հասցէատէրն է կարապետ Գաբրիկեան:

Մեսրոպ Նշանեանի (1872-1944) պատրիարք ընտրուելէ (1939) առաջ ունեցած գործունէութեան յատկանշական երեսները կ՚ընդգրկեն՝ վեհապետեան Պատրիարքի կարգադրութեամբ 1908ին պատուոյ ուղեկցութիւնը տասներկուամեայ աքսորէն Պոլիս վերադարձող Մատթէոս Իզմիրլեան Պատրիարքին, ապա մինչեւ 1910ի վերջերը էջմիածնի մէջ պաշտօնավարութիւնը իբրեւ գաւազանակիր եւ անձնական քարտուղար Իզմիրլեան կաթողիկոսի (Թէոդիկ նամակի մը մէջ արդէն կ՚ակնարկէ թէ Նշանեան մտերիմն էր Իզմիրլեանի), իսկ Թէոդիկի հետ նամակցած տարիներուն՝ տեսչութիւնը Երուսաղէմի Պատրիարքութեան տպարանին, ձեռագրաց մատենադարանին եւ դպրոցներուն, ինչպէս նաեւ լուսարարապետութիւնը՝ 1922էն մինչեւ պատրիարքացում:

Նշանեանի աշխատասիրութիւններէն են՝ Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Դարանաղեցւոյ գիրքը, հրատարակուած 1915ին, որուն կ՚ակնարկէ Թէոդիկ, Երեմիա Չելեպի Քէօմիւրճեանի Օրագրութիւնը, Երուսաղէմի Ձեռագիր Աստուածաչունչերու Ցուցակը, «Դիւան Ս. Յակոբայ» ժողովածուները, զանազան թարգմանութիւններ, եւն.:

Թէոդիկի նամակները կերպով մը կ՚ուրուագծեն իր կեանքին գլխաւոր երեսները՝ բաւ էութեան վերերեկոյ օրուան հացը իրենց հայրենապահ-հայրենակալ վաստակողը, Պոլսոյ հայիվարին իր մարդարտաշար ձեռագրով կենդանու-

թիւն տուող խմբագիրը, բանահաւաքը, բառարանագիրը, աքսորականը, ցեղասպանութենէն վերապրողը, հայ որբերու խնամատարը, օրագահիկի բեռին տակ ընկճուած մտաւորականը, կեանքի ընկերուհին կորսնցուցած վշտահարը, գրասէրն ու՝ իր բնորոշումով՝ գրամոլը, եւ դեռ ուրիշ բաներ։

Բծախնդիր խմբագիրը իր կերպարանքը կը տարածէ մէկէ աւելի առիթներով։ Օրինակ՝ երբ իր նամակընկալին կ՚առաջարկէ աղրիւրի մը յիշատակութիւնը կատարել սաղմոսահայ արուեստին անդրադարձող իր յօդուածին մէջ, կամ կ՚ըսէ թէ Օրմանեան Սրբազանի անտիպ նամակը արժանի չի համարեր տպագրութեան, քանի որ գրական կամ ազգային մասնաւոր արժէք չի ներկայացներ ան (14 Ապրիլ 1926 թուակիրը)։

Անցեալին հրատարակութեան տուած ենք Թէոդիկէն վահան Թէքէեանին ուղղեալ նամակներ, որոնք իրենց ընդհանուր ոգիով սերտ աղերս մը կը յայտնաբերեն Քորֆուէն եւ Նիկոսիայէն Մեսրոպ Եպիսկոպոսին առաքուած նամակներուն հետ («Նամակներ՝ Բաշալեանէն, Թէոդիկէն, Կամսարականէն եւ Զինթիէ-Սարաֆեան», Շիրակ ամսագիր, Պէյրութ, Նոյեմբեր 1986, էջ 70-78)։ Հոն եւս կը տեսնենք այն տառապալի եւ դառն կեանքը, որ բաժին էր ինկած Թէոդիկի՝ քեմալական չարժման հետեւանքով աստանդական դառնալէն ետք։

Թէոդիկի քրոջորդի Շահան Շահնուր իր «Թէոդիկ» գրութեան մէջ (Միրոհ Միրոհ, մատենաշար «Ցառաջ», 1985, Փարիզ, էջ 61-66) կը հաստատէ. «Թէոդիկ ամէն բանէ առաջ խոհանոց մըն է», այդպիսով հետաքրքրական աղերս մը յուցաբերելով Թէոդիկէն նամակի մը հետ, ուր ան քայլ մը աւելի առաջ անցնելով իր անձը կը ներկայացնէ իրրեւ իր խոհանոցին մատակարար, խոհարար, սպասեակ, եւն.։

Շահնուր կ՚աւելցնէ. «...չունինք սորվելիք իր գրականութենէն, իր լեզուէն, իր արուեստի ըմբռնումներէն – բայց անձէն, այո՛, եւ մեծ բան։ Ան կատարեալ ու անվերապահ նուիրումի խորհրդանշանն է»։

Իրապէս ալ Թէոդիկի նամակները կը հաստատեն իր նուիրումը եւ աւելին։ Անոնք մեզի կը բերեն բաղադրատարրերը օրինակելի խմբագիրի դաղտնիքին.- յարատեւ ընթերցում եւ պրպտում, ապա նաեւ նպատակասլաց հետեւողական հետապնդում։

Թէոդիկ իր 13 Մարտ 1925 թուակիրին մէջ կ՚ըսէր. «...Տարեցոյցս... դժխեմ կեանքիս յօրդուած» ամոր հետ պիտի դադրի միայն» ու ... տէրը կը մնար իր խաստումին։

Ալյուր, 15 Փետր. 1926 թուակիրին մէջ ան կը յայտնէր իր մխքը կրծող հոգ մը. «... օր մը սա կաւակերտ մարմինս պիտի ամփոփուի օտար հողի տակ, եւ, մէկդի՝ բարը՝ մեռելոցի օրեր Հայր-Մեր մը գրուցող պիտի չունենամ...»։

Թէ Թէոդիկ Հայր-Մեր մը գրուցող ունի՞ այսօր, անծանօթ կը մնայ մեզի. բայց ան որոշապէս մխիթարական պիտի նկատէր պարագան, եթէ միտքէն անցընէր թէ գրասէրներ ու բանասէրներ իր իրապէս ամէնուն տարեցոյցները ձեռք պիտի առնեն աքանչանալով իր «փոքրիկ հանրագիտարան»ներով եւ երախտագիտութեամբ յիշելով իր անունն ու գործը։

Նամակները կը վերարտադրուին հարագատօրէն, առանց որեւէ լեզուական միջամտութեան, բացի կարգ մը կրճատումներ իրենց անկրճատ ձեւին վերածելէ։

Տեղին պիտի ըլլայ շնորհակալութիւն յայտնել դոկտ. Գրիգոր Մ. Վրդ. Մաքսուտեանի եւ Դոկտ. Արա Ղազարեանցի, որոնք սիրայօժար յանձն առած էին Թէոդիկի տարեցոյցներէն կարգ մը տեղեկութիւններ ապահովելու տադտուկը։

***

Կ. Պոլիս, 1/14 Հոկտ. 1911

Գերապատիւ Հայր Սուրբ

Շնորհակալութեամբ կը վերադարձունեմ այսօր ձեր հասցէին՝ ատենօր Ձենէ փոխ առած լուսանկարները։ Իրաւ է թէ քիչ մը ուշացուցի առաքումը, բայց ներողամիտ եղէք, որովհետեւ կարի զբաղած էի Տարեցոյցիս[2] գործելով, մանաւանդ անձնական մատենադարանիս կազմութեան ծանրաբեռն հոգովը։

Իս էւելօք շնորհապարտ պիտի կացուցած ըլլաք եթէ հաճիք ինձ հայթայթել 1843 եւ 1847 տարիներու պարզ օրացոյց. անշուշտ վաճքին տպարանը, անկիւնէ մը լոյս աշխարհ կրնաք ածել զայնս եւ ինձ դրկել, շատ պէտք ունիմ, այսինքն թէ 1840էն սկսեալ մինչեւ 1911, 72 տարիներու օրացոյցի հաւաքածոյէս վերեւի 2 տարիները միայն կը պակսին, եւ ա՛յս իսկ պատճառաւ չեմ կրնար կոր գաւոնք կազմի յանձնել։ Եթէ վանքի գրադարանը 1839, 38, 37, 36 եւայլն (դէպի վար իջնող տարիներուն) օրացոյցները կամ տրամադրելի, պատրաստ եմ գնել գաւոնք, բաւ է որ դուք յանձն առնուք այս տադտուկը։

Կ՚ուզէի նաեւ գիտնալ թէ «Սիօն» հանդէսին[3] բոլոր տարիներուն անթերի հաւաքածոյն կը գտնուի՞ հող՝ վաճառելի, եթէ այո, վերջին գին քանի՞ կ՚ըլլայ արդեօք՝ ինծի պէս բանասիրութեամբ զբաղող գր[ական] համեստ վաստակաւորի մը համար։

Հազար ներողութիւն տուած այս տարապարհակներուս համար։ Պատրաստ եմ որեւէ կերպով փոխարինել գէթ զայն։ Ձերդ յարգալիր

Թէոդիկ

Յ.Գ.– Պատկերներուն կապոցը ապահովագրեալ է. նաեւ նամակատուն յանձնած եմ մի օրինակ կնոջս նոր երկասիրութենէն իբր դոյզն նուէր (Արդի Բարոյագիտութիւնը)[4], թերեւս շահագրգռուիք անոր բովանդակութեամբ։

Նոյն

***

ԹԷՈԴԻԿ
THÉOTIG
C/O DER-NERSESSIAN
Djélal Bey Han, Cons/ple

Կ[ոստանդնու]պօլիս, 5/18 Մայիս 1912

Գերապատիւ Հայր Սուրբ

Հայ տպագրութեան չորսհարիւրամեակին առթիւ պատրաստած ըլլալով բանասիրական երկ մը[5] որ կը խօսի ատոր վրայ միայն, եկած եմ խնդրելու Ձեզմէ որ հաճիք *անմիջապէս* ինծ ուղարկելու ազնուութիւնն ունենալ Ս. Յակովբեան վանուց տպարանին՝ սկզբնաւորութենէն մինչեւ ցարդ կատարած գործունէութիւնը: 1912ի Ձեր օրացոյցէն տեղեկացայ թէ 1837ին սկսած է ան[6]: Արդ ո՞վ եղած է դրդապատճառ, հոն *առաջին տպագրեալ գիրքը* ո՞րը եղած է: Իսկ նոյն տապարաննիդ կոխուած գրեանց ցանկն ունիմ: Ինծ կը մնայ իմանալ սատարողք եւ ծաղկեցուցողները (ինչ[պէս] Եսայի Պատր[իարք][7] եւն.) *թուականներով* եւ մանրամասնութեամբ:

Երէկ առ այդ կիւս Երուսաղիմատուն այցելեց, բայց Սմբ[ատ] վրդ. Գազագեանը[8] չէ կրցեր գոհացնել զինք, Ձեր Գերապատուութեան անունը միայն տուեր է, իբրեւ լաւագոյն աղբիւր՝ ուզուած տեղեկութիւնները քաղելու համար:- Կը յուսամ որ յանուն Հայ Բանասիրութեան եւ Ձեր վանուց տպարանին փառաբանութեան՝ կը հաճիք նկատի առնել սոյն խնդրանքս *իսկոյն*, քանզի գիրքիս տպագրութեան սկսուած է մէկ կողմէն: Օրմանեան Ս[րբազան][9] եւս Ձեզ պիտի գրէ այս մասին, խնդրելով որ փութացնէք գործադրութիւնը խնդրանքիս. նաեւ Գազագեան Հայր Սուրբը:

Ձերդ յարգալիր

ԹԷոդիկ

***

ԹԷՈԴԻԿ
THÉOTIG
C/O DER-NERSESSIAN
Djélal Bey Han, Cons/ple

Կ[ոստանդնու]պօլիս, 18 Ապրիլ 1913

Գերապատիւ
Մեսրովպ Վրդպտ. Նշանեան
Երուսաղէմ

Երէկ ստացայ 6 Ապր[իլ] թուակիրնիդ եւ այսօր կ'ուղարկեմ Ձեզ «Տիպ ու Տառ»էս[10] օրինակ մը՝ յանձնարարեալ ծրարով: *Կը խնդրեմ որ զայն նուէր ընդունիք:* Թէեւ հրատարակիչներս *500* օրինակ միայն տպագրած են այս գիրքէս եւ չափազանց ժլատ կ'երեւին նուէր ուղարկելու մասին, բայց յաջողեցայ խօսքս քալեցնել եւ հատ մը Ձեզ համար ստանալ, մանաւանդ որ աշխա-

տակցութեան բաժին մըն ալ ունիք՝ Ձեր տպարանին մասին բաւական տեղեկութիւններ ուղարկած ըլլալով ինձ:

Անշուշտ իմացած էք թէ կազմելու վրայ եմ 3 տարիէ հետէ հեւիհեւ աշխատութեամբ՝ բանասիրական հայ[կական] երկասիրութեանց մատենադարան մը, հետզհետէ գրական պարապմանցս համար իբր գործիք ու առաջնորդ: Շնորհակալ եմ Ձեր վաճէն որ Դանիէլ Սրբազանի բարեացակամութեամբ ինձ նուիրեց «Սիօն»ի հատաքածոն: Ջերմապէս կը փափաքիմ ունենալ հետեւեալ գիրքերն ալ՝ Ձեր տպարանէն ատենօք լոյս ընծայեալ. Մատթէոս Ուռհայեցի[11]:– Ժամանակագրութիւն Միխայէլ Պատր[իարք]ի[12]:– Պատմ[ութիւն] Հայոց (Յովհ[աննէս] Կաթողիկոս)[13]:– Պատմ[ութիւն] Թաթարաց[14]:– Ստորագրու[թիւն] Երուսաղէմի[15]:– Վահրամ Վրդպտ. (Օծումն Լեւոն Գ.ի)[16]:– Տաճճիլ (Տեղագր[ութիւն] Երուս[աղէմի])[17]:– Պատմ[ութիւն] Ս. Գրոց (Տնտեսեան)[18]:– Ս[ուրբ] Յակոբ նամ 2 [իքի] առաքեալլարէն նագլի (Տէրոյենց)[19]:– Քերական(ներ) եւ հեգերէն(ներ):

Գիտեմ թէ այս գիրքերուն արժէքին համագումարը բաւական շատ է: Արդեօք վաճքին Տեսչութեան բացառապէս բարեխօսելով կարելի՞ է իրենց գիւէն կարեւոր գեղչ մը ընել ինձ նման հայ բանասէրի մը համար որ հարուստ մը չէ: Գիտեմ որ եթէ յօժարիք՝ կրնաք գլուխ հանել այս գործը որ ստուգիւ տարապարհակ մըն է իմ կողմէ Ձեզ առթուած: Հաճեցէք գայթն ծրարել եւ բօսքին[20] յանձնել իմ հասցէովս եւ գիտցուցել ինձ *ամենավերջին* գինը (համագումար), որպէս զի *իսկոյն ուղարկել փութամ ձեզ*: Եթէ մէկ քանին սպառած են կամ շատ հազուագիւտ օրինակներ կը գտնուին, բարի կամեցողութեամբ մը կը յուսամ թէ կրնաք դարձեալ հայթայթել գայթն եւս: Սպասելով աճապագին արդիւնքին, կը մնամ Ձերդ յարգալիր

Թէոդիկ

Յ.Գ.– «Տիպ ու Տառ» հակառակ ժամանակին ծանուցուած ըլլալուն թէ հրատարակուեցաւ, Ջատկին խթման օրը միայն հրապարակ ելաւ:

Նոյն

***

ԹԷՈԴԻԿ
THÉOTIG
C/O DER-NERSESSIAN
Djélal Bey Han, Cons/ple

Կ[ոստանդնու]պօլիս, 13/26 Մայիս 1913

Սիրելի Հայր Սուրբ

Ստացայ նամակնիդ: «Տիպ ու Տառ»ին համար Ձեր չռայլած ներբողի տողերուն համար խորին շնորհակալութիւն. գործէն հասկցող մարդիկ երբ այսպէս ազնիւ վերաբերումներ կ'ունենան, կը կարծեմ թէ յոգնութիւններս առած կ'ըլլամ բոլորովին: Շնորհակալութիւն նաեւ Ձեր ուղարկած գիրքերուն համար զորս ա՛յնքան վեհանձնօրէն յօժարեր էիք *նուիրել* մատենադարանիս:

Միայն թէ *Միխայիլ Ասորի Պատրիարքին գրչէն 14րդ Ֆօրմաճ պակաս էր.* յանհուն չնորհապարտ պիտի կացուցանէք զիս՝ եթէ բարի ըլլայիք այդ Ֆօրմաճ[21] ընդ փոյթ ինծ դրկել:

*** Յառաջիկայ 1914 տարւոյ *Ամէնուն Տարեցոյցիս* բոլոր տարուանցներէն աւելի շքեղ կերպարանելու համար քանի մը ամիսէ 'ի վեր աշխատելու ետեւէ ենք այր ու կին. այս տարի ուրիշ աշխատութիւն չունենալուս՝ բոլորովին նուիրուած ենք անոր: Ողջ ըլլաս եկեղեցականներ եւ գրչի եղբայրներ որոնք ա՛յնքան ազնիւ գտնուեցան ինծ տրամադրելու ընդօրինակութիւններ հին շահեկան ձեռագիրներէ, հնութեանց պատկերներ, նշ[անաւոր] ազգայնոց նամակներ, եւն.: Վենետիկէն ալ ստացայ սիրոյ *հիանալի տաղ մը*[22] անտիպ՝ հին ձեռագիրէ մը արտագրուած: Կու գամ աղաչել Ձեզ, որ եթէ կարելի է, անգամ մը պրպտէիք Ձեր համբաւեալ մատենադարանը, եւ ընտրելով ձեռագիր տաղարանէ մը գրական տեսակէտով ուշագրաւ էջեր մը, հաճէիք ընդօրինակել եւ ինծ յղել, ծանօթագրութիւններով (թէ որո՞ւն գրածն է, քանի՞ն գրուած, եւն.): Դարձեալ եթէ առձեռն պատրաստ կան հոդ նշ[անաւոր] հնութեանց եւ անձանց յուսանկարներ, *ուղարկէիք ինծ փոխ.* պէտքս հոգալէս վերջ կրկին Ձեզ կը վերադարձնեմ: Աւելորդ կը նկատեմ աւելի խօսիլ այս մասին. Ձեր բարեացակամութիւնը եւ կիրք ճաշակը փափաքածէս աւելի պիտի կրնան գոհացում տալ հնութեանց սիրահար պահանջքիս:

Երէկ Կիլրակի, Վիէննացի վարդապետի մը հետ (որ քաջ յուսանկարիչ է)[23] գացինք դեգերիլ Շիշլիի հայոց հողվարքը,[24] ջոջ ազգայիններու դամբարաններ յուսանկարելու համար: Առանց կարգէն էր նորոգ կառուցեալ՝ տարաբախտ Տիգրան Չըլէնճեանիներ[25] գոր կը յարգէիք ա՛յնքան շատ եւ որուն հետ ա՛յնքան յաւ մտերմութիւն մըն ալ ունեցած էք: Եթէ իրմէ ունիք նամակ մը կամ նամակներ գր[ական] եւ ազգ[այինի] խնդրոց տեսակէտով շահեկան դրուագներով, կարելի՞ էր արդեօք յուսալ որ ձեր յարմար դատած մասերը կ՚ընդօրինակէք, տարեցոյցիս մէջ տրուելու համար՝ իր հոյակապ դամբարանին *քիշլին*[26] ստորոտը: Չէ՞ք խորհիր որ նորութիւն մը կ՚ըլլայ այս բանը, կարծես անդրշիրիմէն եկող ձայներ մը ա՛յն անձին որ մեծապայծառ իմացականութիւն մըն էր, յաւէտ երկրպագու Արդարութեան:

Սպասելով անհամբեր Ձեր պատասխանին եւ յայտնելով շնորհակալութիւններս կանխիկ, կը մնամ Ձերդ յար յարգալիր

Թէոդիկ

***

ԹԷՈԴԻԿ
THÉOTIG
C/O IMPR. HOVAGHIMIAN
SUNBULLI HAN, CONS/PLE

Կ. Պոլիս, 2/15 Հոկտ. 1913

Սիրելի Հայր Սուրբ,

Ինչպէս նամակագլուխէս պիտի հասկնաք, հասցէս փոխուած է այլ եւս: Տէր-Ներսէսեան[27] տպարանի հրկիզումով, 1914ի Տարեցոյցիս տպագրիչ ու

հրատարակիչ ունեցայ Տիար Յովակիմը[28]: Քիչ օրէն բախտը պիտի ունենամ նոր Տարեցոյցս Ձեզ յղելու, (ղէպ 'ի Հոկտ.ի վերջ), նախորդներէն շքեղ տպագրութեամբ եւ ճոխ պարունակութեամբ: Ներփակ ձեզ կը վերադարձունեմ Լեւոն Ե.ի ձեռագրին լուսանկարը[29] եւ կը փութամ կրկնել շնորհակալութիւնս: Բնագրին ընթերցումը կատարելով կարելի եղածին չափ ամբողջ, չարել տուած եմ այդ զոյգ էջերուն հետ, կցելով նաեւ Ձեր նամակէն մեկնողական հատուածներ՝ Ձեր անունով:

Ասկէ առաջ, քանի մը գիրքերու խնդրանքս նկատի առած ատենիդ, անշուշտ բնաւ չանցուցիք միտդրնդ թէ օր մը կրկին կրնամ համարձակիլ նմանօրինակ խնդրանք մըն ալ ներկայացնել Ձեզ, Ձեր ազնուութենէն ... քաջալերուած: Պարզ խօսիմ, իմ ունենալ փափաքածս է հիմայ Նար-Պէյի[30] «Քնար Պանդխտին»ը զոր ձեռք ձգելու համար գրավաճառ չթողուցի հոս, եւ միշտ յուսավրէպ ելայ: Երեւակայեցէք, այդ աննման քերթող սրբազանին յոյս ընծայած բոլոր գործերն ունիմ, բաց ի «Քնար Պանդխտին»էն: *Շատ մօտէն տեղեակ* մէկ բարեկամս ըսաւ թէ այդ գիրքէն մատենադարանիդ [մէջ] կայ եղեր *մէկէ աւելի օրինակ*: Խնդրանքներուս ՎԵՐՋԻՆԸ նկատեցէք ներկայս եւ հաճեցէք գոհացում տալ bibliomane[31] մայրդու ըղձանքիս. վստահ եղէք որ բնաւ չպիտի մոռնամ Ձեր բարեացակամ վերաբերմունքը:– Կանխամատոյց շնորհակալեօք եւ սպասմամբ Ձեր պատասխանին, կը մնամ Ձերդ յար յարգալիր

Թէոդիկ

***

THÉOTIG
C/O IMPR. HOVAGHIMIAN
SUNBULLI HAN, CONS/PLE

Կ. Պոլիս, 22 Հոկտ. 1913

Սիրելի Հայր Սուրբ

Շնորհակալութեամբ ստացայ նուէր-օրացոյցնիդ, (թէեւ օր մը առաջ Գլըճեան գրատունը տեսնելով զայն՝ իսկոյն գնած էի եւ գիշերը կարդացած ամբողջովին Ձեր ուսումնասիրութիւնը):

Այսպէս, կանխեցիք գիս՝ տարեկան նուէրի մէջ: Գալ շաբթու, այսինքն 7/8 օրէն առիթը պիտի ունենամ ես ալ նոյնը կրկնելու Ձեզ, ուղարկելով «Ամէնուն Տարեցոյցը»իս 1914 տարուան հատորս, զոր կը կարծեմ թէ բաւական խնամով պատրաստել յաջողեցայ:

Անակնկալ մը առթած ըլլալու համար Ձեզ, *այլեւայլի* բաժնիս մէջ՝ այսօր իսկ գետնեցի «Շահեկան Օրացոյց» մը խորագրով մէկ էջնոց յօդուած մը որ Ձեր «Յաւելուած»ն ունի իրեն նիւթ, Ձեր «Ակնարկ»իս վրայ ձգուած «ակնարկ» մը պարզապէս, դրուատալից տողերով որոնք կը վերջանան նոյնիսկ ոէկլամով[32], որուն արժանի է արդէն Ձեր ուսումնասիրութիւնը[33]:

Գալով «ՔՆԱՐ ՊԱՆԴԽՏԻՆ» գիրքին զոր նախորդ նամակաւս խնդրած էի Ձեր Գերապատուութենէն՝ կարելին ընելու, հայթայթելու եւ ուղարկելու

համար ինձ, կը կրկնեմ խնդրանքս՝ *առնչի սաստկագոյն բախտով* մը որուն համար կը յուսամ թէ ներողամիտ կ'ըլլաք, երբ միտք բերէք թէ ... bibliomaneի մը հետ է գործերնիդ: Ջոհողութիւն մը ըլլած պիտի ըլլաք պարզապէս քանի մը ժամ խորելով եւ փնտռելով այդ գիրքը, զոր ո՛րչափ շուտ յղէք, ա՛յնքան շուտ փրկած կ'ըլլաք գիս անձկութենէ:– Տիգր[ան] Սաւալանեանցի[34] պատկերը (փոխ) եւ լիակատար կենսագրութիւնը կը հաճի՞ք արդեօք տրամադրել ... 1915ի տարեցոյցիս համար: Ջերդ յար յարգալիր

Թէոդիկ

***

[Բացիկ]

Սիրելի Հայր Սուրբ, 9/12 Յնվր. թուակիր քարդերնիդ նոր ստացայ դեռ, ուղարկած գիրքերնուդ հետ: Կը փութամ շնորհակալութիւնս յայտնել Տարեցոյցիս մասին Ձեր գնահատականին համար, մանաւանդ Դարանաղցիի[35] «Ժամանակագրութեան» համար, որուն մէջ պիտի թարթափիմ 'ի մօտոյ, անմիջապէս որ կազմատունէն ստանամ գայն, նաեւ պիտի' խօսիմ 1916ի հատորիս մէջ՝ անոր մասին[36]: Կը մաղթեմ Ձեզ կար եւ կորով՝ նոր երկերու 'ի լոյս ածումին համար:– Եթէ ինձմով կը հետաքրքրուիք, քանի մը ամսէ 'ի վեր գրչի աշխատաւորի մը՝ Պրն. Չիթունիի[37] հետ գործի սկսած ենք հայ[երէն] մայր բառարանի մը պատրաստութեան համար. գիշեր ցորեկ կը տքնինք կոր: Եթէ ինչ ինչ թելադրութիւններ ունիք այս առթիւ, շնորհակալ կ'ըլլանք զայնս լսելով: Ամէն անոնքոր առաւել կամ նուազ չափով օգտակար ըլլան մեզ, պիտի յիշատակուին Յառաջաբանին մէջ: Եթէ Օրմ[անեան] սրբազանը հոս ըլլար, շատ պիտի օգտուէինք իրմէ. հաղորդէիք իրեն, խնդրեմ, այս տողերը: Քիչ ատենէն ալ արդէն պիտի ստանաք այաշտօնական նամակ մը երկուքնուս կողմէ՝ այս խնդրոյն մասին: Օրմ[անեան] Ս[րբազան]ի բառական ատեն առաջ նամակ մը յղեով, խնդրեր էի որ ինձ շնորհ ընէր հայթայթելու 1895ին հոդ տպուած Թ[ադէոս] Վրդ. Ա[ստուա]ծատ[ու]րեանի[38] «Համաբարբառ Հին եւ Նոր Կտակարանաց»ը. չպատասխանեց: *Վերջին* խնդրանքս նկատեցէք ասիկա եւ բարի եղէք օրինակ մը ուղարկել ինձ, ապահովեալ: Բօսքին ծախքը պատրաստ եմ հատուցանելու:– Ջերդ կանխիկ շնորհակալեօք եւ յարգանօք

Թէոդիկ

(1915 Փետր. 14/27)

***

Կ. Պոլիս, 24 Փետր. 1922

Գերապատիւ Հայր Սուրբ,

17 Դեկտեմ. 1921 թուակիր Ձեր պատուակալը ձեռքս հասաւ տարօրինակէն յուզումնալից այս օրերուն՝ երբ կեանքիս ու գրական պարապմանցս անխոնջ բնկերուհւոյն մահուան բօթը կր հեռագրուէր ինձ Ջուիցերիայէն[39], եւ Ձեր սրտագին տողերը՝ կեանքի ունայնութեան մօրուտին վրայ բացուած կակոսներու պէս՝ կը թուէին դրասանգել աշխարհի ստութիւնը. «*Լիակատար*

ապաքինում եւ քաջողջ ու զուարթ վերադարձ ի հայրենիս»: Կ'ափոփում, հաւատ ունելով որ սիրելիի մը երկրաժեշտը տեսակ մը վերադարձ է ... 'ի հայրենիս զուարթնոց: Իր ցեղին ազատութիւնը երազող իր հոգին այլ եւս պիտի չտանջուի՛ մահկանացուներու դիւանագիտութեան դժխեմ խաղերէն, եւ հողանիւթ շինուածքը թօթափած՝ պիտի արփաթեւ հոն՝ Հայաշխարհի համար իսկող իր ազգակիցներուն հետ: Արցունքներուս մէջէն՝ այս հաւատքովը կ'ապրիմ, ապասելով այն երանաւէտ օրուան ուր ե՛ս ալ պիտի ողջունեմ իմ լուսաբնակ Պէադրիչէս[40], աստէնականի քոյրս՝ անդէնականի հրեշտակս դարձած, մսեղէն սրտիս արիւնը՝ հոն ոսկեղէն սկիհի մէջ գինիի փոխարկուած, աչքիս բիբը՝ հոն աստեղակերպ պաղպաջուն, կեանքիս երբեմնի լրբուստը՝ հոն վուվու եւ ալէտու, աշխարհայեաց նաիր իղձս՝ հոն շնո՛րհ ու տեսլական...:

Հա՛յր Սուրբ, Գլխադիրին[41] առջեւ, անմահ պատարագի ատեն, հե՛ղ մը գոնէ յիշէիք այդ չարչարուած Հայուհին որ աշխարհաւեր ամբոխին մէջ բէեւ թուղթէ լապտեր՝ կախուած մնաց պատնէշի վրայ, մէջի մատիկ մը մոմին հետ իր կողե՛րն ալ բռնկցնելով, իր տմոյն գոյքէն քիչ մը հեռո՛ւն ալ արձակելով, իրմէ աւելի բշուա՛որ խորհելով միշտ, մանաւանդ աղօթելով, 'ի նիջել եւ 'ի յառնել, աքսորքի ճամբաներուն վրայ բոլոր դեգերողներուս համար...:

Սգաւոր Ձեր բարեկամը

Թէոդիկ

Յ.Գ.- Գրիգոր Շղթայակիրի[42] նամակներէն այն երկուքը՝ զորս չահեկան դատած էր Ձեր կիրք ճաշակը՝ ընդօրինակուած երբ ստանամ, շատ ուրախ պիտի ըլլամ: Ապրի՛ք որ գոնէ ուշ ուշ կը յիշէք զիս, մանաւանդ կ'ուզէք օգտակար ըլլալ 29 տարեցոյցներուս արագ սպառումէն: Կա՛յ ու նոանդ վանական հոգերով եւ որբերու գործերով անխոնջ դատողիդ:

Նոյն

***

Կ. Պոլիս, 29 Ապր. 1922

Սիրելիդ իմ Հայր Սուրբ,

Ամսոյս 2 թուակիր նամակնիդ չաբաթէ մը 'ի վեր ծոցս պահած ունիմ եւ ա՛լ համրանքը չեմ գիտեր թէ քանի՞ցս հանեցի զայն իր թաքստոցէն վայելելու համար անծնիր դողը Ձեր հոգեբուխ գրուածքին: Ապրի՛ք որ դառնացած սիրտերու կը մատչիք այսպէս գորովագին, փորձելով օծել զայնս այն անանուն սպեղանիով որուն գաղտնիքը կ'երեւի թէ Ձեզ նման իրենց կոչումին արժանի վեղարի մարդիկը գիտեն: Պատարագնիդ արցունք խլեց աչքերէս, եւ երեւակայութեամբ ապրեցայ այն պահը, Գլխադիրին առաջ ծնրադիր, խունկի բուրմուններէն գինով, կերոններու լոյսերէն հոգիս բռնկած...:

Հիախանդ համբուրիւ Ձեր Ս. Աջոյն, եմ միշտ խոնարհ

Թէոդիկ

Ամենապատիւին[43] Աչը կ'առնեմ եւ կը խնդրեմ որ յիշեցնէք իրեն դրկելիք բերքուածը: Տարեցոյցս մօտ է տպագրուելու: Ճիտիկս ծուռ թող չծգէ, արդէն շա՛տ ծռած է ան: Ձեր դրկելիքն ալ չէք ուշացներ անշուշտ: Անհուն շնորհակալութիւն դրկած Ձեր չէքին համար:

Ս. Պատրի[արք] Հայրը նոր լուսանկար հանած չունի՞ արդեօք, իր պատկառելի գլխով, մագերն ու մօրուքը ձիւնափառ, ամբողջութեամբ վեհափառ...: Եթէ յիշեցնէք իրեն, չի մերժեր զիս, օրինակ մը կը խնայէ:

Նոյն

***

Կասթուրի (Գօրֆու), 16 Դեկտ. 1922

Սիրելի Հայր Սուրբ,

Անակնկալ դիպուածով մը, հալածուած միլլիական[44] սարսափէն, հապճեպ մեկնեցանք Պօլսոյ ջուրերէն, եւ եօթնօրեայ տաժանագին ծովագնացութենէ մը վերջ նկանք հաստատուիլ առժամապէս յունական այս հեռաւոր կղզիին Կասթուրի կոչուած գիւղը, որուն քովը կը գտնուի երբեմնի աշխարհասասան վեհապետին Վիլհէլմ Բ.ի պալատը[45],– բնակարան այժմ մեզի ուղեկցող 1600 հայ որբերու: Ազգ[այինի] Խնամատարութեան[46] կողմէ մեզի պաշտօն տրուած էր իբր ուսուցիչ ընկերանալ անոնց, որոնք, ստուար մեծամասնութեամբ չափահաս եւ արհեստաւոր, անուղղայ եւ անոպայ տարր մը կը ներկայացնեն, դաստիարակութեան գլխովին անյարմարակ: Այս պայմաններուն մէջ, դիւրին է Ձեր Գերապատուութեան երեւակայել թէ մեզ նման հայրենագուրկ եւ ընտանեգուրկ անձերու համար ո՛րքան դառն է համակերպիլ եւ գործել այս տեսակ անհանդուրժելի միջավայրի մը մէջ: Մենք ի բնէ խաղաղ եւ համբերատար աշխատութեան մարդիկ, սիրով պիտի յօժէինք աւելի ծանր աշխատութեանց, եթէ մեր արժէքը քիչ շատ գնահատող միջավայրի մը մէջ գտնուէինք: Դժբախտաբար մեր գլուխն ունինք տղայամիտ եւ անփորձ «Ռըլիֆ»ի[47] ամերիկացի պաշտօնեաներ, զուրկ կազմակերպական ոգիէ եւ գործ մը վարելու կարողութենէ, որով խաղալիք դարձած ենք անոնց քմայքին, եւ այս պայմաններուն մէջ մեր հոս կայքը կրկին տառապանք մը պիտի դառնայ մեզ համար:

Արդ, մենք կը մտածենք ժամ առաջ հեռանալ այս անհրապոյր եւ հիւրամերժ ափերէն եւ նետուիլ տե՛ղ մը՝ ուր մեր նախասիրութեանց համաձայն կարենանք նուիրուիլ աշխատութեանց եւ դրապէս օգտակար ըլլալ ո՛չ միայն մեր անձին, այլեւ մեր շրջապատին:

Այս կարգի վայրերէն մին ահա՛ կը նկատենք Երուսաղէմի վանքը՝ որուն գլուխը կը գտնուի հիմա իր բագմահմտութեամբն անգուգական մեր հայրենակից հովուապետը:[48] Ուրախ ենք որ ասկէ առաջ երբ տակաւին Պօլիս էինք եւ մեկնելու հեռապատկերը մեր աչքին առաջքն ունէինք, մեր ըղձանքին ընդ առաջ երթալով՝ Գազագեան Վրդ.ի բերնով, շնորհ գտած էր Նորին Ամենա-

պատուիրեան մօտ մեր քաղաքդ հաստատուելու գաղափարը, որուն գործադրելիութեան արձագանգը եղած էիք Ձեր վերջին նամակաւ, որուն Պօլսէն պատասխանելու ժամանակը պակսեցաւ մեզ: Այդ նամակին մէջ կը թելադրէիք մեզ՝ Պէյրութ անցնիլ, ուրկէ մեր Պաղեստին մուտքը դիւրացնել կը խոստանայիք: Թախտն այնպէս բերաւ որ այս ոչ-թշնամի երկրին մէկ ափն իյնանք, երկուքս ալ անջատաբար՝ ի ձեռին ունենալով յունական անցագիրներ՝ յունական որեւէ ցամաքի համար:– Արդ, թախանձագին կը խնդրենք որ հաճիք Ձեր ազդու բարեխօսութեամբն ամէնուս սիրելի Դուրեան Ս. Պատրիարք Հօր՝ ստանալ մեր Պաղեստին մտնելու արտօնութիւնը, եւ տեղւոյդ անգլ[իական] իշխանութեան միջոցաւ ընդ փոյթ հրահանգել տալ Գորֆուի անգլ[իացի] հիւպատոսը, մեր անցագիրները viser ընելու[49] համար: (Արշակին[50] անցագրին կցուած է իր մետասանամեայ որդին *Սիմոնն* ալ): Մենք վստահ ենք որ բարի կամեցողութեամբ մը այդ հրահանգումն ալ կը դիւրանայ, երբ զմեզ ներկայացնէք վանքին վարժարանին համար անհրաժեշտ ուսուցիչներ:

Սիրելի Հայր Սուրբ, նկատի առէք որ այդ ազնիւ ժէսթով[51] վերջ տուած պիտի ըլլաք մեր տխուր պանդխտութեան որ աւելի դառն է քան աղէտալի տարիներու աքսորը: Կը մնանք շնորհապարտ զգացումներով Ձերդ միշտ անկեղծ,

Թէոդիկ Լապճինճեան
Արշակ Ալպոյաճեան

Հասցէնիս.– Théotig, Poste Restante, Corfou (Grèce)

***

Théotig, Poste Restante
Corfou (Grèce)

Գորֆու, 22 Յնվր. 1923

Գերապատիւ Հայր Սուրբ,

Ամսոյս 2 թուակիր Ձեր պատուականը երէկ ստացայ դեռ, որուն կը փութամ պատասխանել: Նախ շնորհակալութիւն իմ տաղտուկս հայրաբար յանձնանձելնուդ եւ խնդրանքնիս մասամբ գործադրել յաջողելնուդ համար: Ընկերոջս Ա[րշակ] Ալպոյաճեանի հաղորդեցի եղած կարգադրութիւնը իր Եգիպտոս անցնելուն մասին, եւ ինք ալ պէտք եղածը փութաց գրել Պրն. Չագրրի[52]: Երկուքնիս ալ առիթուած ենք համակերպիլ մեր ճակատագրին, սպասելով միշտ լաւագոյն օրերու: Անշուշտ բանտի եւ աքսորի տարիներուս տաժանելի կեանքէն անհունապէս գերիվեր է ապրիլ կէս-վանական մթնոլորտի մը մէջ եւ վայելել հովանին Ն[որին] Ամենապատուութեան, որ ա՛յնքան կարեկից է լուռ պարապմանց սիրտհար իր հայրենակիցին՝ բախտէն ա՛յնքան ապտակուած եւ իր կեանքի աշունին նետուած այս ակամայ ճգնեհութեան մէջ: Իմ մասիս եղած կարգադրութիւնը կ՚ընդունիմ ատենի մը համար, մինչեւ որ «բացուին դռներ յոյսոյ»[53] եւ հալածանքը դադրի հայ

մտաւորականներու դէմ, հայ թշուառութիւնը դոյլ առնէ մի քիչ եւ Ս. Յակովբայ վանուց պիտնձէն թոյլատու ըլլայ անթոշակ չծգելու գրչի համեստ աշխատաւոր մը: Հաճեցէք թարգման հանդիսանալ իմ շնորհապարտ զգացմանցս՝ Նորին Ամենապատուութեան մօտ եւ ըսել իմ կողմէս, թէ մահու ճանապարհի տարիներ առաջ քալող եւ վիշտերուն վիշտը անմռունչ կրող Թէոդիկը պատրաստ է իր չարչարուած գլուխը հանգչեցնել վանական խցիկի մը քարին՝ իսկ վրայ, բաւ է որ իր շուրջն ունենայ հայատրոփ սրտեր եւ բարեմոյն դէմքեր, ինչպէս եւ գիրքեր ու թուղթեր: Ձերդ յար յարգալիր

Թէոդիկ

***

[Բացիկ]

Գորֆու, 31 Դեկտ. 1924

Սիրելի S. Մեսրոպ Եպսկ. Նշանեան

Երուսաղէմ

Եպիսկո[պո]սանալու առթիւ Պիրէոն[54] հասնելնուդ՝ նամակ մըն էիք ղրկած ինծի. չէի կրնար պատասխանել՝ ուղեւորութեան մէջ ըլլալնուդ համար: Մե՛ղք որ Ելլադայի[55] ափերը եկաք, առանց Յունիականի[56] մեր ղրախտագեղ կղզին այցելելու: Կը շնորհաւորեմ սրտանց Ձեր եպիսկոպոսացումը, ամանորի սեմէն մաղթելով Ձեզ քաջողջ կեանք եւ փառքի նոր տիտղոսներ:– 32 տարեցոյց ղրկած եմ մեր Գաբիկեանին,[57] 4ր նուէր, մնացեալ 28 հատը դարձեալ Ձեր բարեացակամ ջանքերով կը յուսամ թէ կ'սպառին, որպէս զի հնարաւոր ըլլայ ինծ ժամ առաջ թեթեւնալ Վիեննա ունեցած ծանրածանր պարտքերէս:[58]– Խրիմեան Հայրիկի նամակը[59] պիտի դնեմ 1926ի հատորիս մէջ՝ որ պիտի բոլորէ իր *20ամեակը*. տեսնենք Ձեզմէ ի՞նչ կ'ունենամ: Կանխամատոյց շնորհակալեօք, կը մնամ Ձեր Սրբազնութեան յար անայլայլ սիրով՝

Թէոդիկ

***

Théotig, Poste Restante
Corfou (Grèce)

Գորֆու, 13 Մարտ 1925

Սիրելի Սրբազան Հայր,

Հաճոյքով ստացայ 24 Փետր. թուակիր նամակնիդ եւ անոր ծոցը գտայ Ձեր եպիսկոպոսութեան յաջող յուսանկարնիդ: Պիտի դնեմ զայն 1926ի հատորիս մէջ. միայն թէ բարի ըլլայիք ինծ փութացնել Ձեր լիակատար կենսագրութիւնը, որպէսզի դնելիք պատկերիս արժէքը չեչտուէր: Գիտէք թէ վաղուց 'ի վեր համակիր մըն եմ Ձեզի, իբրեւ լուրջ, ներհուն եւ պարտաճանաչ եկեղեցականի մը. եւ յետոյ Ձեր անունը յիշողութեանս մէջ կը զուգորդի միշտ երջանկայիշատակ Իգմիրլեան[60] հայրիկին՝ որ իմ մանկութիւնս է ճանչցած եւ դուք ալ վայելած անոր մտերմութիւնը երկար տարիներ, մինչեւ գինքը գերեզման իջեցնելնիդ: Ամենաշահեկան գրութիւնը՝ զոր կը յիշեմ կարդացած

ըլլալ Ձեր գրչէն, բաց ի Սաղիմական մամուլի պատմութենէն,[61] է ինձ համար օրագրութիւնդիդ պատերազմի տարիներուն գրուած եւ հրատարակուած Ս. Գաբամաճեանի տարեցոյցին մէջ.[62] Իմս դեռ արժանի չեղաւ այդպիսի ուշագրաւ գրութիւն մը ձենէ հիւրընկալելու իր էջերուն: 1926ս պիտի բոլորէ իր *քսանամեակը*, եւ ես կարելիս ընելու ետեւէ եմ, զայն ոչ միայն շքեղ եւ ճոխ, այլ սովորական տարիներուն $1^1/_2$ պատիկ ծաւալովը լոյս ընծայելու համար, մանաւանդ որ հիմա մրցորդ ունիմ ամենուրեք[63]: Ուստի անակնկալ մը առած պիտի ըլլաք ինձի, եթէ Ձեր յիշողութենէն դուրս բերէք անցեալէն լաւագոյն դրուագ մը տարեցոյցիս ի սպաս, կամ, ձեռագիր մատենադարանային փոշիներուն տակ ծուարած գեղեցիկ հնութիւն մը: Գաբիկեան մը ունէի հոդ. աստուած չատ տեսաւ՝ առաւ ձեռքէս. ո՛րքան կը սիրէինք զիրար, եւ ո՛րքան գաղափարակից էր ինձի դրպէս բանահաւաք-բանասէր: Յանձին Սրբազնութեանդ կ'ողջունեմ հանգուցեալը. մի՛ մոռնաք իսկ աւելի տարեցոյցս որ դժխեմ կեանքիս լծորդուած՝ անոր հետ պիտի դադրի միայն:– Իմ հոդ անցնիս կ'երեւի թէ դեռ շատ ջուր պիտի վերցնէ, միշտ որ իմիս ալ ... ջուրիս քաշուիլը. ողջութիւն ըլլայ: Ս. Պատրիարք Հօր եւ Բաբգէն Սրբազանի[64] բարի տրամադրութիւնները չեն բաւեր եղեր միայն: Տպարանիդ դեռ եւս անկազմակերպ վիճակը գիտնալուս, կը ջանամ իմ իդեալս տապկուիլ դեռ, չարժանանալով 20րդ տարիս հոնկէ շաքելու: Թերեւս 21րդ տարիս արժանանայ այդ բախտին: Ամիսէ մը անվրէպ կ'սկսիմ տպագրութեանը, հաւանօրէն ՎԵՆԵՏԻԿ, քանզի ՎԻԵՆՆԱՅԻՔ հոգիս հանեցին եւ զիս գէմի ալ եմբարկեցին՝ իբրեւ երկրպագու «անարգ մամոնայ»ին: Չեմ *յուսահատիր* սակայն. կեանքիս բառարանէն ջնջած եմ վաղուց ընդգծած բայս, քանզի եթէ այդպէս ըրած չըլլայի, ա՛յսքան ցանկանքներէ եւ բախտէս կրած լախտի հարուածներէն վեր չէի մնար ողջ:– Իմացայ որ ԱՆՄԱՀՈՒՆԻ[65] անուն ուսուցիչ մըն ալ մեռեր է հոդ. կը հաճի՞ք մահուան թուականը միայն հաղորդել ինձ, մահագրութեանս մէջ անցընելու համար, համառօտ կենսագրութիւնը քաղեցի հոս մեր Տէր Եղիշէ քահանայ Գասպարեանէն (նախկին Օհանիկ սաներնիդ 'ի Ժառանգաւորաց Վարժարանի): Նոյնիսկ պատկերն ալ կրնա՞ք հայթայթել արդեօք. տարիներ հայ մանկտւոյն համար դատող կրթ[ական] վաստակաւոր մը գոնէ իր թուղթէ մահարձանն ունեցած ըլլայ:– Ողբացեալ Գաբիկեանի համար յայտնած Ձեր ցաւակցութեան համար խորապէս զգածուած եմ. չգտնուա՜ծ տղայ էր. բառ առ բառ պիտի դնեմ մահագրութեանս մէջ իր յիշատակին եւ արժանիքին նուիրուած տողերնիդ. ցաւակցական գիրս՝ ուղղուած իր վշտակիր այրիին՝ կը հաճի՞ք յանձնել:– Գալով տարեցոյցներուս հաշուոյն, սիրտս հանգստացաւ՝ Ձենէ եւ քիչ առաջ Բաբգէն Սրբազան]է իմանալով որ հաճեր էք եղբայրօրէն ստանձնել այդ հոգը. շնորհապարտ պիտի բողոք գիս՝ եթէ Ձեր կարելին ընէիք, որպէս զի *ասկառաթի օրինակներ միայն մնային ձեռքիդ*: Գրած թիւերնիդ ճիշդ է. 32 – 4 = 28: Յոպպէ[66] եւ այլուր բազմաթիւ ծանօթներ ունիք. չէի՞ք կրնար հոն ալ դրկել, աստարած ըլլալու համար գրչի աշխատաւորի մը որ իր գաղթականի կեանքը կապած է անոր հասոյթին: Ծախուածներուն փոխարժէքը, առ հաշիւ ըլլալով, եթէ

փութացնէք ինձ, շատ գոհ կը մնամ, ֆր[անք]ի հաշուով. դեռ կը հեծեմ պարտքի տակ. *ճառ*ին հաշիւն ալ կը կցէք անոր: Հազար ներողութիւն բոլոր այս տարապարհակներուս համար: Խօսք մրն ալ, ու վերջացնեմ: Քանի մը շաբաթ առաջ հոս մեռաւ սկիւտարցի կարգուկ երիտասարդ մը Գրիգոր Սիմեոնեան, բարակոք, եղբայր Ռամլէ (?)[67] դեղագործ Սիմեոնեանի եւ եղերաբախտ Փրոֆ. Անդր[անիկ] Կարապետեանի[68] այրիին որ հոսկէ Իտալիա մեկնած էր. մահէն վերջ եղբօրմէն նպաստ եկաւ, բայց ըղձմանտէ[69] նամակը ետ դարձաւ. գրեթէ անօթի մեռաւ խեղճը: Յարմար կը տեսնէ՞ք այդ դեղագործ եղբօրը լուր մը տալը. հանգուցելոյն գոյքերը կառավարութիւնը գրաւեց. արդէն մեծ բան մրն ալ չէին: Ձեղի միշտ անսայլայլ սիրով

Թէոդիկ

Ս. Պատրիարք Հայրը միշտ կը տեսնէք. ըսէք թէ ամիսէ մը գրքիս տպագրութիւնը կ'սկսի, եւ ես կ'ըղձամ իրմով բանալ նորէն հատորս:

***

Théotig, Poste Restante
Corfou (Grèce)

Գորֆու, 11 Ապրիլ 1925

Գերաշնորհ
Տ. Մեսրոպ Եպսկ. Նշանեան
Երուսաղէմ

Կը հաստատեմ Մարտ 13 թուակիրս, որով կարեւորը հաղորդած էի Ձեր Սրբազնութեան:

Ա. Մուրատեանը[70] 4-5 օրէ ի վեր հոս է, եւ օր չըլլար որ Միջնաբերդի վանական խուցս չայցելէ: Վաւրոում, չէնշող եւ յարաշարժ երիտասարդ մրն է. մեր կայանի «թիփ»երը ուսումնասիրելու եռեւէ եկածէն ի վեր: Շատ ախորժեցայ մեր կոզիէն. միտք ունի 2-3 ամիս կենալ: Շատ անգամ Երուսաղէմի յիշատակները կը բրբրէ ինձի, երախտագէտի զգացումները չկրնալով զսպել: Ձեզի հանդէպ. «հօրս պէս կը սիրեմ զինքը-կ'ըսէ,-չես գիտեր, Թէոդիկ, ի՛նչ մարդ է, անուշ, բարի եւ մանաւանդ ազնուական»: Եւ այս խօսքերը կ'ըսէ մէկու մը որ աւելի շատ կը ճանչնայ զՁեզ: Ուստի իր «անուշ, բարի եւ ազնուական» ածականներուն շարունակութիւնը ընել ինձ վիճակեցաւ. «... եւ անձնուէր»: Ու տեսնելու էիք իր դէմքի արտայայտութիւնը արտաբերած ածականս լսելէն վերջ գայն հաստատած ատեն: Ո՛րչափ հպարտ կ'զգամ ինքզինքս Ձեր բարեկամութիւնը վայելելուս, ո՛նչքան կը հպարտանայ հայու հոգիս երբ գաւառի գաւակ մը երկրէ երկիր կը շրջի այսպէս, հայութեան համբաւին գարկ տալով իր «բասքէլ»ով[71] ու վրձինով: Ո՛նչքան յաճախադէպ է Ձեր վրայօք խօսիլը որքանոցի պաշտօնակիցներէս Տ. Եղիշէ Քահանայ Գասպարեանի, երբեմնի աշակերտ «ժառանգաւորաց»ի, որ Ձեմէ պահած է անուշ յիշատակներ:

Ներփակ պիտի գտնէք Բաբգէն Ս[րբազան Կիւլէսէրեան]ի ուղղեալ մէկ նամակս, նաեւ Ա. Մուրատեանի նամակը՝ Չեզի ուղղեալ: Չեր Սրբազնութեանէ ի դիմաց Թէոդիկի՝ խնդրուածն է արտահանութիւնը Այվազովսքիի[72] մէկ նկարին որ դահլիճներուդ մէջ կախուած է եղեր: Լուսանկարիչ Ծերունեանը անշուշտ չի մերժեր այս յոգնութիւնը, երբ Չեր Սրբազնութիւնն ըլլայ իրեն ըսողը, եւ յետոյ իր անունն ալ անպայման պիտի դնեմ նոյն պատկերին տակ ի Տարեգոյցի իմաս: Միայն թէ դուք ալ իսկէիք, որ *ամբերի եւ յաջող* բաշէր այդ իւղաներկին պատկերը, որով պիտի շքաւորուած ըլլայ տարեգոյցիս գեղար[ուեստական] բաժինը՝ միշտ Չեր շնորհիւ:– Այդ քաշելիքէն մէկ օրինակ միայն բարի կ'ըլլաք ինձ ղրկել *չուտով*, զի տարեգոյցս կը տպուի կոր անդին՝ մէկ կողմէն, իմա՝ ՎԵՆԵՏԻ[ԻԿ]:

Աս մէկ խնդրանք:– Երկրորդն ալ՝ ինձ համար պիտու՝ դիւրին է Չեզ համար ալ:– Լուսահոգի Կ[արապետ] Գաբիկեանը քանի մը տարի առաջ Չեր ձեռագիրներու մատենադարանէն ընդօրինակած ու ինձ ղրկած էր տասնեակ մը տաղեր, որոնցմէ միայն խորագիրն է *«Խոմն ինչ քաւտագով գխարժապնտաց. տաղ Ը.»*[73]: Պոյտոյ տունէս բերել տուի հրատարակելի ձեռագիրներուս ղէզը, եւ երբ այս տաղը կարդացի, մտադրեցի անպայման դնել Տարեգոյցիս մէջ: Չեզմէ խնդրանքս է ուրեմն՝ նայիլ եւ ըսել թէ նոյն ձեռագիր տաղարանին հեղինակը, կամ, այս խորագրով գրուած տաղը ո՞ր գրիչին գործն է: Անշուշտ Կ. Գաբիկեան քանի մը տարի առաջ գրած նամակին մէջ յիշած էր հեղինակը, բայց նամակը գտնելը դժուար է:

Անձկագին սպասմամբ Չեր պատասխանին, կը մնամ

Չերդ աննայլայլ սիրով

Թէոդիկ

***

Théotig, Poste Restante
Corfou (Grèce)

Գորֆու, 21 Ապրիլ 1925

Ամենասիրելի Սրբազան Հայր,

Քրիստոս Յարեաւ ի Մեռելոց:– Չեմ գիտեր թէ ո՛րքան կը վայելէ փէրիշան դարիքի[74] մը շրթանց՝ երջանիկ մահկանացուներու շրթանց վայել այս սրբազնասուրբ բանաձեւը:

Երրորդ օրն է, մեզ, քէրքիրացւոցս համար, Զատկուան տօնին. ու ես այս հանդիսաւոր օրերուն մէջ՝ Միջնաբերդի խցիկս քաշուած՝ գլուխ կախ՝ անդուլ կ'աշխատիմ, քանզի Ս. Ղազարու տպարանի տեսուչ Հ[այր] Յակոբոս Վրդ. Քոսպիյրգեան «ձեռագի՛ր» կը պոռայ ինծի: Այսքան քնատութեան ու դատաճքի տոկամ՝ հրա՛շք իրաւ որ:

Ստացայ հաճոյքով Մարտ 31 թուակիրնիդ, ներփակ գտնելով 445 ֆր[անք]ի չէք մը՝ իբր փոխարժէք ծախուած 16 տարեգոյցներուն եւ ճառերուն: Խորին շնորհակալութիւն:

1=°. Աղաւնունի Մկրտիչ[75] Ս[րբազան]ի ո՛վ տուեր է տարեցոյց մը նուէր, խելքս չհասաւ: Ո՛չ աշխատակիցս է, եւ ո՛չ ալ բարի գտնուած է մեր Լ.[որտ] Մ[էյրոգ] Ֆրնտի[76] անգլ[իացի] տնօրէնին նամակին՝ իմ մասիս տուած պատասխանը գրած ատեն, «Թէոդիկի համար գործ չկայ յերուսաղէմ» ըսելով, ա՛յն օրերուն երբ Բաբգէն Ս[րբազան] Ամերիկայէն կը գրէր ինձ. «Պատրաստուէ՛, երուսաղէմ պիտի տանիմ զքեզ»: Ուստի կը խնդրեմ որ 30 ֆր[անք] փոխարժէքը գանձուէր յիշեալէն: Իմ արիւնս կը վազէ կոր արդէն՝ 32 տարեցոյցէս 16 միայն գանձելով՝ եւ «անյայտ»ներուն ու «անվաճառ»ներուն համար սիրտս կոտրելով:– Սիրելի Սրբազան Հայր, այս տողերը չըլլա՛յ որ գանգատի ձեւ բան մը նկատէք, այլ վերագրէիք միայն իմ սրտնեղութեանս՝ զոր պարզելով մտերիմի մը՝ ինքզինքս մասամբ սփոփած կ՚զգամ կարծես:

2=°. Կը խնդրեմ որ Ձեր քով անվաճառ գտնուած *հին* եւ *նոր տարեցոյցները* (1926ը 3ական միւսները 4ական) ամուր թուղթով եւ առասանով ծրարներու վերածել տալով՝ ուղարկէիք (registered եւ printed) տղուս հասցէին որ ահա՝.–

Mr. V. Theotig, c/o Karagheusian Esq.,
259 Fifth Ave. New York, N.Y. (U.S.A.)

Ի՛նչ որ ծախսէք նոյն ծրարներուն համար, պատրաստ եմ իսկոյն փութացնել Ձեզ փոխարժէքը փոքրիկ չէքով մը: Եղաւ ըլլալիքը, քող վնասս կատարեալ ըլլայ:– Ահագի՛ն Պաղեստինի մէջ 16 հատ միայն տարեցոյց սպառիլը կործանումը եղաւ Թէոդիկի, որ *բոլի*ին[77] համար ահագին վճարեց ի Վիեննա, Աւստր[իական] բոքատարութեան սակագինին 50% բարձրացման հետեւանօք:

3=°. Այրի Տիկ. Գաբիկեանի կարելի՞ է արդեօք լուր մը ընել որ չուշանար դրկելիքները ինձ փութացնել:

4=°. Ամմահունիի բանի մը տողնոց կենսագրութիւնը կը հաճի՞ք հաղորդել ինձ: «Մահագրութեան»ս համար է:

5=°. Ա՛լ խորհած չունիմ հող գալուս մասին: Իրենց գիտնալիք բանն է: «Իս ուզողին գերին եմ...» եւն. արեւել[եան] առածը չի՛ մոռցուիր ասանկ պարագաներու:

6=°. «Եթէ ժամանակս ներէ, կ՚աշխատիմ բան մը պատրաստել 1926ի տարեցոյցիդ համար»ով կ՚աւարտէիք նամակնիդ: Ահա՛ սիրտկոտրումս բուժող պարագայ մը: Այո՛, Սրբազան Հայր, տարեցոյցիս *բանամատակ*ին պէ՛տք է որ ձեր «հովիւ»ի «արմաւնաս»ը ընծայաբերէք, եթէ չէք ուզեր ծուռ ծգել ճիտիկը Թէոդիկին, որ իր բախտէն չա՛տ ապտակուած է արդէն: Կը բանամ այս առթիւ 20 Մարտ 1924 թուակիր նամակնիդ՝ սա տողերնիդ յուշելու համար Ձեզ. «Ձեր յանձնարարած գործն անթերի ընելու համար կը կարօտի բաւական պրպտումներու, մանաւանդ որ ամբողջութեամբ կարելի չէ կազմել Ե[րուսաղէմի պատրիարքական շրջան. անկէ բաւական օղակներ կը պակսին, եթէ ուզենք երկնցնել գայն օսմ[անեան] տիրապետութենէն առաջ»: Ահա՛ ուզածս. բանի մը օղակներու պակասով ալ գոհացող եմ, բաւ է որ կամահաճ գտնուիք այս ուշագրաւ շրջան յօրինելու եւ իբր մանեակ մարգարտեայ՝

կախելու քաանամենի Տիկին Տարեցոյցիս ճիտն ի վար: Կանխիկ շնորհակալութիւն:

7=°. Նկարիչ Աւ. Մուրատեան Ս. Տեղեաց պատկերներէն (իր քաշած) մի քանին նուիրեց Տարեցոյցիս համար.– ա) պզտիկ ծանօթութիւն մը տուէք Բեթլեհէմի վանուց մասին.[78] ինչե՞ն է Վարագայ վանուց երբեմնի վանահայր ծերունազարդ Սահակ Վրդ. ինչե՞ն է տեսուչ Խորէն Վրդ.:[79] բ) Նոյնպէս պզտիկ ծանօթութիւն մը տայիք ԴԱՒԹԻ ԲԵՐԴԻՆ[80] եւ ՅՈՎՍԷՓԻ ԱՂԲԻՒՐԻՆ[81] մասին:

Աւարտեցի խնդրանքներս. իս «հոգեղողիկ» չէք ձգեր (հէք Գաբիկեանիս սիրած բառովը): Տ. Եղիշէ Գասպարեանը տեսնելուս կը հաղորդեմ Ձեր Յ[ետ] Գ[րութեան]-ը:– Դուրեան Արք.ի նամակս յանձնուէր իրեն: Քերթուած ղրկեց ինձ, մէկի տեղ՝ 3[82]: Ողջ ըլլաք բոլորդ ալ:

Ձերդ խ[ոնարհ] ծ[առայ]

Թէոդիկ

Կը հաստատեմ Ապր. 11 թուակիրս:

***

Գորֆու, 23 Սեպտ. 1925

Գերաշնորհի
Տ. Մեսրոպ Եպս. Նշանեան
Երուսաղէմ

Օգոստ. 12 թու[ակիր] նամակնիդ շնորհակալութեամբ ստացած եմ, հանդերձ Այվազովսկիի պատկերով՝ զոր 1927ին մէջ պիտի կարենամ դնել, «գեղար[ուեստական]» բաժնիս փակման բերմամբ: Թէ ինչո՞ւ ուշ կը պատասխանեմ եւ ասանկ անճոռնի գիրով կը գրեմ սոյն թղթիկը, Բարգէն Սրբազան թող բարի ըլլայ պատճառը պարզել Ձեզ:– Ուրախ պիտի ըլլայի եթէ 7 տարեցոյցներս բրքօմանետ[83] հաճէիք յղել գաւկիս (վրան printed[84] գրել չմոռնալով) եւ ծախուած տարեցոյցին փոխարժէքը յատկացնելով առաքման ծախուց:– Ձեր «տէյի օղլան»ը[85] հոս ոչ մէկ վարկ ունի հայոց մօտ: Իմ, Յովհ[աննէս] Ասպետի[86] ու Յակոբ Օշականի[87] յորդորք ապարդիւն մնացին: Իր ծակաչք, խենէշ եւ «առաւ-փախաւ»եան նկարագրով ամէնուս աչքէն ինկած է: Մե՛ղք իր նկարչի անժխտելի կարողութեան. անպատճառ երակ մը կայ մէջը Մուամմէտէն՝ որուն մօտ 4 տարի է ապրեր...[88]: Ձեր աղօթքին կարօտ՝

Թէոդիկ

***

Théotig. B.P. 295
Nicosia (Cyprus)

Նիկոսիա, 12.1. [1926][89]

Սիրելիդ իմ Սրբազան Հայր,

Ամսոյս 4 թուակիր նամակնիդ հոս ստացայ, բազմօրեայ փոթորկալից ծովագնացութենէս վերջ եւ ախորժով կարդացի մանաւանդ այն բանկագին

գնահատութիւնը՝ զոր հաճեր էիք յայտնել նոր Տարեգոյցիս բովանդակութեանը մասին: Մեզիպէսները որոնք աւելի *խէաւխայ*[90] են քան նիւթապաշտ՝ լիուլի վարձատրուած կ'զգան ինքզինքնին, երբ ձեզիպէսներէ կը լսեն քաջալերիչ խօսքեր: Ամբողջ տարուան մր յոգնութիւնն առնել տուիք ինծի՝ կարմրադրոշմ Ձեր երկու բառերով:– Եւ որպէս զի բարոյական կորովովս սպառազէն՝ ասպարէզ իջնեմ կրկին՝ ի պատրաստութիւն 1927ի հատորիս, պիտի խնդրէի Ձեր Սիրելիութենէն՝ ձերովսանն սատարել Ձեր պատուաբեր աշխատակցութեամբ: Քանի՛ տարիէ ի վեր ստորագրութիւննիդ չ'երեւիր Տարեգոյցիս մէջ: Եթէ Ձեր գլուխին ցաւը անհանգիստ չընէ զՁեզ վերստին,– որուն համար սրտանց աղօթող եմ,– բարի եղէք շահեկան նիւթ մը որոճալու այժմէն եւ միչեւ գարուն անոր կերպ ու կերպարան տալով ինծի փութացնելու: Ամենահրատուստ Ձեր մատենաղարանին ՁԵՌԱԳՐԱՅ բաժնին մէջ արդեօ՞ք որքան գմայելի գանձեր կան արտագրելիք եւ լուսանկարուելիք՝ Ձեր կիրք ճաշակաւ, ի գարդ տարեգոյցիս: Հէ՛ք Գաբիկեանիս ո՞վ յաւագոյն փոխանորդ՝ Ձենէ զատ:– Հայրիկի անտիպ նամակին համար այժմէն ընդունեցէք իմ սրտագին շնորհակալութիւնները. կարելի՞ է արդեօք յաջորդ բղթատարով ունենալ գայն: Նմանեցայ տղու մր՝ որուն շաքար կը խոստանաս ու ... կ'ուշացնես: Շնորհակալութիւն նաեւ օրացոյցին եւ 2 լուսանկարներուն համար: Շատ յարմար պիտի ըլլար դնել Հայրիկի նամակին մէջ *Կարապետ Եզեանցի*[91] պատկերն ալ. արդեօք կարելի՞ էր հող ճարել եւ փոխ ինծի ուղարկել գայն:– Ուրախ եղայ նաեւ իմանալով որ տարեգոյցներս (3 հատը նուէր էին ձեզի, Բաբգէն [Կիւլէսէրեան] Մ[րբազան]ի եւ Ամեն[ապատիս] Մ[րբազան] Պատր[իարք] Հօր) ձեռքէ կրցեր էք հանել: Շնորհապարտ թողած կ'ըլլաք զիս, եթէ ատոնց փոխարժէքին համար չէք մը գնէք անգլ[իական] ոսկիի Լոնտոն հատուցանելի՝ եւ ինծի փութացնէիք, իյնալով ընդհ[անուր] գումարէն այն ծախքը զոր պիտի ընէք 1925ի 7 տարեգոյցներս գալիս որկելու առթիւ: Այո, յաւագոյն է գայնս ուղարկել Ն[իւ] Եօրք:

Ահա՛ իր հասցէն՝ V. Theotig
c/o Karagheusian Esq.
295 Fifth Ave.
New York, N. Y.
(U.S.A.)

Հազա՛ր ներողութիւն՝ Ձեզ առթած ձանձրոյթներուս համար, իբր թէ անգթաղ մէկն ըլլայիք:– Կրնայի՞ք ինծ ըսել թէ Այվազովսքիի նկարը (որուն reproduction[92] ստացայ) ի՞նչ տեսարան կը ներկայացնէ, այսինքն քիշէին տակ ի՞նչ գրել յարմար է՝ իբր նոյն իդուաներկին որակական կամ բացատրական:– Բարեւներս Տիար Կ. Նուրեանի՝ որ 3 տարիէ հետէ մոռցած է Տեղեկատու Դիւանը յաճախ իրեն հետ առրճ խմող ու կատակող բարեկամը:

Ամանորի սրտանց բարեմաղթութեանցս կ'ընկերացնեմ իմ կարօտագին բարեւներս ու կը պագնեմ Ձեր Ս. Աջը հիսխանոյ:

Ձերդ խոնարհ

Թէոդիկ

***

Théotig, B.P. 295
Nicosia (Cyprus)

Նիկոսիա, 15 Փետր. 1926

Սիրելի Սրբազան Հայր,

Ի ձեռին ունիմ 6 Փետր. թուակիր նամակնիդ՝ ներփակ 8-19-3 չէքին հետ: Հին եւ նոր հաշուոց կարգաղրութիւննիդ կատարելապէս ճիշդ է. խորին չնորհակալութիւն: Տարիներէ ի վեր Ձեր՝ ինձ հանդէպ շատ համակիր վերաբերումը ոչ այնքան արժանիքիս վերագրելի է, որքան Ձեր սիրոյն առ Հայ Գրականութիւն, որուն մէկ համեստ մշակն ալ կրնայ մեծ պատիւ մրն է ինձ համար: *Վանական* կեանքը չեմ ապրած՝ բառին դասական իմաստով. թէեւ իմ կենցաղս շատ հեռի չէ անոր հատարելէ, այն օրէն որ Աստուած ուզեց ամուսնական բնդհատել եւ իս ետեւ դէպ ի մենութիւն: Իմ եւ Ձեր միջեւ տարբերութիւնը մեծ չէ. դուք անգուժատ կը բուրէք, իսկ ես բորբոս սոփերաց. դուք գԱստուածածնին կը բարեբանէք, իսկ ես գԱնեահիտն ոսկիամայր[93]: Երէ տրուէր ինձ տասնամեակ մրն ալ բարդել կէս դարու կեանքիս վրայ, թերեւս աւելի հասուն գործեր կարենայի երեսաց բերել: Ափսո՛ս որ նոր միջավայրս հեռի է զիս գոհացնելէ. Գորֆուէն աւելի մեծ ամայութիւն մը շուրջպատած է զիս. պղպտող միտք մը ո՛րքան յուսախաբ կ՚ըլլայ ու կը տառապի ալ երբ մատենադարանէ գուրկ է եւ գաղափարակիցներ ալ չունի իր մօտ: Երեսնամեայ հաշուակալական կեանքս զոր քաշքշեր էի Սթանպօլ՝ ճակատագրուա՛ծ է եղեր որ շարունակուի. եւ ես ցորեկուան թիւերէս վերջ՝ պարտաւոր եմ մխրճիլ նորէն տարեցոյցիս պատրաստութեան գործին մէջ, յոգնած գլուխով եւ քունի ժամերու զեղչումով: Համակերպութիւն. արդէն ի՞նչ է եղած վերջացող տասնամեակի կեանքս, այսքան գոլումներէ ու զրկանքներէ վերջ: Բայց ի՞նչ հարկ ա՛յսքան մանրամասնութեանց. ամօթ չէ՞ միթէ ուխտեալ աշխատաւորիս՝ դժգոհիլ ներկայէն, երբ անցեալն աւելի մոայլ էր եղած, եւ մինչ ա՛յնքան ստուարաթիւ ազգակիցներ կը շարունակեն քարշ տալ իրենց մրգուզ գոյութիւնն օտար հորիզոններու տակ: Մտմտուքս հո՛ն է, Սրբազան Հայր, որ օր մը սա կաւակերտ մարմինս պիտի ամփոփուի օտար հողի տակ, եւ, մէկդի՝ քարը՝ մեռելոցի օրեր Հայր-Մեր մը գրուցող պիտի չունենամ ի վայրի դալարուոջ անդ ուր բնակեցոյց զիս նժդեհութիւն իմ դժնեայ:

** Հայրիկի անտիպ նամակն ընթերցայ մեծ հաճոյքով. մտադիր եմ գրողին եւ ստացողին պատկերները ալ դնել միասին. եզեանցիներ փնտռելու ետեւէ եմ: Երէ վանքդ ունի Հայրիկի մէկ տարբեր լուսանկարը, *փոխ* տրամադրէիք զայն ինձ այժմէն: Ռուսերէն գրքին համար գրեցի այսօր Ա[լշակ] Այպօյաճեանի, որ ինձ հաղորդէ կարեւոր բացատրականը լրացուցիչ:[94]

** «Գիշերային տեսարան՝ Խրիմի մէկ ծովեզերքը» Այվազովսքիի նկարն ալ գալ տարի պիտի դնեմ. երէ այս վերնագիր-բացատրականը չհաղորդէիք ինձ հերուրնէ, ոչինչ պիտի հասկցուէր պատկերին անուղղակի ենէն:

** Ուրախ եմ իմանալով որ տպարանդիդ գէշ աղէկ կը հոլովի Ս. Յակովբեանց կամարներուն տակ: Չարժանացա՛յ դեռ անոր նախընծայ

պտռուէն (դրուագներ Յիսուս Մանուկի Կեանքէն)[95] ճաշակել:– Հաճոյքով կրնամ ներկայացնել Ձեր տպարանին համար որպէս գրաշարապետ՝ ՄԿՐՏԻՉ ՆԱՀԱՊԵՏԵԱՆը, իր «արհեստին մէջ քաջահմուտ եւ խղճամիտ». մոմով փնտռուելիք մարդ. 10 երես շարէ՝ 10 սխալ չի սպրդեցներ, եւ արագաշարժ ալ է: 12 տարիէ ի վեր գրաշարապետն է Մելքոն Յովակիմեանի տպարանին 'ի Պոլիս: Յովակիմեանի աչքին լուսն է. եւ դժուա՛ր թէ կարելի ըլլայ խլել գինք Յովակիմեանի ձեռքէն: Ես թելադրած չըլլամ Ձեզի: Հիմա սապէս եթէ շարժիք, յուսամ՝ կ'աջողիք.– Սմբատ Եպսկ. թող իր մօտ կանչէ գինք եւ *գաղտնաբար* խօսի Մկր. Նահապետեանի, իր նոր պաշտօնին մասին յերուսաղէմ: Եթէ գինք կարենաք ըստ կարի գոհացնել, չեմ յուսար որ մերժէ: Անգա՛մ մըն ալ կրկնեմ առանց չափազանցութեան, թէ *ամբողջ ներկայ հայ գրաշարական աշխարհին մէջ այս մարդը մէկ հատիկ է*, լռիկ մնջիկ աշխատող, ծանր գլուխ եւ վարպետ: Ունի կին մը միայն, եւ կը բնակի Հասքէօյ[96]: Անդոհի օրերուն երբ կը հեռանայի Պոլսոյ ջուրերէն, իմացուցի իրեն թէ, եթէ Երուսաղէմ երթամ ու գինք կանչեմ՝ կուգա՞յ. այո՛ պատասխանեց. չգիտեմ թէ այժմու տրամադրութիւնն ի՞նչ է: Խնդիրը կը կայանայ Սմբատ Եպսկ.ի սրտագին հրաւէրին վրայ, ներկայացնելով Պաղեստինը որպէս ազատ երկիր եւն., եւն.: Մնացեալը՝ ձեր գիտնալիք բաներ:

•• Երբ մահեր պատահին հող. Յոպպէ եւն. հաճէիք հաղորդել ինձ, որ անցընեմ մահագրութեանս մէջ:

•• Օրմանեան Մ[րբազան]է 2 պատկեր ղրկած էիք ինձ, մին Աղեքսանդրիոյ ծովեզերքը՝ նաւուն վրայ քաշուած Պ[օղոս] Նուպարի[97] հետ: Ի՛նչ լաւ կ'ըլլար, եթէ կարենայիք ձեռք ձգել երջանկայիշատակ Պատրիարքէն յիշատակի թուղթ մը՝ որ քիչ շատ ազգային կամ գրական արժէք ներկայացնէ, նոյն պատկերին հետ դրուելու համար գալ տարուան հատորիս մէջ:

•• Ներփակ քարտը որ «Միջնադարեան հայ խճանկար»ի նմոյշ մըն է, ատենօք լուսահոգի Գաբիկեանը խնդրած էր ինձի որ դնեմ: Պիտի դնեմ, բայց բարի ըլլայիք բացատրական մը կցել անոր, ո՞ւր կը գտնուի ներկայիս, ո՞ր պատը կամ գետինը կը զարդարէ, լայնք ու երկայնք ո՛րքան են եւ ի՞նչ գոյներով խճանկարուած՝ շրջանակը, թռչունք ու ողկոյզը. վերեւի հայերէնը Գաբիկեան գրած է նոյն քարտին ետին՝ յուսանցքին վրայ: *Նորէն ինձ վերադարձնելիք գայն:*– Ահա շարք մը ձանձրոյթներու, որոնց իրաւաքանչիւրը պիտի հաճիք տանիլ անշուշտ ի սէր ... գրքիս *փարթախութեան*[98] որուն համար մաղթասաց էիք եղած: Կանխահայաց շնորհակալեօք, կը մնամ Ձերդ խոնարհ՝

Թէոդիկ

***

Théotig, B.P. 295
Nicosia (Cyprus)

Նիկոսիա, 14 Ապր. 1926

Սիրելի Սրբազան Հայր,

Ի ձեռին ունիմ ամսոյս 5 թուակիր նամակնիդ, իսկ գրասեղանիս վրայ՝ այն աննման հայոց պատկերը նրբանկար, որ կոչուած է տարեցոյցիս գարդը

կազմելու: Գեղարուեստէ հասկցող պաշտօնակիցներս թելադրեցին ինձ՝ ատով յօրինել 1927ի հատորիս շապիկը, յարեւմման գոյներով: Մտածեցի շատ, եւ համոզում գոյացուցի որ իսկապէս չքնաղ բան մը պիտի ըլլայ ան, թէեւ «դոիգոյոռ»[99] կաղապարում ըլլալուն՝ մեծածախս. այնպէս որ անիկա ո՛չ միայն կողքի գարդ պիտի ծառայէ, եւ այլ ձեր յօդուածին մէջ[100] hors texte[101] (*կլաստ*[102] թուղթի վրայ անջատակի): Չեզի ի՞նչ բառերով շնորհակալ ըլլամ այս գեղեցիկ անակնկալին համար՝ կը վարանիմ կը մնամ: Բաւական տարիէ ի վեր տարեցոյցներս գրկուած էին Ձեր գրութենէն. *աճիւն*[103] հանեցիք, Սրբազան Հայր, շա՛տ ապրիք: Ձեր երկար լռութենէն գէշ հետեւութիւն ալ հաներ էի, վախնալով որ նորէն Ձեր անտանելի անգարին ենթարկուած ըլլայիք. յապաղումը բարեբախտաբար Ձեր յօդուածին պատրաստութեան վերագրելի է եղեր. ուրախ եմ անշուշտ այդպէս ըլլալուն:– Եւ որովհետեւ գրողը դուք էք, հարկ կը մնա՞ր Ն[որին] Ամենասպատուութեան դատաստանն ալ լսելու՝ յօդուածնուդ հրատարակութեան համար: Ո՛րքան համեստ էք Ձեր կատարելութեանը մէջ իսկ:– Ո՛չ թէ դիտողութիւն, այլ պարզ թելադրութիւն մը միայն՝ իմ կողմէ: Յիշելու էք որ 1922ի հատորիս մէջ (էջ 221-24) նախընթաց խճանկարի արուեստին վրայ հայեացք մըն էի ձգեր անստորագիր. ատոր կը յաջորդէր (էջ 224-228) *Հայ-Պատմական Ակնարկ Մը* խորագրով յօդուած մը՝ երուսաղէմացիէ մը[104]: Արդ, ձեր աղբիւրներու թուումին շարքին՝ անպատշա՞ճ էր արդեօք վերյիշեալին ալ յիշատակումը, քանի որ միեւնոյն տարեցոյցին մէջ էր որ պիտի երեւէր Ձերը: Դարձեալ Ձեր գիտնալիք բանը: Իսկ խոնարհաբար՝ թելադրութիւն մը միայն: Գալով Օրմ[անեան] Մ[րբազան]ի գրաբար նամակին, բովանդակութիւնը ոչինչ կը ներկայացնէր՝ իբր գր[ական] պատառիկ: Անշուշտ լաւագոյնը չգտնուելուն՝ ատոր կայանք էիք տուած: Ներփակ կը վերադարձնեմ Ձեզ: Չէք վշտանար անշուշտ՝ զայն չհրատարակելուս:

•• Մ[կրտիչ] Նահապետեանի կուրծքի հիւանդութիւնը 15 տարուան պատմութիւն է: Ատկէ ննդուիլը համազօր չէ անշուշտ իր մահուան. իմ կարճ խելքովս, եթէ ինքը պատրաստակամութիւն յայտնէ Երուսաղէմ գալու՝ մեծ սխալ մը պիտի ըլլայ իր փորձ գրաշարութենէն չօգտուիլնիդ. նոյն իսկ հոդ ան կրնայ նոր գրաշար հասցնել: Ըստ իս, արդի բոլոր ողջ գրաշարներուն մէջէն՝ չկայ մէկը իրե՛ն չափ վարպետ եւ իրեն հաւասարող. իսկ արագութիւնն անմրցելի է պարզապէս: Այս յայտարարութենէս վերջ, *վրանիդ բե՞ռ* պիտի ըլլայ թէ ոչ, ձեր գիտնալիք բանը:

•• Սիրելի Սրբազան հայր, Ն[որին] Ամենապատուութիւնը թէ՛ Բաբգէն Մ[րբազան]ի բերնով եւ թէ՛ իր անձնական նամակաւ խոստացած էր շնորհել 1927ի հատորիս թէ՛ *բերքուած մը* եւ թէ *նախընթաց ամսկօրէնին վրայ յօդուած մը*[105]: Բարի եղէք անպատճառ յիշեցնել իրեն՝ խոստումը, եւ խնդրել իմ կողմէ թախանձագին, որպէսզի չմշացնէ զայնս: Իսկ եթէ իր ամենավերջին լուսանկարը ընկերացնէր ձեռագիրներուն, ուրախութիւնս չափ ու սահման պիտի չունենայ:

Ձեզ շատ սիրող ու միշտ խոնարհ՝

Թէոդիկ

***

Theotig, B.P. 295
Nicosia (Cyprus)

Նիկոսիա, 25. 5. [19]26

Սիրելի Սրբազան Հայր,

Ի ձեռին ունիմ Մայիս 13 թուակիր նամակնիդ: Խորին շնորհակալութիւն նկարիչ Պետր[ոս] Սրապեանի[106] աղջկան պէտք եղածը խօսելնուդ համար: Ո՛րչափ կը ցաւիմ ուխտի եկող այդ տիկնոջ աղջկան պատահած արկածին համար. արագ ապաքինում կը մաղթէ Էնոր՝ իր սրունքը $2^1/_2$ տարի առաջ կոտրող այս տողերը գրողը որ շատ լաւ գիտէ թէ ի՞նչ զարհուրելի այլ անցողական արկած է այդ. իզի՛ւ թէ հետը մը չմնար եւ այնպէս մեկնէին: Սրբազան հայր, կը խնդրեմ որ դուք ձեր տեղէն առանց շարժելու նամակիկ մը փութացնէք Տիկ. Ֆինոգլեանի[107], շնորհակալութիւններուս եւ մաղթանացս ալ արձագանգ ըլլալով, եւ խնդրելով իմ կողմէ որ վերստին գրէ իր ամուսնոյն այս մասին, պատկեր ու մահուան թուական *չուտ* ինձ հասցնելու համար: Ատանկ նշանաւոր հօր մը յիշատակն անշուշտ պիտի ուզէր արծարծուած տեսնել՝ որուն արժանի է արդէն հանգուցեալը (իմ երբեմնի ուսուցիչս գծագրութեան՝ ի Պէյպ[էրեան] Վարժարանի).[108] Նիկոսիոյ հասցէս ալ բող տիկինը իմացնէ՝ ի Պոլիս՝ իր ամուսնոյն:

** Կենսագրութիւնդիդ՝ *չիւչիւր*[109] արժանացանք ունենալու: Ողջ եղէք:– Ակնդէտ կը մնամ Բաբգէն Ս[րբազան]ի եւ Ն[որին] Ամենապատուութեան յօդուածոց:

** Ներփակ նամակը յանձնէիք, որքան որ ծանծրոյթ է, Պրն. Մ[իքայէլ] Շամտանճեանի[110]: Պէյրութ 5 տարեցոյցս ծախեց, չվճարած՝ հող առաւ շունչը: Չեզ տեսնեմ, Սրբազան Հայրս, յաջողցնէիք այս գործն ալ:

Չերդ միշտ խոնարհ

Թէոդիկ

***

[Բացիկ]

Նիկոսիա, 9 Օգստ. 1926

Սիրելի Սրբազան Հայր.– Չրաքեանի[111] նկարին արտահանութիւնը ստացած ըլլալս գրած էի. անկէ վերջ առի նաեւ Եզնիկ Ծ. Վ. Ներկաբարեանի[112] լուսանկարը: խորին շնորհակալութիւն: Գէշ վարժեցուցիք գիս. աղս պակսի, մաղս տախտի[113] վրանիդ կը վազեմ միշտ.– «Արեւ»էն[114] տեղեկացայ թէ Ապրիլ ...իս արկածամահ է եղեր Էրուսաղէմի մօտերը ն[աեւաւոր] հնախոյզ եւ պաղեստինապատում Հ. Գոտանս Օրֆալի (=Ուրֆալեան) փրանչիսկեանը[115]: Չեր ծանօթներուն շրջանակը շատ լայն է. սրտոր ալ պատկերը ճարէիք տարեցոյցիս համար ու ազատէիք... ձեռքէս, մահուանը թուականին հետ:– Գործս շոգեպինդ կ'ընթանայ. խնամկարին դրոշմեալ օրինակը ստացայ անցեալ շաբթու. հիանալի՛. originalէն[116] յաջող: Եթէ 2 օրինակ ըլլար. մին ձեզի պիտի ուղարկէի: Գրասեղանիս վրայ դրեր եմ որ սիրտս բացուի: (Ա՛յնքան գոցուած է որ սիրտս՝ սա անմատեան եւ հայազուրկ միջավայրիս

մէջ: Հակառակ որբերով շրջապատուած ըլլալուս՝ յաւիտենապէս մինակ կ'զգամ ինքզինքս անդրէն[ի]: Ձերդ յար յարգալիր՝

Թէոդիկ

***

[Բացիկ]

Նիկոսիա, 6 Սեպտ. 1926

Սիրելի Սրբազան Հայր.– ի ձեռին ունիմ Ձեր 28 Օգս. թուակիրը՝ Մամբրէ Եպսկ.ի[117] կենսագրութեան հետ: Շատ շնորհակալ եմ: 1908ի հատորիս մէջ գինք համառօտակի կենսագրած ըլլալով, կը տեսնեմ թէ «Վարդգէս» անուամբ գիրք մըն ալ հանած է. ստո՞յգ է: Յետոյ Զուղայեցիի կրօնաբերքին[118] աշխատակցա՞ծ է, եւ, մահուանը շարքում՝ Կաթողիկոսէն Արքութեան տիտղոս շնորհուա՞ծ է իրեն: *Այժմէն* կ'սպասեմ Պետր[ոս] Ադամեանէ[119] նկարուած իր պատկերին, նաեւ Խրիմեան Հայրիկի անտիպին: Տրուն երբ շաբար խստանան՝ չեն յետաձգեր: Եւ իր 50էն վերջ, ամէն մարդ քիչ շատ կը մանկանայ արդէն, մանաւանդ ինձ նման անհամբեր մր: Որպէս զի Մամբրէ Ս[րբազան]ի նկարչական տաղանդին մասին գաղափար մըն ալ տուած ըլլանք մեր ընթերցողներուն, լաւ չըլլա՞ր որ ձեր բնտրութեամբ կրօնական իղանեկի մը reproductionն ալ ունենամ: Մի մտահոգուիր Պրայսի[120] նամակին ազատաշունչ տողերուն համար. նոյնութեամբ ընդօրինակէիք ու դրկէիր *ժամ առաջ*[121]: «Պիտի ուզէի՞ք Խ[րիմեան] Հայրիկէն նոր անտիպ մը» տողերնիդ ինձ կը յիշեցնէ հայկ[ական] առածը. «Հա՛րս, հաց կ'ուտե՞ս»:– Հայր Օրֆալիի լուսանկարին կը մնամ ակնդէտ, զի սկսած եմ մաքուրի դնել *մահագրութիւն*[122]: Ձերդ անձայրայր սիրով՝

Թէոդիկ

Ֆոգլեանէն ձայն-ծուն չեղաւ:

***

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ[123]
ՆԻԿՈՍԻԱ (Կիպրոս)

19 Հոկտեմբեր 1926

Գերաշնորհ
Տ. Մեսրոպ Եպսկ. Նշանեան
Երուսաղէմ

Ամենա...սիրելի Սրբազան Հա՛յր.

Կը հաստատեմ Սեպտ. 22 թուակիր քարտդ: Անցեալ շաբթու շնորհակալութեամբ ստացայ վանուցդ տպարանին արմադաներ. 27ի օրացոյցը: Կենդանակերպներու պատկերներէն *կարիճն* ու *խեցգետինը* քառեր էին այս տարի իրենց սեփական բոյներուն մէջ:– Իմ կողմէս կը խնդրեմ որ թարգման ըլլայիք շնորհակալու զգացմանցս՝ Ս[րբազան] Պատրիարք Հօր մօտ, «Դրուագներ Մանուկ Յիսուսի Կեանքէն» նուէր-հատորին համար, զոր 6 ամիս առաջ ստացած էի, բայց անվերջանալի գիրերս արգելք էին եղած՝ այս տարրական պարտականութեանս կատարումին: Հիմա որ «թողէք 21րդ զառակ»ս[124] կաքէն կտրած եմ, սկսայ հաճոյքով ընթեռնուլ մարիմորդույն մանկութիւնը,

մտովի փոխադրուելով ի Ս[ուրբ] Երկիր: Մե՛ղք որ հակառակ թուրքին բանբ-րութեան ու ողորկութեան, «չամուռ»[125] տպագրութիւն մը դուրս է եկած, եւ ոսկեզօծ կողքն այժմէն ժանգոտած է: Ո՛րքան պէտք ունիք հմուտ գրաչա-բապետի մը, զոր ննդէն Պոլսէն պիտի կրնաք ճարել՝ Արշամի ջանքերով:

- - 1927ի հատորիս աշխատութիւններն ամբոկած, իբրե՛ւ թէ կը հանգչիմ հիմա, մինչ ես՝ սկիզբ տուած եմ ձանձրալի թղթակցութեանց՝ որոնց մէջ մտերմիկ տողեր չեն որ պիտի սպրդին, այլ խնդրանք եւ մատուցում: Եւրո-պական ազգերէն ո՞ր հեղինակ հայ հեղինակին պէս ստիպուած է ի՛նք ըլլալ իր խոհանոցին մատակարար, խահամոք, սպասեակ, հիւրամենծար ու հաշ-ուակալ, տաճիկ բացատրութեամբ՝ «թէճիրէտէ բիշիրիպ՝ գաբաղընտա կէ-յէն»[126], ինչ որ հերոսութեան համազօր բան մրն է:- Ահա՛ այդ եփած խորտի-կէս է որ 28 պնակ Փարիզի խոհանոցէս պիտի ստանաք, ազնուութիւնն ունե-նալով Սաղիմացի անօթիներ հրաւիրելու, որ ճաշեն անկէ, ու ցնծա՛ն: Պարզ խօսքով, 14 ծրար պիտի հասնին ձեզի, իւրաքանչիւրին մէջ 2ական գիրք: Կը հաճիք անշուշտ օրինակ մը ձեզի վար դնել, եւ Ս[րբազան] Պատրիարք Հօր ու Բարգէն Ս[րբազան]ի մի մի օրինակ ընծայել:- Սրբազան Հա՛յր, իբրեւ թէ տարտոյս սկիզբէն ի վեր ձեզի առթած ձանձրոյթներս բաւ չըլլային, ահա՛ նոր տարապարհա՛կ մրն ալ ձեզ ուսելու հարկին մէջ կը գտնուիմ անդրէն: Տեսէք ո՞րքան չարաչար կը գործածեմ իս սիրելիդ: Տէրը վարձահատոյց ընէ Ձեզ:- Իբրեւ հայրենակից, ըսեմ վիճակս, այն յոյսով որ թերեւս ուզէք կրկնապատ-կել եռանդնիդ.- թուղթի ու տպագրութեան անօրինակ սղութիւն եւ ֆր[անք]ի բաւալզոր անկում նոր փոթորիկներ յարուցին ա՛րդէն համեստ պիտճէիս մէջ, եւ հիմա կը հեծեմ ծանրածանր պարտուց տակ: Չէ՞ կարելի Երուսաղէմէն դուրս ալ, շրջակաները տարածել ձեր ցանցը՝ Տարեցոյցիս ventehիւ[127] համար նոր տեղեր ճարելու համար: Շնորհապարտ պիտի կացուցած ըլլաք զիս, եթէ նոր ապսպրանք ընելու պատեհութիւն ստեղծէք: Յառաջ Աստուած ամէնուն քով կրնամ ճերմակերես երթալ՝ հատորիս ճոխութեամբն ու շքեղութեամբը:

- - Պատկերահան Սրապեանի մասին՝ իր աղջկան մօտ Ձեր բարեխօսու-թիւնը դեռ արդիւնք մը չտուաւ: Տիկ. Ֆնտգլեան Պոլիս մեկնեցաւ ու մոռցաւ իր խոստումը: Հասցէնի՛ն ալ չեմ գիտեր, ծանօթութիւն ալ չունիմ հետերնին: Ձեր վեղարին շուքը բաւ է՝ գիրենք դարձի բերելու համար շուտով: Աչքս բանամ գոցեմ՝ տարին կը լրանայ, եւ 1928ին պատրաստութեան անձուկովը կը գրա-ւուիմ նորէն: Ո՛րքան ուրախ պիտի ըլլայի, եթէ *այժմէն* նամակ մը փակցնէիք իրենց, խնդրելով իմ կողմէս, որ հայթայթեն հանգուցեալին պատկերը, մահ-ուան թուականը, կենսագրութիւնը, նաեւ իր գործերէն մէկ քանիներուն reproductionը: Կու տաք նաեւ իմ հասցէս: Վերջին նամակնուդ մէջ կ'ըսէիք թէ 1927ի եւ 1928ի հատորներուս համար լիուլի արժեցուցած էիք ձեր աշխա-տակցութիւնը: Այս ալ երբ ընէք, գործն իր լրման կը հասնի: Շնո՛րհ...:

Ձերդ անայլայլ սիրով՝

Թէոդիկ

Յ.Գ.- Ներփակը կը հաճի՞ք Բարգէն Ս[րբազան]ի յանձնել: Նոյն

***

Théotig, B.P. 295
Nicosia (Cyprus)

Նիկոսիա, 20 Դեկտ. 1926

Սիրելիդ իմ Սրբազան Հայր,

Նոյ. 1 թուակիրիդ ա՛յսքան ուշ պատասխանելուս՝ ներողամիտ կ՚ըլլաս անշուշտ: Տարեկան հաշիւներ ժամանակս գողցան ամբողջովին: Առի օրագոյցդ ալ. շնորհ[ակալութիւն]:

Չե՞ս ըսեր, Ա[րտաշէս] Ֆնտգլեանի գրեցի այս ժամանակամիջոցին եւ նպաստաւոր պատասխան ալ ստացայ: Ամփոփ մէկ կենսագրութիւնն էր ըրեր իր աներեսիօր՝ «Միսիւ Բիէռ»ի[128], նօթերը քաղելով իր գոքանչ-մօրմէն: Ու դեռ կը խոստանար դրկել նոյն պատկերները եւս. վստահելով այս բանը հանգուցեալոյն մանչ-զաւկին: Շնորհակալութեան գիրս փութացուցի իրեն: Քեզի՛ կը պարտիմ միայն այս յաջողութիւնս, իմ անուշիկ սրբազանս, որ հիմա 1927ի հատորներուս տեղաւորման հոգովն ես գրաւուած, իբրեւ թէ ունեցած պաշտօններդ բաւ չըլլային: Չեմ գիտեր միայն թէ Նոյ. 1 թուակրիդ տողերը «որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց[129], նոյն ըղձանքով կ՚սպասեմ»... եւս. արդարացո՞ւց Տարեցոյցս, որուն սպառման համար թափած ճիգերդ եւ ունեցած անունիդ հմայքը գիտելով գիտեմ, եւ զգացածներս ալ Բաբգէն Ս[րբազան] հաղորդած էր արդէն: Ես վստահ եմ որ նոր ապսպրանք ալ ընելու առիթ պիտի ունենաս: Երբ ինձ համար բանկագին այդ առիթը ներկայանայ քեզի, յաւ կ՚ընես՝ ուղղակի գրելով տպագրիչիս, Հրաչիւ[130] (որուն հասցէն կայ տարեցոյցիս 640րդ էջին ստորոտը):

Սրբազան Հայր, ներփակ պիտի գտնես Յովդանանի գունաւոր տեսարանները: Արդեօք կարելի՞ է ունենալ նոյնին սեւ կամ սրճագոյն տպուածը: 28ի հատորիս համար անհրաժեշտ պէտք ունիմ անոր: Կը խնդրեմ որ ճար ճարակ ընես ու դրկես հատ մը, originalն ալ ինձ վերադարձնել բարեհաճելով:

Ամանորի բարեմաղթութեամբ եւ համբուրիս սուրբ աջոյդ, կը մնամ մշտանոյն սիրով՝

Թէոդիկ

Յ.Գ.– Ներփակը Ս[րբազան] Պատրիարք Հօր յանձնէիր, իր քննիծաղին ընկերացալիք նպաստաւոր պատասխանն ալ ինձ նօթելով[131]: Ի քեզ եմ յուսացեալ:

Նոյն

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Համաձայն Քորֆուէն գրուած 16 Դեկտ. 1922 թուակիր նամակին ստորագրութեան, Թէոդիկի մականունն ուղիղ ձեւն է Լապճինճեան: Զանազան աղբիւրներ գայն կը յիշատակեն տարբերակներով, որոնց վաւերականութիւնը առարկութեան դուռ կը բանայ: Այսպէս՝ Մինաս Թէօլէօլեան իր *Դար Մը Գրականութիւն* երկհատորեակին մէջ կը գործածէ Լապչինեան ձեւը, Գառնիկ Ստեփանեան իր *Կենսագրական Բառարան*ի Ա. հատորին մէջ տեղ կու տայ Լապճինեան ձեւին, մինչ *Հայկական*

Սովետական Հանրագիտարանի Դ. հատորը կ՚օգտագործէ Լաբճինճեան տարբերակը:

[2] Ակնարկութիւն *Ամէնուն Տարեցոյցի*ն հերթական համարին: Թէոդիկ եւ իր կողակիցը Արշակունի, միասնաբար, տարեգիրքը հրատարակել սկսած են 1907ին, Պոլիս: Իր հրատարակութեան 18րդ տարիէն սկսեալ, տարեգիրքը հերթաբար լոյսին ելած է Վիեննայի, Վենետիկի եւ Փարիզի հայկական տպարաններէն, քանի որ Թէոդիկ հեռացած էր Պոլսէն եւ կը վարէր թափառականի կեանք:

[3] *Սիոն* (սկզբնապէս *Սիօն*), Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան պաշտօնական հրատարակութիւնը, իբրեւ ամսաթերթ սկսած է հրատարակուիլ 1866ին, Երուսաղէմ, եւ յիսնամեայ ընդհատումէ մը ետք (1877-1927) կը շարունակէ լոյս տեսնել մինչեւ բոլորովին: *Սիոն*ի մէջ հրատարակուած են արժէքաւոր եկեղեցագիտական եւ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններ այլաբնոյր յօդուածներու եւ երբեմն նաեւ արժէքաւոր գրական ստեղծագործութիւններու կողքին:

[4] Արշակունի Թէոդիկ (Ճեզվէճեան) (1875-1922) ունեցած է յիշատակելի ազգային-հասարակական գործունէութիւն՝ իբրեւ անդամ Պոլսոյ Ազգանուէր Հայրենեաց Ընկերութեան եւ հիմնադիր Պոլսոյ Տիկնանց Միութեան: Իր առանձին հատորով հրատարակուած գործերն են *Ամիս Մը Ի Կիլիկիա* վաւերագրական փորձը (1910) եւ *Արդի Բարոյագիտութիւնը* դասագիրքը (1911):

[5] Յիշեալ երկը լոյս տեսած է 1912ին «Տիպ ու Տառ» խորագրով՝ դառնալու համար հայ տպագրութեան պատմութեան վերաբերող կարեւոր աղբիւր մը:

[6] Ըստ Տիգրան Հ. Թ. Սաւալանեանցի եւ Մեսրոպ Եպսկ. Նշանեանի, տպարանին հիմնադրութեան նախաձեռնութիւնն ու պատիւը կ՚երթան Զաքարիա Վրդ. Կոփեցիի (յետագային պատրիարք): Տակաւին 1829ին, Պոլիս, ան կը ձեռնարկէ տպարանի մը համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներու եւ 1833ին կը սկսի բանեցնել տպարանը, որուն գլուխներէն լոյսին կու գայ *Տետրակ Աղօթամատոյց Վասն Ջերմեռանդ Աղօթասիրաց Որք Անձամբ Կամ Միօր Ներկայանան Ի Տիօրինական Տեղիսն Քրիստոսի Աստուծոյ Մերոյ* գրքոյկը (տե՛ս *Պատմութիւն Երուսաղէմի*, հատոր Բ. Նշանեանի կողմէ, էջ 987-988):

[7] Եսայի Թալասցի Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը գլխաւորած է 1864-1885 թուականներուն: Ըստ Օրմանեանի, բէեւ ճկարագրով խիստ պարկեշտ եւ անբասիր, Եսայի Պատրիարքի պակասած են վարչական կարողութիւններ (տե՛ս Մաղաքիա Արք. Օրմանեան, *Ազգապատում*, Գ. հատոր, մաս Բ., Բ. տպագրութ., Պէյրութ, 1961, էջ 4199):

[8] Սմբատ Վրդ. Գազազեան (1875-1935), յետագային՝ Եպիսկոպոս, եղած է Ս. Յակոբեանց տպարանի տեսուչ, ապա Երուսաղէմի Պատրիարքութեան Պոլսոյ փոխանորդ, Պոլսոյ Պատրիարքութեան փոխանորդ, եւն.:

[9] Մաղաքիա Օրմանեան (1841-1918), հեղինակը *Ազգապատումի*, ԺԹ.-Ի. դարերու հայ եկեղեցական դէմքերու մէջ կը գրաւէ առանձնայատուկ տեղ մը իր պատմաբանասիրական ներդրումով, խնդրայարոյց դիրքորոշումներով եւ արեւմտահայութեան կեանքի բախտորոշ տարիներուն իբրեւ Պոլսոյ Հայոց Պատրիարք իր ազգային-եկեղեցական գործունէութեամբ (1896-1908):

Մեր տրամադրութեան ներքեւ ունինք պատճէնները Թէոդիկէն Օրմանեանի ուղղուած երկու նամակներու, երկուքն ալ գրուած Տէր-Ներսէսեաններու Պոլսոյ Պահճէ-Գաբու թաղի տպարան-թղթավաճառատուն-կազմատունի պաշտօնաթուղթերուն վրայ:

Առաջինը, 19 Սեպտ. 1909 թուակիր, կ՚ըսէ

«Բարձրաշնորհ Սրբազան Հայր,
Խիստ ուրախ եմ որ կը հաճիք եղեր հետաքրքրուիլ «Ամենուն Տարեցոյցը»ին հրատարակութեամբը, որուն ժամանակագրական եւ գրական բաժինները աարտած ըլլալով, պիտի սկսինք շաբթուս «Կրօնական» բաժնին: Ո՛րքան հետաքրքրական պիտի ըլլար Ձեր սրբազնութենէն ունենալ *անտիպ* գրուածք մը,- գէթ 2 էջնոց,- որպէս զի անով մուտք գործէինք նոյն բաժնին: Ապերդ կը նկատեմ ո՛րեւէ բեւադրութիւն ընել այժմէն, վստահ ըլլալով որ գրաբնութեան ապահարկ լուծէն գերծ՝ խիստ շահեկան էջեր մը պիտի հաճիք արուադրել մի քանի օրէն եւ դրկել Մխիթ[ար] Հրաչեայի [Տէր-Ներսէսեան], որուն արդէն խօսած էի այս նիւթին մասին ի մասնաւորի: Համբուրելով Ձեր Ս. Աջը, կը մնամ որդիական յարգանքով
Թէոդիկ»:
Երկրորդը, 23 Սեպտ. 1911 թուագրեալ, կ՛ըսէ.
«Բարձրաշնորհ Սրբազան Հայր
Պատիւ ունիմ այսօր կնոջս նոր երկասիրութենէն օրինակ մը Ձեր Ամենապատուութեան յղելու, եւ կը սիրեմ յուսալ որ պիտի հաճիք պահ մը բարեհաճիլ անոր էջերուն մէջ՝ շնորհելու համար յետոյ Ձեր դատաստանը՝ անոր պատրաստութեանը մասին:
«Արդի Բարոյագիտութեան» հետ պիտի ստանաք «Աբուսահլ Հայ» Ձեր գիրքը զոր մինչեւ որ յաջողեցայ առնել Տիար Վահան[Զարդարեանէ, բաւական տաղտուկ առթեցի յիշեալին իմ յաճախակի երթուդարձերովս. եւ կը կարծեմ թէ եթէ այդպէս չընէի՝ անկարելի պիտի ըլլար նոյն գիրքը վերստանալ:
Մաղթելով Ձեզ բաջողջ կեանք՝ յամրոկ ածելու համար Ձեր բանկագին տրնութեանց արդիւնքն՝ ի պատիւ Հայ Գրականութեան, կը համբուրեմ Ձեր Ս. Աջը եւ կը մնամ Ձեր Բարձր Սրբազնութեան յար յարգալիր
Թէոդիկ»:

[10] Տես ծանօթ. 5:

[11] *Ժամանակագիր Մատթէոս Ուռհայեցիի* (ԺԱ. դարու երկրորդ կէս-չորջ 1144) *Պատմութիւն* առաջին անգամ Երուսաղէմ հրատարակուած է 1869ին:

[12] Միքայէլ կամ Միխայիլ Ասորի (1126-1199), ասորի եկեղեցական պատմիչ եւ Յակոբիկեան Եկեղեցւոյ պատրիարք 1166էն: Անոր *Ժամանակագրութիւն* հայերէնի թարգմանուած է 1248ին Խաչակ Քահանայի եւ անոր աշակերտ Վարդան Պատմիչի կողմէ: Գործը Երուսաղէմ հրատարակուած է 1871ին:

[13] Յովհաննէս Ե. կաթողիկոս (897էն) Դրասխանակերտցիի (մօտ 845-925) *Պատմութիւն Հայոց*ը Երուսաղէմ հրատարակուած է 1843ին:

[14] Պատմագիր, իմաստասէր, եկեղեցական գործիչ Վարդան Պատմիչի (Վարդան Արեւելցի) (մօտ 1198-1271) *Պատմութիւն Թաթարաց* երկը Երուսաղէմ հրատարակուած է 1870ին:

[15] Մկրտիչ Վարդապետ Արծրունեանի աշխատասիրութեամբ 1859ին լոյս տեսած այս գիրքին ամբողջական խորագիրն է «Ստորագրութիւն Սրբոյ Քաղաքին Երուսաղէմի, Քննութեամբ Համառօտեալ Ի Հանճս եւ Ի Մարիմոս Պատմագրաց Ընդ Որս եւ Յաւելեալ Բազում Բանս Հանդերձ Կարեւոր Ծանօթութեամբ»:

[16] Վահրամ Բաբունի կամ Սեւլեոնցի, հեղինակը *Օծումն Լիւոն Թագաւորի* գիրքին, ԺԳ. դարու հայ յայտնի իմաստասէր եւ պետական գործիչ է:

[17] Jean Baptiste Bourguignon d'Anville (1697-1782), ֆրանսացի աշխարհագրագէտ եւ բարտէզագիր:

[18] Տեսաբան երաժիշտ, մանկավարժ եւ տպագրիչ Եղիա Տմտեսեանի (1834-1881) *Պատմութիւն Ս. Գրոց*ը լոյսին տրուած է 1867ին:

[19] Յովհաննէս Չամուռճեան կամ Տէրոյենց (1801-1888) բազմաշխատ պահպանողական ու աւանդապաշտ դէմքին այս հեղինակութիւնը լոյսին եկած է 1912ին Պրուսայի Յովհաննէս Տէրոյենց հեղինակային անունով:

[20] Թղթատարին:

[21] Պրակը:

[22] Յիշեալ աճտիպ գործը «Տաղ Սիրոյ Եւ Ուրախութեան»ն ըլլալու է, առնուած ձեռագիր «ԼԱ. Տաղարան»ի 137րդ էջէն (*Ամէնուն Տարեցոյցը*, 1914, էջ 132):

[23] Կարելի չեղաւ ճշդել ինքնութիւնը վիեննացի վարդապետին:

[24] Ակնարկութիւն Պոլսոյ բաղամասերէն Շիշլիի հայոց գերեզմանատան, ուր թաղուած են Պետրոս Դուրեան եւ շարք մը այլ անուանի հայեր:

[25] Տիգրան Ելբէճեանի (1866-1908) տապանագիրը, գոր շարադրած է Ինտրա (Տիրան Չրաքեան), ենթական կը ներկայացնէ որպէս ականավառ, գերազանց հայրենագէտ եւ հրապարակագիր (*Ամէնուն Տարեցոյցը*, 1912, էջ 58-59):

[26] Նմանաձոյլ:

[27] 1901ին Պոլիս հիմնուած Վ[ահրամ] եւ Հ[րաչ] Տէր-Ներսէսեաններու տպարանը, որ յետոյ պիտի բաներ Փարիզի մէջ եւ ուր Թէոդիկ պիտի հրատարակէր իր *Ամէնուն Տարեցոյցը*:

[28] Պէտք է ըլլայ Յովակիմեանը: Տէր-Ներսէսեան տպարանի հրկիզումէն ետք, Թէոդիկ իր տարեցոյցը հրատարակած է Մելքոն եւ Նորայր Յովակիմեաններու տպարանին մէջ, որ հիմնուած էր 1910ին:

[29] Լեւոն Ե.ի ձեռագրին լուսանկարը, որ Թէոդիկ լոյսին տուած է 1914ի տարեցոյցին 238-239րդ էջերով՝ Նշանեան Եպիսկոպոսի վերծանումով մէկտեղ, մաս կը կազմէ մեր տրամադրութեան ներքեւ գտնուող նիւթերուն:

[30] Խորէն Եպիսկոպոս Գալֆայեան (1832-1892), ծանօթ Նար-Պէյ գրչանունով, գրաղած է բանաստեղծութեամբ, թատերգութեամբ, թարգմանչական աշխատանքով եւ եկեղեցական-հասարակական գործունէութեամբ: Իբրեւ թարգմանիչ մասնակցած է Խրիմեան Հայրիկի Պերլին մեկնած պատուիրակութեան (1878): *Քնար Պանդխտին* լոյս տեսած է 1868ին:

[31] Գրամոլ:

[32] Ծանուցումով:

[33] Տուեալ գրութիւնը տեղ գտած է 1914ի տարեցոյցին 377-378 էջերուն վրայ: Սաղիմական օրացոյցին 110 էջեր գրաւող յատկացուածը Նշանեան յատկացուցած է տպարանին ութսունամեայ գործունէութեան՝ «Ակնարկ Մը Երուսաղէմի Ս. Յակոբեանց Տպարանին Վրայ» խորագրով: Թէոդիկ ներկայացած է իբրեւ «անուղղակի թելադրողը» Նշանեանի աշխատասիրութեան: Կը թուի թէ *Տիպ Ու Տառ*ին համար Թէոդիկի խնդրանքին ընդառաջելով նախնական տեղեկութիւններ ընծայելէ ետք, Նշանեան ձեռնարկած է յարաբերաբար ընդարձակ այս ուսումնասիրութեան՝ լեցնելու համար բաց մը:

[34] Տիգրան Սաւալանեանց կամ Սաւալանեան (1821-1901) հեղինակն է գրաբար *Պատմութիւն Երուսաղէմի* ծաւալուն գործին, որ կարեւոր սկզբնաղբիւր մըն է Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան անցքերուն ուսումնասիրութեան համար: 1848ին Զմիւռնիայէն յատկապէս Երուսաղէմ հրաւիրուած է պաշտօնավարելու

իբրեւ դասատու: Հետզհետէ գրաղած է տպարանով, *Միսի* ամսագրի խմբագրութեամբ, դիւանատունով, եւն., մինչեւ իր վերադարձը Զմիւռնիա 1872ին:

[35] Գրիգոր Դարանաղցի կամ Կամախեցի (1576-1643) մատենագիրին *Ժամանակագրութիւն* Երուսաղէմ հրատարակուած է 1915ին: Կը թուի թէ Թէոդիկ չէ կրցած աւելի մասին իր տարեցոյցով անդրադառնալու ծրագիրը իրականացնել... վրայ հասած ցեղասպանութեան պատճառով:

[36] Ցեղասպանական տարիներուն անկարելի ըլլալով պահպանել կանոնաւոր շարունակականութիւնը իր տարեցոյցին, Թէոդիկ հերթական տարեգիրքը լոյսին պիտի բերէր 1920ին, իբրեւ 1916-1920 միացեալ թիւ՝ գայն նուիրելով աննախընթաց նախճիրին եւ տարագրութեան:

[37] Տիգրան Չրճեան (1861-1960), ծանօթ Չիբուկի գրչանունով, եղած է մեղուաջան բանահաւաք-բանասէր մը, որուն աշխատութիւններէն շատեր կը մնան անտիպ:

[38] Թադէոս Միհրդատեանցի (1816-1873) *Համաբարբառ* պատկառելի աշխատութիւնը Թադէոս Վարդապետ Աստուածատուրեան գրական անունով լոյս տեսած է Երուսաղէմ 1895ին:

[39] Արշակունի Թէոդիկ մահացած է Լոզան, Զուիցերիա:

[40] Ակնարկութիւն Պէաթրիչէ Փորթինարիի (1266-1290), որ իտալացի հռչակաւոր բանաստեղծ Տանթէ Ալիկիէրիի (1265-1321) ներշնչման աղբիւրն էր: Տանթէ իր *Աստուածային Կատակերգութիւն* դասական գործին մէջ անմահացուցած է իր հոգին գերած իտալուհին: Հոս՝ փոխաբերաբար՝ սիրելիս:

[41] Ակնարկութիւն Ս. Յակոբ եկեղեցւոյ Ս. Գլխադիր մատուռին:

[42] Գրիգոր Շիրուանցի, որ գլխաւորած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը 1715-1749 թուականներուն, իբրեւ եզակի եկեղեցական դէմք՝ անփոխարինելի ներդրում մը ունեցած է Պաղեստինի եւ Սուրիոյ հայապատկան-եկեղեցապատկան կալուածները պարտքերէ ձերբազատելու, այլեւ ընդարձակելու մէջ: Ժողովուրդը զինք ճանչցած է իբրեւ Գրիգոր Շղթայակիր Պատրիարք այն դժուարակիր շղթային համար, զոր իր վիզէն անցուցած ու կղպած, ուխտած էր չհանել մինչեւ Ս. Աթոռին նիւթական պարտքերէ ձերբազատումը:

[43] Ակնարկութիւն բանաստեղծ եւ բանասէր Եղիշէ Պատրիարք Դուրեանի (1860-1930), որ 1909էն 1910 եղած է Պատրիարք Թուրքիոյ Հայոց, իսկ 1922էն մինչեւ մահ պաշտօնավարած է իբրեւ հայ պատրիարք Երուսաղէմի:

[44] Ակնարկութիւն Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրքի ազգայնական շարժումին, որուն անմիջական հետեւանքներէն եղան Զմիւռնիոյ հրկիզումն ու ապանդները եւ հայ մտաւորականներու, որերու եւ այլոց հեռացումը Պոլսէն՝ խուսափելու համար հակահայ նոր խժդժութիւններէ:

[45] Յունական Քորֆու կղզիի գիւղերէն Կաստուրիի մօտ կը կանգնի Աքիլէոնը, այն պալատը, որ շինուած էր Աւստրիոյ Էլիզապէթ կայսրուհիին համար եւ զոր Գերմանիոյ Վիլհելմ Բ. կայսրը (1859-1941) գնած էր 1907ին: Աքիլէոնը եղած է տարագիր հայ որբերու համար բնակարան եւ մոայլ գոյներով յիշատակուած է ժամանակակից հայ գրողներու գործերուն մէջ:

[46] Ակնարկութիւն Հայ Ազգային Խնամակալութեան, որ կազմուած էր 28 Փետրուար 1919ին միաձուլումովը Պոլսոյ մէջ անջատաբար գործող Որբախնամ Ընկերութեան եւ Տարագրելոց Ընկերութեան, որպէսզի գրաղի հայ որբերու հարցերով:

[47] Նիր Խսք Ռիլիֆ կամ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Ընկերութիւնը ամերիկացիներու նախաձեռնութեամբ կազմուած է 1918ին, միաձուլումովը Հայկական եւ Սուրիական Նպաստամատոյց Մարմիններու, Միջին Արեւելքի երկիրներու՝

Ա. Համաշխարհային Պատերազմէն տուժած կարիքաւոր բնակչութեան օգնելու նպատակով:

[48] Տես ծանօթ. 38:

[49] Մուտքի արտօնագիր ձեռք բերել:

[50] Արշակ Ալպօյաճեան (1879-1962) Թէոդիկի հետ այս նամակը ստորագրող պատմաբանն ու բանասէրը պիտի կոչուէր Եգիպտոսի հայոց առաջնորդարանի դիւանապետութեան պաշտօնին:

[51] Շարժարարքով:

[52] Ճանիկ Հայկ Չագըր կամ Չաքըր (1879-1955) «Վակոն-Լի» միջազգային ընկերութեան Եգիպտոսի եւ Պաղեստինի ընդհանուր տնօրէնը, 1924-1954 տարիներուն վարած է Գահիրէի Թեմական ժողովի ատենապետութիւնը եւ պատասխանատու դիրք զբաղեցուցած է ՀԲԸՄի Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին մէջ:

[53] Պոլսոյ 1850ականներու լուսաւորական շարժումի փայլուն դէմքերէն Նահապետ Ռուսինեանի (1819-1876) «Կիլիկիա» անունով ծանօթ հայացուած տաղէն փոխառութիւն:

[54] Արեւելք հարաւ-արեւմուտք, Յունաստանի գլխաւոր նաւահանգիստը:

[55] Յունաստան:

[56] Ակնարկութիւն Միջերկրականի յունական հինգ մեծ եւ բազմաթիւ փոքր կղզիներէ բաղկացած տարածութեան, որ ծանօթ է Յոնիական կղզիներ անունով եւ որոնց մաս կը կազմէր Քորֆուն, ուր Թէոդիկ կ՚ընկերանար հայ որբերուն:

[57] Կարապետ Գաբիկեան (1881-1925), ազգագրագէտ, բառարանագիր, պատասխանատուն Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան մատենադարանին:

[58] Ակնարկութիւն *Ամէնուն Տարեցոյցի* հրատարակութեան պատճառով այն գումարին, զոր Թէոդիկ կը պարտէր Վիեննայի Միսիթարեան Հայրերուն:

[59] «Խրիմեան Կը Խօսի» խորագրով Թէոդիկ հրատարակած է նամակ մը, ուր Խրիմեան Եպիսկոպոս պատրիարքութենէ հրաժարելէն քանի մը ամիս ետք Ներսէս Պատրիարքին ուղղելով իր խօսքը կը փորձէ ցրել անհիմն կասկածներ իր իբրեւ թէ պատրիարքական աթոռին նկատմամբ ունեցած ձգտումներուն վերաբերեալ: Նամակին թուականն է 1874 (*Ամէնուն Տարեցոյցը*, 1926, էջ 208-212):

[60] Մատթէոս Իզմիրլեան (1845-1910), Պատրիարք Թուրքիոյ Հայոց (1894-1896 եւ 1908-1909) եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց յէջմիածին (1909-1910):

[61] Ակնարկութիւն այն աշխատակցութեան, զոր Նշանեան բերած էր *Տիպ Ու Տառին*:

[62] Սիմոն Գաբամաճեան (1863-1942), բանասէր, բառարանագիր, որ 1919էն 1940 հրատարակած է *Գրպանի Տարեցոյցը*:

[63] 1925ին Սփիւռքի մէջ լոյսին կու գային զանազան տարեգիրք-տարեցոյցներ, ինչպէս Պոլսոյ Ազգային Հիւանդանոցի *Ընդարձակ Տարեցոյցը*, *Եգիպտահայ Տարեցոյցը*, *Ամերիկահայ Համրագիտակը*, *Ռումանահայ Տարեցոյցը*, *Տաթեւը*, *Գրպանի Տարեցոյցը*, *Կավոշին Տարեցոյցը*:

[64] Բարգէն Կիւլէսէրեան (1868-1936), բանասէր, խմբագիր, դաստիարակ Երուսաղէմի Ժառանգաւորաց (1924էն), Աթոռակից Կաթողիկոս (1931) Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

[65] Գրիգոր Ամմահունի կամ Էօլմէզեան (1866?-1924) արհեստով դերձակը ինքնագործացմամբ դարձած է ուսուցիչ, իր ծննդավայր Մանիսայի մէջ 1905ին հիմնած է Հայ-Ամերիկեան Վարժարանը, զոր երկու տարի ետք բողոքով անցած է Երուսաղէմ, ընդառաջելով հոն դաստիարակելու հրաւէրի մը: Հեղինակած է կարգ մը գիրքեր:

[66] Պաղեստինեան ծովեզերեայ քաղաք, արաբերէնով՝ Եաֆա, որ 1948ին ենթարկուեցաւ իսրայէլեան գրաւման եւ 1950էն սկսաւ մաս կազմել Թէլ Աւիվ-Եաֆա միացեալ քաղաքին: Յոպպէ կը գտնուի հայապատկան Ս. Նիկողայոսի վանքը:

[67] 751ին հիմնուած եւ Երուսաղէմի հիսիսը գտնուող պաղեստինեան քաղաք մը, որ 1948ին պիտի իյնար իսրայէլեան գրաւման ներքեւ: Ռամլէ իր հիմնադրութեան թուականէն մինչեւ 1099ի Խաչակրաց արշաւանքը եղած է նահանգային մայրաքաղաք: Հոն է որ 1841ին հիմնուած է Ժառանգաւորաց Վարժարանը (ապա փոխադրուած Երուսաղէմ) եւ հոն կը գտնուի հայապատկան Ս. Գէորգի վանքը:

[68] Անդրանիկ Աչըգպաշեան-Կարապետեան (1880-1922) շրջան մը Միացեալ Նահանգներ ուսուցչութեամբ զբաղելէ ետք, Սորպոնի Համալսարանին մէջ հետեւած է հոգեբանութեան եւ մանկավարժութեան դասընթացքներու: Զմիւռնիոյ աղէտի շրջանին, ան տեսուչն էր Մեսրոպեան Ագգային Վարժարանին, երբ Քեմալ Աթաթիւրքի զինուորները զինք ալ սպաննեցին ի շարս բազմաթիւ ուրիշներու: Կողակիցը՝ Տիգրանուհի Կարապետեան, նոյն շրջանին տեսչուհին էր Զմիւռնիոյ Հռիփսիմեանց Աղջկանց Վարժարանին:

[69] Յանծնարարեալ:

[70] Աւետիս Մուրատեան (1895-?) Պոլսոյ Գեղարուեստի Ուսումնարանէն շրջանաւարտ գեղանկարիչ, որ դասատուութեան առնչութեամբ յատկապէս գինուորականներու դիմանկարներ: 1921ին, սաղմոսական գուցահանդէսի ընթացքին արժանացած է առաջին մրցանակի:

[71] Ներկամատիտով:

[72] Յովհաննէս (Իւան) Այվազովսքի (1817-1900), Թէոդոսիա քաղուած հայ աշխարհածանօթ ծովանկարիչ:

[73] Յիշեալ չափածոյ ստեղծագործութիւնը տպուած է 1926ի տարեցոյցին 328րդ էջին վրայ, պարզ նշումով մը՝ թէ ան «Ձեռագիր Տաղարանի մը 8րդ յանգածոխ տողն է»:

[74] Խեղճուկրակ պանդուխտի:

[75] Սկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի (1858-1941) բանասիրական գործեր արտադրած հոգեւորականը 1905-1912 եղած է առաջնորդը Եգիպտոսի հայոց թեմին:

[76] Լորտ Մէյրզ Խանտր կամ Հայ Դաղթականաց Ֆոնտը «Օսմանեան Թուրքիոյ հայկական կոտորածներու զոհերուն նիւթական աջակցութիւն ընծայելու» նպատակով 1915ին հաստատուած անգլիական բարեսիրական հիմնադրամ մըն էր:

[77] Ծրարին:

[78] Ընդեհէմ կամ Ընդեհէմ, որ ծանօթ է իբրեւ ծննդավայր Յիսուսի, կը գտնուի Երուսաղէմի հարաւը: Հոն հայոց կը պատկանին բազմայարկ վանք մը եւ Յուստինիանոս կայսեր կառուցած Ս. Ծննդեան Եկեղեցւոյ հիւսիսային թեւը: Ուղղափառ Յոյներու եւ Կաթոլիկներու հետ հայեր ևս իրաւունք ունին Ս. Ծննդեան այրին վրայ, որուն խորանին ներքեւ կը գտնուի Քրիստոսի մսուրը, ըստ աւանդութեան:

[79] 1926ի տարեցոյցին 207րդ էջով ներկայացուած է լուսանկար մը, որուն մէջ կ'երեւին Վարագայ երբեմնի վանահայր Սահակ Վարդապետ [?] եւ Ընդեհէմի վանքի տեսուչ Խորէն Վարդապետ [Փոսթոյեան]:

[80] Ջանգուածեղ Դաւիթի Ընդը (ծանօթ նաեւ Դաւիթի Աշտարակ անունով), կը գտնուի Երուսաղէմի արեւմտակողմը, Յոպպէի դարպասին կից: Կը նշուի թէ կոնաձեւ աշտարակը կառուցուած է Ժ. դարուն, իսկ բառակուսի աշտարակին շինութիւնը ժամանակակից կը թուի ըլլալ յոյն պատմիչ Հերոդոտի: Ներկայիս ան վերածուած է Երուսաղէմի պատմութիւնը ներկայացնող թանգարանի:

[81] Այս աղբիւրին մասին տեղեկութիւն ապահովելու մեր ջանքերն անցան ի գուր:

[82] Դուրեան Պատրիարք 1926ի տարեցոյցին 205-206րդ էջերով տուած է երեք բարգմանուածոյ քերթուած, մին Վիքթոր Հիւկոյէն, իսկ մնացեալը Էմիլ Վերհարընէն:
[83] Յանձնարարեալ:
[84] Տպագրեալ:
[85] Կը խոստափինք գուշակութիւն կատարելէ ակնարկեալին ինքնութեան մասին:
[86] Արձակագիր Յովհաննէս Ասպետ (1874-1932), ծանօթ նաեւ Օննիկ Չիֆթէ-Սարաֆ անունով, Թէոդիկի հետ գտնուած է Քորֆու եւ աշխատակցած անոր տարեցոյցին:
[87] Յակոբ Օշական (1883-1948), գրադատ, արձակագիր եւ մանկավարժ:
[88] Մեզի անծանօթ կը մնայ ինքնութիւնը ակնարկեալ Մուհամմէտին:
[89] Թէոդիկ 25 տարեթիւն է գրած: 1926 պէտք է կարդալ:
[90] Գաղափարապաշտ:
[91] Կարապետ Եզեանց (1835-1905), պատմաբան, բանասէր, որ ռուսերէնով 1859ին հրատարակած է աւարտաճառ մը հին Հայաստանի ներքին կեցցաղին վերաբերող, իսկ 1898ին լոյսին տուած է, դարձեալ ռուսերէնով, ուսումնասիրութիւն մը հայ ազգին հետ Պետրոս Մեծի (1672-1725) յարաբերութիւններուն մասին: Թէոդիկ իր 1927ի տարեցոյցին մէջ իսկապէս տեղ տուած է Եզեանցի նկարին, Խրիմեան Հայրիկի 1899 թուակիր նամակին հետ (էջ 288-289):
[92] Վերատպագրութիւնը:
[93] Հայկական դիցարանի մայրութեան եւ պտղաբերութեան աստուածուհին:
[94] Ակնարկութիւն Եզեանցի աշխատութեան (տե՛ս ծանօթ. 77):
[95] Եղիշէ Պատրիարք Դուրեանի բանաստեղծական երկը, տպագրուած 1926ին, Երուսաղէմ:
[96] Պոլսոյ արուարձաններէն մին, որ յաճախ յիշատակուած է նաեւ իբրեւ Խասքէօյ:
[97] Պօղոս Նուպար (1851-1930), հիմնադիր ՀԲԸՄի եւ նախագահ Հայ Ազգային Պատուիրակութեան:
[98] Սիրուհատեսութեան:
[99] Եռագոյն:
[100] Նշանեանի «Երուսաղէմի Հայկական Խճանկարը» յօդուածը հրատարակուած է 1927ի տարեցոյցին 399-406 էջերուն վրայ:
[101] Բնագրէն դուրս, իբր «անջատակի» ներդիր:
[102] Փայլուն կամ կաւճապատ թուղթ:
[103] Լեղի, դառնահամ:
[104] Տե՛ս Յովսէփ Տէր-Վարդանեան, «Հայ Պատմական Նշմարներ» (*Ամէնուն Տարեցոյցը*, 1922, էջ 224-228):
[105] «Ակնարկ Մը Հին Հայ Բարբառներու Գոյութեան Վրայ» (*Ամէնուն Տարեցոյցը*, 1927, էջ 549-553):
[106] Դեղանկարիչ Պետրոս Սրապեան (1833-1898) եղած է նկարչութեան եւ գծագրութեան ուսուցիչ Պոլսոյ Պէրպէրեան Վարժարանին մէջ: Նկարազարդած է Պալեաններու կառուցած պալատները: Խրիմեան Կաթողիկոսի հրաւէրով Էջմիածին անցուցած երեք տարիներու ընթացքին զարդանկարած է վեհարանն ու բանգարանը: Մահացած է Սոֆիա, Պուլկարիա:
[107] Տիկին Ա[րտաշէս] Ֆնտգլեան դուստրն է նկարիչ Պետրոս Սրապեանի եւ կողակիցը բանասէր Գառնիկ Ֆնտգլեանի եղբօր՝ Արտաշէսի: Սրապեան «Հայուհին» կոչուող իր իւղանկարին մէջ պատկերած է իր տասներեքամեայ դուստրը (տեսնել՝ Թէոդիկի 1928ի տարեցոյցին 529րդ էջը):

[108] Ռեբէոս Պէրպէրեան իր մականունով ծանօթ վարժարանը Պոլսոյ Գատը Գիւղ արուարձանին մէջ հիմնած է 1876ին: Ցեղասպանական տարիներուն փակ մնալէ ետք, վարժարանը մինչեւ 1924 շարունակեր է գործել Պոլսոյ մէջ, այնուհետեւ տասը լրացուցիչ տարիներ ուսում ջամբելու համար Գահիրէ:

[109] Շնորհակալութիւն:

[110] Միքայէլ Շամտանճեան (1874-1926), եղեռնէն վերապրած եւ Լիբանան մահացած խմբագիր եւ թարգմանիչ:

[111] Խօսքը կը վերաբերի Տիրան Չրաքեանի (Իճտրա), սակայն դժուար է հաստատապէս ըսել թէ ո՞րն է խնդրոյ առարկայ նկարը: 1927ի տարեցոյցն ունի «Վայրանկար Տ[իրան] Չրաքեանի» խորագրով լուսանկար մը էջ 402ի վրայ: Պիտի արժէ նշել թէ Թէոդիկ հրատարակած է նաեւ Իճտրայի «Վերջալոյսն Ի Մարմարա» գործը, Մեսրոպ Եպս. Նշանեանի բացատրողականով, 1928ի տարեցոյցին մէջ, էջ 533:

[112] Եպսիկ Ճ. Վրդ. Ներկարարեան (1872-1927) մոկացի հոգեւորականը ի շարս զանազան պաշտօններու՝ 1909ին վարած է Աղթամարի Կաթողիկոսութեան Տեղապահութիւնը, 1914ին եղած է Առաջնորդական Փոխանորդ Վանի, ուր մասնակցած է ապրիլեան ինքնապաշտպանական կռիւներուն, ապա Կովկասի մէջ շուրջ երեք տարի ծառայած է Նիր Իսր Ռիլիֆին, եւն. (*Ամէնուն Տարեցոյցը*, 1927, էջ 623-624):

[113] Անգործածելի դառնայ:

[114] *Արեւ* օրաթերթ, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Գահիրէի պաշտօնաթերթը, որ լոյս կը տեսնէ 1915էն ի վեր:

[115] Gaudentius Orfali (Թէոդիկի մօտ՝ Gaudence) հնագէտը 1889ին ծնած է Նազարէթ (Գալիլիա) կաթոլիկ եղեսահայու մը եւ կաթոլիկ արաբուհիի մը ընտանիքին մէջ: 19 Մարտ 1909ին յարած է Ֆրանչիսկեան Կրօնաւորներու Ուխտին: 1924ին իր ջանքերով վերակազմակերպուած է Երուսաղէմի Ֆրանչիսկեան Թանգարանը: 1925ին ընտրուած է նախագահ Արեւելեան Հնախօսական Ընկերութեան: Մահկանացուն կնքած է 20 Ապրիլ 1926ին, ետին թողլով հրատարակուած եւ անտիպ աշխատութիւններ: Թէոդիկ, շատ հաւանաբար Նշանեան Եպիսկոպոսէն ստացած ըլլալով, Օրֆալի-Ուրֆալեանի մահախօսականին մէջ ընդգրկած է հատուածներ 1924ին Դուրեան Պատրիարքին ուղղուած նամակէ մը, ուր հանգուցեալը կը ներկայանայ «սիրելի Հայաստանի» մշտնջենաւորմամբ շահագրգիռ անձ, որ կ՝ուզէ ի միջի այլոց Հռոմի Պապին հոգածութեան առարկայ դարձնել հայ որբերը «դիւրադէպ միջավայրի մը մէջ» խմբելու եւ կազմակերպելու անհրաժեշտութիւնը:

[116] Բնօրինակէն:

[117] Մամբրէ Եպս. Մարկոսեան (ծն. 1835) մահացած է 12 Յունուար 1907ին, առանց ստացած ըլլալու Խրիմեան կաթողիկոսի կոնդակը, որ արքունեան տիտղոս կը շնորհէր իրեն (Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, *Ազգապատում*, Գ. հատոր, Գ. մաս, Բ. տպգր., Պէյրութ, 1961, սիւնակ 5237-5274): Նշանեան Թէոդիկի 1928ի տարեցոյցին մէջ «Նկարիչ Սրբազանը» խորագրով գրութեամբ մը անդրադարձած է անոր գեղանկարչական վաստակին (էջ 517-526):

[118] Թորոս Քահանայ Ջուղայեցիի (Թէոդոր Իսահակ) կամ Թորոս Տէր-Սահակեանի *Եկեղեցի Հայաստանեայց* կրօնական-աստուածաբանական երկշաբաթաթերթը, որ 1887-1889 Պոլիս լոյս տեսնելէ ետք շարունակուած է «Հայ Եկեղեցի» անունով, իբրեւ ամսաթերթ, Մանչեսթրը, Անգլիա, 1900-1901 տարիներուն:

[119] Պետրոս Աղամեան (1849-1891), դերասան, որ նաեւ գրաղած է գրականութեամբ ու դիմանկարչութեամբ: Կը թուի թէ յիշեալ պատկերը «Պետրոս Աղամեան (Քորրատոյի Դերով) մականունով հրատարակուածն է 1927ի տարեցոյցին 424րդ էջով:

[120] Ճէյմս Պրայս (1838-1922), անգլիացի դիւանագէտ եւ պատմաբան, որ ճանչցուած է իբրեւ հայ ժողովուրդի բարեկամ եւ համաշխարհային Ա. Պատերազմի տարիներուն փորձած է օգտակար ըլլալ հայոց եւ հայկական դատին:

[121] Հաւանաբար ակնարկութիւն Պրայսի ամուսնութեան առիթով Խրիմեան Հայրիկի շնորհաւորական գիրին, որ լոյս տեսած է 1928ի տարեցոյցին մէջ, էջ 306:

[122] Իմա՝ տարեցոյցին մահագրութիւններու բաժինը:

[123] ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովին որոշումով 2005ին հայ պատանիներու ուսում ջամբելէ դադրած այս հաստատութիւնը Կարապետ եւ Գրիգոր Մելկոնեան բարերարներու կտակով հիմնուած էր 1924ին: Հակառակ անոր որ Թէոդիկ շատ գոհ չէր հոն իր պաշտօնավարութենէն, կ'ըսէ. «...Կիպրոսի մէջ, մխիթարութիւնն ունեցայ տեսնելու հայուն դարաւոր երազին մէկ փայլուն երեսը, Մելկոնեան Կրթական Հաստատութիւնը: Հոն ապաստանած, իբր հայու տունիս մէջ, համախմբուած տեսայ շուրջս հարիւրաւոր երկսեռ որբեր՝ այլ եւս անբոյր եւ ուսումնատենչ, ուստի արծարծեցաւ մարած եռանդս» (*Ամէնուն Տարեցոյցը*, 1928, էջ 531):

[124] Ակնարկութիւն 1927ի տարեցոյցին:

[125] Ցեխոտ:

[126] Սանիին մէջ եփել, կափարիչին մէջ ուտել: Այլ խօսքով՝ ընկալեալ սովորութիւններէն կամ ընդունուած կարգերէն տարբեր եղանակով, բոշայի նման վարուիլ:

[127] Վաճառման:

[128] Պետրոս Սրապեանի մասին այս գրութեան համար տե՛ս՝ *Ամէնուն Տարեցոյցը*, 1928, էջ 528-533:

[129] Փոխառութիւն Սաղմոսէն (ԽԱ. 2):

[130] Հրաչ կամ Հրաչեայ Տէր-Ներսէսեան, Փարիզի «Մասիս» տպարանատան տէրը:

[131] Ինծի համար գրառելով:

THEOTIG, THE FATHER OF THE "PAPER CHILDREN"
(Summary)

VACHE GHAZARIAN

Theotig (1873-1928) is one of the very few renowned scholars that survived the Armenian Genocide. His scholarly reputation mainly evolves around two works: *Hushartsan Abril Dasnemegi* (Monument Of April 11), which is a collection of biographies of Armenian scholars, cultural figures, intellectuals and clerics who were massacred during the Armenian Genocide, and the 23 volumes of *Amenun Daretsuytse* (Everyone's Diary), which were published intermittently in Constantinople (1907-1920), Venice (1921-1926), and Paris (1927-1928). These volumes are considered to be primary sources of Armenology.

Vache Ghazarian publishes 24 letters of Theotig addressed to Father Mesrob Neshanian of Jerusalem (1872-1944), between October 1/14, 1911 and December 20, 1926.

These letters throw new light on the process of compiling the volumes of Diaries at a time when communication was not as easy as it is today. The letters uncover Theotig soliciting articles, even suggesting what to write about. They unfold aspects of the financial hardships and marketing difficulties of these volumes. The letters put in the limelight the sensitive Theotig, his human relationships and the grief he feels on the loss of his wife, who worked with him in the preparation of these diaries.

ՆԻՒԹԵՐ ԿՈՍՏԱՆ ՋԱՐԵԱՆԻ ՆԱՒԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ ՎԷՊԻ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Ի. դարու հայ գրականութեան պատմութեան ամէնէն աղմկայարոյց դրուագներէն մէկը կապուած է Կոստան Զարեանի Նաւը Լերան Վրայ վէպի երեւանեան հրատարակութեան[1]: Պոստրնի 1943ի առաջին տպագրութեան հետ ունեցած գաղափարական նշանակալից տարբերութիւններուն հետեւանքով, Երեւանի 1963ի հրատարակութիւնը գայթակղութեան քար դարձաւ: Կատարուած փոփոխութիւններն ու մկրատումները իրարանցումի այնքա մը բարձրացուցին Պաղ Պատերազմի մթնոլորտին մէջ, Սփիւռքի քաղաքական ուժերու արդէն չիկացած առճակատումին հերթական էջ մը աւելցնելով:

Կամաւո՞ր էր վէպին փոխակերպումը: Գաղափարախօսական հակառակ դիրքերէ հրատարակուած նոյն գործը կարելի՞ էր ընդունելի նկատել: Հեղինակին գիտակցութեամբ թէ ոչ, նման աշխատանք բարոյապէս թոյլատրելի՞ էր: Այս եւ նման հակընդդէմ հարցադրումներով բազմաթիւ յօդուածներ լոյս տեսան 1963-1964ի սփիւռքեան թէ հայրենական մամուլին մէջ, որոնց չարքին նաեւ Պօղոս Մնացեանի գոյզ տպագրութիւնները բաղդատող ու վիճարկումի ենթարկող հատորը՝ Աւազախրած Նաւը, ու վերջինիս տպաւորութեան տակ գրուած եղուարդ Պօյաճեանի 2 Նամակը[2]:

Նաւը Լերան Վրայի երեւանեան հրատարակութիւնը նախապատմութիւն մը ունի: Արդարեւ, երբ Յուլիս 1960ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. եւ Կոստան Զարեան կը հանդիպէին Քալիֆորնիոյ մէջ, վեհափառ Հայրապետը վերջինիս հրաւէր կ՛ուղղէր Հայաստան այցելելու: Նոյն օրը գրագէտը իր գաւկին՝ Իտալիա բնակող ճարտարապետ Արմէն Զարեանին (1914-1994) նամակ մը կը գրէր, չէչտելով.-

«Վերջապէս եկանք այս համաձայնութեան: Նոյեմբերին պիտի ղրկեմ Կաթողիկոսին Դիւցացներգութիւններիս Գիրքը, որ պիտի քննուի, ապա գարնան պիտի գնամ Հայաստան եւ այնտեղ կապերս վերահաստատեմ մերոնց հետ: Ասի նաեւ, որ եթէ "Նաւս" վերահրատարակեն (այստեղ սպառած է) այն ժամանակ պիտի աշխատեմ գրել երկրորդ հատորը, նուիրելով Հայաստանի շինարարութեան: Տեսնենք ինչ պիտի լինի»[3]:

Ճշտակ է, ուրեմն, որ Զարեան արդէն ի մտի ունէր Նաւը Լերան Վրայի վերահրատարակութիւնը՝ հնարաւոր չարունակութեան մը խոստումով, որ մնաց միայն բաղձանք:

1961ի գարնան, Զարեան կը ձեռնարկէր վերադարձին: «Կալիֆորնիայից մեկնեցի ապրանքատար նաւով եւ Պանամայի ջրանցքի ճանապարհով հասայ Իտալիա, ուր եւ առացայ ձեր շատ սիրելի նամակը: Վաղը մեկնում եմ

Ջվիցարիա, ուր կինս պիտի թողնեմ, վազեմ Հոմ եւ այնտեղից մեկնեմ մի ամիսով ՀԱՅԱՍՏԱՆ», *Մայիս 24ին Ճենովայէն կը գրէր Սիմոն Սիմոնեանին՝ Պէյրութ*[4]։

Արդարեւ, Զարեան եւ իր աղջիկը՝ քանդակագործուհի Նուարդ Զարեանը (1917-2005) *Յունիս 15ին Ճենովայէն մեկնելով*[5]*, Երեւան կը ժամանէին Յուլիս 6ին։ Տասը օր ետք, Հրաչեայ Գրիգորեան հիւր գրագէտին հետ հարցազրոյց մը կը վարէր Երեւանի ռատիոկայանէն*[6]*, որ Յուլիս 19ին ամբողջութեամբ լոյս տեսաւ Սովետական Հայաստան օրաթերթին մէջ, առանց ստորագրութեան։ Զարեան կը նշէր, թէ* «պէտք է այդ հայկականութեան երիտասարդ եւ կարող մասը համախմբուի նոր մեր Աբէնքի՝ Երեւանի շուրջը, ներշնչուի նրանով, իր նպաստը բերի եւ վերագտնի իր հայ ապրելու կամքը եւ թափը։ Արտասահմանի հայ երիտասարդութիւնը շուարած է, բարոյալքուած եւ փոշիացման վտանգին ենթարկուած։ Պէտք է, անհրաժեշտ է, կարեւոր է նրան կապել Մայր Հայրենիքին, նրան ծանօթացնելով մեր մշակութային արժէքների հետ եւ նաեւ այն հսկայական կարելիութիւնների հետ, որ բացուած են նրանց առաջ»[7]։ *1955ին կարճ Փօլատեանի հետ կատարուած, բայց 1960ին Յունաբերի լոյս ընծայած գրոյցին մէջ, Զարեան արդէն ընդգծած էր նմանօրինակ միտք մը՝ աւելի սուր հարցադրումով*.-

«Սփիւռքը -այդ բառը չեմ սիրում- մեծ դեր կարող է կատարել, եթէ ազատագրուի այն նախապաշարումից, որ իբր թէ իր դերն է ամէն ինչ որ Սովետական Հայաստանին է վերաբերում պէտք է քննադատի, բացասական աչքով նայի։ Հայաստանը կատարում է իր պատմական դերը, որ շատ կողմերով հիանալի, բախտորոշ, վճռական է եւ արտասահմանը պէտք է լինի նրա լրացուցիչը։ Զուտ մշակութային տեսակէտից։ Եթէ արտասահմանը չստեղծի եւ իրեն չզգայ հայութեան ամբողջական մաս՝ նա կը փոշիանայ»[8]։

Լռելեայն, առանց ստոյգ (թէեւ կռահելի) հասցէի այս քննադատութիւնը երեւանեան հարցազրոյցին մէջ կը դառնար որոշակի, երբ Զարեան Հ. Ց. Դաշնակցութեան մասին կը յայտնէր այն կարծիքը, թէ «այժմ ան դեկավարուած է հին վաճառականների եւ կեղծ մտաւորականների կողմից», *եւ կուսակցութեան կը յորդորէր, որ* «դադրի օտարին ծառայելուց իր հակասովետական գործունէութեամբ, դադրի իր երիտասարդութիւնը առաջնորդելուց հայրենիքի դէմ եւ դառնայ մշակութային կազմակերպութիւն՝ իր ներշնչումը ստանալով Մայր Հայրենիքից»[9]։

Սոյն խօսքերը հարցազրոյցը վերածեցին գայթակղութեան քարի, որուն շուրջ Սփիւռքի հակամարտ ուժերը իրենց հերթական բանակռիւը բեմադրելու ձեռնարկեցին։ Որքան որ խորհրդային ընթացիկ դարձուածաբանութեան բոյրը ունենային, անոնք բոլորովին հակառակ չէին գրագէտին այդ տարիներու մտածողութեան[10]։ 23 *Հոկտեմբերին Ճենովայէն Զուարթնոց ամսաթերթի խմբագիր Հրանդ Բալուեանին գրած նամակով, Զարեան կը նշէր*.-

«Լսում եմ որ դէպի Հայաստան արած ճամբորդութեանս ժամանակ եւ յետոյ, չարամիտ ու շահագրգռուած մարդիկ ամէն տեսակ անճիշդ լուրեր են

տարածում իմ մասին: Արդ, պարտք եմ համարում յայտարարելու, որ Հայաստանում յայտնած իմ կարծիքները ոտիոյին կամ թերթերին, մնում եմ միանգամայն վաւերական. եւ եթէ այսօր նորից պէտք լինէր կրկնելու՝ մի բառ պիտի չփոխէի»[11]:

Հայաստան իր երկամեայ կեցուբեան առաջին օրերուն, Զարեան նաւը հրատարակելու գործին ձեռնարկած էր: Նախապէս անդրադարձած ըլլալով երեւանեան տպագրութեան մանրամասնութիւններուն[12]*, հրատարակուող նորայայտ փաստաթուղթերը թոյլ կու տան աւելի եւս լուսաբանել եւ զէթ մասամբ ամբողջացնել այս թղթածրարը:*

Հաւանաբար գրագէտին Յուլիս 16ի հարցազրոյցէն եզք է, որ «Կ. Զարեանի գործերից որեւէ մէկի հրատարակման մասին եղել է վերադաս օրգանների համապատասխան որոշում», ինչպէս վկայած է Հր. Գրիգորեան՝ Հայպետհրատի տնօրէն Մխիթար Դաւթեանին ուղղած իր 10 Մարտ 1962ի դիմումին մէջ (տե՛ս Գ. բաժին): «Վերադաս օրգաններ» *բսելով պէտք է հասկնալ, անկասկած, Հայաստանի Համայնավար Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէն: Հնարաւոր է, որ հարցազրոյցը այդ հրահանգին պայմանը ըլլար: Ըստ Գրիգորեանի,* «իսկ թէ կոնկրէտ որ գործը պէտք է հրատարակել նոյն որոշմամբ[ ] այդ յանձնարարուած էր յուծել Գրողների Միութեանը եւ Պետհրատին: Իմ մասնակցութիւնը այդ գործին եղել է միայն բանաւոր կարծիք յայտնելը»:

Քանի մը օր ետք, 30 Յուլիսին, Հայաստանի Գրողներու Միութեան Առաջին Քարտուղար Էդուարդ Թոփչեան կը գրէր իր «կարծիքը» (տե՛ս Ա. բաժին), որ վէպին հրատարակութիւնը կը պայմանաւորէր էական վերամշակումի պահանջով.–

«Մեր դիտողութիւնները չեն յանգում Կ. Զարեանին միանգամից սովետական գրող դարձնելու պահանջին, այլ վերաբերում են վէպի գաղափարական եւ գեղարուեստական հիմնական վերամշակմանը ճշմարիտ, ժողովրդական հայրենասիրութեան դիրքերից, իսկ այդ աշխատանքը անհրաժեշտ է կատարել, անհրաժեշտ է նախկին վէպն օժտել գաղափարական նոր բովանդակութեամբ, փաստօրէն ստեղծել նոր երկ, եւ այդ դէպքում միայն "Նաւը լերան վրայ" վէպը արժանի կը լինի հրատարակուելու մեզ մօտ, Սովետական Հայաստանում» (*ընդգծումները մերն են - Վ.Մ.*):

Վերոբերեալ 1960ի Նամակէն կարելի է մակարերել, որ Զարեան կը փափաքէր նոյնութեամբ վերահրատարակել իր վէպը, հաւանաբար խրախուսուած՝ խրուչչեւեան «ձիւնհալ»ի իրողութենէն եւ, թերեւս, իրեն տրուած որոչ բանաւոր հաւաստիացումներէ: Այս մեկնակէտով, տրամաբանական է ենթադրել, որ «գրողը հրատարակութեան է ներկայացրել վէպի նախնական տարբերակը, բայց նրան պարտադրուել է այլ բան»[13]*, ինչպէս մեկնաբանած է Եուրի Խաչատրեան: Սակայն, առայժմ անյայտ է, թէ ի՞նչ հանգամանքներու տակ* «նրան պարտադրուել է այլ բան»:

Այդ «պարտադրանք»ը կամ, այլ տեսանկիւնէ դիտուած, «զիջումը» տեղի ունեցած է առաջին խմբագրութեան ընթացքին, որ յանձնարարուած է Գրիգորեանին, թելադրելով «այդ աշխատանքը կատարել շտապ, քանի հեղինակը Հայաստանումն էր: Ես հարկադրուած եղայ ընդհատել իմ արձակուրդը, մնալ Երեւանում Յուլիս-Օգոստոս շոգ ամիսներին եւ աշխատել հեղինակի հետ»: Նաւթի առաջին խմբագրութեան էջերէն մեր ձեռքին տակ գտնուող հատուածները այդ կը վկայեն:

Ջխճողելու համար մեր հրապարակումը, ստորեւ պիտի փորձենք համառօտակի վերլուծել այդ հատուածներուն մէջ կատարուած փոփոխութիւններուն բնոյթը: Ձեւով մը կը կրկնենք աւելի քան չորս տասնամեակ առաջ Մնացականի կատարած աշխատանքը, բայց բնականաբար այդ ժամանակ առաջին խմբագրութիւնը՝ միջանկեալ օղակը, տրամադրելի չէր: Սոյն բաղդատական աշխատանքը որոշակի չահեկանութիւն կը ներկայացնէ, քանի որ թոյլ կու տայ, առաջին խմբագրութեան յրիւ բնագրի յայտնաբերումին սպասումով, մասնակի համեմատութիւն մը կատարել: Ընտրուած հատուածներուն տեղ-տեղ պակասաւոր երեւոյթին պատճառը այն է, որ երբեմն պարբերութիւն մը կիսատ մնացած է եւ յաջորդ էջը, ուր շարունակութիւնը պէտք է գտնուէր, չկայ:

Ստորեւ նոյնութեամբ կու տանք անուանաթերթը.-

ԿՈՍՏԱՆ ՉԱՐԵԱՆ
ՆԱՒԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ
Վերամշակուած հրատարակութիւն
Հայպետհրատ - Երեւան
1961
«Խմբագրուած է
10.III.62 թ. ՀՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆ»[14]

Հետաքրքրութենէ զուրկ չէ, որ հոս արձանագրուած «վերամշակուած հրատարակութիւն» ենթավերնագիրը, չքացած է երեւանեան տպագիրէն: Ան կը յուշէ, որ Չարեան փորձած է սկիզբէն իսկ պահել օրկանական կապը առաջին հրատարակութեան հետ՝ «մշակում» կամ «վերամշակում» ձեւին տակ: Ենթավերնագրին ջնջումը, իր հերթին, կը ցոլացնէ նախկինէն արմատապէս տարբեր, անոր հետ կապ չունեցող տպագրութեան մը յատկանիշները:

Նկատելի են բառային-ոճական չարք մը փոփոխութիւններ: Շատերը կը թուին կատարուած՝ արեւմտահայերէնէն եկող բառային-քերականական ձեւերը արեւելահայերէնի «կանոնական» ձեւերուն վերածելու նպատակով: Ինչպէս պիտի տեսնենք, մերթ ընդ մերթ սկզբնագիր ձեւերը վերականգնուած են Բ. տպագրութեան պահուն: Երբեմն ալ փոփոխութիւնները միայն կատարուած են Բ. տպագրութեան մէջ: Զանոնք բրած ենք կէտադրական փոփոխութիւնները.-

ՊՈՍՏԸՆ (1943)	ԵՐԵՒԱՆ (1961)	ԵՐԵՒԱՆ (1963)
չկլտում էին (13)	*չփորտում էին* (4)	**հանուած** (7)
բլուրներով (14)	*բուլվարներով* (4)	բլուրներով (7)

ևաւամատոյցը (14)	*ևաւահանգիստը* (4)	*ևաւահանգիստը* (7)
աղտ (14)	*աղբ* (4)	աղտ (8)
լամպարները (14)	*լապտերները* (4)	լամպարները (8)
երակներով (14)	*երակներից* (4)	երակներով (8)
չըխկացնելով (24)	*չըրխկացնելով* (17)	*չրխկացնելով* (18)
կիներ (31)	կիներ (27)	*կանանց* (27)
մեր ձեռքերը համբուրում, որ իրենց վնաս չհասցնենք... (31)	մեր ձեռքերը համբուրում, *խնդրում* որ իրենց վնաս չհասցնենք... (27)	մեր ձեռքերը համբուրում, *խնդրում* որ իրենց վնաս չհասցնենք... (27)
Վիզը երկարում էր բարկացած բաղի նմանե, (32)	Վիզը երկարում էր բարկացած *բարդի*[ի] նմանե, (27)	Վիզը երկարում էր բարկացած բաղի նմանե, (27)
երերալով (32)	*երերելով* (27)	երերալով (27)
դեղինին (32)	դեղինին (27)	*դեղնին* (27)
[ոչխարները] մայում էին (69)	[ոչխարները] *բառաչում* էին (83)	[ոչխարները] *բառաչում* էին (77)
բազմութիւնով (69)	*բազմութեամբ* (83)	*բազմութեամբ* (77)
ժամ (69)	*պատարագ* (83)	*պատարագ* (77)
-- Դա յատուկ բշնամութիւն է... (166)	-- Դա, *իրաւատուկ* բշնամութիւն է... (204)	-- Դա *իրաւատուկ* բշնամութիւն է... (185)
անմար կրակ է պահում, (168)	անմար կրակ է պահում, (207)	անմար կրակ է *վառում*, (188)
-- Դա կը լինի վերջի՛ին եւ վճռական պայքա՛րը... (223)	-- *Դա է վերջի՛ին կռիւը* եւ պայքա՛րը մեր մեծ... (272)	-- *Դա է վերջին կռիւը* եւ պայքարը մեր մեծ... (242)
այնպէս (443)	այնպէս (520)	*այդպէս* (460)
կեանքի անցուդարձին (443)	կեանքի անցուդարձին (520)	կեանքի *անցուդարձերին* (461)
Ամէն մի հայ ուզում էր, որ իր ծննդավայրը (445)	Ամէն մի հայ ուզում *էր իր* ծննդավայրը (521)	Ամէն մի հայ ուզում էր, որ իր ծննդավայրը (461)
Մեզ կաշկանդեցին, մեր վրայ (445)	Մեզ կաշկանդեցին, մեր վրայ (521)	Մեզ կաշկանդեցին, մեզ վրայ (461)

Յատկանշական է մանաւանդ ոճական մէկ փոփոխութիւն («Հէրեանը նրան լսում էր զարմանքով *եւ հիացմունքով*», էջ 410. *Համմ.*՝ «Հէրեանը լսում էր նրան զարմանքով», *Պոստրն*, էջ 343), *որ չբացած է երեւանեան հրատարակութիւնէն* («Հէրեանը նրան լսում էր զարմանքով», էջ 364)։

Նշմարելի են կրճատումներու եւ զաղափարական փոփոխութիւններու ո-րոշ օրինակներ, որոնք ամբողջ վիճաբանութեան գլխաւոր հարցը եղած են.-

ՊՈՍՏԸՆ (1943)	ԵՐԵՒԱՆ (1961)	ԵՐԵՒԱՆ (1963)
-- Խօսում են թուրքական արուեստի մասին... ծիծաղելի է... (166)	հանուած (էջ 204)	-- Խօսում են թուրքական արուեստի մասին... ծիծաղելի է... (185)
ռուսերէն երգեր երգելով, առաջացաւ (223)	*ռազմաշունչ* երգեր երգելով առաջացաւ (272)	*ռազմաշունչ* երգեր երգելով առաջացաւ (242)
Զարմանալին այն էր, որ ցուցարարներից դուրս փողոցներում ուրիշ մարդ չկար: Քաղաքի բնակչութիւնը բացակայ էր: (223)	*Դռների եւ լուսամուտների առաջ ազգաբնակութիւնը կանգնած նայում էր յուզմունով:* (272)	*Դռների եւ լուսամուտների առաջ ազգաբնակչութիւնը կանգնած նայում էր յուզմունով եւ ոգեւորութեամբ: (242)*
չփացած, արհամարհանքով լցուած հարուստ երիտասարդի տպաւորութիւն էր թողնում, միևչդեռ... Բախ, Հոխիսիմէ... (343)	չփացած, արհամարհանքով լցուած հարուստ երիտասարդի տպաւորութիւն էր թողնում, միևչդեռ... Բախ, Հոխիսիմէ... (410)	*չուարած*, արհամարհանքով լցուած հարուստ երիտասարդի տպաւորութիւն էր թողնում, միևչդեռ... Բախ, Հոխիսիմէ... (364)
Կայ, Բանդումի, կայ: Անշուշտ, նոյն ռուս մեծապետականութիւնն է, որ տարածուելու համար պէտք ունի սնուելու ուրիշի մարմինների... Մի տեսակ գազանային ախորժակ, որ երբեք հանգիստ չի առնում... (440)	*Կայ Բանդումի, կայ. եկողները, նախ, մեծամասնական հայերն են, օգնական զօրքն է միայն ռուսական.* (519)	*Կայ, Բանդումի, կայ: Եկողները, նախ, մեծամասնական հայեր են, օգնական զօրքն է միայն ռուսական.* (459)

Յաւելեալ փոփոխութիւններ պիտի նկատուին հրապարակուող փաստաթուղթերուն մէջ (Բ. եւ Գ. բաժիններ), զորս նշած ենք ըստ պատշաճի:

Խմբագրութիւնը, այսպէսով, կատարուած է Զարեհանի կեցութեան ընթացքին[18]*: Գրիգորեանի վկայութեամբ, «վէպը խմբագրուած է, եւ բաւական զգալիօրէն, երկու անգամ, մէկ՝ բնագրի վրայ, մէկ՝ արդէն մեքենագրած օրինակի (...)»: Այդ օրինակները պահպանուած են խմբագրին մօտ, բայց անոնց ճակատագիրը այսօր յայտնի չէ, բացի անոնցմէ անջատուած ու հոս ադիւտակներու ձեւով ներկայացուող էջերէն: Յայտնի չէ նաեւ, թէ խմբագիր ու հեղինակ ինչ-*

պիսի փոխյարաբերութիւն մշակած են այս երկու ամիսներուն ընթացքին։ Ըստ Թորոս Թորանեանի յուշագրութեան, Զարեան ըսած կ'ըլլայ, թէ «Հրաչեայ Գրիգորեանը եկել է ինձ մօտ, որ ան մի քանի անկարեւոր սրբագրութիւն: Համաձայնուել եմ: Ու յետոյ, առանց ինձ իրազեկ պահելու, կորցրել է չափը եւ իր ուզածի նման փոփոխութիւններ մտցրել: Մնացել եմ կատարուած իրողութեան առաջ»[16]։ *Սակայն, առաջին խմբագրութեան ընթացքին, գրած է Գրիգորեան ստորեւ տպուող նամակին մէջ,* «(...) հեղինակն ինքը շատ բան արդէն ուղղել է վէպում, գրել է լրացուցիչ մի գլուխ ուր ցոյց է տուել հայ ժողովրդի դարաւոր երազանքի իրականացումը, հայ պետականութեան ստեղծումը կոմունիստների ձեռքով»։ *Այս հաստատումին հետքը կը գտնենք գրագէտին Մայիս* 1, 1964 *թուակիր օրագրային նշումին մէջ, ուր գրած է*.- «Սիլվան [*Կապուտիկեան - Վ.Մ.*], որ կարդացել է "Նաւը", ասում է արտասահմանեան հրատարակութիւնը գլուխգործոց է, եւ արած փոփոխութիւններս երկրորդի համար փչացրել են գիրքը: Կարծում եմ նա իրաւացի է»[17]։ *Ինչպէս գրած է քննադատ Դաւիթ Գասպարեանը,* «վէպի երկու տարբերակների համեմատութիւնն, ի վերջոյ, ցոյց է տալիս սահմանափակ ազատութեան եւ գաղափարական բռնութեան պայմաններում այն տարիների հայաստանաբնակ գրողների ողբերգական վիճակը: Կ. Զարեանի պարագան հաստատում է այն միտքը, թէ ինչ կարող էր լինել գրողն ազատութեան մէջ եւ ինչի՞ կարող էր վերածուել գաղափարական վերահսկողութեան պայմաններում»[18]։

Գրիգորեանի դերին մասին, Անդրանիկ Ծառուկեան կատարած է հետեւեալ նկատողութիւնը.-

«Ենիշդ է, որ Հրաչեայ Գրիգորեանը բարի պտուղ մը չէր, բայց վստահ եմ որ բոլոր խաթարումները գրքին մէջ եղած են Զարեանին կրաւորական հաւանութեամբը եւ իր կամքով: Գիրքի մը խմբագիրը Հայաստանի մէջ պաշտօնական գրաքննիչը չէ՛, ըստ որու անպատեհ (կամ... պատեհ) տողեր եւ էջեր կրնան մկրատուիլ, այլ հեղինակին տրամադրուած խորհրդական մը, որուն հետ համաձայնաբար կրնայ սրբագրութիւններ կատարել իր գործին վրայ, միշտ վերջին խօսքը մնալով հեղինակին: Խմբագիրը հաշտարար ատեանն է, գրաքննիչը (կայսիտ կոչուած) վերաքննիչ ատեանը, որուն վճիռները անբեկանելի են: Այնպէս որ, ինչ որ եղած է գիրքին մէջ, եղած է Զարեանին հաւանութեամբ, չըսելու համար մեղսակցութեամբ...»[19]։

Լիբանահայ գրագէտը նկատի ունէր Գրիգորեանի ուղղափառ կուսակցականի ճոխ անցեալը՝ ստալինեան եւ յետ-ստալինեան չրջանին (Գրողներու Միութեան Առաջին Քարտուղար, Կենտկոմի Մամուլի Բաժնի վարիչ, Շարժապատկերի նախարար, Հայ Եկեղեցւոյ Գործերու Կոմիտէի նախագահ, եւն.), ինչ որ արդէն կ'ազդարարէր, որ իր խմբագրական աշխատանքը գուտ խորհրդատուի հանգամանք չէր կրնար ունենալ, այլ՝ նախագրաքննիչի, մանաւանդ՝ Զարեի պէս գաղափարականօրէն դժուարամարս գործի մը պարագային։ Շահեկան է նշել, որ իր յառաջարանին մէջ, Գրիգորեան չեչտած է, թէ «դեռ վէպի առաջին տարբերակում հեղինակը որոշակի դրսեւորել էր իր բացասական վերաբեր-

մունքը դէպի Դաշնակցութիւնը եւ նրա արկածախնդրական տակտիկան: (...) Սուր իրոնիայով նա մերկացրել էր դաշնակցական գիւղատրականներու ու մատուցերիատների աւազակային բարքերը: (...) Հեղինակի վերաբերմունքը դէպի դաշնակցական գործիչները շատ յստակ է արտայայտուած, նա բացարձակ արհամարհական վերաբերմունք ունի նրանց հանդէպ», *եւն.*[20]:

Նման երեւոյթներ բնաւ անյարիր չէին խորհրդահայ հրատարակչական իրականութեան: Առենին, մատնանշած էինք Հրաչեայ Աճառեանի Հիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի ներածութեան մէջ յետմահու հրատարակութեամբ վերականգնուած, հեղինակին կենդանութեան օրօք «տարիներ առաջ որոշ գաղտնի գրախօսների եւ հրատարակչական վայ խմբագիրների կատարած կրճատումներն ու աւելորդ միջամտութիւնները»[21]: *Նորաչայտ փաստաթուղթերը ցոյց կու տան, որ Նաւրի պարագային ալ գաղտնի գրախօս մը, ինչպէս եւ թերեւս հրատարակչական խմբագիրներ իրենց դերը ունեցած են՝ պաշտօնական խմբագրի աշխատանքին կողքին:*

Օգոստոսի վերջերը, երբ Զարեան արդէն Երեւանէն մեկնելու վրայ էր, խմբագրուած օրինակը ամապարանօք յանձնուած է Պետհրատին: Ինչպէս գրած է Գրիգորեան, «այդ պատճառով մեքենագրուած վերջին օրինակը ես հնարաւորութիւն չունեցայ մի անգամ եւս կարդալ եւ յանձնեցի Պետհրատին, զգուշացնելով բաժնին, որ այն ես մի անգամ եւս պէտք է կարդամ, որից յետոյ կը ստորագրեմ տպագրութեան համար»:

Գրագէտը 1964ի իր օրագրին մէջ դառնութեամբ կ'արձանագրէր, թէ «ես ուզում եմ իմացում, որ "Նաւ"ի երկրորդ հրատարակութիւնը լոյս է տեսել ճնշման, խաբէութեան եւ սպառնալիքի տակ: Երկրորդ հրատարակութեան վերջին մասը բոլորովին աւելորդ է[22], ինչպէս նաեւ շատ փոփոխութիւններ վէպի ներսում: (...) Այդ շրջանին ես ապրում էի հոգեկան ճնշուած վիճակ կնոջս հիւանդութեան պատճառով եւ ոչ վէպն էր ինձ հետաքրքրում, ոչ ինչ որ անցնում էր շուրջս» *(ընդգծումը մերն է - Վ.Մ.)*[23]:

Այս փաստաթուղթերը կ'ապացուցեն, որ Զարեանի երեւանեան կեցութեան առեն խմբագրուած օրինակը 1943ի եւ 1963ի հրատարակութիւններուն միջնորդ օղակը եղած է: Ըստ Խաչատրեանի վկայութեան, «գրողի արխիւում պահպանուել է վէպի նաեւ այն մեքենագիր օրինակը, որի էջերում իրենց եղծումներն են կատարել երկու հոգի, որոնցից մէկը գրքի այսպէս կոչուած "խմբագիրն" է եղել»[24]: *Արդարեւ, Վարագ Առաքելեանի հետ Արովեան փորձը պատահական հանդիպումի մը ընթացքին, Զարեան* «հոգու խորքից եկած մի դառնակսկիծ բողոքով ասաց, որ ինքը վէպին ձեռք չի տուել, որ այդ նենգափոխութիւնը կատարել են Հրաչեայ Գրիգորեանը եւ [Յովհաննէս] Թումուգեանը»[25]: *Մեզի յայտնի չէ, թէ Թումուգեան ե՞րբ եւ ի՞նչ հանգամանքով գործակցած է Գրիգորեանի հետ, եթէ անշուշտ նման աշխատանքի ընդգրկուած չէ աւելի ուշ հանգրուանի մը:*

Իր օրագրային նշումներուն մէջ, Զարեան պիտի արձանագրէր նաեւ, թէ «այդ մարդիկ, որոնք ներկայացան իբրեւ իշխանութեան ներկայացուցիչներ,

չահագրգռուած էին մանաւանդ նիւթապէս: Պր. [Գրիգոր]եանը ստացաւ աւելի քան 2000 ռուբլի արտագրելու եւ, առանց ինձ հարցնելու, սխալ փոփոխութիւններ մտցնելու համար»[26]:

Խմբագրուած օրինակը Պետհրատին յանձնուելէ ետք, Գրիգորեանի ստորագրած պայմանագիրը «չի վաւերացուած եւ նրան համապատասխան ընթացք չի տրուած»: *Ըստ երեւոյթին,* «պայմանագիրը չի վաւերացում, այն նկատառումով, թէ դեռ չի լուծուած վէպի տպագրելու կամ չտպագրելու հարցը (...)», *գրած է ան Մարտ 1962ին:*

Այստեղ հաշուի պէտք է առնել հրատարակչատան աշխատանքի ձեւը: «Ձեռագրի ընդունման կամ մերժման հարցը վճռում էր համապատասխան բաժնի խմբագիրը: Նա ընթերցում էր ստեղծագործութիւնը եւ յայտնում իր կարծիքը: Բացի այդ նա իրաւունք ունէր ձեռագիրն ուղարկելու դրսի այս կամ այն մասնագէտին՝ համապատասխան կարծիք ստանալու համար, համաձայնեցնելով բաժնի վարիչի հետ: Դրական կարծիք ստացած ստեղծագործութիւններից կազմւում էին հրատարակչութեան ընթացիկ ու հեռանկարային պլանները»[27]: *Գեղարուեստական գրականութեան բաժնի վարիչն էր (1957-1966) բանաստեղծ Վահան Գրիգորեանը (1905-1989), որու անձնական արխիւին մէջ յայտնաբերուած են հրատարակուող փաստաթուղթերը: Հաւանական է, որ Նաւր կարդայու եւ արտաքին գրախօսութեան ուղարկելու հարցով գրաղած ըլլայ Վ. Գրիգորեանի տեղակալը՝ Վահան Դաքէսեանը*[28]*, որուն անունը չիչուած է երեւանեան տպագրութեան մէջ որպէս* «հրատարակչական խմբագիր»: *Ինչ եղած է Վ. Գրիգորեանի դերը, կը մնայ հետազօտելի: Ըստ այդ տարիներուն Վ. Գրիգորեանի պաշտօնակից, Հայպետհրատի քաղաքական գրականութեան խմբագիր Սմբատ Յովսէփեանի վկայութեան,* «նա համեստ, բանիմաց աշխատող էր: Համոզուած կարող եմ ասել, որ նրա ազնուութեան մասին ոչ ոք որեւէ բացասական բան ասել չէր կարող»[29]:

Սակայն, Նաւրի խմբագրուած օրինակը խիստ բացասական կարծիքի արժանացած էր անանուն գրախօսի մը կողմէ, 14 Հոկտեմբեր 1961ին (Բ. բաժին): Ան գրած էր, ի միջի այլոց՝

«Իր ոյժ էութեամբ՝ վէպը գրուած է բուրժուական գաղափարախօսութեան ռէակցիոն հոսանքի դիրքերից: Առհասարակ, մենք գտնում ենք տարօրինակ, երբ գեղարուեստական վէպի յատկանիշին ունեցող հեղինակն անցեալում քանիցս[30] հրապարակուած երկը փորձում է "վերամշակել" իբր թէ հակառակ ծայրից: Դա անհնարին է, անթոյլատրելի եւ վնասակար մեր գործի համար: Եթէ հեղինակը վերանայում է իր անցած ուղին, ապա պարտաւոր է գրել "Կեանքը յերաև վրայ" եւ ոչ թէ սովետական գրական անդաստան մտնել շուռ տուած կոստիւմով, մի կոստիւմ, որի մաշուած եւ ծուէն-ծուէն եղած բեկերը փտել են վաղուց» (*ընդգծումները մերն են - Վ.Մ.*):

Այս գրախօսականին հետ կը հրատարակենք ձեռագիր դիտողութիւններու էջ մը, որ նոյն հեղինակին գործը ըլլալ կը թուի: Այդ հեղինակը, ըստ վարկածի մը, Արտաշէս Կարինեանը կրնայ ըլլալ[31]*: Կարինեան (1886-1982)՝ 1920-30ական-*

ներու խորհրդահայ գաղափարա-քաղաքական աւագանիի ամէնէն երեւելի դէմքերէն մէկը, 1960-1963ին Գիտութիւններու Ակադեմիայի Հասարակական Գիտութիւններու ակադեմիկոս-քարտուղար էր, այսինքն, երբեմնի ամենազօր գիտական հաստատութեան այդ կալուածի թիւ 1 անձնաւորութիւնը։ Պատահական պէտք չէ նկատել, որ գրախօսականը հինգ ամսուան փակուղիի մը մատնած էր վէպին հրատարակութիւնը, ինչ որ պէտք է վերագրել ո՛չ միայն անոր կուտակած բացասական անդրադարձներուն, այլեւ գրախօսին պաշտօնական կշիռին։

Որոշ անուղղակի տուեալներ, մեր կարծիքով, կրնան հաւանականութիւն ընծայել այս ենթադրութեան։ Օրինակ, երբ Հ. Գրիգորեան կը գրէ, թէ անանուն գրախօսը «միանգամայն աչքաթող է արել Կ. Զարեանի քաղաքական հայեացքների այսօրուայ էվոլիւցիան եւ մօտեցել է նրան, ինչպէս եւ նրա գործին քսանական թուականների ակնոցներով, այդ պատճառով էլ նրա հետեւութիւնները սխալ են ու անընդունելի» (Գ. բաժին. ընդգծումը մերն է - Վ.Մ.), կրնայ ակնարկել թէ՛ գաղափարախօսական բովանդակութեան եւ թէ՛ գրախօսին հինաւուրց հայեացքներուն։ Բնորոշ է, նաեւ, որ գրախօսը «քաղաքնունիական» կ՛որակէ Զարեանի վէպը իր «խորհրդահայ» նոր տեսքով։ 1924ին Հայաստան վերադարձած Յովհաննէս Քաջազնունիին ստալինեան մաքրագործումներուն գոհը դարձած էր 1938ին եւ հաւանական է ենթադրել, որ խորհրդահայ մտաւորականութիւնը 1920-1930ականներէն ետք առիթը չէր ունեցած կարդալու անոր Հ. Ց. Դաշնակցութիւնը Անելիք Ջունի Այրեւս գրքոյկը։ Այսուհանդերձ, մինչեւ որ ուղղակի փաստեր հրապարակ չհլլեն, այս գրախօսականին «հայրութիւնը» կարելի չէ անվերապահ կարինեանին վերագրել։

Ով ալ ըլլայ հեղինակը, գրութեան դիւաւոր արժանիքը այն է, որ անոր բագում մէջբերումներէն կարելի է վերականգնել - գոնէ մասամբ - վէպի առաջին հրատարակութեան կրած նախնական փոփոխութիւններն ու կրճատումները եւ հետեւիլ բուն տպագրութիւնը կանխող մկրատումներու երկրորդ չարքին ծննդոցին։ Անոր լրացուցիչ են թէ՛ Հ. Գրիգորեանի «Մի քանի դիտողութիւններ»ը եւ թէ՛ անոր կից ներկայացուած քանի մը անկապակից էջերը, որոնք կը պատկանին 1961ի՝ Զարեանի մասնակցութեամբ Հ. Գրիգորեանի առաջին խմբագրութեան (Գ. բաժին)։

Հ. Գրիգորեանի բողոքի նամակին ու հակաճառութեան յաջորդեց երեք ամսուան նոր սպասում մը։ Իր պնդումը, թէ՝ «(...) աւելի մեծ փոփոխութիւններ վէպի մէջ չի՛ կարելի մտցնել, եւ ընդհատակայարմար էլ չէ՛, որովհետեւ ոչ ոք չի հաւատայ թէ տասնեակ տարիներ բուրժուական մտայնութիւն ունեցող ծերունի մտաւորականը մի օրից մի օր կարող էր այնպէս վերափոխուել, որ մարքսիստական մտածողութեամբ վէպ գրէր» (Գ. բաժին), մնաց անտեսուած։ Ըստ երեւոյթին, «վերադաս օրգանների» տնօրինումը տարբեր բնոյթի էր, թերեւս կապուած՝ գաղափարախօսական ուղղութեան ինչ-ինչ փոփոխութիւններու հետ։ 1961ին ՀՀԿի կեդր. կոմիտէի Բ. քարտուղար նշանակուած էր Յովհաննէս Բադդասարեանը, որու հովանաւորեալն էր նոյն տարին նշանակ-

ուած Հայպետհրատի նոր տնօրէնը՝ Մ. Դաւթեանը[32]։ Յունիս 1962ին Դաւթեան կը վճռէր, որ վէպը «լրացուցիչ խմբագրման» կարիք ունէր։ Իր որոշումը ընդհանրապէս նկատի առած էր անանուն գրախօսականին առաջարկները (Դ. բաժին)։-

- «Անհրաժեշտ է որեւէ ձեւով ցոյց տալ, որ այդ տարիներին հայ ժողովրդի ողբերգական վիճակը հետեւանք էր Դաշնակցութեան արկածախնդրական եւ աղէտաբեր քաղաքականութեան».

- «Լրացուցիչ աշխատանք կատարել Սարդարապատի ճակատամարտի եւ Մայիսեան ապստամբութեան (...) շարժումների ժողովրդային բնոյթը ընդգծելու համար».

- «Վերախմբագրել (...) ազգային ոգու կամ ազգային ու ցեղային բացառիկութեան ամէն մի դրսեւորում. փոքր ժողովուրդների ազգային ոգու հակադրումը մեծ ժողովուրդներին, ինչպէս եւ ազգամիջեան ատելութեան ամէն մի արտայայտութիւն (...), միստիկականութեան խտացրած արտայայտութիւնները (...), հայ ժողովրդի պատմական անցեալի իդէալականացման արտայայտութիւնները»։- «Աւելի յստակ դրսեւորել հեղինակի կամ նրա դրական հերոսների վերաբերմունքը դէպի բոլշեւիկները», եւն.։

Լրացուցիչ խմբագրումը կատարուած է Յունիս 1962ի եւ Յունուար 1963ի միջեւ (արտադրութեան յանձնուելու պահը, ըստ հատորի տեղեկութեան)։ Այդ խմբագրումին ընթացքին, վէպը առած է իր ա՛յժմու «երեւանեան» տեսքը, որ պատճառ դարձած է գայթակղութեան։ Յարդ այս երկրորդ հանգրուանին հանգամանքները պարզող որեւէ փաստաթուղթ չունինք։ Այսպէս, յայտնի չէ տակաւին, թէ 1962ի ամրան Հայաստան այցելող Զարեհը որքա՞ն մասնակցած է անոր։ Թանօթ է, սակայն, Փարիզի Աչխարհ չարաթաթերթի խմբագիր Աւետիս Այիքանեանին կատարած իր յայտարարութիւնը.-

«Գիտեմ, որ արտասահմանում մեծ հետաքրքրութեամբ սպասում են այս վերամշակուած հրատարակութեանը։ Վէպի ընթերցումից կը պարզուի Հէրեանի պատգամը դրսի հայ ժողովրդին, դա է՝ միաձուլուել Հայաստանի հայութեան հետ, մասնակցել նրա նոր կեանքի կառուցման ճիգերին»[33]։

Տեղին է ճշդել Զարեհանի կենսագրութեան յամեցող թիւրիմացութիւններէն մէկը՝ ներգաղթի թուականը։ Արդարեւ, տեղեկատու աղբիւրները 1961[34] կամ 1962[35] թուականները կը նշեն։ 1962ին Զարեհան կրկին Հայաստան էր «pէ այցելու, pէ մնայուն» հանգամանքով, ինչպէս յայտնած է Մուշեղ Իչխանին[36], ինչ որ թերեւս պատճառ եղած ըլլայ, որ Զարեհ Մելքոնեան նչէր, թէ վերադարձը եղած է «տարին վեց ամիս արտասահման անցընելու պայմանով»[37]։ Ան վերջնականօրէն ներգաղթած է Արմէն Զարեհանի ու իր ընտանիքին հետ 15 Յունիս 1963ին, ինչպէս նչուած է Իտալիայէն ներգաղթողներու ցուցակին մէջ[38]։

Վէպը տպագրութեան ստորագրուած է 27 Յուլիս 1963ին, ու ադմուկի հանգրուանէն ետք, իր հայաստանեան եզակի վերատպումով[39] մնացած է «ներքին սպառման ապրանք» (Շահան Շահնուր)[40], «գերազանցապէս գրական, աւելի շուտ խմբագրական մի ձախող, ձախորդ երեւոյթ» (Գուրգէն Մահա-

րի)[41], «խորհրդայնացած բոլոր բաներուն պէս խորհուրդէ պայպուած առարկայ մը» (*Մնապեան*)[42], «վէպի մը մէջ գործուած գաղափարական ընդարձակ ցեղասպանութիւն մը» (*Պօյաճեան*)[43]։

1964ի իր օրագրութեան մէջ, Զարեան կը գրէր՝

«Ես անշուշտ, պիտի նկարագրեմ մանրամասնօրէն անց ու դարձերը, բայց սրանով ուզում եմ իմանաս, որ իմ գրած վէպը այն է, ինչ որ տպուած է արտասահմանում (շատ աննշան փոփոխութիւններով) եւ իմ մահից յետոյ, երբ արտատպեն, բոդ միանգամայն անտեսեն երկրորդ հրատարակութիւնը»[44]։

Արդեօք Զարեան յաջողա՞ծ է յուշեր գրելու իր խոստումը կատարել։ Ինչ ալ ըլլայ այս հարցումին պատասխանը, հաւանաբար ժամանակը հասած է, որ ինչպէս Սփիւռքի (Թեհրան, 1982, Անթիլիաս, 2002), նաեւ Հայաստանի մէջ գործադրուի հեղինակին կամքը եւ Նաւր Լերան Վրայ վէպը վերատպուի ըստ առաջին տպագրութեան, «աննշան փոփոխութիւններով» (ցեղուական, կը կարծենք), եթէ անոնց հեղինակային հիմքը յայտնաբերուի կամ, ծայրաչեղ պարագային, երեւանեան հրատարակութեան հետ բաղդատականը կատարուի։

Վերջին հաշուով, Զարեանի գրելաձեւին մէջ լեզուական վրէպները քիչ չեն, ինչպէս անանուն գրախօսականը նշած է (իսկ երեւանեան տպագրութեան ընթացքին՝ երբեմն սրբագրուած)։ Շահեկան է նշել, որ Զարեանի Երկհատորին խմբագիրը՝ Մնապեան, իր «Սրբագրական Նոթեր»ուն մէջ դիտել տուած է, որ օրինակներով լիշուած լեզուական վրէպները սրբագրուած են, «մնկնակէտ ունենալով այս անգամ հեղինակին Նաւր Լերան Վրայ վէպին մէջ գործածուած ճիշդ ձեւերը»[45]։ Նոյն սկզբունքով, երեւանեան հրատարակութիւնը կրնայ հիմք դառնալ՝ այդ վրէպներու սրբագրութեամբ, Նաւր Լերան Վրայի անխաթար վերադարձի մը։

* * *

Այսու մեր պարտքն է խորին շնորհակալութիւն յայտնել Վահան Գրիգորեանի դստեր՝ Նուարդ Գրիգորեանին, որ հեռակայ ծանօթանալով Զարեանին նուիրուած մեր աշխատանքներուն, 2004ի ամրան անակնկալ ու ինքնաբուխ կերպով մեր տրամադրութեան տակ դրած էր այս արժէքաւոր նիւթերը, գրականագիտուհի Սիրանոյշ Դվոյեանի միջոցաւ[46]։

Հրատարակուող փաստաթուղթերը կ՚օգնեն գէթ մասամբ վերականգնելու երեւանեան Նաւրի հրատարակութեան ոդիսականը։ Անոնք, բացի նշուած պարագաներէն, մեքենագիր օրինակներ են եւ սկզբնագիր։ Ոմանք նոյնիսկ համարակալում ունին։ Ամէն պարագայի, ծանօթ չէ, թէ ի՞նչ պայմաններու տակ յայտնուած են Վահան Գրիգորեանի արխիւին մէջ։

Բնագիրները հրատարակութեան պատրաստած ենք նոյնութեամբ, բացառելով ուղղագրութեան վերածումը դասականի, ինչպէս եւ որոշ յատուկ անուններու գլխագիրերուն վերականգնումը, որոնք լռելեայն կատարուած են։ Խմբագրական բնոյթի բոլոր լրացումները նշուած են սուրանկիւն փակագիծերու մէջ։ Գոհացած ենք բնագրագիտական նուազագոյն ծանօթագրութիւննե-

բով եւ խուսափած՝ մեկնաբանական նկատողութիւններէ, զորս կը թողունք ընթերցողին։

Ցոյս ունինք, որ անհատական արխիւներու մէջ պահուած ըլլան լրացուցիչ նիւթեր, քանի որ պետական դիւաններու մէջ կատարուած մեր որոնումները որեւէ արդիւնք չտուին։ Հրաչեայ Գրիգորեանի անձնական թողօնը, պահպանուած ըլլալու պարագային, բանալի դեր պիտի կատարէ, առանց անտեսելու, բնականաբար, Կոստան Զարեանի արխիւը, որ ներկայիս մատչելի չէ հետազօտողներուն։ Կը սպասենք, նաեւ, որ մօտիկ ապագային դէպքերուն ժամանակակից ոեւէ անձնաւորութիւն որոշէ թուղթին յանձնել իր յուշերը եւ վաւերական տուեալներով լրացնել մեր գիտելիքները խորհրդահայ գրահրատարակչութեան այս վիճայարոյց դրուագին մասին։

Ա.

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ՎԷՊԸ

«Նաւը լերան վրայ». այսպէս է վերնագրուած Ամերիկայում ապրող ճշանաւոր հայ գրող Կոստան Զարեանի վէպը, որը յոյս է տեսել 1943 թուականին։

«Այս վէպը բուն իմաստով պատմական վէպ չէ,-- գրում է հեղինակը,-- այլ պատմութիւնը մի քանի հայ հոգիների, որոնց վիճակուած էր ապրել մեր ազգային կեանքի ամենաբախտորոշ շրջաններից մէկում»։ Վէպում նկարագրուող ժամանակաշրջանը՝ 1918-1920 թուականներն իսկապէս բախտորոշ ժամանակաշրջան էր մեր պատմութեան մէջ։ Դաշնակ արկածախնդիրների կործանարար քաղաքականութեան հետեւանքով հայ ժողովուրդը ենթարկուած էր քաղցի, սովամահութեան ու ֆիզիկական բնաջնջման։ այդ տարիներին որոշւում էր հայ ժողովրդի գոյութեան հարցը, նրա ապրելու եւ յարատեւելու պատմական հեռանկարի հարցը։ Ճիշդ է հեղինակի այն հաւաստումը, որ վէպը պատմական վէպ չէ. առելին, մեր կարծիքով այն նոյնիսկ վէպ չէ սովորական առումով, այլ իրատեսակ փիլիսոփայութիւն ժողովրդի ճակատագրի վերաբերեալ՝ յենուած բախտորոշ մի ժամանակաշրջանի իրադարձութիւնների վրայ։

Մինչեւ վէպի քննութեանն անցնելը անհրաժեշտ է նշել, որ մենք յաճախ քննադատել ենք Կ. Զարեանին՝ դաշնակցութեան հետ ունեցած գաղափարական կապերի համար, նացիոնալիստական գաղափարախօսութեան համար, որն արտայայտուել է նաեւ այս վէպում՝ հայ ցեղի, հայ ազգի բացառիկութեան քարոզով։ Հետեւաբար, վէպի վերահրատարակութեան հարցը մեզ մօտ կարող է դրուել միայն այն դէպքում, երբ հեղինակը վերամշակելով վէպը, կը մաքրի այն, մեզ համար անընդունելի կոնցեպցիայից։

Ո՞րն է վէպի արժանիքը։

Կ. Զարեանը ճշմարտացի եւ ցայտուն գոյներով պատկերել է ժողովրդի սոսկալի վիճակը. քաղցը, սովամահութիւնը, կամայականութիւնը դաշնակցութեան տխրահռչակ տիրապետութեան շրջանում։ Անընդհատ պատերազմները եւ ազգամիջեան կռիւները հիւծել, քայքայել էին ժողովրդին եւ տնտեսապէս եւ բարոյապէս։ Եւրոպական եւ ամերիկեան խոստումներով կործանման

գնացող երկրի մի շարք բնորոշ գծերը հանդէս են եկել Կ. Զարեանի վէպում: Բայց գրողի խօսքը մնում է կիսատ: Այն հարցին, թէ ովքեր էին պատասխանատու այդ ոճրագործութեան համար, Կ. Զարեանն ուղղակի պատասխան չի տալիս:

Ստացւում է այն տպաւորութիւնը, որ երկիրն այդ ողբերգական վիճակին էր հասել ոչ թէ դաշնակցականների աղէտաբեր քաղաքականութեան հետեւանքով, այլ այն պատճառով, որ ռուսական զօրքերը ճահճացրեցին Արեւմտեան Հայաստանից, որ եւրոպական պետութիւնները չկատարեցին իրենց խոստումները, կամ որ դաշնակցականները չունէին հեռատես քաղաքագէտներ:

Այս եւ նման միամիտ պատճառաբանութիւնները փաստօրէն դաշնակներին ազատում են հայ ժողովրդի նկատմամբ գործած ոճրագործութեան պատասխանատուութիւնից: Գրողի այս դիրքաւորումը մեզ համար, մեր ժողովրդի համար չի կարող ընդունելի լինել: Հայ ժողովուրդը չի մոռացել դաշնակցականների ոճրագործութիւնը, իսկ մեզ մօտ հրատարակուող գրքի մէջ չի կարող չարտայայտուել ժողովրդի հայեացքը պատմական այդ ժամանակաշրջանի եւ դաշնակների կործանաբար քաղաքականութեան վերաբերեալ: Չեռնարկելով վէպի վերամշակմանը, Կ. Զարեանը առաջին հերթին պէտք է վերականգնի պատմական այդ ճշմարտութիւնը:

Վէպի հիմնական սիժէտային գիծը Սեւ ծովից մինչեւ Քանաքեռի բարձունքը նաւը մեծ դժուարութիւններով փոխադրելու պատմութիւնը սիմվոլիկ նշանակութիւն ունի: Այն փոխաբերական իմաստով արտայայտում է հայ ինքնուրոյն պետականութիւն ստեղծելու դժուարին ուղին: Դաշնակցականները չկարողացան նաւը հասցնել Սեւան: Այդ գործը շարունակեցին կոմունիստները: Քաղաքական այս եզրակացութիւնը կատարուած է արտաքին փաստի վրայ, իսկ կոմունիստների ու դաշնակցականների քաղաքականութեան արմատական տարբերութիւնը Կ. Զարեանն անտեսում է: Նա չի տեսնում, որ դաշնակցականների քաղաքականութիւնը հայ ժողովրդին հասցրեց ֆիզիկական բնաջնջման, եւ հայ ժողովուրդը կեանքի կոչուեց, կանգնեց ժողովուրդների բարեկամութեան ու սոցիալիզմի ուղու վրայ միայն սովետական կարգերի շնորհիւ:

Եթէ տասնամեակներ առաջ Կ. Զարեանը չէր հասկանում կամ չէր ուզում հասկանալ հայ ժողովրդի կեանքում տեղի ունեցած վիթխարի յեղաշրջումը, ապա այժմ այդ իրողութեան անտեսումը գրողի համար կարող է աղէտաբեր լինել:

«Նաւը լերան վրայ» վէպում հանդէս են գալիս նաեւ կոմունիստներ, բայց շատ աղօտ գծերով, յաճախ էլ աղճատուած կերպարանքով: Այդ տարիների մի շարք դժբախտութիւնների համար Կ. Զարեանը պատասխանատու է դարձնում կոմունիստներին, ինչպէս օրինակ Ղարսի անկման համար, կամ բացասական գոյներով է ներկայացնում մայիսեան հերոսական ապստամբութիւնը եւ այլն: Կ. Զարեանը չի ցանկանում տեսնել կոմունիստների կատարած հերոսական գործունէութիւնը հայ ժողովրդի լուսաւոր ապագայի հա-

մար եւ կրկնում է դաշնակների յօրինած զրպարտութիւնները կոմունիստների հասցէին: Իսկ եթէ Կ. Զարեանը ցանկանում է իմանալ, թէ ովքե՞ր էին մեղաւոր Ղարսի անկման համար, թող դիմի պատմական փաստաթղթերին, թող կարդայ բէկուզ նախկին նշանաւոր դաշնակցական Շահան Նաթալիի գիրքը Ալեքսանդրապոլի դաշնագրի մասին[47], որտեղ հեղինակը անհերքելի փաստերով ցոյց է տալիս դաշնակների մի շարք դաւաճանական արարքները եւ Ղարսի յանձնումը թուրքերին: Կ. Զարեանի վէպում նոյնքան անհեթեթ է հնչում նաեւ քեմալականների նոյնացումը բոլշեւիկների հետ: Յայտնի է, որ Սովետական Ռուսաստանն օգնում էր քեմալականներին՝ իմպերիալիզմի դէմ մղուող պայքարում, բայց դա ոչ մի հիմք չի տալիս նոյնացնելու կոմունիստներին եւ քեմալականներին, ինչպէս վարուել է Կ. Զարեանը:

Պատմական վէպ չէ «Նաւը լերան վրայ» երկը, սակայն այդ չի նշանակում, որ ոչ պատմական երկի մէջ կարելի է կամայականօրէն տեղադրել պատմական դէմքերը: Վէպից այն տպաւորութիւնն է ստացւում, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից յետոյ է տեղի ունեցել Սարդարաբադի նշանաւոր ճակատամարտը՝ թուրք բռնակալների դէմ եւ իբր թէ այդ ճակատամարտն էլ գլխաւորել են դաշնակները: Սարդարաբադի ճակատամարտի եւ տարին եւ ամիսը յայտնի է: Յայտնի է նաեւ այն, որ այն եղել է ճշմարիտ, համաժողովրդական պայքար բռնակալների, պայքար, որ կազմակերպուել է հակառակ դաշնակցականների կամքի: Այս բանում համոզուելու համար բաւական է թերթել այդ օրերի դաշնակցական մամուլը, որ բար լուութիւն է պահպանել ժողովրդական կռուի նկատմամբ:

Իր ընդարձակ վէպում Կ. Զարեանը տարբեր առիթներով անդրադառնում է հայ գիւղացիութեան նկարագրին, ստեղծում է երբեմն ճշմարիտ պատկերներ,— ինչպէս ամուսինը կորցրած գեղջկուհու զայրոյթը դաշնակ կառավարութեան դէմ եւ այլն: Բայց հեղինակը գիւղացիներին մեծ մասամբ ներկայացնում է որպէս կրօնավախ, բթացած ու սարսափահար մի զանգուած: Չկայ յարգանք դէպի գիւղացիները, դէպի աշխատանքի մարդը: Այդ միտումը Կ. Զարեանն ըստ երեւոյթին ժառանգել է Շանթից եւ Ահարոնեանից, իսկ հակառակ այս գրողների, հայ ժողովրդի հետ կապուած իսկական արուեստագէտները՝ Աբովեանից մինչեւ Թումանեան եւ Խաչակեան, ջերմ հիացմունքով են վերաբերուել շահագործուող եւ խաւարի մէջ տառապող աշխատաւոր գիւղացուն:

Մեր գաղափարախօսութեան դիրքերից միանգամայն անընդունելի են վէպում սփռուած առանձին վիրաւորական գնահատականները մեր եղբայրական ժողովուրդների՝ ռուսների, վրացիների, աղրբեջանցիների հասցէին: Եթէ հեղինակն ըմբռնի այդ բարեկամութեան նշանակութիւնը եւ այդ տեսակէտից վերանայի պատմական իրադարձութիւնները, անկասկած նա կը հասնի աւելի ճիշդ ու մեզ համար ընդունելի եզրակացութիւնների:

Այժմ մի քանի խօսք վէպի գեղարուեստական առանձնայատկութիւնների, կերպարների, կառուցուածքի եւ լեզուի մասին: Մենք նշեցինք, որ վէպի սիւժետային հիմքը Սեւ ծովից դէպի Սեւան տարուող նաւի պատմութիւնն է:

Այդ ծանր գործը կատարում է սեւծովեան կապիտան Հէրեանը, որը եւ վէպի գլխաւոր կերպարն է: Լսելով, որ Հայաստանում ստեղծուել է հայ պետականութիւն, Հէրեանը որոշում է գնալ Հայաստան եւ օգտակար լինել ժողովրդին: Վէպում նկարագրուող յետագայ բոլոր դէպքերը վերարտադրում են Հէրեանի առնչութեամբ, նրա ըմբռնումներով: Սակայն մասնակից կամ ականատես լինելով բազմաթիւ կարեւոր իրադարձութիւնների, Հէրեանն իր էութեամբ չի փոխւում, չի փոխւում նրա հոգեբանութիւնը, նա մնում է նոյն վերացական ու միամիտ հայրենասէրը, որ ճակատագրական դէպքերին վերաբերում է աննհասկանալի անտարբերութեամբ: Աւելին. Հէրեանը երբեմն հանդէս է գալիս որպէս խորաթափանց փիլիսոփայ, երբեմն էլ շատ սահմանափակ, ուղղակի անհասկացող մարդ: Կերպարի նման մեկնաբանութիւնը ճիշդ չէ ոչ գաղափարական, ոչ էլ հոգեբանական տեսակէտից: Բայց այդ մի ամբողջ կոնցեպցիա է հեղինակի համար՝ կոնկրետացած տարբեր կերպարների մէջ: Նոյն կոյր հայրենասիրութիւնն արտայայտւում է գարական նախկին սպաներ՝ Թումանեանի եւ Բաբկէն Միրաքեանի կերպարներում, որոնք նոյնպէս եկել են Ռուսաստանից հայրենիքին ծառայելու համար, բայց նրանք էլ Հէրեանի նման անտարբեր են ողբերգական իրադարձութիւնների նկատմամբ: Եւ հենց այդ պատճառով նրանց կերպարները չեն զարգանում, նրանց հայրենասիրութիւնը չի համոզում ընթերցողին: Իսկ եթէ այդ մարդիկ իսկական հայրենասէրներ էին, ապա նրանք պէտք է գնային դէպի ժողովուրդը, պէտք է հասկանային ժողովրդին եւ նրա ատելութեամբ վարակուէին դաշնակների ոճրագործութիւնների հանդէպ եւ ոչ թէ կործանուէին մենակութեան մէջ, ինչպէս կործանուեցին Թումանեանն ու Միրաքեանը: Կապիտան Հէրեանը յաճախ խորհրդաստ դատողութիւններ է անում, բայց գործում է որպէս տհաս պատանի: Դաշնակների փետրուարեան արկածախնդրութեան օրերին Հէրեանի նման մարդը չէր կարող քաղաքականապէս չդիրքաւորուել կամ կոմունիստների, կամ դաշնակցականների հետ, իսկ եթէ նա իսկական հայրենասէր էր, պէտք է գնար կոմունիստների հետ,-- այսպիսին է նրա կերպարի ներքին տրամաբանութիւնը: Բայց այդ վճռական օրերին Հէրեանը գբաղում է ինչ-որ անհեթեթ արկածախնդրութեամբ եւ քաղաք է վերադառնում այն ժամանակ, երբ դաշնակները ջախջախում են:

Հէրեանի կերպարի ճիշդ մեկնաբանութիւնը կ՝ամբողջացնի եւ կ՝աւարտի վէպը: Իսկ ներկայ վիճակում գաղափարական եւ գեղարուեստական տեսակէտից վէպը մնում է անաւարտ: Այդ անաւարտութեան տագնապը զգացում է վէպի վերջին էջերում, երբ հեղինակն անհանգստութեամբ կրկնում է. «Ուր գնալ, ընկեր Հայաստան, ո՞ւր...»[48]: Այդ ճանապարհը Հայաստանը գտել էր, որը միաժամանակ բոլոր ճշմարիտ հայրենասէրների ճանապարհն էր:

Վէպում հանդէս են գալիս նաեւ բազմաթիւ այլ կերպարներ, մեծ մասամբ մտաւորականներ, որոնք խօսում են, փիլիսոփայում, դատում աշխարհի եւ մարդկանց մասին, երբեմն ինքնատիպ, յաճախ շատ ձգձգուած, բայց այդ դատողութիւնների մէջ բացակայում է ճշմարիտ շահագրգռութիւնը երկրի նկատմամբ: Սակայն, յայտնի է, որ այդպիսին չէր հայ մտաւորականութիւնը,

որ նրա լաւագոյն մասը ապրում եւ կռւում էր ժողովրդի հետ մարդկային իսկական կեանքի համար: Այստեղ էլ գաղափարական սխալ դիրքաւորումը հեղինակին զրկել է իրական եւ լիարիւն կերպարներ ստեղծելու հնարաւորութիւնից: Իսկ նրա կերպարների երկարաշունչ դատողութիւնները մեծ չափով ծանրաբեռնել են, ձգձգել վէպը:

Իր գեղարուեստական ցայտուն մտածողութեան շնորհիւ Կ. Զարեանը դարձել է ինքնատիպ արուեստագէտ: Սակայն երկար ժամանակ կտրուած լինելով մայրենի գրականութիւնից եւ լեզուից, նա մոռացել է խօսակցական լեզուն եւ կենդանի խօսքը նրա վէպում շատ արհեստական է հնչում, որն անհրաժեշտ է դարձնել աւելի բնական, մանաւանդ, որ նրա լեզուական մշակոյթը ընդհանուր առմամբ գեղեցիկ է եւ պատկերաւոր:

Մեր դիտողութիւնները չեն յանգում Կ. Զարեանին միանգամից սովետական գրող դարձնելու պահանջին, այլ վերաբերում են վէպի գաղափարական եւ գեղարուեստական հիմնական վերամշակմանը ճշմարիտ, ժողովրդական հայրենասիրութեան դիրքերից, իսկ այդ աշխատանքն անհրաժեշտ է կատարել, անհրաժեշտ է նախկին վէպն օժտել գաղափարական նոր բովանդակութեամբ, փաստօրէն ստեղծել նոր երկ, եւ այդ դէպքում միայն «Նաւը լերան վրայ» վէպը արժանի կը լինի հրատարակուելու մեզ մօտ, Սովետական Հայաստանում:

Ցանկալի է նաեւ, որ վէպի վերամշակումը աւարտելուց յետոյ հեղինակը գրի յառաջաբան եւ բացատրի իր կատարած աշխատանքի (վերամշակման) անհրաժեշտութիւնը:

Է.Դ. ԹՈՓՉԵԱՆ [ստորագրութիւն]

30.VII.61

Բ.

ԿԱՐԾԻՔ

«Նաւը լերան վրայ» վէպի մասին

«Նաւ»-ը հայ ժողովուրդն է, որն ապրել ու գործել է պատմա-աշխարհագրական աննպաստ հանգամանքներում: Այդ պայմաններից է բխել նրա «ճառագայթող» երազը՝ ունենալ անկախ, ազգային պետականութիւն, որը նպաստի «էն գլխից» դասական հայութեան գօրաւոր հանճարի ծաղկմանը: Այս նպատակն է հետապնդել հեղինակը տուեալ վէպում:

Իր ողջ էութեամբ՝ վէպը գրուած է բուրժուական գաղափարախօսութեան ոչակցիոն հոսանքի դիրքերից: Առհասարակ, մենք գտնում ենք տարօրինակ, երբ գեղարուեստական վէպի յատկութիւն ունեցող հեղինակն անցեալում քանիցս հրապարակուած երկը փորձում է «վերամշակել» իբր թէ հակառակ ծայրից: Դա անհնարին է, անթոյլատրելի եւ վնասակար մեր գործի համար: Եթէ հեղինակը վերանայում է իր անցած ուղին, ապա պարտաւոր է գրել «Կեանքը լերան վրայ» եւ ոչ թէ սովետական գրական անդաստան մտնել շուռ

տուած կոստիւմով, մի կոստիւմ, որի մաշուած եւ ծուէն-ծուէն եղած թելերը փտել են վաղուց:

Նշենք, որ վէպի ֆոնը Դաշնակցութեան տիրապետութեան անփառունակ ժամանակաշրջանն է: Սիա վէպի գլխաւոր հերոս, կապիտան Արա Հէրեանը մտնում է եկեղեցի, ուր «ժամերգութիւնը պարզ, յուզիչ ժողովրդական ձեւ էր առել»[49]: Ի զարմանս ընթերցողի, արարողութեանը մասնակցում են նաեւ ոչխարները, որոնց բառաչով հաւատացեալների սրտերի անմեղութիւնն է արտայայտւում (էջ 83)[50]: Այստեղ մարդիկ,-- երէ հաւատանք հեղինակին,-- համակուած են խոր, լուսաւոր զգացումներով, նրանց աչքերը հաւատով լի են, իսկ դէմքերին փայլումն [sic] է պայծառ ժպիտը: «Կարծես ամէնքի սրտի մէջ ներկայ էր անտեսանելի մի ուժ, գօրաւոր եւ բարեկամ մի ուժ» (էջ 84)[51]:

Ժամանելով դաշնակցական հանրապետութիւնը, Հէրեան նման հոգեպարար միջավայրում, ազդուելով «Սուրբ-Սուրբ»ի սրտի խորքից բխող տրտնջալի երգից մտայղանում է հայ ժողովրդին ծառայելու գաղափարը՝ բերել հայ ազգի «երազած նաւը... նաւը հաւատքի եւ յոյսի» (էջ 85)[52]: Նաւը եւ ես,-- ասում է գլխաւոր հերոսը,-- մի ամբողջ պատմութիւն ենք... դա սրտի մի արկածախնդրութիւն է.... ինձ համար նաւը ուրիշ բան է... ինչ էլ լինի, այն պիտի հասցնել Սեւան (էջ 559)[53]:

Բնորոշ է, որ վէպի գլխաւոր հերոսները եւ ոչ մի չափով չեն դատապարտում Դաշնակցութեան արկածախնդրական տակտիկան: Ընդհակառակը, գլխաւոր հերոսի հետ միասին, վէպի կարեւոր անձերը տոգորուած են այդ արկածախնդրական մտայնութեամբ, որի համար եւ պայքարում են: Վէպը հիմնական իր սկզբունքներով քաջազնուականական է[54]:

Հեղինակն այն համոզումն ունի, որ «Դաղտնիքների մեծ գրքում գրուած է, որ Հայաստան երկիրը պէտք է վերածնուի եւ վերաստեղծուի»[55], որ հայ ժողովրդի դրաման բաղկացած է չորս գործողութիւնից. առաջին գործողութիւն՝ արեւմտահայերի կոտորածը, երկրորդ գործողութիւն՝ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը եւ «երկրի մաքրագործումը օտար բազմութիւններից[»], երրորդ՝ Զրադաշտի վերադարձը եւ Հայաստանի նիւթական վերաշինութիւնը, չորրորդ՝ հայութեան նիւթական եւ հոգեկան վերածնունդը եւ նոր պատմական դարաշրջանի սկզբնաւորումը (էջ 520)[56]: Արժէ այստեղ յիշատակել, որ հեղինակի ասելով՝ Զրադաշտը դարաբաղցի հայ է եղել, իսկ Լենինի ուսմունքը եւ գրադաշտութիւնը նոյնական են[57]: Հեղինակը չի հերքում իր վէպում, որ Լենինի ուսմունքը հայ ժողովրդին բերում է նիւթական վերաշինութիւն: Լենինիզմի յաղթանակը նիւթապաշտութեան (մատերիալիզմի) յաղթանակն է, մինչ հայ ոգին կը ծաղկի չորրորդ գործողութեան վերջում: Նիւթապաշտ լենինեանները հայ ոգին սնուցել չեն կարող: Հեղինակը եւ նրա գլխաւոր հերոսները ոգեպաշտներ են, տիպիկ ռեակցիոն իդէալիստներ, որոնք վէպում քարոզում են, թէ գոյի էութիւնը ոգին է, որն անիմանալի է եւ նրան ոչ մի ուժ չի սպանի: Այսինքն՝ հայը ծնուած օրից դաշնակցական է: Մի օր հայի ազգայնական ոգին հրաբխի նման կը ժայթքի եւ կը խորտակի գրադաշտութիւնը (լենինիզմը), ինչպէս որ արաւ քրիստոնէութիւնը:

Դաշնակցական ռասիզմի թորած այս փոփոխակը կիրառուած է ամբողջ վէպում: Ապացոյցնե՞ր են պէտք: Խնդրեմ: Վէպի 521-522 էջերում կարդում ենք.- [«]Ես գիւղացու զաւակ եմ,- ասաց Ուրանեանը,- եւ կարող եմ ձեզ ասել, որ ժողովուրդը հանդարտ կը մնայ իր տեղում, ինչպէս լեռը մնում է, երբ մրրիկ է, բուք ու բորան: Ի՞նչ կարեւորութիւն ունի նրա համար, որ մեծամասնականները միաբանաշունչ են: Նա եղել է, կայ եւ կը մնայ...

-- Ահ, խօսում ես, էլի, բժիշկ ջան: Ահա կը գաս, կը սպաննես մարմինը, կը սպաննես ոգին:

-- Դա միամտութիւն է. ուժ չկայ, որ կարողանայ սպաննել ոգին... Ոգին ծովերի տակից անցնող, լեռ ու ժայռ ճեղքող, գաղտնի ճանապարհներ բաց անող հսկայական մի հոսանք է, որի աղբիւրները մեզ համար նոյնքան առեղծուածային են, որքան բնութեան գոյութեան պատճառները, արեւի շուրջը երկրագնդի շրջելը, կեանքի սկիզբ առնելը... Չկայ, չկայ ուժ, որ կարողանայ սպաննել ոգին: Կարելի է ժամանակաւոր կերպով նրան քօղարկել, չեղել նրա բնական զարգացման ընթացքը, բայց անհետացնել՝ անկարելի է: Եւ եթէ պատահի այնպէս, որ արգելքներ դնեն, աշխատեն նրան խեղդել, նա կը հաւաքուի էութիւնների ներսում, ինչպէս վտանգաւոր գազերը հաւաքուած են հողի տակ եւ մի օր, նրանց ահաւոր ճնշման տակ, ամէն ինչ վեր կը ցատկի, հրաբուխի նման դուրս կը ժայթքի եւ կը քանդի այն, յանուն ինչ բանի այդ ոգին ուզում էին խեղդել: Ես չեմ վախենում նոր քարոզութիւններից...

-- Դա ճիշդ է,- ասաց Պերոնեանը: Բիւզանդացիները գանգատւում էին, թէ... որտեղ հայերը համախմբում էին, այնտեղ ամէն ինչ հայանում էր...

-- Եղբայր,- բացականչեց Հէրեանը վհատուած ձայնով,- խօսում ենք ամէն տեսակ հարցերի մասին եւ մոռանում ենք մի հարց, մեր սահմանների հարցը... Առանց Սուրմալուի, առանց այն հողերի, որ մենք կորցրինք, ինչպէ՞ս կարող ենք ապրել...»[58]:

Վէպի գլխաւոր հերոս Հէրեանը ոչ միայն չի հակաճառում իդէալիստական-ռասսայական այս քարոզին, այլեւ Սուրմալուի հարցն է համարում կարեւորը:

Այս մէջբերումը ձեզ չի՞ հանոգում: Բերենք մէկ ուրիշը: Բացէք վէպի 58-րդ էջը եւ կարդացէք հետեւեալ տողերը. «Հայ կեանքը միշտ էլ չափազանցութիւններով է սնուել... Մութ, անրմբռնելի, բանականութեան չենթարկուող մի աշխարհ, ուր պատահականը եւ անսպասելին գալիս պատուաստում են խստադէմ լեռների նման կայուն եւ անխորտակելի երեւոյթներին... Ամէն ինչ յուսահատիչ է, դժբախտ վերին աստիճանի եւ միեւնոյն ժամանակ ամէն ինչ այնքան պայծառ, բարձր եւ լուսաւոր...»[59]:

Այսպիսով, հեղինակի գլխաւոր հերոսը պնդում է (իսկ վէպում ոչ ոք դա չի հերքում), թէ անրմբռնելի աշխարհում պատահականն ու անսպասելին «գալիս պատուաստում» են «լեռների նման կայուն երեւոյթներին»... Ո՞րն է պատահականը: Շարադրանքից պէտք է կռահել, որ դա կոմունիզմն է[՝] «գրադաշտութիւնը»: Վիճակը թէեւ յուսահատիչ է, բայց եւ «ամէն ինչ այնքան պայծառ է, բարձր եւ լուսաւոր»: Այս երկուութիւնը երեւութական է, քանի որ

հասարակական կեանքով վճռականը, «կարեւորը ոգին է» (էջ 180)[60]: Վէպն ամբողջովին այս գաղափարով է յագեցած:

Իսկ չէ՞ որ դա մի ռեակցիոն տէրտէրականութիւն է, որի դէմ մենք կոչուած ենք պայքարելու: Այո, հեղինակը քարոզում է ռասս[ա]յականն ու իդէալիստական խաւարամտութիւն: Անհատատալի՞ է: Կարդանք նրա վէպի 185-187 էջերը, ուր ասուած է. «[Ա]զգերի կեանքում առաջադիմութիւնը պատմութեան մտքի՝ արիշ բան չէ, եթէ ոչ նոր վերադարձ դէպի բուն ժողովրդի իսկութիւնը: Դէպի այն վճիտ ու պարզ հոգեկան ակնադրիւրը, որտեղից առաջ են եկել նրա գլխաւոր առաքինութիւնները եւ որոնց վրայ հիմնուել է նրա լինելու կամքը: Այն մաքրամաքուր նախասկզբնական ուժերը, որոնք սնուցել են եւ արդարացրել նրա էութիւնը: Այդ տեսակէտից, ամէն մի իսկական յեղափոխութիւն յետ գնալ է, ոչ դէպի այն՝ ինչ անկատար կերպով անուանում են աւանդութիւն, այլ դէպի այն, ինչ կազմում է ժողովրդի հոգեկան բնոյթը, վերածագման[61] դրդապատճառը:

– Առաջնասկիզբ մերկութիւնը...

– Չգիտեմ, կարողանո՞ւմ են ինձ բացատրել... Իսկական յեղաշրջումը կատարւում է այն ժամանակ, երբ ժողովուրդը վերագտնում է իր պայծառ, անմեղութեամբ լուսաւորուած աչքերը, որոնք կարողանում են տեսնել անհրաժեշտը յաւիտենականութեան լոյսի տակ եւ այդ անհրաժեշտը վեր են ածում մարդկային, զուտ մարդկային արժէքների: Իրականութիւնը շրջանակ է. նա անցեալի եւ ներկայի համադրութիւնն է: Նա կեանքի գերագոյն այն միութիւնն է, որով մենք վերամշակում ենք, ինչպէս արտը վերամշակում է ցանողի մեծդի եւ հիմնական ժեստի մղումով»[62]:

Պատմագիտութեան իրագեկ մարդը խելքի կ'ընկնի, որ վէպի հեղինակը դէմ լինելով հասարակական պրոգրէսին, բառացիօրէն կրկնում է Ջամբատիստ Վիկոյի[63] պատմութեան շրջանաձեւութեան յետադիմական թեզը: Բացարձակ եւ ամենազօր ոգու վերադարձը սկզբնական իր ելակէտին, իր «մաքրամաքուր» ակունքին՝ սա է մարդկային կեանքի իմաստն ու եզրը: Այս սկզբունքն են քարոզում վէպի հերոսներից մի քանիսը եւ յատկապէս՝ Մարկ Պետրոսը: Այս անսքող իդէալիստ-միստիկը ասում է. «Անձը գերիմացական եւ գերժամանակային է»: Նրա «թելադրութիւնները վճռական են եւ որոշ չափով յաւիտենական» (103)[64]: «Հոգեկան զօրութիւնը եւ միութիւնն անյաղթելի են... Արտաքին դէպքերը մեզ այցելում են այն ժամանակ միայն, երբ մենք ներքնապէս արդէն պատրաստ ենք ընդունելու նրանց... Ոգին է որ ստեղծում է արտաքին դէպքերը, նա է հրահրում նրանց» (107)[65]:

Նեղութիւն կրէք թերթել վէպի 102-107 էջերը, եւ դուք կը լսէք իդէալիստական այս քարոզները, որոնք չեն հեռանում վէպի եւ ոչ մի անձնաւորութեան կողմից: «Գերմարդկային եւ գերժամանակային» անձը Նիցշէի[66] հերոսը չէ՞: Ափսոս, որ վերջինս չի իմացել, որ Զրադաշտը դարաբաղեան ծագում ունի: Սալիրիտուալիստական այս զառանցանքը մեզ մօտ բերում է օտար ափերից:

Եւ այսպէս, այդ «մաքրամաքուր, նախասկզբնական» ոգին է թեւածում վէպի բոլոր գլուխներում, այդ վնասակար զառանցանքի շաղախով է ծեփ-

ուած ամբողջ վէպը: Համեմատելով հայկական ոգին վրացականի հետ, հերոսներից մէկը բարբառում է. «Վերջ ի վերջոյ այն, ինչ բնորոշում է հային, ֆիզիկականը չէ, այլ մտայնութիւնը: Մաքուր ժողովուրդներ գոյութիւն չունեն, բայց գոյութիւն ունեն զտուած, տիրական մտայնութիւններ: Հոգեբանութեան իշխող միութիւնը: Եղել են բախտաւոր ժամանակաշրջաններ, երբ հայկական հոգեկան ներուժութիւնը հասել էր ամբողջականին, գտել էր ոսկէ համադրականը, լոյսը եւ այդ այն աստիճան, որ կարողացել էր այդ լոյսը՝ կրօնքի, ճարտարապետութեան, մշակոյթի միջոցով տարածել աշխարհի չորս կողմը...

Բաւական է նայել մեր շուրջը հենց այստեղ Վրաստանում, այդ բանում համոզուելու համար:

-- Եղել է եւ դադարել է:» (էջ 195)[67]:

Այսպիսով, վրացիները կորցրել են իրենց ազգային մտայնութիւնը, իսկ «դասական» հայերը՝ պահպանել են: Եւ, իբրեւ ապացոյց այդ մտքի, հեղինակը խօսեցնում է նոյն հերոսին այսպէս. «Մի տիրական մտայնութեան տեղ -- ասացինք, որ ժողովուրդը մտայնութիւնն է -- ստեղծուեցին զանազան մտայնութիւններ, քօղարկուեց կենտրոնական այն ճրագը, որով ազգը լուսաւորում էր իր լինելու խորհուրդը, հաստատում իր տիեզերական անհրաժեշտութիւնը, կարկառում իր արիւնի ջահը...

-- Կենացդ, Սուլթանեան... Ինչ լաւ ասացիր, արիւնի ջահը...

-- ... Աշխարհը ցնցուել է մրրիկով, իսկ հորիզոնի վրայ կուտակուած ծանր ուրիշ ամպերը մեզ աւետում են դեռ նոր, աւելի սոսկալի մրրիկներ...: Մեզ անհրաժեշտ են բոլոր մեր ուժերը այդ փոթորկի միջից անցնելու եւ դիմադրելու համար: Իսկ դիմադրել կարելի է միայն լուռ եւ տիրական ոգեկան ուժով. ... Ուզենք կամ չուզենք մեր արիւնը թափւում է, բայց թափուած արիւնը գուրկ է նշանակութիւնից, եթէ նա չի ճառագայթում: Գերագոյն գաղափարի համար ազատ կամքով ընդունած մահը կեանքը լուսաւորող հոգեկան փարոս է, այլապէս, յուսահատութիւն է եւ պարապ... Մեր պատմութիւնը միշտ էլ եղել է ահաւոր եւ մեծդի, եւ մենք միշտ էլ ապրել ենք վտանգաւոր կեանք: Եթէ չենք անհետացել... որովհետեւ վտանգի ժամերին մենք վերագտել ենք մեր իսկութիւնը, մեր միութիւնը, մեր հոգեկան դէմքը...: Ահա այդ: Այն ժողովուրդները, որոնք գուրկ են հոգեկան ուժեղ դէմքից, որոնք ասելիք եւ բերելիք ոչինչ չունեն, որոնց ձեռքում ոչ մի ճրագ չկայ լուսաւորելու [sic] համար այդ ընդհանուր բառար, կոչուած են անհետ կորչելու...» (էջ 197-199)[68]:

Այսպիսով, որեւէ ազգութեան գոյութեան գլխաւոր նախապայմանը, նրա հոգու երանգն է, «լուսաւորչի կանթեղը», որը չի տրուած այլ ժողովուրդներին, այլ «գաղտնի գրքերի» համաձայն, տրուած է հայերին: Ռուսներն էլ դեռ շատ կայ, որ դրան հասնեն: Վնասական այս իդէալիստական թոթովանքները վաղուց են մերկացուած մարքսիզմի կողմից:

Ասացինք, որ հեղինակն այն համոզումը ունի, որ հայ իրականութեան մէջ կոմունիզմը ներմուծուած է դրսից: Այդ բանի «ապացոյցն» է հետեւեալ իրողութիւնը. Հէրեանն Ալեքսանդրապոլի մի գիւղում է, երբ բռնկւում է Մայիսեան

ապստամբութիւնը: Եւ ահա, գիտէ գալիս Ռազմա-յեղափոխական կոմիտէի լիազօրը՝ աշխատողներին ողջունելու, ասելով՝

«– Ռազմա-Յեղափոխական Կոմիտէն ներկայացնում է աշխատաւոր մասսաների կամքը... Ինչպէս գիտէք, մեր ժողովուրդը յոգնել է անդադար տեղի ունեցող պատերազմներից, տիրող աղքատութիւնից, անօթութիւնից եւ որոշել է վերջ տալ անտանելի դրութեանը... Կոմիտէն ինձ ուղարկել է ձեզ մօտ, որպէսզի դուք էլ միանաք բանուորների ու գիւղացիների շարժմանը եւ վերջ տալ այն խայտառակ դրութեան, որի անմեղ զոհերն էք...

Խօսում էր: Տեղ-տեղ տաքանում, տեղ-տեղ կանգ առնում, որպէսզի ժամանակ տայ մտածելու: Նայում էր դէմքերին, տեսնելու համար, թէ ինչ տպաւորութիւն են թողնում իր ասածները: Դէմքերը փակ էին, քար:

Երբ երիտասարդը վերջացրեց, բոլոր ներկաները նայեցին Տէր-Պօղոսին: Տէր-Պօղոսը կուչ եկաւ, գլուխը թաղեց ուսերի մէջ, երկու ձեռքերով բռնեց մօրուքի ծայրերը եւ, յանցանք գործած շնիկի նման, աչքերը յառեց Հէրեանի վրայ:

Հէրեանը լցնում էր իր ծխամորճը, առանց ոչ ոքի նայելու:

Լռեցին» (էջ 259-260)[69]:

Ինչպէս տեսնում էք, նոյնիսկ վէպի բոլշեւիկը չի դատապարտում Դաշնակցութեանը, խօսում է բանականին մշուշապատ, իսկ գիւղացիները քար լռութիւն են պահպանում կամ լաւագոյն դէպքում ուզում են, որպէսզի «շնիկի պէս կծկուած Տէր-Պօղոսը» խօսի: Համակրանքի եւ ոչ մի խօսք չի լսում ռեւոլիւցոնէրը գիւղացիներից, իսկ Հէրեանը՝ լռում է: Սա իրականութեան կեղծում է, չէ՞:

Ուշագրաւ է, որ Ալեքսանդրապոլում գտնուող Հէրեանը ծանր ապրումներ ունի. «Վերջին երկու օրուայ տեսածները եւ ապրումները բոյնի նման դեռ չապրունակում էին չրջել նրա արեան մէջ» (էջ 276)[70]: Ինչո՞ւ: Որովհետեւ նա համոզուած է, որ Բրեստ-Լիտովսկու դաշնագրութեամբ Լենինը լրել է հայերին (էջ 467)[71]: Որովհետեւ նա պնդում է վիճելիս, թէ «Մենք կռւում ենք մեր անկախութեան համար, աւելի լաւ է պատուով մեռնել, ոչնչանալ, քան կորցնել այդ անկախութիւնը» (էջ 466)[72]: Հէրեանի պատկերացմամբ՝ Դաշնակցութիւնն ու հայ ժողովուրդը նոյնական են, համերաշխ: Դրա համար է, որ երբ պառլամենտում նախարարը խօսում է Ղարսի անկման մասին, «Հայաստանը տնքալով շարժուեց: Վշտից հարբած, դանդաչելով ման եկաւ լեռները» (էջ 472)[73]:

Կարելի՞ է անտարբեր կարդալ այն յերիւրանքը, թէ «Բոլշեւիկները թուրքերի բարեկամ են... Իսկ թուրքերը սպանեցին, կոտորեցին մեր ծնողներին, մեզ էլ գցեցին այս վիճակի մէջ» (էջ 585)[74]: Այս բխուած սիլլոգիզմի իմաստն այն է, որ 1918-1920 թուականների հայ ժողովրդի ողբերգութեան պատճառը բոլշեւիկներ[ն] են, այլ ոչ Դաշնակցութիւնը: Նոյն համոզման է Հէրեանը, որը երազում է մի օր նուաճել այլ երկրներ, թագաւորութիւններ եւ թալանուած ոսկին ու հարստութիւնը Հայաստան մուծել (էջ 583)[75]:

Վէպը լի [է] հայկական նացիոնալիզմի քարոզներով, ազգային սնապարծութեան «գոհարներով»: Բացեցէք [sic] վէպի 190-րդ էջը, ուր ասուած է վրացիների հասցէին. «Միշտ էլ այդպէս են եղել: Այս մարդիկ չեն աշխատել, չեն տանջուել, սարսափների չեն ենթարկուել: Ապրել են ուրիշների աշխատանքով, եւ վաղը ով էլ գայ, կ՛ապրեն նրա աշխատանքով: Դա փիլիսոփայութիւն է»[76]:

Թբիլիսի ճաշարանը մտնելով, Հէրեանն ասում է. «-- Դրսից նայես, սրբերի են նմանւում, իսկ նրանց ուտելու ձեւը նայես՝ տաւարի: Մարդու կենդանի է... Ազնուագոյն ուտողը շինականն է: Լաւաշի մէջ փաթաթուած Դարալագեազի պանիրը պարզ է եւ հիմնական, ինչպէս արօրին յանձնուող արտը...[»] (էջ 191)[77]:

Մեր ինչի՞ն են պէտք թթու ազգայնական այս գկրտոցները: Ո՞վ կը հաւատայ այն հեքեաթին, որ թրքուհիները հաճոյքով անձնատուր են լինում հայ ֆիդա[յ]իներին [sic], նրանք լաւ սիրուհիներ են, իսկ հայ կանայք՝ բոլորն ինքնասպան են լինում՝ անձնատուր չլինելով թուրքերին: Մի՞թէ ճիշդ է, որ հայ մարտիկները չէին բռնաբարում թրքուհիներին (էջ 27)[78]: Հայ գիւղացին ուրախ է, որ «ռուսներից եւ նեմէցներից ազատուել են» (էջ 72)[79]: Ո՞վ չի հասկանում այս կեղծիքը: Ո՞ր միամիտ ընթերցողը կը հաւատայ, երբ հեղինակը գրում է, թէ մի բուֆետում հաւաքուել էին կովկասեան ազգերի ներկայացուցիչները, իսկ քիչ հեռուն, [«]նստարանների վրայ կուչ եկած թուրքերը քնել էին ձեւացնում եւ աչքի տակից ոխերիմ նայուածքներ էին գցում նրանց վրայ» (էջ 216)[80]:

Ինչո՞ւ թունաւորենք մեր երիտասարդութեան ոգին հետեւեալ դաշնակցական բարոյով. «-- Ահա, հիմա դուք ասացէք,-- բացականչեց նա յուզուած ձայնով,-- ահա մի կողմից այս պայծառ եւ խորհրդաւոր ջութակների դիալոգը, մահի եւ սիրոյ այս բախտաւոր խօսակցութիւնը եւ միւս կողմից՝ արիւնարբու թուրքը...: Բախը եւ թուրքը... Չէ, բնութիւնն անողոք է:

Հէրեանը, որ սովոր էր Միրաենեանին հակաճառելու, այս անգամ էլ չկարողացաւ իրեն զսպել: Աչքը ետ գցեց բազկաթոռի վրայ եւ ասաց՝

-- Ճիշտը ասած, եթէ վերցնենք մեր աբարաճցուն, նա էլ Բախի երաժշտութիւնից մեծ բան չի կարող հասկանալ...

Հարցը դրանում չի,-- բողոքեց Միրաենեանը:

Երեւի նոյն Գերմանիայում էլ կան շատ գիւղացիներ, որոնք Բախից ոչինչ չեն հասկանում... Ես այդ մասին շատ անգամ մտածել եմ... Հարցը նրանում է, որ հայ գիւղացու մէջ, նրա արտաքին կոշտութեան յետեւ, նրա անգիտակցական խորքում արծաթագրուած են մարդկային մտքի եւ հոգու բարձրագոյն բոյրերի բոլոր կարողութիւնները... Դիր նրան բնականոն պայմաններում եւ նա կը մտնի բախեան բարդ աշխարհից ներս, ինչպէս իր սեփական տունը...: Որովհետեւ նրա հոգեկանը հիւսուած է նոյն Բախի հոգու նիւթերից եւ նրանք կուլտուրապէս ցեղակից են... Նրանք կարող են աղօթել նոյն տաճարում, յուզուել նոյն յուզմունքներով, ոգեւորուել նոյն ոգեւորութիւններով,

նստել միասին, մէկ մէկի աչքերի մէջ նայել եւ մէկ մէկին հասկանալ առանց խօսելու:

Մօտեցաւ սեղանին: Բաժակները նորից լցրեց: Եւ խմեց:

-- Իսկ թուրքը... Այստեղ դէմ դիմաց կանգնած երկու իրարամերժ, հակոտնեայ աշխարհներ են... Սոսկալին այն է, կապխտաւ Հէրեաւ, որ թուրքը հոգեկան անցեալ չունի, նրա անգիտակցականը մութ գիշեր է, լցուած գազանային բնազդներով եւ նախնական ախորժակներով... Նկատուած է, որ երբ թուրքը բարձրագոյն կրթութիւն է ստանում այլասերում է: Նա վախենում է մշակոյթից, հասկանում է, որ մշակոյթը, երբ արտաքին անբովանդակ ձեւ չէ -- մահացու է նրա համար:

-- Անկասկած իրաւունք ունես,-- պատասխանեց Հէրեաւը տխրած ձայնով: Փաստերը յամառ են, բայց ժողովուրդը միշտ մնում է ժողովուրդ ինչ ազգի էլ պատկանի, յանցաւորը ղեկավարներն են...

-- Ղեկավարներն են թէ ժողովուրդը ես այդ չգիտեմ, սակայն այսօր թուրքը անպատիժ գիմուորական է: Քաջ, անվախ, բայց անպատիժ: Նա աւելի մարդասպան է, քան մարտիկ: Եւ իբրեւ մարդասպան, նա չի կարողանում տանել այն ամէնը, ինչ կապ ունի հոգու եւ մտքի հետ: Այսօրուայ թուրքը գերազանցապէս հակամշակութային է: Այդ պայմաններում ի՞նչ առնչութիւն թուրքերի եւ Բախի միջեւ...» (էջ 405-406)[81]:

Ջտարիւն ռասսխայական այս մոլուցքը դուր է գալիս Հէրեաւին, որը խմելով ճակատ մեկնող խմբապետի կենացը (որին հեղինակը կոչում է գլխապետ), ասում է թուրքերի հասցէին. «... պաժալուստա, այդ շներին մի լաւ դաս տուէք...» (էջ 412)[82]:

Վէպում երկու ռուսներ կան. մէկը Դաշնական, որի հետ Բաթումում կենակցում է Արա Հէրեաւը, որը նրա գալուց յետոյ նկարագրում է որպէս սրճարանի կին: Իսկ միսը՝ Ֆէոդոր Պանիելեւիչը [Պանտելէյեւիչը - Վ.Մ.], որը ողորմելի հարբեցող է եւ յաճախ համեմատում է շան հետ: Երբ տեսնում է Հէրեաւին, «Ուրախացած շնիկի պէս դէս ու դէն» է ընտում (էջ 415)[83]: Ռուս տղամարդուն երբ օղի չեն առաջարկում, նա շան է նմանւում (էջ 423)[84]:

Ի՞նչ դաւանանք ունի այս դժբախտ ռուսը. միապետական է, ըստ վէպի: «Ամէն ինչ նոյնն է... Փոխուել է միայն հասարակարգը, միւս աշխարհի՝ կարմիրների տիրապետութեան տակ է... Նու, ի՞նչ կարող ենք անել... Խոմ, երբ ծնուեցինք, գիտէի՞ք, որ պիտի ապրենք ցարերի տիրապետութեան տակ... Մեր աչքերը բաց արինք եւ պոռացինք կեցցէ Այեքսանդր Երրորդը, կեցցէ Նիկոլայ Երկրորդը... Նու, հիմա ծնուել եմ՝ եւ պոռում եմ կեցցէ Վլադիմիր Իլիչ Լենին...» (էջ 536)[85]:

Ահա թէ հասարակական ինչպիսի տակնուվրներ են Լենինի հետեւորդները,-- կ՚եզրակացնի վէպի ընթերցողը: Պատահական չէ, որ տուեալ վէպում կոմունիզմին յարում են Երեւանի խուժանները եւ մարդասպանները:

Հեղինակը սիրում է իր ընթերցողներին ազգային սնապարծութեան կարկանդակներ էլ հրամցնել: «Բիւզանդիան իր յաւերժական շրջանում երեք քառորդով եղել է հայկական» (էջ 204)[86], որ «մշակոյթը ոգի է, եւ մշակոյթը յա-

տուկ է մանաւանդ փոքրիկ ժողովուրդներին» (էջ 205)[87]: Կեղծելով ժողովրդական առասպելների ու կրօնի սոցիալական բովանդակութիւնը, որը նոյնն է բոլոր ժողովուրդների մօտ, հեղինակը գրում է. «Մշակոյթը հարստութիւն, քաղաքակրթութիւն, ընկերական բարեկարգուած կազմ կամ պետական զօրութիւն չէ միայն, այլեւ ոգեկանութիւն, կեանքը լուսաւորող եւ հարստացնող ճրագ...: Արդ, եթէ լաւ ուսումնասիրենք մեր պատմութիւնը, կը տեսնենք, որ սկզբից, առասպելական օրերից, մենք վազել ենք այդ ճրագի, այդ լոյսի ետեւից: Արայի եւ Շամիրամի լեգենդը երկու սկզբունքների պայքարն է: Մի կողմից Արան՝ յովազի ուժեղ, ճկուն մարմնով, քաջ, լուսաւոր մտքով, ամբողջական ու զօրեղ արեւային արքան՝ անմար ճառագայթներով հիւսուած կամքը, խորհրդանշաններ ստեղծող յանդուգն տեսլապաշտը, արիւնը եւ տառապանքը երջանկութեան վերածող եւ տիեզերքի իմաստը լոյսով դրսեւորող քրմապետը, եւ միւս կողմից, Շամիրամը՝ ասորա-բաբելական անապատային ջերմը, կանացիութիւնը, հիստերիան, լիբիդոն, աղաւնին եւ օձը, ոսկին եւ ոճիրը, լուսնային պաշտամունքի պատճառը...:

Մեզ մօտ աստուածութիւնը դրսից իշխող, անողոք եւ անդիմադրելի ուժ չէ, այլ լոյսի նման եւ մարդի միջոցով միշտ վերածնուող, միշտ վերաստեղծուող զօրութիւն: Մարդ պարտ է դառնալ լոյս, ճառագայթ... աստուածանալ...: Երեւի մեր նախնիքները ունեցել են հոգեկան միջոցներ այդ մեծութեան հասնելու համար... այդ միջոցները մենք կորցրել ենք» (էջ 205-207)[88]:

Ով գիտէ կրօնների էութիւնը եւ պատմութիւնը, կ՚ասի, որ սա եւս նացիոնալիստական կեղծիք է, տգիտութեան արդիւնք: Հեղինակը չարաշահում է կրօնի համամարդկային խեղաթիւր բովանդակութիւնը՝ ազգային պատմութեան հագցնելով դրան: Մոլորութիւն՝ պարուրուած փքուն ֆրազներով:

Հեղինակը մի փշրանք էլ է գցում «ազգասէր»-ի առջեւ, յիշատակելով, թէ Նապոլէոնը ծրագրել էր ազատագրել արեւելեան երկրները, որ նրա մարշալ Միւրադը դարաբաղցի հայ Միհրան Մուրադեանն է, որը ձգտում էր անկախ Հայաստան ստեղծել: Հեղինակը հաւատացնում է, թէ Լ. Տոլստոյի Ռագրատիոնն էլ հայ է եւ այլն[89]:

Հոս[հ]հոսի ձեռագրից[90] քաղուած այս «սփոփիչ» լուրե[ր]ն ամրապնդում են այն մեծադողդող յայտարա[ր]ութեամբ, որ իբր թէ հայ ժողովուրդը «էն գլխեմէն» իր առանձնայատուկ ոգով, ճառագայթելու իր կարողութեամբ՝ դասական է:

Ռուսների համեմատութեամբ «Մենք պարզապէս պատկանում ենք տարբեր հոգեկան աշխարհի... Մենք արեւի, պայծառութեան, յստակութեան, ներդաշնակութեան ձգտող ժողովուրդ ենք... Մենք խորքով եւ ձեւով դասական ենք եւ այդ է պատճառը, որ ահաւոր ողբերգութիւններից անցել ենք միշտ մեր հոգեկան միութիւնը պահելով...

– Եթէ այդպէս է, այն ժամանակ Պուշկինը...

– Պուշկինը այո: Նա այն է, որին ռուս ժողովուրդը բնազդաբար ձգտում է՝ չափ, ներդաշնակութիւն, պայծառութիւն: Հենց դրա համար է, որ Դաստաեւսկին իր հռչակաւոր ճառում Պուշկինին ցոյց էր տալիս իբրեւ այն հեռաւոր

ճրագը, որին ոուս ոգին պէտք էր հասնի... Մենք այդ ճրագը դարերից ի վեր է կրում ենք մեր հոգու մէջ: Վկայ Արարատը, իսկ Արարատի առաջ Պուշկինը փոքր է...

-- Ահ, ինչեր էք ասում, պարոն Հէրեաև...: Չէ, ես ձեզ հետ համաձայնուել չեմ կարող... Սաշա, տես պարոն Հէրեաևը ինչեր է ասում Պուշկինի մասին...» (էջ 388)[91]:

Ռուս ոգին դեռ պիտի հասնի հեռաւոր «ճրագին», որը մենք դարեր ի վեր ունենք,-- ասում է Հէրեաևը: Ահա թէ ինչի են հասցնում ազգային սնապարծութիւնը, համապատասխան-ռասսայական զառանցանքները:

Վերից միստիցիզմի գարշահոտութիւն է փչում: Ուզո՞ւմ էք համոզուել այս բանում, կարդացէք էջ 25, 26, 40, 50, 75, 84: Ահա մի էջ հեղինակի կատարեալ միստիկ նկարագրութիւնից. «-- Ինչ մեծ բեմադրող է երկինքը,-- ասաց Ջուարթը,-- ինչ իրօրինակ բեմադրող...: Արեւը ամէն օր դուրս է գալիս եւ ներս է մտնում, ինչպէս հսկայական դրամայի մի հերոս...: Եթէ մարդ կարողանար ճանաչել միւս ծածկուած դերակատարին...

-- Նրանք, անտարակոյս, գոյութիւն ունեն... Մենք չգիտենք...: Այսինքն՝ գիտենք եւ չգիտենք...: Գիտենք մեր մեծագոյն խելքով, որ չի տրամաբանում...: Կան բաներ, որ խօսքերով չես կարող հասկացնել, նրանց չես կարող ասել. եթէ ասես՝ քեզանից կը փախչեն, կը հեռանան...

-- Ասում են Լուսաւորչից առաջ այս վայրերում մեծ եւ զօրեղ աստուածներ էին ապրում...

-- Նրանք դեռ կան, այստեղ են:

-- Իսկ ես կարծում էի առասպելներ էին:

-- Առասպելներն աւելի իրական են, քան իրականութիւնը: Ես հաստատ գիտեմ, նրանք կան, նրանք ներկայ են ամէն տեղ... Լճի մէջ, ափերի մօտ, այստեղ...

-- Այստե՞ղ...

Ջուարթը ուսերը անհանգիստ շարժեց:

-- Պատկերացրէք, ես նրանց ներկայութիւնը շատ պարզ կերպով զգացի այս առաւօտ:

-- Ո՞ր:

-- Եկեղեցում, երբ ոչխարները մայելով ներս մտան... Ուրախացած նրանք յետոյքները օրօրելով վազում էին դէպի պատարագի սեղանը... Նրանց աչքերը տարօրինակ կերպով լուսաւորուած էին... Շատ զարմանալի էր... Այդ տեսարանը մեխուել, մնացել է մտքիս մէջ: Ուրիշ մի բան. տարօրինակ էր նաեւ քահանան, որ օրհնում էր նրանց... Իսկ թափթփուած մօրուքով, քիչ կռացած իր քթով, իր ճեղքուած, փոքրիկ աչքերով...» (էջ 98-99)[92]:

Մի՞թէ սովետական ընթերցողը կը մարսի կրօնական բնոյթի այս զառանցանքը: Դժուա՞ր է հասկանալ հեղինակի խորհրդաւոր գրոյցը Սեւանի ափին, մի գրոյց, որից աղօրքի հոտ է գալիս: Կարդացէք 114-116 էջերը, ուր տարերային մի շունչ առել է հարուստին իր բազուկների մէջ, ուր ամէն ինչ երգում է անտեսանելի մի աստուածութեան շուրջը: Այստեղ «... ստորերկրեայ

ոգիները լճի տակից մրճահարում էին կղզին»: Սեւանայ լիճը վաղուց մասնակցել է հերոսի «ներքին գոյացման պրոցէսին»[93]: Նա եկել էր կղզի «աղօթքով», «ծածկուած եւ ամեհի աստուածների վերակոչման օրը»[94]: Մարդու կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ «վազք մեր սեփական ոգու ետեւից, մեր իսկ հոգին վերագտնելու համար»[,] ասում է Հէրեանը (էջ 146)[95]: Տիպիկ միստիկական են 163-164 էջերը: Հայաստանի «Ամէն մի բուռ հողում մի հոգի է ճառագ[այթ]ում» (էջ 286)[96]: Վէպի հերոսը 372-րդ էջում շրջապատուած է ուրուականներով՝ «իրական եւ հաւասարապէս անիրական»[97]: Հեղինակը հաւատացած է, որ «մեռելի մտածումը այնքան մեծ է, որ ոչ մի մարդկային բառ չի կարող արտայայտել: Մեծ է այնքան, որքան աշխարհը, որքան բովանդակ տիեզերքը» (էջ 442)[98]: Վէպի հերոսներից մէկը գրուցում է «Պարոնայք բարձրագոյն հոգիներ»-ի եւ «Պարոնայք հրեշտակներ»-ի հետ (էջ 449)[99]: Ոգիները, ոգիների ամբոխներ հանգիստ չեն տալիս ոմանց: «Մենք ամէնքս էլ շրջապատուած ենք ոգիներով... շղթայուած»: «Ոգիները ներսն են, մարդկանց մսերի մէջ, ուղեղի մէջ... Չար ոգին միջակութիւնների ոգին է» (էջ 516)[100]: Հէրեանը գալիս է այն եզրակացութեան, որ Հոիփսիմէ վանքը կառուցուած էր հոգով, ոչ թէ բառերով, այլ էլ հայ հոգու նրբագին շաղախով:

«Հէրեանը հասկացաւ, որ նոր իջնող ճառագայթների մէջ յանկարծ կենդանութիւն ստացած այդ տեսիլքը պարզ ճարտարապետութիւն չէր, քարերի ներդաշնակ շարուածք եւ գծերի հոյակապ կառուցուածք չէր միայն... Մեծ էր եւ խոր, ոչ կրօնական հանգամանքի պատճառով, այլ որովհետեւ նրա գոյութիւնը գալիս էր մի ուրիշ աշխարհից, ուր ամէն ինչ պատճառաբանուած էր բնագանցական տուեալներով, վերջնական, ակներեւ, ինչպէս աստղաբաշխական երեւոյթները:

Եւ այդ հոգեկան չափին էին պատկանում նաեւ հեռուն կանգնած վեհաշուք լեռները եւ լոյսերը...» (էջ 544)[101]:

Իր միստիկ գաղափարները մարմնացնող մի հերոսի բերանով հեղինակն ասում է. «Չեն հասկանում,– ասաց նա ձեռքերը երկարելով վանքի կողմը,– չեն հասկանում, որ մարդկային մեծութիւնը ծնւում է անդնդի եզերքին. հանգիստ եւ ապահով կեանքը մեծ գաղափարների ծննդավայր չի եղել եւ մեծ հոգեկան դէպքեր չի ստեղծել... Ապրում են աշխարհիս ամենանախանձամական վայրերից մէկում, ուր խաչաձեւում են հոգեկան հիմնական հոսանքները, ուր համադրում են լինելիութեան ծածկուած սկզբունքները, կազմում էական հիմնաքարերը, իսկ խօսում եւ գործում են այնպէս, ինչպէս խօսում են եւ գործում արեւմտեան որեէ մգլոտած արուարձանի բնակիչները... Միշտ նոյն բանն են կրկնում,– շարունակեց,– ազատագրուել...: Ազատագրուել ինչի՞ց... Ամէն ինչ արտաքին է, մակերեսային: Չեն հասկանում, կարեւորը ազատագրուելու բուիչքը չէ, այլ անհատի խորքը, այլ գալիք տեսիլքի կամքը, որ գոյանում է էութեան մէջ քիմիական բաղադրութեան նման...: Հաւատացէք, պարոն նաւատար, այդ մարդիկ նման են այգիների շուրջը կանգնած այն հողէ, փխրուն պատերին, որ քամիները եւ անձրեւները ուտում են բոնրից դուրս եկած տաք հացի նման... Չեն հասկանում. աշխարհը միշտ էլ եղել է

բառս, որի հատասարակշռութիւնը պահպանել են նորոգուող աստուածները...» (էջ 554-555)[102]:

Ի հարկէ, այս ամէնից յետոյ հեղինակը պէտք է յանգէր սոլիպսիզմին, հրաժարուէր երեւոյթների պատճառները որոնելուց: Ահա թէ ինչու նա գրում է. «Խօսում են, օրինակի համար, մարդկային կազմի եւ հոգեբանութեան վրայ ազդող արեւային բիծերի մասին... Մեծ ազդեցութիւն ունի նաեւ մի պարզ մոծակի խայթումը... Ճշմարտութիւնը այն է, որ շատ քիչ բան գիտենք եւ առհասարակ բառսի մէջ ենք... Աւելի յաւ է պատճառներ չփնտռենք: Դէպքերը ենթել են, ընդունենք նրանց կոյուային հանգստութեամբ: Մարդկային հոգու մէջ կայ անբռնաբարելի մի կէտ, մի կարգ...» (էջ 558)[103]:

Եթէ ամէն ինչ բառսային վիճակում է, չկայ օրինաչափութիւն, ապա ուրեմն «անցեալը, անտարակոյս, խորհրդների մի շարք է եւ դժուար է ամէն ինչ ըմբռնել» (էջ 203)[104]: Սրան յաջորդում է այն թորուած ագնոստիկական թեզը, որի համաձայն «աշխարհի բոլոր վայրերը, բոլոր երեւոյթները նախօրօք արձանագրուած են մեր մէջ: Երբ այցելում ենք մի վայր, պարզապէս վերյիշում ենք նրան: Աշխարհն այնքան գոյութիւն ունի, որքան բովանդակուած է մեր մէջ» (էջ 398)[105]: Ականջդ կանչի, բահանայ Բերկլի[106]: Ռուսաստանի տիրապետութեան պատճառները,– կարդում ենք վէպում,– «բնազանցական էին, իսկ մեծամասնականներիններ՝ ոռիենտոնեան» (էջ 518)[107]: Բոլշեւիկները որպէս մատերիալիստներ, հարթած են «հողով, իրերով, տարրական առարկաներով»:

Ռուսաստանից եկած մարդիկ խօսել է [sic] «փոքրիկ ժողովուրդների բոլորովին անկախ ապրելու անկարողութեան մասին: Մէջ բերեց Մարքսին եւ Էնգելսին, տուեց Լենինի անունը եւ աշխատեց ասածները հիմնաւորել... գիտական տուեալներով» (էջ 144)[108]: Մի՞թէ սա դաշնակների մաշուած փաստարկը չէ, հազար անգամ ծամծմուած նրանց մամուլում: Սխալ է հեղինակը, երբ հայ մեծամասնականների հայրենասիրութեան էութիւնն ուրիշներին օգտագործելն է համարում (էջ 547)[109]:

Բնորոշ է, որ Հէրեանը Դաշնակցութեան բանակին նայում է «գուրգուրալից, եղբայրական աչքերով» (էջ 55)[110]: Հեղինակը նշում է, որ «զարգացած մտքի բռնազբօսիկ ցուցադրումը կանանց մօտ միշտ էլ սեռային հրապուրանքի խորամանկ մի միջոց է» (էջ 486-487)[111]: Սա տիպիկ բուրժուական զրպարտանք է կանանց հասցէին:

Վէպում պատմական իրողութեան մտացածին երեւոյթներ կան:

Լեռնաշխարհի ջահելները քէֆ են անում, երբ թշնամին Երեւանին է մօտեցել: Արտաքին դէպքերը չեն ազդում ընտանեկան կեանքի վրայ,– գրում է հեղինակը (էջ 50)[112]: Նա գրում է, թէ դաշնակից մեծ պետութիւնները Դաշնակցութեանը չեն օգնում, այլ օգնում են թուրքերին եւ, որ դա սրիկայութիւն է: Բայց 1918-1919 թթ. թուրքերին օգնել է Սովետական Ռուսաստանը եւ ոչ թէ Անտանտան: Ուրեմն, այդ կշտամբանքը ռուսների հասցէին է: Վէպի 211-րդ էջում խօսում է Վեդիի թուրքերի ապստամբութեան մասին, որի հետեւանքով դաշնակները մաքրազարդել են այդ շրջանները[113]: Ո՞ւմն է պէտք այս թեզը,

եթէ ոչ՝ մեր հակառակորդներին: Աղրբեջանցիների կոտորածը հեղինակը համարում է երկրի մաքրագործում «օտար բազմութիւններից»: Վէպում գերագնահատուած է հայ ժողովրդի կրօնականութիւնը:

Վէպը գաղափարական առումով ուրիշ շատ խոցելի տեղեր ունի: Օրինակ, փետրուարեան դաշնակցական աւանտիւրան հեղինակը համարում է ապստամբութիւն, որը չի դատապարտում: Միայն շների «զրոյց»ից է ընթերցողն իմանում, որ հարուստները փախել են:

Հէրեանի եւ Զուարթի միանալը վէպի վերջում՝ արհեստական է: 1918-1919 թուականների մասին գրուած վէպը չի կարող աւցնել գլխաւորի կողքով՝ ռեւոլիւցիայի հասունացող երեւոյթների, Դաշնակցութեան անարգանքի սիւնին գամելու կողքով:

Սմբած իմտելիգենտ [Հ]էրեանները չեն այդ տարիների հերոսները, եւ ոչ էլ Սուլթանեանները, Միր[ան]եանները ու Պետրոսեանները [Պերոսեանները - Վ.Մ.]: Հայկական նացիոնալիզմի վարակով տարուած մի խումբ բախտախնդիրներն ու տիպացուները չեն, որ մեր վէպերի էջերը պիտի գրաւեն, այլ նոր հոսանքի՝ կոմունիզմի մարտիկները:

Մի՞թէ կարելի է այդ վէպը կոմունիստական հասարակութեանը ծառայեցնել՝ խմբապետը «գլխապետ» յորջորջելով: Չէ՞ որ դրա էջերում լիակատար պրոպագանդում եւ գործում են խմբապետները, իսկ կոմունիստների ստուերներն են թոթովում: Միակ «ընդդիմադիր» ուժը Դաշնակցութեան դէմ՝ վէպում հանդէս է բերուած Ֆոտուրիստ Կարա Դերվիշը [Դարվիշը - Վ.Մ.][114]: Մի՞թէ կան մարդիկ, որոնք լուրջ արժանիք են համարում, երբ հեղինակի վէպում Լենինականի գիւղերում թուզ է աճում (էջ 250)[115], տաւարը սմբակներով է լինում, բոլշեւիկները ալիւրով են սովեալներին հրապուրում, կանայք վտանգի ժամանակ ծաղրում [sic] են (էջ 469)[116], բոլշեւիկները չորացած աղբիւրի են նման (էջ 354)[117], եւ այլն:

Այս վէպի հեղինակը յաճախ առարկաները նկարագրում է որպէս շնչաւորուած էակներ, իսկ կենդանիներին՝ որպէս մտածողներ: Նրա մօտ գորտը մտածում է, շունը՝ համոզուած է, հաւատում է, մտածում է, խղճահարում է, իրեն յանցաւոր է զգում (էջ 569)[118], այծը մտածում է (էջ 571)[119], շունը ներքին ձայն ունի (էջ 575)[120], եզներն առաջանում են մտածկոտ (էջ 71)[121], Հայաստանի հողերը տառապում են (էջ 31)[122] եւ այլն: Վէպում մարդիկ էլ անասնակերպ են երեւում: Նա գրում է. դժբախտ տաւարի նման մայթերի վրայ երկարած գաղթականները (էջ 295)[123], գիւղացիք նայում են տաւարի աչքերով (էջ 249)[124], մարդն ու տաւարը սեւ մտքեր են որոճում (էջ 217)[125], թշուառները շնիկների պէս խածում են (էջ 127)[126], թշուառներից մէկը երկայնահասակ յակոտ էր (էջ 127)[127], մի տղայ որսի շներին յատուկ բնազդով. մարդիկ մլաւում են (էջ 127)[128]:

Հեղինակը բաւականին իրաւի է վարում լեզուի կաւոնների հետ: Փորձում է ստեղծել անհնարին պատկերներ եւ լեզուախաղեր: Ահա մի քանի օրինակներ. պարզ աչքերով տեսնել մտածումները (էջ 25)[129], իրենց յետեւից մի կտոր լուսաբաց քաշքշելով (էջ 26)[130], բանդուած, ակօսուած երեսից է

առաջանում մսոտ մի բիբ (էջ 28)[131], գլխի վագոն, խիստ չէնքեր (էջ 29)[132], եկաւ անապատը, ապտակեց դէմքերը, կոլ տուեց նայուածքները (էջ 30)[133], բառամած արծաթի արտացոլումները (էջ 30)[134], նուիրական անունը Հէրեանի գլխի մէջ մի վայրկեան երգեց (էջ 30)[135], խաբուած խոտեր (էջ 31)[136], տեսարանը լ[ուա]ցուած էր ճերմակ խաղողի հիւթով (էջ 33)[137], լոյսի եւ հաւատի ակօսներ (էջ [3]4)[138], բոյսի անել դրաման... տնկի մէջ մաճ եկող չլացուցիչ սարսափի ներխուժութիւնը, նրա արմատների ողբը, նրա երակների մէջ սառած կանգնած վախը (էջ 37)[139], հողերը յանկարծ մրափել էին (էջ 38)[140], լոյսերի անտեսանելի ծնծղաներ (էջ 48)[141], սեւ թշուառութեան անկիւնից վայր թափուած մարդկութիւն (էջ 48)[142], կուրացած լուսաւորութիւնը] չկարողացաւ վարագուրել դժոխքի այդ պատառը (էջ 48)[143], կորովի օղը... խոնարհ պարզութիւնը (էջ 50)[144], լքել քանդուածութիւններ... օդը լցուած էր անձկութիւնով (էջ 51)[145], յոյսերի հետ (էջ 51), բռունցքները գալարուած, աչքերը այրուած (էջ 52)[146], նոաճ ջրի գոյն լաւաներ (էջ 68)[147], ճանապարհի վիզը (էջ 69)[148], կապոյտ քամի (էջ 69)[149], եգներն յառաջանում են մտածկոտ, խաղաղութիւնը մտածում է եգների աչքերում (էջ 71)[150], հանդիսութիւն (էջ 88)[151], վշտվշտալ (էջ 93)[152], ճառագայթների խմբեր (էջ 115)[153], գնդակահարում էին գիշերը (էջ 123)[154], գնդակներով լցուած [սեւ մի] Աֆրիկայում (էջ 123)[155], պատերը սկսում են մռնչել (էջ 123)[156], ճրագները բթուածինի նման խածել ու փորել էին դիմագծերը (էջ 124)[157], ցուրտը շաչում էր սեւ կատուի նման (էջ 149)[158], բթուածինի ենթարկուած մազերով, հեղուկ նայուածքով, վիատ ձեռքերով (էջ 159)[159], բերանը ծերացած (էջ 160)[160], ձեռք համբուրելները (էջ 176)[161], ղօղանջում է [sic] (էջ 221)[162], մարմինների ողկոյզ (էջ 243)[163], կատաղի հողմերից հրմշտուած նաւի շեղուելները, բարձր ալիքների շառաչուն փշրուելը յառաջակայմի ստորոտին, գատուող փայտերի ճարճատիւնը եւ [sic] ջրի մակերեսից վեր բարձրացած պտուտակը շրջում է պարապում (էջ 264)[164], կօշիկները չարչարուած (էջ 293)[165], գլխիս վրա էնքան գործ կայ (էջ 302)[166], ինձ դէմ խոմ բարկացած չէ՞ք (էջ 307)[167], հնչիւնների ամբոխը (էջ 310)[168], նաւի յետույքը (էջ 318)[169], երկինքը դղրդել է (էջ 341)[170], մի կով մայում էր (էջ 373)[171], քամին մայում է (էջ 400)[172], երկրաշարժ էր մսոն գալիս (էջ 423)[173], բարձ աննմանութիւն (էջ 440)[174], չափազանցուած կեանքով լցուած (էջ 469)[175], դղրդոց էր մսո գալիս (էջ 470)[176], կապոյտ յոյզ (էջ 479)[177], կապոյտ աղաղակներ (էջ 483)[178]:

Շարունակելու հարկ չկայ:

«Նաւը լերան վրայ» վէպը գաղափարապէս մեզ համար խորթ է, այն Դաշնակցութեան տիրապետութեան արդարացումն է:

14/10-61 թ.

[ՁԵՌԱԳԻՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ]

201 - Այստեղ եւ այլուր ժողովուրդը «կազմուած է տարբեր հայկական հասանքներից» -- շարունակ մոռացում է աշխատաւորը.-

205 - Հայ ժողովրդի ոտքի կանգնելու, բարձրանալու, փրկութեան նախապայմանը համարում է հոգեպէս վերականգնելը.-
-- Մշակոյթը ոգի է եւ մեծ մշակոյթը յատուկ է փոքր ժողովրդին.-
232-236 - Խրմիեանի [sic] գովքն է եւ հայոց Սենեքերիմ Արծրունի թագաւորի գերեզմանի (ոսկորների) վրայ սգահանդէսը Վարագում եւ ժողովրդի ողբը որ թագաւոր չունեն: *Հարկ կայ բողնելու այս ննկարագրութիւնը ?* [sic]
250 - Գիմրու մօտ ես... եւ ծաղկած նշենիներ ու թզենիներ ?
261 - 262 - Խօսելով յեղափոխութ[եան] մասին, սովետ[իզ]ացիան, մայիս[եան] ապստամբութեան եւ այլն, շարունակ ասում են, որ Ռուսաստանը ալիւր է խոստանում [*] բաժանի ժողովրդին: [1 բառ անընթ.]
-- Հիմնականը - հայ ժողովրդի բացառիկութիւնը:
-- Ոչ մի խօսքով ու բառով չի դատապարտում այդ ծանր կացութեան յանցաւորներին -- դաշնակ պետականութեան ղեկավարներին
294 - *Հեռատրութիւնների* մէջ ծանրացած պարտէզները:
295 - [բաց մնացած]
301 - Ձեր մեկնելուց յետոյ սենեակը *փարծրել էինք* մի երիտասարդ տղի
403 - Ժպտիր, դուշվա, ժպտիր...
312 - Մենակութիւնը ամբողջութիւն է: Ինչքան նա լերկացած լինի արտաքին աշխարհից, այնքան կատարեալ է:
312 - Վիշտը, չարչարանքը եւ մահը բուն կեանքի էութիւնն են, նրա գոյութեան եւ գոյանալու ամենակատարեալ գէները: Ինչքան յիմար են մարդիկ, որ ուզում են այդ մոռանալ:
313 - Եղիր մենակ եւ միշտ վերջ հետեւիր քո կեանքին:
347 - *Դաշնակ[ական] սպայ Միրաճեանը ասում է.*- Բագրատիոնը՝ հայ Բագրատունիների շառաւիղն էր:
348 - Նապոլէոնի մարշալներից.- «Մուրատը[՝] Միհրան Մուրադեանը դարաբաղցի էր եւ երբ ռուսներին յաղթէր, անպատճառ կ՚իջնէր Կովկաս եւ այն ժամանակ Հայաստանը անկախութիւն կը ստանար եւ այժմ մեծ պետութիւն կը լինէր»:
(Իսկ հերոսը - Հէրեանը ոչ թէ հերքում է այդ զառանցանքը, այլ յուզուելով ասում է - գալմանալի է, այդ մասին իսկի չէի իմացել...)

Լեզուական.-
404 - Կը գնայի Պետերբուրգը, երաժշտանոցը, ջութակի դասերը շարունակելու... Բառականին յարմարութիւն էի ցոյց տալիս...

Գ.

ՊԵՏՀՐԱՏԻ ԴԻՐԵԿՏՈՐ ԸՆԿ. Մ. ԴԱՒԹԵԱՆԻՆ
Գրականագէտ ՀՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻՑ

Կ. Զարեանի «Նաւը լերան վրայ» վէպի հրատարակութեան կապակցութեամբ ձեզ հետ ունեցած իմ վերջի զրոյցից յետոյ հարկ եմ համարում յայտնել հետեւեալը.

ա) Կ. Զարեանի գործերից որեւէ մէկի հրատարակման մասին եղել է վերադաս օրգանների համապատասխան որոշում, իսկ թէ կոնկրէտ որ գործը պէտք է հրատարակել նոյն որոշմամբ այդ յանձնարարուած էր լուծել Գրողների Միութեանը եւ Պետհրատին: Իմ մասնակցութիւնը այդ գործին եղել է միայն բանաւոր կարծիք յայտնելը:

Ես հիմա էլ այն հաստատ համոզման եմ, որ միանգամայն ճիշդ է կատարուած վէպի ընտրութիւնը:

բ) Երբ վէպի հրատարակման հարցը սկզբունքօրէն լուծուած էր ինձ յանձնարարուեց լինել հրատարակութեան խմբագիր եւ այդ աշխատանքը կատարել շտապ, քանի հեղինակը Հայաստանում էր: Ես հարկադրուած եղայ ընդհատել իմ արձակուրդը[,] մնալ Երեւանում Յուլիս-Օգոստոս շոգ ամիսներին եւ աշխատել հեղինակի հետ:

գ) Այդ յանձնարարութիւնը ես կատարել եմ ամենայն բարեխղճութեամբ եւ պատասխանատուութեան լրիւ գիտակցումով: Վէպը խմբագրուած է, եւ բաւական զգալիօրէն, երկու անգամ, մէկ[՝] բնագրի վրայ, մէկ՝ արդէն մեքենագրած օրինակի (այդ օրինակները պահում եմ ինձ մօտ եւ հարկ եղած դէպքում կարող եմ ներկայացնել):

դ) Օգոստոսի վերջերին լրանում էր Կ. Զարեանի վիզայի ժամկէտը եւ նա պէտք է մեկնէր: Պետհրատի հետ պայմանագրային ձեւականութիւնները կատարելու համար անհրաժեշտ էր ներկայացնել ձեռագիրը: Այդ պատճառով մեքենագրուած վերջին օրինակը ես հնարաւորութիւն չունեցայ մի անգամ եւս կարդալ եւ յանձնեցի Պետհրատին, զգուշացնելով բաժնին, որ այն ես մի անգամ եւս պէտք է կարդամ, որից յետոյ կը ստորագրեմ տպագրութեան համար: Հեղինակի հետ բանաւոր համաձայնութեան եկանք, որ եթէ անհրաժեշտ լինի լրացուցիչ խմբագրական միջամտութեան (ոչ հիմնական, այլ փոքր կրճատումներ կամ ուղղումներ) ես այն կը կատարեմ առանց իրեն տեղեկացնելու: Այդ է միակ պատճառը, որ բնագիրը ես չեմ ստորագրել: Միանգամայն անհիմն է այն բանում իմ կողմից ինչ որ կանխամտածուած ինքնապահովագրման միտում դիտելը:

Որպէսզի փարատեմ Պետհրատի աշխատողների նման կասկածները, կից ներկայացնում եմ ձեռագրի իմ մօտ եղած օրինակի տպագրութեան ստորագրած տիտղոսային էջը եւ փոքրիկ ուղղումներով նորից խմբագրած մի քանի էջեր, որոնք պէտք է դնել համապատասխան տեղերում: Դարձեալ գտնում եմ անհրաժեշտ արտադրութիւն իջեցնելուց առաջ մի անգամ եւս կարդալ ձեռագիրը, լեզուական, ոճական եւ այլ կարգի ուղղումներ կատարելու համար:

ե) Ինձ համար անհասկանալի է, անբացատրելի եւ խիստ վիրաւորական այն փաստը, որ մինչեւ հիմա իմ պայմանագիրը չի վաւերացուած եւ նրան համապատասխան ընթացք չի տրուած: Ինչո՞ւ համար է այդ քաշքշուկը: Եթէ պայմանագիրը չի վաւերացում, այն նկատառումով, թէ դեռ չի լուծուած վէպի տպագրելու կամ չտպագրելու հարցը[,] դա ինձ վերաբերող խնդիր չէ: Այդ հարցը պէտք էր լուծել նախքան վէպը ինձ խմբագրելու յանձնելը:

Եթէ համարում է, որ խմբագրի կատարած աշխատանքը անորակ է, ապա այդ դէպքում ես ճգճգելը հարցի լուծումը չէ: Նման պարագաներում առաջացած կոնֆլիկտը լուծելու համար Գրողների Միութիւնը կազմում է համապատասխան էքսպերտային յանձնաժողով, որը եւ գնահատում է կատարուած աշխատանքը: Բոլոր դէպքերում ես մեծ աշխատանք եմ կատարել եւ չեմ կարող հանդուրժել, որ թէկուզ անպաշտօն կերպով, բայց իմ կատարած աշխատանքը համարուի անբարեխիղճ: Վէպը յանձնելուց յետոյ անցել է եօթը ամիս, կարծում եմ ժամանակն է այդ քաշքշուկին վերջ տալ:

գ) Ինձ տուած անանուն գրախօսի «կարծիք»ը վէպի մասին, ես չեմ կարող դիտել որպէս իմ կատարած աշխատանքի գնահատական, որովհետեւ այնտեղ հարցը սկզբունքօրէն այլ տեսանկիւնով է դիտուած: Այդ գրախօսականը կարող էր արժէք ներկայացնել Պետհրատի եւ Գրողների Միութեան համար՝ երբ սկզբունքօրէն լուծում էր վէպի տպագրման հարցը: Հիմա արդէն նա ուշացած ու անտեղի կարծիք է, ոչ մի առնչութիւն չունեցող խմբագրի կատարած աշխատանքի հետ: Անանուն հեղինակի այդ «կարծիք»ի մասին իմ վերաբերմունքը խիստ բացասական է:

Ես անհրաժեշտ եմ համարում գրաւոր շարադրել իմ դիտողութիւններն այդ մասին, որը եւ ներկայացնում եմ այս դիմումիս կից:

Խնդրում եմ արագացնէք հարցի ինձ վերաբերող մասի լուծումը:

Յարգանքներով՝ ՀՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆ [ստորագրութիւն]

10 Մարտի 62 թ.

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ Կ. ՋԱՐԵԱՆԻ «ՆԱԻԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ» ՎԷՊԻ ԱՆԱՆՈՒՆ ԳՐԱԽՕՍԱԿԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Կ. Ջարեանի վէպի անանուն գրախօսը ունի մի քանի ուշագրաւ նշումներ, որոնք կարելի է հաշուի առնել վէպի վերջնական խմբագրման ժամանակ: Սակայն նա հիմնական գնահատականներում կանգնած է սխալ դիրքերի վրայ, եւ նրա հետեւութիւնները ընդունելի չի կարելի համարել: Ըստ իս այդ սխալը կայանում է հետեւեալում.

ա) Նա մոռացել է, որ գործ ունի բուրժուական գրողի հետ եւ մօտեցել է հեղինակի գործին, այն չափանիշներով, ինչ կարելի է կիրառել միայն սովետական կամ սոցիալիստական ռէալիզմի ուղղութեան գրողի նկատմամբ:

բ) Ունենալով միանգամայն բացասական վերաբերմունք դէպի Կ. Ջարեանի քաղաքական անցեալը գրախօսը կանխակալ ու խիստ միտումնաւոր մօտեցում է ցուցաբերել թէ՛ գործի ամբողջական գնահատականի եւ թէ՛ նրա առանձին մանրամասների նկատմամբ, այդ պատճառով աշխատել է տեսնել միայն վէպի բացասական կողմերը, միանգամայն աչքաթող անելով, այն շատ դրականը, որ կայ վէպում: Այդ նոյն կանխակալ կարծիքի հետեւանք է թերեւս, որ գրախօսը վէպի շատ կողմերը տեսել է ծուռ հայելում, նրանք ներկայացրել է գլխիվայր շրջուած:

գ) Գրախոսը միանգամայն աչքաթող է արել Կ. Զարեանի քաղաքական հայեացքների այսօրուայ էվոլիւցիան եւ մօտեցել է նրան, ինչպէս եւ նրա գործին քսանական թուականների ակնոցներով, այդ պատճառով էլ նրա հետեւութիւնները սխալ են ու անընդունելի:

Փորձեմ հիմնաւորել ասածներս:

I.

Գրախոսի հիմնական հետեւութիւնը վէպի մասին հետեւեալն է. «1918-1919 թուականների մասին գրուած վէպը չի կարող ամբողջ գլխաւորի կողքով ռեւոլիւցիայի հասունացող երեւոյթների, դաշնակցութեանը անարգանքի սիւնին գամելու կողքով: Սմբած ինտելիգենտ Հէրեանները չեն այդ տարիների հերոսները, եւ ոչ էլ Սուլթանեանները, Միրանեանները ու Պերոնեանները: Հայկական նացիոնալիզմի վարակով տարուած մի խումբ բախտախնդիրներն ու տիրացուները չեն, որ մեր վէպերի էջերը պիտի գրաւեն, այլ նոր հասանքի կոմունիզմի մարտիկները» («Կարծիք» էջ 18):

«Մեր վէպերի էջերը» հարցադրումը ինքնին արդէն սխալ է: «Մեր վէպերը» կարող են գրել միայն սոցիալիստական ռէալիզմի ուղղութեան գրողները եւ նրանց նման պահանջ ներկայացնելը ճիշդ կը լինի: Իսկ Կ. Զարեանին այդպիսի պահանջ ներկայացնելը առնուազն միամտութիւն է:

Սխալ է նաեւ «այդ տարիների հերոսների» մասին դատողութիւնը: Վէպում նկարագրած տարիների իրադարձութիւններում կենտրոնական տեղ էին գրաւում եւ դաշնակցականները, եւ «սմբած ինտելիգենտները» եւ «նացիոնալիզմի վարակով տարուած» շատ այլ մարդիկ, հետեւապէս նրանք կարող են այդ ժամանակաշրջանի իրադարձութիւնների պատկերմանը նուիրուած ամէն մի գեղարուեստական գործի կենտրոնական հերոս դառնալ:

Որեւէ պատմական ժամանակաշրջանի գործող մարդկանց եւ իրադարձութիւնները պատկերելիս յաճախ պատահում է որ հեղինակը եւ նրա հերոսները ռէակցիոն դիրքերի վրայ կանգնած լինելով հանդերձ կարողանում են տալ օբեկտիւ իրականութեան ճշմարտացի պատկերի այս կամ այն կողմը:

Այդ կապակցութեամբ աւելորդ չի լինի յիշեցնել Վ. Ի. Լենինի հոյակապ գնահատականը Լ. Տոլստոյի մասին. «Մեծ արուեստագէտի անուան համադրութիւնը ռեւոլիւցիայի հետ, որը նա ակներեւօրէն չդմբռնեց, որից նա ակներեւօրէն մի կողմ քաշուեց, առաջին հայեացքից կարող է տարօրինակ եւ արհեստական թուալ: Հօ չի կարելի հայելի անուանել այն, ինչ ակնյայտ կերպով ճիշդ չի արտացոլում երեւոյթները: Բայց մեր ռեւոլիւցիան չափազանց բարդ երեւոյթ է.- նրա անմիջական կատարողների եւ մասնակիցների մասսայի մէջ կան սոցիալական շատ տարբեր, որոնք նոյնպէս ակներեւօրէն չեն ըմբռնում տեղի ունեցող անցքերը, նոյնպէս մի կողմ էին քաշւում պատմական այն իսկական խնդիրներից, որ իրադարձութիւնների ընթացքը դրել էր նրանց առաջ: Եւ եթէ մեր առջեւ իրօք մեծ գեղագէտ է, ապա նա պէտք է իր երկերի մէջ ար-

տացուէր ռեւոլիւցիայի կողմերից գոնէ մի քանիսը» (Լենին, *Երկեր*, [հատոր] 15, էջ 242): (ընդգծումները մերն են - ՀՐ.ԳՐ.):

Այս եւ միմիայն այս լենինեան չափանիշով պէտք է մօտենալ իրաքանչիւր բուրժուական գրողի եւ մանաւանդ Կ. Զարեանի գործի գնահատմանը: Կ. Զարեանը, ի հարկէ, Լ. Տոլստոյ չի, բայց նա անպայման արուեստագէտ է եւ իրապաշտ արուեստագէտ: Նա իր արուեստի ուժով կարողացել է տալ դաշնակցական Հայաստանի միանգամայն օբեկտիւ ու ճշմարտացի պատկերը եւ դա է նրա վէպի խոշոր արժանիքը:

Անանուն գրախօսը ջանքեր է գործադրում գտնելու համար հեղինակի մօտ բուրժուական գաղափարախօսութեան ռեակցիոն դիրքեր, սոլիպսիզմ եւ ագնոստիցիզմ, վկայակոչում է քահանայ Բերկլիին եւ այլ[ն] եւ այլն, մոռանալով որ զարմանալի կը լինէր, երէ այդ ամէնը չլինէր Կ. Զարեանի մօտ, չէ որ նա տիպիկ բուրժուական մտածողութեան մտաւորական է եղել իր ամբողջ կեանքում:

Հետաքրքիր է, օրինակ, ինչ կարծիք պէտք է յայտնէր մեր անանուն գրախօսը ռուս գրող Ի. Ա. Բունինի[179] մասին, որին Սովետական մեծ հանրագիտարանի վերջին հրատարակութիւնը տալիս է հետեւեալ բնութագիրը՝ «Հոկտեմբերեան Սոցիալիստական Մեծ ռեւոլիւցիան Բունինը դիմաւորեց թշնամաբար: 1919 թուականին "Օդեսսկի նովոստիայում" նա որպէս կոսմոպոլիտ եւ դաւաճան փառաբանում էր ինտերվենցիան: Շուտով վտարանդուեց արտասահման, որտեղ հրատարակեց մի շարք յօդուածներ, լցուած կատաղի ատելութեամբ դէպի Սովետական Ռուսաստանը»:

Այդ նոյն Բունինի հինգհատորեակը հրատարակուեց վերջերս Մոսկուայում, որի յառաջաբանում հետեւեալ գնահատականներն է [sic] տրուած Բունինի մտածողութեանն ու աշխարհայեացքին. «Իր ամբողջ շնորհալի ձիրքով հանդերձ Բունին-արուեստագէտը չկարողացաւ ազատուել իր դասակարգի՝ ագնոստականութեան ռեակցիոն հայեացքներից... Դասակարգային սահմանափակութիւնը խանգարեց խոշոր արուեստագէտին տեսնել, որ իր աչքի առաջ վերջացաւ հին Ռուսաստանի պատմութիւնը, որն ինքն էր դատապարտում իր գործերում, եւ սկսուեց իր կեանքը վերակառուցող ժողովրդի նոր պատմութիւնը: Բունինը չկարողացաւ տեսնել, որ աշխարհը այլ է դառել, չէր ուզում տեսնել իր հայրենիքում կատարուած փրկարար փոփոխութիւնները, բէկէտ հասկանում էր, որ հին աշխարհը խորտակուել է եւ անցեալը անհետացել անվերադարձ կերպով»:

Այդ նոյն յառաջաբանի մի այլ տեղում ասուած է. «Տարբեր ժամանակներում գրուած Բունինի հրապարակախօսական յօդուածները, ակնարկները եւ նրա մի քանի պատմուածքները անարժան են նրա տաղանդին եւ յաճախ չեն տարբերում էմիգրանտ գրպարտիչների չարամիտ, չարանենգ խզբզոցից»:

Փորձենք համեմատութեան եզրեր անցրնել: Բունինը մինչեւ վերջն էլ «չկարողացաւ տեսնել» եւ «չէր ուզում տեսնել իր հայրենիքում կատարուած փրկարար փոփոխութիւնները» եւ սակայն նրա երկերի հինգհատորեակը

հրատարակում է: Կ. Զարեանը տեսաւ եւ հրապարակով ողջունեց այդ փոփոխութիւնները, վերախմբագրեց իր վէպը, որտեղ ցոյց տուեց, որ այդ փոփոխութիւնները հայ ժողովրդի փրկութեան միակ ճիշդ ուղին էին: Եւ այդուհանդերձ նրա ոչ թէ երկերի ժողովածուները, այլ անգամ այն վէպը, որ փառաբանում է սոցիալիստական յեղափոխութեան գործի յաղթանակը չեն ուզում որ հրատարակուի:

Սա ի՞նչ արտառոց ու անբացատրելի մտայնութիւն է:

«Լիտերատուրնայա գազետա» թերթի վերջին համարներից մէկում գրուած է այն մասին, որ «Վերջին զօրակոչի երիտասարդ բանաստեղծներից շատերին անսահման մօտ է ու թանկ Ա. Բլոկը[180]: Նրանց ուշադրութիւնը սրուած է դէպի այնպիսի բանաստեղծների ստեղծագործութիւնները, ինչպէս Խլեբնիկովի Վլեբնիկին[181], Օ. Մանդելշտամը[182], Ն. Գումիլեովը[183]»: Այդ բանաստեղծներից Ն. Գումիլեովը գնդակահարուած է սովետական դատարանի որոշմամբ որպէս Կրոնշտադի ապստամբութեան պարագլուխներից մէկը: Մոսկուայում հրատարակուել է [sic] Օ. Մանդելշտամի, Մ. Յուետաեւայի[184] բանաստեղծութիւնների գրքոյկները: Իսկ բոլոր այդ բանաստեղծների ստեղծագործութեան ամենաբնորոշ գիծը եղել է յոռետեսական դեկադենտականութիւնը, դատապարտուածութիւնն ու միստիկայի տրամադրութիւնները:

Բերեմ մի օրինակ եւս: Վերջին տարիներս Մոսկուայում եւ մեզ մօտ յոյս տեսան Վ. Սարոյեանի մի քանի գրքերը եւ շատ լաւ է որ յոյս տեսան: Վ. Սարոյեանը ինչպէս յայտնի է մարքսիստ չէ եւ շատ հեռու է կանգնած սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդից: Այնուհանդերձ նա միեւնոյն ուղն ու ծուծը բուրժուական մտածող է: Երբ փորձենք մեր անանուն գրախօսի մեթոդով բուրժուական մտայնութեան գանագան իզմեր որոնել նրա ստեղծագործութեան մէջ, ապա առատօրէն կը գտնենք դրանք: Վ. Սարոյեանի «Մարդկային կատակերգութիւն» վէպի ռուսական հրատարակութեան յառաջաբանում գրուած է օրինակ, որ նա «գերի է իդէալիստական ռեակցիոն պատկերացումներին»: Այդ վէպում նա ամբողջովին հանդէս է գալիս չարի հետ հաշտուելու եւ այն չնկատելու ռեակցիոն տեսութեամբ: Նա ամէն կերպ աշխատում է ընթերցողին հեռացնել սոցիալական անարդարութեան հարցերից եւ հաշտեցնել նրանց տիրող անարդարութեան հետ, քարոզելով մարդու «բնածին» բարութեան աստիճանափակ բարոյախօսութիւնը: Վ. Սարոյեանը իր գրուածքներում ամէն տեսակի սոցիալական յեղափոխութիւնների հետեւողական հակառակորդ է:

Չնայած այդ ամէնին Վ. Սարոյեանի գործերը հրատարակում են: Ինչո՞ւ: Որովհետեւ նրա արուեստի ուժը, երբեմն նոյնիսկ հակառակ հեղինակի, բացայայտում է կապիտալիստական իրականութեան խոցելի կողմերը: Եւ բացի այդ, որովհետեւ, ինչպէս ասուած է նրա գրքերի ռուսական հրատարակութեան յառաջաբանում «Չնայած այն ստեղծագործական ճգնաժամին, որ ապրում է գրողը վերջին տարիներին, չնայած նրա բոլոր մոլորութիւններին, նա չմիացաւ ռեակցիոներների լագերին, նոր պատերազմ հրահրողներին, այլ մնաց խաղաղութեան դիրքերում»:

Իսկ Կ. Զարեանը ոչ միայն չմնաց դաշնակցութեան յետադէմ լագէրում, այլ վճռականօրէն խզեց իր կապերը նրանցից ու համարձակ պայքարի ելաւ նրանց դէմ: Մենք պէտք է կարողանանք գնահատել բուրժուական մտաւորականի այդ, եթէ կ'ուզէք, համարձակ ռեոլիւցիոն քայլը:

Այս չափանիշներով միայն պէտք է մօտենալ Կ. Զարեանի գործերի գնահատմանը եւ ոչ թէ մանրադիտակով փնտռել ու որոշել թէ քանի տոկոս միստիցիզմ ու սոլիպսիզմ, քանի տոկոս բերկլիականութիւն եւ ջամբաղիատ վիկտորականութիւն են պարունակում նրա հերոսների դատողութիւնները:

Կոստան Զարեանը այսօրուայ սփիւռքահայ գրականութեան ամենախոշոր ու ամենաաչքի ընկնող դէմքն է, սիրուած ու ճանաչուած ժողովրդի բոլոր խաւերի կողմից: Նրա՝ արդէն դասական գրող լինելու հանգամանքը բազմիցս նշել են ոչ միայն դաշնակցականները այլ շատ եւ շատ յառաջադէմ ու կոմունիստ մտաւորականներ: (Ահա, օրինակ, նրան տրուած մի երկու բնորոշ գնահատականները՝ «Կոստան Զարեանը՝ մեր գրականութեան գոյների [sic] եւ պատկերներու հրաշալիքներ փոխանցած այդ շռայլ մեծատունը», «Հոժկու եւ բազմատաղանդ գրող եւ հայ նոր գրականութեան մեծածայն շեփորը»)[185]:

Վաղ թէ ուշ մենք պէտք է հրատարակենք նրա գործերը, որովհետեւ ամէն մի տաղանդաւոր արուեստագէտի ստեղծագործութիւն իր ժողովրդի սեփականութիւնն է, եւ վերջ ի վերջոյ ժողովուրդը նրան տէր պէտք է կանգնի: Հետեւապէս աւելի լաւ է, եթէ այդ անենք իր կենդանութեան օրօք, երբ նա դեռ կարող է խմբագրել այդ գործերը եւ որքան հնարաւոր է ազատել այն յետադիմական հայեացքներից: Ասում ենք որքան հնարաւոր է, որովհետեւ չենք կարող հաշուի չառնել հեղինակի արդէն շատ պատկառելի տարիքը (Կ. Զարեանը 78 տարեկան է), երբ հեշտ չի լինում հրաժարուել իր անցեալի շատ մոլորութիւններից:

Անբացատրելի է ոչ միայն Կ. Զարեանի գործերը չտպագրելը, այլեւ այդ տպագրման գործի ուշացումը, այնպէս ինչպէս ոչնչով չի արդարացուած այն փաստը, որ մինչեւ հիմա չեն տպագրուած Լ. Շանթի[186], Համաստեղի[187] եւ եթէ կ'ուզէք, անգամ Ա. Ահարոնեանի գործերը[188]:

Պէտք է դէն գցել նրանց ժառանգութիւնից այն ինչ մոլորութիւն էր, անարժան նրանց տաղանդին ու մտքին եւ բարձր գնահատել նրանց լաւագոյն գործերը, որովհետեւ դրանք պատկանում են այն ժողովրդին, որի ծոցից դուրս են եկել եւ որի մշակոյթից սնուել են այդ հեղինակները:

Միակ պարտիական ճիշդ մօտեցումն այդ է դէպի տաղանդաւոր ստեղծագործողները: Մենք այդ հարցում ենս շատ բան ունենք սովորելու մեր աւագ ռուս եղբայրներից, որոնք ճշմարիտ ուղի են ցոյց տալիս Բունինի, Մանդելշտամի, Յուետաեւայի եւ այլոց գործերի հրատարակումով:

2.

Անցնենք գրախօսի չօշափած բուն խնդիրներին: Գրախօսը գտնում է, որ «վէպի գլխաւոր հերոսները եւ ոչ մի չափով չեն դատապարտում Դաշնակցութեան արկածախնդրական տակտիկան» եւ, որ «վէպը գաղափարապէս

մեզ համար խորթ է, այն Դաշնակցութեան տիրապետութեան արդարացումն է»:

Այս պնդումները հիմնովին սխալ են եւ չեն համապատասխանում ճշմարտութեանը: Խօսենք միայն փաստերով:

Երբ առաջին անգամ վէպի կենտրոնական հերոսը՝ Հէրեանը ոտք է դնում Երեւան ու գիշերով ուզում է կայարանից գնալ քաղաք, պաշտօնեան նրան զգուշացնում է, որ այդ չի կարելի անել, վտանգաւոր է, պէտք է սպասել լոյսը բացուի: Այնուհետեւ վէպում ասուած է. «Անկիւնում նստած մի ծերունի նրան բացատրութիւններ տուեց: Քաղաքը կայարանից բաւական հեռու էր եւ ամայի ճանապարհը լցուած էր զինուած մարդկանցով, որոնք առագակութեամբ էին զբաղում: Պատերազմի նախկին կամաւորներ, մութ անցեալ ունեցող մարդիկ, մաուզէրիստներ:

-- Ասում են,-- աւելացրեց ծերունին ձայնը իջեցնելով,-- դրանք վերեւում կանգնած պաշտպաններ ունեն... Ո՞վ է իմանում, ճիշդ է, ճիշդ չէ... Դրութիւնը այս է: Դահիճների ձեռքից ազատուեցինք, նկանք ընկանք աւազակների ձեռքը...»: (էջ 49)[189]:

Ահա թէ ինչպէս է նկարագրել հեղինակը դեկավար գինուորական գործիչներից մէկի՝ օրուայ հերոսի, մեծարման տեսարանը:

«Այդ ճաղը եւ յաջորդող ճաղերը ուղղուած էին՝ սեղանի գլխում նստած փոքրահասակ, սեւլուկ, գոհունակութեամբ լցուած չնչին դէմքով մի անձնաւորութեան: Կէս գինուորական եւ կէս քաղաքացիական զգեստ հագած այդ մարդուն կոչում էին հրամանատար եւ հերոս: Եւ ամէն անգամ, որ նրան կոչում էին հրամանատար եւ հերոս, նրա աչքերը փայլում էին, կուրծքը վեր էր տնկում եւ ժպտում էր:

Մօտը նստած, նշաձեւ մեծ աչքերով, մսոտ դէմքով եւ թրջուած շրթունքներով մի կին աչքերը յառում էր նրա վրայ եւ հրճուում: "Հերոսը" մերթ ընդ մերթ աչքի տակով նայում էր դահիճում նստած խաղացողներին, կարծես ասում էր տեսնո՞ւմ էք, լսո՞ւմ էք...» (էջ 125)[190]:

Ահա հեղինակի տուած գնահատականները պետական գործիչների եւ դաշնակցական պառլամենտի մասին.

«Այդեւս յոգնած էր անդադրում վազվզելուց պատահական կահկարասիներով եւ պատահական մարդկանցով լցուած գրասենեակից գրասենեակ: Յոգնած էր պետական անկայուն պաշտօնների կոչուած եւ գործից անտեղեակ նախկին վարժապետներից...» (էջ 132)[191]:

«Ոդերգութիւնները բեմի վրայից իջել են եւ բռնել կեանքի ասպարէզը... մթնոլորտը լցուած է վառօդով, համատարած թշուառութեամբ եւ քաղաքական զարմանագան դէպքերով... Մեր համեստ թատերական դահլիճը վեր է ածուել պառլամենտի, ուր, գաւառներից եկած անյայտ մարդիկ շեքսպիրեան ճառեր են արտասանում...» (էջ 133)[192]:

«-- Այդ մասին խօսիր քաղաքական գործիչների հետ...

-- Դա է, էլի: Կարելիութիւնների վաճառականներ... դէպքերի շահագործող վաշխառուներ...

-- Նրանք էլ սոսկալի պատասխանատուութիւններ ունեն:

-- Չեմ ասում: Գիտեմ մի բան. փոքր են եւ սահմանափակ եւ այդ պատճառով էլ աշխարհը անշնչելի է դարձել» (էջ 160)[193]:

«-- Չեմ կարող համաձայնուել եւ ոչ մի վայրկեան այն մարդկանց հետ,-- շարունակեց Հէրեանը,-- որոնք յանդգնում են այդպիսի պատասխանատուութիւնների տակ ընկնել... Սոսկալի պատասխանատուութիւններ... ընդունում եմ որ մեր ազգային ճակատագիրը գտնում է միջակ եւ անպատասխանատու մարդկանց ձեռքում... Մեզ պակասում են խորհրդաստ եւ հանճարեղ պետական գործիչներ...» (էջ 306)[194]:

Երբ տեղի է ունենում փետրուարեան դաշնակցական աւանտիւրան վէպի գլխաւոր հերոսը Հէրեանը հետեւեալ խօսքերով է ընդունում այն.

«-- Սրիկաներ, սրիկաներ,- գոռած [sic] Հէրեանը ամբողջ ուժով,-- հազիւ նաւը պատրաստւում էր շարժուել, նորից եկած երկիրը քարուքանդ անելու» (էջ 602)[195]:

Անկարելի է այստեղ բերել բոլոր այն մէջբերումները, որոնք բնութագրում են հեղինակի եւ նրա հերոսների զգալի մասի բացասական վերաբերմունքը դէպի դաշնակցականների արկածախնդրական տակտիկան եւ նրանց կառավարութիւնը, այստեղ միայն ես կը բաւականանամ թուարկելով համապատասխան էջերը՝ 23, 47, 52, 54, 55, 60, 66, 134, 430, 472, 473, 474 եւ շատ ուրիշ էջեր: Վէպը ամբողջովին ուղղուած է արկածախնդրական այդ քաղաքականութեան դէմ: Պարտադիր չէ, որ այդ մասին անպայման բոլշեւիկեան ագիտատորները մերկապարանոց ճառեր ասեն: Ի դէպ վէպում նկարագրուած են եւ կոմունիստները, որոնք նոյնպէս իրենց խօսքն ասում են կառավարութեան եւ նրա քաղաքականութեան մասին: Ահա մէկ օրինակ միայն: Կոմունիստների ընդյատակեայ նիստն է, ուր խօսում են օրուայ հրատապ խնդիրների մասին. «... Պրոպագանդան գօրքերի մէջ: Ահ այժմ, ամենակարեւոր խնդիրը դա է... իշխանութիւնը յենւում է բանակի վրայ եւ գնալով խրւում է աւանտիւրաների մէջ... կամաւորական այդ մտայնութիւնը սնւում է պատերազմով...» (էջ 239)[196]:

Շատ կարեւոր է նշել, որ բոլոր դէպքերում, երբ հեղինակը խօսում է դաշնակցական գործիչների մասին նա խիստ բացասական գոյներով է գծագրում նրանց, ցոյց տալով բացարձակ արհամարհական վերաբերմունքը նրանց հանդէպ: Եւ ընդհակառակը կոմունիստներին նկարագրելիս նա միանգամայն դրական, համակրական վերաբերմունք ունի: Ահա մի օրինակ.

«Մի մեծ սեղան: Մի ինքնաեռ: Բաժակներ, պնակներ, անուշեղէններ, կարկանդակ: Ամէն ինչ ընտանեկան պարզ հաւաքոյթի տպաւորութիւնը թողնելու համար:

Միջահասակ, սրուած կարճ մօրուքը ծնօտին կպած, այտերը յոգնած, ունգերից վայր իջնող երկու խոր գծերով ու ծանր աչքերով մի մարդ նախագահում է:

Կենտրոնից եկած ընկեր է:

Շուրջը երիտասարդ տղաներ եւ աղջիկներ:

Աղջիկները՝ առնական դէմքով, կտրուկ շարժուձեւերով:

Տղաները՝ համեստ, լուրջ, մտատանջ» (էջ 239)[197]:

Վէպում ճիշդ է բացատրուած նաեւ կոմունիստների յաջողութեան պատճառները՝ նրանց գիտական աշխարհայեացքը: Ահա ինչպէս է կատարում վէպի գլխաւոր հերոսուհու՝ Զուարթի հոգեկան բեկումը.

«Տարակոյս չկայ, ինչ որ բան սեղմում է ներսում. "պէտք է սովորել, հասկանալ պատմական եւ հասարակական երեւոյթները գիտական սառը մեթոդով" մտածում է նա:

Գիտական, մանաւանդ գիտական: Ոչ թէ զգացումով, այլ՝ անհերքելի տուեալների վրայ կառուցուած աշխարհայեացքով:

Զուարթը կամաց-կամաց փոխւում է: Ամէն ինչ նրա մէջ շրջւում է, տարբեր ձեւեր ստանում, տարբեր նշանակութիւն:

... Մարքսեան տեսութիւնը, օղակ-օղակ շաղկապուած հրամայական տրամաբանութեամբ շղթայում է նրա կապը:

Ամէն ինչ դիւրին կերպով գտնում է իր բացատրութիւնը, ամէն ինչ պարզւում է, կորցնում է իր գաղտնիքը...

Գիտական աշխարհայեացքով... (էջ 240-241)[198]:

Իր 21 էջանոց գրախօսականով անանուն հեղինակը չի կարող բերել գոնէ մի օրինակ, որը ցոյց տար թէ վէպի հերոսները կամ հեղինակը արդարացնում են դաշնակցական տիրապետութիւնը:

Գրախօսի միակ յաղթաթուղթը (կոզիրը) դա վէպի հերոսների հայ ազգային ոգու մասին տուած խղճալիստական, անշուշտ ազգայնական բթու հովերով բառական շաղախուած դիտողութիւններն են, որոնց վկայակոչմանն է նուիրուած գրախօսականի առնուազն երկու երրորդը: Սակայն հանէք այդ դատողութիւնները եւ վէպը կը փլուի, կը դադարի գոյութիւն ունենալուց: Ինչպէս եւ, ըստ իս, չի կարող լինել որեւէ վէպ այդ տարիներին նուիրուած, թէկուզ ամենաօրթոդոքս գրողի գրչով գրուած, որտեղ հերոսները հանդէս չգան նման դատողութիւններով: Այդ տարիների Հայաստանի ամբողջ մթնոլորտը յագեցուած էր այդ մտայնութեամբ: Կեանքի ճշմարտութիւնն է պահանջում այդ մթնոլորտը պահպանել, երբ վէպ է գրում 1918-1920 թուականների մասին: Կ. Զարեանի իրապաշտ արուեստագէտի վարպետութեան մասին է վկայում այդ մթնոլորտի առկայութիւնը վէպում, եւ դա վէպի դրական եւ ուժեղ կողմերից մէկն է:

Ազգային սնապարծութեան, հայ ազգային ոգու բացառիկութեան մասին դատողութիւնները տիպական են ու բնորոշ դաշնակցութեան տիրապետութեան շրջանի մտաւորականութեան ամենախոշոր տոկոսի համար, իսկ եթէ եղել է տիպական, պիտի տեղ գտնի գեղարուեստական գործում անպայման: Աւելին կարելի է ասել, այն շարունակում է տիպական լինել եւ մեր այսօրուայ մտաւորականութեան մի որոշ խաւի համար[:] Բերեմ մի օրինակ միայն:

1960[199] թուականին Պետհրատի հրատարակութեամբ լոյս տեսաւ Վ. Սարոյեանի «Մարդկային կատակերգութիւն» վէպը, որի յառաջաբանը գրել է Խ. Դաշտենցը: Էսէք նրա դատողութիւնները հայկական ոգու մասին. «Հնարա-

տր է, որ որեէ շարքային ամերիկացի օտարութիւնից վերադառնալով իսկապէս համբուրի կայարանի չեմքը, բայց դա ամենեւին բնորոշ չէ ամերիկացու համար: Այդ յուզիչ պատկերները արդիւնք են անկասկած Սար[ո]յեանի հայկական ոգու, որ այնպէս ցայտուն կերպով իրեն զգացնել է տալիս նրա ամբողջ ստեղծագործութեան մէջ: ... Սարոյեանը իբրեւ տաղանդ մեծապէս նաեւ հայկական ոգու արդիւնք է: Բնութիւնը զարմանալի խաղեր է անում մեր ժողովրդի հանճարի հետ: Բուն հայկական հողի վրայ ծլարձակուելով, այդ հանճարը դառնում է մի վիքխարի Խորենացի, մի Կոմիտաս, կամ ասենք թէ մի Մարտիրոս Սարեան: Ռուսական յայնարձակ ծովեզերքին ընկնելով նա դառնում է մի Այվազովսկի: Եւրոպական հեռաւոր տարագրութեան մէջ հայրենիքի կարօտից մաշուելով, նա վերածւում է մի Ալիշանի, մի Նորայր Բիւզանդացու: Ամերիկեան աշխարհի բոհ ու բոհի մէջ ընկնելով, նա պոռթկում է որպէս մի Վիլեամ Սարոյեան: Սոցիալիստական մեր հայրենիքի արգասաբեր դաշտում փթթելով նա կարող է պարգեւել մեզ Արամ Խաչատրեանի հմայիչ երաժշտութիւնը, կամ Վիկտոր Համբարձումեանի ձեռքը դնել տիեզերական գաղտնիքների բանալին»[200]:

Եւ այսպէս «մեր ժողովրդի հանճարը» եւ «Հայկական ոգին» ժամանակից, տարածութիւնից ու սոցիալական միջավայրից դուրս մի ուժ է, որ միեւնոյն է պէտք է ծաղկի եւ փթթի բոլոր պայմաններում, լինի դա միջնադարեան խաւարամտութեան, Ցարական Ռուսաստանի, իմպերիալիստական Ամերիկայի թէ Սովետական Հայաստանի պայմաններում:

Եթէ այսպէս էլ կարող է դատել 1960 թուականին սովետահայ գրող Խ. Դաշտենցը, ինչո՞ւ 1918 թուականին այդ ոգով դատողութիւններ չեն կարող անել Ուրանեաններն ու Սուլթանեանները, Պերոնեաններն ու Պետրոս Մարկերը:

Թւում է, թէ անանուն գրախօսը մակերեսօրէն է կարդացել վէպը, երբ նոյնացնում է հերոսների ու հեղինակի տեսակէտները (չեմ ուզում գրախօսի անբարեխղճութեամբ բացատրել այդ երեւոյթը): Վէպում շատ պարզ ցոյց է տրուած որ նման դատողութիւններ անող հերոսները չեն վայելում հեղինակի համակրանքը:

Աւելին, վէպը հենց կառուցուած է տարբեր խառնուածքի հերոսների հակադրութեան սկզբունքով: «Այս վէպը,– գրում է հեղինակը իր յառաջաբանում,– սովորական առումով պատմական վէպ չէ, այլ պատմութիւնը մի քանի հայ հոգիների, որոնց վիճակուեց ապրել մեր ազգային կեանքի ամենաբախտորոշ ժամանակներից[201] մէկում»: Հեղինակը ձգտել է ցոյց տալ, թէ տարբեր միջավայրերում սնուած տարբեր շահագրգռութիւններ ունեցող մարդիկ ինչպէս են հասկանում կամ մեկնաբանում հայրենասիրութիւնը: Մի կողմում գործնական հայրենասէրներն են, ինչպէս կենտրոնական հերոսն է Հէրեանը, որն ամէնից քիչ է ճառում հայրենասիրութեան մասին, սակայն ոչ մի դժուարութեան առաջ կանգ չի առնի հայրենիքին ծառայելու համար: Միւս կողմում այն մարդիկ են, որոնք սիրում են միայն փքուն ճառեր ասել իրենց հայրենասիրութեան մասին, բայց իրականում այդ «հայրենասիրութիւնը» միայն ծա-

ռայեցնում են իրենց անձնական շահերին: Ի դեպ այս վերջիններն են որ ամենից շատ ազգայնամոլ ու ռեակցիոն տեսակետներ են զարգացնում:

Չի կարելի չտեսնել վեպի հերոսների հակադրման այս կարեւոր սկզբունքը եւ նոյնացնել հեղինակի եւ հերոսների տեսակետները:

Պետրոս Մարկը, օրինակ, որից ամենից շատ մեջբերումներ է կատարել գրախօսողը, հեղինակի կողմից ներկայացուած է որպէս օտարութեան մէջ այլասերուած այն հայերից մէկը, որոնք սիրում են ազգասիրական փքուն տիրադներ [< ֆր. tirade. Վ.Մ.] արտասանել, բայց էականում չարչիներ են, պատրաստ իրենց անձնական շահի համար վաճառքի հանել ամէն մի ազգային սրբութիւն: Պետրոս Մարկը հեղինակի բնութագրմամբ այն հնդկահայերից մէկն է, որոնք «ահաւոր վաճառականներ են, ասում են... գրաբարը անգլերէնի հետ են խառնում եւ ստեղծինը Մաշտոցի հետ»[202]: Հայաստանը ուր Պետրոս Մարկը եկել էր հաւանօրէն շահամոլական նպատակներով յրիւ հիասթափեցրել է նրան. «Պէտք է խոստովանեմ,-- ասում է նա,-- մեր երկրում շատ անգամ ինձ օտար եմ զգում... Օտար՝ արտաքին, դրսի կեանքին... Այն չէ որ սպասում էի, այն չէ...»: Այդ հիասթափութեան պատճառներից մէկն էլ երկրում գոյութիւն ունեցող նիւթական դժուարութիւններն են. «Մէկ էլ սկսեց գանգատուել, որ Հայաստանում կօշիկի լաւ կաշի չի ճարում... Մի երկար ճառ ասաց կաշուի պատրաստութեան տարբեր ձեւերի մասին եւ ցոյց տուեց իր ոտքերը... Երեւակայիր տրեխներ էր հագել»[203]:

Պետրոս Մարկը հեղինակի յղացմամբ մարմնացնում է իր մէջ կեղծ եւ վերացական հայրենասիրութիւն, հետեւապէս նրա ազգայնամոլ պաթետիկ ճառերը, նպատակ ունեն միայն մերկացնելու այդ կեղծ հայրենասիրութեան չարչիական ոգին: Այն ինչ գրախօսը ներկայացրել է որպէս վեպի ամենախոցելի կողմը, նրա արժանիքներից է:

Պետրոս Մարկին հեղինակը հակադրել է Հէրեանին, որը պաթետիկ ճառեր չի ասում, բայց հայրենիքին ծառայելու համար պատրաստ է ամէն տեսակ զրկանք տանելու: Եւ նրա շուրթերով հեղինակը ցոյց է տալիս իր բացասական վերաբերմունքը թէ դէպի Պետրոս Մարկը եւ թէ բոլոր նրա նման վերացական ու բթամ ազգայնամոլ «հայրենասէրները»:

Թիֆլիսում, երբ մի խումբ հայ մտաւորականներ նոյն բնոյթի ազգայնամոլ ճառեր են ասում, հեղինակը Հէրեանի միջոցով դարձեալ իր բացասական վերաբերմունքն է դրսեւորում: «Այդ խօսքերը Հէրեանին յիշեցրին Հայաստանում հանդիպած Մարկին: Եթէ այստեղ լիներ, մտածեց նա, նա էլ կ՚ասէր իր ասելիքը:

-- Գիտէք, Հայաստանում...»[204]:

Երբ Հէրեանը լսում է Սեւանի մատուռում Պետրոս Մարկի հերթական դատողութիւնները «հայկական ոգու» մասին եւ նրա հիասթափութիւնները իրական Հայաստանից, եւ իջնում է ցած ու տեսնում հայ պարզ ժողովրդի խմբական պարը, նա նորից այդ առողջ իրականութիւնը հակադրում է Պետրոս Մարկի զառանցանքին. «Հէրեանը նայում էր հիացած: Ո՞ւր էր Պետրոս

Մարկը, մտածում էր նա, բոլոր գար տեսնէր: Պարոն նա ճարտարապետութիւն է եւ կառուցողական ոգի:

Ճկուն, կայտառ, ազատ հայութիւնն էր այդ, որի գեղեցիկ շարժումների մէջ բաբնուած էր եւ վեհութիւն, եւ խորհուրդ:

Ահ, Մարկը գար եւ տեսնէր...»[205]:

Վէպի մակերեսային ընթերցման արդիւնք է, երբ գրախօսը «անսքող իդէալիստ-միստիկ Մարկ Պետրոսի» հայեացքները նոյնացնում է հեղինակի հայեացքների հետ ասելով թէ «հեղինակը բարոգում է ռասսայական եւ իդէալիստական խաւարամտութիւն»:

Այդպիսի մակերեսային մօտեցում է նաեւ, երբ գրախօսն ասում է թէ իբր վէպի հերոսներից մէկը «համեմատելով հայկական ոգին վրացականի հետ» յանգում է այն եզրակացութեան, որ իբր «վրացիները կորցրել են իրենց ազգային մտայնութիւնը»: Հայերին վրացիներին հակադրելու ոչ մի ակնարկ չկայ վէպում: Խօսքը Վրաստանում ապրող հայերի եւ բուն Հայաստանում ապրող հայերի մասին է: Ուշադիր ընթերցման դէպքում դժուար չի նկատել, որ այդ հատուածի ամբողջ գրոյցը ընթանում է գաղութահայութեան այլասերման մասին. «Թիֆլիսը, որ այնքան մօտ է երկրին, գաղութային մտայնութիւն ունի... ես դիտել եմ ճամբորդութիւններիս ընթացքում, երբ հայր լքում է լեռները [ ] նսեմանում է, փոքրանում, բարոյալքւում...»[206]:

Այդ նոյն ձեւով այն բացասական որակումները, որ վէպում ասուած է [sic] Թիֆլիսի փողոցներում բափառուղ դատարկաշրջիկների մասին գրախօսը վերագրում է վրացիներին: Գրախօսականի 9[-րդ] էջում գրուած է. «Վէպը լի է հայկական նացիոնալիզմի քարոզներով, ազգային սնապարծութեան "գոհարներով"»: Բացէք վէպի 190-րդ էջը, ուր ասուած է վրացիների հասցէին. "Միշտ էլ այդպէս են եղել: Այս մարդիկ չեն աշխատել, չեն տանջուել, սարսափների չեն ենթարկուել: Ապրել են ուրիշի աշխատանքով...»:

Ինչի՞ց է երեւում, որ այդ ասուած է վրացիների մասին: Չէ որ նախորդ էջում պարզ գրուած է. «Այդ ժամին Թիֆլիսի կենտրոնական փողոցը լցուել էր գբօսանքի դուրս եկած խառն բազմութեամբ»[207]: Այդ խառն բազմութեան մէջ կարող էին լինել եւ հայեր եւ ռուսներ եւ վրացիներ եւ ամէն մի այլ ազգի ներկայացուցիչ: Մանաւանդ այդ տարիների Թիֆլիսի նման բազմազգ մի քաղաքում:

Այդ նոյն ձեւով վէպի հերոսի Հէրեանի խօսքերը արուեստագէտների ու դերասանների մասին, թէ «դրսից նայես սրբերի են նմանւում, իսկ ներսից ուտելու ձեր նայես՝ տաւարի: Մարդը կենդանի է...: Ազնուագոյն ուտողը չինականն է: Լաւաշի մէջ փաթաթած Դարալագեազի պանիրը պարզ է եւ հիմնական, ինչպէս արօրին յանձնուող արտերը»[208] գրախօսողը որակել է որպէս «ազգայնական գկռտոց» եւ վերագրել է վրացիներին, մինչդեռ, մի քանի տող ցած, պարզ ասուած է, որ այդ ուտողները «հայ դերասաններ էին»:

Դժբախտաբար գրախօսականում փաստերը գլխիվայր շուռ տալու աւելի արտառոց օրինակներ կան: 8-րդ էջում գրախօսը ասում է. «Ուշագրաւ է, որ Ալեքսանդրապոլում գտնուող Հէրեանը ծանր ապրումներ ունի. "Վերջին եր-

կու օբռայ տեսածները եւ ապրումները թոյնի նման դեռ շարունակում էին շրջել նրա արեան մէջ" (էջ 276): Ինչո՞ւ: Որովհետեւ նա համոզուած է, որ Բրեստ-Լիտովսկու դաշնագրութեամբ Լենինը լքել է հայերին (էջ 467)»:

Ուշադրութիւն դարձրէք մէջբերման մէջ էջերը ցոյց տուող թուերի վրայ: Կարելի՞ է, Լենինականում ունեցած նրա ծանր հոգեվիճակը բացատրել երկու հարիւր էջ յետոյ տեղի ունեցած խօսակցութեամբ: Սա, մեղմ ասած, կոչւում է աղաւաղել փաստերը: Լենինականում նա ծանր ապրումներ ունի, որովհետեւ նաւը մնացել է բաց դաշտում, շոգեքարշ չկայ, որ նա կարողանայ շարունակել իր ճանապարհը: Ինչ կապ ունի դա Լենինի կամ Բրեստ-Լիտովսկու պայմանագրի հետ: Նկարագրած դէպքերից երեք ամիս յետոյ Երեւանում Բրեստ-Լիտովսկի մասին եղած խօսակցութիւնը ես հարկադրուած եմ ամբողջովին բերել ցոյց տալու համար գրախօսի անբարեխղճութիւնը.

«-- Մենք կռւում ենք մեր գոյութեան համար,-- պատասխանեց Հէրեանը,-- աւելի լաւ է պատռուով մեռնել, ոչնչանալ քան կորցնել այդ անկախութիւնը:

-- Դա, բարժուական տեսակէտ է,-- յետեւի շարքից առաջ գալով առարկեց Ռիհար, սրուած մօրուքով ակնոցաւոր մէկը: Մեռնել անկախութեան համար՝ գեղեցիկ գաղափար է, բայց անկախութիւն ունենալ մեռնելու համար՝ յիմար գաղափար է...

-- Չհասկացայ...

-- Շատ պարզ է: Բաւական չէ անկախութիւն ունենալ, պէտք է այդ անկախութիւնը կարողանալ պահել: Մերոնք այդ շատ լաւ են հասկանում եւ այդ պատճառով էլ յոյսերը դրել են դաշնակից պետութիւնների վրայ եւ մանաւանդ Ամերիկայի հոգատարութեան վրայ... Իսկ ես համոզուած եմ, որ Վիլսոնի խոստումները օդային խոստումներ են, Հայաստանում նաւթ չկայ... ո՞նց Ամերիկան մեզանով հետաքրքրուի՞... Ամերիկացիները նախ եւ առաջ վաճառականներ են... մնացածը դատարկ խօսք է...

-- Իսկ Ռուսաստանը կարծո՞ւմ էք նրանից տարբեր է...

-- Այո, տարբեր է: Յեղափոխութիւնը ամէն ինչ փոխել է: Լենինը քանիցս յայտարարել է, որ Հայաստանի անկախութեանը չի ուզում ձեռք տալ... Նրա ներկայացուցիչ Լեգրանը, որ այստեղ է, անդադար կրկնում է, որ մեր ազգային իրաւունքները պիտի պաշտպանեն...

-- Եթէ այդպէս է, ինչո՞ւ... ինչո՞ւ ստորագրեցին Բրեստ-Լիտովսկի դաշնագրութիւնը,-- հարցրեց Հէրեանը:

-- Յեղափոխութիւն է... այսօր, սահմանների հարցը ոչ մի կարեւորութիւն չունի, համաշխարհային յեղափոխութիւնը ամէն ինչ կը փոխի... Տաճկաստանը կը դառնայ կոմունիստ, ինչպէս եւ բոլոր միւս երկրները...

Եւ մարդը, սրածայր մօրուքի ծայրը երկու մատերով օրօրելով նկարագրեց ծնուող նոր աշխարհի հրաշալի մի պատկեր: Պրոլետարիատի շահերը արտայայտող Ինտերնացիոնալը համաշխարհային գործերի ղեկը կը վերցնի իր երկաթէ ձեռքերի մէջ, կը վերացնի դասակարգերը, կ՝ազատագրի աշխատաւոր մասսաները, կը հաստատի արդարութիւն եւ հաւասարութիւն, կը ջնջի

սահմանները, աւելորդ կը դարձնի պետութիւնների գոյութիւնը, բանակների գոյութիւնը, ոստիկանութեան գոյութիւնը:

– Այո...

Մարդը խօսում էր այնքան համոզուած շեշտով, որ Հէրեանը չիմացաւ ինչ պատասխանի: Ո՞վ չէր ուզում ապրել գազանութիւնից, անարդարութիւնից, թշուառութիւնից լուացուած մի աշխարհում: Հայաստանի բոլոր հորիզոնների ծայրերին հրդեհներ էին ճարճատում, բոլոր անկիւններից արիւնի հոտ էր գալիս, բոլոր ճանապարհներից մահ էր առաջանում, եւ բնական է, յոգնած էին, պէտք ունէին հաւատի...

Հայերը յոյսերի կարօտ էին:

Հէրեանը հեռացաւ: Նկատեց, որ ամէն տեղ, Բոլվարի եւ կենտրոնական փողոցի տարբեր անկիւններում մարդիկ համախմբուած խօսում էին նոյն հարցերի շուրջը: Ամէն տեղ էլ, կոմունիստները, այլեւս առանց ծածկուելու, ուժեղ պրոպագանդա էին անում: Խոստանում էին հաց, խաղաղութիւն, անկախութիւն»[269]:

Մի՞թէ զարմանալի է, եթէ Հէրեանի պէս մէկը կարող էր առաջին անգամից չհասկանալ եւ բացասականօրէն ընկալել Բրեստ-Լիտովսկու պայմանագիրը: Չէ որ պատմութիւնից մենք գիտենք, որ շատ եւ շատ կոմունիստներ առաջին շրջանում չհասկացան այդ միջոցառման կարեւորութիւնը եւ Լենինը հարկադրուած էր իր մի քանի ելոյթներում պարզաբանել դրա անհրաժեշտութիւնը:

Եւ միթէ այս հատուածը չի խօսում այն մասին, որ հեղինակի համակրանքը որոշակի կոմունիստների կողմն է:

Փաստերի աղաւաղման մի ուրիշ օրինակ եւս:

Գրախօսը գրում է, թէ «հեղինակն այն համոզումն ունի, որ հայ իրականութեան մէջ կոմունիզմը ներմուծուած է դրսից: Այդ բանի "ապացոյցն" է,– գրում է նա,– հետեւեալ իրողութիւնը: Հէրեանն Ալեքսանդրապոլի մի գիւղում է, երբ բռնկում է Մայիսեան ապստամբութիւնը: Եւ ահա, գիւղ է գալիս ռազմա-յեղափոխական կոմիտէի լիազօրը»: Միթէ՞ այն փաստը, որ գիւղացիները իրենք իրենց, տարերայնօրէն չեն ապստամբուել այլ Լենինականի բանուորների ներկայացուցիչն է եկել նրանց բացատրելու Մայիսեան ապստամբութեան նպատակները, խօսում է այն մասին, որ «Կոմունիզմը ներմուծուած է դրսից»: Սա ինչ արտառոց հետեւութիւն է: Գրախօսի [sic] իր այդ թեզը ապացուցելու երկրորդ «օրէնք» փաստը այն է, որ երբ խօսում է ռազմա-յեղափոխական կոմիտէի ներկայացուցիչը, գիւղացիներն իրր մնում են լուռ՝ «Համակրանքի եւ ոչ մի խօսք չի լսում ռեւոլիւցիոներից գիւղացիներից, իսկ Հէրեանը լռում է: Սա իրականութեան կեղծում է, չէ՞», բացականչում է նա:

Բայց ի՞նչպէս է այդ ամէնը տրուած վէպում: Հէրեանի եւ ռազմա-յեղափոխական կոմիտէի ներկայացուցչի հանդիպումը տեղի է ունենում գիւղի քահանայի տանը, ուր հաւաքուած են նաեւ մի քանի, հաւանօրէն ունեւոր գիւղացիներ: Նրանք իրօք լռում են, որի հետեւանքով եկած ներկայացուցիչը ասում է, որ նա կը հրաւիրի «ընդհանուր միտինգ» ուր «գիւղի աշխատաւոր

զանգուածը» կ'ասի իր խօսքը: Սակայն սենեակում եղած աշխատաւոր գիւղացին՝ Մարտիրոսը անմիջապէս ակտիւ կերպով միջամտում է, որից յետոյ, միւս գիւղացիներն էլ գգուշութեամբ սկսում են իրենց համաձայնութիւնը յայտնել: Իսկ Հէրեանը լռում էր, որովհետեւ ոչինչ չէր հասկանում այդ իրադարձութիւններից. «Հէրեանը լսում էր առանց մասնակցելու վիճաբանութեանը: Մտածում էր, որ աւելի խոհեմ է չհակաճառել: Միեւնոյն է, ինք ոչինչ չէր կարող փոխել: Պէտք էր սպասել: Վաղը քաղաքում ամէն ինչ կը պարզուէր»:

Հեղինակը ոչ միայն հեռաւոր ակնարկ անգամ չի անում այն մասին, թէ կոմունիզմը դրսից էր ներմուծուած այլ եւ որոշակի ցոյց է տալիս, թէ հայ աշխատաւոր գիւղացին իւրայատուկ իր հոգեբանութեամբ, սակայն ամբողջովին կոմունիզմի կողմնակիցն է: Ահա գիւղի աշխատաւորութեան ներկայացուցիչ Մարտիրոսի խօսքերը.

«Մարտիրոսը ոտքից ձեռքերը բացեց, աչքերը պլզեց եւ սաստիկ յուզուեց:

-- Ախր պէտք է հասկանալ,-- պէտք է հասկանալ... Երբ պոէզդը գծի վրայ գնում է, աջ ու ձախ չի նայում, գնում է եւ վաս սալամ... Եւ մէկ էլ, պէտք է հասկանալ, ռուսը կայ, չէ՞, ռուսը...

-- Դէ, էդ մէկը ճիշդ է,-- համաձայնուեց մէկը,-- պէտք է ընդունել... ռուսը, հենց գործը դրանում է, ռուսը...

Մարտիրոսը քաջալերուեց:

-- Ախր պէտք է հասկանալ: Ռուս կայ, ըղորդ է, ամա ռուսը էլ հին ռուսը չի եւ թագաւորն էլ էն թագաւորը չի... Դէ, մենք ամէն բանից մի քիչ խաբար ունենք... Չինովնիկ մարդը, դէ, գիտէք... Հիմա դրութիւնը էդպէս է. նոր թագաւորի անունը Լենին է եւ էս Լենինը ուզում է ամէն տեղ արդարութիւն լինի: Անպատճառ ուզում է: Ասում են կանչել է վեզիր մեզիրին եւ ասել, որ աշխարհի վրայ էլ հարուստ չի ուզում, ասել է, ոսկի-մոսկի, հող, ապրանք տանեն բաժանեն աղքատներին...

Գիւղացիները լսում էին աչքերը յայն բացած:

-- Լենինը ասել է բոլ գնդակահարեն բոլոր հարուստներին, որ խեղճերին մինչեւ էսօր շահագործել են... ասել է էս հրամանս բոլ գնան կարդան Ռուսաստանի եւ միւս երկրների բոլոր տեղերում...»[210]:

Ժողովրդական պրիմիտիւ պատկերաւորութեամբ միանգամայն ճիշդ տրուած է Հոկտեմբերեան յեղափոխութեան առաջադրած խնդիրների ընկալումը հայ աշխատաւոր գիւղացիութեան կողմից: Իսկ վէպի այլ էջերում հեղինակը պարզ ցոյց է տալիս թէ ինչպիսի խանդավառութեամբ էին դիմաւորում հայ գիւղացիները կոմունիստներին ու կարմիր բանակին: Բերեմ մի օրինակ. «Եղեռնվկայի ամբողջ բնակչութիւնը դուրս էր թափուել: Կարմիր բանակը Դիլիջանից վայր էր իջել եւ ահա շուտով կը հասնէր լիճը եւ կը քայլէր Երեւանի վրայ:

... Լուսաբացի մօտ, ժողովուրդը մտել էր փսնք եւ ազատել բանտարկուած կոմունիստներին: Նրանցից ոմանք մեկնել էին դիմաւորելու համար կարմիր բանակը, իսկ միւսները ազգաբնակչութեանը հաւաքել էին եւ միտինգ

կազմակերպել: Մեկը միսի ետեւից նրանք բարձրացել էին տափակ մի տանիքի վրայ եւ, ոգեւորութեամբ ճառեր արտասանել:

Տները զարդարուել էին կարմիր դրօշակներով»[211]:

Ո՞րն է այստեղ գրախօսի տեսած «իրականութեան կեղծումը»:

Շարունակենք փաստերի աղաւաղման օրինակները:

9-րդ էջում գրախօսը գրում է. «[Կ]արելի՞ է անտարբեր կարդալ այն յերիւրանքը, թէ "Բոլշեւիկները թուրքերի բարեկամ են... իսկ թուրքերը սպանեցին, կոտորեցին մեր ծնողներին, մեզ էլ գցեցին այս վիճակի մէջ" (էջ 585): Այս թխուած սիլլոգիզմի իմաստն այն է, որ 1918-1920 թուականների հայ ժողովրդի ողբերգութեան պատճառը բոլշեւիկներն են, այլ ոչ Դաշնակցութիւնը: Նոյն համոզմամբ է Հէրեանը, որը երազում է մի օր նուաճել այլ երկրներ, թագաւորութիւններ եւ բալանուած ոսկին ու հարստութիւնը Հայաստան մուծել (էջ 583)»:

Միայն զարմանալ կարելի է, թէ ամէն ինչ սեւ գոյներով ներկայացնելու մոլուցքը, ինչպէս կարող է մթագնել մարդու տեսադաշտը, որ ամենասովորական քամաղացները կարող են նրան թուալ աւազակ ու ահաւոր ամրոցներ:

Նախ ի՞նչ «երկրներ ու թագաւորութիւններ է» ուզում «նուաճել» Հէրեանը որպէսզի «ոսկին ու հարստութիւնը Հայաստան մուծի»: Մի որոշ շրջան Հէրեանը քաղաքի աւապաստան տղաների հետ ապրում է մի բանդուած, առանց կտուրի գօրանոցի աւերակներում: Գիշերուայ ցրտին տղաների տրամադրութիւնը բարձրանալու համար նա զարմանալի ծովային ճանապարհորդութիւնների մասին է պատմում, իրենց պատկերացնելով որպէս այդ դէպքերի կենդանի մասնակիցներ.

«Գիշերները կրակ էին վառում եւ շուրջը նստում:

Բոցերը լուսաւորում էին այդ երեխաների շուտ թառամած, տանջուած, հիւանդոտ երեսները: Յնգոտիներով ծածկուած, ոջիլներով լցուած եւ ոտաբոբիկ, նրանք կապտած շրթունքները սեղմում էին, ջերմոտ աչքերը յառում Հէրեանի վրայ եւ սպասում, որ մի բան պատմի:

-- Դէ, նաւապետ ջան, սպասում ենք...

Հէրեանը շուրջն էր նայում եւ չիմնծու մտահոգում:

-- Քամին էլի սկսեց փչել,-- ասում էր նա հեռաւոր ձայնով:

-- Շատ ուժեղ է փչում... մլաւում է...

Տղերքը մէկը միսին էին սեղմում: Բոլորի ուշադրութիւնը լարում էր:

-- Ուրեմն, ովկիանոսի վրայ ենք... Հին ժամանակներում, առագաստնաւերով էին ճանապարհորդում... Մեր նաւը չորս կայմանի է. բոլոր առագաստները բացուած են, ուռել են, կարծես պիտի ճայթեն... Քիրը բիզ, ամբողջ մարմնով մէկ կողմ թեքուած նաւը արագ սուրում է... Յետեւում, դեկի մօտ կանգնածները թող ուշադիր լինեն»[212]:

Հերթական այդ պատկերաւոր պատմուածքը Կոլումբոսի ճանապարհորդութեան մասին է.

«-- Չէ՞ք յիշում... կարծես երէկ էր... Եւ մենք երդուեցինք հաւատարմութիւն Կաստիլիայի շատ գեղեցիկ մեր թագուհուն...

-- Յիշում ենք, այո, յիշում ենք...

-- Տղե[ր]ք ջան, շատն անցել է քիչն է մնացել...» եւ այլն[213]:

Այնուհետեւ խօսւում է այն մասին, որ կը գտնեն նոր երկիրը՝ «արագավազ ձիերի վրայ կ'ասպատակենք երկիրը հիւսիսից հարաւ... Եւ տեղի կ'ունենան կռիւներ... կը գարնենք աջ ու ձախ. կը գրաւենք գիւղեր, քաղաքներ, թագաւորութիւններ եւ կը տանենք բազմաթիւ հարստութիւններ, որոնցով կը զարդարուեն Կաստիլիայի եւ Արագոնի պալատական սրբերին նուիրուած եկեղեցիների աւագ սեղանները»[214]:

Ոչ մի տող չէք գտնի վէպում այն մասին, թէ Հէրեանն ուզում է այդ թալանած ոսկին «Հայաստան մուծել»:

Բոլոր դասագրքերում շարադրուած Կոլումբոսի պարզ պատմութիւնը մեր անանուն գրախօսի մոգական գաւազանով վեր է ածւում Հէրեանի նուաճողական քաղաքականութեան, իսկ Իսպանիան Հայաստանի:

Պակաս արտառոց չէ նաեւ բոլշեւիկների մասին «յերիւրանքն» ու «թխուած սիղ[լ]ոգիզմը»: Գրախօսը այնպէս է չափազանցրել եւ գլխիվայր շրջել փաստերը, որ հարկադրուած եմ ընդարձակ մէջբերումներ կատարել, որովհետեւ փաստերն աւելի պերճախօս են, քան նրանց մասին արուած մեկնաբանութիւնները:

«Փլած տան մէջ քաղաքական բուռն վիճաբանութիւններ էին գնում: Այդ վիճաբանութիւնների պատճառը միշտ էլ Սիսակն էր...

-- Հա,-- սկսում էր նա, երբ տղաները, յոգնած, չարչարուած, լռած նստում էին,-... էսօր, երկար ճառեր լսեցի... ճիշդ բաներ էին ասում...

-- Ի՞նչ էին ասում...

-- Ճիշդ բաներ էին ասում,-- շարունակում էր Սիսակը,-- ես ուղղակի համոզուեցի... Խօսողները հայեր էին, իսկական հայեր... Էլ պիտի չթողնենք, որ հարուստները կեղեքեն աղքատներին, ասում են նրանք. էլ պէտք չէ որ աշխատաւոր մարդիկ քրտինք թափեն եւ հարուստները ուտեն... Ի՞նչ է, ճիշդ չե՞ն ասում. ի՞նչ է, սո՞ւտ են ասում... ճիշդ են ասում... Աշխարհում արդարութիւն չկայ, պէտք է արդարութիւն հաստատել: Ջէնքի ուժով: Պիտի հարուստների թեւերը կտրել...

-- Ի՞նչ է, հարուստները ծի՞տ են, որ թեւեր ունենան...

-- Ծիտ չեն, գիշատիչ թռչուն են, որ յարձակւում են թոյլերի վրայ, կտուցի հարուածով նրանց աչքերը հանում, նրանց սիրտը ուտում եւ առհասարակ... Ես նրանց ատում եմ, ամբողջ սրտով ատում եմ... Հասկացէք, բոլշեւիկները եկել են մեզ նրանց ձեռքից ազատելու համար... Ուրեմն, բարի են եկել... լաւ մարդիկ են... Էնպէս չի՞...

-- Էստեղ հարցը հարուստների մասին չէ,-- առարկում էին ուրիշները,-- այլ թուրքերի մասին... Էդ բոլշեւիկները թուրքերի բարեկամ են... Իսկ թուրքերը սպանեցին, կոտորեցին մեր ծնողներին, մեզ էլ գցեցին այս վիճակի մէջ...

Այդ առարկութիւնների առաջ Սիսակը մնում էր սառնասիրտ:

-- Ես էդ մասին էլ հարց ու փորձ արեցի... Տղաներից մէկի հետ խօսեցի... Նա ինձ ասաց, որ մեր ուժը չի պատի թուրքերի հետ կռուելու համար...

Կոուեցին, ի՞նչ արեցին, յօնքը չինելու տեղ աչքն էլ հանեցին, Կարսի նման վիթխարի բերդը վրայ տուեցին... Ռուս աշխատաւոր ժողովրդի հետ միացած մենք պէտք է աշխատենք յեղափոխութիւնը տարածել ամբողջ արեւելքում եւ մարդկանց, կանանց[,] խոխաներին երջանկութիւն տանք... Եթէ լաւ մտածենք, սրանք ոսկի խօսքեր են...

-- Նրանք ասացին եւ դու էլ հաւատացիր...

-- Հաւատացի, բա, ոնց, հաւատացի... Կարմիր հայերը խոմ ազգի թշնամիներ չե՞ն, խոմ օտարին ծախուած մարդիկ չե՞ն... ժողովրդին սիրում են... սիրտ ու խելք ունեցող մարդիկ են, ուզում են մեզ փրկել... Ուզում են էնպիսի Հայաստան շինել, էնպիսի Հայաստան, որի նմանը իսկի չեն տեսել մեր թագաւորները, հին փողոցները պիտի քանդեն, նոր ճանապարհներ բաց անեն, նոր փառաւոր շէնքեր կառուցեն, մարմարէ պալատներ, թատրոններ, պարտէզներ, դպրոցներ, աշխատանոցներ, գործարաններ... այդ փողոցներում գաղթականներ չեն պառկելու եւ, մեզ նման ոտաբոբիկ չեն քայլելու... Ես այդ մարդկանց սիրեցի... Ի՞նչ թաքցնեմ, սիրեցի...

-- Եթէ մնան...

-- Ո՞նց թէ, եթէ մնան...

-- Ո՞վ է իմանում, հազար բան են ասում...

-- Իսկի մի հաւատա... Նրանց դուրս վռնդելը հեշտ գործ չէ... Չէ, մի հաւատա... Եթէ ուզում են էդքան բաներ շինել, երկիրը շէնցնել, մարդկանց երջանկութիւն ստեղծել, էլ ի՞նչ կայ նրանց դէմ կռուելու... Եթէ ամէն մարդ հաւասար կը լինի, բախտաւոր... ամէն մարդ իր սեներակում, պեչկայով, անկողինով...

Յուզում էր եւ չոր հազը խեղդում էր նրան»[215]:

Այս էջ ու կէսի վրայ արուած բոլշեւիկների փառաբանումը ոչ մի արժէք չունի գրախօսի համար. նրան հետաքրքրողը թուրքերի ու բոլշեւիկների մասին արուած երկուստողանոց ռեպլիկան է միայն: Այն էլ ներկայացում է որպէս «հեղինակի յերիւրանք»:

Այն մասին, թէ ինչպէս կամայական կերպով գրախօսը աղաւաղում է փաստերը խօսում է եւ հետեւեալը: Մի կողմից անապաստանականներից մէկի ռեպլիկը ընդդէմ բոլշեւիկների նրա համար հիմք է դառնում հեղինակին մեղադրելու «յերիւրանքներ»ի եւ «թխուած սիլ[լ]ոգիզմ»ի մէջ, միւս կողմից մէկ ուրիշ անապաստանի բոլշեւիկների մասին ասուած դրուատանքի խօսքերը հիմք են դառնում ասելու. «Ահա թէ հասարակական ինչպիսի տականքներ են Լենինի հետեւորդները,-- կ'եզրակացնի վէպի ընթերցողը: Պատահական չէ, որ տուեալ վէպում կոմունիզմին յարում են Երեւանի խուժանները ու մարդասպանները»:

Է՜, եղաւ, տրամաբանութիւն կա՞յ այս ամէնի մէջ:

Գրախօսը պնդում է, թէ վէպի գլխաւոր հերոսի՝ «Հէրեանի պատկերացմամբ՝ Դաշնակցութիւնն ու հայ ժողովուրդը նոյնական են, համերաշխ»: Իր այդ հետեւութեան միակ փաստարկն այն է, թէ՝ «երբ պառլամենտում նախարարը խօսում է Ղարսի անկման մասին, "Հայաստանը տնքալով շարժուեց: Վշտից հարբած, դանդաղելով մահ եկան լեռները»: Ամբողջ հայ ժողովուրդը

մինչեւ հիմա էլ այդպէս է ընկալում Ղարսի անկումը. ուրեմն ի՞նչ է[,] բոլորը համերաշխ են Դաշնակցութեան հետ:

Ղարսի անկման շրջանում ռազմաճակատ մեկնող սպաներից մէկը, նուագում է Բախի երաժշտական մի հատուածը եւ դատողութիւններ անում այն մասին, թէ թուրք բարբարոսների եւ Բախի միջեւ ոչ մի առնչութիւն չի կարող լինել, որ «այսօրուայ թուրքը գերազանցապէս հակամշակութային է»: Մէջբերելով այս ամբողջ հատուածը գրախօսը գրում է. «Ինչո՞ւ թունաւորենք մեր երիտասարդութեան ոգին... դաշնակցական քարոզով»: Ճիշդ կը լինէր գրախօսը եթէ հեղինակը բերելով այդ «դաշնակցական քարոզը» ոչինչ նրան չհակադրէր, սակայն, չէ որ վէպի գլխաւոր հերոսը՝ Հէրեանը ակտիւ կերպով հակաճառում է՝ «Հէրեանը, որ սովոր էր Մերսենեանին [sic] հակաճառելու (ուշադրութիւն դարձրէք «սովոր էր», այսինքն տարբեր տեսակէտների վրայ կանգնած մարդիկ են), այս անգամ էլ չկարողացաւ իրեն զսպել: Մէջը ետ գցեց բազկաթոռի վրայ եւ ասաց՝

-- Ճիշդը ասած, եթէ վերցնենք մեր աբարաճցուն, նա էլ Բախի երաժշտութիւնից բան չի կարող հասկանալ...»:

Խորացնելով իր այս միտքը Հէրեանը վիճարկում է նաեւ թուրք ժողովրդի բարբարոս լինելու հարցը առհասարակ՝ «ժողովուրդը միշտ մնում է ժողովուրդ ինչ ազգի էլ պատկանի, յանցաւորը ղեկավարներն են...»:

Եթէ հեղինակը դրական հերոսի բերանով ակտիւ կերպով վիճարկում է միւս հերոսի վնասակար թեզը, էլ ինչու է դա դառնում «դաշնակցական քարոզ»: Հապա ինչպէս է պատկերացնում գրախօսողը այդ ժամանակաշրջանի մասին գրուած գեղարուեստական երկը, եթէ այնտեղ դաշնակցական մտածողութեան մարդիկ չպէտք է արտայայտեն իրենց տեսակէտները: Կամ ինչու այն ժամանակ, երբ թուրքերը համարեա երեւան էին հասնում, վէպի հերոսները ոչ մի բացասական միտք չպէտք է արտայայտեն թշնամու մասին: Յիշեցման կարգով միայն ասեմ, որ Հայրենական պատերազմի տարիներին Իլիա Էրենբուրգի[216] նման յառաջադէմ մտածող գրողը, իր յօդուածներում կոչ էր անում սպաննել բոլոր գերմանացիներին: Պատերազմը -- պատերազմ է, ում կողմից եւ ում դէմ էլ նա լինի, եւ նա իր կնիքը պիտի դնի գործող մարդկանց հոգեբանութեան վրայ: Իսկ այդ իրադարձութիւնները պատկերող գեղարուեստական երկը պէտք է արտացոլի կեանքի այդ ճշմարտութիւնը: Ինչպէ[՞]ս կարելի է նման բաները դիտել, որպէս «դաշնակցական քարոզ»:

Գրախօսը վրդոված է, որ վէպում պատկերուած ռուս միապետականը բացասական կերպար է, այդտեղից կարծես այն տպաւորութիւնն է ուզում ստեղծել, որ առհասարակ հեղինակը թշնամօրէն է տրամադրուած դէպի ռուսները, մոռանալով որ վէպի տասնեակ էջերում բարձր դրուատանքի խօսքեր են ասուած ռուսների մասին եւ ռուս ժողովուրդը ներկայացուած է որպէս հայ ժողովրդի[217] միակ բարեկամը (տես՝ 180, 465, 466, 467, 468, 481 եւ բազմաթիւ այլ էջեր):

Տենդենցիոզ մօտեցումը այնտեղ է հասնում, որ երբ վէպի հերոսներից մէկը վրդովմունք է յայտնում այն մասին, «թէ Ամտանտայի պետութիւնները

օգնում են թուրքերին», գրախօսը այդտեղից հանում է հետեւեալ արտառոց ու ամէն մի տրամաբանութեան հակասող հետեւութիւնը՝ «բայց 1918-1919 թ.թ. թուրքերին օգնել է Սովետական Ռուսաստանը եւ ոչ թէ Անտանտան: Ուրեմն այդ կշտամբանքը ռուսների հասցէին է»:

Գրախօսը լրջօրէն է ընդունել եւ վրդոված է այն բանի համար, թէ իբր «Նապոլէոնը ծրագրել էր ազատագրել արեւելեան երկրները, որ նրա մարշալ Միրաղը դարաբաղցի հայ Միհրան Մուրադեանն է, որը ձգտում էր անկախ Հայաստան ստեղծել»: Չնկատելով, որ այդ պատմութիւնը հեղինակը որպէս կատակ է ընկալել, հերոսներից մէկը միսի հոգու հետ խաղալու համար է այն պատմում, որովհետեւ «գիտէր Հէրեանի թոյլ կողմը»:

Գրախօսը զարմացած է, որ հեղինակի մօտ երբեմն կենդանիները հանդէս են գալիս «որպէս մտածողներ» «նրա մօտ գորտը մտածում է, շունը համոզուած է, հաւատում է, խղճահարւում է» եւ այլն: Մի[՞]թէ գրախօսը չգիտէ, որ դա գեղարուեստական գրականութեան մէջ շատ ընդունուած մի ձեւ է: Ջէկ Լոնդոնը[218], օրինակ, մի ամբողջ վէպ է գրել՝ «Սպիտակ ժանիքը», որի գլխաւոր հերոսը մտածող եւ զգացող շունն է:

Գրախօսը բաւական շատ է խօսում հեղինակի միստիցիզմի մասին, յատ որում նրան վրդովում է եւ այն, որ եկեղեցում «ժամերգութիւնը պարզ, յուզիչ ժողովրդական ձեւ էր առել», որ հաւատացեալները կարող են ազդուել «''սուրբ-սուրբ''-ի սրտի խորքից բխող տրտնջալի երգից»: Եւ այն, որ եկեղեցում կարող են մատաղի համար բերուած ոչխարներ լինել (եկեղեցում ընդունուած սովորական մի արարողութիւն, երբ մատաղի ոչխարը քահանան պիտի օրհնի) եւ որ հերոսներից մէկը Սեւանի մայրամուտը դիտելիս կարող է այսպիսի դատողութիւններ անել՝ «ինչ մեծ բեմադրող է երկինքը,– ասաց Ջուարքը,– ինչ իրօրինակ բեմադրող... Արեւը ամէն օր դուրս է գալիս եւ ներս է մտնում, ինչպէս հսկայական դրամայի մի հերոս...»:

Այդ ամէնը գրախօսի բնութագրմամբ «միստիցիզմի գարշահոտութիւն է». «Մի՞թէ սովետական ընթերցողը կը մարսի կրօնական բնոյթի այդ գառանցանքը»:– գրում է նա:

Մեզ ուղ[ղ]ակի զարմացնում է գրախօսի այսքան պարզունակ մտածողութիւնը:

Ի դէպ կան բաներ, որոնց մասին գրախօսը էջերով դատողութիւններ է անում, իսկ բաւական է մի երկու էջ կրճատել վէպից, առանց նրա ամբողջական կանվան [< ֆր. canvas - Վ.Մ.] խախտելու, եւ հեղինակի այդ, այսպէս կոչուած, շատ վնասակար մտքերը կարելի է հանել:

Այսպէս օրինակ երկու էջ կրճատելով ես հանում եմ եւ ոչխարների պատմութիւնը, եւ վէպում [Ջ]իւաղաշտի մասին արած դատողութիւնները, որի մասին գրախօսը թէպէտ շատ խտացրած գոյներով է խօսել, բայց ճիշդ է հիմնականում:

3.

Գրախօսը սխալ է հասկացել վէպի հիմնական յղացումը՝ նաի խորհրդանիշը: Ըստ գրախօսի «"Նաւ"-ը հայ ժողովուրդն է, որն ապրել ու գործել է պատմա-աշխարհագրական աննպաստ հանգամանքներում»: Ճիշդ չէ այդ: Հեղինակի յղացմամբ «Նաւը» դա հայ պետականութեան խորհրդանիշն է, որը նախապէս դաշնակցական ապիկար ձեռքերում չի հասնում Սեւանի ջրերին, ուր կարող էր ազատ նաւարկել եւ մնում է լեռների վրայ մեխուած, այսինքն չի ստանում իր վերջնական ձեւաւորումը:

Վէպի ներկայ տարբերակում, միայն կոմունիստների ջանքերով, նաւը հասնում է իր նպատակին՝ Սեւան, այսինքն դարերով կորցրած հայ պետականութիւնը նորից վերաստեղծւում է: Այդպիսով վէպի այս վերջին խմբագրումը, մեզ համար ունի սկզբունքային կարեւոր նշանակութիւն: Տարիներ շարունակ դաշնակցական մտայնութեամբ տարուած եւ դաշնակցականների հետ սերտօրէն գործակցող սփիւռքահայ ականաւոր գրողներից մէկը, ի վերջոյ գեղարուեստական գործի մէջ ցոյց է տալիս, որ դաշնակցականները անկարող եղան վերստեղծել հայ ժողովրդի դարերով կորցրած պետականութիւնը եւ այն ի զօրու էին կատարել միայն հայ կոմունիստները ռուս ժողովրդի եղբայրական օգնութեամբ:

Այսպիսով վէպն ինքը[219] դառնում է քաղաքական դեկլարացիայի նշանակութեան փաստաթուղթ: Վէպի ներկայ հրատարակութեան առաջաբանում հեղինակը գրում է.

«Հայաստանում պահպանուած մի շարք փաստաթղթերի լոյսի ներքոյ, ես յանգեցի այն եզրակացութեան, որ Սարդարապատի ճակատամարտ[տ]ը հանդիսացել է ճշմարիտ համաժողովրդական պայքար բռնակալների դէմ, կազմակերպուել եւ առաջնորդուել է ոչ թէ մի կուսակցութեան խմբապետներով, այլ հայ ժողովրդի միահամուռ եւ հերոսական ջանքերով: Տեսայ նաեւ որ սխալ մեկնաբանած եմ մայիսեան բանուորա-գիւղացիական ապստամբութեան նշանակութիւնը եւ ուրիշ մի շարք դէպքեր, որոնք ունեցած են ճակատագրական նշանակութիւն[220]:

... Հայրենական Հրագդանի ափերում, որտեղ ամէն ինչ հրաշալիօրէն վերածնւում է, որտեղ հայ երգը հնչում է զօրեղ եւ համայիչ, եւ հայ ժողովուրդը իր ճիգը խառնելով եղբայրական միւս ժողովուրդների ճիգերին, ստեղծում է պատմութեան մէջ չտեսնուած մի նոր կեանք, ես եւս մաքրագրեցի իմ վէպի որոշ տեղերը»:

Միայն այս առաջաբանը բաւական էր, որպէսզի հնարաւոր լինէր վէպը հրատարակել նոյնիսկ առանց որեւէ խմբագրման, համապատասխան առաջաբանում մեկնաբանելով հեղինակի բոլոր տեսակի իդէալիստական բուրժուական մոլորութիւնները, ինչպէս այդ արւում է ռուսական հրատարակութիւններում երբ տպագրում է բուրժուական որեւէ գրողի գործ:

Մինչդեռ այս դէպքում հեղինակն ինքը շատ բան արդէն ուղղել է վէպում, գրել է լրացուցիչ մի գլուխ ուր ցոյց է տուել հայ ժողովրդի դարաւոր երազանքի իրականացումը, հայ պետականութեան ստեղծումը կոմունիստների ձեռ-

քով: Անելին պահանջել 78-ամեայ գրողից չի կարելի: Քաղաքական հայեացքների ներկայ էվոլուցիան Կոստան Զարեանի կեանքի մեծագոյն սխրանքն է:

Պէտք է նկատի ունենալ մի շատ կարեւոր հանգամանք եւս. աւելի մեծ փոփոխութիւններ վէպի մէջ չի կարելի մտցնել, եւ նպատակայարմար էլ չէ, որովհետեւ ոչ ոք չի հաւատայ թէ տասնեակ տարիներ բուրժուական մտայնութիւն ունեցող ծերունի մտաւորականը մի օրից մի օր կարող էր այնպէս վերափոխուել, որ մարքսիստական մտածողութեամբ վէպ գրէր:

Մեզ համար կարեւոր այս վէպում նրա երկու հիմնական դրոյթներն են՝

ա) Որ դաշնակցական տիրապետութեան տարիները փորձանք ու դժբախտութիւն էին հայ ժողովրդի համար: Այդ հիանալի կերպով ցոյց է տրուած վէպում:

բ) Որ դաշնակցականները չէին կարող եւ չկարողացան վերստեղծել հայ պետականութիւնը, որ այդ կարող էին անել եւ արեցին միայն հայ կոմունիստները, բերելով հայ ժողովրդի վերջնական փրկութիւնը: Այդ ցոյց է տրուած վէպում նաեւ Սեւան հասնելու գեղեցիկ սիմվոլով:

Վէպի մնացած բոլոր թերութիւնների, ինչպէս եւ հեղինակի բուրժուական մտածողութեան շատ արատաւոր կողմերի մասին կարելի է խօսել, մեկնաբանել եւ քննադատել վէպի հրատարակութեան համար պատրաստուող յատուկ առաջաբանում:

ՀՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆ [Ստորագրութիւն]

10.III.62 թ.:

Դ.

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ Կ. ԶԱՐԵԱՆԻ «ՆԱՒԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ» ՎԷՊԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԽՄԲԱԳՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Նախքան արտաղրութեան իջեցնելը անհրաժեշտ ենք համարում Կ. Զարեանի «Նաւը լերան վրայ» վէպը ենթարկել լրացուցիչ խմբագրման, նկատի առնելով հետեւեալ հանգամանքները:

1. Վէպում յստակ չի ցոյց տրուած, թէ ովքեր էին պատասխանատու Հայաստանում այն տարիներին ստեղծուած ծանր կացութեան եւ կատարուող ոճրագործութեան համար: Ստացւում է այն տպաւորութիւնը, թէ այդ ամէնը հետեւանք էր պատմական օբեկտիւ պայմանների կամ հեռատես ու զօրեղ դեկավարների բացակայութեան: Անհրաժեշտ է որեւէ ձեւով ցոյց տալ, որ այդ տարիներին հայ ժողովրդի ողբերգական վիճակը հետեւանք էր դաշնակցութեան արկածախնդրական եւ աղետաբեր քաղաքականութեան:

2. Լրացուցիչ աշխատանք կատարել Սարդարապատի ճակատամարտի եւ Մայիսեան ապստամբութեան նկարագրութիւններին նուիրուած հատուածներում, այն աւելի խորացնելու եւ համոզիչ դարձնելու, այդ շարժումների ժողովրդային բնոյթը ընդգծելու համար:

3. Հնարաւորութեան սահմաններում պէտք է վերախմբագրել կամ բոլորովին հանել՝

ա) Ազգային ոգու կամ ազգային ու ցեղային բացառիկութեան ամէն մի դրսեւորում. փոքր ժողովուրդների ազգային ոգու հակադրումը մեծ ժողովուրդներին, ինչպէս եւ ազգամիջեան ատելութեան ամէն մի արտայայտութիւն (վիրաւորական արտայայտութիւններ ռուսների, թուրքերի, վրացիների հասցէին եւ այլն): Յամենայն դէպս դրական հերոսները պէտք չէ հանդէս գան որպէս այդ հոգեբանութեան կրողներ:

բ) Միստիկականութեան խտացրած արտայայտութիւնները (ոչխարները եկեղեցու բեմի վրայ, Ջրաղաշտի կամ նրա դարաբաղեան ծագման մասին դատողութիւնները եւ այլն):

գ) Աւելի յստակ դրսեւորել հեղինակի կամ նրա դրական հերոսների վերաբերմունքը դէպի բոլշեւիկները (ուղղումներ մտցնել բոլոր այն տեղերում, ուր խօսում է բոլշեւիկների եւ քեմալականների փոխյարաբերութեան, կամ այն մասին թէ բոլշեւիկները ռուսական հացով էին գայթակղեցնում ժողովրդին եւ այլն):

դ) Հայ ժողովրդի պատմական անցեալի իդէալականացման արտայայտութիւնները (Սեներիմ թագաւորի կորստեան ողբը եւ այլ նման արտայայտութիւններ):

ե) Մի փոքր ուժեղացնել հեղինակային հումորը Բագրատիոնի, Միլոսի, Նապոլէոնի մասին եղած դատողութիւններում, կամ հանել այդ հատուածներն առհասարակ:

զ) Նատաշային[221] դարձնել աւելի դրական կերպար:

է) Մեղմել անհատապաշտական, նիցշէական ուժեղ անհատի գաղափարախօսութեան քարոզը:

Այս խմբագրական ուղղումներն ու լրացումները կատարելուց յետոյ, վէպը կարելի է իջեցնել արտադրութիւն:

ՀԱՅՊԵՏՀՐԱՏԻ ԴԻՐԵԿՏՈՐ (Մ. ԴԱՒԹԵԱՆ)

«18» Յունիսի
1962 թ.

[Ստորագրութիւն չկայ. կրկնօրինակ է]

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Կոստան Զարեան, *Նաւը Լերան Վրայ*, Հայպետհրատ, Երեւան, 1963:

[2] Պօղոս Սնապեան, *Աւազահրաւէր Նաւը*, Պէյրութ, տպ. «Ատլաս», 1964, նաեւ՝ Եդուարդ Պօյաճեան, *2 Նամակ*, տպ. «Ատլաս», Պէյրութ, 1964:

[3] Կոստան Զարեան, *Նաւատրոմար*, Երեւան, «Սարգիս Խաչենց» Հրատարակչութիւն, 1999, էջ 641:

[4] «Նաւ Մը Լերան Վրայ Կամ... Կոստան Զարեան Հայաստանի Մէջ», *Սփիւռք*, 24 Յունիս 1961, էջ 1:

[5] «Կոստան Զարեան Հրաւիրուած Հայաստան», *Զուարթնոց*, 15 Յուլիս 1961, էջ 1:
[6] «Ախտորոշում», *Աշխարհ*, 9 Սեպտեմբեր 1961, էջ 7:
[7] «Տեսնուած Ու Նոր Մի Վերածնունդ», *Սովետական Հայաստան* օրաթերթ, 19 Յուլիս 1961, էջ 4. հմմտ. Կոստան Զարեան, *Հպի Արարատ*, Երեւան, «Սարգիս Խաչենց» Հրատարակչութիւն, 2001, էջ 363:
[8] Կարօ Փոլատեան, *Ջրոյց*, Բ. հատոր, Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1961, էջ 102. հմմտ. Զարեան, *Հպի Արարատ*, «Սարգիս, Խաչենց» Հրատարակչութիւն, 2001, էջ 352-353:
[9] «Տեսնուած Ու Նոր», էջ 4. հմմտ. Զարեան, *Հպի*, էջ 364:
[10] Հմմտ. 1957ի իր օրագրային նշումը. «"Հայրենիքը" – Ամերիկայի ծախուած հաստատութեան վերածուած դատարկ է, ոհակալ, նախանձ եւ դոլարի ետեւից վազող: Դաշնակցութեան Պարիզի խումբը որոշած է գոնէ տաճկահայ "գիծ" տանել եւ մարքսել այն ամէնի դէմ ինչ որ ռուսահայ է: "Հայրենիքի" վարիչ վանեցի Մխիթարեանը այդ քաղաքականութիւնն է տանում» (Կոստան Զարեան, «Նաւատոմար», *Նորք*, 2, 1994, էջ 41. հմմտ. նոյն, *Նաւատոմար*, էջ 515-516): Ի դէպ, Գուրգէն Մխիթարեանը Շապին Գարահիսար ծնած էր եւ ո՛չ թէ Վան:
[11] «Նամակ Մեծատաղանդ Գրագէտ Կոստան Զարեանէն», *Զուարթնոց*, 20 Նոյեմբեր 1961, էջ 1, նաեւ Աւետիս Ալիքսանեան, «Հանդիպում Կոստան Զարեանի Հետ Երեւանի Մէջ», *Աշխարհ*, 8 Սեպտեմբեր 1962. հմմտ. Զարեան, *Հպի Արարատ*, էջ 366:
[12] Հմմտ. Վարդան Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, խմբագիր Պօղոս Սնապեան, Անթիլիաս, տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1998, էջ 428-433, նաեւ, նոյն՝ «Կոստան Զարեանի Վերջին Ներգաղթը», *Յառաջ - Միաբ եւ Արմատ*, Մայիս 2001, էջ 2-4:
[13] Զարեան, *Նաւատոմար*, էջ 24:
[14] Ձեռագիր մակագրութիւն՝ անուանաթերթին վրայ:
[15] Նոյնը վկայած է Ա. Շաուկեանը, բէեւ սխալմամբ կարծելով, որ Զարեան արդէն Երեւան հաստատուած էր իր երկրորդ կնոջ եւ զաւկին հետ (Ա. Շաուկեան, «Անցորդը Եւ Իր Ճամբաները», *Յառաջ*, 4 Նոյեմբեր 1983, էջ 2. հմմտ. նոյն, *Մեծերը Եւ... Միւսները*, Պէյրութ, տպ. «Ալբափրէս», 1992, էջ 292-296):
[16] Թորոս Թորանեան, *Գիրք Որդիական*, Պէյրութ, տպ. «Սեւան», 1981, էջ 145:
[17] Կոստան Զարեան, «Նաւատոմար», *Հայութիւն*, 14 Փետրուար 1992, էջ 7. հմմտ. նոյն, *Նաւատոմար*, էջ 565:
[18] Դաւիթ Գասպարեան, «Կոստան Զարեանի "Նաւը Լերան Վրայ" Վէպը», *Հայաստանի Հանրապետութիւն*, 10 Փետրուար 1995, էջ 6. հմմտ. նոյն, *Հայ Գրականութիւն*, Երեւան, «Զանգակ-97» Հրատարակչութիւն, 2000, էջ 108-109:
[19] Շաուկեան, «Անցորդը», էջ 2. հմմտ. նոյն, *Մեծերը*, էջ 296:
[20] Կոստան Զարեան, *Նաւը Լերան Վրայ*, Երեւան, Հայպետհրատ, 1963, էջ XIX:
[21] Բարկէն Չուգասեան, «Հանդիպումներ Հրաչեայ Աճառեանի Հետ (Մահուան Քառասնամեակի Առիթով)», *Նորք*, 2, 1994, էջ 99, 97, նաեւ Մատթէոսեան, *Կոստան Զարեանի*, էջ 436-437:
[22] Հեղինակի այս համոզումին հետ հաշտ է այն իրողութիւնը, որ Արմէն Զարեանի ջանքերով, Աշոտ Սահրադեանի ռուսերէն թարգմանութենէն (երկիցս տպուած Մոսկուայի մէջ, 1969ին եւ 1974ին) դուրս ճնշած է 1963ի հրատարակութեան «վերջին մասը» (տե՛ս Կոստան Զարեան, *Նաւը Լերան Վրայ* [ռուսերէն], Մոսկուա, 1969, էջ 414):

[23] Կոստան Զարեան, «Նաւաստոմար», էջ 8. հմմտ. նոյն, *Նաւաստոմար*, էջ 567: 1959էն ծանրօրէն հիւանդ երկրորդ կինը՝ Խրենսիս Պրուքս, որ իրենց զաւկին՝ Յովանի խնամքին մնացած էր, մահացած է Հոլանտայի մէջ 1964ին (Արմէն Զարեան, բանաւոր հաղորդում, Երեւան, Հոկտեմբեր 1992): Կնոջ մահը թուագրուած է 1963 (Արմենուհի Գեւոնեան, «Յիշատակներ Հայաստանէն», *Յառաջ*, 2 Մարտ 1990, էջ 2):

[24] Զարեան, *Նաւաստոմար*, էջ 24:

[25] Վարազ Առաքելեան, «Կոստան Զարեանի Հայրենադարձութիւնը», *Հայաստանի Հանրապետութիւն*, 8 Նոյեմբեր 1994, էջ 6: Հաւանաբար Գասպարեան նկատի ունեցած է այս պատումը, երբ յիշած է Հ. Գրիգորեանի եւ Թոփուզեանի անունները որպէս մասնակիցներ «զուտ ժամանակակիցների վկայութեան» (Գասպարեան, *Հայ Գրականութիւն*, էջ 107): Յովհաննէս (Օննիկ) Թոփուզեան՝ երբեմնի անդամ Հ. Յ. Դաշնակցութեան, Մանուկ Ալաճեանի մահէն ետք Պէյրութի *Ազդարար* շաբաթաթերթի խմբագիր եղած է, իսկ 1950-53ին՝ արտօնատէր-խմբագիր: Թերթին հրատարակութեան իրաւունքը վաճառելով ներգաղթած է Հայաստան, ուր աշխատած է Գիտութիւններու Ակադեմիայի մէջ: Հրատարակած է Սուրիոյ եւ Լիբանանի հայ համայնքներուն նուիրուած զոյգ մենագրութիւններ (1968 եւ 1986):

[26] Զարեան, «Նաւաստոմար», էջ 8. հմմտ. նոյն, *Նաւաստոմար*, էջ 567: Անունը բազմակէտերով հրատարակուած էր սկզբնապէս, իսկ վերականգնուած է երկրորդ հրատարակութեան մէջ: Մենք արդէն զայն վերականգնած էինք մէջբերումի ատեն (Մատթէոսեան, *Կոստան Զարեանի*, էջ 439):

[27] Սմբատ Յովսէփեան, *Յիշողութիւններ*, Երեւան, «Հրազդան» Հրատարակչութիւն, 2000, էջ 92 (ընդգծումը մերն է):

[28] Հայկ Խաչատրեան, *Գրական Տեղեկատու*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1986, էջ 151:

[29] Յովսէփեան, *Յիշողութիւններ*, էջ 94:

[30] «Քանիցս» խօսքը սխալ է: Վէպը մինչ այդ միայն տպուած էր մէկ անգամ:

[31] Ըստ Նուարդ Գրիգորեանի եւ Սիրանոյշ Դվոյեանի բանաւոր ներկայութեան (Երեւան, Յուլիս 2004):

[32] Յովսէփեան, *Յիշողութիւններ*, էջ 96:

[33] Զարեան, *Դէպի Արարատ*, էջ 366:

[34] Խաչատրեան, *Գրական Տեղեկատու*, էջ 164: Բոլորովին մտացածին է 1960 թուականը, զոր Զարեանի մասին իր սխալաշատ յօդուածին մէջ վերջերս արձանագրած է Արա Գրիգորեանը (Ara Krikorian, *Dictionnaire De La Cause Arménienne*, Paris, Edipol, 2002, p. 253):

[35] *Հայկական Համառօտ Հանրագիտարան*, Երեւան, 1995, էջ 162. հմմտ. Զարեան, *Նաւը*, էջ VI):

[36] Մուշեղ Իշխան, *Իմ Ուսուցիչները*, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպ. 1984, էջ 194:

[37] Զարեհ Մելքոնեան, «Նաւը՝ Լերան Ստորոտին», *Շիրակ*, Ապրիլ 1964, էջ 446:

[38] Հայաստանի Ազգային Արխիւ, Նորագոյն Պատմութեան Պետական Կենտրոնական Արխիւ, ֆոնտ 362, ցուցակ 13, գործ 26 (տեղեկութիւնը շնորհակալութեամբ ստացած ենք հայրենի բանասէր Արծուի Բախչինեանէն): Այս փաստաթուղթին յայտնաբերումէն առաջ, հետեւելով ժամանակակից աղբիւրներուն, որդեգրած էինք 1962 թուագրումը (Մատթէոսեան, *Կոստան Զարեանի*, էջ 433): Ճիշդ տարեթիւը տե՛ս Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական Բառարան*, հ. Ա. Երեւան, « Հայաստան» Հրատարակչութիւն, 1973, էջ 323:

[39] Կոստան Զարեան, *Երկեր*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1985, էջ 96:

[40] Շահան Շահնուր, *Կրակը Կողքիս*, Փարիզ, մատենաշար «Յառաջ», 1973, էջ 96. տե՛ս նաեւ՝ նոյն, «"Նաւը Լերան Վրայ" Վէպին Երեւանեան Տպագրութիւնը», *Սփիւռք*, 22 Օգոստոս 1964, էջ 7:

[41] Միրայէլ Թաւրիզեանին ուղղուած նամակի մը ձեռագիր հատուածէն («Գուրգէն Մահարի Յետադարձ», *Բագին*, 3, 2003, էջ 139):

[42] Սնապեան, *Աւագախրած*, էջ 6:

[43] Պօյաճեան, *2 Նամակ*, էջ 20:

[44] Զարեան, «Նաւատոմար», էջ 8. հմմտ. նոյն, *Նաւատոմար*, էջ 567: Նկատի ունենալով այս հանգամանքը, ինչպէս եւ երկրորդ հրատարակութեան կասկածելի ընթացքը, ընդունելի չէ վերջերս կատարուած այն պնդումը, թէ «իրաւունք չունենք հաշուի չառնելու հեղինակին սրբագրումները» (Ժենիա Քալանթարեան, «Պատմութեան Գեղարուեստական Արձագանգը», *Պայքար*, Մայիս-Յունիս 1996, էջ 62), որ նկատի ունի երկրորդ տպագրութիւնը որպէս վերջնական:

[45] Կ. Զարեան, *Երկեր*, Անթիլիաս, տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1975, էջ 6:

[46] Հմմտ. Վարդան Մատթէոսեան, *Անվերջ Վերադարձ. Հայաստանի Ճանապարհները (1989-2004)*, Երեւան, «Զանգակ-97» Հրատարակչութիւն, 2005, էջ 120-121:

[47] Շահան Նաթալի, *Ալեքսանդրապոլի Դաշնագիրը*, Պոստըն, 1943:

[48] Պոստըն, էջ 538. Երեւան, էջ 532 (յետայսու՝ «Երեւան»):

[49] Պոստըն, էջ 69. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 78):

[50] Էջերու բոլոր յիշատակումները կ՛ակնարկեն *Նաւը Լերան Վրայ*ի երեւանեան առաջին խմբագրութեան մեքենագիր օրինակին: Ոչխարներու անմեղութեան ակնարկութիւնը ջնջուած է երեւանեան հրատարակութենէն (էջ 79):

[51] Պոստըն, էջ 69-70. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 78):

[52] Պոստըն, էջ 70. Երեւան, էջ 79:

[53] Պոստըն, էջ 490-491. Երեւան, էջ 491 («դա սրտի մի արկածախնդրութիւն է» խօսքը ջնջուած է):

[54] Կ՛ակնարկէ Հայաստանի առաջին Հանրապետութեան անդրանիկ վարչապետ Յովհաննէս Քաջազնունիի (1868-1938) *Հ. Յ. Դաշնակցութիւնը Անիկիք Չունի Այլեւս* (Վիեննա, 1923) գրքոյկին:

[55] Պոստըն, էջ 442. Երեւան, էջ 460, ուր միայն գրուած է «Հայաստան երկիրը պէտք է վերածնուի եւ վերստեղծուի»:

[56] Պոստըն, էջ 442-443. Երեւան, էջ 460, ուր ջնջուած են «երկրի մաքրագործումը օտար բազմութիւններից» եւ «Զրադաշտի վերադարձը» խօսքերը:

[57] Պոստըն, էջ 441-443. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 460):

[58] Պոստըն, էջ 443-444. Երեւան, էջ 461, ուր այս հատուածը, որ արդէն կրճատուած էր, նոր փոփոխութիւններու եւ յաւելեալ կրճատումներու ենթարկուած է:

[59] Պոստըն, էջ 48. Երեւան, էջ 55-56:

[60] Պոստըն, էջ 148. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 164):

[61] Sic: Պէտք է ըլլայ «նրա ծագման»:

[62] Պոստըն, էջ 151-152. Երեւան, էջ 168-169 (կրճատումներով ու յաւելումներով): Այս մէջբերումը նոյնական է Պոստընի հրատարակութեան հետ, բացառելով «ցեղի բուն իսկութիւնը» խօսքը, որ դարձած է «բուն ժողովրդի իսկութիւնը»:

[63] Ճամպաթիսթա Վիրօ (1688-1744), իտալացի փիլիսոփայ:

[64] Պոստրն, էջ 84. Երեւան, էջ 95:
[65] Պոստրն, էջ 87. Երեւան, էջ 99:
[66] Ֆրիտրիխ Նիցչէ (1844-1900), գերմանացի փիլիսոփայ, որուն ուսմունքը կարեւոր ազդեցութիւն ունեցած է Զարեհանի վրայ:
[67] Պոստրն, էջ 159. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 177):
[68] Պոստրն, էջ 161-162. Երեւան, էջ 179-180 (կրճատումներով):
[69] Պոստրն, էջ 213-214. Երեւան, էջ 231-232 (կրճատումներով):
[70] Պոստրն, էջ 228. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 244):
[71] Պոստրն, էջ 393. Երեւան, էջ 414 (փոխուած):
[72] Պոստրն, էջ 392. Երեւան, էջ 414:
[73] Պոստրն, էջ 399. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 420):
[74] Պոստրն, էջ 518. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 518): Այս մէջբերումը որոշ փոփոխութիւններ ունի արդէն:
[75] Պոստրն, էջ 513-514. Երեւան, էջ 510:
[76] Պոստրն, էջ 155. Երեւան, էջ 173 (փոփոխութիւններով):
[77] Պոստրն, էջ 156. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 174-175):
[78] Պոստրն, էջ 32-33. Երեւան, էջ 27 (կրճատումներով):
[79] Պոստրն, էջ 59. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 68):
[80] Պոստրն, էջ 175. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 196):
[81] Պոստրն, էջ 339-340. Երեւան, էջ 360-361 (յաւելեալ կրճատումներով եւ փոփոխութիւններով):
[82] Պոստրն, էջ 344. Երեւան, էջ 365:
[83] Պոստրն, էջ 348. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 368):
[84] Պոստրն՝ չիք. Երեւան՝ չիք:
[85] Պոստրն, էջ 467. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 472):
[86] Պոստրն, էջ 165. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 185):
[87] Պոստրն, էջ 167. Երեւան, էջ 186 (կրճատուած):
[88] Պոստրն, էջ 167-168. Երեւան, էջ 186-187 (կրճատումներով):
[89] Պոստրն, էջ 290-291. Երեւան, էջ 308-309 (կրճատումով):
[90] Կ՛ակնարկէ Յակոբ Պարոնեանի *Հոսհոսի Ջեռատեղը* երգիծական գործին (1880):
[91] Պոստրն, էջ 325. Երեւան, էջ 344-345 (յաւելեալ կրճատումներով):
[92] Պոստրն, էջ 80-81. Երեւան, էջ 90-91 (ոճական մանր փոփոխութիւններ):
[93] Պոստրն, էջ 92. Երեւան, էջ 104-105 (փոփոխութեամբ):
[94] Պոստրն, էջ 92. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 105):
[95] Պոստրն, էջ 119-120. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 134):
[96] Պոստրն, էջ 237. Երեւան, էջ 253 (փոփոխութիւններով):
[97] Պոստրն, էջ 311. Երեւան, էջ 330:
[98] Պոստրն, էջ 372. Երեւան, էջ 392 (փոփոխութիւններով):
[99] Պոստրն, էջ 377. Երեւան, էջ 398:
[100] Պոստրն, էջ 439. Երեւան, էջ 458:
[101] Պոստրն, էջ 478-479. Երեւան, էջ 478 (փոփոխութիւններով եւ կրճատումով):
[102] Պոստրն, էջ 487. Երեւան, էջ 487 (կրճատուած):
[103] Պոստրն, էջ 490. Երեւան, էջ 490 (կրճատուած):
[104] Պոստրն, էջ 165. Երեւան, էջ 184 (կրճատումով):
[105] Պոստրն, էջ 333. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 354):
[106] Ճորճ Պերքլի (1685-1753), անգլիացի եպիսկոպոս ու փիլիսոփայ:

[107] Այս տողը խտացուած է պոստրնեան հրատարակութենէն (էջ 440-441): Առաջին խմբագրութեան մեր ձեռքի տակ եղած էջերուն մէջ (էջ 518) այդ տողը չկայ (բացակայ է արդէն «ոսքինսոնեան» բառը), իսկ Բ. հրատարակութեան մէջ արդէն պարբերութիւնը երկրորդ փոփոխութեան ենթարկուած է:
[108] Պոստրն, էջ 118. Երեւան, էջ 132:
[109] Պոստրն, էջ 481-482. Երեւան, էջ 480-481 (կրճատումներով ու փոփոխութիւններով):
[110] Պոստրն, էջ 45. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 53):
[111] Պոստրն, էջ 413. Երեւան, էջ 432 (կրճատումով):
[112] Պոստրն, էջ 41. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 48):
[113] Պոստրն, էջ 171. Երեւան, էջ 191:
[114] Վէպին մէջ յիշուած է յոկ «Կարա» անունով:
[115] Պոստրն, էջ 206. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 223):
[116] Իմա՞ «ծաղկում են» (Պոստրն, էջ 395. Երեւան, էջ 416):
[117] Պոստրն, էջ 465. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 470):
[118] Պոստրն, էջ 500-502. Երեւան, էջ 497-500 (փոփոխութիւններով):
[119] Պոստրն, էջ 504. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 502):
[120] Պոստրն, էջ 507. Երեւան, էջ 505:
[121] Պոստրն, էջ 58-59. Երեւան, էջ 67 (փոփոխութիւններով):
[122] Պոստրն, էջ 35. Երեւան, էջ 31:
[123] Պոստրն, էջ 244. Երեւան, էջ 260:
[124] Պոստրն, էջ 205. Երեւան, էջ 222 (փոփոխութեամբ):
[125] Պոստրն, էջ 178. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 197):
[126] Պոստրն, էջ 103. Երեւան, էջ 116 (կրճատումով):
[127] Պոստրն, էջ 104. Երեւան, էջ 116 (փոփոխութեամբ):
[128] Պոստրն, էջ 104. Երեւան, էջ 117 (փոփոխութիւններով):
[129] Պոստրն, էջ 30. Երեւան, էջ 26 (փոփոխութեամբ):
[130] Պոստրն, էջ 31. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 27):
[131] Պոստրն, էջ 32. Երեւան, էջ 28:
[132] Պոստրն, էջ 33. Երեւան, էջ 29 (փոփոխութեամբ):
[133] Պոստրն, էջ 34. Երեւան, էջ 30 (կրճատուած):
[134] Պոստրն, էջ 34. Երեւան, էջ 30:
[135] Պոստրն, էջ 34. Երեւան, էջ 30:
[136] Պոստրն, էջ 35. Երեւան, էջ 31 (փոփոխութեամբ):
[137] Պոստրն, էջ 37. Երեւան, էջ 33:
[138] Պոստրն, էջ 37. Երեւան, էջ 33:
[139] Պոստրն, էջ 451-452. Երեւան, էջ 37 (փոփոխութիւններով):
[140] Պոստրն, էջ 452. Երեւան, էջ 37:
[141] Պոստրն, էջ 39. Երեւան, էջ 46:
[142] Պոստրն, էջ 40. Երեւան, էջ 47:
[143] Պոստրն, էջ 40. Երեւան, էջ 47 (կրճատուած):
[144] Պոստրն, էջ 41. Երեւան, էջ 49 (կրճատուած):
[145] Պոստրն, էջ 42. Երեւան, էջ 49 (փոփոխութիւններով):
[146] Պոստրն, էջ 43. Երեւան, էջ 50 (փոփոխութիւններով):
[147] Պոստրն, էջ 57. Երեւան, էջ 65 (փոփոխութեամբ):
[148] Պոստրն, էջ 57. Երեւան, էջ 65 (կրճատումով):
[149] Պոստրն, էջ 57. Երեւան, էջ 65:

[150] Պոստրն, էջ 58-59. Երեւան, էջ 67 (փոփոխութիւններով):
[151] Պոստրն, էջ 72. Երեւան, էջ 81 (փոփոխութեամբ):
[152] Պոստրն, էջ 76. Երեւան, էջ 86 (փոփոխութեամբ):
[153] Պոստրն, էջ 93. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 106):
[154] Պոստրն, էջ 101. Երեւան, էջ 113:
[155] Պոստրն, էջ 101. Երեւան, էջ 113:
[156] Պոստրն, էջ 101. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 114):
[157] Պոստրն, էջ 102. Երեւան, էջ 115:
[158] Պոստրն, էջ 122. Երեւան, էջ 137 (փոփոխութեամբ):
[159] Պոստրն, էջ 131. Երեւան, էջ 147 (փոփոխութիւններով):
[160] Պոստրն, էջ 131. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 147):
[161] Պոստրն, էջ 145. Երեւան, էջ 161 (փոփոխութեամբ):
[162] «ոզոաևջում է» (Պոստրն, էջ 181. Երեւան՝ չիք. հմմտ. էջ 199):
[163] Պոստրն, էջ 199. Երեւան, էջ 217 (փոփոխութեամբ):
[164] Պոստրն, էջ 217. Երեւան, էջ 235 (փոփոխութիւններով):
[165] Պոստրն, էջ 243. Երեւան, էջ 259 (փոփոխութեամբ):
[166] Պոստրն, էջ 250. Երեւան, էջ 267 (փոփոխութեամբ):
[167] Պոստրն, էջ 255. Երեւան, էջ 272 (փոփոխութեամբ):
[168] Պոստրն, էջ 258. Երեւան, էջ 274:
[169] Պոստրն, էջ 266. Երեւան, էջ 281 (փոփոխութեամբ):
[170] Պոստրն, էջ 285. Երեւան, էջ 302 (փոփոխութեամբ):
[171] Պոստրն, էջ 312. Երեւան, էջ 331 (փոփոխութեամբ):
[172] Պոստրն, էջ 335. Երեւան, էջ 355 (փոփոխութեամբ):
[173] Պոստրն, էջ 357. Երեւան, էջ 376-377 (փոփոխութեամբ):
[174] Պոստրն, էջ 370. Երեւան, էջ 390 (կրճատուած):
[175] Պոստրն, էջ 395. Երեւան, էջ 416 (փոփոխութեամբ):
[176] Պոստրն, էջ 396. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 417):
[177] Պոստրն, էջ 405. Երեւան, էջ 425:
[178] Պոստրն, էջ 408. Երեւան, էջ 428 (փոփոխութեամբ):
[179] Իւան Բունին (1870-1953), ռուս վտարանդի գրող, 1933ի Նոպէլեան մրցանակակիր:
[180] Ալեքսանդր Բլոկ (1880-1921), ռուս բանաստեղծ:
[181] Խնոկենտի Անենսկի (1856-1909), ռուս գրող եւ բանասէր:
[182] Օսիպ Մանդելշտամ (1891-1938), ռուս բանաստեղծ, ստալինեան հալածանքներու զոհ: 1933ին հրատարակած է *Ճանապարհորդութիւն Հայաստանում* ուղեգրութիւնը, իսկ 1931ին՝ *Հայաստան* բանաստեղծութիւններու շարքը:
[183] Նիկոլայ Գումիլեով (1886-1921), ռուս բանաստեղծ:
[184] Մարինա Ցուետաեւա (1892-1941), ռուս բանաստեղծուհի:
[185] Առաջին մէջբերումը կու գայ Սնապեանի *Անդրշիրիմեան Ձայներ* հատորէն (Պէյրութ, 1960): Երկրորդ մէջբերումին աղբիւրը չենք կրցած ճշդել:
[186] Խորհրդային ժամանակաշրջանին Լեւոն Շանթէն երկու հատոր հրատարակուած է՝ *Ընտիր երկեր* (1968) եւ *Երկեր* (1989), սակայն ան մնացած է արգիլուած հեղինակ եւ անոր թատերախաղերը չեն բեմադրուած:
[187] Խորհրդային ժամանակաշրջանին Համաստեղէն մէկ հատոր հրատարակուած է՝ *Հայաստանի Լեռներու Սրճգահարը* (1989):
[188] Ա. Ահարոնեանէն ոչինչ լոյս տեսած է Խորհրդային ժամանակաշրջանին:
[189] Պոստրն, էջ 40-41. Երեւան, էջ 48 (լեզուական մանր փոփոխութիւններով):

[190] Պոստրն, էջ 102-103. Երեւան, էջ 115-116:
[191] Պոստրն, էջ 109. Երեւան, էջ 122:
[192] Պոստրն, էջ 109. Երեւան, էջ 122:
[193] Պոստրն, էջ 155. Երեւան, էջ 174:
[194] Պոստրն, էջ 253. Երեւան, էջ 270-271 (կրճատուած):
[195] Պոստրն՝ չիք (հմմտ. էջ 536). Երեւան, էջ 530:
[196] Պոստրն, էջ 195. Երեւան, էջ 213
[197] Պոստրն, էջ 195. Երեւան, էջ 213 (փոփոխութիւններով):
[198] Պոստրն, էջ 196. Երեւան, էջ 214-215 (փոփոխութիւններով):
[199] Թուականը սխալ է. գիրքը տպուած է 1959ին (տե՛ս նաեւ Խաչատրեան, *Գրական Տեղեկատու*, էջ 570):
[200] Վիլեամ Սարոյեան, *Մարդկային կատակերգութիւն*, թարգմ. Գրիգոր Զէյթլեանի, Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 10:
[201] «ժամանակաշրջաններից» (Երեւան, էջ 3):
[202] Պոստրն, էջ 485. Երեւան, էջ 485:
[203] Պոստրն, էջ 487. Երեւան, էջ 487:
[204] Պոստրն, էջ 152. Երեւան, էջ 169 (յաւելումներով եւ փոփոխութիւններով):
[205] Պոստրն, էջ 88-89. Երեւան, էջ 101 (փոփոխութիւններով):
[206] Պոստրն, էջ 158. Երեւան, էջ 177 (կրճատումով):
[207] Պոստրն, էջ 154. Երեւան, էջ 172 (փոփոխութեամբ):
[208] Պոստրն, էջ 156. Երեւան՝ չիք (հմմտ. էջ 174-175):
[209] Պոստրն, էջ 392-394. Երեւան, էջ 414-415 (փոփոխութիւններով եւ կրճատումով):
[210] Պոստրն, էջ 208-209. Երեւան, էջ 226 (փոփոխութիւններով եւ կրճատումով)
[211] Պոստրն, էջ 425-426. Երեւան, էջ 445 (փոփոխութիւններով):
[212] Պոստրն, էջ 513-514. Երեւան, էջ 510:
[213] Պոստրն, էջ 514-515. Երեւան, էջ 511-512 (կրճատումներով):
[214] Պոստրն, էջ 515. Երեւան, էջ 512 (ոճական փոփոխութիւններով):
[215] Պոստրն, էջ 517-519. Երեւան, էջ 513-515 (կրճատումներով):
[216] Իլիա Էրենբուրգ (1891-1967), ռուս գրող եւ հրապարակագիր:
[217] Բնագրին մէջ՝ «.... հայ՝ ժողովրդի միակ բարեկամը...»:
[218] Ճէք Լոնտոն (1876-1916), ամերիկացի արձակագիր:
[219] Բնագրին մէջ՝ «ինքը»:
[220] Նախադասութիւնը Բ. տպագրութեան մէջ հետեւեալ ձեւը ունի.- «Տեսայ նաեւ որ սխալ եմ մեկնաբանել Մայիսեան բանաւորա-գիւղացիական ապստամբութեան նշանակութիւնը եւ որիշ մի շարք դէպքեր, որոնք ճակատագրական նշանակութիւն են ունեցած հայ ժողովրդի կեանքում» (Երեւան, էջ 3):
[221] Իմա՛ «Դաշնակային»:

MATERIALS ABOUT THE YEREVAN EDITION OF KOSTAN ZARIAN'S NOVEL, *THE SHIP ON THE MOUNTAIN*

(Summary)

VARTAN MATIOSSIAN

Kostan (also Gostan, Constant) Zarian (1885-1969), one of the main names in Armenian literature of the twentieth century, published his novel *The Ship On The Mountain*, often regarded as his magnum opus, in 1942 in Boston. The novel portrayed the years of the first Republic of Armenia (1918-1920) in a way relatively sympathetic to the short-lived independent state. In 1963, after Zarian's definitive return to Soviet Armenia, a second edition of the novel was issued in Yerevan in a heavily bowdlerized form. This second edition triggered violent polemics among the intelligentsia in the Diaspora, polemics, which, indeed, reverberated in Armenia, as they dealt with matters of intellectual freedom and criticism of Soviet literary policies. It remains an enigma to this day to what extent the second edition was the result of Zarian's free will and how Soviet censorship had an impact on the book.

The author discusses these issues with an extensive use of contemporary sources and publishes for the first time a cache of documents related to the second edition and discovered in the personal files of the poet Vahan Grigorian (1905-1989), who at the time was the chief of the department of Literature in the Armenian State Publishing House (Haypethrat). Although these papers do not solve the question by themselves, they are helpful for understanding and documenting the changes undergone by the text, as well as for throwing some light on the role of different dramatis personae in this issue.

Ara Krikorian, *Dictionnaire de la Cause Arménienne* (Paris: Edipol Editions, 2002), 268 pp.

For a researcher of any subject, a dictionary is a useful tool for quick reference. A fact encapsulated in a few words, an elusive date are usually easier to find in an encyclopedia-type work than in some scholarly volume.

Unfortunately, researchers in Armenian Studies have always been at odds with reference works. The ones produced in Armenia have proved defective for a myriad of reasons: entries missing due to ideological constraints, doubtful sources, faulty scholarship, lack of access to the latest research, one-sided viewpoints, etcetera. The same has happened with the ones produced abroad to a more or less similar extent.

In the 1990's, the Yerevan-based Armenian Encyclopedia produced a one-volume encyclopedia devoted to the Armenian Question (first published in Russian translation, 1991, and afterwards in the Armenian original, 1996). A collaborative effort between authors from Armenia and the Diaspora, while imperfect, at least had quite good scholarship behind it. Given the historical and political importance of the subject, such an enterprise was greatly overdue.

Now we have another book, of a less massive scope and different contents, published in France. The author, Ara Krikorian, is a French-Armenian publisher of technical books. He is a long-term activist for the Armenian Cause through the ranks of the Armenian Revolutionary Federation and the Comité de Défense de la Cause Arménienne (CDCA), its lobby branch in France. He was also chairman of the latter from 1993-2001.

Even though the author is not an academic, this publication could have had more value had it been properly edited and slightly better researched. Unfortunately, this is not the case. In view of the elementary and even crude mistakes made in the text, the eight-page bibliography has no value.

In his note to the reader, Krikorian states that he wants this book to be just a companion to the Armenian Cause, with fast and easy access. However, such a tool needs, first of all, to be reliable. In the same note, he erroneously states that the "Armenian Question" encyclopedia was published in 1995 (he then gives the right date on p. 94). This is only the first of an endless array of mistakes, going literally to the last page.

In a five-page succinct and quite accurate introduction, the author outlines the history of the Armenian Question/Cause from the mid-nineteenth century to this day. He uses both terms interchangeably, though it is noticeable that they do not have the same meaning. In his thousand-entry alphabetical list, the reader will not find a single one, which gives a short, ready-to-use definition of both words. His statement that "la juxtaposition d'un millier d'entrées dans l'ordre alphabétique-un

ordre arbitraire mais tellement commode-ne fournit pas la réponse à cette question. D'où la présente brève introduction..." (p. 13) is actually misleading. The French quotation states that the 1000 entries do not answer what the Armenian Question/Cause is (are). Once he has gone through the introduction, a reader looking for that answer will end with empty hands.

The book seems like a Noah's Ark including everybody related, even tenuously, to political, scholarly or literary trends of the 1800-2000 period. Of course, it is a matter of choice, but it is also a matter of common sense. Even the famous 18th century minstrel Sayat-Nova - whose real surname was Sayatian, not Sayadjian (p. 213) - is here. But why? Because Persian soldiers killed him in 1795? (Incidentally, the reason for his death was not his prohibition from entering the monastery of Haghpat, as stated, but that he refused to convert to Islam). Should the composer Parsegh Ganachian be included because he made the arrangement of the Armenian national anthem or wrote the music for a famous patriotic song? Equally unclear are many other names, such as the scholars Ghevont Alishan and Georges Dumezil; composer Kourken Alemshah; writers Nshan Beshigtashlian, Shahan Shahnour, Aharon Dadourian; AGBU presidents Alex Manoogian and Louise Simone-Manoogian; etc.

One would like to ask how the battle of Avarair, in the fifth century, could become part of a dictionary devoted to the Armenian Cause. But if this is strange, it is still more strange to read that "elle a opposé en l'an 451 les forces arméniennes commandées par Vartan Mamigonian aux armées perses de l'Empereur Chah Abbas 1er" (p. 56). This is really odd, since even an Armenian Sunday school student learns at some point that the Persian king who sent his armies to Avarair was Yesdigerdes (Hazkert) II.

We are not going to compile a full list of inaccuracies, but just give a few more examples, randomly chosen:

1) Ani was not the capital of the Bagratuni kingdom from 11th-13th centuries (only from 961-1045) and was not conquered by the Seldjuks in 1045, but in 1064 (p. 30).

2) General Antranik did not die in Chico, California, but in Fresno (same page).

3) Dzadur Aghayan: "Historien (1911-1982). Pasteur protestant. Membre de l'Union des Ecrivains d'Arménie" (p. 23). Aghayan was a historian, not a writer, so he was no member of the Writers Union, but of the Academy of Sciences. Since he was also a card-carrying member of the Communist Party from 1942, is it logical to suppose that he previously was a Protestant pastor?

4) Near East Relief: "(...) [C]rée [sic] début 1919 sous l'impulsion de l'ancien Ambassadeur Morgenthau. (...) Cesse son activité en 1931" (p. 21). The Near East Relief was created in 1915 at the request of Morgenthau, who was the U.S. ambassador in Turkey at the time, and has continued to work after 1931 under the new name of Near East Foundation.

5) "Azadamard": "L'écrivain Roupen Zartarian en assure la direction jusqu'en 1914. Nigol Aghbalian lui succède entre 1917 et 1918. Azadamard va reparaître à

Paris de 1977 à 1982" (p. 51). This daily was published in Constantinople from 1909 until its closure on the eve of the Armenian Genocide (1915), and was always edited by Zartarian, himself arrested at the fateful "St. Bartholomew" night of April 23-24 (and not April 24-25, as Krikorian writes in the first line of the first entry, "24 Avril 1915", p. 19) and killed later. Nikol Aghbalian edited a daily called *Azadamard* in Tiflis in 1917-1918, which had nothing to do with the Constatinople newspaper. Of course, the homonymous paper published in France six decades later cannot be considered as a continuation.

6) Vartan Shahbaz: "Il seconde le général Antranik et Sebastatsi Mourad pendant les combats du Zanguézour et la défénse de Marach (Cilicie) en 1920" (p. 66). Neither Antranik nor Murad (killed in Baku in 1918) were in Marash in 1920.

7) "Horizon": "Quotidien en langue arménienne créé en 1931 au Canada par la FRA Dachnaktsoutioun. Il est le precurseur du journal publié sous le même nom a Tiflis (1909-1918), puis a Smyrne (1919-1921) et enfin a Salonique (1928-1931)" (p. 120). The Montreal-based *Horizon* weekly (not daily) has been published since 1979. Even if it had been published in 1931, it could have never been the "precursor" of three newspapers published before in three different, unrelated cities. It goes without saying that those newspapers are not related, and that *Horizon* cannot be regarded as their continuation.

8) Karekin Nejteh: "(...) [A]ux Etats-Unis (...) contre l'avis de la FRA, il crée le mouvement de jeunesse '*Tseragrone*'" (p. 173). It is a well-known fact that the Armenian Revolutionary Federation actually sent Nejteh from Bulgaria to the United States to create a youth movement and that the Tseghagron movement (renamed Armenian Youth Federation in 1940) enjoyed full support from the party from its inception.

9) Yeghishe Charents: "(...) [D]énoncé comme trotskiste et nationaliste petit-bourgeois, -il avait courageusement pris la défense de Boris Pasternak- (...)" (p. 225). Pasternak was not particularly attacked during the 1930's, and Charents, except for one mention during his speech at the First Congress of Soviet Writers (1934), did not mention Pasternak elsewhere.

As we have seen, Krikorian seems to think that almost every time two or more homonym newspapers appear, one is the continuation of the other (see *Alik*, *Aztag* and others). Fortunately, when he writes about *Mshak*, the influential daily published in Tiflis from 1873-1921, he omits to mention as a "continuation" the weekly *Mshak* published in Fresno from 1925-1957...

The book is also marred by many typographical mistakes and technical oddities, such as repetitions of entries (e.g. "Gürün, Kamuran" on p. 112 and "Kamuran Gürün" on p. 127), contradictions and wrong translations.

One is tempted to say that Krikorian would have done a real service if he had produced a revised version of the 1996 Armenian encyclopedia. Readers will still have to wait for a worthwhile "Dictionary of the Armenian Cause" in a Western language.

VARTAN MATIOSSIAN

Kevork Pamukciyan, *Ermeni Kaynaklarindan Tarihe Katkilar*; Գէորգ Բամպուքճեան, *Հայ Աղբիւրների Ներդրումը Պատմութեան Մէջ*. Ստամբուլ, Արաս Հրատարակչատուն, հտ. 1-4, 2002-2003:

2002-2003ին Ստամբուլի «ԱՐԱՍ» հրատարակչատունը յետմահու լոյս ընծայեց յայտնի բանասէր ու աղբիւրագէտ Գէորգ Բամպուքճեանի (1923-1996) թուրքերէն աշխատութիւնների քառահատոր ամբողջական շարքը[1]: Այն իրենից ներկայացնում է մեր մշակոյթի ճուիրեալի եւ համեստագոյն անձի՝ իր կեանքի ընթացքում հրատարակած թուրքերէն յօդուածների, աշխատութիւնների համարեա ամբողջութիւնը: Հատորները ամբարել են 1956ից ի վեր ուսումնասիրութեան 28 տարիների պտուղները՝ մօտ 370 հրատարակուած գործեր: Գիրքը հրատարակութեան է պատրաստել, ծանօթագրել, մեկնաբանել Օսման Քէօքէրը: Հրատարակութեան նախապատրաստման աշխատանքներին իր մասնակցութիւնն է բերել Գէորգ Բամպուքճեանի բարեկամ, կենսագիր Կարօ Աբրահամեանը[2]:

Բամպուքճեանն իր հայագիտական յօդուածներով աշխատակցել է ոչ միայն հայկական, այլեւ Ստամբուլի եւ Անկարայի թուրքական շատ ու շատ գիտական պարբերականների, հանրագիտարանների[3]:

Կ. Պոլսոյ Պատրիարքարանի աւագ քարտուղարը, մշակութային հարցերով խորհրդականը, պատրիարքարանի դարաւոր արխիւի եւ մատենադարանի պատասխանատուն՝ Բամպուքճեանը, միշտ համեստ, պարտաճանաչ ուսումնասիրող եւ աշխատասէր անձ էր, որը մեղուաջան աշխատանքով մաքրեց, ցուցակագրեց, կարգաւորեց հազարաւոր փաստաթղթեր, նամակներ, կալուածագրեր, ձեռագրեր, պատառիկներ, եկեղեցական գրագրութեան բազմաթիւ հատորներ, գրադարանը, մամուլը: Նրա լեզուների իմացութիւնը նպաստեց գնահատելու եւ հասկանալու, գրելու, տպագրելու ամէն մի նորայայտ նիւթ, կոնդակ, ծառայեցնելով դրանք հայ եկեղեցու պատմութեան ու հայ ժողովրդի մշակոյթի հարստացմանը:

Քառահատորի առաջաբանում գտնում ենք Ամենայն Հայոց Երջանկայիշատակ Կաթողիկոս, մտաւորական Գարեգին Ա.ի 1997ի յետմահու արժեւորումը Բամպուքճեանին՝ Թարգմանչաց Տօնի առթիւ:

Գնահատանքի եւ համատեղ աշխատանքային տարիների յուշերով առաջնորդուող մի յօդուածով էլ հանդէս է եկել Կ. Պոլսոյ Թուրքիոյ Հայոց Պատրիարք, Մեսրոպ Բ. Արքեպիսկոպոս Մութաֆեանը:

Բամպուքճեան մարդու, բարեկամի, մտաւորական դերվիշի, նրա թուրքերէն յօդուածների, թուրքական հանրագիտարանների համար գրած յօդուածների եւ ընդհանրապէս նրա մասին երախտագիտական խօսքերով հանդէս են եկել բուրք գիտնական Թուրգութ Քուրդ, մտաւորականներ Ֆահրի Արալը, Սաբրի Քոզը: Վերջիններս իրենց հայերէնի իմացութեամբ պարտական են Բամպուքճեանին, նրա հետ տարիների համատեղ աշխատանքին:

Բամպուքճեանի գործերի քառահատորեակի հրատարակիչները հատորները բաժանել են ըստ բովանդակային առումների:

Առաջին հատորը՝ *İstanbul Yazıları* (Ստամբուլի Մասին Գրութիւններ), ներառել է Կ. Պոլսի պատմութեանը նուիրուած աղբիւրների ուսումնասիրութիւնները: Այն ամբարել է Ստամբուլի պատմութեան տմենատարբեր դրուագները՝ ըստ հայկական «Պատմութիւն»ների, հայալեզու ու հայատառ թուրքերէն աղբիւրների: Նախեւառաջ՝ Ստամբուլի եւ հայերի, Ստամբուլի պատմութիւնը գրի առած հայերի ու նրանց ժամանակագրութիւնների մասին: Հիմնական հեղինակները, որոնց Ստամբուլի մասին բոլոր ժառանգութեանն անդրադարձել է Բամպուրճեանը՝ պատմագիր, գրող, բանաստեղծ, թարգմանիչ, հրատարակիչ Երեմիա Չելեպի Քէօմիւրճեանն է (1637-1695) եւ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան հայրերից պատմագիր, աշխարհագէտ Ղուկաս Ինճիճեանը (1758-1833): Հատորը ներկայացնող 51 յօդուածները վերաբերում են Ստամբուլի պատմութեան ողբերգական դրուագներին, աղէտներին, առանձին պատմական յուշարձաններին, պատմական դէմքերին, ներկայացնում սուլթանական, պալատական ժամանակագրութեան որոշակի հատուածներ: Այս բոլորն արժէքաւոր է նրանով, որ սրանք հիմնականում եզակի յուշարձաններ են, որ կարող են լոյս սփռել ժամանակի կարեւոր իրադարձութիւնների վրայ, նաեւ հատստի աղբիւրների լոյսի ներքոյ թոյլ տալ լուծելու պատմութեան որոշ գաղտնիքներ: Այս առումով հետաքրքրական են պատմական բովանդակութեան մի քանի դեստաններ, ժամանակագրութիւններ: Հետաքրքիր են Ստամբուլի հայ բնակչութեան պատմութեան հետ կապուած, հայկական հիւանդանոցների, գերեզմանոցների, դպրոցների, եկեղեցիների, կոզիների մասին յօդուածները: Հայ-թուրքական առնչութիւններին, Օսմանեան Կայսրութեան այս կամ այն ասպարէզում հայերի ունեցած դերին նուիրուած յօդուածները երկակի արժէք են ներկայացնում:

Բամպուրճեանի ուսումնասիրութիւնների, նախասիրութիւնների հիմնական ոլորտը թուրքալեզու (հայատառ թուրքերէն) գործերն են եղել: Երկրորդ հատորը՝ *Ermeni Harfli Türkçe Metinler* (Հայատառ Թուրքերէն Բնագրեր) նուիրուած է հայատառ թուրքերէն ձեռագիր աղբիւրներին, այսինքն՝ Բամպուրճեանի հայատառ թուրքերէն աղբիւրների ուսումնասիրութեանը նուիրուած 31 յօդուածներին, աշխատութիւններին[4]:

Ռոբէր Կոփթաշի 13 էջերից բաղկացած հայատառ թուրքերէնը ծանօթացնող առաջնորդողում անդրադարձ կայ հայատառ թուրքերէն ձեռագիր գրականութեանը, աշուղական դպրոցներին, տպագիր գրականութեանը, Մխիթարեան Միաբանութեան աւանդին, մասնաւորապէս թարգմանական գրքերին, պարբերականներին, որոշ հեղինակների ու նրանց գործերին: Տրում է հայատառ թուրքերէնի մասին գրականութեան ցանկ, իսկ յօդուածն ամբողջութեամբ յաւելուած է գրքերի տիտղոսաթերթերի, հեղինակների, աղբիւրների բազմաթիւ նկարներով:

Հայատառ թուրքերէնին նուիրուած հատորում (ինչպէս եւ Կ. Պոլսոյ մասին աղբիւրների գիտական հրատարակութիւններն ամփոփող Ա. հատորում) որոշակի թիւ են կազմում ԺԷ. դարի յայտնի հեղինակ Երեմիա Չելեպիի գործերը, որոնք նոյնքան արժէքաւոր են հայագիտութեան, որքան եւ թուրք

պատմագրութեան համար: Բամպուքճեանը խմբագրել է աղբիւրագիտական յոյժ կարեւորութիւն ունեցող 4 հայ հեղինակների չափածոյ ներբողները՝ իր համեմատաբար հայանպաստ քաղաքականութեամբ յայտնի Սուլթան Մահմուդ Բ.ին նուիրուած, վերածել է դրանք լատինատառ թուրքերէնի: Այս հատորում մի քանի պատմական դեստաններու ընդգրկուած լինելը՝ հայատառ թուրքերէն աղբիւրների բացառիկ կարեւորութեան հերթական ապացոյցն է: Ընդհանրապէս հայատառ թուրքերէն չափածոյ պատմական գործերը՝ «դեստան»ները մինչ այժմ ստուերում են գտնւում, եւ դրանց լատինատառ թուրքերէնի վերածելը, ասպարէզ բերելը, ծանօթագրելն ու տպագրելը՝ խորին յարգանքի է արժանի: Սա նախադէպ է ստեղծում, որպէսզի մեր գրականութիւնը եւ պատմագրութիւնը հարստանան ոչ միայն նոր ստեղծագործութիւններով, այլեւ նոր հեղինակներով, որոնք մինչեւ այդ՝ ծանօթ չէին: Հատորը միայն սկզբնաղբիւրների, մինչ օրս անծանօթ նիւթերի առատութեան կողքին՝ բազմաթիւ մեծ ու փոքր յայտնագործութիւններ է մեզ նուիրում: Այս նիւթերի գիտական նոր ուսումնասիրութիւնները մի շարք բացայայտումներ են ընծեռնելու ուսումնասիրողներին:

Երրորդ հատորը՝ *Zamanlar, Mekânlar, İnsanlar* (Ժամանակներ, Վայրեր, Մարդիկ) ներառում է հայ երեւելիների, մասնաւորապէս՝ ամիրայական ընտանիքների, Օսմանեան Կայսրութեան կեանքի տարբեր բնագաւառներում հայերի ունեցած ներդրումների, կայսրութեան ու սուլթանների կեանքի առանձին դրուագների վերաբերեալ Բամպուքճեանի տպագրած հայկական սկզբնաղբիւրների շուրջ առանձին գիտական ուսումնասիրութիւնները, աղբիւրների հրատարակութիւնները: Հատորում տեղ են գտել Բամպուքճեանի այն յօդուածները, որոնք նա գրել է ի պատասխան թուրքական մամուլում տպագրուած հակահայկական, կամ հայ իրականութեան որեւէ խնդրի առթիւ աղաւաղումներ պարունակող յօդուածներին: Մեղմ, գուսպ գրչով, գիտական ու պատմական անհերքելի փաստարկներով ի չիք են դարձուել կանխամտածուած յարձակումները, յերիւրանքներն ու հակահայկական մթնոլորտը շիկացնելու ձգտումները: Այս չուշացող պատասխանները նպաստել են հայ եւ թուրք մշակոյթների կամրջմանը: Բամպուքճեանը հնարաւորինս, գոնէ իր աշխատակցած հրատարակութիւնների միջոցով, կանխել է մեր մշակոյթի, պատմութեան շուրջ կանխակալ գործերի, խեղաթիւրումների ածը: Իւրաքանչիւր հակահայկական յօդուած, որը այս կամ այն կերպ առնչուել է գիտութեան, անպայման որպէս պատասխան ունեցել է Բամպուքճեանի գուսպ, համոզիչ հակահարուածը, որին մեծապէս նպաստել է նրա բարեխիղճ ուսումնասիրողի կեցուածքը:

Հետաքրքիր է վերջին՝ չորրորդ հատորի շապիկը: Սա նկարիչ Դիմիտրի Նալբանդեանի «Վերնատուն»ի յայտնի նկարն է, ուր հայ մտաւորականները մէկտեղուած են դաշնամուրի առջեւ նստած Կոմիտասի շուրջը:

Միայն այս հատորն է, որ կազմուած է անտիպ յօդուածներից՝ *Biyografileriyle Ermeniler* (Հայեր Իրենց Կենսագրութիւններով): Բամպուքճեանի «թղթերը» առլեցուն են եղել հայերի կենսագրականներով: Դրանց մի

մասը ուսումնասիրութիւնների, տպագրուած եւ անտիպ յօդուածների նիւթեր են եղել: Կենսագրութիւնների միւս մասը՝ յօդուածներին կից են, տեքստերի վրայ յաւելագրուած, նշումների ձեւով: Վերջիններս բնականաբար աւելի շատ միտուած են եղել ծառայելու հենց իրեն՝ հեղինակին: Կենսագրականների ահա այս երկու տեսակներից է կազմուած վերջին հատորը՝ շնորհիւ հրատարակիչների ու խմբագրի տքնաջան աշխատանքի:

«Խմբագիրը, խղճամիտ ու գիտական բծախնդրութեամբ իրարմէ զատորոշած է երկու տեսակ կենսագրականները, առաջինը՝ լայնաշունչ ու հեղինակին կողմէ գրի առնուած իբր ամբողջական կենսագրութիւն, երկրորդը՝ միայն մէկ կամ երկու տողով, հեղինակին կողմէ գրուած որպէս սիւնակներու տակ ենթատեղեկութիւն: Առաջինները տպուած են մեծատառ, իսկ երկրորդները գրուած են մանրատառ: Այս կերպով յարգուած է հեղինակին գիտական վարկը, քանի որ ողբացեալ Բամպուքճեան անշուշտ երբեք չէր երեւակայած, թէ իր այդ ցիրուցան կենսագրական նոթերը օր մը պիտի կարենային մէկտեղուիլ որպէս կենսագրական բառարան»,- գրում է Ստամբուլի *Մարմարա* օրաթերթը[3]:

Հրատարակիչն իր առաջաբանում, գնահատելով թուրքական հանրագիտարաններին աշխատակցելու նրա վաստակը, նշում է, որ Բամպուքճեանը որպէս հայ է դասել նաեւ այն անձանց, որոնք հայկական ծագում ունենալով հանդերձ, աւելի ուշ ընդունել են մահմեդականութիւնը, ինչպէս օրինակ թուրք իրականութեան ամենայայտնի անուններից մէկը՝ Միմար Սինանը: 450 էջերում տեղ են գտել նաեւ մի շարք յայտնի բանաստեղծներ, աշուղներ, որոնք թուրքական ծածկանուններ են ունեցել: Դրանցից են, օրինակ, «Նիհաղի» անուամբ տակ՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Յակոբ Նալեանը, ԺԸ. դարի աշուղ Կարապետ Դղղանը՝ յայտնի որպէս «Քարաջաօղլան»: Կենսագրական հատորում օսմանցիների պաշտամունքի առարկայ ճարտարապետը տեղ է գտել որպէս «Սինան» կամ «Քոճա Սինան»:

Չորրորդ հատորն արժէքաւոր է նաեւ նրանով, որ գրքի վերջում տեղ է գտել Բամպուքճեանի հայերէն ուսումնասիրութիւնների, առանձին յօդուածների ցանկը: Այն չափազանց հետաքրքիր է ոչ միայն ուսումնասիրողների, այլեւ հայ մշակոյթով հետաքրքրուողների համար: Ցուցակը սկսում է ԺԷ.-ԺԸ. դարերի մեր ամենայայտնի հոգեւոր գործիչների՝ Յովհաննէս Կոլոտ եւ Յակոբ Նալեան Կ. Պոլսոյ պատրիարքների մասին Բամպուքճեանի մենագրութիւնների արձանագրմամբ: Այս աշխատութիւններում արտացոլւում է արեւմտահայ իրականութիւն ներխուժած կաթոլիկական կրօնի, նաեւ դրա դէմ ուղղուած հայ ժողովրդի պայքարը, որ ղեկավարում էին Կ. Պոլսոյ պատրիարքները հայ առաջադէմ մտաւորականութեան հետ միասին: Յովհաննէս Կոլոտի ստեղծած «Գրական-թարգմանական» դպրոցի, նրա աւանդոյթները շարունակող Յակոբ Նալեանի գործունէութեամբ են պայմանաւորուած եղել այդ շրջանի գրական ժառանգութեան կարեւոր մաս կազմող հայատառ թուրքերէն ինքնուրոյն եւ թարգմանական գործերը: Առեղի փաստական նիւթ է ամբարուած այս մենագրութիւններում, որը մեր ժողովրդի պատմութեան շատ

ու շատ անյայտ էջերի վրայ լոյս է սփռում: Փաստական հարստագոյն նիւթ, որը կարող է աղբիւր ծառայել մի քանի լուրջ ուսումնասիրութիւնների համար, մանաւանդ որ այս արժէքաւոր նիւթը կը հարստացայ անալիտիկ մօտեցման արդիւնքում: Այս աշխատութիւնների մեծագոյն արժէքներից է Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի մեծերի, հոգեւոր գործիչների եւ Մխիթարեան Միաբանութեան հայրերի, մասնաւորապէս Մխիթար Սեբաստացու ու միւսների միջեւ նամակագրական հարուստ նիւթը, որը նոր էջ է հայ իրականութեան մէջ միջ-եկեղեցական յարաբերութիւնների պատմութեան մէջ: Ի տարբերութիւն մեզ յայտնի հասունեանական պայքարի շրջանի ընդհանուր տրամադրութեան՝ Մխիթարեանների հետ այս կապը չափազանց յուզիչ է ու շատ հետեւութիւնների արժանի՝ ի շահ մեր ժողովրդի տարբեր եկեղեցիների ու նրանց հովուապետների միջեւ յարաբերութիւնների լուսաբանմանը:

Բամպուքճեանի կողմից գիտական հրատարակութեան համար պատրաստուած աղբիւրագիտական արժէքների թւում են Երեմիա Չելեպիի *Պատմութիւն Հրակիզման Կոստանդնուպոլսոյ* եւ *Իսթանպուլ Թարիհիի*, Միքայէլ Քհնյ. Երամեանի *Պատմութիւն Արմաշու*, Տրդատ Քհնյ. Ուղուրլեանի *Պատմութիւն Կիլպէնկեան Գերդաստանի* երկերը: Բամպուքճեանի գիտական ծառայութիւններից մէկն էլ այն է, որ նա թուրքերէնի է թարգմանել կամ լատինատառ թուրքերէնի վերածել, ծանօթագրել է մի շարք կարեւորագոյն սկզբնաղբիւրներ, կազմել հայալեզու եւ հայատառ թուրքերէն մամուլի մատենագիտութիւններ: Ինչպես յայտնի է, հայատառ թուրքերէն ձեռագրերի մի գերակշիռ մասը աշուղական արուեստի նմուշներ են, տաղարաններ: Սա ժողովրդական ստեղծագործութեան ու առանձին անհատ ստեղծագործողների մի այնպիսի փունջ է, որն անհատներ ուսումնասիրութիւնների, տաղարանների հրատարակման, նորանոր բացայայտումների, նոր արժեւորումների կարիք ունի: Հայատառ թուրքերէն տաղարաններն արժէքաւոր են նրանով, որ նրանց շնորհիւ կարող ենք վերականգնել մի քանի հարիւրամեակներ Արեւելքում շրջած բազմազգ աշուղների ինքնուրոյն երգերը, ճշտել նրանց ինքնութիւնը, հետեւել այս մշակոյթի զարգացման ընթացքին՝ ունենալով ոչ միայն երգերի բառերը, հեղինակների անունները, այլեւ արեւելեան եղանակների, կշռոյթի ընդհանուր պատկերը[6]: Յայտնի է, որ միայն ԺԷ.-ԺԹ. դդ. աւելի քան 400 հայ աշուղներ ստեղծագործել են միաժամանակ հայերէն եւ թուրքերէն լեզուներով: Հայատառ թուրքերէն տաղարանները եւ առանձին ժողովածուներում տեղ գտած տաղերը դրա լաւագոյն արտայայտութիւններն են[7]: Մանաւանդ թուրքերէն տաղերը հարկ է, որ մատչելի լինեն նաեւ թրքախօս հասարակութեանը: Այս առումով գնահատելի է *Ծիհան* (Աշխարհ) հայատառ թուրքերէն գրականագիտական, առեւտրական, ճանապարհորդական, կենսագրական, արդիւնաբերական շաբաթական հանդէսի (Կ. Պոլիս, 1884-1885թթ.) արտօնատէր ու գլխաւոր խմբագիր, արեւմտահայ նշանաւոր մտաւորական Տիրան Քելեկեանի մօտ 150 տաղերի լատինատառ թրքերէնի վերածումը Բամպուքճեանի կողմից:

Բամպուքճեանի հայալեզու տպագիր ու անտիպ գործերի ցուցակը պարտական ենք պրպտող Կարօ Աբրահամեանի աշխատասիրութեանը: Հայերէն աշխատասիրութիւնների ցանկը, *Մարմարա*ի կարծիքով դեռեւս կարող է լրացուել[8]:

Քառահատորեակի կազմութեան գործում իր ջանասէր աշխատակցութեան համար գրքի հրատարակիչները ու խմբագիրը մի շարք առիթներով իրենց երախտագիտութիւնն են յայտնում Կարօ Աբրահամեանին: Նա Բամպուքճեանի կենսագիրը լինելու պատուաւոր պարտականութիւն ունի: Ամենայն խնամքով կազմուած այս ցուցակում գտնում ենք Բամպուքճեանի աշխատակցած պարբերականների, հանրագիտարանների ու դրանցում տպագրուած յօդուածների անվերջանալի ցանկը:

Ափսոս, որ Բամպուքճեանի անտիպ գործերի ցանկը եւս բաւականին մեծ է:

Վերջին հատորն աւարտում է «Գ. Բամպուքճեան աղբիւրագէտ»ի օգտագործած հայալեզու եւ հայատառ թուրքերէն գրականութեան լատինատառ հայերէն ցանկով: Դրանք հայկական պարբերականներ են, տարեգրքեր, հանրագիտարաններ, գրքեր՝ որոնք այնքան օգնել են հեղինակին տարիների իր ուսումնասիրութիւնների ընթացքում: Թւում է, թէ հրատարակիչները աւելի շատ նկատի են ունեցել այն հանգամանքը, որ այս ցուցակը առաջնորդող կը լինի այսօրեայ բոլոր հայ եւ թուրք ուսումնասիրողների, երկու ժողովուրդների մշակութային կապերի, դրանցով հետաքրքրուողների համար:

Բամպուքճեանի թուրքերէն աշխատասիրութիւնների այս քառահատորեակը թուրք եւ հայ հրատարակիչների անչափ ողջունելի մի գործն է, նրա գիտական ժառանգութեան ու յիշատակի խնկարկումը, որը պիտի մեզ մղի հայ մատենագրութեանն այդչափ նպաստ բերած մեր հայրենակցի գործերի թարգմանութիւնը, հրատարակութիւնը կազմակերպելուն, ապահովելու նրա անուան արժանի տեղը մեր հանրագիտարաններում, հայ գրականագիտութեան ու պատմագրութեան մէջ[9]:

ՅԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ
hasmikstepanyan@yahoo.com

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Kevork Pamukciyan, *Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar* (Թրքական Աղբիւրների Նպաստը՝ Պատմութեան), խմբ.՝ Օսման Քէօքէր, Արաս Հրատ., Իսթանպուլ, 2002-2003, հտ. 1՝ *İstanbul Yazıları*; հտ. 2՝ *Ermeni Harfli Türkçe Metinler*; հտ. 3՝ *Zamanlar, Mekânlar, İnsanlar*; հտ. 4՝ *Biyografileriyle Ermeniler*:

[2] Գէորգ Բամպուքճեանի կենսագրութեան եւ ուսումնասիրութիւնների մասին տես՝ Կարօ Աբրահամեան, «Վաղահաս Ու Անփոխարինելի Կորուստ Մը՝ Գէորգ Բամպուքճեան (1923-1996)», *Հասկ*, Է. տարի, Անթիլիաս, Լիբանան, 1995-96, էջ 659-670:

[3] Բամպուքճեանը եղել է այն եզակի գիտնականը, որի համագործակցութեանն են ապաւինել թուրքական մի շարք ծանրակշիռ հանրագիտարաններ՝ հայկական նիւթերը ներկայացնելու համար: Դրանք են՝ Ընչատ Էքրէմ Գոչուի *İstanbul*

Ansiklopedisi (Ստամբուլի Համրագիտարան), Երկամյա Եօզթունայի *Türk Muzikisi Ansiklopedisi* (Թուրք Երաժշտութեան Համրագիտարան), Մուստաֆա Աքդաղի խմբագրած *Türk Dili ve Edebiyatı Ansiklopedisi* (Թուրք Լեզուի եւ Գրականութեան Համրագիտարան), «Անա Եայընըջըլըք» Հրատարակչատան *Ana Britanika Genel Kültür Ansiklopedisi*ն եւ Թուրք Պատմութեան Կաճառի *Belleten* պարբերաթերթը:

[4] Հատորն առաջնորդող Ռոբէր Կոփթաշի յօդուածից իմանում ենք, որ հրատարակիչների համար մասնաւորապէս օգտակար են եղել նաեւ մեր *Հայատառ Թուրքերէն Գրականութիւնը* մենագրութիւնը, հայատառ թուրքերէն գրքերի եւ պարբերականների մեր կազմած մատենագրութիւնները, որը հայերէն աղբիւրները գնահատելու փորձ ենք նկատում:

[5] *Մարմարա*, «Լոյս Տեսաւ Գէորգ Բամպուրճեանի Չորրորդ Թրքերէն Հատորն Ալ. Այս Փառաւոր Հատորը Կ՚ընդգրկէ...», 24 Սեպտեմբեր 2003, էջ 1, 4:

[6] Գարեգին Լեւոնեան, *Հայ Աշուղները եւ Նրանց Արուեստը*, Երեւան, 1944, էջ 34, նաեւ՝ Ամիրեան Խ. Պ., «Սիրոյ Թեման Թուրքալեզու Հայ Աշուղների Երգերում», *Արուեստագիտութեան Հարցեր* ԵՊՀ Ժողովածու, համար 1-2, Երեւան, 1983, էջ 230, նաեւ նոյնի՝ *Թուրքալեզու Հայ Աշուղներ, Օսմանեան Կայսրութիւն. 16-20րդ Դարեր*, 1990, Օլիէ-սու-Բուա, Ֆրանսիա:

[7] Երեւանի Մ. Մաշտոցի Անուան Մատենադարան, ձեռ. 197, 201-215 (Նոր Ձեռագրերի Հաւաքածոյ):

[8] *Մարմարա*, էջ 4:

[9] Տողերիս հեղինակը թէեւ անձամբ ծանօթ չի եղել Բամպուրճեանին, սակայն տարիների ջերմ, բարեկամական, մասնագիտական նամակագրութիւն է ունեցել նրա հետ, եւ երախտագիտութեամբ է յիշում նրա գնահատականները, մեծ սիրով պահում նրա նուիրած ու հեղինակած գրքերը, իր եւ հայատառ թուրքերէնի վերաբերեալ իր թուրք գործընկերների յօդուածների առանձնատիպերը:

Katsumori Ichikawa, *Jipusi no Kita Michi*, Tokyo, Hakusui-sha, 2003, 231pp.

Katsumori Ichikawa was one of the ordinary Japanese who had little knowledge about Armenia before he visited there to meet Armenian gypsies. After the trip, he published a book entitled *Jipusi No Kita Michi* (The Routes of the Gypsies), reporting on the Armenian and Indian gypsies, which introduced an unknown world to Japanese readers.

The author is neither an Armenologist nor a scholar who engages in research on the gypsies, but a producer and director of music and images such as *World Ethnic Music* or *Japanese History and Entertainment*. As he explains in the preface, Ichikawa has had a deep interest in the street performances of Asian countries, and in the course of observing travelling performers, he started to wonder how entertainment relates to travelling. Ichikawa visited India in the summer of 2001 and met a group of people who are possibly the ancestors of the gypsies. As a result of this trip, Ichikawa started to trace the routes through which gypsies travelled and to pay attention to Armenia because he is convinced, as some scholars maintain, that gypsies spread to Europe via Armenia. The lack of sufficient references brought him to Armenia to tackle various questions.

The book is divided into two chapters. The first chapter focuses on his trip to Armenia in 2003, and the second chapter reports on his visit to India in 2001. The first chapter begins from the moment the author arrives at the airport of Zvartnots, and mainly notes interviews with Armenian gypsies. The author goes to Kanaker, a suburb of Yerevan, the district of Saritagh, and villages in Jeraber and the city of Gyumri, and meets with *boshas*, settled gypsies, who are engaged in making baskets. The author explains to readers the contemptuous and negative attitude which gypsies have endured historically. Consequently, with the advice of a local interpreter, the author avoids asking direct questions to them and begins interviews by saying that the purpose of his visit is to see a village famous for basket making. Indeed, although the author's approach is less likely to cause emotional reactions, some *boshas* with whom he meets deny the existence of Armenian gypsies. However, most gypsies whom he interviews kindly answered his questions. He even meets gypsies who call themselves Lom (Romani) and take pride in being Lom.

Along with the interviews, Ichikawa presents the gypsies' history of travelling and a brief history of Armenia from ancient to present times, including the Genocide of 1915 and the Karabagh conflict. The author also points out the social and economic problems which Armenia currently faces. For instance, when he observes a partly paved road which was completed with the financial assistance of the Diaspora Armenians, he understands a dicthontomy among the Armenians. On the one hand, the success of Armenian Americans, the wealth of Armenians who

have returned from the United States and the music in jazz clubs reflect positive images, and on the other hand relics of the Soviet times remain awkward for them, and Armenians still struggle with the remnants of the Soviet ghost (pp.55-56).

Ichikawa concludes the first chapter with a review of the gypsies' travelling routes from Armenia to Europe, summarizing general information on Russian, East European, German and South European gypsies respectively.

The second part of the book covers his trip to India in 2001, which chronologically goes before the first chapter. While Armenian gypsies are settled, a group of gypsies whom he met in the Thar Desert is still travelling and giving street performances for a living.

As the author points out, gypsies are people who have never endeavoured to record their historical past. Accordingly, there are no equivalent words for "to write" and "to read" in their language, and this fact has made it difficult for scholars to trace their history in detail. Considering this fact, Ichikawa's first-hand experience provides valuable information as he reports on how Armenian gypsies live in Armenia today. Furthermore, by introducing the life of unsettled gypsies in India, the author outlines the origin of the gypsies.

AKIKO HIKI

Hiroyoshi Segawa, *The Forgotten Armenian Genocide: A Case Study of the Prevention and Punishment of Crimes of Genocide* (in Japanese), Sankeisha Press Nagoya, Japan, 2004.

This book is the first Japanese publication on the Armenian Genocide. The book is insightful and sheds light on human behavior, full of frailty and immorality. It also provides us, the Japanese, for the first time with facts and useful information surrounding the Armenian massacres.

The importance of the events that took place in the Ottoman Empire in 1915-1916, as the author of the book explains, is not how many people were tortured and slaughtered because of racial and religious conflicts, but how the incident was kept under the carpet for more than fifty years because of political and ideological conflicts resulting from the parties involved contending its own case. The international recognition of the Armenian Genocide was finally obtained only some fifty years of the event.

The facts surrounding the Armenian Genocide, tragic in terms of the number of the people murdered, was distorted with explicit intent to misinform the public and the event itself was even denied - repeated attempts by the parties involved have been made even to erase the murder from history.

The author of the book became interested in the Genocide issue even though many Japanese scholars and researchers had not given it high priority. The author was convinced, however, that Genocide or incidents similar to it result from conflicts between ethnic leaders who are unsatisfied with the prevailing order of their societies. Thus, these leaders, guided by justifiable or unjustifiable ideologies, involve innocent people in the process of establishing a society of their choosing. The result is a massive slaughter of many people since the process usually involves the use of force.

The Armenian Genocide has been compared to the Holocaust. These are certainly two of the most sorrowful and dreadful incidents in the 20th century or even in the whole of human history. In contrast to the Armenian Genocide, the Holocaust, which took place some twenty years after the occurrence of the Armenian tragedy, is far better known. The author contends that had the serious and grave nature of the Armenian slaughter been brought to the world's attention sooner, the Holocaust might have been avoided or the extent of the Jewish tragedy might have been held to a much smaller scale.

The Japanese people, and particularly Japanese scholars doing research on Armenia, will owe a large debt to Professor Segawa for writing about the facts surrounding the Armenian Genocide. Many Japanese, I believe, do not know where Armenia is, and for them Armenia is certainly a foreign country. Thus, many Japanese who are eager to learn more about Armenia and the surrounding areas will keenly appreciate Segawa's work.

Another reason why Japanese should read Segawa's book is that any Japanese who reads it will recall the Nankin massacre that took place in China during World War II, a wartime tragedy committed by the Japanese military.

The Nankin Incident is a tragedy not only because many innocent Chinese were killed, but also because the incident was long hidden from the Japanese public. Thus, the reader will find a stark similarity between the Nankin massacre and the Armenian Genocide. It is true that the Nankin incident has not yet been recognized as Genocide. But Professor Segawa correctly raises a question about the meaning of Genocide by pointing out that even decimating a part of an ethnic group could be considered to be Genocide. Certainly the Japanese reader will reflect on this point when he reads this book. Having read this book, thoughtful Japanese readers will also reflect upon the victims of the atom bombs dropped on Hiroshima and Nagasaki.

The value of Segawa's study is great, to say the least, since anyone aware of the Armenian Genocide will make a firm determination that another tragedy of this nature should never happen again on the earth.

The book is structured as follows: Chapter 1 gives the definition of Genocide in general; Chapter 2 explains the prelude to the Armenian Genocide; in Chapter 3 the Armenian Genocide is described; in Chapter 4 the Armenian Genocide is compared with the Holocaust. The author's conclusions are found in the final chapter. At the end of the book an extensive list of literature, in Japanese as well as other languages, is presented, together with three valuable maps of the areas relevant to the Genocide. These were provided to the author, courtesy of Dr. Professor Nikolay Hovhannisyan, Director of the Institute of Oriental Studies in the Armenian National Academy of Sciences.

Genocide is a crime against humanity and civilization. And the Armenian Genocide is no exception. But the genocidal massacre in Armenia deserves special attention because it took place in 1915 but did not come to light until more than 50 years after its occurrence. Thus the incident is a serious tragedy for Armenia, which, throughout its history, has been a tapestry of divisions, being divided geographically between East and West, religiously between Christians and Muslims, and ideologically between communists and non-communists.

The massive slaughter did take place in the Ottoman Empire in 1915, but the Turkish government until recently argued that nothing out of the ordinary happened to the Armenians during that period. The fact remained, however, that there was little doubt that the Young Turks government decimated the Armenians in the Ottoman Empire. The political confusion among Western nations after World War I and conflicting interests between Western powers and Soviet-controlled nations hindered serious attempts to reveal what had happened to the Armenians in the Ottoman Empire in 1915.

It was only after Turkey became more integrated into the world economy and

the Western alliance system that it could no longer cover up the tragedy of the Armenians. Also the world became more concerned with human rights after World War II. The atrocities committed by the Nazis against the Jews during World War II brought the subject of Genocide into focus. The hope of preventing gross abuse of human rights and global conflict moved the United Nations to set up committees to investigate various abuses of human rights such as the Holocaust and the Armenocide. Finally it was confirmed by a UN committee that the mass murder of Armenians in 1915 was a case of Genocide.

The Japanese readers of the book will find it interesting to know how international recognition of the Armenian tragedy came to light. The book points out in detail the long silence and indifference of the World concerning the matter. That will be a good reminder how weak humans are.

The author of the book is a native Japanese, a graduate of Kansai University in Japan and currently teaches in Aichi Sangyo University in the Nagoya area. The author has received various medals and other prestigious awards including an honorary doctorate from the International Academy of Sciences of Nature and Society (Armenian Branch) for his work on Armenia. He acknowledges his debt to Professor R. G. Melik-Ohanjanyan, for making his research on Armenia enjoyable and rewarding.

Professor Segawa is adviser of the Japan-Armenia Friendship Association and currently a liaison officer between Armenia and Tukude, a village in the Aichi Prefecture of Japan, establishing "the one country and one village or town relationship" a unique feature of the International Expo to be held in Aichi Prefecture in 2005.

M. ABE

Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի. Հատոր Բ., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քէօշկարեան, խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Ա. Ջէյթունեանի, ցանկերը՝ Վ. Դեւրիկեանի, «Նաիրի» Հրատարակչութիւն, Երեւան, 2004, 832 էջ:

Գրերի Գիւտի 1600ամեակի տօնակատարութիւնների նախօրեակին մի նոր փառաւոր նուէր ստացաւ հայագիտութիւնը: Վերջապէս հրապարակուեց Մաշտոցի անուան Մատենադարանի (ՄՄ) ընդարձակ ձեռագրացուցակի երկրորդ հատորը, որին արդէն 20 տարի մեծ հետաքրքրութեամբ եւ անհամբերութեամբ սպասում էր հայագէտների մի ողջ սերունդ: Հատորն հրատարակուել է Union National Des Associations d'Amitiée France-Russie-CEI, Université De Genève Et Prof. Bernard Outierի (Ազգերի Միաւորում Ֆրանկո-Ռուս-Եւրոպական Բարեկամութիւն Ընկերակցութիւն, Ժընեւի Համալսարան եւ Պրոֆ. Բեռնար Ուտիէ) նիւթական աջակցութեամբ եւ հովանաւորութեամբ: ՄՄի ընդարձակ ձեռագրացուցակի առաջին հատորը լոյս է տեսել 1984ին, հրատարակութեան պատրաստ ներկայ գիրքը Մատենադարանի գգրոցներում է մնացել շուրջ 20 տարի: 80-90ականների հրատարակութիւնների համար անմխիթար ժամանակաշրջանը յուսանք, որ մնացել է ետեւում եւ մենք կրկին կը տեսնենք հայագիտական հիմնարար հետազօտութիւնների նորանոր հրապարակումներ, որոնք իրենց հետ կը բերեն նոր անուններ եւ գիտութեան զոհասեղանի վրայ կը դնեն հրատարակութեան պատրաստ նորանոր հատորներ: Այդ հերթին ես սպասում ՄՄի եւ այլ հաւաքածուների ընդարձակ ձեռագրացուցակները, վաւերագրերի, յիշատակարանների եւ մատենագրական բազմաժանր նիւթերի հատորաւոր հրատարակութիւնները:

Անցած տարիներին հայկական ձեռագրերի նկարագրութիւնը բաւական առաջընթաց է ապրել արտասահմանում: Հրատարակուել են Վենետիկի Մխիթարեան միաբանութեան ձեռագրացուցակի Դ., Ե., Զ., Է., Ը. հատորները (հայր Սահակ Ճեմճեմեան)[1], Փարիզի Ազգային գրադարանի նոր ձեռագրացուցակը (Ռ. Գէորգեան, Ա. Տէր-Ստեփանեան)[2], Բեռնար Կուլիի հայկական ձեռագրացուցակների մատենագիտութիւնը[3]: Ձեռագրագիտութեան խընդիրների քննարկմանը նպաստել է նաեւ Հնագրութեան նոր ալբոմի հրատարակութիւնը, որն իրականացուել է Դանիայում տպագրական արուեստի ժամանակակից ամենաբարձր մակարդակով, Տիգրան Գույումճեանի, Մայքլ Սթոնի եւ Հենինգ Լեհմանի ջանքերի շնորհիւ[4]: Յիշատակուած հատորները վերջին տարիներին հրապարակուած մի շարք հայագիտական հրատարակութիւնների հետ (Նորայր արք. Պողարեանի Էյրուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի ձեռագրացուցակ[5], Պիտէր Քաուի Քեմբրիջի գրադարանի հայկական ձեռագրերի նկարագրութիւն[6], Ամուշաւան վրդ. Դանիէլեանի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի Մայր ցուցակ[7], Տրդատ եպս. Պալեանի Կեսարիայի ձեռագրերի նկարագրութիւններ[8] եւն.) ընդլայնում են հայկական ձեռագիր

մատեանների ֆոնդին եւ հնագրութեանը վերաբերող մեր գիտելիքները: Այս ընթացքում հսկայական քայլերով առաջ են ընթացել Եւրոպայում միջնադարեան բազմալեզու ձեռագիր գրքի հետազօտութեան, հնագրագիտութեան, կրկնագրերի ուսումնասիրութեան, բնագրագիտութեան եւ աղբիւրագիտութեան ճիւղերը, որոնց հետազօտութեան նորյղքները սերտօրէն կապւում են այլալեզու ձեռագիր մատեաններում ամբարուած գիտելիքների եւ նիւթերի ճանաչման խնդիրների հետ:

ՄՄի ձեռագրացուցակի հրատարակուած հատոր շրջանառութեան մէջ է դնում մեր միջնադարեան մատեաններում ամբարուած բազմաթիւ նիւթեր, որոնք հում նիւթ են դառնում յետագայ պատմաբանասիրական հետազօտութիւնների համար եւ խթան՝ կատարելու նոր ճշգրտումներ, հետեւելու ժողովածոյից-ժողովածոյ ձեռագրական նիւթերի տեղաշարժերին: Ինչպէս յայտնի է ՄՄի ձեռագրական ֆոնդերի համառօտ նկարագրութեան առաջաբանից[9], 1441ից յետոյ հետզհետէ ձեւաւորուած այդ հաւաքածուն իր մէջ պարունակում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւորականների մի շարք սերունդների եւ հաստատութեան պետականացումից յետոյ՝ գիտնականների կողմից խնամքով հաւաքուած մի մատենադարան, առանց որի ամբողջական նկարագրութեան հայագիտութիւնը, մանաւանդ միջնադարագիտութիւնը կարող է խարխափել քարանձաւային մթում: Այդ հաւաքածոյի ձեւաւորման պատմութիւնը առնի համառօտ գծերով ներկայացուած է երջանիայիշատակ բանասէր Ասատուր Մնացականեանի հեղինակած ՄՄի ընդարձակ Մայր Ցուցակի առաջին հատորի Առաջաբանում[10]:

Իհարկէ ներկայ երկրորդ հատորը, ուր նկարագրուած է ՄՄում պահպանուող հերթական 300 մատեան, իրենից չի ներկայացնում միայն նոր բնագրեր եւ յայտնագործութիւններ: Ներկայացուած ձեռագրերում ամբագրուած են մեր մշակոյթի բազմաթիւ վաւերագրեր, որոնք սերում են Ե.-ԺԹ. դարերի հայկական մշակոյթի զանազան դպրոցներից ու հեղինակներից: Դրանք դաւանաբանական եւ աստուածաբանական երկեր են, միջնադարեան ճշգրիտ եւ հումանիտար գիտութեան զանազան յուշարձանների ընդօրինակութիւններ, եկեղեցագիտական եւ ծիսագիտական երկերի արտագրութիւններ, վաւերագրերի եւ պատմական երկերի ընդօրինակութիւններ, աշխարհիկ եւ եկեղեցական իրաւունքի յուշարձանների ընդօրինակութիւններ, միջնադարեան արձակ եւ չափածոյ մատենագրութեան նմուշների արտագրութիւններ:

ՄՄի ձեռագրացուցակներն իրենց նիւթերով ապաստում են ոչ միայն հայ մատենագրութեան, պատմութեան եւ ընդհանրապէս հայագիտութեան խնդիրների վերարծարծմանն ու ուսումնասիրութեանը, այլ նաեւ միջնադարում տարբեր ժողովուրդների մատենագրական յուշարձանների հետ մեր մշակութային յուշարձանների կապի հետազօտութեանը: ՄՄը լինելով հայկական ձեռագրերի մեծագոյն հաւաքածուն, կողմնորոշիչ դեր կարող է ստանձնել հայկական ձեռագրերի միւս հաւաքածուների համար. այստեղ նկարագրուած միաւորները կարող են օրինակելի դառնալ այլ ձեռագրատների մատեաններում պահպանուող նոյն նիւթերի մասնագիտական որակեալ նկարագ-

րութեան համար: ՄՄ Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի եւ բարձրագոյն ուսումնական կենտրոնների մասնագէտների օգնութեամբ կարող է ապահովել նման ձեռագրացուցակների կատարեալ հրատարակութիւնը, հաշուի առնելով մատեաններում ընդգրկուած նիւթերի կապը քրիստոնեայ արեւելքի միւս մատենագրութիւնների եւ միջնադարեան գիտութեան զանազան ճիւղերի հետ: Այս առումով ապագայում պէտք է խրախուսել մասնագիտական ձեռագրացուցակների կազմումը այս կամ այն միջնադարեան բնագրի հրատարակչի կողմից կամ էլ առանձին գրչօջախներից ելած մատեանների նկարագրութիւնն ու հետազօտութիւնը ձեռագրագէտների կողմից, որոնք կը նպաստեն մեր միջնադարեան մատեանների համակողմանի ուսումնասիրութեան խորացմանը:

Ձեռագրացուցակի երկրորդ հատորը ցաւօք չունի առաջաբան, ուր մանրամասնօրէն խօսուէր այս հատորի պատրաստման սկզբունքների եւ հրատարակութեան դժուարութիւնների մասին: Իհարկէ կարելի է արդարանալ, ասելով, որ դրա կարիքը չկար, քանի որ 1984ին լոյս տեսած առաջին հատորի առաջաբանում Մնացականեանն անդրադարձել է յիշեալ խնդիրներից շատերին, օրինակելի ձեռագրացուցակ ստեղծելու ՄՄի մասնագէտների ձգտմանը: Այնուամենայնիւ, արժէր այս հատորում անդրադառնալ ոչ միայն նկարագրութիւնը պատրաստող մասնագէտների կատարած աշխատանքին, ամէն մի մատեանի կապակցութեամբ յիշատակելով իւրաքանչիւր ձեռագրագէտի կատարած աշխատանքը: Պետք էր այսուհետեւ պարտադիր կերպով յիշատակել, թէ ով է իւրաքանչիւր ձեռագրի նկարագրութեան հեղինակը: Դրանով պահպանուած կը լիներ ձեռագրերի նկարագրութեան հեղինակային իրաւունքը: Այս սկզբունքը կարծում եմ պէտք է կարեւորագոյններից մէկը դառնայ ՄՄի յետագայ ձեռագրացուցակների հրատարակութեան ժամանակ: Իւրաքանչիւր ձեռագրի նկարագրութիւն ունի թէ՛ ձեւաբանօրէն ընդհանուր, այնպէս էլ կազմողին յատուկ բնորոշումներ, որոնք անհատականացնում են նկարագրութիւնները: Այդ իսկ պատճառով, յետագայ թիւրիմացութիւններից խուսափելու համար հարկաւոր է միշտ ընդգծել ձեռագրի նկարագրողի անունը, որը թոյլ կը տայ նաեւ յետագայում աւելի վստահօրէն վերաբերուել նկարագրութեանը, իսկ բուն նկարագրողը աւելի պատասխանատու կը լինի նկարագրուող միաւորի հանդէպ:

Այստեղ արժէ ընդգծել, որ նկարագրուած 300 ձեռագրերում պահպանւում է տարբեր լեզուներով 83 պահպանակ-պատառիկ, հայերէն (66 եւ 1 տպագ.), վրացերէն (3), լատիներէն (5), յունարէն (4), ասորերէն (2), եթովպերէն (1) եւ սլաւոներէն (1): Պատառիկների նշանակութիւնը յատկապէս մեծ է հնագրութեան տեսանկիւնից, իսկ դրանց հետեւողական ուսումնասիրութիւնը կարող է թանկագին նիւթ տալ յատկապէս վաղ միջնադարի պատմամշակութային բազմազան կապերի, գրչութեան դպրոցների, գրքարուեստի տեխնիկայի եւ օգտագործուած նիւթերի (մագաղաթ, թանաք) հետազօտութեան տեսանկիւնից: Պէտք է միայն ցաւով ասել, որ մեզանում բացակայում են այլալեզու ձեռագրերի հնագրութեան մասնագէտներ (եթովպագէտ, ղպտագէտ, եբրայա-

գետ եւն.). իսկ եղած՝ լեզուներին տեղեակ մասնագէտներն էլ չեն ներգրաւում այդ պատառիկների ուսումնասիրութեան գործի մէջ: Այդ է պատճառը, որ կորում է պատառիկներից շատերի թուագրումը. չի նշւում, թէ դրանք մասնաւորապէս ո՞ր գրչութեան դպրոցին են պատկանում. յաճախ չի ապահովւում այդ պատառիկների ամբողջական վերծանութիւնը, շատ դէպքերում էլ գաղտնի է մնում ձեռագրագուցակից օգտուողներին դրանց նիւթը: Այստեղ պիտի նշել, թէ որքան է ետ մնում հայագիտութիւնը, երբ քրիստոնեայ բոյր եկեղեցիների մատենագրական ժառանգութեան հետազօտութեան, ձեռագրագիտութեան նորոյթները վրիպում են հայագէտ մասնագէտների ուշադրութիւնից: Հիմնական բացթողումը մեզանում բիւզանդական, ասորական, սլաւոնական, վրացական, եթովպական, լատինական հնագրութիւնների հմուտ մասնագէտների բացակայութիւնն է: Այսօրուայ գիտական առաջընթացի պայմաններում յիշատակուած մասնագիտութիւնների պատրաստութիւնը եւ առկայութիւնը մեր համալսարաններում եւ միջնադարագիտական հիմնարկներում կարեւորագոյն խնդիր է դարձել: Հայագիտութեան յետագայ զարգացման կարեւորագոյն պայմաններից է միջնադարեան Մերձաւոր Արեւելքի լեզուների, պատմութեան եւ մշակոյթի մասնագէտների պատրաստումը:

ՄՄի նկարագրուած 300 ձեռագրերի մեծամասնութիւնը Աւետարաններ (54) եւ Աստուածաշնչեր (10) են. 32ը՝ ժամագիրք-խորհրդատետր-տօնացոյց, այսինքն՝ ծիսական օգտագործման մատեաններ, 14ը՝ բժշկարաններ են. 11ը՝ բառարաններ. 5ը՝ դատաստանագրքեր. մնացածները՝ դաւանաբանական հակաճառութիւններ. փիլիսոփայական թարգմանական եւ մեկնողական երկեր:

Այս յարաբերականօրէն փոքր քանակի մէջ եւս պահանջւում է ձեռագրերից իրաքանչիւրին եւ նրանց մէջ պահպանուած գանազան նիւթերին համապատասխան մօտեցում: Խօսքը վերաբերում է նրան, որ օրինակ, Աւետարան կամ Աստուածաշունչ նկարագրողները իրենց ձեռքի տակ ունենան մի հարցարան, որի հիման վրայ ձեռագրացուցակից օգտուող մասնագէտը ճշգրտօրէն տեղեկացուի բնագրին վերաբերող իրայատկութիւնների մասին, յիշատակուեն այդ բնագրերի տուեալ ընդօրինակութեանը մօտ կարեւորագոյն մատեանները, բացայայտուեն տուեալ ընդօրինակութեան կարեւորագոյն տարբերութիւնները եւ նոյնութիւնները մես արտագրութիւնների հետ: Ենիչտ է, յաճախ նկարագրողը տեղ խնայելու պատճառաբանութեամբ յոյն է կատարում նոյն բնագրի մի այլ ընդօրինակութեան, սակայն նման յոյմները երբեմն կատարում են միայն բնագրերի արտաքին նմանութիւնները նկատի ունենալով: Ներքին, աւելի խոր համեմատութիւն այլեւս չի կատարում, որն էլ մնում է արդէն տուեալ բնագրի գիտաբննական բնագրի կազմողին կամ բնագրերի տարբեր խմբագրութիւնների մատեանների ծագումնաբանական հերթականութիւնը ճշտող մասնագէտներին:

Նկարագրուած ձեռագրերի մէջ իրենց թուով առանձնանում են հնագոյն Աւետարանները եւ Աստուածաշնչերը, որոնք կարեւորում են ոչ միայն հնագրութեան այլ նաեւ քրիստոնէութեան կարեւորագոյն յուշարձանի քննական

բնագրի կազմման աշխատանքների տեսանկիւնից: Ներկայացուած ձեռագրերի մէջ յատկանշական են Սեբաստիայում (ՄՄ-311, 1066թ.), Եղեսիայում (ՄՄ-313, 1171թ.), Գանձասարում (ՄՄ-378, ԺԳ. դ.) ընդօրինակուած Աւետարանները, Յովհաննէս Արքաեղբօր (ՄՄ- 345, 1270թ.), Գլաձորի (ՄՄ-353, 1313թ.), Սուտտայի (ՄՄ-352, 1367-1371թթ.) Աստուածաշնչերը: Այս ձեռագրերը արժեւորում են նաեւ տարբեր գրչօջախներում Աստուածաշնչային բնագրերի ընդօրինակման աւանդոյթների պահպանման եւ ուսումնասիրութեան տեսանկիւնից: Այստեղ մեծ կարեւորութիւն են ներկայացնում տարբեր գրչագրական դպրոցների արգասիք մատեանները:

Հայկական մատենագրութեան ուսումնասիրութեան տեսանկիւնից կարեւոր նշանակութիւն ունեն Վարդան Արեւելցու *Ժղյանքի* (ՄՄ-341, 1365թ.), Մխիթար Հերացու *Ջերմանց Մխիթարութիւն* գրքի (ՄՄ-416, 1279թ.) հնագոյն ձեռագրերը, որոնք կարեւորում են յիշեալ բնագրերի ուսումնասիրութեան տեսանկիւնից: Այս բնագրերի հետազօտութեանը եւ նորովի հրատարակութեան համար հարկաւոր է պատրաստել Հայոց Աստուածաբանական, եկեղեցագիտական ու բժշկագիտական բնագրերի հետազօտող հրատարակիչներ:

Այստեղ անդրադառնանք Մխիթար Գօշի *Դատաստանագիրքի* ընդօրինակութիւններին, որոնք բոլորն էլ ծանօթ են եղել այդ բնագրի առաջին հրատարակիչ Վահան վրդ. Բաստամեանցին: Դրանց վրայ առկայ է վաստակաշատ հայագէտի ձեռքը եւ սրբագրումները (տե՛ս՝ ՄՄ-485, 486, 488): Մասնագէտների համար կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ այդ ձեռագրերից մէկը՝ թ. 488ը 1876-1878ին Վահան վարդապետի հետ ճանապարհորդել է Եւրոպայով եւ համեմատուել Փարիզի Ազգային Գրադարանում պահպանուող նոյն բնագրի հայր Բառնաբաս Եսայեանի կողմից ֆրանսիացի հայագէտ Է. Դիւլորիէի պատուէրով կատարուած նոյն բնագրի վենետիկեան ձեռագրերից մէկի ընդօրինակութեան հետ: Փարիզի յիշատակուած մատեանը Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան մատենադարանում պահուող Մխիթար Գօշի *Դատաստանագիրքի* հնագոյն ձեռագրի ընդօրինակութիւնն է: Յայտնի է, որ հայագիտութեան մէջ արդէն գոյութիւն ունի Մխիթար Գօշի *Դատաստանագիրքի* ձեռագրագիտական նկարագրութեան բաւական մեծ փորձ, որը պայմանաւորուած է Բաստամեանցի, հայր Ղեւոնդ Ալիշանի, Խոսրով Թորոսեանի հետազօտութիւններով: Ձեռագրագէտների խնդիրներից է այդ ուսումնասիրութիւնների արդիւնքները օգտագործել մատեանների նկարագրութեան ընթացքում:

Նոյն մտահոգութեամբ պէտք է մօտենալ միջնադարեան իրաւունքի այնպիսի յուշարձանների, ինչպիսիք են *Կանոնագիրքերի*, Սմբատ Սպարապետի *Դատաստանագրքի*, Էկլոգայի[11] եւ նրա յաւելուածների, բիւզանդական եւ լատին (Պետրոս Արագոնցու) կանոնագրքերի հայերէն թարգմանութիւնների խմբագրութիւնների ճշգրտմանը: Նմանատիպ նկարագրութիւնը պահանջում է հնագրագիտական, աղբիւրագիտական եւ բնագրագիտական հետազօտութեան լայն հենքի ապահովում: Այստեղ կարեւորում է իրաւաբանչիւր խումբ ձեռագրի բնագրագիտական առանձնայատկութիւնների բացայայտումն ու

արձանագրումը: Պակաս կարեւորութիւն ձեռք չի բերում նաեւ օրէնսգիտական ամբողջական ձեռագրերի եւ դրանց խմբերի դասդասումը, որի համար հիմք կարող է դառնալ Հիւբրըտ Կաուֆխոլդի *Համառօտ ժողովումն* երկի ձեռագրերի մանրակրկիտ հետազօտութիւնը[12]:

Այս տեսանկիւնից տարբեր մօտեցումներ եւ նկարագրական լուծումներ է պահանջում ձեռագրերում ամփոփուած իւրաքանչիւր միաւոր: Կարեւորում է իւրաքանչիւր բնագրի ամբողջական, իր բոլոր իւրայատկութիւններով նկարագրութիւնը, որը նոր խթան կարող է դառնալ բնագրերի հրատարակութեան եւ ձեռագրական խմբերի դասակարգման գործում: Նմանատիպ աշխատանքները կարեւոր խթան կարող են դառնալ բնագրագիտական եւ աղբիւրագիտական հետազօտութիւնների համար ու հիմք ստեղծել առանձին բնագաւառների մատեանների վերլուծական ձեռագրացուցակներ ստեղծելու գործում: Ձեռագրացուցակների հրատարակութեան կարեւորագոյն նպատակներից մէկն էլ նիւթերի լիակատար ճանաչելիութիւնն է: Մասնագէտը հնարաւորութեան սահմաններում ամբողջական պատկերացում պէտք է կազմի թէ՛ գրման ողջ գործընթացի, մատեանի անցած պատմութեան, եւ թէ՛ իւրաքանչիւր բնագրի առանձնայատկութիւններին վերաբերող ամենաչնչին նրբութիւնների վերաբերեալ:

Այստեղ մասնագէտին մեծ օգնութիւն են ցոյց տալիս ձեռագրացուցակների ցանկերը, որոնց կատարեալ օրինակ է Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի *Մայր Յուցակի* առաջին հատորի համար հայր Յակոբոս Տաշեանի կազմած ցանկերը[13]: Այն յաճախ փոխարինում է հայոց մատենագրութեան ծանօթագրուած մատենագիտութիւններին:

Պէտք է շեշտել, որ բաւական խնամքով են կազմուել գրախօսուող հատորի ցանկերը, այնուամենայնիւ, ձեռագրացուցակ են թափանցել նաեւ որոշ վրիպումներ, որոնց ներկայացնելու համար, օրինակներ բերեմ միայն աշխարհագրական անունների ցանկից: Այսպէս, ցանկերում նոյնացուած են Սուդտա եւ Սուրխաթ տեղանունները: Այստեղ միմեանց են չփոթուած Ղրիմի Սուդտա (էջ 209, 216 նոյն տեղում նաեւ Սուրխաթ, 1415, 1418՝ *յաշխարհս Ղրիմոյ, ի Սուրխաթ քաղաք*) եւ Հնդկաստանի Սուրաթ Բանդար (էջ 289, 296, 293՝ *Հնդկաց Բանդար Սուրաթուն*, 781, 784՝ *յերկիրն Քընդուստան, քաղաքն Բան[դ]արի Սուրաթուն*) տեղանունները: Պէտք է նշել, նաեւ որ Ղրիմի Սուրխաթը (Հին Ղրիմ) նոյնական չէ Սուդտա (Սուրժ) տեղանուան հետ: Լիբիա տեղանուան հետ նոյնացուած Աբրկա տերմինը հաւանաբար վրիպման արդիւնք է, այն պէտք էր նոյնացնել Աֆրիկայի հետ (տե՛ս՝ սիւն 1172, 1276): Ազիազոյ քաղաքը պէտք է նոյնացուէր Նագիանգի հետ (սիւն 687, 1154): Ամազոնիա տեղանունը արհեստականօրէն է ստեղծուած, այն վերաբերում է հին աշխարհին յայտնի առասպելական ամազոնուհիներին: Ապարան եւ Ապարաներ տեղանունները վերաբերում են Նախիջեւանում գտնուող նոյնանուն բնակավայրին, չարժէր դրանք առանձնացնել:

Կարելի է յիշատակել նաեւ մի քանի վրիպում, որոնք թափանցել են անձնանունների ցանկ: Աբաղան խան եւ Ապաղ դան անունները նոյն անուան տարբեր արտասանութիւններն են, ԺԲ. դարի Կղեմէս եպիսկոպոսը եւ պապը նոյնական են Կղեմէս Գ.ի հետ, 1192ի Ներսէս եպիսկոպոսը եւ 1197ի կրօնաւորը պէտք է նոյնացուէին Լամբրոնացու հետ, Միխայիլ եւ Միքայէլ Ասորիները ԺԲ. դարի Յակոբիկ պատրիարքի տարբեր յորջորջումներն են մեր մատենագրութեան մէջ, Հեթում Ա.ի անուան տակ պէտք է դրուէր նաեւ Կոստանդին Բարձրաբերդցու անունից Վարդան Արեւելցու գրած թուղթը ի պատասխան Հռոմի պապի լեկաթին:

Նկատուած վրիպակները եւ դիտողութիւնները երբեք չեն նուազեցնում տիտանական այն մեծ խմբակային աշխատանքը, որի արդիւնքն է ներկայ ձեռագրացուցակը: Իմ նկատառումները բխում են նոր ժամանակների շնչից եւ ձեռագրացուցակների նկարագրութիւնները աւելի կատարեալ տեսնելու մտահոգութիւնից:

Ձեռագրացուցակները հայագիտութեան այբբէնարաններն են: Մեզ հասած եւ չհասած բոլոր հայկական ձեռագրերի նկարագրութիւնները հաւաքելը եւ հայագիտութեանը ի սպաս դնելը գիտութեան կարեւորագոյն խնդիրներից է: ՄՄի նոր, ընդարձակ ձեռագրացուցակների հրատարակութիւնը ունի առաջնակարգ նշանակութիւն եւ վերջին հաշուով նպաստելու է հայագիտութեան աննախընթաց զարգացմանը:

ԱՂԱՍ ԲՈՂՈՅԵԱՆ
bznazt@yahoo.fr

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հայր Սահակ Վրդ. Ճեմճեմեան, *Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Միխիթարեանց Ի Վենետիկ*, հտ. Դ.՝ *Ընթակնոց-Ճայոց-Ժամագիրք-Խորհրդատետր-Մաշտոմամուր-Կցուրդք*, Վենետիկ Ս. Ղազար, 1993; հտ. Ե.՝ *Յայտաւուրք-Գանձարան-Տաղարան-Տօնացոյց*, Վենետիկ Ս. Ղազար, 1995; հտ. Զ.՝ *Պատմագիրք Հայոց-Կանոնագիրք-Գրիգոր Նարեկացի-Ներսէս Շնորհալի-Ներսէս Լամբրոնացի-Աղօթագիրք*, Վենետիկ Ս. Ղազար, 1996; հտ. Է.՝ *Տօնապատճառ-Ժողովածոյ-Մատենագիրք Հայոց*, Վենետիկ Ս. Ղազար, 1996; հտ. Ը.՝ *Թարգմանութիւնք Նախնեաց-Վարք Հարանց-Բժշկարան*, Վենետիկ Ս. Ղազար, 1998:

[2] Raymond H. Kévorkian, Armén Ter-Stépanian, *Manuscrits Arméniens De La Bibliothèque Nationale De France. Catalogue*, Paris, 1998.

[3] Bernard Coulie, *Répertoire Des Bibliothèque Et Des Catalogues Des Manuscrits Arméniens*, Brepolis-Turnhout, 1992 (Corpus Christianorum).

[4] Michael Stone, Dickran Kouymjian, Henning Lehmann, *Album Of Armenian Paleography*, Aarhurs University Press, Denmark, 2002.

[5] Նորայր Եպս. Պողարեան, *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հտ. Ա.՝ 1966, Բ.՝ 1967, Գ.՝ 1968, Դ.՝ 1969, Ե.՝ 1971, Զ.՝ 1972, Է.՝ 1974, Երուսաղէմ, Տպարան Ս. Յակոբեանց:

[6] Peter Cowe, *Catalogue Of The Armenian Manuscripts In The Cambridge University Library*, Lovanii, 1994 (Corpus Scriptorum Christianorum Orientalium. Vol. 546. Subsidia, tomus 86).

[7] Անուշաւան Վրդ. Դանիէլեան, *Մայր Յուցակ Ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան*, 1984, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկոյ:

[8] Տրդատ Եպս. Պալեան, *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի Ի Կեսարիա*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1963, նաեւ՝ *Յուցակ Ձեռագրաց Ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ Ի Շրջակայս Նոցին*, Նկարագրեց՝ Տրդատ Եպիսկոպոս Պալեան, կազմեց Գէորգ Տէր-Վարդանեան, *Կենսամատենագիտութիւն Տրդատ Եպիսկոպոս Պալեանի*, կազմեց՝ Կարինէ Աւետեան, «Քննասէր» Հրատարակչութիւն, Երեւան 2002:

[9] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունցեան, Փ. Անթաբեան, ներածութիւնը՝ Օ. Եգանեանի, խմբագրութիւնը՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1965, էջ 17:

[10] *Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի*, հտ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունցեան, Փ. Անթաբեան, խմբ.՝ Ա. Մնացականեան, Օ. Եգանեան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան 1984:

[11] Բիւզանդական իրաւունքի Ը. դարի յուշարձան:

[12] Die armenischen Übersetzungen byzantinischer Rechtsbücher. Erster Teil: Allgemeines. Zweiter Teil: Die "Kurze Sammlung" ("Sententiae Syriacus"), herausgegeben, übersetzt und erläutert von Hubert Kaufhold, Frankfurt am Main, 1997, S. 20-72.

[13] *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց Ի Վիեննա*, կազմեց Յակովբոս Վ. Տաշեան, Մխիթարեան Տպարան, Վիեննա, 1895:

Dr. Tessa Hofmann, *Les Arménies En Turquie Aujourd'hui. La Minorité Arménienne en République Turque: Évaluation critique de la situation*, Imprimé en Suède, Le Assemblée des Arméniens d'Europe, 2004, 50 էջ:

Ուսումնասիրութեան նպատակը Եւրոպական Միութեան անդամակցութեան չէմին յայտնուած Թուրքիոյ հայ փոքրամասնութեան 1993-2003 շրջանի վիճակի ներկայացումն է եւ ունի այն յոյսը, թէ Թուրքիոյ պետական քաղաքականութիւնը պիտի փոխէ այս գծով իր որդեգրած դիրքորոշումը:

Գիրքին Յառաջաբանին մէջ կը խօսուի աշխատասիրութեան բովանդակութեան մասին ու յանգուած եզրակացութիւններուն ամփոփումը կը կատարուի:

Ըստ գիրքին, Թուրքիոյ մէջ, պաշտօնական ու վարչական խտրականութեան զուգահեռ, բնական է անարդարութեան յղացքին առկայութիւնը: Հեղինակուհին այս ընթացքին մէջ կը տեսնէ նպատակը՝ Թուրքիոյ հայ փոքրամասնութիւնը ձուլելու կամ անոր արտագաղթին համար պայմաններ ստեղծելու, ինչ որ անցեալին իրագործուած ծրագրերուն հետ ալ նմանութիւն մը ունի: Այս նպատակը կ'իրագործուի գաղտնի ու թաքուն կերպով եւ այսու կը մնայ աննկատելի, երբ կը դիտուի դուրսէն: Այս հանգամանքին լաւագոյն փաստն է երկրին մէջ ապրող հին հայերուն վիճակը:

Ասոնք[1] նոր իսլամ-թուրքերը, հասարակութենէն վտարուելու վտանգը աչքի առաջ ունենալով՝ չեն բացայայտեր իրենց ինքնութիւնը: Գիրքին մէջ նշուած են նաեւ Համշէնի հայախօս, բայց իսլամացած 20 հազար հայերը (Տրապիզոնի ու Էրզրումի շուրջ): Հեղինակը չէ անդրադարձած սակայն, Ասոնսի (Կապադովկիա, Կեսարիա) եւ Ատափազարի իսլամացած հայութեան: Այս հաւաքականութիւնները մեծաւ մասամբ ամուսնութիւններ կը կնքեն իրենց միջեւ ու իրենց շուրջի հասարակութիւնը գիտէ անոնց ծագման մասին: Հեղինակը հանդիպած է նաեւ հայերու, որոնց անուն-ազգանունները թրքացած են. ասոնք կրօնափոխ ըլլալով ընդունած են իսլամը ու կ'ապրին իսլամի օրէնքներուն համաձայն:

Միւս կողմէն, Արեւելեան Անատոլուի մէջ, 1980էն ետք, յատկապէս կեդրոնէն հեռու վայրերու մէջ, բնակչութիւնը իսլամացնելու փորձեր կատարուած են: Այս առումով, ուսումնասիրութեան մէջ կը նշուի 1983ին Սիիրթի մէջ (Սղերդ), Հարենդ=Աճառ գիւղի օրինակը: 1988ին, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ հրապարակուած զեկուցագրի մը մէջ կը նշուի, թէ Թուրքիոյ մէջ կան միլիոն մը հայեր, որոնք բոնի կերպով իսլամացուած են:

Խօսելով թրքահայ հաստատութիւններու եւ կազմակերպութիւններու վիճակին մասին, գիրքը կը կատարէ ճիշդ հաստատումներ, ինչպէս օրինակ, թէ՝ թրքահայ կազմակերպութիւններու գործունէութիւնը սահմանափակուած է կրօնական, հասարակական ու կրթական մարգերով: Իրաւացի է հեղինակը, երբ կը գրէ, թէ կրօնական գործերն իսկ կ'իրականան պետութեան հակա-

կշռին ու գիտութեան ներքեւ եւ Հայ եկեղեցւոյ հոգեւորականներուն բիւր կը նուազի օրէ օր:

Հոֆման իր ուսումնասիրութեան հայկական հաստատութիւններու ու իրենց հարցերուն նուիրուած բաժնին մէջ, կը նշէ, թէ Թուրքիոյ մէջ կան 38 առաքելական, 12 կաթողիկէ ու 4 աւետարանական եկեղեցիներ, որոնք սակայն հոգեւորականներու պակաս ունին: 1969ին փակուեցան դպրեվանքները: Թէեւ յետագային իսլամական ուսումնարանները բացուեցան, սակայն հայոց ու յունաց դպրեվանքները տակաւին կը մնան փակ: Հոֆմանի համաձայն, Հայկական երեսփոխանական ժողովը, որ 1960ին լուծարուած էր, 1990ին վերստին հիմնադրուեցաւ/կեանքի կոչուեցաւ՝ Պատրիարքութեան Խորհրդակցական Մարմին անուան տակ: Վերջինս սակայն, 1997ին դարձեալ լուծարուեցաւ: Թրքական կառավարութեան կողմէ առնուած այս քայլին պատճառաբանութիւնը այն էր, որ կրօնական ու դաւանական այլ խմբաւորումներ եւս կրնան նման մարմիններ պահանջել: Միւս կողմէ, 1998ին, Գարեգին Բ. Պատրիարքի վախճանումէն ետք, պատրիարքական նոր ընտրութիւններու սեմին, *Թիւրքիյէ* թերթը Մեսրոպ Արք. Մութաֆեանի (Թուրքիոյ հայոց այժմու պատրիարքը) դէմ սկսած էր շարժում մը: Այս շրջանին եւս 1997ին ու 2002ին, եկեղեցիներու դէմ յարձակումները նոյնպէս շարունակուած են, գրուած է Հոֆմանի կատարած այս ուսումնասիրութեան մէջ:

Պոլսոյ 18 հայկական վարժարաններուն մէջ, 1999ի տուեալներով, ուսում կը ստանան 3800 աշակերտներ, որոնց բիւր տարուէ տարի կը նուազի: Հայկական վարժարաններուն մէջ պարտադիր թուրք պէտք է ըլլայ փոխ-տնօրէնը, որուն իրաւասութեան դաշտը բաւականին լայն է: Օրէնսդրութեան համաձայն, դատարկ դպրոցները, նոյն նպատակով այլ հաստատութիւններու կողմէ կրնան փոխարինուիլ/ստանձնուիլ, ինչ որ նոյնպէս հակասութեան մէջ կը գտնուի Լոզանի Պայմանագրին հետ: Բաց աստի, պետութիւնը հայկական վարժարաններ գործուղուած թուրք ուսուցիչներուն ամսականները չի վճարեր: Հայ վարժարաններուն վարչութիւնները իրաւունք չունին ազատօրէն արձանագրելու ոչ-հայ աշակերտները: Հարկ է նշել, որ քրիստոնեայ այլ յարանուանութիւններու պատկանող ծնողներ իրենց զաւակները հայկական վարժարաններ չեն կրնար արձանագրել, եւ իր ուսումնառութիւնը թրքական վարժարանի մը մէջ սկսած մանուկը, յետագային չի կրնար փոխադրուիլ հայկական վարժարան մը: Խառն ամուսնութենէ կազմուած ընտանիքի մը մէջ, եթէ հայրը ողջ է՝ մանուկը հայկական վարժարան կրնայ յաճախել, սակայն եթէ մեռած է՝ չի կրնար: Թրքահայ վարժարաններուն մէջ հայերէնի համար յատկացուած է չորս դասապահ, ինչ որ բաւարար կարելի է նկատել:

Մարդկային իրաւանց ծիրին մէջ, պէտք է մատնանշել, որ Թուրքիոյ մէջ անձնական ազատութիւններու սահմանափակումը հայերուն յատուկ չէ միայն: Ան կը վերաբերի Թուրքիոյ բոլոր քրիստոնեաներուն, որոնց պաշտօնավարումը պետական համակարգէն, դատական ու զինուորական (սպայ եւ աւելի բարձր կոչումներ) կալուածներէն ներս, կարելի չէ: Թուրքիոյ հայ համայնքին անդամները չեն կրնար իրենց ուսումը շարունակել ռազմական վար-

ժարանցներուն մէջ, ինչ որ կը հակասէ Լոզանի Պայմանագրին: Անոնք սակայն կը կատարեն իրենց զինուորական ընթացիկ պարտականութիւնը, երկրի միւս քաղաքացիներուն հետ հաւասար իրաւունքներով: Հոֆմանի աշխատասիրութեան մէջ նշուած է, թէ հայ զինուորներն ու պահեստի սպաները խտրականութեան ու արհամարհանքի կ'ենթարկուին իրենց ծառայութեան ժամանակ: Հեղինակին այս հաստատումը այնքան ալ չի պատշաճիր իրականութեան: Միայն թէ, այն զինուորները, որոնք կու գան գաւառէն, իրենց ծառայութեան սկզբնական շրջանին կ'ունենան որոշ նախապաշարումներ. հետզհետէ սակայն, երբ կը հաստատուին ընկերական յարաբերութիւններ, այս նախապաշարումները կը ջնջուին: Զինուորական հրամանատարութեան կողմէ ուղղակի կատարուած խտրականութեան չեն հանդիպած վերջին շրջանին բանակի մէջ ծառայած հայ երիտասարդները:

Հանրային կարծիքի յառաջացումը այլ խոցելի կէտ մըն է: Արդարեւ, Թուրքիոյ իրականութեան այսպանելի երեսակներէն է այն, որ մամուլն ու պետական մեքենայի վարիչները իրենց կողմնակալ հաղորդումներով ու յայտարարութիւններով հասարակ ժողովուրդը կը գրգռեն հայ փոքրամասնութեան դէմ, որ բնակչութեան 0.1%ն իսկ չի կազմեր: Ժամանակ առ ժամանակ, յատկապէս Եւրոպական Միութեան անդամակցութեան գործընթացին բերումով, անկողմնակալութեան տարազով պարուրուած լուրերու կամ յօդուածներու հրապարակումը պարզապէս ցուցադրութիւն է եւ հեռու՝ անկեղծութենէ: Որպէս բնական հետեւութիւնը այս իրողութեան, թուրք մանուկներու 73%ը կ'ատէ հայը: Թուրքիոյ դասագիրքերուն մէջ կը պատմուի, թէ հայը թշնամի ժողովուրդ մըն է, Հայաստանն ալ՝ թշնամի պետութիւն մը: Այս քաղաքականութեան արդիւնքին, հարցախոյզերու մէջ հասարակութեան մէկ մասը համոզուած է, որ հայերը լաւ չեն կամ ալ վատ ժողովուրդ մըն են: 76%ին համար ալ Թուրքիոյ ամէնէն քիչ ժողովրդականութիւն վայելող ազգը հայն է:

Աշխատութեան մէջ կը նշուի, թէ Թուրքիոյ քրիստոնեայ բնակչութիւնը կ'ենթարկուի յարձակումներու, եւ յարձակողները պաշտպանութեան տակ առնուելով նուազագոյն պատիժներով ազատ կ'արձակուին:

Աթաթիւրքի Սելանիկի բնակարանին ռմբակոծման առտ լուրի տարածման հետեւանքով տեղի ունեցած էին 1955 Սեպտեմբեր 6-7ի դէպքերը: Իսկ 1970ականներուն, ԱՍԱԼԱի ահաբեկչական արարքներուն հետեւանքով, 1977-1979ին կրթական ու կրօնական բազմաթիւ հաստատութիւններու մօտ ռումբեր պայթեցան: 12 Սեպտեմբեր 1980ի զինուորական յեղաշրջման վաղորդայնին, օդակայանի մէջ ձերբակալուեցաւ կուսակրօն հոգեւորական մը (Հոգշ. S. Մաճուէլ Վրդ. Երկաթեան, որ հիւանդութեան պատճառով վախճանեցաւ 2004ին, Հոլանտայի մէջ): Ան ենթարկուեցաւ զանազան կտտանքներու եւ ազատ արձակուեցաւ 1986ին, վատառողջ ըլլալուն հետեւանքով: 1982ին ալ ձերբակալուեցաւ հայ աւետարանական մը:

1992-1994՝ Ղարաբաղի խնդրին պատճառով, հայկական վարժարաններու պատերուն վրայ ծայրայեղ աջակողմեաններու կողմէ գրգռիչ գրութիւններ գրուեցան: Ճիշդ այս շրջանին էր, որ Հանրապետութեան Նախագահ Թուր-

կութ Էօզալ յայտարարեց, թէ հայերը բնաւ դաս չեն քաղած պատմութենէն, իսկ 1992ին առեւտրական ու արդիւնաբերական հաստատութիւնները հեռապատճէններ ուղարկեցին բազմաթիւ գործատեղիներու՝ յորդորելով, որ այսուհետեւ վերջ դրուի հայերու հետ գործարարական կապերուն: Հրապարակուեցաւ նաեւ հայերու ու հրեաներու խառնութիւններուն ցուցակը՝ անուն առ անուն, հասցէ առ հասցէ:

Պաքըրգիւղի ու Եշիլգիւղի հայոց տուներուն նամակներ ղրկուեցան՝ ազգայնական միութիւններու ստորագրութիւններով: Թէեւ Ազգայնական Շարժում Կուսակցութեան (ԱՀՓ, *Milliyetci Hareket Partisi*) նախագահ Ալփարսլան Թիւրքէշ յայտարարեց թէ կատարուածը իրմէ անկախ է ու հերքեց փաստը: Ջանազան եկեղեցիներու մօտ ցոյցեր կատարուեցան: Գումգաբուի ու Գատրգիւղի մէջ, 1993ին, հայկական գերեզմանատուներու վրայ յարձակումներ գործուեցան եւ հայկական դպրոցները քարկոծուեցան:

Մտածելու ազատութիւնը զանգուածային լրատուամիջոցներուն մէջ կը բացակայի: Սա ամբողջ երկրին հիմնական հարցերէն մէկն է արդէն: 1999ին Ըոտըրի մէջ հայերուն կողմէ թուրքերու ցեղասպանութեան յիշատակին արձան մը բացուեցաւ: Այս առթիւ հրատարակուեցան ու կը շարունակուին երբեմն հրատարակուիլ յօդուածներ ու հաղորդումներ, որոնք կը պնդեն, թէ ցեղասպանութիւն մը կատարուած է, բայց՝ հայերու կողմէ՝ թուրքերուն դէմ: Ամէն անգամ, երբ Անատոլուի մէջ հաւաքական գերեզման մը բացուի, մամուլին մէջ կ'րսուի, թէ ասոնք աճիւններն են այն թուրքերուն, որոնք ջարդուեցան հայերուն կողմէ: Միւս կողմէ դրական յառաջընթաց մը կարելի է նկատել այն, որ 2004ին հրատարակուեցաւ Անդրանիկ Զօրավարի մասին գիրք մը, ինչպէս նաեւ Վահագն Տատրեանի յօդուածներու ժողովածուն, որոնք դեռեւս առանց որեւէ պաշտօնական արգելքի, կը վաճառուին: Արտայայտուելու ու մտածելու ազատութեան կաշկանդումին առթիւ, Հոֆման տուած է օրինակները Մարդկային Իրաւանց Միութեան Նախագահ Ազգն Պիրտալի կալանաւորման, հրատարակիչ Ռակըփ Ջարագօլուի դատապարտուած գիրքերուն եւ գրող Ելտայի Գերմանիա փախուստին:

Թուրք մամուլին մէջ հակահայ հրապարակումները կը շարունակուին՝ 1970ականներու ԱՍՈՒԱՅի ու 1990ականներու Ղարաբաղեան խնդրին հետ կապուած լուրերու մէջ մանաւանդ: Հասկնալի է՝ պարզ ժողովուրդը կ'առնէ այն, ինչ որ մամուլը կը հրամցնէ իրեն:

Ատենին մամուլին մէջ ըսուեցաւ, թէ ՓՔՔ կայք հաստատած է Հայաստանի մէջ (1993 թ.), թէ Սուրիայէն ու Իրաքէն Թուրքիա մուտք գործած 800 ՓՔՔականները հայեր էին (1996 թ.): 1993ին *Աքսահէր*էն թուրք լրագրող մը այցելեց Հայաստան՝ տեղւոյն վրայ ստուգելու համար այս հաղորդումներուն իրականութիւնը: Ան իր վերադարձին գրեց, թէ Հայաստանի մէջ, բացի եզիտի խաղաղ գիւղերէն, չէ հանդիպած քրտական ահաբեկչական ոչ մէկ կայանի: Նմանատիպ հաղորդումով մը, հեղինակատր *Հիւրրիյէթ* թերթը եւս հերքեց Հայաստանի մէջ ՓՔՔի կայաններու գոյութեան յերիւրանքը: Բաց աստի,

Կիւնայտրի թերթը գրեց, որ ՓՔՔ նիւթական հովանաւորութիւն կը ստանայ հայերէն: Ըսուեցաւ նաեւ, որ Ապտուլլահ Էօճալանի մայրը հայ է:

Հոֆման անդրադարձած է նաեւ Տողան Ագհանըլի նման գրողներու, որոնք հայկական եղեռնի մասին գեղարուեստական գիրքեր գրած են (օր.՝ *Դատաստանի Օրուան Դատաւորները*), սակայն ցաւալի է, որ մոռցուած է հայկական ցեղասպանութեան լաւագոյն մասնագէտներէն Թանէր Ագչամի անունը:

Պատմական յուշարձաններու նկատմամբ Թուրքիոյ մէջ առհասարակ կը տիրէ անտարբերութիւն մը: Այս մթնոլորտին մէջ, հայկական կառոյցներն ալ իրենց հասանելի վնասը կը ստանան նման վերաբերմունքէ մը. այսպէս՝ փոքր քաղաքներու եւ լքուած տարածքներու մօտ գտնուող հայկական յուշարձանները, խնամքի բացակայութենէն վնասուելով, կամաց-կամաց կը կքին, կ'ոչնչանան:

Ուսումնասիրութեան բաժիններէն մին յատկացուած է հայկական մշակոյթի անտեսման ու ոչնչացման դէպքերուն: Տարբեր ժամանակներու, եկեղեցիները կա՛մ վերածուած են մզկիթի, կա՛մ ալ գիտակցաբար ենթարկուած են վնասներու: 1998ին Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին վերածուեցաւ մզկիթի, իսկ կիլիկեան շրջանի աթոռանիստ պատմական Հռոմկլայի մնաց Պիրիճիկ ջրամբարի ջուրերուն տակ: 1990ին Անի մայրաքաղաքին մէջ կատարուած «վերաձորոգութեան» աշխատանքներու արդիւնքը այն եղաւ որ բազմաթիւ յուշարձաններ փճացան: Զարմանալին այն է, որ վերաձորոգութիւնները կը կատարուէին հայկական ճարտարապետութենէն գաղափար չունեցող անձերու կողմէ (օրինակ՝ վերաձորոգութիւնը կատարող ճարտարապետերէն մին յետագային դարձաւ անդամը ՄՀՓի): Հայկական յուշարձանները կը վերագրուին տոհմերու, բագաւորական հարստութիւններու (օրինակ Բագրատունիներու, Արծրունիներու եւն.)՝ առանց նշելու անոնց ազգային պատկանելիութիւնը: ԻՒՆԷՍՔՕի 1974ի արձանագրութիւններուն համաձայն (որ 1999ին ստորագրեց նաեւ Թուրքիա), 464/913 կառոյցներ կործանած են 1915էն ետք (252 հատը կործանած է, իսկ 197 հատը վերստին պէտք է կառուցուի): Միւս կողմէ, հայկական արձանագրութիւնները, խաչքարերը գործածուած են նոր շինութիւններու ընթացքին:

2003ի տուեալներով, Թուրքիոյ հայ բնակչութիւնը կը հաշուէ 72 հազար: Իսկ, ըստ 1995ի պաշտօնական տուեալներու՝ 57 հազար: Ինչպէս կ'երեւի, 1965ի պաշտօնական տուեալներով նշուած 58 հազարին դիմաց, ոչ մէկ յաւելում կրած է այս թիւը[2]: Զանազան աղբիւրներ կը հաստատեն, թէ Օսմանեան կայսրութեան տարածքին, 1915էն առաջ, կ'ապրէին 2.5-3 միլիոն հայեր: Ճիշդ է, որ 1964էն ետք մանաւանդ, Ստամպուլէն դուրս - Անատոլուի տարածքին - հայեր չեն մնացած գրեթէ, այնուամենայնիւ կարելի է հայերու հանդիպիլ Կեսարիոյ, Իսքենտերունի, Հաթայի (Վագրֆլը գիւղի մէջ կ'ապրին 150 հայեր) նման շրջաններու մէջ՝ ի բաց առեալ Հէմշինի եւ Աւանոսի հայախօսները:

Պոլսահայ բնակավայրերուն անդրադառնալով, ի յայտ կու գայ, որ այժմու Ստամպուլի ամէնէն հայաշատ թաղամասն է Քուրթուլուշը: Հայաշատ

նախկին քաղերը՝ Եշիլգիւղ (Այ Ստեֆանօ), Պաքըրգիւղ (Մաքրիգիւղ), Գումգաբու, Սամաթիա, Ալթընէրմէր-Ետիքուլէ, Գատըգիւղ (նախկին Քաղկեդոնը) նոյնպէս ունին հայ բնակչութիւն, թէեւ ոչ անցեալի խտութեամբ: Չեռքի գանազան արհեստներու (ոսկերչութիւն եւն.) տէր, ինչպէս նաեւ առեւտուրով զբաղող հայ հաւաքանութիւնը տնտեսական առումով կը կազմէ միջին դասակարգ մը Թուրքիոյ մէջ: Անոնք, ինչպէս ըսուեցաւ, չեն կրնար պաշտօններ գրաւել պետական հաստատութիւններու մէջ, իրենց կրօնական տարբերութեան պատճառով:

Գիրքը ուշադրութիւն կը դարձնէ նաեւ փոքրամասնութիւններու վրայ դրուած տուրքերուն, եւ անոնց խնդիրներուն: Այսպէս, Օսմանեան կայսրութեան շրջանին, ոչ-քրիստոնեաներէն կը գանձուէին *ճիզիէ* ու *խարաչ* կոչուող տուրքերը: Անոնք՝ ոչ-քրիստոնեաները, ըստ իրենց կրօնքի ու դաւանանքի, կ'ենթարկուէին բաժանումի՝ *միլլէթ* անուան տակ: Ամէն *միլլէթ* ունէր իր օրէնսդրութիւնը: ԺԹ. դարասկիզբի բարեփոխումները, մանաւանդ Սուլթան Աբտիւլմէճիտի գահակալութեան շրջանին, հետզհետէ զարգացան եւ 1876ին ընդունուած Սահմանադրութեամբ ա՛լ աւելի ամրագրուեցան: Այսպէսով ստեղծուեցաւ համեմատաբար ազատ միջավայր մը:

Թուրքիոյ հանրապետական շրջանի պատմութեան մէջ 1922-24ի Տրապիզոնի, 1929ի Հարփութի (Խարբերդ), Տիարպաքըրի, Մարտինի մէջ պատահած են զանազան դէպքեր: Թուրքիայէն այս շրջանին, կամ աւելի առաջ, հեռացած բնակչութիւնը եթէ 24 Յուլիս 1923-էն Մայիս 1927ի միջեւ երկիր չէ վերադարձած՝ զրկուած է իր հպատակութենէն:

1942-1944ի Ուճեւորութեան Տուրքը եւս կը հակասէ Լոզանի Պայմանագրի տրամադրութիւններուն: Բացատրուած է, թէ այս քայլը ժամանակի վարչապետ Շիւքրիւ Սարաճօղլուի կողմէ առնուած է՝ բրքացնելու համար երկրի տնտեսութիւնը: Այս նիւթը վերջերս վերստին յայտնուեցաւ Թուրքիոյ օրակարգին, երբ քաղաքագէտ-գրող Էրգմազ Քարաքոյունլուի *Տիկին Սայքըմի Հատիկները* վէպին նիմաց վրայ նկարահանուեցաւ համանուն ժապաւէնը: Այսպէսով, հասարակութիւնը տեղեակ դարձաւ Ուճեւորութեան Տուրքին ու անոր պատճառած վնասներուն, ինչ որ դրական յառաջընթաց մը կարելի է նկատել: Այնուամենայնիւ, ՄՀՓ արտայայտեց իր ժխտական վերաբերմունքը այս առթիւ եւս:

Թուրքիոյ հայ համայնքի ամէնէն մեծ հարցերէն մէկն ալ *վագֆ*երու՝ համայնքային կալուածներու խնդիրն է: Օգոստոս 1926ին ընդունուած որոշման մը համաձայն, 6 Օգոստոս 1924էն առաջ անձերու սեփականութիւնը եղող տարածքներն ու կալուածները ետ պիտի վերադարձուէին: Հոֆմանի ուսումնասիրութեան մէջ չէ նշուած սակայն, թէ այս որոշումը իրագործուա՞ծ է, թէ՛ ոչ, ըստ երեւոյթին՝ ո՛չ: 1926 ու 1936 թուականներէն վերջ գոյութիւն ունի կալուած գնելու մասին օրէնք մը, որուն հետեւանքով 1974ին ի պետութիւն գրաւուած են բոլոր այն 39 կալուածները, որոնք գնուած կամ զանազան առիթներով ստացուած են նշեալ թուականներուն միջեւ: 2001ին դատարանը օրինականացուցած է այս գրաւումը, նշելով, որ այդ շրջանին կալուածներ

չէին կրնար առնուիլ կամ կտակուիլ: 2002ին, Եւրոպական Միութեան հետ համաձայնեցման օրէնքներու շրջագծով, երկրի խորհրդարանին կողմէ ջնջուեցաւ 1936էն վերջ կտակի միջոցով կալուածներ ընդունիլն արգիլող օրէնքը, սակայն նոր որոշումն ալ գործադրութեան տեսակէտէ այնքան մանրութիւններ կը պահանջէ, որ այս հարցը տակաւին կը շարունակէ իր անելանելի բնոյթը ու նոր օրէնքը կը մնայ անգործադրելի:

Հոֆման իր աշխատութեան մէջ կ'անդրադառնայ պատմական իրողութիւններու, ինչպէս եւ անոնց յետագայ զարգացումներուն՝ 1878ի Պերլինի Վեհաժողովին, *Իթթիհատ Վէ Թերաքքի* կուսակցութեան գործունէութեան, Մեծ Եղեռնին, Սեւրի Դաշնագրին: Հեղինակը կը շեշտէ, որ 1915ի եղեռնը, ըստ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան, 1991ին ընդունուած է որպէս ցեղասպանութիւն: Ան կ'ըսէ, թէ Լոզանի Պայմանագիրը, աշխարհավար կարգերուն հակադրուելով, Թուրքիոյ հայ ազգաբնակչութեան մասին խօսք չ'ըներ, այլ միայն կ'ընդունի երկրէն ներս գոյութիւն ունեցող ոչ-իսլամ բնակչութիւն մը:

Հուսկ, ազգայնականութիւնը կը մագլցի Թուրքիոյ մէջ, ուր Պատմութեան Հիմնարկին կողմէ կը շարունակուի պաշտօնական պատմութեան գրառումը, հետեւաբար՝ պատմութեան գեղծարարութիւնը: 2002ին Թուրքիոյ Խորհրդարանի կողմէ ընդունուած որոշման մը համաձայն, քոյլատրուեցաւ տարբեր լեզուներով (քրտերէն, հայերէն, ասորերէն եւն.) հաղորդումներ կատարել հեռատեսիլով ու ձայնասփիւռով: *Վաղդ*ները պիտի կարենան այսուհետեւ գնել նոր կալուածներ: Բացասական էր այն, որ դպրոցական աշակերտներուն հրահանգուեցաւ շարադրութիւններ գրել՝ հայկական եղեռնը ժխտող բնոյթով, ինչ որ անմիջապէս դատապարտուեցաւ հանրային կարծիքին կողմէ:

Հոֆման իր ուսումնասիրութեան նիւթերը քաղած է հետեւողականօրէն, տեղ-տեղ զանոնք հարստացուցած է բազմաթիւ օրինակներով: Գիրքին մէջ տեղ գտած են այնպիսի տուեալներ, որոնց մասին Թուրքիոյ մէջ չեն գիտեր մանրամասնօրէն (եւ կամ «ոմանք» չեն խրախուսեր որ գիտցուին): Աշխատութիւնը ունի ճիշդ դատումներ եւ վերլուծումներ:

Գիրքին ու հեղինակին անաչառութիւնը կրնայ սակայն կասկածի ենթարկուիլ ոմանց կողմէ, տրուած ըլլալով, որ գիրքը գրուած է Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան չէմին, Եւրոպայի Հայկական Խորհուրդին պատուէրով: Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան դէմ եղող հայկական կազմակերպութեան մը այս հրատարակութիւնը կրնայ արժանանալ քաղաքական վերագրումներու, ինչ որ չուքի տակ կրնայ թողուլ գիրքին բովանդակութիւնը:

ԳԷՈՐԳ ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՍԵԻԱՆ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Աշխատասիրութեան մէջ նշուած են իբրեւ 30-40 հազար:

[2] Ի դէպ, 1997-2001ի միջեւ 82,250 Հայաստանի քաղաքացիներ մուտք գործած են Թուրքիա:

David L. Phillips, *Unsilencing the Past: Track Two Diplomacy and Turkish-Armenian Reconciliation*, New York and Oxford: Berghahn Books, 2005. ISBN 1-84545-007-8. Hardcover. 168 pp.

To review *Unsilencing the Past*, David Phillips's book about his endeavor to bring Turks and Armenians, and Azeris and Armenians together, is a rewarding experience, particularly for those who are interested in Armenian-Turkish reconciliation and the impact of the Nagorno-Karabakh (N-K) conflict on Armenian-Turkish relations.

The author reveals firsthand information about the *Track Two Program on Turkey and the Caucasus* that was initiated during the Clinton administration, and the creation of the Turkish-Armenian Reconciliation Commission (TARC), "the program's centerpiece" (p. 3), on July 9, 2001. He also conveys to the reader his objectives to bring Armenians and Turks together "to confront a tormented past and explore future cooperation" and dialogue (p. 1). In addition, Phillips, as TARC's Chairman, stresses that he aimed at promoting mutual understanding and good will between Armenians and Turks and the establishment of better relations between Armenia and Turkey. He believes that the *Track Two Program on Turkey and the Caucasus* would create a "context for civil society to develop mutual understanding with the goal of transferring their insights to decision-makers and shaping public opinion" (p. 1). Within this context, the author scrutinizes the cultural, economic, academic, and educational aspects through which TARC could enhance cooperation between Armenians and Turks and build trust. TARC could also issue policy recommendations to the concerned governments. He believes that TARC could be the best initiative to foster dialogue and cooperation, and ultimately peace building, between Armenians and Turks. The book narrates and analyses all these themes concurrently.

Unsilencing the Past is not an academic book based on research. It does not have a conceptual approach to explain the various themes mentioned in the book. For example, the author does not present various approaches to negotiation and mediation of conflicts. Instead, he emphasizes Track Two diplomacy as an approach to break the logjam of non-dialogue between Armenians and Turks. Probably, Armenian-Turkish dialogue would never have succeeded without the plethora of Track Two diplomatic initiatives. Phillips gives a detailed explanation of the positions of TARC's Armenian and Turkish members and assesses their fundamentally different expectations of the Commission. "The Armenians saw TARC as a vehicle for approaching Turkish elites and initiating a dialogue about the genocide" (p. 53). They also focused on opening Turkey's eastern border and establishing diplomatic relations with Ankara, irrespective of the N-K conflict between Armenia and Azerbaijan. Further, Andranik Mihranian, an Armenian member of TARC, insisted that TARC should address the 1915 genocide committed by Turks against the Armenians living in the Ottoman Empire. In one

of the meetings of TARC he said: "culture is nice but we need to come to an understanding on the genocide and other issues that divide us", otherwise, he warned, "we will continue to raise genocide in parliaments around the world" (p. 52).

On the other hand, TARC's Turkish members did not want to discuss the genocide issue. Instead, they preferred to encourage cultural and economic projects that would demonstrate contact and cooperation between the two peoples. They were convinced that dialogue would contribute to empathy and enable Turks "to develop an increased appreciation for the suffering of Armenians" in the Ottoman Empire in World War I. Therefore, "TARC's Turkish members fueled the belief that Ankara was using TARC to deter genocide recognition by the international community" (p. 62). Gunduz Aktan, a Turkish member of TARC, maintained that "none of the Turkish participants considered the events of 1915-1916 as genocide" (p. 53). He added: "We certainly consider them terrible events, but they do not fall within the definition of genocide accepted under international humanitarian law" (p. 29). Gunduz's viewpoints have been typical of the official stance of the Turkish government, which considers that the killings of hundreds of thousands of Armenians took place amid the general unrest of World War I. Therefore, the allegations that the Armenians were subjected to planned and systematic killings in the Ottoman Empire are groundless and do not correspond to reality.

The book is not divided into chapters. Instead, the author uses descriptive headings to depict the political, diplomatic, security, economic, and humanitarian concerns and developments that he shared with TARC's Armenian and Turkish members. Moreover, Phillips shows profound knowledge about Armenian-Turkish issues and the deep distrust that the two peoples have toward each other. He also stresses that reconciliation and peace building between Armenians and Turks can not be established without the resolution of the N-K conflict between Armenia and Azerbaijan, since the Azeris consider themselves Turks. Hence, the participation of Ozdem Sanberk, another Turkish member of TARC, "ensured that Baku's interest would be looked after" (p. 39). Indeed, Ozdem did not hesitate to raise the issue of the Azerbaijani territories occupied by the N-K Armenians and the return of the Azerbaijani refugees to their homes. Since Azerbaijan's independence in 1991, Ankara has linked "normalization of relations with Armenia to a settlement of the dispute over N-K" (p. 53). Turkey has refused to establish diplomatic relations and open its border with Armenia until the latter recognizes Baku's sovereignty over N-K. Ankara has also set a new precondition for the normalization of relations with Armenia, demanding that Azerbaijan be granted a land corridor to its Nakhichevan exclave under a future peace agreement. This last precondition is not explicitly mentioned in the book. On the other hand, Vartan Oskanian, Armenia's foreign minister, has stated that "bilateral relations [with Turkey] should not be taken hostage by Azerbaijani-Armenian disputes, and Turkey should not link formation of ties with us to Azerbaijani issues" (p. 85).

Throughout the book, Phillips highlights that Track Two diplomacy could lead to cooperation and good will between Armenians and Turks and contribute to the development of peace between Armenia and Turkey. The author stresses that reconciliation is a process and "it would take time to change the demonization of Turks by Armenians and the stereotyping of Armenians by Turks" (p. 32). The reconciliation process would be oriented toward the future. Reconciliation not only tries to find solutions to the underlying causes of the conflict but also works to change the relationship between adversaries from that of hostility and resentment to friendship and harmony.

Hence, truth and reconciliation between Armenians and Turks would entail honest acknowledgement of the injury each party had inflicted on the other, readiness to apologize, and commitment to redress past grievances that caused the conflict and provide compensation for the damage caused to a certain extent. As a consequence of these processes, healing of the past wounds generated by the conflict would become possible.

Within this context, acknowledging the past becomes crucial for Armenians and Turks. According to Vanik Volkan, a Turkish member of TARC, "it is impossible to achieve reconciliation without addressing the psychological needs of both the victim and victimizer" (p. 46). Phillips also quotes Dr. Annie Kalayjian, an Armenian sociologist, who believes that "the explicit expression of remorse has enormous healing value, but the victim must not be passive in pursuing it" (p. 44). She further writes that "forgiving the perpetrator breaks the cycle of anger, accusation, and recrimination. Many Armenians confuse forgiveness with forgetting" (p. 44). Hence, it is important to stress that truth and reconciliation should be directed toward both offenders and victims. Forgiveness does not imply forgetting. Truth and reconciliation must ensure that the past is not forgotten but remains alive in the memory of the Armenian nation. In regard to the Turkish perspective, "the Republic of Turkey" should not be "a country with selective memory" (p. 45). To achieve truth and reconciliation the Turkish people should not endorse what Gunduz said in the book, that "we Turks do not look to our past" (p. 44). It is important to stress that denial of the past would not be in the interest of the new Turkish generation. Denial of the Armenian genocide as Van Krikorian, an Armenian member of TARC, said "would not tell the story of righteous Turks who saved Armenians" in the course of events in World War I (p. 53). To remain silent or indifferent means that genocide can happen again.

To elaborate more on the genocide issue, we refer to Taner Akcam, a Turkish sociologist and historian, who challenges his country's position on the genocide issue. Akcam believes that Turkey's "resistance to historical dialogue is not the position of the majority of people in Turkey". According to a survey that was conducted by scholars "61 percent of Turks believe it is time for public discussion of what the survey called the accusation of genocide."[1] In this context, the statement of Ilter Turkmen, a Turkish member of TARC, on the wrongs of the past and whether Turkey would acknowledge them or not is extremely constructive for

reconciliation. Ilter said: "Turkey does not have courageous politicians; we can not leave the job to them. They are not up to it. We should focus on shaping public opinion" (p. 48).

From the hot debates of TARC's Turkish and Armenian members during the meetings that they conducted to enhance dialogue, one could conclude that reconciliation would not happen without justice. Without justice peace can not be promoted. There are no miracle solutions for dealing with the repressive past and satisfying both sides to the conflict. Retributive justice could not work because it is punitive and does not encourage empathy on the part of the offender. To promote healing, the victim's needs and rights should be addressed. Also, an equal concern and commitment to victims and victimizers should be shown. Further, victimizers should be encouraged to understand the harm they caused and accept their obligations. Hence, a restorative justice is needed because it promotes healing and reconciliation in the future.

From the story of TRAC, it is apparent that its Armenian and Turkish members in particular, and the two peoples in general, lacked social capital, that is a culture of trust and cooperation that makes collective action possible and effective. Social capital is an important precondition for a sustainable peace. Although TARC had no official status, as Phillips clarifies, it was welcomed by the Turkish press in general and initially supported by the government of Armenia and many Armenians in both the homeland and diaspora. Further, Phillips gives us important evidence that the governments of Armenia and Turkey were aware of the preparatory work to create the TARC. However, "a controversy began swirling around TARC" (p. 61). "TARC became a bone of contention between parties" in both Armenia and the diaspora who were "vying for power and influence" (p. 61). Indeed, in Armenia, the political opposition to President Kocharian's leadership criticized the government and "maintained that TARC's existence was used to deter international criticism of Turkey". Further, "TARC was attacked as a pawn of the US government, and TARC members were labeled traitors" (p. 61). Hence, it was obvious that Kocharian's government "instead of standing by its commitments, ran for cover" (p. 61).

Within this context, Phillips skillfully highlights the negative role of the Armenian nationalist Dashnak Party, which undermined TARC's efforts because "if reconciliation occurs they [the Dashnaks] have no reason to exist" (p. 61). Since 1998 the Dashnak Party has been supporting President Kocharian, a native of N-K and a war hero, who came to power after forcing former President Ter-Petrossian to resign. Ter-Petrossian, who was a moderate, believed that Armenia and Turkey should normalize relations because newly independent Armenia and N-K would be unable to develop economically if they had closed borders with Turkey. Unfortunately, in 1998 Ter-Petrossian was accused of being a traitor upon his attempt to reach a compromise solution with Azerbaijan. Ter-Petrossian intended to resolve the conflict between Karabakh Armenians and Azerbaijan by returning the Azerbaijani occupied territories around N-K as a first step, and later

negotiating over the political status of N-K. It is important to stress that Armenia has been negotiating with the government of Azerbaijan because Baku has rejected negotiating with the Karabakh Armenian leadership. Baku believes that to negotiate with the Karabakh Armenian leadership would mean to accept Armenian sovereignty over N-K.

With regard to the Turkish stance, the initial "right signals" (p. 57) sent to the press by TARC's Turkish members did not last long. TARC's Turkish members did not want to discuss the genocide issue. Instead, they preferred to progress on other core issues, such as cultural cooperation, before reconciliation. Another core issue was to call on Ankara to lift its visa restrictions and introduce new procedures enabling Armenians to enter Turkey. However, through his comments in the media Gunduz Aktan, who enjoyed the support of the Turkish establishment, created acrimony between TARC's Armenian and Turkish members. Further, in a panel discussion on Armenian-Turkish relations at a conference held by the Assembly of Turkish American Associations (ATAA) in Washington, DC, he did not hesitate to say that "the Republic of Turkey will never recognize the Armenian genocide" (p. 63). Within this context, Phillips successfully assesses the position of TARC's Turkish members as "uncompromising". He said: "they resisted use of the term genocide in TARC documents. To them using the word meant admitting the fact" (p. 64). From the aforementioned, it is reasonable to assume that the governments of Armenia and Turkey were unready to pay the high political cost of holding TARC meetings, given the hostile attitudes and feelings of both Armenian and Turkish societies towards each other.

In addition to social capital, there is a need to address the security dimension, which is also important for the transformation of conflict and creation of a sustainable peace environment. Throughout the story of TARC, the issue of the security dimension is also raised and examined by Phillips. Concerning real and perceived security between Armenia and Turkey Phillips refers to certain internal and external confidence-building or security-building measures that would contribute to security.

Internally, cultural cooperation, holding joint conferences, economic projects, business, media, journalist exchange programs, women's magazine, academic activities, Armenian-Turkish parliamentary cooperation, tourism, and introducing a new visa regime would contribute to people-to-people contacts and pave the way for further steps between Armenia and Turkey. Within this context, Track Two between Armenians and Azeris "was even more difficult than between Armenians and Turks". Former Azerbaijani President "Haidar Aliev actively discouraged Track Two activities, and the Azerbaijani parliament passed legislation forbidding it" (p. 80). However, some Armenian-Azeri activities, such as workshops for collaborative problem solving and meetings between Armenian and Azeri members of parliament, were successfully conducted. The only ingredient necessary for enhancing real and perceived security between Karabakh Armenians and Azerbaijan is the cease-fire agreement that was reached in Bishkek on May 12,

1994 under the aegis of the Commonwealth of Independent States (CIS) Interparliamentary Assembly.[2] Baku has been unwilling to examine normalization of relations between Armenia and Azerbaijan before the withdrawal of the Karabakh army from the Azerbaijani occupied territories around N-K and the return of N-K to Azerbaijani sovereignty.

Externally, for the transformation of conflict, the conditions of a sustainable peace environment in the south Caucasus should also be created. Regional security arrangements are also important. Internal and external peace is indivisible. Within this context, Phillips refers to the efforts of the Organization for Security and Cooperation in Europe (OSCE),[3] which has been trying to find a compromise peace agreement for the N-K conflict. The OSCE Minsk Group,[4] with its three co-Chairs of the USA, France, and Russia, has been mediating the N-K conflict. Phillips highlights the high-level pressure the US State Department put on the Presidents of Armenia and Azerbaijan for talks at Key West, Florida, in April 2001. Now it becomes evident that the US aimed not only to resolve the N-K conflict but also to create regional security in the south Caucasus. To accomplish its aim, the US encouraged regional integration and economic development between the south Caucasian states (Georgia, Armenia, Azerbaijan) and Turkey. Phillips reveals important evidence that "if the negotiations [at Key-West] stalled, Track Two between Armenians and Azeris would be a safety net cushioning negative implications" (p. 75). No book on the N-K conflict and its peace process has ever examined the importance of Track Two diplomacy as an approach for peace building and eliminating nationalist discourse. Unfortunately, instead of projecting a new and compelling image of the future, both Presidents, Kocharian and Aliev, "were impediments to their countries' democratic development" (p. 81).

If TARC's creation was a major US foreign policy development for the Clinton administration, "its importance diminished drastically after September 11, 2001" (p. 83). In September 2000 as a consequence of introducing House Resolution (HR) 596, the "Armenian Genocide Resolution" (p. 27), Armenian-Turkish discussions were launched to create TARC. Later, when the House of Representatives was to vote on the passage of HR 596, President Clinton called the House Speaker, Dennis Hastret, "and asked him to pull the Resolution" from the House floor. The reason behind Clinton's intervention was that he "invoked national security concerns about terrorism and emphasised the need for Turkey's assistance in meeting threats to American interests in the Middle East" (p. 34). Turkey had always expressed concern about parliamentary resolutions recognizing the Armenian genocide, and maintained that Turks would not negotiate with the Armenians under duress. Therefore, the "withdrawal of HR 596 triggered Ankara's interest in addressing Turkish-Armenian issues once and for all" (p. 34).

Phillips continues and stresses that TARC was affected by geopolitical events. For example, the Iraq war hindered Armenian-Turkish dialogue. The Iraq war "also influenced the Bush administration's approach to Turkey and its willingness to press Ankara on Armenian issues" (p. 121). Indeed, the Bush Administration

did not want to antagonize Ankara because Turkey's geographical position was extremely crucial for the US forces to invade northern Iraq. Hence, the Pentagon pressed for permission to transit US forces to Iraq. However, "when Ankara rebuked Washington and war proceeded without Turkey's involvement, angry administration officials were all too willing to bash Turkey and include Armenia among its grievances" (p. 121). American-Turkish relations further deteriorated when the Turkish General Staff "demanded a written guarantee that Turkish troops would be allowed to occupy northern Iraq" (p. 125) in return for approval form Turkey's Grand National Assembly for the use of Turkish territory to transit US forces to Iraq. Apparently, Turkey's intentions to control northern Iraq stemmed from Ankara's fears that a de-facto independent Iraqi Kurdistan "would inspire Turkey's restive Kurdish minority to seek something similar" (p. 122). In addition, Turkey envisioned that invading northern Iraq would also mean controlling the rich Kirkuk oil fields. However, the US warned Turkey against military adventures in northern Iraq. Probably, Turkey wanted to signal that as a regional power, it should have a say in political and economic developments in the Middle East, Asia, and the Caucasus. Turkey has been a gateway to the south Caucasus and Central Asia. In short, Ankara's lack of cooperation with the US, as a North Atlantic Treaty Organization (NATO) ally, angered a number of legislators in Congress. As a result of the anti-Turkish mood that dominated in Congress, it "launched several initiatives concerning the Armenian genocide". For example, "House Resolution 193 commemorated the Genocide Convention and mentioned the Jewish Holocaust as well as the Armenian, Cambodian, and Rwandan genocides" (p. 127). Apparently, Congress used the genocide issue as a lever to exert political pressure on Turkey to comply with US policies. Aktan considered the Congress bills as "payback". He asked, "do you think that the Congress would even be considering the measure if our parliament had allowed the US to use Turkish soil as a springboard for a northern front into Iraq?" (p. 127).

To sum up, from the geopolitical events that created the context in which TARC was conducting dialogue, it becomes clear that the Armenian genocide became a politicized issue. When American and Turkish political and economic interests diverged, the US administration used the Armenian genocide issue to exert pressure on Turkey to comply with US policies in the Middle East. This happened in the years 2001 and 2002. Initially, TARC's creation was a priority on the US political agenda. However, after the September 11 events and with the Iraq war, the US promoted its strategic interests in the Middle East and the Caucasus and failed to keep its commitment to peace building between Armenians and Turks. Had the US kept its high-level commitment to resolve the N-K conflict, as demonstrated in the Key-West talks in Florida in April 2001, Armenian-Turkish rapprochement would have progressed. However, we should not ignore the fact that the governments of Azerbaijan and Turkey on the one hand and the government of Armenia on the other hand also hindered TARC's efforts.

TARC intended to unsilence the past to pave the way for structured dialogue and reconciliation between the Armenian and Turkish societies. The achievement of this goal was difficult because TARC faced an ethical dilemma. As the Armenian and Turkish members of TARC tried to leave their trenches carefully and image the future, they confronted the Armenian genocide issue. Therefore, truth was a prerequisite to progress. Further, a balance was to be sought between amnesty and accountability. In this context, "every society has the unalienable right to know the truth about past events, as well as the motives and circumstances in which aberrant crimes came to be committed, in order to prevent repetition" (p. 94). On the other hand, revealing the truth was not simple for TARC because both sides, the Armenians and Turks, have their own version of the truth.

Phillips narrates how he tried to narrow the gaps between TARC's members. Hence, an agreement was reached between the Armenian and Turkish members of TARC to seek a legal analysis by the International Court of Transitional Justice (ICTJ) on the applicability of the 1948 UN Genocide Convention to the Armenian genocide. A major concern of TARC's Turkish members was that the ICTJ study would not consider "legislative intent" which means "to apply the spirit of the Convention to events that occurred prior to the treaty coming into force" (p. 105). From a Turkish perspective, the 1948 Genocide Convention does not apply retroactively. A retroactive application would oblige Turkey to pay material and territorial compensation to the Armenian people. Also, "the killings of Armenians do not constitute genocide because the Armenians in the Ottoman Empire made up a political group fighting for national independence" (p. 109). On the other hand, from an Armenian perspective, the genocide of 1915 was perpetrated, organized, and systematically executed by the Turks to exterminate the Armenian minority living in the Ottoman Empire. Hence, Armenia should seek material and territorial compensation.

Phillips emphasizes that the legal analysis of the ICTJ generally pleased TARC's Armenian and Turkish members. The ICTJ's analysis stated that the Genocide Convention "could not be applied retroactively thereby obviating any territorial or financial claims under the Convention" (p. 113). However, it found that the 1915 events "constituted genocide" as defined by the Convention (p. 114). Apparently, TARC did not intend to dwell on the ICTJ's analysis. But as Phillips indicates, "since the genocide issue cast shadow over every discussion", TARC "needed to find a creative way to address it" (p. 116). According to Ustun, a Turkish member of TARC, the ICTJ's analysis "gets Turkey off the hook. It gives us [Turks] an excellent way out. The glass is half full for both sides" (p. 115).

In this context, we should stress that striking a balance between the demands of justice and political prudence is difficult. Therefore, the ICTJ's analysis was not to fully satisfy both sides. If reconciliation were to take place, a painful cost-benefit analysis would be needed. Phillips should have explicitly emphasized this point. The governments of Armenia and Turkey should understand that if the goal

of reconciliation is to be attained, then all political costs and gains, amnesty and retribution, must be balanced against each other.

Turkey "knew that a messy dustup with Armenia would hurt its goal of joining the European Union (EU)" (p. 33). Turkey should also improve its human rights record and grant the minorities living within its borders their socio-cultural and political rights. Closed borders and no diplomatic relations with Armenia would allow Russia, "Turkey's historic rival in the Black Sea region, to exert greater influence in the south Caucasus" (p. 33). Moreover, Russia would use the N-K conflict as a lever to keep its influence in Armenia and manipulate both Armenians and Azeris. Hence, dealing with the past is an inescapable task for the arguably democratic regime of Turkey. Turkey's democracy can not become stronger without achieving reconciliation. Therefore, to argue that the annihilation of the 1.5 million ethnic Armenians in the Ottoman Empire during World War I was not genocide simply because the UN Genocide Convention on the punishment and prevention of the crime of genocide was adopted only in 1948 would harm Turkey's democracy. Within this context, Dr. Tessa Hofmann argues, that if this were true, we would have to "delete the Shoah of the European Jewery from the lists of genocide as well."[5] Further, Turkey should not silence the past by consistently denying the Armenian genocide. Turkey can ensure a better democratic future through acknowledging past wrongs and creating truth commissions. The Armenian genocide is historically documented and does not need a commission of historians to prove whether there was genocide or not. It is out of the scope of this review to comment on and examine the history of the Armenian genocide and Turkish attempts to deny it.

Phillips ends his narrative by referring to the agreement of April 14, 2004 reached between TARC's members to stop their work as a reconciliation commission. With no bilateral talks between Armenia and Turkey, and with the waning of the US pressure on Ankara to open the Turkish-Armenian border, TARC was unable to exist any longer. The *Track Two Program on Turkey and the Caucasus* was initiated not as a substitute for official diplomacy but to establish contacts with various officials to influence policy. From the story of TARC, it seems that TARC suffered "when the US government neglected its [i.e.TARC's] efforts because American priorities lay elsewhere". Phillips also says, "honest self-criticism leads me to believe that we relied too much on US officials to support our efforts" (p. 148). However, Phillips does not leave the reader hanging in the air. There is an epilogue in the book to inform the reader that TARC succeeded in establishing a structured dialogue between Armenians and Turks. TARC also "catalyzed diplomatic contact between Turkish and Armenian officials, laid the foundation for addressing the genocide issue, and brought a principled, treaty-based approach to opening the border" between Armenia and Turkey (p. 148).

Unsilencing the Past should be read as a primary source on the TARC story. It is also an eyewitness account of the distrust and hatred between Armenians and Turks. It depicts accurately the obstacles that TARC tried to overcome. In addition,

Phillips objectively presents the Turkish, Azerbaijani, and Armenian perspectives on the reconciliation issue. Phillips intends to say that without realizing a balance between amnesty and retribution, and without creating trust between Turks, Azerbaijanis, and Armenians, a sustainable peace and economic development can not be achieved in the south Caucasus. Hence, any peace plan by the OSCE is doomed to fail. Within this context, we believe that Phillips should have referred in more detail to the fact that Turkish-Armenian reconciliation can not be achieved without seriously addressing the security dimension of the conflict. The physical security of the Armenian people has been at stake. More elaboration on this dimension would enable the reader to better understand the nature of the conflict and assess the political leverage of the regional powers on the direct participants in the conflict.

Phillips's firsthand information and analyses are extremely useful in understanding the dynamics of Track Two diplomacy in conflict resolution. Other Track Two specialists may find some missing elements in this book, but for those who followed TARC's creation in newspapers and other secondary accounts, the book is an indispensable source. Track Two practitioners, academics, and general readers who wish to understand Turkish-Armenian reconciliation and the impact of the N-K conflict on Turkish-Armenian relations should definitely read this profound, interesting, and challenging book.

OHANNES GEUKJIAN
ogeukj@hotmail.com

ENDNOTES

---

[1] Belinda Cooper, "Turks Breach Wall of Silence on Armenians," *The New York Times*, 6 March 2004.

[2] The CIS was created in December 1991 by the three Slavic states, Belarus, Russia, and Ukraine. By the end of that month the remaining Union-Republics of the Former Soviet Union joined the CIS except for the Baltic states and Georgia.

[3] The Conference for Security and Cooperation in Europe (CSCE), established in 1975, was renamed OSCE at its Budapest Summit on 5-6 December 1994.

[4] The Minsk Group, consisting of eleven countries (the Czech Republic, Slovakia, Germany, Belarus, Armenia, Azerbaijan, France, Italy, the Russian Federation, USA, and Turkey), was formed by the CSCE in 1992 to find a negotiated solution to the Nagorno-Karabakh conflict.

[5] Tessa Hofmann, *Armenian Weekly Online*, 10-16 May 2003. Posted at http://www.armenianweekly.com

Վարդան Փարթամեան, *Սփիւռքի Օտարագիր Բանաստեղծութիւնը*, «Մուղնի» հրատարակչութիւն, 192 էջ, Երեւան, 2005:

«Օտարագիր հայ գրողներ» երեւոյթի, եւ այդ հեղինակների ստեղծագործութիւնների արժեւորման հարցը մի բազմաբովանդակ, բանավէճերի առիթ տուած եւ որոշ առումով չարչրկուած խնդիր է[1], քիչ թէ շատ արծարծուած եւ վիճաբանութիւնների նիւթ դարձած Սփիւռքում[2] եւ պակաս չափով՝ Հայաստանում[3] (յատկապէս ո՛ր գրականութեանը պատկանելիութեան խնդրի առումով): Սոյն թեման տասնամեակներ շարունակ եղել է հայրենի գրականագէտ Վարդան Փարթամեանի ուսումնասիրութեան առարկաներից մէկը[4]: Գրականագէտը իր վերջին՝ *Սփիւռքի Օտարագիր Բանաստեղծութիւնը* մենագրութեամբ (հրատարակուած Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան հովանաւորութեամբ) ի մի է բերել եւ ամբողջացրել նիւթի վերաբերեալ իր երկարամեայ դիտարկումները:

Սոյն մենագրութեամբ Փարթամեանն անդրադարձել է միայն օտարագիր հայ հեղինակների չափածոյ գրական ժառանգութեանը (ստեղծուած հիմնականում անգլերէն, ֆրանսերէն եւ իսպաներէն լեզուներով), թերեւս գրական միւս սեռերի ուսումնասիրութիւնը թողնելով մէկ այլ առիթի:

Նշենք, որ մեր հաշումներով՝ այս երեք լեզուներից բացի հայ եւ հայազգի հարիւրաւոր հեղինակներ գեղարուեստական ստեղծագործութիւններ են գրել նաեւ ասորերէն (վաղ միջնադարում), յունարէն, արաբերէն (միջնադարից մինչ օրս), պարսկերէն, թուրքերէն, ռումիներէն, հունգարերէն, ռուսերէն, լեհերէն, բուլղարերէն, իտալերէն, գերմաներէն, լատիներէն, հատուկենտ հեղինակներ՝ պորտուգալերէն, էստոներէն, շուէդերէն, քրդերէն, ուրդու: Այսպիսով, լեզուների ընդհանուր թիւը քսանմէկ է, թէեւ չի բացառւում, որ լինեն եւ ուրիշներ: Լրագրութեան եւ այլեւայլ տեսակի գրականութեան (ընդամին՝ թարգմանութիւնների) յաւելման դէպքում այս լեզուների թիւը կ՝աւելանայ:

Փարթամեանը նշել է, որ «*Հայ իրականութեան մէջ նման բանաստեղծութիւնը նորութիւն չէ: Հայ գաղթաշխարհի առաջացման հետ յայտնուել է նա, սակայն Սփիւռքում ստացել է կենսական նոր լիցք, որը նրա յարաճուն ընձիւղաւորումն է բերում*» (էջ 7): (Նկատենք, որ այլալեզու հայ գրող եւ գրականութիւն երեւոյթն ի յայտ է եկել հայկական գաղթավայրերից առաջ էլ, բուն հայաստանեան իրականութեան մէջ: Եթէ մի կողմ թողնենք նախաքրիստոնէական ժամանակներում Հայաստանում գոյութիւն ունեցած գրականութեան լեզուի խնդիրը, ապա տակաւին Ե. դարում հայ մատենագրութեան մէջ առկայ են օտարալեզու երկեր,[5] ինչը սակայն, հայ գրականութեան այլալեզու ճիւղ կարելի է համարել[6]): Փարթամեանի հետազօտութեան նիւթը Ի. դարի հայազգի այլալեզու խումբը կազմող հեղինակներն են:

Ըստ հեղինակի՝ *«Սփիւռքի առաջացման երկրորդ տասնամեակում, 30-ական թուականներին, սկսեց երեւան գալ օտարագիր հայ բանաստեղծութիւնը։ Այդ բանաստեղծութեան ստեղծողներն են նախկին գաղթահայր ու եղեռնից փրկուածների այն սերունդները, որոնք գրական ասպարէզ են մտել ու մտնում են՝ առաւելաբար կամ միայն օտար լեզուին համացած»* (էջ 176)[7]:

Փաստօրէն, յստակ սահմանւում են Սփիւռքի օտարալեզու բանաստեղծութեան ծննդեան թուականը (1930ականներ) եւ հեղինակները (նախկին գաղութահայեր եւ եղեռնից փրկուածների սերունդներ)։ Միւս կողմից, այս յստակ ծեւակերպումը մտորումների տեղիք է տալիս, թէ արդեօք որտե՞ղ է պէտք «զետեղել» ո՛չ նախկին գաղութահայ եւ ո՛չ Մեծ Եղեռնի հետեւանքով այլաշխարհ ընկած, հայութեան մէկ այլ հատուածի (մեծ մասամբ՝ արեւելահայ) գաւակ օտարագիր հեղինակը։ Օրինակ, անգլիագիր արձակագիր Վահան Նոռանեանը (յայտնի Արի Ռոստով եւ Արածանի գրական անուններով), որ ծնունդով եղել է Վաղիկատկազից եւ ապրել է ԱՄՆում, կարո՞ղ է մաս կազմել Սփիւռքի օտարագիր գրականութեան...։ Փարթամեանը, սակայն, յիշատակութեան կարգով անդրադարձել է միեւ այդ թուականը գործած այլալեզու հայազգի հեղինակների (Վիկտորիա Աղաւնուր, Հերմինէ Հովեան, Արմէն Դորեան), իրաւամբ գտնելով, որ նրանց ստեղծագործութիւններում *«չի յայտ են եկել Սփիւռքի օտարագիր բանաստեղծութեան նախանշանները»* (էջ 29)։

Ներածութեան մէջ Փարթամեանը այլալեզու հայ գրողների երեւոյթը դիտարկել է գրականագիտական շրջանակներից դուրս, այն առնչակցելով ազգի գոյատեւման, ազգային հոգեբանութեան եւ ինքնութեան հետ։ *«Այդ գրականութեան մասին վէճը հեռու է սոսկ գրականագիտական մի խնդիր լինելուց, այլ սերտօրէն կապուած է ազգի գոյատեւման, ազգային հոգեբանութեանը հարազատ մնալու նախանձախնդրութեան հետ։ Այդ նկատառումներից եկող տարբեր դիրքորոշումները վերջիվերջոյ յանգում են Սփիւռքի գրականութեան ֆենոմէնին, «օտարագիր հայ» գրական երեւոյթին առնչուելու խնդրին, որը ինչպէս երէկ, առաւել եւս այսօր գործնական կարեւոր նշանակութիւն է ստացել»* (էջ 7)։ Ըստ Յակոբ Գումուճեանի «Անգլիագիր Հայ Գրողներու Խնդիրը» յօդուածի՝ օտարագրութիւնը անխուսափելիօրէն յանգեցնում է բնիկ ժողովրդից եւ գրականութիւնից խզման, քանի որ ազգային ինքնութեան հիմքը լեզուն է (էջ 10)[8]։ Սակայն Փարթամեանն իրաւացիօրէն նկատել է, որ *«Ազգային հոգեբանութիւնը, որպէս մարդկային մտածելակերպի եւ գոյացական աշխարհի ինքնատիպ դրսեւորում, չի պարտադրում, որ անպայման հենց այդ ազգային լեզուով էլ արտայայտուի, ինչպէս այդ ցոյց են տուել Ֆրանց Վերֆէլն եւ ուրիշներ իրենց ստեղծագործութեամբ։ Սակայն նոյնիսկ այդ դէպքում էլ օտարագիր հայը տարբերւում է այլազգի գրողից։ Եթէ այլազգին պիտի ճանաչի, ուսումնասիրի այդ հոգեբանութիւնը, ապա օտարագիր հայն այն արտացոլում է ինքնաբերաբար, արեան թելադրանքով, նոյնպէս եւ գիտակցական մօտեցմամբ՝ նկատի ունենալով իր ընթերցողին»* (էջ

11)։ Վկայակոչուած եմ Նիւ Եորքի *Արարատ* անգլերէն քառամսեայ հանդէսում 1960ականներին օտարագիր հայ գրականութեան մասին քննարկումները, որոնք ազգային շրջանակներից դուրս գալով՝ վերածուել են «արդիականութեան հետ կապուող» համընդհանուր մի երեւոյթի, քանի որ օտարագրութիւնը միայն հայկական երեւոյթ չէ։ Մի ազգի ներկայացուցչի կողմից մէկ այլ լեզուով ստեղծագործելու խնդիրը առկայ է շատ ժողովուրդների մէջ։ Սակայն օտար լեզուներով ստեղծագործած օտարագիր, օտարալեզու. (եղած եզրերի մէջ մենք առաւել ճիշտ ենք համարում «այլալեզու»ն, քանի որ «այլ» բառը գործածւում է շեշտելու համար որեէ լեզուի՝ տուեալ պարագայում հայերէնից տարբեր լինելու իրողութիւնը, մինչդեռ այդ օտար համարուող լեզուն յաճախ տուեալ հեղինակի համար երբեք կամ այլեւս «օտար» չի եղել (ճակատագրի բերումով՝ յաճախ հայոց լեզուն է դարձել օտար[9]) հայ հեղինակների պարագան փոքրինչ այլ է, քանի որ ունի իր կոնկրետ ընթերցողը։ *«Տարիների հետ կուտակուել ու կուտակւում է այդ գրականութիւնը, որը ոչ միայն հայի կողմից է ստեղծւում, այլեւ հենց <u>հայի համար</u>, որ տարբեր հանգամանքների բերումով օտարախօս է դարձել»* (էջ 7)։ Եւ Արարատի մուսան, այլ լեզուներով արտայայտուելիս էլ, յաճախ պահպանում է ազգայինի համար աւելի կարեւոր (լեզուից էլ անդին) մի երեւոյթ, այն, ինչ պայմանականօրէն հոգի ենք անուանում, որն էլ, թերեւս, ազգային ինքնութիւնը կազմաւորող գործօնների (մտածողութիւն, հոգեբանութիւն, ոճ) համադրումն է[10]։

Մեր համոզմամբ, առաջին հերթին «հայի համար» հայի կողմից ստեղծուած գրականութիւնը, թէկուզ այլ լեզուներով, միանգամայն կարող է համարուել հայ գրականութեան մի հատուածը։ Սոյն դրոյթը մանրակրկիտ հետազօտման կարիք ունի։ Եւակէտ կարելի է ընդունել օտարախօս դարձած հայ ընթերցողի համար տուեալ լեզուով տպագրուող գրական հանդէսների գոյութիւնը եւ այնտեղ հրատարակուող հայերի կողմից գրուած գեղարուեստական գրականութեան առկայութիւնը։ Կարելի է խօսել հայագաղութների այլալեզու գրական հանդէսներում հրատարակուած հայ գրականութեան մասին (օրինակ, հունգարահայ *Արմենիա* հանդէսում ընդգրկուած հայազգի գրողների հունգարերէն ստեղծագործութիւնները եւ աւելի ուշ՝ ամերիկահայ *Արարատ* հանդէսում մինչ օրս գոյատեւող անգլիալեզու հայ գրականութիւնը)։ Կարելի է խօսել բուն հայ գրական միջավայրերում (Պոլիս, Երեւան) ազգային գրականութեան զարգացմանը զուգահեռ ընթացած հայ գրականութեան թուրքալեզու, ֆրանսալեզու եւ ռուսալեզու ճիւղաւորումների մասին։ Դարեր շարունակ հայ ընթերցողի համար ստեղծուել է հայատառ թուրքալեզու գրականութիւն, որ թուրք գրականութեան հետ կապ չունի, այլ արեւմտահայ գրականութեան այլալեզու մի հատուածն է (յատկապէս որ այն ստեղծուել է մեսրոպատառ)։ Պոլսում եւ Զմիւռնիայում ԺԹ. դարի վերջին-Ի. դարի սկզբին ստեղծւում էր ֆրանսագիր հայ գրականութիւն։ Դանիէլ Վարուժանի թարգմանութեանն արժանացած բանաստեղծուհի Իսկուհի Միհասը թէպէտ Պոլսում, ստեղծագործել է ֆրանսերէն եւ յետագայում հաստատուել Ֆրանս-

իայում՝ ֆրանսիական գրականութեան պատմութեան մաս չի կազմում: Խորհրդային տարիներից Հայաստանի տարածքում հայ հեղինակների կողմից ստեղծուել է ռուսալեզու գրականութիւն՝ համախմբուած *Լիտերատուրնայա Արմենիա* ամսագրի շուրջը, սակայն այն ռուս գրականութեան մաս չի կազմում, հետեւաբար՝ իրաւունք ունի կոչուել հայ (հայաստանեան) գրականութեան այլալեզու հատուածը: Միւս կողմից՝ հայաստանցի քուրդ հեղինակների հայերէնով գրուած քրդապատում ստեղծագործութիւններն աւելի քուրդ գրականութեանն են վերաբերում, քան հայ, իսկ յայտնի է, որ քրդական գրականութիւն ստեղծւում է ոչ միայն քրդերէն, այլեւ քուրքերէն, արաբերէն եւ այլ լեզուներով:

Փարթամեանն ինքն էլ մի առիթով նշում է մենագրութեան էջերում, որ օտարալեզու հայ գրողների շատ երկեր թէեւ լեզուական եւ գեղարուեստական արտայայտչամիջոցներով աւելի մերձ ու մատչելի են տուեալ օտար գրականութեան, սակայն էութեամբ մնում են որպէս հայ գրողի օտարալեզու ստեղծագործութիւն: *«Իզուր չէ, որ (եթէ յիշատակենք սոսկ հպանցիկօրէն) Սայեաթ-Նովայի եռալեզու ստեղծագործութիւնը պատկանում է մէկ հեղինակութեան, կամ Ալեքսանդր Փանոսեանի ֆրանսերէն, Կոստան Զարեանի ֆրանսերէն ու իտալերէն[11], Ժաք Ճակորեանի, Բիւզանդ Թոփալեանի ֆրանսերէն բանաստեղծութիւնները, նոյնիսկ առանձին ժողովածուներով, անհնարին է «կտրել», «պոկել» նրանց ստեղծագործութեան ամբողջական համակարգից»* (էջ 94):

Տեղեկութիւններով եւ մեթոդաբանական մօտեցումներով հարուստ ներածութիւնից յետոյ Փարթամեանն իր մենագրութիւնն ըստ թեմաների բաժանել է հինգ գլուխների՝ տալով դրանց յատկանշական վերտառութիւններ:

Ա. գլուխը՝ «Ով Եմ Ես», ներկայացնում է սփիւռքահայի ինքնաճանաչման փնտռտուքը չափածոյի ընդմիջից, այն երկակի ինքնութեան խնդիրը, որի անվերջանալի հարցուպատասխանի միջից ամէն մի սփիւռքահայ փորձում է գտնել իր պատասխանը՝ իւրովսանն: Այս գլխում հեղինակը կենտրոնացել է երեք բանաստեղծուհիների՝ հայ ընթերցողին քաջածանօթ անգլիագիր Դայանա Տէր-Յովհաննիսեանի եւ իսպանագիր (այժմ նաեւ՝ անգլիագիր եւ հայագիր) Ալիսիա Կիրակոսեանի, ինչպէս նաեւ նուազ յայտնի ֆրանսագիր Պարգեւ Օրֆայի (Պարգեւուհի Պետրոսեան) ստեղծագործութիւնների վրայ, որոնց պոեզիայի հիմնական առանցքը կազմում է հայերգութիւնը՝ ինքնաբացայայտման գործընթացի բազմակողմանի դրսեւորումներով: Ալիսիա Կիրակոսեանի խօսքերով՝ ճանաչելով Հայաստանը ինքը (սփիւռքահայը) ճանաչել է ինքն իրեն, որը խորապէս իմաստաւորում է թէ՛ հեղինակի եւ թէ՛ հայ ընթերցողի համար:

Բ. գլխում («Կենսատրուող Աւանդներով») Փարթամեանն անդրադարձել է անգլիագիր ամերիկահայ հեղինակների առաջին սերնդին, եւ առաւելապէս վերլուծել ֆրանսագիր բանաստեղծներ Ռուբէն Մելիքի (Ֆրանսիա) եւ Վահէ Գողէլի (Շվէյցարիա) ստեղծագործութեան հայկական անդրադարձները, նշելով այն հիմնական թեմաները եւ մոտիւները, որ յաճախ առկայ են այդ

հեղինակների երկերում: Դրանք են՝ ձգտումը ճանաչելու հայրերին, աւագներին, մեծ մօր կերպարը, դէպի օտարացում գնալը, նահանջը ազգայինից, մենութեան եւ մենակութեան, կորուստների առթած թախիծը, ինչպէս նաեւ՝ հայ ոգուն բնորոշ լաւատեսութիւնը (*«Թէկուզ օտար լեզուով ազգային կեանքի, հոգու հետ կապուածութիւնը նրան* (օտարագիր հայ բանաստեղծութեանը - Ա.Բ.) *հաղորդում է վստահութեան չեչտուածութիւն, ինչ-ինչ մտահոգութիւններից ձերբազատուածութիւն»* (էջ 93): *«Ջխամրող յիշատակներով, արթնացող գիտակցականութեամբ, որ հրահրւում են այս կամ այն ճանապարհով ու հանգամանքով, որեւէ արտաքին կամ ներքին ազդակով, արտաբեկւում են իւրայատուկ վերադարձով օտարագիր հայ բանաստեղծութեան մէջ»* (էջ 82): Փարթամեանն այս կապակցութեամբ մանրամասն անդրադարձել է ամերիկահայ մի շարք անգլիագիր բանաստեղծների եւ այլոց (կուբահայ իսպանագիր Դաւիթ Չերիսեան, ֆրանսագիր Գէորգ (իրականում՝ Ժորժ) Զումբուլեան) ստեղծագործութեանը, եզրակացնելով, որ աւանդներին հաղորդակցուելով՝ *«օտարագիր հայ բանաստեղծութիւնը երեւան է բերում ազգային էութեան յայտանիչները, հայ ժողովրդի հոգեւոր կերտուածքի, բնաւորութեան ու կենսահայեցութեան, սիրոյ եւ առեղութեան, չսպիացող վէրքերի որոշարկուող իւրայատկութիւնը»* (էջ 99):

«Եղեռնապատում» վերնագրուած Գ. գլխում հեղինակն անդրադարձել է օտարագիր բանաստեղծների երկերում մշտապէս հնչող Մեծ Եղեռնի թեմային, նրա բազմակողմանի դրսեւորումներին, քանի որ *«Երէկ եւ այսօր որեւէ սփիւռքահայ, իր գոյաւորումը պարզելիս, անպայման դէմ է առնում թուրքերի իրագործած ցեղասպանութեան փաստին»* (էջ 103): Հեղինակը նշում է, որ *«...կենդանի եւ կենդանագրուած պատմութիւնը, սեփական գրութեան անբնականութեան գիտակցումը, այն, որ ինքը հարկադրաբար, բռնադատաբար է յայտնուել աշխարհի ամէն մի վայրում, բայց ոչ պատճենականում, այս ամէնը մտածական չիկացմամբ մշտարծարծ են պահում եղեռնապատումը»* (էջ 104, ի դէպ, ասուածը ճշմարիտ է նաեւ օտարալեզու արձակի եւ թատերագրութեան համար): Այս գլխում հեղինակը մանրամասն գրականագիտական վերլուծութեան է ենթարկել անգլիագիր հեղինակներ Փիթըր Բալաքեանի (ԱՄՆ) եւ Յովհաննէս Փիլիկեանի (Մեծ Բրիտանիա) ստեղծագործութիւնները: Փիլիկեանի *1915 - Հայկական Համաճուագ* վիպերգում հեղինակը հայկական ցեղասպանութիւնը դիտում է համայն մարդկութեան պատմութեան ընդգրկումով, համաշխարհային կտրուածքով: Այդպիսով (ի տարբերութիւն այլ եղեռնապատում ստեղծագործութիւնների) Մեծ Եղեռնը դադարում է լինել սոսկ հեղինակի անձին վիճակուած ծանր ժառանգութիւն եւ նրա ժողովրդին առնչուող մի մեծագոյն ոճիր:

Փարթամեանի մենագրութեան Դ. գլուխը՝ «Յաւերժականի Խորհուրդը» վերնագրով, ներկայացնում է հայ մշակոյթի եւ մասնաւորապէս գրականութեան դերը սփռուած հայութեան հոգեւոր կեանքում, գոյապայքարը եւ ազգապահպանումը սպիտակ եղեռնի սպառնալիքի պայմաններում, հայ գրականութիւնից կատարուած բարգմանութիւնները, տարբեր լեզուներով լոյս տե-

սած հայապատում գրական գործերը: «...*Ջկան Հայոց պատմութեան որեւէ ուշագրաւ իրադարձութիւն ու դէմք, որ օտար լեզուներով ներկայացուած չլինեն առանձին հատորներով կամ պարբերական մամուլի էջերում*» (էջ 136-137): Հետաքրքիր իրողութիւններ է վերհանում Փարթամեանը, նշելով հայ բանահիւսութեան հետ օտարագիր հայ բանաստեղծների ունեցած կապերը, թէ որքան յաճախ են նրանք անդրադարձել հայ դիցաբանութեանը եւ աւանդական զրոյցներին (ինչպէս՝ «Արա Գեղեցիկ»ին, «Ախթամար»ին[12] եւն.):

Վերջին՝ Ե. գլուխը վերնագրուած է «Ծննդաձշան», Գլենդէյլում 1999ին լոյս տեսած համաձուի ժողովածուի անունով, որի ենթախորագիրն է «Ամերիկահայ Անգլիագիր Բանաստեղծութեան Երկկեզու Ժողովածու», մի հատոր, որտեղ «*ի մի են եկել այն էական, յարատեւող ընկալումները, որոնք համակում են օտար լեզուով, բայց հայ հոգով գրողին*» (էջ 153): Ըստ էութեան, այս գլուխը տուեալ հատորի գրախօսութիւն-վերլուծութիւնն է, կենտրոնացած առանձին հեղինակների (օրինակ՝ ամերիկահայ շրջանակներում որոշ գայթակղութիւն առաջացրած Նենսի Ագապեանի) գործերի վրայ: Սակայն հեղինակը նաեւ վերլուծել է Սփիւռքի օտարագիր գրականութեան ներկայ փուլը, երբ «*Սփիւռքի գոյատեւման ջանքերի կառոյցում տարէցտարի աւելի նշանակալի է դառնում այդ գրականութիւնը՝ սկզբի մասնակի իր դրսեւորումներից հետզհետէ աճելով դէպի աւելի կայուն ու յարատեւող կիրառութիւն*» (էջ 150): Խօսքն առաջին հերթին վերաբերում է ԱՄՆին, որտեղ նախորդ սերունդների գրողներին 21րդ հարիւրամեակի սկզբում արդէն իսկ միացել է նորաբնակ արտերկրացի դարձած հայը (որոնց շարքերում, անգամ հայաստանցիների մէջ, նոյնպէս կան օտարագիրներ[13] եւ ասպարէզ են իջնում անգլիալեզու նոր գրական պարբերականներ[14]):

Խիստ կարեւոր է նշել, որ առաստօրէն մէջբերումներ կատարելով սփիւռքահայ օտարագիր բանաստեղծներից, Փարթամեանը յաճախ բերել է հայկական ընդգծուած մոտիւներ եւ էանիշներ չունեցող տողեր եւ հատուածներ, փորձելով ցոյց տալ դրանց ունեցած ներքին կապը հայոց մտածողութեան, հայ իրականութեան եւ հայ ինքնութեան հետ (ինչպէս օրինակ, Հայկ Խաչատրեանի եւ Լէօ Համալեանի քերթուածները վերլուծելիս, էջ 92-93):

Սոյն միտքը այնքան բազմաշերտ է, որ անհնար է միանգամից սպառել ասելիքը: Կարելի է մի շարք յաւելումներ կատարել ասուած դիտարկումներին, այլ հեղինակներից արուած մէջբերումներով եւ յաւելումներով աւելի ամրապնդել հեղինակի կարծիքը: Օրինակ, Փարթամեանը նշել է Դաւիթ Խերդեանի «Հայկական Սրճարաններն Ամերիկայում» բանաստեղծութիւնը, որտեղ նկարագրուած է հայի կենցաղի փոփոխութիւնը նոր երկրում (տուեալ դէպքում՝ Ամերիկայում): Սոյն բանաստեղծութիւնը սերտ աղերս ունի օտարագիր մէկ այլ հեղինակի՝ բուլղարագիր Սեւդա Սեւանի «Յոյ» քերթուածի հետ, որտեղ նկարագրուած է հայկական մի հին սրճարան, ուր յաճախում էր բանաստեղծուհու պապն ուրիշ հայորդիների հետ: Եւ ապա՝ անցեալ դարձած այդ պատկերի նորօրեայ հիմնաւորումը՝ համեմուած թախիծով եւ նուրբ հումորով.

Հիմա սրճարանն այդ վաղո՛ւց չկայ,
Ջկան եւ ծերե՛րն՝ այնտեղ սուրճ խմող,
Եւ չկայ նաեւ աղջի՛կն այն փոքրիկ—
Քանզի հայոց հին սրճարաններում
հայ կանայք երբեք··· սուրճ չէի՛ն խմում[15]:

Կուռ շարադրանքով, խիտ, բիւրեղացած մտքերով, հարուստ եւ գեղեցիկ հայերէնով (արեւմտահայերէնի տարբեր պարունակող) գրուած այս ուսումնասիրութիւնը եզրափակում է էլ աւելի խտացուած վերջաբանով, որն ամփոփում է ներկայացուած նիւթի հիմնական դրոյթները եւ եզրայանգումները, որոնցից եւս մէկ անգամ համոզւում ենք, որ *«օտարագիր հայ բանաստեղծութիւնը սփիւռքահայ բանաստեղծութեան անկապտելի մասն է կազմում»* (էջ 176): Հեղինակը նշում է, որ *«Աւաւել յայն տարածում ունեն անգլերէն, ֆրանսերէն, իսպաներէն բանաստեղծութիւնները, որոնց ուրիշ լեզուներով յաւելումը չի բացառւում հեռանկարում»* (նոյն տեղում): Դա ճշմարիտ է, քանի որ վերջին տարիներին նոյնիսկ հայագրութիւնը պահպանած այնպիսի մի գաղթավայրում, որպիսին իրանահայն է, ասպարէզ են իջել պարսկագիր հայ հեղինակներ (բանաստեղծ Իւրիկ Ջարիմ Մասիհի, Իրանում որոշակի գրական համբաւ ձեռք բերած արձակագրուհի Ջոյա Փիրզադ. նախկինում եւս եղել են պարսկերէն ստեղծագործող հատուկենտ հեղինակներ). անգամ նոր կազմաւորուած չուէդահայ եւ էստոնահայ համայնքների նոր սերնդի մէջ արդէն կան տեղաբնիկ լեզուներով ստեղծագործող հայորդիներ:

Պէտք է նշել, որ թէեւ Փարքամեանի ուսումնասիրութեան նիւթը հանդիսացել են եւրոպական լեզուներով ստեղծագործած (անգլերէն, ֆրանսերէն եւ իսպաներէն) հայազգի բանաստեղծների (այսպէս կոչուած՝ արտաքին Սփիւռքի) գործերը, սակայն հետաքրքիր կը լինէր որոշ չափով անդրադառնալ նաեւ ռուսալեզու (այսպէս կոչուած ներքին Սփիւռքի՝ նախկին Խորհրդային Միութեան հանրապետութիւններում, եւ հիմնականում՝ Ռուսաստանում գործած) հայ բանաստեղծներին եւ զուգահեռներ անցկացնել նրանց հետ: Թէեւ ԽՍՀՄի Սփիւռքը հայոց Մեծ Եղեռնի ծնունդը չէր (բացառութեամբ աբխազահայութեան եւ Հարաւային Կովկասի մի քանի հայագաղութների), սակայն հետաքրքիր է, որ Սփիւռքի օտարագիր բանաստեղծութեան մի շարք օրինաչափութիւններ առկայ են նաեւ ռուսալեզու հայազգի գրողների երկերում[16]:

Հեղինակի նպատակից դուրս է եղել անդրադառնալ սոյն հարցի շուրջ արտայայտուած ամէն մի կարծիքի[17], որոնք չնայած ինքնին հետաքրքիր են գրապատմական առումով, սակայն ըստ էութեան, կրկնում են արդէն ասուած տեսակէտները (յատկապէս օտարալեզու հայ հեղինակների՝ ո՛ր գրականութեան պատկանելիութեան առումով): Հակառակ յստակ չափորոշիչների բացակայութեանը՝ ցանկալի կը լինէր, եթէ հեղինակը պարզաբանէր, թէ տուեալ օտարալեզու բանաստեղծը ինչ չափով է պատկանում իր ստեղծագործած լեզուով գրականութեանը: Հետաքրքիր կը լինէր գիտենալ, թէ, դիցուք, որքա-

ևո՞վ է արգենտինեան քերթութեան դէմք հանդիսանում նոյն Ալիսիա Կիրկոսեանը եւ կամ ամերիկեան պոեզիայի ներկայացուցիչ՝ մի շարք գրական մրցանակների դափնեկիր Քնարիկ Բոյաջեանը: Սակայն նման հարցերի արծարծումը գրականագէտի նպատակը չի եղել:

Այլալեզու հայ գրականութեան համակողմանի եւ խորը վերլուծութիւնը ուսումնասիրողից պահանջում է ոչ միայն գրականագիտական միտք եւ պատրաստուածութիւն, այլեւ ազգային հոգեբանութեան եւ մտածելակերպի իմացութիւն, բանասիրական որոնումների կատարում, տարբեր լեզուների իմացութիւն, ազգային եւ համաշխարհային գրականութեան քաջատեղեակութիւն. յատկանիշներ, որոնցով օժտուած է սոյն թեմայի հետազօտման մէջ մի մեծ հիմնաքար դրած Վարդան Փարթամեանը: Նրա *Սփիւռքի Օտարագիր Բանաստեղծութիւնը* մենագրութիւնը կը մնայ որպէս մի մեծարժէք ներածութիւն՝ սոյն թեմայի ուսումնասիրութեան գործում:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հարցին քիչ թէ շատ առնչուող դատողութեան հանդիպում ենք տակաւին հայ անդրանիկ պարբերականի՝ *Ազդարարի* էջերում, որտեղ անանուն յօդուածագիրը հետեւեալն է գրել նոր ժամանակների առաջին օտարալեզու հայ հեղինակներից մէկի՝ Յովսէփ Էմինի՝ Լոնդոնում հրատարակուած անգլերէն գրքի մասին, որը պատմում է *«անցեալ պատմութեան յազգի մերոյ եւ յաղթանակաց թագաւորաց մերոց՝ երախտագիտութեամբ չնորհակալութիւն պաշտպանաց գներկայ անտերունջ մեալուն մեր՝ հանդերձ աղերսիւ եւ յորդորանօք առ պաշտօն թագաւորութիւնն այլ ազգ քրիստոնէից, որպէս զի օգնականութեամբ նոցա կարողացուք վայելել զբնական ժառանգութիւնս մեր, եւ ոչ հաւատամք, թէ 'ի վեր մտածողութիւնս մեր լինիցի անհիմն՝ որով հետեւ դիրքն 'ի յայլ լեզու գրելն ոչ այլ ինչ կարէ ստուգաբանել»* («Կեանք եւ Անցք Յովսէփ Էմինի Հայի Սիոյ, Տպեալ 'Ի Լօնդօն Յամի 1792», *Ազդարար*, 1794, p. 4, Արամ ամսոյ, էջ 182-183. ընդգծումը մերն է - Ա.Բ.):

[2] Ժամանակին կազմել ենք սոյն թեմային առնչուող յօդուածների մատենագիտութիւն, որից նշենք հետեւեալները՝ Շահնազար Որբունի, «Հայկական Սնապարծութիւն Մը Հայ Շագումով Օտար Գրողներու Շուրջ», *Այսօր-Ապագայ*, 1952, Մայիս 15, նաեւ՝ «Օտարագիր Հայ Գրողներ», *Զարթօնք*, 1952, Հոկտեմբեր 18, նաեւ՝ Յակոբ Գույումճեան, «Անգլիագիր Հայ Գրողներու Խնդիրը», *Արարատ*, 1953, Յունուար 11, նաեւ՝ «Օտար Լեզուով Գրող Հայերու Տեղը Հայ Գրականութեան Մէջ», *Յառաջ*, 1982, Ապրիլ 30, նաեւ՝ Ռաֆֆի Քէպապճեան, «Օտարալեզու Հայազգի Գրողներու եւ Անոնց Պալիոզեանի Տագնապը», *Զարթօնք*, 1985, Յունուար 27, նաեւ՝ Վարդան Մատթէոսեան, «Օտարագիր Հայ Գրողներ», *Բազմավէպ*, 1991, էջ 308-311, նաեւ՝ Margaret Bedrossian, *The Magical Pinering, Culture And The Imagination In Armenian/American Literature*, Wayne State University Press, 1991, նաեւ՝ Մարկ Նշանեան, «Երկուորեակ Գրականութիւնը. Կախարդական Ցեղայնութիւնը», *Յառաջ Միտք եւ Արուեստ*, 1993, Փետրուար 8 եւն.: Հայ եւ օտարազգի մի շարք հետազօտողներ ուսումնասիրութեան առարկայ են դարձրել նաեւ առանձին լեզուներով ստեղծագործած հայազգի հեղինակներին. (տե՛ս օրինակ՝ Գ. Թումանեան, «Հայերը Վրաց Նոր Գրականութեան Մէջ», *Գեղարուեստ*, 1921, էջ 50-54, նաեւ՝ Սիմէտ Բասիմ պէյ, «Մէ Իսլամ Գրական Դէմքեր», *Ժողովրդի Ձայնը*-

Ժամանակ, 1924, Յուլիս 23 (թարգմանուած *Վարդը* օրաթերթից. յիշատակւում են հայ, յոյն հրեայ թուրքալեզու գրողներ). նաեւ՝ Գ. Ճ. Վ. Գասպարեան, «Հայ Հանճարը Արաբ Մատենագիտութեան Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 1925, էջ 1220-1222, 1255-1256, նաեւ՝ Զապէլ Թահմիզեան, «Անգլերէն Գրող Հայուհիներ», *Այսօր*, 1947, թ. 14, նաեւ՝ Ժոզէֆ Տելմէլ, «Ֆրանսագիր Հայ Գրագէտներ», *Յառաջ*, 1949, Սեպտեմբեր 13 (թարգմանուած Բրիւէլի *Մուսր* թերթից, որտեղ հեղինակը մասնաւորապէս նշել է. «Ֆրանսական գրականութիւնը իրաւունք ունի գոհ ըլլալու հայ գրագէտներու բերած նպաստէն»), նոյնի՝ «Երբ Արարատի Մուսան Ֆրանսերէն Կ'արտայայտուի», *Յառաջ*, 1950, Դեկտեմբեր 21 (թարգմանուած Բրիւէլի *Մարկ Դը Ֆրանս* պարբերականից), նաեւ՝ Յ. Քիւրտեան, «Թրքաբարբառ Հայ Տաղասացներ», *Աստղաբերդ*, 1952, էջ 194-195, նաեւ՝ Nona Balakian, *New Touches in American Prose. American Armenian Writers*, New York, 1958, նաեւ՝ Հ. Սաֆրուճեան, «Թրքագիր Հայ Բանաստեղծներ», *Նոր Մարմարա*, 1961, Փետրուար 3, նաեւ՝ Սկրտիչ Պարսամեան, «Հայ Երիտասարդներ Ֆրանսական Գրականութեան Մէջ», *Նոր Մարմարա*, 1961, Յուլիս 28, նաեւ՝ «Հայազգի Դէմքեր Արաբական Գրականութեան Մէջ», *Յառաջ Գրական*, 1962, թ. 61, 63, նաեւ՝ Սերովբէ Մխիթարեան, *Ֆրանսերէնով Արտայայտուող Հայ Արուեստագէտներ*, Փարիզ, 1969, նաեւ՝ Ուիլիըմ Նուպար Դանիէլ Ղազարեան, «Հայեր Արաբական Գրականութեան Պատմութեան Մէջ (1800–1900 թթ.)», *Արեւ*, 1978, Յունիս 4-7, նաեւ՝ Վահէ Օշական, «Անգլիագիր Ամերիկահայ Գրականութեան Հարցեր», *Ասպարէզ*, 1988, Փետրուար 13, 20, Ապրիլ 2, եւն.:

[3] Տե՛ս՝ Ալեքսանդր Թոփչեանի կազմած *Օտարալեզու Հայ Գրողներ* ժողովածուն (Երեւան, 1989), նաեւ՝ նրա «Օտարալեզու, Բայց Ոչ Օտարամիտ» յօդուածը (*Գեղարուեստ*, 1991, թ. 18-22, Նոյեմբեր-Դեկտեմբեր, էջ 12-13): Երեւանում 1993ին լոյս է տեսել *Սփիւռքահայ Գրականութեան Ընտրանի: Օտարալեզու Հայ Հեղինակներ (Ջեռնարկ Ուսանողների Համար)* ժողովածուն՝ արդէն տարբեր ժողովածուներում հրատարակուած նիւթերի ընդգրկումով: Թեման հայաստանեան մամուլում յատկապէս արծարծուեց 2005ի Հոկտեմբերին, երբ Հայաստանի Գրողների Միութեան նախաձեռնութեամբ Երեւանում կայացաւ օտարալեզու հայ գրողների առաջին համաժողովը: Այդ առիթ Միութեան նախագահ Լեւոն Անանեանը, ամփոփելով համաժողովի աշխատանքները, իրաւամբ նշել է. «*Ձեզ համաժողովով մենք մի կարեւոր խնդիր ենք լուծում՝ ճանաչել միմեանց, գնահատել միմեանց եւ ստեղծել պայմաններ, որպէսզի օտարագիր հայ գրողն իրեն զգայ նոյնքան մեր երկրի, մեր մշակոյթի տէրը, ինչքան էլ որ ճակատագրի բերումով օտարուել է, որքան մենք ես կարծում եմ, որ չատ կարեւոր է մեր յաջորդ քայլը՝ թարգմանաբար ներկայացնել բոլոր այն գրքերը, որոնք այսօր ստեղծւում են արտերկրում: ...Վստահ եմ, որ այս համաժողովները պիտի դառնան աւանդական ու յաջորդին մասնակցեն օտարագիր երիտասարդ գրողները, եւ պիտի ամէն ինչ անենք նրանց չկորցնելու համար, որոնք արտերկրում մեր Հայ դատի ու պահանջատիրութեան քարոզիչները պիտի լինեն: Իսկ որ կարեւորն է՝ արդէն արուած է Սփիւռքի օտարագիր գրողների գրական դիմագրումը, եւ պիտի կարողանանք հնարաւորինս ներկայացնել նրանց ստեղծագործութիւնները մեր ընթերցողին*» (Մարիետա Մակարեան, «Օտարագիր Հայ Գրողների Առաջին Համաժողովը Խիստ Օգտակար Էր», *Ազգ*, 2005, Հոկտեմբեր 14):

[4] Տե՛ս նրա յօդուածները՝ «Հայ Բանաստեղծութիւնը Սփիւռքի Օտարագիր Գրականութեան Մէջ», *Քննադատական Տարեգիրք*, Երեւան, 1987, էջ 180-197, նաեւ՝ «Սփիւռքի Օտարագիր Գրականութեան Ազգային Բնոյթը», *Գրական Թերթ*, 1991, Նոյեմբեր 22:

[5] Տե՛ս՝ Լեւոն Խաչիկեանի «Օտարալեզու Հայ Գրականութիւնը 4-րդ Դարում» յօդուածը, *Պատմաբանասիրական Հանդէս*, 1973, թ. 3, էջ 27-51:

[6] Հարկ է նախեւառաջ ընդունել, որ ամէն ազգային գրականութիւն կարող է ունենալ իր այլալեզու ճիւղաւորումները: Սակայն անհրաժեշտ է հաշուի առնել իւրաքանչիւր պարագայի առանձնայատկութիւնները: Շուէդիայի հարեւան Ֆինլանդիայում ստեղծուած եւ ստեղծուող շուէդալեզու գրականութիւնը միշտ էլ համարուել է ֆինական գրականութիւն, քանի որ այն ծնում եւ զարգանում է ֆինլանդական հողի վրայ եւ միջավայրում. ըստ այդմ էլ ազգութեամբ շուէդուհի եւ շուէդերէն ստեղծագործած Էդիթ Սէօդէրգրանը ֆինական բանաստեղծութեան ականաւոր ներկայացուցիչ է: Միևչդեռ հարց է, որ Հայաստանին հարեւան Վրաստանում, Իրանում եւ Թուրքիայում ստեղծուած եւ տակաւին ստեղծուող հայ գրականութիւնը որքանով կարող է մաս կազմել վրացական, իրանական կամ թուրքական գրականութեան:

[7] Անշուշտ, մինչեւ այս ժամանակաշրջանը տարբեր գաղթավայրերում եղել են հատուկենտ օտարալեզու հայ ստեղծագործողներ: 1912ին Նիւ Եորքի *Կոչնակ* շաբաթաթերթում մի յօդուածագիր նշել է, որ «*Շատ սակաւաթիւ են Հայ գրողներու Անգլիերէն բանաստեղծութեանց երկերը*» (էջ 559): Նա ներկայացրել է Ա. Վ. Պետիկեանի *Կարմիր Սուլթանի Մենախօսութիւնը* 127 էջանոց անգլերէն վիպերգը (հրատարակուած 1912ին, Բոսթոնում), որտեղ Աբդուլ Համիդը զբաղուած է ինքնագովութեամբ: Հեղինակը եզրայանգում է, որ «*Արեւմտեան միտքը պիտի չկրնար թափանցել արեւելքցի Մահմետական հոգեբանութեան, մինչ Հայ հեղինակը՝ ինքն ալ արեւելքցի մը՝ կատարելապէս պարզած է Կարմիր Սուլթանի հաւանական տեսակէտը*» (նոյն տեղում):

[8] «*Ամէնէն ցաւալին այն է, որ մեծ ժիրքի եւ մինչեւ անգամ հանճարի տէր հայեր, փոխանակ իրենց հայրենակիցներուն մէջ ապրելու, գործելու եւ իրենց երկրին զարդն ըլլալու՝ օտար երկիրներու մէջ կը զարգացնեն իրենց տաղանդները: Ու այսպէս օտարներու պարծանք եւ զարդ կը դառնայ այն հանճարը, որ Հայկական է, եւ հայոց կը վերաբերի: Երբ խնդիրը գրականութեան մասին է՝ կորուստն աւելի զգալի է, որովհետեւ լեզուի տարբերութիւնը աւելի շատ կը հեռացնէ արուեստագէտը իր հարազատ հայրենակիցներէն*»,– գրել է անգլիաբնակ գրող-թարգմանչուհի Զապէլ Պոյաճեանը՝ ինքը եւս օտարալեզու հայ հեղինակ (տե՛ս՝ Զապէլ Կ. Պոյաճեան, «Միքայէլ Արլէն՝ Հայ Վիպասանը», *Հայաստանի Կոչնակ*, 1925, Փետրուար 14, էջ 210): Լեզուի հարցին հանգամանօրէն անդրադարձել է գրականագէտ Աշոտ Օհանեանը, գտնելով, որ ճիշտ չէ գեղարուեստական գրականութեան ազգային դէմքը որոշելիս բացարձակացնել լեզուի դերը եւ պէտք է հաշուի նստել արտակարգ հանգամանքների հետ: «*Մեր մասնագէտ գրականագէտների պարտքն է,- գրում է նա,- աչխարհասփիւռ հայոց գրականութեան քարտէզի վրայ նմանատիպ փաստերի բախուելիս՝ վկայակոչել լեզուից աւելի զօրաւոր դիմորոշ գործօններ, որպէսզի անխուսափելի չդառնան պարադոքսներն ու կորուստները*» (Աշոտ Օհանեան, «Կարօտի եւ Հաւատի Երգեր», *Գարուն*, 1979, թ. 12, էջ 52):

[9] Սոյն նկատառումից ելնելով էլ մենք այս թեմային նուիրուած մեր գրութիւններում օգտագործում ենք «այլալեզու» եզրը (տե՛ս օրինակ, «Ազգային Ինքնութեան Դրսե-

տրումն Այլալեզու Հայագրի Գրողների Երկերում», *Ինքնութիւն*, Համաճիտար Հետազօտութիւնների Հայկական Կենտրոնի հրատարակութիւն, Երեւան, 1995, էջ 173-179):

[10] Ըստ այդմ, հարցն ունի երկու երեսակ՝ զգացական եւ գիտական-մեթոդաբանական: Վրէժ Իսրայէլեան՝ Մայքըլ Առլէն-կրտսերի հետ վարած հարցազրոյցում հարցրել է. *«...մի առիթով Վիլյամ Սարոյեանն ասել է, որ ինքը ամերիկացի լինելով եւ անգլերէն գրելով հանդերձ, պատկանում է հայ գրողների ընտանիքին. Նոյնը կարելի՞ է ասել Ձեր մասինն, որին ի պատասխան գրողն ասել է. «Անշուշտ. Աշխարհի ցանկացած հայ, որ գրում է, գրում է որպէս հայ, ինչ լեզուով էլ որ նա արտայայտուի՝ անգլերէն, ֆրանսերէն, իսպաներէն... Ասում ենք՝ հայ գրողների ընտանիք եւ ոչ՝ հայերէն գրողների ընտանիք. Լեզուական արգելքները մեզ ճակատագրին է տուել, իսկ ընտանիքի պատկանելութիւնը արեան պատկանելութիւն է»* (*Վերածնուած Հայաստան*, 1989, էջ 12): Սա հարցի զգացական կողմն է, իրականում Մայքըլ Առլէն-կրտսերի ստեղծագործութիւնը կարող է լինել (եւ է) հայ ոգու արտայայտութիւն, սակայն հարց է եթէ կարող ենք նրան դիտարկել հայ գրականութեան պատմութեան սահմանների մէջ:

[11] Հարկ է նշել, որ Կոստան Զարեանն իտալերէնով գրել է միայն մամուլի համար թղթակցութիւններ, իսկ «Երեք Երգ» վիպերգը, որն առաջին անգամ տպագրուել է իտալերէն եւ երկար ժամանակ համարուել է այդ լեզուով իսկ գրուած, իրականում թարգմանուած է եղել հայերէն բնագրից: Զարեանն իտալերէնով գեղարուեստական երկեր չի հեղինակել:

[12] «Ախթամար»ի աւանդապրոյցը մինչեւ անգամ օգտագործել է ամերիկացի բանաստեղծուհի Ջուդիթ Հալորանն իր «Թիւր Պատկերացում» բանաստեղծութեան մէջ (տե՛ս՝ մեր կողմից կատարուած հայերէն թարգմանութիւնը, *Հայրենիքի Ձայն*, 1995, թիւ 6):

[13] Առաջին հերթին նկատի ունենք բանաստեղծուհի, նախկին երեւանցի Եւա Ադալեանին, որը 2003ին հրատարակել է իր առաջին անգլերէն ժողովածուն (Yeva Adalyan, *Honey A La Carte* (Լոս Անջելէս, 2003): Այս ժողովածուից նմուշներ հայերէն թարգմանութեամբ տե՛ս՝ *Արտաստհմանեան Գրականութիւն*, p. 1 (5), 2005, էջ 166-175:

[14] Նկատի ունենք Անահիտ Արամունի Քեշիշեանի խմբագրութեամբ Լոս Անջելէսում հրատարակուած *Մուտք* հայերէն-անգլերէն եւ *Random Agenda* անգլերէն հանդէսները:

[15] Գէորգ Էմին, *Գիրք Թարգմանութեանց*, Երեւան, 1984, էջ 518:

[16] Իրականում այն, ինչ յետագայում տեղի ունեցաւ միւս գաղթավայրերում, մինչ Եղեռնը արդէն կատարուել էր Ռուսաստանում: Ռուս խորհրդային արձակի ապագայ ականաւոր գրող Մարիէտա Շահինեանը իր առաջին իսկ ռուսերէն բանաստեղծութիւնների ժողովածուով երգեց երբեք չտեսած հեռաւոր Հայաստան հայրենիքը, Մոսկուայի *Արմեանսկի Վեստնիկ* (Հայկական Լրատու) ամսագրի շուրջ համախմբուեցին ռուսալեզու հայ գրողներ (եւ առաջին հերթին՝ բանաստեղծներ), այնտեղ իր առաջին քայլերը կատարեց ռուսական արձակի ապագայ նշանաւոր դէմք հայազգի Նինա Բերբերովան (ինչպէս նոյն ժամանակ Լոնդոնի հայութեան անգլիալեզու մամուլում իր առաջին գործերը տպագրեց Մայքըլ Առլէն-Տիգրան Գույումճեանը, իսկ մէկ տասնամեակ անց ամերիկահայ *Հայրենիք* պարբերականում իր առաջին պատմուածքը տպագրեց Սիրաք Գորեան-Ուիլիըմ Սարոյեանը): Փարթամեանի նշած օտարագիր հայ գրողի սեւեռումը դարձած անցեալի ու հայոց պատմութեան արծարծումները, ազգային ինքնութեան բացայայտումը առկայ են նաեւ ռուսալեզու

հայ բանաստեղծներից շատերի գործերում (Նինա Գաբրիէլեան, Օլէգ Շեստինսկի, Եուրի Ռազումովսկի, Պիոտր Վեգին, Նիկոլայ Տարասով)։ Ինչպէս անգլիալեզու հայագգի շատ բանաստեղծների գործերում հանդիպում ենք լատինատառ գրուած հայերէն բառեր, նոյնը տեսնում ենք նաեւ ռուսալեզու բանաստեղծների գործերում (օրինակ, Նիկոլայ Եգորովի, որի *Հայրենի Հողի Օրհնանքը* ժողովածուի բերքուածները լի են հայերէն բառերով եւ արտայայտութիւններով)։

[17] Տե՛ս՝ թիւ 2 ծանօթագրութեան յղումները։

Ժամանակակից Իսթանպուլահայ Գրողներ (Ա. Հատոր), Աշխատասիրեց՝ Կարօ Աբրահամեան, Պատասխանատու Խմբագիր՝ Պէպօ Սիմոնեան, Հրատարակութիւն՝ Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի քիւ 61, Անթիլիաս 2004, 551 էջ:

Սփիւռքահայ գրականութեան զանազան երեսներուն, խնդիրներուն ու յատկանիշներուն նուիրուած ուսումնասիրութիւններուն մէջ, յատուկ տեղ կը գրաւեն առանձին գաղթօճախներու գրականութեան յատկացուած աշխատութիւնները: Մինչ, Լիբանանի եւ ընդհանրապէս Միջին Արեւելքի մէջ ստեղծուած հայ գրականութիւնը տակաւին կը սպասէ իր աշխատասիրողին[1], ֆրանսահայ, ամերիկահայ եւ իսթանպուլահայ գրականութիւնները որոշ չափով ունին իրենց նուիրուած մեծ ու փոքր մենագրութիւնները, երկասիրութիւնները եւն.:

Սփիւռքահայ գրականութեան իբր մէկ ամբողջական երեւոյթ (եթէ կարելի է այդպէս դասակնիլ) ուսումնասիրութիւնը որքան անհրաժեշտ է, նոյնքան ալ օգտակար ու հետաքրքրական են աշխարհագրական կտրուածքով ուսումնասիրութիւնները, որոնք առաւելաբար կը շեշտեն տուեալ գաղթօճախին առանձնայատկութիւնները: Ի վերջոյ, որքան ալ փափաքինք իբրեւ մէկ ամբողջութիւն դիտել Սփիւռքի մէջ զարգացող հայ գրականութիւնը, այդուհանդերձ լեզուական զանազանութեան կողքին, իւրաքանչիւր գաղթօճախ ունի իր յստակ զատորոշիչ յատկութիւնները, արդիւնք՝ տուեալ երկրի պայմաններուն, որոնք կրնան յատուկ ըլլալ միայն ու միայն տուեալ գաղթօճախին, եւ թերեւս նոյնիսկ՝ Հրատարակչատան:

Իսթանպուլահայ գրականութիւնը, մանաւանդ բանաստեղծութիւնը, կը յատկանշուի նորարական ձգտումներով ու դրսեւորումով եւ այդ մարզին մէջ արձանագրած նուաճումներով: Ազգային արտայայտութեան սահմանափակումները, գաղթօճախին իբրեւ Սփիւռք զարգացման ոչ-օրինաչափ ընթացքը, բնական է, որ իրենց կնիքը ձգէին նաեւ գրականութեան վրայ, որ իր հերթին փնտռէր զարգացման այլ ուղիներ: Կը կարծենք, թէ այս կարգ մը իրայատկութիւնները պատճառներէն մէկ քանին են՝ իսթանպուլահայ գրականութեան հանդէպ ցուցաբերուած առաւել հետաքրքրութեան, եւ հետեւաբար՝ աւելի ընդարձակումին[2]:

Կարօ Աբրահամեանի սոյն աշխատասիրութիւնը կը նախորդուի նմանատիպ երկու այլ գիրքերով. *Համայնապատկեր Հանրապետական Շրջանի Իսթանպուլահայ Գրականութեան*, խմբագրութեամբ Վ. Ս. Ծովակի, Վարդան Կոմիկեանի եւ Ռոպէր Հատտէճեանի, Իսթանպուլ 1957 եւ *Սփիւռքահայ Արդի Գրականութիւն, Հատոր Ա. – Պոլսահայ Գրականութիւն*, աշխատասիրութեամբ Սեդա Ծաղիկեան-Տեմիրճեանի, Միշիկըն, 1994:

Ընթերցողին ուշադրութիւնը առաջին հերթին կը գրաւէ, կատարուած աշխատանքին բծախնդրութիւնը: Մանրամասնութիւններու հանդէպ Աբրա-

համեմատի «կիրքը» ի յայտ կու գայ նաեւ այստեղ. նամակագրութեամբ, զանազան որոնումներով ու հետապնդումներով ան փորձած է ըստ կարելւոյն կենսագրական ու մատենագիտական ամբողջական եւ ճշգրիտ տուեալներ փոխանցել ընթերցողին: *Ժամանակակից Իսթանպուլահայ Գրողներ* հատորը արդիւնք է մանրակրկիտ աշխատանքի: Անոր ետին մեզի կը ներկայանայ Կարօ Աբրահամեան մատենագէտը, որ գրականագէտի պատմուճանը նետած չէ ուսին. ան իր ջանքը կեդրոնացուցած է առաւելաբար տուեալներու համապարփակութեան եւ ճշգրտումին վրան:

Սոյն հատորը համապատասխանաբար Գ. Դ. եւ Ե. բաժիններուն մէջ կը ներկայացնէ իսթանպուլահայ բանաստեղծները, արձակագիրներն ու թատերագիրները: Հատորը կ'ընդգրկէ 83 գրողներ՝ բոլորն ալ ներկայացուած իրենց կենսագրական տուեալներով, նկարներով, իսկ 50ը՝ նաեւ իրենց ստեղծագործութիւններով: 33 հեղինակներ ընդգրկուած են «Յաւելուածական Բաժին»: Աբրահամեան, շատ հաւանաբար, հաւատարիմ մնալով միայն ժամանակակից գրողները ներկայացնելու իր նպատակին, նախապէս՝ ըստ 1994ի «յատակագիծին» ծրագրած է յաւելուածական բաժնով մը ներկայացնել *«...նչուած թուականէն առաջ մահացած եւ կամ Իսթանպուլէն հեռացած գրողներու կենսագրական թէ մատենագիտական տուեալները»*[3]: Սակայն հատորին խմբագրին թելադրութեամբ, *«Համայնապատկեր Հանրապետական Շրջանի Իսթանպուլահայ Գրականութեան* [1957 - Ա.Ի.][4] *խորագրեալ հատորիդիրին եւ ներկայ աշխատասիրութեան պատրաստութեան թուականներուն միջեւ»* [2004 - Ա.Ի.] ինկած բանաստեղծները, արձակագիրներն ու թատերագիրներն ալ ընդգրկուած են համապատասխան բաժինները: Վերոյիշեալ բացատրութիւնը կ'ենթադրէ, թէ 1957-2004 ժամանակաշրջանին մահացած կամ Իսթանպուլէն հեռացած գրողները պէտք է ներկայացուէին համապատասխանաբար բանաստեղծութեան, արձակի կամ թատերգութեան բաժիններուն մէջ, իսկ «Յաւելուածական Բաժին»ին մէջ ներկայացուին 1957էն առաջ մահացած կամ Իսթանպուլը ձգած հեղինակներուն կենսագրութիւնը միայն, բացառութեամբ Կարապիս Ճանճիկեանի նման գրողներուն, որոնք իրենց յատուկ դրոշմը ձգած են Իսթանպուլահայ գրականութեան վրայ: Սակայն հակասութիւններ կամ երկուութիւններ ի յայտ կու գան այստեղ: Յաւելուածական բաժնին մէջ կան երեք հեղինակներ, որոնք դեռ կ'ապրին, ինչպէս՝ Միքայէլեան Սիլվա՝ երկու բանաստեղծական գիրքերու հեղինակ, Անդրէասեան Անայիս եւ Չըքրըօղլու-Ատալեան Վերա, եւ որոնք պէտք է ներկայացուէին ոչ-յաւելուածական բաժնին մէջ:

Արագ ակնարկ մը ցոյց կու տայ, թէ 1957-2004 շրջանին Իսթանպուլը ձգած՝ մահացած կամ ապրող 6 գրողներ եւ Իսթանպուլ մահացած 12 գրողներ ընդգրկուած են «Յաւելուածական Բաժին»: Եթէ Աբրահամեանի չափանիշը հրատարակուած գործեր ունենալն է, ապա միւս բաժիններուն մէջ ալ կան այնպիսիներ, որոնք հրատարակուած գեղարուեստական երկեր չունին: Եթէ չափանիշը ապրող կամ մահացած ըլլալն է, ապա մնացեալներէն Սիլվա

Միքայէլեան, Չիֆլեան Թորոս, Սրբուհի Մառք դեռ կ'ապրին, իսկ Սիմոնիկ եւ Աստղիկ Քեհեայեան մահացած են վերոյիշեալ ժամանակաշրջանին մէջ:

Ինչ կը վերաբերի Իսթանպուլէն հեռացածներուն, ապա նաեւ այստեղ երկուութիւն մը կը նշմարուի: Մինչ կը թուի, թէ անոնք գերազանցապէս ներկայացած են «Յաւելուածական Բաժին»ին մէջ, միւս բաժիններուն մէջ ես կը գտնուին այնպիսիներ, ինչպէս Ս.Ք. Չանգու, Զարուհի Գալեմքեար-եան, որոնք մեկնած ըլլալով Պոլսէն *Համայնապատկեր*...էն՝ 1957էն առաջ, ներկայացուած են սկզբնական բաժիններուն մէջ:

Նման մեծածաւալ եւ համապարփակութեան ձգտող աշխատանք մը պէտք է խստօրէն առաջնորդուի առարկայականութեամբ: Կասկածի չենք ենթարկեր Աբրահամեանի առարկայականութիւնը. բնական է, որ Խրախունի մը, Զահրատ մը, Հատտէճեան մը աւելի էջ ունենան քան բանաստեղծական հատորիկի մը հեղինակը. սակայն, երբ ձգտումը բոլորը ներկայացնելն է, ապա պէտք չէ խտիր դնել գրական բերքին միջեւ: Գիտենք, թէ ցարդ յստակօրէն բնորոշուած չէ գրող հասկացութիւնը. Աբրահամեան, այս հատորին մէջ նկատի առած է բոլոր անոնք, որոնք գեղարուեստական գրութիւններով հանդէս եկած են կամ կու գան. նիւթի ընտրութեան իր իրաւունքը կը յարգենք, սակայն չափանիշները պէտք է յստակ ըլլան:

Գիրքին ամէնէն գնահատելի բաժինը կենսագրականներն են. համբերութիւն եւ բանասէրի բարեխղճութիւն ենթադրող աշխատանք մըն է ներկայացուածը, ուր Աբրահամեան յաջողութիւն արձանագրած է: Սակայն այստեղ ալ, ինչպէս նաեւ մատենագիտական ցանկին մէջ, կը նշուին թրքերէն, գերմաներէն, ֆրանսերէն, անգլերէն եւ բրտերէն անուններով բազմաթիւ գիրքեր: Ակնկալելի է, որ այդ գիրքերուն օտարաձուն վերնագիրներուն քով փակագծեալ տրուած ըլլար նաեւ անոնց հայերէն թարգմանութիւնը: Սա ընդունուած սովորութիւն մըն է գրականագիտութեան մէջ, մանաւանդ, որ Արմաճ Վարդանեանի եւ Յակոբ Մարբայեանի պարագային կատարուած է այդ քայլը:

Այստեղ անհրաժեշտ է փակագիծ մը բանալ Իսթանպուլ[5] եւ Պոլիս անուններու հակադրութեան մասին խօսելու համար: Կը կարծենք, թէ անհրաժեշտ է այլեւս յանգիլ միօրինակութեան մը: Ակնյայտ է, թէ Իսթանպուլ ապրող, ապրած կամ այդտեղի հետ սերտօրէն առնչուած հեղինակներ, ինչպէս Խրախունի, Հատտէճեան, Գէորգ Բամպուքճեան, Վարդ Շիկահեր[6] եւ ուրիշներ աներկբայօրէն կը գործածեն Իսթանպուլ անունը, թէեւ նախկին իսթանպուլահայ Հիլտա Գալֆայեան-Փանոսեան իր մէկ գիրքը վերնագրած է *Պոլսահայ Նոր Բանաստեղծներ*, (Անթիլիաս 1998), ինչպէս նոյնը ըրած է Ծաղիկեան-Տեմիրճեան: Հայաստան եւ Սփիւռքի այլ գաղութներ ընդհանրապէս կը սիրեն գործածել Պոլիսը. այսպէս, Հայաստանէն Վազգէն Գաբրիէլեան[7], Գեղամ Սեւան[8] (նախկին իսթանպուլահայ), իսկ Սփիւռքէն Միհաս Թէօլէօլեան[9] (նախկին իսթանպուլահայ), Պէպօ Սիմոնեան[10] եւ ուրիշներ կը գործածեն Պոլիս եւ պոլսահայ բացատրութիւնները, թէեւ Կարիկ Պասմաճեան եւ Թորոս Թորանեան ալ նախասիրած են Իսթանպուլը[11]: Սուրէն Դան-

իէլեանի մօտ կը հանդիպինք երկու ձեւերուն ալ՝ պոլսահայ եւ ստամբուլահայ[12]: Նոյնիսկ սոյն հատորին մէջ կը հանդիպինք երկու ձեւերուն. հեղինակին շեշտուած նախասիրութիւնը դէպի Իսթանպուլը քաջ ծանօթ է իր շրջապատին, եւ հետաքրքրական է, որ ինք կը գործածէ Իսթանպուլը, իսկ խմբագիրը՝ Պոլիսը: Նոյն կողքին տակ Լեւոն Շառոյեան, Արփի Թոթոյեան, Սիմոնեան եւ Դանիէլեան իրենց ստորագրած յօդուածներուն մէջ կը գործածեն Պոլիսը, իսկ Աբրահամեան, Խրախունի, Մաքրուհի Պ. Յակոբեան, Հատտէճեան, Վարուժան Աճեմեան եւ Զաւէն Պիպեոեան կը գործածեն Իսթանպուլը: Եթէ տարբերակումը ժամանակագրական ըլլար, ըսենք միջեւ 1920-22 ժամանակաշրջանը՝ Պոլիս, անկէ ետք՝ Իսթանպուլ, որոշ տրամաբանութիւն մը պիտի գտնէինք, սակայն սա մասը բուացող երկուութիւնը արդարացի չէ: Փափաքելի պիտի ըլլար, որ այս հատորին մէջ հեղինակ-խմբագիր համաձայնութեամբ, որոշ ճշդումի մը ենթարկուէր այս հարցը:

Գրականութեան անուանումին որոշ չափով առնչակից է նաեւ այլ հարց մը. Աբրահամեան, *«Պոլսոյ աշխարհագրական նեղ սահմաններէն դուրս ելած»* գրողները իրաւամբ կը դասէ Իսթանպուլահայ գրողներու շարքին: Ծաղիկեան-Տեմիրճեան կը գործածէ «գաւառահայ գրականութիւն» եզրը, այնտեղ տեսնելով Պոլսէն դուրս ծնած բոլոր գրողները, ընդհուպ մինչեւ Գեղամ Սեւան: Կը կարծենք թէ «գաւառահայ» բացատրութիւնը հնաբանութիւն է այլեւս. Մնձուրիով վերջ գտած ըլլալու է այդ բնորոշումը մեր գրականութեան մէջ: Օրինակ, Տիգրանակերտ ծնած Մկրտիչ Մարկոսեան մը կը նկատուի պոլսահայ գրող: Աբրահամեան ճիշդ ըրած է պատմութեան գիրկը նետելով «գաւառահայ»ը:

Ըսած եղանք, որ *Ժամանակակից Իսթանպուլահայ Գրողներ*ու իբրեւ արդիւնք եւ նուաճում, մատենագիտական բնոյթ ունի: Այնտեղ հրատարակուած են 10 գրականագիտական յօդուածներ, որոնք մեծաւ մասամբ արտատպումներ-պլպտումներ են: Մեր կարծիքով, հատորը յաւելեալ արժէք մը չ'ունենար անոնցմով: Յաճախ իրար կրկնող տեսակէտերով, սոսկական բումներով եւ ընդհանրական եզրակացութիւններով յատկանշուող յօդուածներ են անոնք, որոնցմէ ոմանք ունին 10, 20 նոյնիսկ գրեթէ 50 տարուան վաղեմութիւն: Իսկ Հատտէճեանի «Համառօտ Ակնարկ Իսթանպուլահայ Գրականութեան Վրայ»ն կը թուի սխալ բաժնին սկիզբը դրուած ըլլալ. ան կը խօսի ընդհանրապէս իսթանպուլահայ գրականութեան մասին, թէեւ դրուած է իբր մուտք արձակի բաժնին:

Անշուշտ, խմբագրական այս կարգ մը թերութիւնները երբեք չեն նսեմացներ հատորին արժէքը. Աբրահամեանի կազմած ժողովածուն, իր բոլոր տուեալներով կը լրացնէ *Համայնապատկեր*.ին ու Ծաղիկեանի հատորին բացերը, մեծագոյն տոկոսով ամբողջական պատկերացում մը տալով իսթանպուլահայ մանաւանդ արդի գրականութեան մասին:

Յառաջաբանին մէջ աշխատասիրողը կ'ակնարկէ երկրորդ հատորի մըն ալ, որ նուիրուած պիտի ըլլայ ժամանակակից իսթանպուլահայ հրապարա-

կագիրներուն, մանկագիրներուն, յուշագիրներուն, թարգմանիչներուն եւ բանասէրներուն: Կը սպասենք անոր հրատարակումին:

ԱՐՄԷՆ ԻՒՐՆԷՇԼԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Այս առումով համեմատաբար ամէնէն ամբողջական ուսումնասիրութիւնը կատա-րած է գրականագէտ, պատմաբան եւ բանաստեղծ Լեւոն Վարդան՝ «Ակնարկ Հին բանաձեւահայ Գրականութեան Վրայ» յօդուածաշարով, *Հիւրակ* ամսագիր, ԺԵ. տարի թիւ 1-3, Յունուար-Մարտ 1972էն մինչեւ Լ. տարի թիւ 5, Մայիս 1986: Յաւելեալ մանրամասնութիւններու համար, տես՝ *Հիւրակ* ամսագիր, ԻՋ. տարի թիւ 1-2, Յունուար-Փետրուար 1982, էջ 59 եւ ԼԱ. տարի թիւ 4, Ապրիլ 1987, էջ 55:

[2] Տես գրախօսուող աշխատասիրութեան օգտագործուած աղբիւրներու ցանկը, էջ 539-540:

[3] Տես նոյն, էջ 9:

[4] Նոյն:

[5] Կը հանդիպինք նաեւ Իսթամբուլ, Սթամպուլ, իսկ արեւելահայերէնով նաեւ Ստամբուլ ձեւերուն:

[6] Տես գրախօսուող աշխատասիրութեան օգտագործուած աղբիւրներու ցանկը, էջ 539-540:

[7] Վազգէն Գաբրիէլեան, *Սփիւռքահայ Գրականութիւն-Պատմութեան Ակնարկներ*, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, Երեւան 1987:

[8] Գեղամ Սեւան, *Սփիւռքահայ Գրականութեան Պատմութեան Ուրուագծեր*, ՀՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, հատոր Բ., Երեւան 1987:

[9] Միհաս Թէօլէլեան, *Դար մը Գրականութիւն*, հատոր Բ., Բ. հրատարակութիւն, Նիւ Եորք, 1982:

[10] Տես գրախօսուող աշխատասիրութեան «Պոլսահայ Բանաստեղծութեան Նոր Դպրոցը» յօդուածը, էջ 51:

[11] Տես գրախօսուող աշխատասիրութեան օգտագործուած աղբիւրներու ցանկը, էջ 539:

[12] Սուրէն Դանիէլեան «Բանաստեղծութեան Ազատագրումը - Զարեհ Խրախունի» Ս. Էջմիածին, 1999:

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

ԱՋԱՏ ՀԱՄԲԱՐԵԱՆ
(1926-2003)



Պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Նոր Պատմութեան Բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ազատ Համբարեանը ծնուել է 1926 Յունիսի 8ին Վրաստանի Նինոծմինդայի (Բոգդանովկա) շրջանի Սաթխա գիւղում: 1942ին նա գերազանցութեամբ աւարտում է Գիւմրիի Մանկավարժական Ինստիտուտի Պատմութեան Ֆակուլտետը եւ աշխատում նոյն ինստիտուտում: 1953ին աւարտում է ԽՍՀՄ Պատմութեան Ինստիտուտի Լենինգրադի Բաժանմունքի ասպիրանտուրան եւ նոյն թուականին պաշտպանում պատմական գիտութիւնների թեկնածուի իր ատենախօսութիւնը: Այդ ժամանակուանից մինչեւ կեանքի վերջը Համբարեանի գործունէութիւնը կապում է Հայաստանի ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի հետ:

Լայն ու ընդգրկուն են եղել Համբարեանի գիտական հետազօտութիւնների բնագաւառները՝ Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանի տնտեսութեան պատմութիւն, ազգային-ազատագրական շարժումներ, ժողովրդագրութիւն:

Դեռեւս 1959ին հրատարակուած *Կապիտալիստական Յարաբերութիւնների Զարգացումը Հայկական Գիւղում (1860-1920)* ռուսերէն աշխատութեան մէջ Համբարեանը հանգամանօրէն լուսաբանել է բուրժուական յարաբերութիւնների թափանցումը հայկական գիւղ, գիւղատնտեսութեան տարբեր ճիղերի տեսակները, բնակչութեան աճը, նրա հասարակական-իրաւական կացութիւնը, ունեցուածքային կարողութիւնը, գիւղում ծաւալուած սոցիալական շարժումները: Համբարեանի ուշադրութիւնից չեն վրիպել նաեւ գիւղատնտեսութեան մէջ տարածում գտած վարձու աշխատանքը, գիւղատնտեսութեան ձեռնարկութիւնները եւ այլ հարցեր:

Համբարեանն այն սակաւաթիւ հայագէտներից էր, որը ձեռնամուխ եղաւ Արեւմտեան Հայաստանի պատմութեան ուսումնասիրութեանը, մի բնագաւառ, որի հետազօտութեանը Հայաստանի մասնագէտները հնարաւորութիւն ունեցան անդրադառնալ միայն 1950ականների կէսերից:

1965ին Համբարեանը հրատարակեց իր երկար տարիների պրպտումների արգասիքը՝ *Ագրարային Յարաբերութիւնները Արեւմտեան Հայաստանում* հատորը: Այս աշխատութեան համար նա արժանացաւ պատմական գիտութիւնների դոկտորի գիտական աստիճանի: Արեւմտեան Հայաստանին նուիրուած Համբարեանի նշուած ուսումնասիրութիւնը գրուած է բազմաբնոյթ ու հարուստ սկզբնաղբիւրների հիման վրայ: Այնտեղ հեղինակն անդրադար-

ձել է ԺԹ. դարի երկրորդ քառորդից թուրքական կառավարութեան անցկացրած հողային բարենորոգումներին: Վերոյիշեալ փոփոխութիւնները կոչուած էին ճանապարհ հարթել հողի մասնաւոր սեփականատիրական իրաւունքի առաջացման ու տարածման համար:

Հեղինակը այդ աշխատութեան մէջ ներկայացնում է արեւմտահայութեան տարբեր խաւերի վիճակը, ընդգծում գիւղացու ծանր կացութիւնը, անդրադառնում է նաեւ գիւղատնտեսական արտադրանքին, արդիւնաբերական ձեռնարկութիւնների երեսաց գալուն, առեւտրի ծաւալմանն ու կապիտալիստական յարաբերութիւնների ձեւաւորմանը: Գրքում կարմիր թելի նման ընդգծում է այն միտքը, որ թուրքական կառավարութիւնն ամէն կերպ խոչընդոտում էր Արեւմտեան Հայաստանի տնտեսութեան բարգաւաճմանը: Քուրդ ցեղապետերն ու աղաները, օգտուելով կառավարութեան հակահայկական քաղաքականութիւնից, բռնագրաւում էին հայ գիւղացիների հողերը, նրանց ճորտացնում: Աշխատութեան վերջում հեղինակը տուել է Արեւմտեան Հայաստանում տարածուած չափերի ու կշիռների վերաբերեալ յաւելուած:

1970ականներին Համբարեանը ձեռնամուխ եղաւ արեւմտահայերի ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրութեանը՝ հրատարակելով *Երիտթուրքերի Ազգային եւ Հողային Քաղաքականութիւնը եւ Ազատագրական Շարժումները Արեւմտեան Հայաստանում (1908-1914)* մենագրութիւնը: Այս աշխատութեամբ Համբարեանը ցոյց տուեց, որ օսմանեան լծի տակ հարստահարուող արեւմտահայութիւնը, հակառակ երիտթուրքերի խոստումներին, ոչ միայն չազատուեց ազգային ու սոցիալական կեղեքումներից, այլեւ դրանք առաւել խորացան ու բիրտ ձեւեր ընդունեցին: Դրանց վկայութիւնն էին Կիլիկիայում իրականացուած կոտորածները: Հեղինակը ցոյց է տալիս երիտթուրքերի դէմ արեւմտահայութեան պայքարի մանրամասները, բնութագրում ազգային կուսակցութիւնների դերը Իթթիհատի կառավարման ժամանակաշրջանում: Պատմաբանն անդրադառնում է նաեւ հայկական հարցի վերաբացմանը, ընդգծում այն սպասելիքները, որոնք փայփայում էին հայ հասարակաշերտերը: Տուեալ ժամանակաշրջանի պատմական իրողութիւնները շեշտելով, հեղինակը չի սահմանափակում սոսկ արեւմտահայերով: Նա անդրադառնում է նաեւ Թուրքիայում ապրող միւս ժողովուրդների՝ ասորիների, քրդերի հիմնահարցերին:

1980ականներին Համբարեանը նորից անդրադարձաւ Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանի սոցիալ-տնտեսական յարաբերութիւններին՝ վեր հանելով նրանցում կապիտալիզմի զարգացման ընդհանրութիւններն ու տարբերիչ գծերը: Զուգահեռներ անցկացնելով Հայաստանի երկու հատուածների միջեւ, Համբարեանը մատնանշում է, որ դրանք գաղութներ էին, Արեւելեան Հայաստանը Ռուսաստանի, իսկ Արեւմտեան Հայաստանը Թուրքիայի գաղութ էր: Այդուհանդերձ, Արեւելեան Հայաստանի բնակչութիւնն առաւել բարւոք վիճակում էր, եւ Արեւելեան Հայաստանում կապիտալիզմի զարգացումն առաւել չօշափելի էր:

1990ին գիտնականը հրատարակեց նոր աշխատութիւն՝ *Հայ Հասարակական-Քաղաքական Միտքը Արեւմտահայութեան Ազատագրութեան Ուղի-*

ների Մասին վերնագրով: Այս գրքում հեղինակը ներկայացրել է արեւմտահայութեան ազատագրութեան հիմնախնդիրների վերաբերեալ հայ հասարակական հոսանքների դիրքորոշումը, այնուհետեւ առանձին հատուածում քննութեան է առել նոյն հիմնախնդրի վերաբերեալ ազգային կուսակցութիւնների մօտեցումները: Հեղինակը կանգ է առել ազգային կուսակցութիւնների ծաւալած պայքարին, ներկուսակցական ընդվզումներին ու պառակտումներին: Ընդհանրացնելով՝ Ազատ Համբարեանը յանգում է այն մտքին, որ ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին, հայ հասարակական-քաղաքական բոլոր ուժերը ձգտում էին արեւմտահայութեանն ազատագրել օսմանեան բիրտ լծից, բայց մեր ժողովրդի ազգային խնդիրները լուծուեցին մեծ պետութիւնների շահախնդրութիւնների հետեւանքով, որոնք ճարպկօրէն օգտագործելով՝ երիտթուրքերը հայերին զանգուածաբար ոչնչացրին:

1999ին հրատարակած իր *Ազատագրական Շարժումներն Արեւմտեան Հայաստանում* մենագրութեան մէջ հեղինակն անդրադառնում է Ի. դարի սկզբին սուլթանական կառավարութեան վարած հայաջինջ քաղաքականութեանը, ցոյց է տալիս արեւմտահայութեան ծանր դրութիւնը, լուսաբանում է հայ հասարակական ուժերի դիրքորոշումը, հայդուկային շարժումները, քրդական ելոյթները եւ այլ հարցեր: Յետմահու՝ 2005ին, լոյս տեսաւ Ազատ Համբարեանի մենագրութիւնը՝ *Արեւմտեան Հայաստանի Տնտեսութիւնը (1856-1914)*: Եթէ *Ագրարային Յարաբերութիւնները Արեւմտեան Հայաստանում* գրքում լուսաբանուել են Արեւմտեան Հայաստանի տնտեսութեան պատմութեան մասնակի հարցեր, ապա այս վերջին գրքում ներկայացուել են Արեւմտեան Հայաստանի տնտեսութեան պատմութեան բոլոր հարցերը:

Համբարեանը մեծ ներդրում ունի ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի հրատարակած *Հայ Ժողովրդի Պատմութիւն* ութհատորեակի VI հատորի պատրաստման գործում:

Համբարեանը զբաղուել է նաեւ ժողովրդագրութեան հարցերով: Նրա ղեկավարութեամբ Պատմութեան Ինստիտուտի Նոր Դարի Պատմութեան Բաժնի աշխատակիցները հրատարակել են 1917ի մարդահամարի նիւթերը:

Նրան հետաքրքրել են քրդագիտութեան հարցերը եւս: 1957ին նրա հեղինակութեամբ լոյս է տեսել *Քրդերը Խորհրդային Հայաստանում* ուսումնասիրութիւնը, որտեղ ներկայացուել են քրդերի սոցիալ-տնտեսական կեանքը նախախորհրդային եւ խորհրդային տարիներին:

Համբարեանը մասնակցել է *Հայոց Պատմութիւն* դպրոցական դասագրքի ստեղծման աշխատանքներին, գրել այդ դասագրքի առանձին գլուխները: Նա լուրջ ներդրում ունի պատմաբան կադրերի պատրաստման գործում: Նրա ղեկավարութեամբ շատերը պաշտպանել են թեկնածուական ատենախօսութիւններ: Նա երկար տարիներ դասախօսական աշխատանք է կատարել հանրապետութեան բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում, գիտական զեկուցումներով հանդէս է եկել միջազգային գիտաժողովներում:

Ազատ Համբարեանը վախճանուեց 17 Յուլիսի 2003ին, Երեւանում:

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐԵԱՆ
history@sci.am

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԼԱՅԵԱՆ
(1908-2003)



Յարութիւն Գալայեան ծնած է 2 Յունիս 1908ին, Այնթապ, Կիլիկիա: Մնծ Եղեռնին կը նահատակուին հայրն ու երէց եղբայրը, մինչ իրք, մօր եւ երկրորդ եղբօր հետ գաղթական կը հասնի Հալէպ, ուր կը ստանայ նախակրթութիւնն ու ապա՝ երկրորդականի ուսումը Ալեփպօ Գոլէճին մէջ: Կ'անցնի Պէյրութ, ուր Ամերիկեան Համալսարանին մէջ կը հետեւի երկրաչափութեան:

Գալայեան մուտք կը գործէ ճարտարապետական կոթողներու պահպանման եւ նորոգման աշխատանքներու ասպարէզ: 1938-1944 կը պաշտօնավարէ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ: Պէյրութ վերադարձին, մինչեւ 1977 կը պաշտօնավարէ Լիբանանի Հնագիտական Բաժանմունքին մէջ, միաժամանակ այցելու դասախօս կը նշանակուի Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ:

Իր վաստակը մեծ է Փալմիրի (Սուրիա), Պաալպէքի, Այնճարի, Պիպլոսի (Լիբանան) ճարտարապետական պատմական կոթողներու վերականգնման ու պահպանման աշխատանքներուն մէջ:

1978ին իր փորձառու մասնագէտի մասնակցութիւնը կը բերէ Ճարաշի եւ Փեթրայի (Յորդանան) ճարտարապետական կոթողներու վերականգնման աշխատանքներուն:

1987ին, վերջնականօրէն կը տեղափոխուի Նիւ Եորք:

Լիբանանին մատուցած իր ծառայութիւններուն համար, Գալայեան 1972ին կը պարգեւատրուի Սայիտ Աբլ մրցանակով, իսկ 2001ին, Լիբանանի Մշակոյթի Նախարար Ղասսան Սալամէ, յատուկ հանդիսութեան մը ընթացքին, բարձր գնահատելով անոր վաստակը, զայն կը պատուէ Պատուոյ Գիրով ու Յուշանուէրով:

Գալայեան հեղինակ է գիտական ուսումնասիրութիւններու: Աշխատակցած է *Սիխուռ*ին, ինչպէս նաեւ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին (հատոր Է. եւ Ժ.): Ան առանձնապէս հետաքրքրութիւն ցոյց տուած է հայ հեթանոսական կրօնքի, հայ ճարտարապետութեան եւ Ե. դարու հայ մատենագիրներու հանդէպ: Իր մօտեցումը հարցերուն՝ թուային վերլուծութիւններու ճամբով, ինքնատիպ է եւ հետաքրքրական:

Յարութիւն Գալայեան մահացաւ Մ. Նահանգներու մէջ, 21 Դեկտեմբեր 2003ին:

ՀՀՀ

ԱՐԲԱԿ ՄԽԻԹԱՐԵԱՆ
(1911-2004)

Եգիպտաբան, Հին Աշխարհի արուեստներու եւ կրօններու տեսաբան, պատմաբան, հայ մանրանկարչութեան մասնագէտ, հնագէտ Արբակ Մխիթարեան ծնած է 24 Յունուար 1911ին, Թանթա, Եգիպտոս:

Նախնական կրթութիւնը ստացած է Երուսաղէմ, արաբական դպրոցի մէջ, իսկ մայրենի լեզուն սորված է տունը: 1925էն ուսումը շարունակած է Պելճիքա եւ Փարիզ, հետեւելով արեւելագիտութեան, մասնաւորապէս՝ եգիպտագիտութեան: Մասնակցած է Եգիպտոսի եւ Սուտանի մէջ կատարուած բազմաթիւ պեղումներու, օտար մամուլին մէջ գրած է արժէքաւոր հետազօտութիւններ՝ հնագիտական տարբեր հարցերու մասին: 1929ին եղած է Պրիւքսէլի Էլիզապէթ Թագուհիի Անուան Եգիպտաբանութեան Հիմնարկի աշխատակից: 1947ին կարգուած է նոյն հիմնարկի ընդհանուր քարտուղարը եւ դարձած Վարչական Խորհուրդի անդամ: 1946-76 եղած է Պրիւքսէլի Արուեստի եւ Պատմութեան Թագաւորական Թանգարանի բաժնի վարիչ: 1963ին՝ արաբերէնի դասախօս՝ Պրիւքսէլի Ազատ Համալսարանին: 1968-69ին ուսումնասիրած է Երուսաղէմի հայկական գանձերն ու գանձարանը: Չեկուցումներ տուած է Հայաստանի մէջ (1963, 1985 եւ 1987ին) եւ արեւելագիտական համագումարներու:

Մխիթարեանի գրիչին կը պատկանին *Introduction A l'Eygypte* (Պրիւքսէլ, 1956); *Religions Du Monde. L'Egypte* (Փարիզ, 1964), *Tresors Du Patriarcat Armenien De Jerusalem* (Երուսաղէմ, 1969), *Les Arts De l'Islam* (Պրիւքսէլ, 1976), *La Peinture Egyptienne* (Ժընեւ, 1954. Բ. հրտ.՝ Փարիզ, 1979), *Miniatures Armeniennes d'Isaphan* (Սիրարփի Տէր Ներսէսեանի հետ, Պրիւքսէլ, 1986):

Արբակ Մխիթարեան մահացաւ 27 Ապրիլ 2004ին:

<<<

ԼԷՈՆԱՐՏՕ ԱԼԻՇԱՆ
(1951-2005)

Հայա-իրանա-ամերիկացի (ինք այսպէս կը քնութագրէր՝ Armenian-Iranian-American հերթականութեամբ) գրող, բանաստեղծ, գրականագէտ, գրաքննադատ, Եռաբայի Համալսարանի Պարսկերէնի եւ Մերձաւոր Արեւելքի Ուսումնասիրութիւններու փրոֆեսոր Լէոնարտօ Ալիշանը ծնած է Թեհրան, 1951ին: Աւարտած է Թեհրանի Պետական Համալսարանի Պարսկերէն եւ Անգլերէն Լեզուներու եւ Գրականութեան Բաժանմունքը: 1973ին անցած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ 1981ին ստացած դոկտորայի աստիճան՝ համեմատական գրականութեան մէջ Թեքսասի Համալսարանէն: 1978-

1997՝ պարսկական եւ համեմատական գրականութիւն դասաւանդած է Եռաբայի Համալսարանը:

Մասնակցած է շարք մը գիտաժողովներու, ներկայացնելով զեկուցումներ պարսիկ եւ հայ դասական եւ ժամանակակից գրականութեան վերաբերեալ: Զեկուցումներ կարդացած է որպէս հրաւիրեալ-դասախօս Պրրքլիի Քալիֆորնիայի, Լոս Անճելոսի Հարաւային Քալիֆորնիայի, Վանքուվըրի Բրիտանական Քոլումպիայի, Շիքակոյի, Թեքսասի, Քոլումպիայի, Նիւ Եորքի Համալսարաններուն մէջ, ինչպէս նաեւ Երեւանի Պետական Համալսարանին մէջ: Իր ուսումնասիրական գրչին կը պատկանին՝ "The Colophons Of Armenian Manuscripts (1301-1680) As A Literary Genre" (*Ararat*, 1981); "Crucifixion Without 'The Cross': The Impact Of The Genocide On Armenian Literature" (*Armenian Review*, 1985); "The Sacred World Of *Sasna Tsrer*: Steps Toward An Understanding" (*Journal Of The Society For Armenian Studies*, 1986); "Aliance And Encounter In The Waste Land: The Impact Of The West On Turks And Armenians Prior To Genocide" (*Literarure East And West*, 1987); "Sacred Archetypes And The Armenian Woman" (*Journal Of The Society For Armenian Studies*, 1989); "An Exercise On A Genre For The Genocide And Exorcism" (*The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian, New York: St Martin Press, 1992, pp. 340-354).

Ամերիկայի պարսիկ համայնքի համար անն փնտռուած գրականագէտ էր, որ պարսիկ գրականութիւնը գիտէր ծայրէ ի ծայր՝ հնագոյն ժամանակներէն մինչեւ ներկայ օրերը: Անոր հայրենիքը Արմիրանն էր, ինչպէս կը գրէր, եւ ինքը՝ այդ կապակցութեան պտուղը: Ալիշան ծնունդն էր հայկական, իրանական եւ ամերիկեան մշակոյթներու միաձուլման:

Ամերիկեան գրականութեան անդաստանին մէջ ան ճանչցուած էր որպէս նուրբ ու զգայուն հոգի, որ կը տուայտի մարդկութեան տառապանքներով: Ան ունի բանաստեղծութիւններու երկու առանձին հատորներ՝ *Dancing Barefoot On Broken Glass* (1991) եւ *Through A Dewdrop* (2000), այս վերջինը՝ ճափոնական հայքու, սենրիու եւ քանքա ժանր-թեքնիքով:

Լէոնարտս Ալիշան մահացաւ 9 Յունուար 2005ին:

ՀՀՀ

ԼԵՒՈՆ ՂԱԶԱՆՉԵԱՆ
(1946-2005)

Բանասիրական գիտութիւնների թեկնածու, դոցենտ, Երեւանի Պետական Համալսարանի Օտարերկրեայ Քաղաքացիների Նախապատրաստական Ֆակուլտետի (ՕՔՆՖ) Հայոց Լեզուի Ամբիոնի վարիչ Լեւոն Յովհաննէսի Ղազանչեանը ծնուել է 7 Օգոստոսի 1946ին, Երեւանում:

1964ին աւարտել է Երեւանի Ղազարոս Աղայեանի Անուան Միջնակարգ Դպրոցը եւ նոյն տարում ընդունուել է ԵՊՀի Հայկական Բանասիրական

Ֆակուլտետը: Ուսման մէջ ցուցաբերած ակնառու յաջողութիւնների համար նա դարձել է Հրաչեայ Աճառեանի անուան կրթաթոշակառու: Գերազանցութեամբ աւարտելով համալսարանը՝ 1969ին ընդունուել է ՀԽՍՀ ԳԱ Հրաչեայ Աճառեանի Անուան Լեզուի Ինստիտուտի ասպիրանտուրա՝ «Տերմինաբանութիւն» մասնագիտութեամբ: 1975ին պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Հայերէն Լեզուաբանական Տերմինների Համակարգային Կառուցուածքային Վերլուծութիւն» թեմայով եւ ստացել բանասիրական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան: Այս աշխատութիւնը լոյս է տեսել *Լեզուի եւ Ոճի Հարցեր* ժողովածուում (պրակ 4, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1977, էջ 200-37):

1973-1977 Ղազանչեանը աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Լեզուի Ինստիտուտում որպէս կրտսեր գիտաշխատող, այնուհետեւ՝ աւագ գիտաշխատող, միաժամանակ հայոց լեզուի դասընթաց է վարել Վալերի Բրիւսովի Անուան Ռուսաց Եւ Օտար Լեզուների Մանկավարժական Ինստիտուտում:

1980 Դեկտեմբերից մինչեւ անժամանակ մահը Ղազանչեանը ղեկավարել է ԵՊՀի ՕՔՆՖ Հայոց Լեզուի Ամբիոնը՝ հայերէն դասաւանդելով սփիւռքահայ եւ օտարազգի ուսանողների:

Գիտամանկավարժական գործունէութիւնը նրան բազմակողմանիօրէն դրսեւորուելու հնարաւորութիւններ ընձեռեց: Նրա ղեկավարութեամբ մշակուեցին ու գործածութեան դրուեցին հայոց լեզուի ուսուցման ծրագրեր, մեթոդական ուղեցոյցներ, որոնց շնորհիւ կանոնակարգուեց սփիւռքահայ եւ օտարազգի ուսանողների՝ հայերէնի դասաւանդման գործընթացը:

Դասախօսական աշխատանքին զուգընթաց Ղազանչեանը զբաղուել է լեզուաբանութեան, մասնաւորապէս հայոց լեզուի ինչպէս տեսական, այնպէս էլ գործնական խնդիրների ուսումնասիրութեամբ: Նա որոշակի ներդրում ունի հայերէնի տերմինաբանութեան՝ իբրեւ բառագիտութեան առանձին գիտաճիւղի ուսումնասիրման բնագաւառում:

Ղազանչեանը հրատարակել է նաեւ «Լեզուաբանական Ուսումնասիրութիւնների Լեզուի Ու Տերմինաբանութեան Գործառութեան Արդի Վիճակը Եւ Կարգաւորման Խնդիրները» (*Բանբեր Երեւանի Համալսարանի*, 1979, p. 3), «Հայերէնի Տերմինաբանութեան Ճիւղային Տարբերացումը Եւ Նրա Կատարելագործման Ուղիները» (*Հայոց Լեզու եւ Գրականութիւն. Գիտական Աշխատութիւնների Միջբուհական Ժողովածու*, պրակ 1-2, 1983), «Տերմինների Պատճառաբանուածութիւնը Գիտութեան Լեզուում Եւ Տերմինաբանական Համակարգերում» (*Լեզուի եւ Ոճի Հարցեր*, պրակ 8, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1984) ուսումնասիրութիւնները: 1986ին Մոսկուայում լոյս տեսած *Միութենական Հանրապետութիւնների Լեզուների Տերմինաբանութիւն* ռուսերէն ժողովածուում ընդգրկուել է նրա «Հայոց Լեզուի Տերմինաբանութեան Ակնարկներ» աշխատութիւնը:

Լեւոն Ղազանչեանը դասական ուղղագրութեան վերականգնման ջատագովներից էր: 2002ին լոյս տեսած *Խոտոր Ուղղախօսութիւն* գրքոյկում նա եւ հեղինակակից Վալերի Միրզոյեանը քննարկել են Հայաստանում գործող ուղ-

դագրութեան պատճառած ուղղախօսական-արտասանական հիմնական սխալները, տարաբնոյթ օրինակների հիման վրայ ցոյց տուել, որ դասական ուղղագրութիւնից հրաժարումը առաջ է բերել հայերէնի ուղղախօսութեան խաթարումներ:

Լեւոն Զազանչեանը մահացաւ 2005ին Մարտին:

ՍՈՖԻԿ ԲԱՂՈՒՄԵԱՆ
arusus@yandex.ru



ԱՐԹԻՒՐ ՊԷՅԼԷՐԵԱՆ
(1925-2005)

Ծնած է Մեծ Կոզի (Պոլիս) 26 Դեկտեմբեր 1925ին, բարեկեցիկ ընտանիքի մը մէջ: Յաջորդաբար յաճախած է Պոլսոյ Մերամէջճեան, Միսիթարեան եւ Կեդրոնական Վարժարանները: Կը տիրապետէ հայերէն, թրքերէն, գերմաներէն եւ ֆրանսերէն լեզուներու: Յաճախած է Պէյազէթի Համալսարանը, Պոլիս, ուր հետեւած է Գրականութեան եւ Հնախօսութեան ճիւղերուն, Արեւմտեան Արուեստի եւ Թուրք Իսլամական Արուեստի դասընթացքներուն, ինչպէս նաեւ արաբատառ օսմաներէնին, ինչ որ իր յետագայ աղբիւրային ուսումնասիրութիւններուն համար մեծ օգտակարութիւն ունեցած է:

6 Սեպտեմբեր 1955ի Պոլսոյ հակայոյն եւ հակահայ ցոյցերը զինք մղեցին երկիրը թողու եւ Փարիզ հաստատուելու 1959ին: Արձանագրուելով Սորպոնի Համալսարան, ան ինքզինք նուիրեց պատմութեան ուսումնասիրութեան: 1972ին ներկայացուցած իր աւարտաճառը իբրեւ նիւթ ունէր մինչեւ օրս անտիպ մնացած 400 էջնոց "Հայկական Հարցին Ծագումը Սան Սթեֆանոյի Դաշինքէն Պերլինի Վեհաժողով (1878)" աշխատասիրութիւնը, որուն չնորհիւ արժանացաւ Պատմութեան Դոկտորի տիտղոսին:

1983ին յոյս ընծայեց 20 տարիներու պրպտումներու արդիւնք եղող *Les Grandes Puissance, l'Empire Ottoman Et Les Arméniens Dans Les Archives Françaises, 1914-1918*, 792 էջնոց ուսումնասիրութիւնը, որ նմանապէս անտիպ մնացած պրպտումներուն միայն մէկ մասին հրատարակութիւնն է: Ջայն պատրաստելու համար՝ ան հետախուզած է եւրոպական պետութիւններուն, ԱՄՆի եւ ՍՍՀՄի արխիւները: Միաճգամայն, ան աշխատակցած է Փարիզի *Յառաջ*ին, *Աշխարհ*ին, *Revue Des Études Arméniennes*ին, *Հասկ Հայագիտական Հանդէս*ին եւ տարբեր հրատարակութիւններու, ինչպէս նաեւ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին (հատորներ ԺԲ.-ԺԵ., ԺԷ., ԺԸ., ԻԱ., ԻԳ.):

Ան Հայկական Հարցին լաւագոյն մասնագէտներէն մէկն էր, արխիւային պրպտումներու մարդը:

Արթիւր Պէյլէրեան մահացաւ Փարիզ, 25 Մարտ 2005ին:

Ա. Կ.

ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
(1925–2005)

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Գեանջումի Աբրահամեանը ծնուել է 14 Փետրուարի 1925ին Արցախի Հադրութի շրջանի Տումի գիւղում: 1942ին աւարտելով գիւղի միջնակարգ դպրոցը՝ զօրակոչուել է բանակ, մասնակցել Հայրենական Պատերազմի մարտերին, որոնցից մէկի ժամանակ էլ ծանր վիրաւորուել է եւ ապաքինուելուց յետոյ վերադարձել իր ծննդավայրը: Ուսման հանդէպ անյագ ծարաւը նրան բերել է Երեւան, որտեղ 1950ին աւարտել է Պետական Համալսարանի Բանասիրութեան Ֆակուլտետը: Նրա ուսուցիչներն են եղել մեծանուն հայագէտներ Գրիգոր Ղափանցեանը, Գուրգէն Սեւակը, Էդուարդ Աղայեանը, ովքեր, ի դէմս իրենց շնորհալի ուսանողի, տեսնում էին ապագայ խոստմնալից լեզուաբանին:

1952-1953 Աբրահամեանը դասաւանդել է ԵՊՀում եւ միաժամանակ աւարտել նոյն համալսարանի ասպիրանտուրան: 1953ին նրան շնորհուել է բանասիրական գիտութիւնների թեկնածուի աստիճան: Նոյն թուականից սկսել է աշխատել ՀԽՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրաչեայ Աճառեանի Անուան Լեզուի Ինստիտուտում որպէս աւագ գիտաշխատողի պաշտօնակատար, այնուհետեւ՝ 1956ից աւագ գիտաշխատող: 1953-1958 համատեղութեամբ դասախօսել է Լենինականի (այժմ՝ Գիւմրի) Միքայէլ Նալբանդեանի Անուան Մանկավարժական Ինստիտուտում: Այդ ընթացքում նրան շնորհուել է դոցենտի կոչում (1956): 1959ից մինչեւ իր կեանքի վերջը Աբրահամեանը եղել է Հրաչեայ Աճառեանի Անուան Լեզուի Ինստիտուտի Ժամանակակից Հայոց Լեզուի Բաժնի վարիչը, 1962ից՝ ՀՀ Կառավարութեանն Առընթեր Լեզուի Պետական Տեսչութեան Հայերէնի Բարձրագոյն Խորհրդի անդամ:

1966ին նրան շնորհուել է բանասիրական գիտութիւնների դոկտորի աստիճան, իսկ 1970ին՝ պրոֆեսորի կոչում: 1972-1992 համատեղութեամբ դասախօսել է Երեւանի Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտում: 1991ին նա Երեւանի Հրաչեայ Աճառեանի Անուան Համալսարանի Հայոց Լեզուի Ամբիոնի վարիչն էր: 1996ին ընտրուել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, նոյն թուականին՝ նաեւ ՀՀ ԳԱԱ Հումանիտար Գիտութիւնների Բաժանմունքի Բանասիրութեան եւ Արուեստագիտութեան Պրոբլեմային Գիտական Խորհրդի նախագահ, բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ:

Ականաւոր լեզուաբանի գիտական հետազօտութիւնների շրջանակը լայն է ու ընդգրկում: Նա ծանրակշիռ ներդրում ունի ժամանակակից հայերէնի կառուցուածքի, նրա զարգացման օրինաչափութիւնների ուսումնասիրման ու կանոնակարգման ոլորտում: Ոճագիտութիւնը եւ դրան առնչուող խօսքի մշակոյթի խնդիրները եւս եղել են գիտնականի ուշադրութեան ծիրում: Նշանակալից է նրա վաստակը նաեւ հայոց լեզուի գործնական ուսուցման բնագաւառում. նա մեծ աշխատանք է կատարել դպրոցում մայրենիի ուսուցման

որակը բարելաւելու, հայոց լեզուի ծրագրերը, դասագրքերը բարեփոխելու, նորացնելու ուղղութեամբ, գրել է դպրոցական ու բուհական դասագրքեր, ձեռնարկներ, կատարել բառարանագրական աշխատանք, խմբագրել մեծ քանակութեամբ գրքեր: Շուրջ երկու տասնեակ մենագրութիւններով, հարիւրից աւելի յօդուածներով անուանի գիտնականը իր ներդրումն է արել հայերէնագիտութեան մեջ: Իր ուսումնասիրութիւններում նա համակողմանիօրէն քննութեան է ենթարկել հայոց լեզուի կառուցուածքը՝ վերանայելով, ճշգրտելով, նորովի մեկնաբանելով լեզուական, բերականական ըմբռնումներ:

Արդի Հայերէնի Դերանունները (Երեւան, 1956), *Ժամանակակից Հայերէնի Չթերուող Խօսքի Մասերը* (Երեւան, 1959), *Չթերուող Խօսքի Մասերը Եւ Նրանց Բառական Ու Քերականական Յատկանիշների Փոխյարաբերութիւնը Ժամանակակից Հայերէնում* (Երեւան, 1965) մենագրութիւններում Աբրահամեանը համակողմանիօրէն քննել է հայերէնի ձեւաբանական կառուցուածքի առանձին հրատապ, տարակարծութիւնների տեղիք տուած խնդիրները: Վերոնշեալ առաջին մենագրութեան մեջ նա խորութեամբ ուսումնասիրել է դերանունը, նրա ձեւաբանական, շարահիւսական առանձնայատկութիւնները, ոճական կիրառութիւնները, մի խօսքով՝ տուել է դերանուան սպառիչ նկարագրութիւնը: Իսկ յաջորդ երկու աշխատութիւններում հիմնաւոր վերլուծութիւններով նա դասակարգել է չթերուող խօսքի մասերը եւ առաջին անգամ հայ բերականագիտութեան մեջ որպէս ինքնուրոյն խօսքի մաս՝ առանձնացրել է վերաբերականը (եղանակաւորող բառ):

Հայերէնի շարահիւսական կառուցուածքի ուսումնասիրութիւնը եւս եղել է գիտնականի հետաքրքրութիւնների շրջանակում: *Ժամանակակից Հայերէնի Շարահիւսութեան Մի Քանի Հարցեր* (Երեւան, 1962) աշխատութեան մեջ առաջին անգամ հայ բերականագիտութեան մեջ գիտականօրէն առանձնացուել եւ հակադրուել են պարզ նախադասութեան երկու հիմնական արտայայտութիւնները՝ միակազմ եւ երկկազմ նախադասութիւնները: Ի դէպ, այս երկու գիտաբառերը այնուհետեւ շրջանառութեան մեջ դրուեցին որպէս անուանումներ: Աբրահամեանը սպառիչ կերպով քննութագրել է երկկազմ նախադասութիւնների կառուցուածքային բոլոր կաղապարները եւ ենթակաղապարները: Եթէ աւանդական շարահիւսագիտութեան մեջ նախադասութեան անդամ լրացումները խմբաւորուել էին ըստ գլխաւոր անդամների՝ ենթակայի եւ ստորոգեալի հետ դրանց ունեցած յարաբերակցութեան եւ անուանուել ենթակայի եւ ստորոգեալի լրացումներ, ապա Աբրահամեանի սկզբունքով դրանք խմբաւորուեցին իբրեւ գոյականական անդամի եւ բայական անդամի լրացումներ: Սա դասակարգման նոր, առաւել գիտական սկզբունք էր եւ յետագայում դրուեց նաեւ այլ լեզուաբանների աշխատութիւնների հիմքում:

Աբրահամեանը հայերէնի շարահիւսութեան համակարգը լրացրել է նոր՝ «Նախադասութիւնների Կապակցութիւն» բաժնով (*Ժամանակակից Հայերէնի Քերականութիւն*, Երեւան, 1975, *Ժամանակակից Հայոց Լեզու* ակադեմիական հրատարակութիւն, հատոր Գ, Երեւան, 1976), համակարգայնութիւն է մտցրել նաեւ բարդ ստորադասական նախադասութեան կառուցուածքի գնա-

հատման մէջ՝ առանձնացնելով երկբաղադրիչ եւ բազմաբաղադրիչ բարդ նախադասութիւնները իրենց տարատեսակներով:

Աբրահամեանը նշանակալից ներդրում ունի նաեւ հայերէնի բառագիտութեան երեք բաժինների՝ իմաստաբանութեան, բառակազմութեան եւ բառապաշարի գիտական ուսումնասիրութեան ասպարէզում: *Ժամանակակից Գրական Հայերէն* (Երեւան, 1981) մենագրութեան «Բառագիտութիւն» բաժնում հարուստ փաստական նիւթի վերլուծութեամբ նա քննել է արդի հայերէնի բառապաշարը, բառակազմութիւնը՝ ելակէտ ընդունելով մայրենի լեզուի փաստերն ու կառուցուածքը, գործող օրինաչափութիւնները:

Հայերէնի բառապաշարին վերաբերող ուսումնասիրութիւններում Աբրահամեանը չի շրջանցել նաեւ ոճագիտութեանը, խօսքի մշակոյթին առնչուող խնդիրները: Հայերէնի գիտական եւ պաշտօնական ոճերի առաջին ուսումնասիրութիւնները պատկանում են նրան: Ժամանակակից հայերէնի գիտական ոճի հանգամանալից մի ուսումնասիրութիւն է «Գիտական Ոճը Եւ Նրա Առանձնայատկութիւնները» յօդուածը (*Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1982, թ. 2) եւ «Պաշտօնական Ոճը Եւ Նրա Առանձնայատկութիւնները» (*Հայոց Լեզու Եւ Գրականութիւն*, պրակ 1-2, էջ 71-84) ուսումնասիրութիւնը:

Աբրահամեանի *Հայոց Լեզու. Բառ Եւ Խօսք* իր տեսակի մէջ առաջին ուսումնական ձեռնարկը (Երեւան, 1978, 1986) նախատեսուած է միջնակարգ դպրոցի 7-8րդ դասարանների աշակերտների նախասիրական պարապմունքների համար: Գիրքը լաւագոյն տեղեկատու եւ խորհրդատու է հայերէնի խօսքի մշակոյթի, գործնական ոճաբանութեան ուսուցման ոլորտում: Գիտական դժուարըմկալելի նիւթը մատչելի ու հրապուրիչ ներկայացնելու ունակութիւնը յատուկ է Աբրահամեանի լեզուին ու ոճին, եւ դրա շնորհիւ է, որ այս գիրքը սիրելի է դարձել դպրոցականներին եւ ուսուցիչներին:

Ընդհանրապէս Աբրահամեանի գիտահետազօտական աշխատութիւնները, յօդուածները, դասագրքերն ու ձեռնարկները, օժտուած են խոր գիտականութեամբ, միաժամանակ ունեն գործնական-կիրառական ուղղուածութիւն:

Մեծ է Աբրահամեանի վաստակը նաեւ հայոց լեզուի բուհական ծրագրերի եւ դասագրքերի ստեղծման գործում: Դեռեւս 1959ին նրա հեղինակութեամբ լոյս է տեսել Սփիւռքի դպրոցների համար կազմած *Հայոց Լեզուի Դասագիրքը*, որտեղ ընդգրկուած է արեւմտահայ գրական լեզուի կառուցուածքը՝ հնչիւնաբանութիւն, բառագիտութիւն, ուղղագրութիւն, ձեւաբանութիւն, շարահիւսութիւն բաժիններով: Սոյն դասագիրքը կատարել է իր առաքելութիւնը եւ ունեցել է նաեւ 2րդ հրատարակութիւն: Հայոց լեզուի ուսուցման արդիւնաւէտութեանը մեծապէս նպաստել են Աբրահամեանի *Աշակերտի Խօսքի Զարգացումը* (1973), *Հայոց Լեզու. Շարահիւսութիւն* (1984), *Հայոց Լեզու. Շարահիւսութիւն, Կէտադրութիւն (7րդ դասարանի համար)* (1988), *Հայոց Լեզու. Շարահիւսութիւն, Կէտադրութիւն, Խօսք (8րդ դասարանի համար)* (1998), *Հայերէնի Կէտադրութիւն* (1999), *Մենք, Մեր Լեզուն Եւ Մեր Դպրոցը* (2001) դասագրքերը, ձեռնարկներն ու ուսումնասիրութիւնները: Այս շարքում առանձնանում է 1984ից Հայաստանի դպրոցների 7-8րդ դասարանների համար

գործածութեան մէջ մտած *Հայոց Լեզու. Շարահիւսութիւն* դասագիրքը: Գիրքը նպաստեց եւ այսօր էլ շարունակում է լուսաբանել նպաստել աշակերտների խօսքի մշակմանը, տրամաբանական մտածողութեան զարգացմանը, իսկ դասանիւթին կից տրուող վարժութիւնները, առաջադրանքները ուսուցողականից բացի ունեն դաստիարակչական, հայրենասիրական ուղղուածութիւն:

ՀՀ հայերէնի դպրոցական դասագրքերի ստեղծման աշխատանքները ղեկավարելու պատիւը եւս նրան վստահուեց, ու փորձառու գիտնական-ուսուցիչը ամենայն պատասխանատուութեամբ եւ նուիրումով կատարեց նաեւ այս գործը՝ միշտ ունենալով այն համոզմունքը, որ կրթական ոլորտի բոլոր տեսակի բարեփոխումները առաջին հերթին պէտք է ապահովեն ազգային մշակոյթի, լեզուի եւ ազգային դպրոցի անխաթար զարգացումը, հակառակ դէպքում դրանք կը դառնան վտանգաւոր՝ ազգի ապագայի համար:

Աբրահամեանը հեղինակել է նաեւ *Հայոց Լեզուի Կէտադրութիւն* ուսումնական ձեռնարկը (Երեւան, 1992, վերանայուած եւ լրացուած հրատարակութիւն՝ 2002ին) եւ *Մեր Լեզուն եւ Մեր Դպրոցը* (2001) գրքերը:

1985ին Աբրահամեանը պարգեւատրուել է Հայրենական Պատերազմի Ա. աստիճանի շքանշանով, 1986ին՝ Խաչատուր Աբովեանի մեդալով: Նրա գիտական վաստակի եւ քաղաքացիական նկարագրի գնահատութիւնը եղել է 2001ին իր հայրենի գիւղի միջնակարգ դպրոցը այդ հաստատութեան նախկին սանի՝ Սերգէյ Աբրահամեանի անունով կոչելը:

Աբրահամեանի թողած պատկառելի ժառանգութիւնը իրաւունք է տալիս նրա անունը դնելու հայերէնագիտութեան նուիրեալների անունների կողքին:

Սերգէյ Աբրահամեանը վախճանուեց 30 Մարտի 2005ին, Երեւանում:

ՍՈՖԻԿ ԲԱՂՈՒՄԵԱՆ
arusus@yandex.ru

ՎԱՐԴԳԷՍ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
(1924-2005)

Պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի (ՀՀԳԱԱ) ակադեմիկոս Վարդգէս Ալեքսանի Միքայէլեան ծնած է Հայաստանի Հանրապետութեան Աշոցքի շրջանի Ղազանչի գիւղը, 5 Դեկտեմբեր 1924ին:

1941ին, միջնակարգ դպրոցը աւարտելէ յետոյ որպէս ուսուցիչ աշխատած է Աշոցքի շրջանի Քեֆլի եւ Քոռաղբիւր գիւղերուն մէջ: 1942-1947 զօրակոչուած է բանակ եւ մասնակցած Խորհրդային Միութեան Հայրենական Մեծ Պատերազմին: 1952ին աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Միջազգային Յարաբերութիւններու Ֆակուլտետը՝ գերազանց դիպլոմով, իսկ 1955ին՝ նոյն համալսարանի ասպիրանտուրան եւ ստացած է պատմական գիտութիւններու թեկնածուի աստիճան, որմէ անմիջապէս ետք՝ մինչեւ 1959 աշխատած է *Խորհրդային Հայաստան* ամսագրի խմբագրութեան մէջ՝ իբրեւ

բաժնի վարիչ: 1951ին անդամակցած է Խորհրդային Միութեան Կոմունիստական Կուսակցութեան (ԽՄԿԿ):

1960-1972 եղած է Խորհրդային Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի (ԽՀԳԱ) Պատմութեան Ինստիտուտի աւագ գիտաշխատող, 1988էն՝ բաժնի վարիչ: 1965ին, ստացած է պատմական գիտութիւններու դոկտորի աստիճան, 1977ին՝ փրոֆեսորի կոչում: 1972-1987 եղած է ԽՀԳԱ *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների* ամսագրի գլխաւոր խմբագիրը, իսկ 1999էն մինչեւ կեանքի վերջը՝ *Պատմաբանասիրական Հանդէսի* գլխաւոր խմբագիր: 1996ին ընտրուած է ՀՀԳԱԱ ակադեմիկոս:



Օժտուած ըլլալով դասախօսի ձիրքով, Միքայէլեան միաժամանակ ունեցած է երկարամեայ մանկավարժական գործունէութիւն՝ Երեւանի Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի Պատմա-աշխարհագրական Բաժանմունքին մէջ, անգնահատելի ներդրում ունենալով երիտասարդ կադրերու պատրաստման գործին:

Միքայէլեան մասնակցած է *Հայկական Սովետական Հանրագիտարանի* ստեղծման գործին, եղած է *Հանրագիտարանի* կազմկոմիտէի անդամ, յետագային՝ Գիտաճիւղային Խորհուրդի անդամ: Ան մասնակցած է նաեւ Հայաստանի Պետական մրցանակի արժանացած *Հայ Ժողովրդի Պատմութիւն* ակադեմական ութհատորեակի հրատարակութեան աշխատանքներուն:

Հարուստ է Միքայէլեանի պատմագիտական վաստակը: Անոր պատմագիտական գործունէութիւնը նուիրուած է հայ գաղթավայրերու, հայ-ռուսական յարաբերութիւններու, Արցախի, Հայոց Ցեղասպանութեան պատմութեան հիմնախնդիրներուն:

Առանձին հատորներով լոյս տեսած են անոր՝ *Հայաստանի Գիտութիւնը Խորհրդային Իշխանութեան Համար Մղուած Պայքարի Ժամանակաշրջանում (1917-1920թթ.)* (1960), Ղրիմի Հայկական Գաղութի պատմութեան (1964), *Ղրիմի Հայկական Գաղութի Պատմութիւն 1801-1917* (1970), *Ղրիմի Հողում. Ղրիմի Հայկական Գաղութի Պատմութիւն* (ռուսերէն, 1974), *Հայ-Իտալական Առնչութիւններ. Ճենովական Փաստաթղթեր Ղրիմահայերի Մասին* (ռուսերէն, 1974), *Ծովակալ Ս. Մ. Սերեբրեակով (Լազար Մարկոսի Արծաթագործեան)* (1979), *Ղրիմահայոց Պատմութիւնը* (1989), *Լեռնային Ղարաբաղը 1918-1923թթ.* (ռուսերէն՝ 1992) աշխատութիւնները:

Պատմագիտական առանձին արժէք մըն է անոր քայլէրական Գերմանիոյ արտաքին գործերու նախարարութեան քաղաքական արխիւի նիւթերու հիման վրայ գրուած *Հայկական Հարցը Եւ Հայոց Ցեղասպանութիւնը Թուրքիայում (1913-1919թ.թ.)* (ռուսերէն՝ 1995, ապա գերմաներէն եւ հայերէն՝ 2004) ժողովածուն:

Մեծ արժէք կը ներկայացնեն Միքայէլեանի նախաձեռնութեամբ եւ խմբագրութեամբ հրատարակուած *Հայ Գաղթաշխարհի Պատմութիւն* եռահատորեակի՝ առաջին եւ երկրորդ հատորները (2003):

Միքայէլեան հեղինակ է նաեւ մեծ եւ փոքր ծաւալի բազում յօդուածներու՝ հրապարակուած գիտական մամուլի եւ ժողովածուների մէջ: 1990-1992, ան հիմնադրած եւ խմբագրած է *Գոյամարտ* պարբերաթերթը՝ հարուստ պատ-մահայրենասիրական եւ արցախեան հիմնախնդիրը լուսաբանող նիւթերով:

Միքայէլեան պարգեւատրուած է շարք մը շքանշաններով եւ մետալներով:

Վարդգէս Միքայէլեան կեանքէն հեռացաւ 31 Մարտ 2005ին:

ԱՐՇԱԼՈՅՍ ԹՈՓԱԼԵԱՆ

ՎԱԼՏԷՐ ԴԻԼՈՅԵԱՆ
(1930-2005)

Անուանի պատմաբան եւ սիրուած դասախօս Վալտէր Դիլոյեանը ծնուել է 17 Յունիսի 1930ին Նոր Բայազէտ (Գաւառ) քաղաքում, յայտնի մտաւորական Արտաշէս Դիլոյեանի ընտանիքում:

Նախնական ուսումը ստացել է Լենինականի (Գիւմրի) Յակոբ Յակոբեանի անուան դպրոցում (1937-1943), իսկ միջնակարգը՝ Վաղարշապատի թիւ 1 դպրոցում (1943-1947): Սովորել է Երեւանի Պետական Համալսարանի Միջազգային Յարաբերութիւնների Ֆակուլտետում (1947-1953), որն էլ աւարտել է գերազանցութեան դիպլոմով: Ուսումնառութիւնը շարունակել է Մոսկուայի Մ.Վ.Լոմոնոսովի Անուան Պետական Համալսարանին Առընթեր Հասարակական Գիտութիւնների Դասընթացքներում (1953-1954), որն աւարտելուց յետոյ ԽՍՀՄ Բարձրագոյն Կրթութեան Նախարարութիւնը նրան գործուղել է ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին Առընթեր Գլխաւոր Գրաքննչական Վարչութեան Երկրորդ Արտասահմանեան Բաժին, ուր աշխատել է գրաքննիչ (1955-1961): Միաժամանակ՝ հեռակայ կարգով, նա սովորել է Հայաստանի ԳԱ Պատմութեան Ինստիտուտի ասպիրանտուրայում:

Ականաւոր պատմաբան Աշոտ Յովհաննիսեանի գիտական ղեկավարութեան ներքոյ Դիլոյեանը մասնագիտացել է հայոց միջնադարեան եւ նոր պատմութեան բնագաւառներում: 1961ին վերադարձել է Հայաստան եւ աշխատանքի անցել ԳԱ Պատմութեան Ինստիտուտում, նախ որպէս կրտսեր (1961-1966), ապա՝ աւագ գիտաշխատող (1965-1971):

1963ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1974ին դոկտորական ատենախօսութիւն: Այնուհետեւ նուիրուել է գիտամանկավարժական լայն գործունէութեան: Եղել է Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի (1971-1979) եւ ԵՊՀ (1979-1993) Ընդհանուր Պատմութեան ամբիոնների վարիչ, ԵՊՀ Հին եւ Միջին Դարերի Պատ-

մութեան Ամբիոնի Վարիչ (1993-1998): 1998ից մինչեւ մահը աշխատել է ԵՊՀ Ընդհանուր Պատմութեան Ամբիոնում պրոֆեսոր, համատեղութեան կարգով նոյն պաշտօնը զբաղեցրել է նաեւ Պետական Մանկավարժական Ինստիտուտի Հայոց Պատմութեան Ամբիոնում:

Լայն ու բազմակողմանի են պրոֆեսոր Դիլոյեանի գիտական հետաքրքրութիւնների շրջանակները: Լեզուների հիանալի իմացութիւնը, գիտական խոր պատրաստուածութիւնը հնարաւորութիւն են ընձեռել նրան ստեղծելու լուրջ պատմաքննական աշխատութիւններ, որոնցում նորովի են մեկնաբանւում հայագիտութեան շատ հիմնախնդիրներ:

Նա հեղինակ է 150ից աւելի գիտական աշխատութիւնների, որոնք նուիրուած են հայ ժողովրդի միջնադարեան եւ նոր պատմութեան հիմնահարցերին: Նրա մենագրական ուսումնասիրութիւններից յատկապէս յայտնի են *Լազարեանների Հասարակական-Քաղաքական Գործունէութեան Պատմութիւնից* (1966), *Հայաստանի Խորհրդային Պատմագրութիւնը* (ռուս., 1968), *Արեւելեան Հայաստանը XIX Դարի Առաջին Երեսնամեակին եւ Հայ-Ռուսական Յարաբերութիւնները* (1988) աշխատանքները: Ակադեմիկոս Ցատուր Աղայեանի աշխատակցութեամբ հրատարակել է *Արեւելեան Հայաստանի Միացումը Ռուսաստանին* փաստաթղթերի երկհատոր ստուար ժողովածուները (ռուս., 1972, 1978): Հեղինակներից է *Հայ Ժողովրդի Պատմութիւն* ակադեմիական բազմահատորեակի IV (1972) եւ V (1974) հատորների, *Արեւելեանի Հայաստանի Միացումը Ռուսաստանին եւ Նրա Պատմական Նշանակութիւնը* կոլեկտիւ մենագրութեան (ռուս., 1978) եւն.: Մահից քիչ առաջ աւարտել եւ հրատարակութեան է ներկայացրել *Հայոց Եկեղեցին եւ Ազգային Ազատագրական Շարժումը XVIII Դարի Երկրորդ Կէսին-XIX Դարի Սկզբին* մենագրութիւնը: Դիլոյեանը գործուն մասնակցութիւն է ունեցել *Սովետական Մեծ Հանրագիտարան, Պատմական Հանրագիտարան, Հայկական Սովետական Հանրագիտարան, Հայկական Համառօտ Հանրագիտարան, Հայկական Հարց* հանրագիտարանի ստեղծման աշխատանքներին՝ դրանցում տպագրելով Հայաստանի պատմութեանը վերաբերող տասնեակ յօդուածներ:

Դիլոյեանը կատարել է նաեւ անգլերէնից եւ ռուսերէնից գիտական ու գեղարուեստական թարգմանութիւններ: Յիշատակութեան են արժանի Նիկողայոս Ադոնցի *Հայկական Հարցի Լուծման Շուրջ* ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ Սվետոնիոսի *Տասներկու Կեսարներ* եւ Սոմերսէթ Մոէմի *Մարկութիւս Մարդկային* պատմական ու գեղարուեստական երկերի թարգմանութիւնները:

Մեծ է Դիլոյեանի դերը պատմաբան մասնագէտների պատրաստման բնագաւառում: Աւելի քան 35 տարի դասաւանդելով բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում՝ նա իր անբաւ գիտելիքներն ի սպաս է դրել երիտասարդ պատմաբանների պատրաստման շնորհակալ գործին. ղեկավարել է նաեւ տասնեակ թեկնածուական ատենախօսութիւններ:

Հայ պատմագիտութեան ու բարձրագոյն դպրոցին, մշակոյթին մատուցած ակնառու ծառայութիւնների համար նա ՀՀ նախագահի հրամանագրով

արժանացել է «Մովսէս Խորենացի» մետալի (1999), պարգեւատրուել գովեստագրերով:

Վալտէր Դիլոյեանը մահացաւ 12 Մայիսի 2005ին:

ՊԵՏՐՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԱՏՐԻԱՆՈ ԱԼՓԱԿՕ ՆՈՎԵԼԼՕ
(1932–2005)

Ճարտարապետ, արուեստաբան Ատրիանօ Ալփակօ Նովելլօ ծնած է 1932ին, ազնուական ընտանիքէ՝ Իտալիոյ Պելլունօ քաղաքը: Մանկութենէն շնչած է մտաւորական կեանքի արժէքները եւ արուեստի սէրը, իր իսկ տան մէջ. հայրը ծանօթ ճարտարապետ էր, որուն կը պատկանին Միլանոյի քանի մը յատկանշական շէնքերու յատակագիծերը:

1957ին կ'աւարտէ Միլանոյի Պոլիտեխնիկի Ճարտարապետութեան Մասնաճիւղը եւ 1960ականներուն գործակցելով Միլանոյի Պոլիտեխնիկի ամբիոնին հետ, իբրեւ ճարտարապետ կը մասնակցի հնախուզական գիտարշաւներու՝ Յունաստանի եւ Միջին Արեւելքի մէջ, որոնք իրեն առիթ կու տան Բիւզանդական եւ Արեւելքի քրիստոնեայ արուեստի հետ ուղղակի շփուելու: 1970ականներէն սկսեալ, ան միջնադարեան ճարտարապետութեան պատմութիւն կը դասաւանդէ նախ Թուրինոյի Համալսարանին, ապա՝ երկար տարիներ՝ Միլանոյի Պոլիտեխնիկին մէջ, ուր դասախօս էր նաեւ Քրիստոնեայ Արեւելքի արուեստի պատմութեան: Աւելի ետք կը դասաւանդէ Վենետիկի Կա՛ Ֆոսկարի Համալսարանը:

1967ին Միլանոյի մէջ կը հիմնէ եւ մինչեւ մահ կը ղեկավարէ "Հայ Մշակոյթի եւ Վաւերագրութեան Կեդրոն"ը, որ աննախընթաց կարեւոր դեր կատարեց Իտալիոյ մէջ ծանօթացնելու հայ մշակոյթը, յատկապէս՝ միջնադարեան Հայաստանի ճարտարապետութիւնը: Նոյն տարիներուն սկսաւ իր ռահվիրական գործակցութիւնը Խորհրդային Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայինհետ, շնորհիւ նաեւ քանի մը նուիրեալ անձերու՝ Իտալիայէն՝ Յարութիւն Գազանճեանի եւ Երեւանէն՝ Արմէն Զարեանի: Վերջինս միջնորդ եղաւ կազմակերպումին այն բազմաթիւ գիտարշաւներուն, որոնք գրեթէ քսանամեակ մը - ամէն տարի - կատարուեցան ուսումնասիրելու համար գլխաւորաբար հայկական վանքեր եւ ընդհանրապէս միջնադարեան կոթողներ: Գիտարշաւներով ան գտնուած է նաեւ Վասպուրական, Անի եւ Կիլիկիա: Այս գործակցութիւնը մեծապէս բեղմնաւորուեցաւ մասնագէտներու եւ հանրութեան յատուկ ուշադրութիւնը գրաւեց "Հայ Ճարտարապետութեան Վաւերագրեր" (Documenti Di Architettura Armena) խորագրեալ 23 մենագրութիւններու շարքը (հրատարակուած 1968-1998 շրջանին), որուն իրաքանչիւր պրակը նուիրուած է հայկական կարեւոր վանական համալիրի մը: Այս հատորաշարքին մղիչ ոյժը - յաճախ նաեւ իբրեւ յօդուածագիր - եւս եղած է Նո-

վեպլօն՝ գործակցութեամբ եւ օժանդակութեամբ Օննիկ Մանուկեան ընտանիքին:

Անոր ստեղծագործական մտքի արդիւնքն են նաեւ հայ արուեստին նուիրուած միջազգային գիտաժողովներ, որոնց առաջինը տեղի ունեցաւ 1975ին, Պերկամոյի մէջ եւ բացառիկ համբաւ գտաւ: Գիտաժողովները յետոյ հերթաբար շարունակուեցան Իտալիոյ եւ Հայաստանի մէջ:

Հայաստանի հետ առաջին իսկ հանդիպմանն, Ատրիանօ սիրահարեցաւ հայկական լեռնաշխարհին: Ինք որ ծնած էր տողմիտներէ շրջապատուած քաղաքի մը մէջ, հասանաբար այն ատեն իսկ մտածեց որ կ'արժէր այդ հմայիչ գեղեցկութիւնը, բնութեան եւ մարդու ստեղծագործութիւնը օտարներուն ցոյց տալ: Հոն պէտք է ծնած ըլլայ հայ միջնադարեան ճարտարապետութեան (Դ.-ԺԸ. դարեր) լուսանկարչական ցուցահանդէսին գաղափարը, որ յետոյ շրջեցաւ աշխարհի գանազան երկիրներ, ամէն տեղ խանդավառութիւն յառաջացնելով: Այս ձեռնարկին համար ալ իրեն գօրեղ գործակից եղաւ Հրանտ Բամպակեանը:

Ատրիանոյի յատկութիւններէն էր ինքզինք շրջապատելը գործունեայ մարդոցմով: Ան գիտէր նաեւ երիտասարդներ հրապուրել եւ հրաւիրել աշխատանքի: Ինք անխոնջ աշխատող մըն էր: Ինքս բախտ ունեցայ մասնակցիլ դէպի Հիսիսային Իրան երկու գիտարշաւներու՝ հայկական կիսալքուած գիւղերու ճարտարապետական եւ պատմական հետքերը հաւաքելու եւ ուսումնասիրելու համար: Կարող եմ վկայել որ հանգիստ չկար՝ մինչեւ օրուան ծրագիրը լիուլի աւարտած չըլլար:

Ալփակօ Նովելլօն, որուն ամենամեծ ուրախութիւնը գեղարուեստական կոթողներով հարուստ տեղեր այցելել, հին քարերը շօշափել, լուսանկարով մը յաւերժացնելն էր փլած գմբէթի շրջանակէն վար բափանցող հայկական երկինքի մուգ կապոյտը, գիտէր նաեւ երկար ժամեր նստիլ իր սեղանին առջեւ եւ պրպտումներ ընել, գիրքեր եւ յօդուածներ գրել: Ան գլխաւոր հեղինակ է եւ խմբագիր քանի մը հիմնական գիրքերու, որոնք ցոյց կու տան իր բազմակողմանի հետաքրքրութիւնը: Այդ հետաքրքրութիւնը զինք կը մղէր յայնցնելու իր հետազօտութիւններու ծիրը, այն համոզումով որ կարելի չէ սահմանափակել գիտութիւնը: Իր ուսումնասիրութիւն/համահեղինակութիւններէն են.- *Hakhpat* (Documenti Di Architettura Armena, vol.1, 1968), *Les Arméniens: Histoire, Art, Archéologie* (1986, չորս լեզուով հրատարակուած), *Grecia Bizantina* (1969), *Sanahin* (1970, Documenti Di Architettura Armena, vol. 3), *Բիւզանդական Արուեստը Յունաստանի Մէջ* (1995), *Վրաստանի Արուեստը* (1996): Առնցմէ զատ ան հեղինակած է տասնեակ մը յօդուածներ, որոնք լոյս տեսած են միջազգային գանազան հանդէսներու մէջ, որոնց շարքին՝ 1964ին *Le Muse* արուեստի հանրագիտարանի "Հայկական Ճարտարապետութիւն" յօդուածը: Նովելլօ զուգահեռաբար մեծ ջանք թափած է իտալական արուեստը եւ ճարտարապետութիւնը հետազօտելու, մանաւանդ՝ իր ծննդավայրին շրջեղ կառոյցները: Նշանաւոր է այս նիւթի մասին իր գիրքը՝ *Ville Della Provincia Di Belluno* (Վալպելլուճայի Վիլլաները, 1968):

Անոր նկարագրին յատուկ երեւոյթ էր պարզ կեանքը. զինք միշտ հետաքրքրեցին գիւղերուն աւանդական բնակելի շինութիւնները, ընտրեց յատկապէս լեռնային վայրերը եւ երկար հետազօտութիւններ ընելով ասոնց նուիրեց մասնաւոր մենագրութիւններ:

Վերջին տարիներուն անբուժելի եւ տառապալից հիւանդութիւնը, որ չէր թողուր որ ազատօրէն շարժէր եւ ճամբորդէր, գգալապէս չարչարեց զինք, բեւ մինչեւ վերջ ան՝ որ հաւատքի եւ յոյսի մարդ էր, լաւատես եւ իր գործին խանդավառ մնաց, շրջապատուած իր նուիրեալ ընտանիքով՝ զաւակներով եւ թոռնիկներով, եւ մանաւանդ իր քոյ միշտ ունենալով իր կողակիցը՝ անզուգական տիկին Կապրիելեան որ իր ներկայութեամբ ու սիրով թեթեւցուց ամուսնին տառապանքը:

Ստեղծագործական իր աշխատանքներուն համար Ատրիանօ Ալփակօ Նովելլօ արժանացած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Թորոս Թորամանեանի անուան պարգեւներու: Քառասուն տարի իր անունը սերտօրէն կապուած էր հայ ճարտարապետութեան պատմութեան հետ: Անչափ ծանօթ էր իր համակրանքն ու սէրը Հայաստանի եւ հայերուն հանդէպ, որ հայերը կը սիրէին "Ալփակեան" անուանել զինք. Վենետիկի Համալսարանի գործընկերները եւ բարեկամները իր յօբանասունամեակը տօնեցին ճոխ ժողովածու մը իրեն ընծայելով, որուն վերնագիրն է "Ալփակեան":

Ատրիանօ Ալփակօ Նովելլօ մահացաւ 4 Յունիս 2005ին:

ԳԱԲՐԻԵԼԼԱ ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ

ՀԱՅՐ ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՔԷՇԻՇԵԱՆ
(1917-2005)



Ծնած Մարաշ 1917ին: Եղեռնէն տեղահան եղած ու փոխադրուած Դամասկոս 1923ին: Նախնական ուսումը ստացած Դամասկոսի Յիսուսեան Հայրերու Franco-Arménien վարժարանը: Երկրորդականը աւարտած Պէյրութի Յիսուսեան Հայրերու Սէն Ժոզէֆ դպրեվանքին մէջ, համալսարանական ուսումը շարունակած Ֆրանսա եւ աւարտելէ ետք վերադարձած Պէյրութ ու կուսակրօն քահանայ ձեռնադրուած 1948ին՝ ձեռամբ Կարդինալ Աղաճանեանի, որմէ ետք Հալէպի Յիսուսեան Հայրերու Վարդանանց Վարժարանին տնօրէն նշանակուած (1952-1960), ապա Պէյրութ փոխադրուած ստանձնելու համար Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ճեմարանի տնօրէնութիւնը (1960-1998), միաժգամայն հայագիտութիւն դասաւանդելով Սէն Ժոզէֆ Համալսարանի Հայագիտական Ամբիոնէն:

Հայր Սահակ Քէշիշեան թարգմանչական աշխատանքը նկատած է իր առաքելութիւնը: Գրաբարէ ֆրանսերէնի թարգմանած է նախ Ս. Գրիգոր Նա-

րեկացիի *Մատեան Ողբերգութեան* հատորը, որ առաջին անգամ ամբողջական թարգմանութեամբ լոյս տեսած է 1961ին: Ապա ձեռնարկած է Ս. Ներսէս Շնորհալիի *Յիսուս Որդի* երկին ֆրանսերէնի թարգմանութեան 1973ին, որմէ ետք 1974ին լոյս ընծայած է նոյն հեղինակին *Ողբ Եղեսիոյ* ֆրանսերէնի թարգմանութիւնը: Շարունակելով հայ հեղինակները աշխարհին ծանօթացնելու իր առաքելութիւնը, լոյս ընծայած է Ս. Ներսէս Լամբրոնացիի *Մեկնութիւն Պատարագի*ն ֆրանսերէնի թարգմանութիւնը, 2000ին:

Այս թարգմանչական կոթողային աշխատանքներուն կողքին, Հայր Սահակ Քէշիշեան կատարած է նաեւ մանր թարգմանութիւններ, ինչպէս՝ Ն. Շնորհալիի *Յաղագս Երկնի եւ Չարորոց Նորա* աշխատասիրութիւնը, *Հաւատով Խոստովանիմի* (1985), *Առաւօտ Լուսոյ* (1987) եւ *Այսօր Ամճառ* շարականները, Յովհաննէս Սարկաւագի *Սարեակը*, եւն.:

Հայր Սահակ Քէշիշեան մասնակցած է իր մասնագիտութեան հայող գիտաժողովներու, կարդացած՝ զեկուցումներ եւ տուած՝ դասախօսութիւններ: Ան աշխատակցած է նաեւ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին (հտ. ԺԳ.):

Իր այս թարգմանչական աշխատանքներուն համար, տարիներով ձեռագրային պրպտումներ կատարած է յատկապէս Երեւանի Մաշտոցի Անուան Մատենադարանին մէջ: Ան այս Հայաստան կատարած իր 23րդ ու վերջին ճամբորդութենէն հազիւ վերադարձած, վախճանած է Պէյրութ, 24 Օգոստոս 2005ին:

ՀԱՅՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ. ԿՌԱՆԵԱՆ

ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ
(1923-2005)



Գիտութեան անխոնջ մշակ, պատմաբան, կովկասագէտ, պրոֆեսոր, հայ ազգագրութեան նահապետ Դերենիկ Սուրէնի Վարդումեանը ծնուել է 1923ին ներկայիս Լոռու մարզի Վահագնի գիւղում: Գերազանցութեամբ աւարտելով միջնակարգ դպրոցը, 1940ին ընդունւում է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Ֆակուլտետը: Աւարտելուց յետոյ աշխատանքի է անցնում *Աւանգարդ* թերթի խմբագրութիւնում՝ որպէս բաժնի վարիչ, իսկ 1946ին՝ արդէն աւագ ռեֆերենտ էր Արտաստահմանի Հետ Մշակութային Կապերի Հայկական Ընկերութիւնում, ուր պաշտօնի բերումով սերտօրէն շփւում էր հայրենադարձների հետ: Հենց այդ ժամանակ էլ հասունանում է Վարդումեանի բախտորոշ վճիռը՝ լրջօրէն զբաղուել հայագիտութեամբ: 1946ին նա ընդունւում է ազգագրութեան գծով ասպիրանտուրա՝ ՀԽՍՀ Գիտութիւնների Ակադեմիայում:

Ասպիրանտական ուսումնառութեան տարիներին Երեւանում, ապա նաեւ Մոսկուայում, ականաւոր ազգագրագէտներ Ստեփան Լիսիցեանի եւ Մ.Օ. Կոսւէնի ղեկավարութեամբ, շփուելով Խորհրդային Միութեան մասնագիտական մտաւորականութեան լայն շրջանակների հետ, նա հմտանում է նաեւ ազգագրագէտի համար բացառիկ կարեւոր դաշտային աշխատանքում:

Գիտարշաւներ ձեռնարկելու եւ ղեկավարելու Վարդումեանին յատուկ «բնաւորութիւնը» յարատեւեց նրա ողջ գիտական գործունէութեան ընթացքում: Բազմիցս լինելով Հայաստանի գիւղերում ու քաղաքներում եւ Խորհրդային Միութեան հայաբնակ վայրերում, Վարդումեանը մեծապէս հարստացրել է Հայաստանի Պատմութեան, Հայաստանի Ազգագրութեան, Երեւանի Պատմութեան, Ժողովրդական Ստեղծագործութեան Պետական Թանգարանների ցուցանմոյշների հաւաքածոները:

1949-53 Վարդումեանն աշխատել է Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանում՝ որպէս աւագ գիտաշխատող, իսկ 1953ին տեղափոխուել է ԳԱ Պատմութեան Ինստիտուտի Ազգագրութեան Խումբ, դառնալով այդ խմբի ղեկավարը:

1953ին Վարդումեանը պաշտպանել է գիտական ատենախօսութիւն՝ «Լոռեցիների Նոր Կենցաղը» թեմայով եւ ստացել պատմական գիտութիւնների թեկնածուի աստիճան, իսկ յետագայում այն տպագրել է որպէս մենագրութիւն:

1959ին, երբ ԳԱ համակարգում հիմնւում է Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտը, Ազգագրութեան Բաժնի վարիչ է դառնում Դերենիկ Վարդումեանը, մնալով այդ պաշտօնում մինչեւ իր կեանքի վերջը: Այն ժամանակ դեռ անհրաժեշտ էր կազմաւորել Ազգագրութեան Բաժինը, ասպիրանտական նոր տեղեր ստեղծել: Այս ամէնին մեծ եռանդով ձեռնամուխ է լինում Վարդումեանն իր գործընկերների հետ, ընդ որում՝ ոչ միայն Գիտութիւնների Ակադեմիայում, այլեւ՝ Երեւանի Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտում, ուր ընդլայնուեցին «Ազգագրութիւն» առարկայի դասախօսութիւնների փուլերը:

Նրա անմիջական միջնորդութեամբ ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետում հիմնադրուեց Ազգագրութեան Ամբիոնը: Նա ջանք չի խնայել նաեւ Հայաստանի Ազգագրութեան Պետական Թանգարանի ստեղծման գործում: Եռանդուն է եղել նաեւ նրա գործունէութիւնը Մոսկուայի, Սանկտ-Պետերբուրգի, Թբիլիսիի եւ այլ քաղաքների առաջատար ինստիտուտների հետ մասնագիտական կապեր ստեղծելու ասպարէզում, ինչպէս նաեւ ասպիրանտուրայի նպատակային տեղեր ունենալու հարցում՝ Երեւանում, Մոսկուայում եւ այլուր:

Իր բազմաբովանդակ գործունէութեան ընթացքում Վարդումեանը մեծ աւանդ է ունեցել գիտական հմուտ կադրերի պատրաստման հարցում: Չորս տասնեակից աւելի տարիներ նա հանդիսացել է ԳԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի, Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանի Գիտական Խորհուրդների Ատենախօսութիւնների Պաշտպանու-

թեան Մասնագիտական Խորհրդի անդամ: Վարդումեանն ընտրուել է Լոնդոնի Էթնիկայնութեան եւ Ազգայնականութեան Հետազօտման Ընկերութեան անդամ: Նա դեկավարել է չորջ երեք տասնեակ թեկնածուական ատենախօսութիւն, դասախօսել ԵՊՀ եւ այլ ուսումնական հաստատութիւններում:

Դերենիկ Վարդումեանը հեղինակ է արժէքաւոր մենագրութիւնների՝ *Լոռեցիների Նոր Կենցաղը* (1956), *Հայաստանի Կոլտնտեսականների Ընտանիքը եւ Ընտանեկան Կենցաղը* (1963, համահեղինակ՝ Էմմա Կարապետեան), «Աշխարհի Ժողովուրդները» մատենաշարի (Մոսկուայի ԽՍՀՄ ԳԱ Նիկոլայ Միկլուխօ-Մակլայի Անուան Ազգագրութեան Ինստիտուտ) «Հայեր» բաժնին: Ունի աւելի քան եօթ-տասնեակ տպագիր աշխատանքներ տեղական եւ արտասահմանեան գիտական պարբերականներում (հայերէն, ռուսերէն, անգլերէն, հունգարերէն, բրդերէն), ինչպէս նաեւ տպագրութեան ենթակայ մի շարք աշխատութիւններ, որոնցից են՝ «Հայաստանի Գիւղական Բնակավայրը եւ Բնակարանը» ուսումնասիրութիւնը, նոյն թեմայով պատմաազգագրական ատլասի 10 մամուլ բաժինը եւ քարտէզային հիմքերը, նաեւ՝ «Հայաստանի Ազգագրագէտների Դաշտային Հետազօտութիւնների Արդիւնքները Վերջին Երեսնամեակում (1950-1980թթ.)», «Հայաստանի Տնտեսամշակութային Տիպերը եւ Պատմազգագրական Շրջանները» մենագրութիւնները:

Նրա մտքի արգասիքն են «Պատմական Հայաստանի Ազգագրական Մարզերի Բնութագրութիւնը» աշխատանքը եւ պատմական Հայաստանի ու Հայաստանի Հանրապետութեան պատմազգագրական շրջանների քարտէզագրումը, որի հիման վրայ էլ սահմանագծուել եւ հաստատուել են ներկայիս մարզերն ու դրանց տարածքները:

1992ից Վարդումեանը դեկավարել է «Հայոց Տնտեսական Զբաղմունքների (Կենսապահովման Միջոցներ) Նիւթական Ու Հոգեւոր Մշակոյթի, Հասարակական-Ընտանեկան Կեանքի Ու Կենցաղի, Սովորոյթների Ու Աւանդոյթների Ազգագրական-Ազգաբանական Ուսումնասիրութիւնը» գիտական թեման: Նա *Հայկական Սովետական Հանրագիտարանի* գիւղային խմբագրութեան, «Հայ Ազգագրութիւն եւ Բանահիւսութիւն» մատենաշարի խմբագրական յանձնաժողովի անդամ էր եւ, ընդհանուր առմամբ, աւելի քան 500 մամուլ մասնագիտական տպագիր գրականութեան հմուտ խմբագիր:

Հայոց արդի ազգաբանութեան բնագաւառն իր բոլոր կաղապարով պարտական է հենց Դերենիկ Վարդումեանի մշտական հոգածութեանը:

Դերենիկ Վարդումեանը մահացաւ 12 Սեպտեմբեր 2005ին:

ԿԱՐԼ ՍԵՂԲՈՍԵԱՆ

ՎԱՐԴԱՆ ՓԱՐԹԱՄԵԱՆ
(1931-2005)

Բանասիրական գիտութիւնների թեկնածու, Հայաստանի ԳԱԱ Մաշտոց Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտի աւագ գիտաշխատող Վարդան Յարութիւնի Փարթամեանը ծնուել է 25 Յունիսի 1931ին, Սիրիայի Ալեքսանդրէթ (Իսկենդերուն) քաղաքում:

1939ին, երբ Ալեքսանդրէթի Սանջակը յանձնուեց Թուրքիային, Փարթամեանների ընտանիքը տեղի հայ բնակչութեան հետ գաղթել է Հալէպ, որտեղ Վարդանը յաճախել է տեղի Արմէնեան, ապա՝ Կիլիկեան դպրոցները: Վերջինս աւարտելուց յետոյ, 1945ին ուսումը շարունակել է Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնում մինչեւ 1946ը, երբ իր ընտանիքի հետ հայրենադարձուել է Խորհրդային Հայաստան եւ բնակութիւն հաստատել Երեւանում:

1947-1948 ուսանել է ՀԽՍՀ Լուսաւորութեան Նախարարութեանը կից Օտար Լեզուների Դասընթացների Անգլիական Բաժնում, այնուհետեւ՝ 1948-1952 ուսումը շարունակել է Երեւանի Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի Լեզուագրական Բաժանմունքում, որն աւարտել է գերազանցութեան դիպլոմով:

1952ից Փարթամեանն անցել է ուսուցչական աշխատանքի:

Մանկավարժական գործունէութեանը զուգընթաց նա 1958-1960 սովորել է Պետական Մանկավարժական Ինստիտուտի ասպիրանտուրայի Արտաւազդ Սահմանեանի Գրականութեան Բաժնում՝ իր գիտական հետաքրքրութիւնները կենտրոնացնելով հայ-անգլիական գրական կապերի ուսումնասիրութեան շուրջ: 1964ից նա աշխատանքի է անցել ԳԱԱ Մաշտոց Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտում, որտեղ արդիւնաւէտ կերպով շարունակել է իր գիտական հետազօտութիւնները. եւ 1968ին պաշտպանել թեկնածուական ատենախօսութիւն, որն առանձին գրքով լոյս է տեսել *Հայ-Անգլիական Գրական Առնչութիւններ* վերնագրով, 1975ին:

Բացի գիտամանկավարժական գործունէութիւնից, անխոնջ գիտնականը զբաղուել է նաեւ թարգմանութեամբ, լրագրութեամբ եւ հրապարակախօսութեամբ: 1969ից իր գիտական գործունէութեանը զուգակցել է աշխատանքը *Հայրենիքի Ձայն* շաբաթաթերթի խմբագրութիւնում: Այստեղ, ինչպէս նաեւ *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, Լիտերատուրնայա Արմենիա, Սովետական Գրականութիւն, Հայոց Լեզու եւ Գրականութիւնը Դպրոցում, Սովետական Հայաստան, Պատմաբանասիրական Հանդէս* եւ այլ պարբերականներում, ինչպէս նաեւ Գրականութեան Ինստիտուտի հրատարակած գիտական ժողովածուներում նա լոյս է ընծայել տասնեակ յօդուածներ, որոնք սիրով ու հետաքրքրութեամբ են ընդունուել գրական հասարակայնութեան կողմից: Նշենք դրանցից մի քանիսը՝ «Սվիֆթը Հայ Գրականութեան Մէջ» (1965), «Հայերէն Թարգմանուած Առաջին Անգլիական Երկը» (1967), «Ռոբինզոնը Հայ Գրականութեան Մէջ» (1968), «Սքոթը եւ Հայ Պատմավիպա-

սանութեան Մի Քանի Հարցեր» (1968), «Դանիէլ Վարուժան» (1969), «Հայկականը Օտարագիր Հայերի Երկերում» (1971), «Վահան Թէքէեան» (1971), «Մեսրոպ Թաղիադեան» (1972), «Շեղջին Հայ Գրական Անդաստանում» (1972), «Պատմասականութիւնը Հայ Գրական Կեանքում» (1987), «Գրական Կապերի Ուսումնասիրութիւնը Սովետական Շրջանում» (1987), եւն.:

Լինելով համեստ, բարեհամբոյր եւ իրեն չպարտադրող կեցուածքի տէր՝ նա խստապահանջ եւ անաչառ էր գիտական բանավէճերի, հրապարակային ելոյթների մէջ, որտեղ սկզբունքայնօրէն հաւաստում էր իր անմնացորդ նուիրուածութիւնը արդարութեանն ու ճշմարտին:

Փարթամեանը ակտիւ մասնակցութիւն է ունեցել նաեւ Գրականութեան Ինստիտուտի հասարակական կեանքում: Երկար տարիներ նա ղեկավարել է Ինստիտուտի Արհմիութենական Յանձնախումբը, գործուն մասնակցութիւն է ունեցել գիտական նստաշրջանների նախապատրաստման ու անցկացման աշխատանքներում:

Իր կեանքի վերջին շրջանում նրա գիտական հետաքրքրութիւների կիզակէտում է եղել սփիւռքահայ գրականութեան ուսումնասիրութիւնը: Նա գրել է մի շարք յօդուածներ եւ հետազօտութիւններ, որոնց զգալի մասը դեռեւս անտիպ է: Այնուամենայնիւ, 2005ի աշնանը նա հասցրեց հրատարակել հայ գրականագիտութեան մէջ իր նախադէպը չունեցող մի ուշագրաւ աշխատութիւն՝ *Սփիւռքի Օտարագիր Բանաստեղծութիւնը*, որ լոյս է տեսել Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան օժանդակութեամբ: Դա սփիւռքահայ օտարագիր բանաստեղծների ստեղծագործութիւնների քննութեանը նուիրուած բարձրարժէք աշխատանք է, որը նրա երկարամեայ գիտական տքնաջան որոնումների արդիւնքն է: Այն վերաբերում է հայրենի գրական հանրութեանը առաւել կամ պակաս յայտնի օտարալեզու հայազգի բանաստեղծների (Արմէն Դորեան, Վիկտորիա Աղանուր, Դայանա Տէր-Յովհաննիսեան, Պարգեւ Օրֆա, Փիքէր Բալաքեան, Յովհաննէս Փիլիկեան եւ այլք) գրական ժառանգութեան քննութեանը:

Վարդան Փարթամեանը մահացաւ 5 Նոյեմբերի 2005ին, Երեւանում:

ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆԵԱՆ
tilian@mail.ru

ԵՈՒՐԻ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ
(1939-2005)

Ծանր ու տեւական հիւանդութիւնից յետոյ կեանքից հեռացաւ աննուաճի գիտնական, ազգագրագէտ, կովկասագէտ, Երեւանի Պետական Համալսարանի Ազգագրութեան Ամբիոնի հիմնադիր վարիչ, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Եուրի Մկրտումեանը:

Եուրի Մկրտումեանը ծնուել է 1939ին, Թբիլիսիում: 1962ին, գերազանցութեան դիպլոմով աւարտել է Մոսկուայի Մ. Լոմոնոսովի Անուան Համալսարանի Պատմութեան Ֆակուլտետը եւ ստացել պատմաբան-ազգագրագէտի որակաւորում: Դեռեւս ուսանողական տարիներին դրսեւորուել են Մկրտումեանի բացառիկ կարողութիւնները. եղել է անուանական թոշակառու եւ ճանաչուել Համալսարանի լաւագոյն ուսանող:

Համալսարանն աւարտելուց յետոյ, մերժելով Մոսկուայում աշխատելու հեռանկարային տարբեր առաջարկութիւնները, Մկրտումեանը վճռեց գալ Հայաստան եւ ուսումնասիրել սեփական ժողովրդի պատմութեան ու մշակոյթի ուսումնասիրութեանը: Հայաստան գալով, նա 1962ին աշխատանքի անցաւ Հնագիտութեան Եւ Ազգագրութեան Ինստիտուտում:

1968ին Մոսկուայում փայլուն կերպով կայացաւ նրա թեկնածուական ատենախօսութեան պաշտպանութիւնը: Այդ աշխատութիւնը արդիւնք էր տասնեակ ազգագրական գիտարշաւների եւ աղբիւրագիտական հսկայական նիւթի ուսումնասիրութեան, որը նոր խօսք էր ոչ միայն հայ ազգագրութեան, այլեւ կովկասագիտութեան մէջ:

1971ին Մկրտումեանը հրաւիրւում է Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան Ֆակուլտետի Հնագիտութեան, Ազգագրութեան Եւ Աղբիւրագիտութեան Ամբիոն որպէս աւագ դասախօս, իսկ 1972ին ստանում է դոցենտի կոչում: Սկիզբ է առնում նրա մանկավարժական գործունէութիւնը, որը շարունակում է գրեթէ մինչեւ նրա մահը. վերջին դասախօսութիւնները Մկրտումեանը կարդում էր արդէն ծանր հիւանդ վիճակում: Աւելի քան երեսուն տարի նա ազգագրական կադրեր էր պատրաստում մայր ԲՈՒՀում: Իր մանկավարժական գործունէութեան ընթացքում նա դարձաւ Համալսարանի ամէնից յայտնի, սիրուած եւ վաստակաշատ դասախօսներից մէկը: Բաւական է ասել, որ այսօր Հայաստանում գործող ազգագրագէտների ծանրակշիռ մասն անցել է նրա դպրոցը: Նա այն եզակի դասախօսներից էր ում, իրօք, յաջողուեց մասնագիտական կադրեր պատրաստելու իր դպրոցը ստեղծել: Դա հնարաւոր դարձաւ շնորհիւ ազգագրութեանն ու ուսանողութեանն իր անձնուրաց ու անմնացորդ նուիրումի, բարձր բարոյական արժէքների, ծով աշխատասիրութեան եւ գիտական անաչառութեան: Ազգագրական կադրեր պատրաստելու շուրջ երեսնամեայ քրտնաջան աշխատանքի արդիւնքը 1989ին պսակուեց Երեւանի Պետական Համալսարանում նրա ջանքերով Ազգագրութեան Ամբիոնի հիմնումով: Մկտումեանի ազգագրական դպրոցի կարեւոր բաղադրիչը դարձաւ նրա հիմնադրած Համալսարանի Ազգագրական Գիտարշաւները, կամ ինչպէս ինքն էր սիրում անուանել ՀԱԳները: Տարբեր գիտարշաւներին մասնակից արտասահմանցի հեղինակաւոր գիտնականների գնահատմամբ դրանք իրականացւում էին միջազգային ամենաբարձր մակարդակով: Այդպիսի գիտարշաւներում էր կոփում ապագայ ազգագրագէտներին մեծ ուսուցիչը՝ Մկրտումեանը:

Մկրտումեանն ազգագրութեան ոլորտում ունէր միջազգային բարձր հեղինակութիւն, ինչը նա նոյնպէս օգտագործում էր ի շահ իր ուսանողների, եւ

ԵՊՀ դասախոսութիւնների էր հրաւիրում բազմաթիւ նշանաւոր արտասահմանցի գիտնականներ:



Մանկավարժութեանը զուգահեռ ընթանում էր նաեւ նրա ակտիւ գիտական գործունէութիւնը: Հանրապետական եւ միջազգային գիտական բազմաթիւ ամսագրերում ու ժողովածուներում հրատարակուած տեսական, մեթոդաբանական բնոյթի յօդուածներն ու ուսումնասիրութիւնները, միշտ էլ գիտական հանրութեան միջավայրում կենտրոնական ուշադրութեան են արժանացել: Ազգագրութեան տեսութեան մէջ նոր խօսք էր 1970ականների երկրորդ կէսին առաջարկուած մշակոյթի քառամաս մոդէլը, որը արժանանալով միջազգային ճանաչման, կիրառութիւն գտաւ ազգագրագիտութեան մէջ: Այսօր էլ ԱՊՀ ազգագրագէտները նրան համարում են խոշորագոյն տեսաբան, որի տեսական ու մեթոդական մօտեցումները զգալի նշանակութիւն ունեն արդի ազգագրութեան զարգացման համար: Նրա տեսական մօտեցումների հանրագումարն էր նաեւ 1978ին հրատարակուած *Կենսապահովման Մշակոյթ եւ Էթնոս* կոլեկտիւ մենագրութիւնը, որը կենսապահովման մշակոյթի ազգաբանական եւ մշակութաբանական տեսանկիւններից դիտարկման առաջին փորձն էր:

Նա մեծ հայրենասէր էր: Խորապէս ճանաչելով ազգային մշակոյթը, մինչեւ հոգու խորքը սիրահարուած էր իր ժողովրդին: Ազգի համար ամենից վճռորոշ տարիներին նա գիտական-մանկավարժական գործունէութեանը զուգակցեց հասարակական-քաղաքականը: Իր սկզբունքային, հետեւողական եւ աննահանջ բնաւորութեան շնորհիւ նա ծանրակշիռ ծառայութիւններ մատուցեց ժողովրդին եւ պետութեանը:

Հանրապետութեան համար վճռորոշ տարում՝ 1988ին, ընտրուեց ԵՊՀ Կուսակցական Կազմակերպութեան ղեկավար, 1990-1991ին՝ ԽՄԿԿ Կենտկոմի անդամ եւ ՀԿԿ Կենտկոմի Բիւրոյի անդամ, մեծ աւանդ բերելով արցախեան շարժմանը: ԽՍՀՄ ամենաբարձր ամբիոններից նա սկզբունքային ելոյթներ էր ունենում ի պաշտպանութիւն արցախեան հիմնահարցի արդարացի լուծման, իսկ որպէս ԵՊՀ Կուսակցական Կազմակերպութեան ղեկավար պաշտպանում ուսանողութեանը բանտարկութիւններից եւ այլ բնոյթի ոտնձգութիւններից:

Հայաստանի համար ամենաճգնաժամային շրջանում 1994ին նա ստանձնեց Ռուսաստանի Դաշնութիւնում ՀՀ առաջին արտակարգ եւ լիազօր դեսպանի պարտականութիւնները, եւ պաշտօնավարեց մինչեւ 1997, մեծ ճկատ բերելով երկու երկրների քաղաքական, տնտեսական եւ մշակութային կապերի ամրապնդմանը: Նրա պաշտօնավարութեան շրջանում էր, որ յիմն

Ռուսաստանից վերադառնալուց յետոյ նա շարունակեց իր գիտամանկավարժական գործունէութիւնը հրատարակելով մի շարք յօդուածներ եւ երկու կոլեկտիւ մենագրութիւն: Վերջին տարիներին Եուրի Մկրտումեանի անմիջական նախաձեռնութեամբ Պատմութեան Ֆակուլտետում բացուել է նաեւ Մշակութաբանութեան Բաժինը: Նա ցանկանում էր իր բեղմնաւոր գիտական գործունէութիւնը պսակել հայկական քաղաքակրթութեանը նուիրուած հիմնարար մի աշխատութեամբ, որի վրայ արդէն սկսել էր աշխատել:

Յաւօք, Եուրի Մկրտումեանը չկարողացաւ իրագործել իր ծրագրերի մեծ մասը: Անժամանակ եւ յանկարծակի վրայ հասած հիւանդութիւնը թոյլ չտուեց աւարտին հասցնել նոր նախաձեռնութիւնները:

Եուրի Մկրտումեանը մահացաւ 12 Նոյեմբերի 2005ին, Երեւանում:

ԱՂԱՍԻ ԹԱԴԷՈՍԵԱՆ
aztadevosyan@web.am

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՖԵԼԵՔԵԱՆ
(1931-2005)

Պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, գրականագէտ, Հայաստանի Գրողների Միութեան երկարամեայ անդամ, ՀԽՍՀ Վաստակաւոր Լրագրող Յարութիւն Հայկի Ֆելեքեանը ծնուել է 13 Մարտի 1931ին, Երեւանում, Մեծ Եղեռնից վերապրածների ընտանիքում: 1953ին աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Միջազգային Յարաբերութիւնների Ֆակուլտետը, ապա՝ նոյն հաստատութեան ասպիրանտուրան:

1957ից սկսուել է Ֆելեքեանի լրագրողական բեղուն գործունէութիւնը: Սկզբում նա աշխատանքի է անցել *Սովետական Գրականութիւն* ամսագրում որպէս գրական աշխատող, 1957-59 եղել է բաժնի վարիչ *Սովետական Հայաստան* օրաթերթում, 1959-61ին՝ քննադատութեան բաժնի վարիչ *Գրական Թերթում*, 1961-65ին նոյն պաշտօնն է վարել *Պատմաբանասիրական Հանդէսում*: Պաշտօնավարութեանը զուգահեռ նա գրել եւ 1958ին պաշտպանել է ատենախօսութիւն «Բոլշեւիկեան Հայ Պարբերական Մամուլը Սովետական Իշխանութեան Յաղթանակի Համար Մղուած Պայքարում (1917-20թթ.)» թեմայով եւ արժանացել է պատմական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճանի:

1965ից սկսուել է Ֆելեքեանի գիտական գործունէութիւնը, եւ նա աշխատանքի է անցել Գիտութիւնների Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտում որպէս Հայ Մամուլի Պատմութեան Բաժնի առաջ գիտաշխատող (մինչեւ 1970): Պաշտպանութեան է ներկայացրել «Հայաստանի Պարբերական Մամուլը Սոցիալիզմի Կառուցման Պայքարում (1917-1920թթ.)» թեմայով ատենախօսութիւնը եւ 1970ին ստացել պատմական գիտութիւնների դոկտորի գիտական աստիճան: Գիտական աշխատանքին զուգընթաց նա շարունակել է իր լրագրողական գործունէութիւնը: 1967-70 եղել է *Բանբեր Երեւանի Հա-*

մայսարանի հանդէսի պատասխանատու քարտուղարը, 1970-77ին՝ գլխաւոր խմբագրի տեղակալը, 1978-1987ին՝ գլխաւոր խմբագիրը:

1970ից սկսուել է մտաւորականի արգասաւոր գործունէութեան մի նոր ոլորտ. նա անցել է մանկավարժական աշխատանքի եւ մինչեւ 1981 վարել Երեւանի Պետական Համալսարանի Ժուռնալիստիկայի Ամբիոնը՝ իր աշխատանքային հարուստ փորձը հաղորդելով ուսանողական մի քանի սերնդի, որոնց համար նա սիրուած եւ խորապէս յարգուած ուսուցչապետ էր:

1981ից, շուրջ մէկ տասնամեակ, Յարութիւն Ֆելեքեանը «Սովետական Գրող» Հրատարակչութեան տնօրէնն էր: Այս ժամանակաշրջանում նա կազմել, խմբագրել եւ հրատարակել է բազմաթիւ հայ գրողների ստեղծագործութիւններ:

1991ին Ֆելեքեանը նշանակւում է Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեանն Առընթեր Արխիւային Գործի Վարչութեան պետ, իսկ 2001ից մինչեւ իր կեանքի վերջը նա Ազգային Արխիւի տնօրէնի խորհրդականն էր:

Յարութիւն Ֆելեքեանը հեղինակել է բազմաթիւ ուսումնասիրութիւններ, որոնք նուիրուած են հայ մամուլի եւ գրականութեան պատմութեանը ինչպէս՝ *Պրաւդայի Տրաղիցիաներով: Էջեր Բոլշեւիկեան Հայ Մամուլի Պատմութիւնից (1917-1920 թթ.)* (1963), *Մարտիրոս Վեսպերի Ստեղծագործութիւնը* (1963), *Ալեքսանդր Ծատուրեան* (1965), *Հայաստանի Պարբերական Մամուլը Սոցիալիզմի Կառուցման Պայքարում* (1970), *Հրապարակախօսութիւն եւ Գրականութիւն* (1975) եւն.: Ռուսերէնից թարգմանել է Ալեքսանդր Գերցէնի *Էղեմ եւ Խոհեր* գիրքը (1981): Ստորագրել է Հ. Հայկեան, Ֆ. Յարութիւնեան, Հ. Մանուկեան ծածկանուններով:

Յարութիւն Ֆելեքեանը վախճանուել է 9 Դեկտեմբերի 2005ին, Երեւանում:

ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆԵԱՆ
tilian@mail.ru

ՆԻՆԵԼ ՈՍԿԱՆԵԱՆ
(1923-2005)

Անուանի մատենագէտ, Հայաստանի Հանրապետութեան Վաստակաւոր Գրադարանավար Նինել Աշոտի Ոսկանեանը ծնուել է 1923ին Երեւանում:

Խաչատուր Աբովեանի անուան միջնակարգ դպրոցն աւարտելուց յետոյ ընդունուել է Մոսկուայի Գ. Չերնիշեւսկու Անուան Ինստիտուտի Գրականութեան Ֆակուլտետը, սակայն Խորհրդային Միութեան վրայ Գերմանիայի յարձակման պատճառով վերադարձել է Երեւան եւ ուսումը շարունակել Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Ֆակուլտետի Եւրոպական Գրականութեան Բաժնում: 1957-1962 աւարտել է նաեւ Մոսկուայի Կուլտուրայի Ինստիտուտի Գրադարանային Ֆակուլտետի հեռակայ բաժինը:



1951ից դասաւանդել է ԵՊՀ եւ Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Մանկավարժական Ինստիտուտի Բանասիրական ու Մշակոյթի Ֆակուլտետների Գրադարանային Բաժիններում, որտեղ դասաւանդել է «Արտասահմանեան Գրականութիւն» եւ «Գրքի Պատմութիւն» առարկաները:

Դասախօսական աշխատանքին զուգընթաց, 1956-2000 աշխատել է Հայաստանի Ազգային (նախկին Ալեքսանդր Միասնիկեանի անուան) Գրադարանում, երկար տարիներ ղեկավարել Հայ Գրքի Մատենագիտութեան Բաժինը: Ազգային Գրադարանում նրա երկարամեայ աշխատանքային վաստակի ամենաճշանակալի արդիւնքն են կազմում նրա անմիջական ղեկավարութեամբ կազմուած հայ հնատիպ գրքի՝ *Հայ Գիրքը 1512-1800թթ.* եւ ԺԹ. դարի երկրորդ կէսն ընդգրկող *Հայ Գիրքը 1851-1900թթ.* մատենագիտութեան երկու ստուարածաւալ հատորները: Մատենագիտութեան յատկապէս առաջին հատորը Ոսկանեանը համարում էր իր կեանքի հիմնական արդիւնքը:

Հայաստանի գրադարաններում դժուար է գտնել մէկ այլ մատենագէտի, որն այդքան ճանաչուած լինէր հայագիտական շրջանակներում: Վենետիկի, Վիեննայի, Երուսաղէմի, Մոսկուայի, Ս. Պետերբուրգի, Լվովի եւ հայ գրքի այլ նշանաւոր օջախներում, ամէնուր հնատիպերի վրայ կարելի է գտնել նրա մատնադրոշմը:

Նա միշտ եղել է հայ գրքի նուիրեալը, հնարաւոր ամէն ինչ անելով յանուն հայ գրքի մատենագիտութեան ծրագրի իրականացման:

Վերջին ամիսներին, ասես կանխազգալով վերահաս մահը, տպագրութեան էր պատրաստում *«Երախտիքիս Գիրքը Չեզ...»* ժողովածուն, որն, աւաղ, չհասցրեց իրականացնել:

Նիւնել Ոսկանեանը հայ գրքի մատենագիտութեան նախահամակարգչային շրջանի վերջին խոշոր մատենագէտներից էր: Նրա ղեկավարած հեղինակային խմբի կազմած հայ գրքի մատենագիտութիւնները դեռ չատ երկար կը ծառայեն հայագիտութեան եւ գրքի պատմութեան մասնագէտներին:

ՆԵՐՍԷՍ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ
nerses@usa.am

ՌԱԶՄԻԿ ՄԱԴՈՅԵԱՆ
(1927–2005)

Հայ թատերագէտների աւագ սերնդի նօսրացող ընտանիքը մի կորուստ եւս ունեցաւ. Գլենդէյլում (Լոս Անջելէս-Կալիֆորնիա) կեանքից հեռացաւ Ռազմիկ Մադոյեանը:

Օրուայ թատերական կեանքի գարկերակը ձեռքում պահող թատերագէտ էր նա: Անցել էր գիտական-ստեղծագործական-մանկավարժական երկար ուղի: Արուեստագիտութեան թեկնածու էր (1969), պրոֆեսոր (1983), ՀՀ Մշակոյթի Վաստակաւոր Գործիչ (1982): Նրա ամբողջ գիտակցական կեանքը նուիրուած է եղել ժամանակակից հայ թատրոնի եւ կինոյի ու նրանց գործիչների աշխատանքի լուսաբանութեանը: Մեծ է նրա ծառայութիւնը յատկապէս Գիւմրիի թատերական կեանքի ուսումնասիրութեան ու գնահատութեան հարցերում:

Ռագմիկ Մելիքսէթի Մադոյեանը ծնուել է 22 Օգոստոսի 1927ին, Լենինականում (այժմ՝ Գիւմրի): Շատ շուտ զրկուել է ծնողներից եւ ապաւինել պապի ու տատի խնամքին: Մի երեւոյթ, որ տարիներ անց, ինքը պէտք է կրկնէր իր թոռների նկատմամբ:

Աւարտելով միջնակարգ դպրոցը, 1946-1951 աւարտել է Երեւանի Գեղարուեստա-Թատերական Ինստիտուտի Թատերագիտական Ֆակուլտետը: Հետեւելով ժամանակի պահանջներին՝ նրա աւարտական թեզն է եղել «Խաղաղութեան եւ Դեմոկրատիայի Համար Մղուող Պայքարը Սովետահայ Դրամատուրգիայում» աշխատանքը: Դեռեւս ուսանողական տարիներին Մադոյեանը յօդուածներով եւ թատերախօսականներով հանդէս է եկել մամուլում, մասնակցել թատերական հարցերին նուիրուած խորհրդակցութիւններին, բեմադրութիւնների քննարկումներին:

1951-1969 Մադոյեանը գործել է ծննդավայրում, աշխատել քաղաքային *Բանուոր* թերթի խմբագրութիւնում եւ լուսաբանել տեղի գրական-մշակութային կեանքը, արձագանգել մայրաքաղաքային նորութիւններին, աշխատել է նաեւ Կոմունիստական Կուսակցութեան Քաղաքային Կոմիտէում, Միքայէլ Նալբանդեանի Անուան Մանկավարժական Ինստիտուտում (դասախօս եւ պրոռեկտոր):

Գիտական գործունէութեան մէջ խորանալու նպատակով Մադոյեանը մեկնել է Մոսկուա: 1962ին աւարտել է Լունաչարսկու Անուան Թատերական Արուեստի Ինստիտուտի ասպիրանտուրան՝ աշակերտելով դեռեւս թատերական ինստիտուտից իր դասախօս, անուանի գիտնական Գէորգ Գոյենիին: Աշխատութիւնը նուիրուած է եղել Լենինականի թատրոնի շուրջ հարիւրամեայ պատմութեանը եւ տպագրուել է 1967ին՝ *Թատրոնի Ուղին* վերնագրով: Նա եղել է Լենինականի թատրոնի հարիւրամեակի առիթով կազմակերպուած միջոցառումների ակտիւ գործիչներից մէկը եւ զեկուցողը յոբելեանական հանդէսին (1965):

Ամէնօրեայ շփումը թատերական արուեստի մարդկանց հետ նրան հնարաւորութիւն են տուել ընդարձակել իր հետաքրքրութիւնների սահմանները: Գրել ու հրատարակել է *Արծրունի Յարութիւնեան* մենագրութիւնը, *Թատրոնը Բացում Է Իր Դռները, Ներկայացումներ եւ Կերպարներ, Կումայրիի Վարդան Աճէմեանի Անուան Թատրոնը* գրքերը, պատրաստել *Յովակ Ամերիկեան* ժողովածուն եւ այլ գործեր:

1969ին Մադոյեանը հրաւիրուել է Երեւան եւ նշանակուել «Հայֆիլմ» կինոստուդիայի տնօրէն: Առաջին նուաճումներից մէկը եղել է Սերգէյ Փարաջանովի «Նռան Գոյնը» ֆիլմի համար կանաչ ճանապարհ բացելը: Այնուհետեւ եղել է ՀՀ Կինեմատոգրաֆիստների Պետական Կոմիտէի նախագահի տեղակալ: Երկար տարիներ հայ թատրոնի պատմութիւն է դասաւանդել Թատրոնի եւ Կինոյի Պետական Ինստիտուտում, եղել է Թատրոնի Պատմութեան եւ Տեսութեան Ամբիոնի վարիչը՝ ամէնուրեք ներդնելով իր օգտակար ծառայութիւնը հայ թատրոնի եւ կինոյի զարգացման գործում: Այդ շրջանում լոյս է ընծայել *Տարիներ եւ Ֆիլմեր, Ժամանակը Ժապաւէնի Վրայ* եւ այլ գրքեր:

1988ի դեկտեմբերեան երկրաշարժի ահաւոր աղէտն իր ծանր թաթը դրել է նաեւ Մադոյեանի ընտանիքի վրայ: Ջոհուել է դուստրը, որբացած թոռների խնամքը դարձել է պապի եւ տատի հոգածութեան խնդիրը: Փոքրիկներին սարսափի տպաւորութիւններից փրկելու համար ստիպուած է եղել 1994ին փոխադրուել ԱՄՆ՝ Լոս Անջելէս:

Հեշտ չի եղել Մադոյեանի կեանքն Ամերիկայում: Մի կողմից նիւթական դժուարութիւնները, միւս կողմից մասնագիտական աշխատանքից կտրուածութիւնը բարոյապէս շատ են ճնշել նրան: Չնայած այդ ամէնին, նա իր մէջ մեծ ոյժ է կուտակել, յաղթահարել այդ դժուարութիւնները, կրթութեան տուել թոռներին:

Ամերիկայում Մադոյեանն աշխատել է լրիւ ծանրաբեռնուածութեամբ: Գրել եւ աւարտել է «Յովհաննէս Զարիֆեան» գիրքը (20 մամուլի սահմաններում), որը տպագրուեց *Փարոս* թերթում: Կամաց-կամաց ծանօթութիւններ է հաստատել ամերիկահայ մտաւորականութեան հետ, աշխատակցել պարբերական մամուլին (յուշեր եւ յօդուածներ է հրատարակել գրական, թատերական եւ կինոյի գործիչների մասին):

1999ին Լոս Անջելէսում տպագրել է 30 երկար ու ձիգ տարիների իր տքնաջան աշխատանքը՝ *Բեմն Իմ Հայրն է (Նոտիրուած Յովհաննէս Զարիֆեանի Կեանքի եւ Գործունէութեան Լուսաբանութեանը)* վերնագրով: Սա գիտական մեծարժէք աշխատանք է Գիւմրիում ծնուած եւ իր կեանքի վարագոյրն Ամերիկայում փակած հայ մեծ թատերական գործիչ Յովհաննէս Զարիֆեանի մասին: Գրքի շնորհանդէսը կատարուեց 2000ին, Երեւանում: Հրճուանքի մէջ էր, որ վերջապէս հրապարակ էր հանել իր խաչը՝ մեծ տուրքը ճամբաւաւոր դերասանի յիշատակի յաւերժացման գործում, որը եւ դարձաւ իր յիշատակի յաւերժացումը:

2003 Յուլիսին Հայաստանի Գրողների Տանը, Ռազմիկ Մադոյեանի ծննդեան 75ամեակի կապակցութեամբ տեղի ունեցաւ վերջին տարիների նրա հրատարակած *Յուշամատեան, Նռան Գոյնը եւ Փարաջանովի Լեգենդը, Բեմն Իմ Հայրն է...* գրքերի շնորհանդէսը, որը դարձաւ նրա գործունէութեան եւ վաստակի գնահատութեան վերջին յիշատակութիւնը կենդանութեան տարիներին:

Ռազմիկ Մադոյեանը մահացաւ Նոյեմբերի սկզբին: Նրա թաղումը կատարուեց 10 Նոյեմբերի 2005ին, Երեւանում:

ԲԱԽՏԻՍԱՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԳԷՈՐԳ ՋԱՀՈՒԿԵԱՆ
(1920-2005)



Ականաւոր լեզուաբան, Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Լեզուի Ինստիտուտի տնօրէն, բանասիրական գիտութիւններու դոկտոր, փրոֆեսոր, Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Վաստակաւոր Գործիչ (1965), ակադեմիկոս (1974), Եւրոպայի (1974) ու Ամերիկայի Միացեալ Նահանգներու (1980) լեզուաբանական ընկերութիւններու անդամ, Գէորգ Բեգլարի Ջահուկեան ծնած է 1 Ապրիլ 1920ին, Լոռիի մարզի Մեծաւան գիւղին մէջ:

Իր գերազանցութեամբ աւարտած է Երեւանի Պետական Համալսարանը: Շարունակած է բարձրագոյն ուսումնառութիւնը, դառնալով Հրաչեայ Աճառեանի ասպիրանտը: Բ. Համաշխարհային Պատերազմի օրերուն, կատարելէ ետք իր զինուորական պարտքը, շարունակած է ասպիրանտուրան, իսկ 1945ին սկսած է դասաւանդել Համալսարանէն ներս: 1947ին, «Քերականական եւ Ուղղագրական Աշխատանքները Հին եւ Միջնադարեան Հայաստանում (Ե.-ԺԵ. դդ.)» աշխատանքին համար իրեն կը շնորհուի բանասիրական գիտութիւններու թեկնածուի գիտական աստիճան: 1955ին կը պաշտպանէ «18-19րդ դդ. Հայ Լեզուաբանական Միտքը եւ Աշխարհաբարի Հարցեր» աւարտաճառը, ու կը ստանայ բանասիրական գիտութիւններու դոկտորի գիտական աստիճան: 1958ին իրեն կը շնորհուի փրոֆեսորի կոչում: 1948-1957 վարած է Համալսարանի Օտար Լեզուներու Ամբիոնի, իսկ 1957-1970 Ռոմանագերմանական Բանասիրական Ամբիոնի վարիչի պաշտօնները: 1962ին կը նշանակուի ՀԳԱԱ Լեզուի Ինստիտուտի տնօրէն, յաջորդելով ականաւոր գիտնականներ Արարատ Ղարիբեանի եւ Գրիգոր Ղափանցեանի: Այս պաշտօնը ձեռնհասօրէն կը վարէ մինչեւ մահ:

Որպէս դասախօս ան կը յիշուի իր սքանչելի հումորով, անմիջականութեամբ, անկեղծութեամբ, պարզութեամբ, համեստութեամբ եւ սովորականութեամբ: Իր ուսանողներուն համար իր ներկայութիւնը ահ չէր, այլ խաղաղութիւն եւ անկաշկանդ, գիտական քէ այլ հաճելի ու օգտաշատ խօսակցութեան առիթ:

Անուրանալիօրէն մեծ է Գէորգ Ջահուկեանի դերը հայերէնի ծագումնաբանութեան ուսումնասիրութեան մէջ: Ան ստեղծած, կիրարկած ու արմատապատած է լեզուաբանական շարք մը ուղղութիւններ ու տեսութիւններ: Ջահուկ-

եանի հիմնարար աշխատութիւնները նուիրուած են հնդեւրոպական ու այլ լեզուաբնտանիքներու հին ու հնագոյն լեզուներուն եւ հայերէնի առնչութիւններուն: Ինք մշակած է հայերէնի պատմական զարգացման շրջաբաժանումը: Ան առաջինն է, որ հայերէնի ուսումնասիրութեան մէջ կիրարկած է լեզուաժամանակագրութեան մեթոտը:

Պատմահամեմատական լեզուաբանութեան ականաւոր ներկայացուցիչներէն է Ջահուկեան. ան մշակած է նախալեզուն վերականգնելու նոր վարկած:

Հայ բարբառագիտութիւնն ալ եղած է իր ուշադրութեան եւ ուսումնասիրութեան առարկան: Իրեն կ'երթայ վիճակագրական բարբառագիտութեան ստեղծման ու մշակման պատիւը, որուն հիմքը իր իսկ առաջադրած ու կիրարկած հայերէնի բարբառներու բազմայատկանիշ դասակարգումն է:

Ջահուկեան ուսումնասիրած է նաեւ ժամանակակից արեւելահայերէնի իմաստաբանութիւնն ու բառակազմութիւնը. լեզուի կառուցուածքի նկարագրութեան համար առաջադրած է նոր մեթոտներ:

Ջահուկեան ստեղծած է լեզուաբանութեան համընդհանուր տեսութիւն եւ կաղապար, որ կ'ապահովէ իմացական ու լեզուաբանական կարգերու քննութիւնը, լեզուական եւ արտալեզուական առարկաներու նկարագրութիւնը միասնական սկզբունքներով:

Ջահուկեան հեղինակ է բազմաթիւ աշխատութիւններու, ինչպէս՝ *Քերականական եւ Ողղագրական Աշխատասիրք Հին եւ Միջնադարեան Հայոց համար (Ե.-ԺԵ. դդ.)* (1954), *Հին Հայերէնի Հոլովման Սիստէմը եւ Նրա Զարգացումը* (1959), *Լեզուաբանութեան Պատմութիւն*, 2 հատոր (1960-1962), *Սկզբունքներ Հայոց Լեզուի Նախագրային Շրջանի Պատմութեան* (1967), *Հայոց Լեզուի Զարգացումը եւ Կառուցուածքը (Համառօտ Ուրուագիծ)* (1969), *Հայերէնը եւ Հնդեւրոպական Հին Լեզուները* (1970), *Հայ Բարբառագիտութեան Ներածութիւն* (1972), *Ժամանակակից Հայերէնի Տեսութեան Հիմունքները* (1974), *Գրաբարի Քերականութեան Պատմութիւն (ԺԷ.-ԺԹ. դդ.)* (1974), *Ընդհանուր եւ Հայ Լեզուաբանութիւն* (1977), ռուսերէնով՝ *Ընդհանուր եւ Հայ Լեզուաբանութիւն* (1978), *Հայոց Լեզուի Պատմութիւն. Նախագրային Շրջան* (1987: Գիրքը 1988ին արժանացած է ՀԽՍՀ պետական մրցանակի), *A Universal Theory Of Language: Prolegomena To Substantial Linguistics*, գործակցութեամբ Տորա Սաթայեանի (2003), *Ժամանակակից Հայոց Լեզուի Իմաստաբանութիւն եւ Բառակազմութիւն* (1989), *Ջրոյցներ Հայոց Լեզուի Մասին*:

Ջահուկեան ունի նաեւ աշակերտական դասագիրքեր՝ *Հայոց Լեզու. Ձեռնարկ Միջնակարգ Դպրոցի Բարձր Դասարանների Ուսուցիչների Համար*, համահեղինակ՝ Ֆ. Յ. Խղլաթեան, (1976), *Հայոց Լեզու*, համահեղինակներ՝ Էդուարդ Աղայեան, Վարագ Առաքելեան, Վաղարշակ Քոսեան (1980):

Գէորգ Ջահուկեանը վաթսունամեայ բեղուն աշխատանքէ ետք փակեց իր աչքերը 6 Յուլիս 2005ին:

ՀՀՀ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ
ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՆ
(1 Յունուար-31 Դեկտեմբեր 2005)

Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԻԴ. Հատորի
Շնորհանդէսը Պէյրութի Մէջ, 26 Յուլիս 2005

Երեքշաբթի, 26 Յուլիս 2005ին, Հայկազեան Համալսարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* ԻԴ. հատորի շնորհանդէսը: Խմբագրական կազմի անդամներուն կողքին ներկայ էին Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փոլ Հայտոսթեան, ՄԱՀԱԵՄ Կեդրոնական Մարմնի ատենապետ Վեր. Սողոմոն Քիլաղպեան, Հայ Կաթողիկէ Պատրիարքական Փոխանորդ Արհի. Վարդան Եպս. Աշգարեան, *Հանդէսի* աշխատակիցներ, կրթական հաստատութիւններու եւ մամլոյ ներկայացուցիչներ, բարեկամներ ու հիւրեր:

Բացման խօսքը կատարեց *Հանդէսի* պատասխանատու քարտուղար Անդրանիկ Տագէսեան, որ շեշտեց նման հրատարակութիւններու խմբագրական աշխատանքին մէջ հաւաքական, խմբակային ջանքին դերն ու կարեւորութիւնը, որ անպայմանօրէն կու տայ իր բարեբեր արդիւնքը, ինչպէս՝ *Հանդէսի* հատորները:

Պատասխանատու խմբագիր Գերպ. Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան հրճուանք արտայայտեց ԻԴ. հատորի ծնունդին առթիւ, մանաւանդ նկատի առնելով Սփիւռքի ներկայ պայմանները, ուր հազուադէպ երեւոյթ է հայագիտական ուսմանց հատորի մը հրատարակումը: Ըստ վարդապետին, հայագիտական հրատարակութիւնները հազուադէպ են, որովհետեւ անոնց համար անհրաժեշտ բարոյական, գիտական եւ նիւթական ուժանիւթերը կը պակսին, ինչպէս նաեւ հայ հասարակութեան կողմէ անոնք չեն ունենար պատշաճ ընդունելութիւն: Ի հեճուկս զանազան դժուարութիւններու, *Հայկազեան Հայագիտական Հանդէսը* կը շարունակէ լոյս տեսնել, որովհետեւ ան "*իր էջերով, հայագիտութիւնը Սփիւռքի մէջ մոռացումի կամ այլասերումի դէմ կը պաշտպանէ...եւ կը նպաստէ հայագիտութեան զարգացումին կամ հարստացումին Սփիւռքի պայմաններուն ներածին չափով...*": Պէտք չէ մոռնալ, որ հայագիտութիւնը նաեւ կը ծառայէ "*...մեր ժողովուրդին ազգային անվտանգութեան, համաշխարհայնացումին յաւակապէս փոքր ազգերու դէմ ներկայացուցած վտանգին դիմաց*":

Օրուան բանախօսն էր Գերպ. Դոկտ. Հայր Մեսրոպ Վրդ. Թոփալեան: Ողջունելէ ետք ներկաները, վարդապետը նախ արագ ակնարկ մը նետեց

Հանդէսի անցած ուղիին, գնահատանքով նշեց անոր արծարծած նիւթերուն այլազանութիւնը եւ բազմալեզու բնոյթը, թուեց *Հանդէսին* տարբեր բաժիններն ու գիտական բարեմասնութիւնները, եւ խօսուն թիւերով ներկայացուց անոր վաստակը հայագիտութեան մարզէն ներս: Անդրադառնալով հայագիտութեան մէջ "քանակի ու որակի տագնապ"ին, վարդապետը առաջարկեց *Հայկազեան Հայագիտական Հանդէսին* շուրջ կազմել Լիբանանի ու Սուրիոյ հայագէտներու համախմբում մը, որպէսզի "*մասնագէտներու քանակի, որակի, կարողութեան եւ գիտանիւթերու պահանջքին համաձայն, որդեգրուի ուղեգիծը հայկաբանական աշխատանքին*": Բանախօս վարդապետը մաղթեց, որ տարիներ առաջ սկսած գործը շարունակուի, "*...եւ 35ամեակի փառապանծ անցեալը երաշխիքն ըլլայ յուսթի ներկային եւ արգաւանդ ապագային*": Նկատի առնելով *Հանդէսի* հիմնադիրներուն սահմանած նպատակն ու հրատարակուած 24 հատորներուն առաւելութիւնները, Մեսրոպ վարդապետ մաղթեց նաեւ, որ *Հանդէսին* գոյերթը "*...առուգապէս դառնայ յաղթերթը անթառամ դափնիներուն*":

Վեր. Դոկտ. Փոլ Հատոսթեան իր խօսքին մէջ ողջունեց խմբագրական կազմի ջանքը, եւ յատուկ ուշադրութեան արժանացուց *Հանդէսի* սոյն հատորի խմբագրական խօսքը, որ կոչ կ'ուղղէ "*...ձգտելու հայագիտութեան թէ' հայկական եւ թէ' գիտական բարձր մակարդակներուն, այսինքն ո'չ նահանջելու, ո'չ յուսահատելու եւ ո'չ ալ միջակութիւններով բաւարարուելու, այլ՝ նեռուելու ասպարէզ*": Նախագահը յատուկ շնորհակալութեան խօսք ուղղեց խմբագրական կազմի անդամներէն Դոկտ. Արա Սանճեանին, որ ճամբորդութեան բերումով յառաջիկային կը բացակայի Համալսարանէն:

Պաշտօնական մասի աւարտէն ետք, ներկաները յամեցան սրահէն ներս, հիւրասիրութեան մը առիթը դրօտելով *Հանդէսի* նախկին հատորներն ու Համալսարանի Հայագիտական Գրադարանին՝ տարուան ընթացքին ձեռք բերած գիրքերէն նմոյշներ:

ԳԻՏԱԺՈՂՈՎ
ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՅԻՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ
«Լիբանանահայերը. Իրենց Անցեալն Ու Ներկան»
12-15 Սեպտեմբեր 2005

Հայկազեան Համալսարանի յիսնամեակի տօնակատարութիւններու ծիրէն ներս, Համալսարանի Հայագիտական Ամբիոնի կազմակերպութեամբ, 12էն 15 Սեպտեմբերին Համալսարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ գիտաժողով մը, նուիրուած լիբանանահայութեան անցեալին ու ներկային:

Գիտաժողովին, որ կը վայելէր Լիբանանի Մշակոյթի նախարար Դոկտ. Թարէք Միքրիի հովանաւորութիւնը, կը մասնակցէին 10 երկիրներէ ժամանած 16 հայ եւ օտար մասնագէտներ:

Երկուշաբթի 12 Սեպտեմբերի երեկոյեան, Համալսարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ բացման պաշտօնական հանդիսութիւնը, ներկայութեամբ լիբանանահայ երեսփոխաններու, կրօնական, կրթական, քաղաքական, հասարակական մարմիններու եւ մամուլի ներկայացուցիչներու: Ելոյթ ունեցաւ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնի վարիչ Դոկտ. Արա Սաճճեան եւ Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փոլ Հայտոսթեան: Բացման հանդիսութեան գլխաւոր բանախօսն էր Դոկտ. Այտա Պուճիգաճեան, Քանատացի, որ դասախօսեց "The Armenians And Lebanon: Changing Perceptions And Functions (XIV-XX Centuries)" (Հայերը եւ Լիբանանը - Փոփոխուող Ընբռնումներ եւ Դերեր (ԺԴ.-Ի. դդ.) նիւթով: Հանդիսութիւնը աւարտեցաւ հիւրասիրութեամբ մը, Համալսարանի Մուկար շէնքի պարտէզին մէջ:

Երեքշաբթի 13 Սեպտեմբերին սկսան նիստերը: Առաւօտեան նիստին (ատենապետ՝ Այտա Պուճիգաճեան) ելոյթ ունեցան Քլոտ Մութաֆեան (Ֆրանսա)՝ "Les Princesses Arméniennes À La Tête Des Etats Latins d'Orient (XII-XIV Siecles)" (Արեւելքի Լատին Տէրութիւններուն Հայ Իշխանուհիները՝ ԺԲ.-ԺԴ. դդ.) նիւթով, Հիլմար Քայզէր (Գերմանիա)՝ "The Armenians And Lebanon During The Genocide Of The First World War" (Հայերն Ու Լիբանանը Ա. Համաշխարհային Պատերազմի Ցեղասպանութեան Ընթացքին) նիւթով, Վահէ Թաշճեան (Ֆրանսա)՝ "L'Installation Définitive Des Réfugiés Arméniens Au Liban: Projet Et Réalisation (De La Fin Des Années 1920 Jusqu'aux Années 1930)" (Հայ Գաղթականներու Վերջնական Տեղաւորումը Լիբանան, 1920ականներու Աւարտէն 1930ականները. Ծրագրում եւ Իրագործում) նիւթով:

Յետմիջօրէի նիստին (ատենապետ՝ Արտա Էքմէքճի, Լիբանան) ելոյթ ունեցան Արա Սաճճեան (Լիբանան)՝ "Formulating Strategies Of Irredentism Of The Crossroads Of Nationalism, Communism And Diverging Interpretations Of The Soviet Experience: The Armenian-Language Press Of Beirut On The Quest For The "Internal Lands" In Soviet Transcaucasia: 1953-1985" (Անդրկովկասի Ներքին Հողերու Հարցը Լիբանանահայ Մամուլի Էջերուն Մէջ (1953-1985) նիւթով, Շողիկ Աշըգեան (Սուրիա)՝ "Հայկական Պահանջատիրութիւնը եւ Լիբանանահայ Գաղութը, 1965-1975" նիւթով, Այտա Պուճիգաճեան՝ "Le Travail Autonome Auprès Des Arméniens Du Liban: Pratique d'Une Tradition Communautaire Et Un Concept Des Théories Des Diasporas" (Լիբանանահայութեան Սեփական Աշխատանքը Համայնքային Աւանդոյթի եւ Սփիւռքի Հասկացութեան Տեսութիւններուն Միջեւ) նիւթով:

Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ հրապարակային դասախօսութիւն մը, որուն ընթացքին Դոկտ. Վահէ Թաշճեան, դասախօսեց «Վերակերտել Ազգը Կիներու եւ Որբերու Ճամբով. Գործն Ու Ազդը Հակասութիւնները» նիւթով:

Նիստերը շարունակուեցան Չորեքշաբթի 14 Սեպտեմբերին: Առաւօտեան նիստին (ատենապետ՝ երեսփոխան Ֆարիտ Էլ Խազէն, Լիբանան) ելոյթ

ունեցաւ Օհաննէս Կէօքճեան (Լիբանան), "The Policy Of Positive Neutrality Of The Armenian Political Parties In Lebanon During The Civil War Of 1975-1990: A Critical Analysis" (Լիբանանահայ Քաղաքական Կուսակցութիւններու "Դրական Չէզոքութեան" Դիրքորոշումը Լիբանանի Քաղաքացիական Պատերազմին, 1975-90. Քննական Վերլուծում) նիւթով, Խաչիկ Տէր Ղուկասեան (Արժանթին)՝ "Lebanon In My Mind: The Civil War And The Centrality Of The Lebanese Armenian Community In The Making Of Armenian Diaspora Nationalism" (Լիբանանի Քաղաքացիական Պատերազմն Ու Լիբանանահայ Համայնքի Կեդրոնականութիւնը՝ Սփիւռքահայ Ազգայնութեան Իրագործումին Մէջ) նիւթով, Ռուբէն Ալշարեան (ԱՄՆ)՝ "The Taef Accord And The Armenians Of Lebanon (Թաէֆի Ուխտը եւ Լիբանանահայութիւնը) նիւթով:

Յետմիջօրէի նիստին (ատենապետ՝ Քլոտ Մութաֆեան) ելոյթ ունեցան Արմէն Իւրմէշլեան (Լիբանան), "Արաբի Կերպարը Լիբանանահայ Գրականութեան Մէջ" նիւթով, Նորա Սալմանեան (Լիբանան)՝ "La Contribution Des Arméniens Libanais A La Vie Musicale Au Liban De 1920 À Nos Jours" (Հայոց Նպաստը Լիբանանի Երաժշտական Կեանքին, 1920ականներէն Մինչեւ Այսօր) նիւթով, Ռուբինա Արթինեան (Լիբանան), "Armenian Choirs In Lebanon, 1930-1980: A Bridge Between The Past And The Present" (Լիբանանի Հայկական Երգչախումբերը՝ 1930-1980. Կամուրջ Մը Անցեալին Ու Ներկային Միջեւ) նիւթով:

Երեկոյեան հրապարակային դասախօսութեան, Դոկտ. Խաչիկ Տէր Ղուկասեան, դասախօսեց "Լիբանանահայութեան Տեղն Ու Դերը Սփիւռքի Զարգացման Հոլովոյթին Մէջ" նիւթով:

Համագումարի վերջին օրուան՝ Հինգշաբթի 14 Սեպտեմբերի առաւօտեան նիստին (ատենապետ՝ Խաչիկ Տէր Ղուկասեան) ելոյթ ունեցան Վերժիլ Սվազլեան (Հայաստան)՝ "Լիբանանահայ Հայրենադարձներու Տարժամանակեայ եւ Համաժամանակեայ Մշակութային Զարգացումը Հայաստանի Մէջ" նիւթով, Ասպետ Քոչիկեան (ԱՄՆ)՝ "Between (Home)land And (Host)land: Lebanese-Armenians And The Republic Of Armenia" (Հայրենիքի եւ Հիւրընկալ Երկրի Միջեւ. Հայերը եւ Հայաստանի Հանրապետութիւնը) նիւթով, Արաքսի Տէրունեան-Խաչերեան (Եգիպտոս), "The Armenians Of Lebanon, The Middle East And The North Africa In The Lirary Of Congress" (Լիբանանի, Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի Հայերը ԱՄՆ Քոնկրէսի Գրադարանին Մէջ) նիւթով:

Յետմիջօրէի նիստին (ատենապետ՝ Արա Սանճեան) ելոյթ ունեցաւ Նիքոլա Միլիորիճօ (Իտալիա), "The Lebanese System And The Armenian Cultural Diversity Between Yesterday, Today, And Tomorrow: Opportunities And Limits" (Լիբանանեան Համակարգը եւ Հայ Մշակութային Երկուութիւնը Երէկուան, Այսօրուան եւ Վաղուան Միջեւ. Առիթներ եւ Սահմանափակումներ) նիւթով: Նիստի աւարտին, տեղի ունեցաւ աշխոյժ զրոյց եւ կարծիքներու

փոխանակում, եռօրեայ գիտաժողովին մասին հնչեցին գնահատանքի խօսքեր, շինիչ քննադատութիւններ եւ առաջարկներ:

Չորրորդ եւ վերջին երեկոյի հրապարակային դասախօսութիւնը մատուցեց Դոկտ. Նիքոլա Միլհորինօ, Political Developments In Lebanon And Armernian Communal Strategies: A Preliminary Exploration (Լիբանանեան Քաղաքական Զարգացումներն Ու Հայ Համայնքի Ռազմավարութիւնը (Նախնական Հետազօտութիւն) նիւթով:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. «Հայերը Եւ Լիբանանը - Փոփոխուող Ընթրումներ Եւ Դերեր (ԺԹ.-Ի. դդ.)» (Անգլերէն)

Դասախօս՝ Դոկտ. Այտա Պուճիգանեան

12 Սեպտեմբեր 2005

«Լիբանանահայերը. Իրենց Անցեալն Ու Ներկան» համագումարի բացման պաշտօնական հանդիսութեան գլխաւոր բանախօսն էր նախկին լիբանանահայ Դոկտ. Այտա Պուճիգանեան: Ան ունի Դոկտորական գոյգ վկայական, մին Լիոնի Համալսարանէն, միւսը՝ Մոնթրէալի: Իր ուսումնասիրութիւններուն ասպարէզը մարդկային աշխարհագրութիւնն է (human geography), եւ այս ծիրէն ներս, իր հետաքրքրութիւնը առաւելաբար կը կեդրոնանայ սփիւռքահայ գաղութներուն վրայ:

Համագումարի բացման հանդիսութեան Պուճիգանեանի ներկայացուցած դասախօսութիւնը նուիրուած էր լիբանանահայութեան եւ՛ թէ վեց դարերու ընթացքին, ինչպիսի փոփոխութիւններու ենթարկուած է Լիբանան ընթրումը հայութեան մտապատկերին մէջ:

Շատ արագ նշելով, թէ հայերու եւ Լիբանանի այժմու տարածքին միջեւ կապերը կ'երկարին մինչեւ հռովմէական շրջան, եւ թէ դէպի Հայաստան արաբական արշաւանքներու ժամանակ, հայեր գաղթած են Կիլիկիա եւ Լիբանան, Պուճիգանեան առանձնացուց 5 կէտեր, որոնցմով կը յատկանշուի Լիբանանը շրջակայ տարածքին մէջ:

Ա. Լիբանանը ծանօթ է մանաւանդ կրօնական հանդուրժողականութեամբ: Տարբեր ժամանակներ, Լեռնալիբանանը ծառայած է որպէս շրջանի կրօնական եւ ազգային փոքրամասնութիւններու ապաստարան: Յետագային, լիբանանեան պետութիւնն ալ յարգած ու պահպանած է փոքրամասնութիւններու մարդկային եւ մշակութային իրաւունքները:

Բ. Քաղաքական առումով ալ, Լիբանանը ծառայած է որպէս չէզոք գօտի՝ buffer state, Արեւելքի եւ Արեւմուտքի, կամ Եւրոպայի ու Միջին Արեւելքի միջեւ: 1950-60ականներուն Լիբանանը արաբական երկիրներու միջեւ ալ ունեցած է հաշտարար դերակատարութիւն:

Գ. Տնտեսական բնագաւառին մէջ, մինչեւ 1970ականներու կէսերը, Լիբանան կը համարուէր արաբական աշխարհի ֆինանսական կեդրոնը:

Դ. Պէտք չէ զանց առնել կրթութեան բնագաւառը, ուր Լիբանան նոյնպէս ունեցած է առաջնային դերակատարութիւն:

Ե. Լիբանանի մէկ խորհրդանշական դերակատարութեան հաստատումը կատարեց Յովհաննէս Պօղոս Բ. Պապը, որ Լիբանանը որակեց «ապրող պատգամ» մը, տարբեր կրօնքներու եւ մշակոյթներու համակեցութեան օրինակով:

Բնորոշելէ ետք Լիբանանի դերակատարութիւնը շրջանին մէջ, Պուճիգաճեան կեդրոնացաւ հայերուն վրան, թէ ԺԹ. դարէն սկսեալ, հայեր ինչպէ՛ս դիտած-տեսած են Լիբանանը, արդեօ՞ք տարբեր էր շրջանային տեսանկիւնէն, թէ՞ ունէր նմանութիւններ: Դասախօսը նախեւառաջ հարկ համարեց բացատրել, թէ ի՞նչ պէտք է հասկնալ Լիբանան ըսելով: Անիկա մինչեւ 1920 «Լեռնալիբանան»ն էր, ապա՝ Մեծն Լիբանանը: Իսկ Պէյրութը իբրեւ վարչական տարածք, օսմանեան տիրապետութեան օրերուն անցնելով փոփոխութիւններէ, միայն 1888ին դիտուած է իբրեւ ուրոյն վիլայէթ, քաղաքը ունենալով իբր վարչական մայրաքաղաք: Լեռնալիբանանը 1860ին օսմանեան իշխանութիւններուն եւ եւրոպական ոյժերուն համաձայնութեամբ, հռչակուեցաւ կուսակալութիւն (մութասարիֆիէ), որ կը կառավարուէր օսմանահպատակ քրիստոնեաներէ (առաջին կուսակալն էր Տաուտ Փաշա, վերջինը՝ Օհաննէս Փաշա, երկուքն ալ կաթողիկէ հայեր): Կուսակալութիւնը ունէր լայն ինքնավարութիւն եւ գոյատեւեց մինչեւ Ա. Համաշխարհային Պատերազմ:

Ջուտ հայկական առումով, ԺԷ.-ԺԸ. դարերուն Լիբանան դիտուած է որպէս կրօնական ապաստան, յատկապէս կաթողիկէ հայերուն համար, որոնք Լիբանանի մէջ կը տեսնէին կաթողիկէ դաւանանքի պաշտպանի դերը: Օսմանեան պետութեան եւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ հալածանքներէն խուսափելով, դաւանափոխ հայերը կա՛մ կը փոխէին իրենց ազգութիւնը՝ դառնալով ֆրանք կամ վրացի, եւ կա՛մ կ՚ապաստանէին հիւսիսային Լիբանան, եւ հաստատուելով այնտեղ, աստիճանաբար կը ծուլուէին տեղացի բնակչութեան մէջ: Ասոնց թիւը կը տարուբերի 1,000էն 10,000ի միջեւ: ԺԷ.-ԺԸ. դարերուն, հայ դիմորդներ կ՚ընդունուէին Մարոնիթ Եկեղեցիին ընծայարանները: 25 հայեր անուանապէս յիշատակուած են մարոնիթ զանազան ընծայարաններու մէջ: Անոնցմէ մին՝ Արսէն Շիւքրի 1762ին նշանակուեցաւ Հալէպի եպիսկոպոս:

1720ին կը հիմնուի առաջին հայկական միաբանութիւնը՝ Անտոնեան Միաբանութեան Հայկական Կարգը: Կը կառուցուին եկեղեցիներ եւ վանքեր, Ջրէյմի, Ղազիրի մէջ եւ այլուր: 1749-1750ին, Զմմառի մէջ, առաջին հայ կաթողիկէ պատրիարք՝ Աբրահամ Արծիւեան կը հաստատէ Հայ Կաթողիկէ Պատրիարքարան: *«Ինչո՞ւ ոչ քրիստոնեայ Եւրոպայի մէջ՝ Մխիթար Աբբահօր նման, այլ Լիբանանի մէջ,*- հարց կու տայ Պուճիգաճեան,- *արդեօ՞ք Լիբանանի մէջ հայ կաթողիկէներու ներկայութիւնն էր որոշիչ, թէ՞ Ֆրանսական հովանին, որ կը տարածուէր Լիբանանի կաթողիկէներուն վրայ: Արդեօ՞ք Վատիկանէն առնուած որոշում մըն էր, թէ՞ Արծիւեան զգուշացաւ, որ Եւրոպայի մէջ իր միաբանութիւնը կրնայ լատինանալ, (թէեւ Մխիթարեաններուն*

օրինակը հակառակը ցոյց կու տայ)»: Յամենայնդէպս, անհրաժեշտ պատմական փաստաթուղթերը կը պակսին վճռական եզրակացութեան մը հասնելու համար:

Պէյրութի աշխարհագրական դիրքին պատճառով, 1851ին այնտեղ կը կառուցուի Հայ Առաքելական Ս. Նշան վանքն ու մատուռը, որ Երուսաղէմ մեկնող կամ հոնկէ վերադարձող հայ ուխտաւորներուն համար կը ծառայէ իբրեւ հանգրուան: Այս մասին թուացող փաստը, կը խօսի Լիբանանի կրօնական դերակատարութեան վերաբերեալ հայոց կարծիքին մասին:

Կրօնական նշանակութենէն բացի, հայեր Լեռնալիբանանը դիտած են իբրեւ քաղաքական ինքնավարութեան նմանարկումի օրինակ: Զէյթունի ապստամբութեան օրերուն, Լեռնալիբանան ալ ականատես կ'ըլլար ջարդերու, քաղաքական տակնուվրայութեան: Լեռնալիբանանի ինքնավարութեան օրինակը գրաւիչ էր, ու հայեր դիմեցին Նափոլէոն Գ. կայսեր՝ նման կարգավիճակ մըն ալ Զէյթունի համար ձեռք բերելու համար: Սակայն, ըստ պատմաբան Վահագն Տատրեանի, կաթողիկէացման պահանջքին կտրուկ մերժումը Առաքելական Եկեղեցւոյ իշխանութիւններուն կողմէ, արգելք հանդիսացած է նման ինքնավարութեան մը: 1878էն մինչեւ 1921 Լեռնալիբանանի այդ տիպի ինքնավարութիւնը՝ Բարձրագոյն Դրան կամ միջազգային ատեաններու մօտ հայերու կողմէ ներկայացուած է իբրեւ գործադրելի նմանարկման օրինակ: Միայն 1914ի բարենորոգումներու ծրագրով, հայեր կրցան կարճատեւ ինքնավարութեան մը տիրանալ, որ վերջ գտաւ շատ շուտով:

Հայերու կողմէ, Պէյրութ դիտուած է նաեւ իբրեւ տնտեսական եւ կրթական կարեւոր կեդրոն: Յատկապէս ԺԹ. դարու երկրորդ կիսուն, Պէյրութ կը վերածուի շրջանի կարեւորագոյն տնտեսական եւ կրթական կեդրոնին: Բազմաթիւ հայ վաճառականներ, ուսանողներ ու մասնագէտներ կը հաստատուին այնտեղ: «*Այս զարգացման մէջ պէտք է ընդգծել երկու երեւոյթ*,- ըսաւ Պուճիգաեան:- *Ի տարբերութիւն նախորդ դարերուն, Լիբանանի դերը այլեւս չի սահմանափակուիր Լեռնալիբանանով, եւ միայն կաթողիկէ հայերը չեն, որ կը գաղթեն Լիբանան, մանաւանդ 1895ի Սասնոյ/Կիլիկիոյ ջարդերէն ետք: 1890էն մինչեւ 1910, 80 հայ վաճառականներ կը հաստատուին Պէյրութ, եւ քանի մը տարիէն կը ստեղծուի «Սուք էլ-էրմէնը»՝ հայոց չուկան: Նշանակալից ներկայութիւն մը եղած են նաեւ հայ շինարարներն ու ճարտարապետերը*»:

Բացի վաճառականներէն, կար նաեւ հայ ուսանողութեան զգալի ներկայութիւն մը Ամերիկեան եւ Ֆրանսական Համալսարաններու Բժշկական Մասնաճիւղերէն ներս, ուր կ'ուսանէին բազմաթիւ հայեր: Ըստ Աւետիս Սաճճեանի, մինչեւ 1918, 232 հայեր շրջանաւարտ եղած էին այդ մասնաճիւղերէն: Անոնցմէ շատեր վերադարձած են իրենց բնակավայրերը, ուրիշներ ալ՝ քաղաքականապէս գործունեայ, հաստատուած են Պէյրութ, ուր դարավերջին արդէն կը գործէին հայ կուսակցութիւններու բջիջներ:

Յեղասպանութենէն ետք՝ 1914-1924, բազմաթիւ հայեր, գլխաւորաբար ֆրանսական իշխանութիւններուն որոշումով կամ քաջալերանքով կը հաստատուին Լիբանան, որ կը շարունակէր դիտարկուիլ իբրեւ չէզոք՝ հետեւա-

բար ապահով տարածք: Քաղաքական, տնտեսական եւ ընկերային զարգացումները կը յանգին Լիբանանի անկախութեան, 1946ին:

Անկախ Լիբանանը հայերուն համար ձեռք կը ձգէ կարեւոր դերակատարութիւն. Պէյրութը հայերուն համար կը դիտուի իբրեւ շրջանային կարեւոր կեդրոն, եւ կը ստանձնէ սփիւռքահայութեան մայրաքաղաքի պարտաւորութիւնները:

Շրջանի երկիրներուն մէջ միայն Լիբանան որդեգրեց քրիստոնեայ-իսլամ քաղաքական եւ ընկերային համակեցութեան դրոյթը: Լոզանի դաշնագրով, հայեր արդէն համահաւասար քաղաքացիներ դարձած էին: Անկախութենէն ետք, անոնք ստացան քաղաքական իրաւունքներ եւ վերածուեցան համայնքային ներկայութեան:

Քաղաքականին առընթեր, սահմանադրութեամբ փոքրամասնութիւններուն շնորհուած մշակութային, կրօնական եւ անհատական ազատութիւնները, ինչպէս նաեւ ազատ տնտեսական ենթակառոյցը Լիբանանը առանձնացուցին շրջանի երկիրներէն ու վերածեցին մեծապէս հրապուրիչ երկրի մը:

1950ականներուն մեծ թիւով հայեր կու գան Լիբանան՝ Սուրիայէն, Իրաքէն, Յորդանանէն, Եգիպտոսէն: Գաղութը կը գօրանայ, առաւել կը կազմակերպուի. այնտեղ կը կեդրոնանան քաղաքական կուսակցութիւններուն, բարեսիրական եւ մշակութային միութիւններուն դեկավար մարմինները: Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն ու Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը կը գործեն Լիբանանէն:

Լիբանան ձեռք կը ձգէ Սփիւռքի կեդրոնի կարգավիճակ: Հայերէն հրատարակութիւններ, հայ գործիչներ՝ Լիբանանն է որ կը հայթայթէ միւս գաղութներուն:

1975էն ետք, Լիբանան 'գրաւիչ միջավայր'ի մը փոխած կը վերածուի 'վանողական միջավայր'ի մը: Բազմաթիւ հայեր կ'արտագաղթեն Լիբանանէն ու կը հաստատուին արտասահման, յատկապէս՝ արեւմտեան երկիրներ:

Իր խօսքի աւարտին, Պուճիգաճեան նշեց, թէ Լիբանանի դերակատարութիւնը՝ հայ իրականութեան համար միայն որակային չէ, այլ նաեւ՝ ժամանակային: ԺԹ. դարուն Եգիպտոս նոյնպէս ձեռք ձգած է նմանօրինակ դերակատարութիւն, սակայն, այն ինչ Լիբանանը կ'առանձնացնէ, այդ դերակատարութեան յարատեւումն է, նոյնիսկ փոփոխուող պայմաններու տակ:

Լիբանանը, տեղի հայութեան համար միշտ կը մնայ համակեցութեան տիպար երկիր մը, իսկ Սփիւռքի հայութեան համար հայկական ժառանգութեան պահպանման կեդրոն մը:

Բ. «Վերակերտել Ազգը Կիներու եւ Որբերու Ճամբով.
Գործն ու Ասոր Հակասութիւնները»
Դասախօս՝ Դոկտ. Վահէ Թաշճեան
13 Սեպտեմբեր 2006

Համագումարի հրապարակային դասախօսութիւններուն երկրորդը նուիրուած էր Եղեռնէն ճողոպրած հայ կիներու եւ որբերու ճակատագրին:

Վահէ Թաշճեան, ֆրանսաբնակ լիբանանահայ մըն է, որ աւարտած է Լիբանանի Նշան Փալանճեան Ճեմարանը եւ Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան Ֆակուլտետը: Դոկտորական վկայականը ստացած է Փարիզի École des Hautes Études en Sciences Socialesէն: Այժմ կը պաշտօնավարէ Փարիզի ՀԲԸՄի Նուպարեան Մատենադարանին մէջ: Թաշճեանի ուսումնասիրութիւններուն նիւթը Ի. դարու Կիլիկիոյ եւ Արեւելքի հայոց պատմութիւնն է: Հեղինակ է պատմագիտական մենագրութեան մը եւ յօդուածներու:

Դասախօսութեան նիւթը նուիրուած էր Եղեռնէն ետք ազգի վերակազմակերպման ջանքերուն, յատկապէս որբերն ու լքեալ կիները Օսմանեան կայսրութեան արաբական նահանգներէն, յատկապէս Սուրիայէն հաւաքելու, համախմբելու եւ ազգ վերադարձնելու աշխատանքին՝ 1918 եւ 1919 տարիներուն:

1917ին, երբ Բրիտանական բանակներուն դէպի հիւսիս՝ Օսմանեան տարածքներ յառաջխաղացքը սկիզբ կ'առնէ, դաշնակից զօրքերը ականատես կ'ըլլան Եղեռնի ահաւորութեան: Մարդասիրական օժանդակութեան առաջին քայլերը կ'առնէ Եգիպտոսի հայ գաղութը, որ կը ստեղծէ մարդասիրական օժանդակութեան ցանց մը, հասնելու տարագիրներու անմիջական կարիքներուն: Այդ աշխատանքներուն ընթացքին, 1918ի սկիզբը, կը ծնի որբերն ու լքեալ կիները հաւաքելու, համախմբելու ու անոնցմով զբաղելու անհրաժեշտութիւնը, որ շուտով կը վերածուի առաջնահերթ նպատակի, եւ մեծ թափ կ'առնէ մանաւանդ պատերազմի աւարտէն անմիջապէս ետք:

Դասախօսը նշեց, թէ պետերիներու կամ իսլամ ընտանիքներու մօտ պահուող երեխաներուն, երիտասարդ աղջիկներուն ու կիներուն հաւաքման համար մեծ ջանքեր ի գործ կը դրուէին. այդ աշխատանքը այդքան ալ հեզասահ չէր ընթանար, քանի Թուրքիոյ պարտութիւնը «համարձակութիւն» տուած էր հայերուն պաշտպանելու եւ պահանջելու իրենց իրաւունքները:

Հայկական Լեգէոնի զինուորները ինքնակոչ կերպով, իսկ ՀԲԸՄն ֆինանսաւորուող Լեւոն Եօթնեղբարեանի գինեալ խումբը եւ Ռուբէն Հերեանի խումբը պաշտօնական լիազօրութիւններով օժտուած, լծուած էին հայ տարագիրները հաւաքելու աշխատանքին: 9 Օգոստոս 1919ին Կիլիկիան կառավարող ֆրանսական վարչամեքենան կը հրապարակէ թիւ 107 օրէնքը, որ կը պարտադրէ իսլամ ընտանիքներուն, 30 օրուան ընթացքին, տեղեկացնել իրենց քով պահուող քրիստոնեաներուն մասին: Իւրաքանչիւր պարագայ կը քննուէր, եւ եթէ ապացուցուէր ենթակային քրիստոնեայ ըլլալը, անիկա կը

յանձնուէր իշխանութիւններուն: Վերապրողներու մեծամասնութիւնը երեխաներ, կիներ եւ աղջիկներ էին, որոնց կարեւոր մէկ մասը կը գտնուէր իսլամ ընտանիքներու մօտ: Թաշճեան որբերու, երիտասարդ կիներու ու աղջիկներու հաւաքման այս աշխատանքը անհրաժեշտ նկատեց քննել ազգային վերակերտման գործընթացին ընդմէջէն: Հայերու ոչնչացման փորձերը կը շրջուէին եւ ազգի վերահաստատման ջանքերն էին որ սկիզբ կ'առնէին, որբերու եւ լքեալ կիներու ճամբով:

Թաշճեան դիտել տուաւ, թէ «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան ազգայնական գաղափարախօսութիւնը, կիներու եւ երեխաներու հանդէպ միեւնոյն մոլեգնութիւնը չէր ցուցաբերած ինչ՝ այր մարդոց հանդէպ: Եթէ կարելի էր զանոնք մեկուսացնելով, իսլամական միջավայրին համարկել ու այդպիսով անոնց ազգային ինքնութեան գոյատեւումը արգելակել, ապա անոնք կրնային եւ չսպաննուիլ: Ինքնութեան ոչնչացումը կը փոխարինէր ֆիզիքական հաշուեյարդարը: Այդպիսով հազարաւոր հայ որբեր կը գետեղուին նորաբաց թրքական հաստատութիւններու եւ իսլամ տուներու մէջ՝ զանոնք թրքացնելու մտադրութեամբ:

Որբերուն թրքական միջավայրի մէջ հասակ առնելու գործընթացը, կիներու բռնաբարութիւնը կամ բռնի կենակցութիւնը թուրքերու հետ, այդ պատճառով ծնած ապօրինի զաւակներու պարագան, համախմբման աշխատանքին զուգահեռ, ծնունդ կու տան այլ անհրաժեշտութեան մը, որ թրքացումի հետքերէն «մաքրուելու» պահանջը էր: Համայնքէն ներս անոնց համարկումը, ներմուծումը բարդ գործընթաց էր, մատնանշեց Թաշճեան: Ի վերջոյ վերակերտման աշխատանքներուն մէջ մեծ գրաւ դրուած էր որբերուն եւ երիտասարդ կիներուն ու աղջիկներուն վրայ, հետեւաբար անոնց ֆիզիքական պաշտպանութեան կողքին, զանոնք դէպի ազգ վերադարձնելու սկզբունքային հիմերն ու միջոցները պէտք է անմիջապէս ստեղծուէին:

Ազգային վերականգնումի աշխատանքներուն մէջ ազգի բեկորներուն համախմբումը փաստ էր Ցեղասպանութեան ձախողութեան: Օսմանեան բոլոր «աւանդ»ներէն խզումը անդարձ էր: Ասոր բարացուցական օրինակներէն մին, Թաշճեանի համոզմամբ, թրքախօսութեան դէմ ծաւալած պայքարն էր:

Որբանոցներուն տրուած էր ունենալ բանալի դերակատարութիւն: Ազգայնաշունչ մթնոլորտի մը ստեղծումը որբանոցներէն ներս լաւագոյն միջոցներէն էր: Այս առումով, որոշ վերապահութեամբ ընդունուած են արեւմտեան բարեսիրական եւ միսիոնարական ընկերութիւններու միջամտութիւնները որբանոցներու կառավարման եւ որբերու դաստիարակութեան աշխատանքներուն: *«Որը էակը կը դառնայ խորհրդանիշը ազգային վերածնունդի,-* ըսաւ Թաշճեան:- *Այս իմաստով ալ ազգային միջավայրի մը մէջ անոր պաշտպանութիւնն ու կրթութիւնը կը վերածուին բացարձակ առաջնահերթութիւններու»:*

Դէպի ազգ վերադարձի ու համարկման աշխատանքներուն մէջ տարբեր եղած է պարագան իսլամ ընտանիքներու մօտէն բերուած հայ աղջիկներուն ու կիներուն, մանաւանդ անոնց, որոնք ստիպողութեան տակ գտնուած են

պոռնկանալու կամ ծնունդ տալու բոնի ամուսնութիւններէ եւ բռնաբարումներէ սերած զաւակներու: Հայկական ընկերութիւնը, կ'անտեսէր այս խառին ապրած ողբերգութեան ընկերա-հոգեբանական ծալքերը: Հետեւանքը կ'ըլլար այն, որ անոնք յաճախ կը մեկուսանային կամ կը հեռանային ազգային համայնքէն, երբեմն նոյնիսկ կը վերադառնային իրենց նախկին կեանքին:

Հակասական վերաբերմունքի կ'արժանանային այս կիներն ու աղջիկները. Թաշճեան *«կրկնակի զոհեր»* կը համարէ անոնք, որոնք կրեցին թուրքին բոլոր նուաստացումները եւ այժմ կ'ենթարկուէին իրենց ազգակիցներու քամահրանքին, բէեւ Զապէլ Եսայեանի եւ Երուանդ Օտեանի օրինակով ան ցոյց տուաւ նաեւ բարեացակամ, կամ հասկացողական վերաբերմունքի մը գոյութիւնը:

Իսլամներու հետ պարտադիր ամուսնութիւն կնքած, կամ պոռնկութեան դիմած կիները բրքացման բոլոր ազդեցութիւններէն ու բրքական բոլոր հետքերէն «մաքրելու» պահանջը կը մղէր ազգային հաստատութիւնները դիմելու վճռական քայլերու: Այս պատճառով կը հիմնուին ապաստարաններ, ուր այդ կիները կը գտնէին պաշտպանութիւն, կը տրվէին զանազան արհեստներ, կը ստանային բժշկական խնամք, մէկ խօսքով՝ նոր կեանքի մը վերսկսման ու համարկումի սկզբնական քայլերը կը կատարուէին: Օգտուելով Հալէպի ապաստարանի տնօրէնութեան ու ՀԲԸՄի Գահիրէի կեդրոնին միջեւ կատարուած թղթակցութեան արխիւէն, Թաշճեան, յենլով անհատական պարագաներու օրինակին, ցոյց տուաւ այդ կիներուն ապրած վիճակը, անոնց ապաստարան գալուստի պայմանները, անոնց կեանքը հեզասահ դարձնելու համար պատասխանատուներու ի գործ դրած միջոցները եւն.: Շատեր կը յաջողին համակերպիլ նոր կեանքին, ուրիշներ՝ ոչ. ողբերգական կը թուի այնպիսիներուն պարագան, որոնք ստիպուած կ'ըլլային լքել իրենց ապօրինի ծնունդ զաւակները:

«Այն առանձնաչնորհեալ վերաբերմունքը որուն արժանի եղած էին որբերը...շատ յաճախ ի զօրու չէր լքեալ կիներու պարագային», նշեց դասախօսը: Շատ մը պատասխանատուներ ազգային վերակերտումին մէջ այս կիներուն համար դերակատարութիւն մը չէին տեսներ: Ուրիշներ կը մերժէին իսլամի ծնունդ անոնց զաւակները: Թաշճեան օրինակներով ցոյց տուաւ նման համոզումի նմոյշներ Միքայէլ Նաթանեանէն եւ Քարէն Եփփէէն:

Առ ի եզրակացութիւն, Թաշճեան նշեց, թէ լքեալ կիներն ու մանաւանդ որբերը կը համարուէին ազգի վերակերտման գլխաւոր կռուանը: Կիներու պարագան միշտ վերջերս *թապու* էր, հայեր չէին անդրադառնար անոնց:

Ազգային սեփական օճախ մը ունենալու յոյսը ի դերեւ ելլելէն ետք, նախկին որբերուն վստահուեցաւ կարեւոր դերակատարութիւն հայկական համայնքային կեանքին մէջ: *«...Դաստիարակուած եւ իր ինքնութեան գիտակից որբը լաւագոյն երաշխիքն էր ազգի վերակերտումին»*՝ եզրափակեց Դոկտ. Վահէ Թաշճեան:

Գ. «Լիբանանահայութեան Տեղն ու Դերը
Սփիւռքի Զարգացման Հոլովոյթին Մէջ»
Դասախօս՝ Դոկտ. Խաչիկ Տէր Ղուկասեան
14 Սեպտեմբեր 2005

Համագումարի ծիրէն ներս երրորդ դասախօսութիւնը նուիրուած էր լիբանանահայութեան սփիւռքեան դերակատարութեան՝ Սփիւռքի տարբեր կեդրոններուն մէջ կատարուող փոփոխութիւններու հոլովոյթին մէջ:

Խաչիկ Տէր Ղուկասեան Համակարգչային Գիտութիւններու Պսակաւոր Գիտութեանց վկայականը Հայկազեան Գոլէճէն ստանալէ ետք, Միջազգային Յարաբերութիւններու Մագիստրոս Արուեստից եւ Դոկտորական վկայականները ստացած է Պուենոս Այրէսի եւ Ֆլորիտայի Համալսարաններէն, համապատասխանաբար: Այժմ կը դասախօսէ արժանթինեան համալսարանի մը մէջ: Հեղինակ է Սփիւռքին նուիրուած ուսումնասիրութիւններու:

Դասախօսը նախ նշեց, թէ այս որոշ չափով գրգռիչ թուացող նիւթը, իր բնոյթով բաւական դժուար է իրեն համար՝ որովհետեւ ինք այս գաղութին մէջ ծնած է ու այստեղ ստացած է իր մտաւորական կազմաւորումը, եւ այդ ընթացքին գաղութին տեղին ու դերին շուրջ ունեցած է որոշ գաղափար, որուն փոխուած ըլլալուն ականատես եղած է արտասահման իր ճամբորդութիւններուն ընթացքին: «*Լիբանանահայութեան դերին փոփոխութիւնը նորանալու մարտահրաւէր մըն է*», ըսաւ Տէր Ղուկասեան:

1975ին լիբանանահայութիւնը կը գտնուէր իր զարգացման գագաթնակէտին: Քաղաքացիական պատերազմի առաջին երկու տարիներուն, գաղութի լինելութեան հարցին փտանգումը ամբողջ Սփիւռքի մտահոգութիւնն էր: Գաղութահայ բոլոր մարմինները լիբանանահայութեան օժանդակելու համասփիւռքեան գօրաշարժի մը լծուեցան: Այս գօրաշարժը ոչ թէ անհատներու օժանդակութիւն հասցնելու համար էր, այլ բանաձեւուած էր լիբանանահայ գաղութը կայուն պահելու եւ համայնքային կեանքի շարունակականութիւնը ապահովելու հիմնաւորումին վրայ: Այդ օրերուն լիբանանահայութեան համայնքային կազմակերպ կեանքի յարատեւումը կը դիտուէր իբրեւ Սփիւռքի շարունակականութեան պայման եւ անով ալ պայմանաւորուած էր Սփիւռքի գերագոյն նպատակը՝ Հայաստան վերադարձը:

Ըստ դասախօսին, լիբանանահայութեան այս դերը ունէր երկու պատճառ.

ա. Մշակութային՝ հայապահպանման ձգտող հաստատութիւններու եւ անոնց աշխատանքին նպաստող պայմաններու, եւ արեւմտահայ լեզուին ու մշակոյթին պահպանման միջավայրի մը գոյութիւնը, ի տարբերութիւն այլ համայնքներու:

բ. Քաղաքական՝ Հայ Դատի գինեալ պայքարի ժամանակաշրջանի սկզբնաւորումը, կուսակցութիւններուն մերձեցումը, յիսնամեակէն վաթսնամեակ երկարող գարգացումները: Այս բոլորն ալ Լիբանանը ունէին իբրեւ իրենց «ծննդավայր»:

1980ականներու կէսերէն սկսեալ, նաեւ պատերազմի աւարտէն յետոյ, հակառակ վերաշխուժացման փորձերուն, լիբանանահայութեան կեդրոնականութեան իմաստը չքացաւ: ԻԱ. դարու սկզբնաւորութեան, Սփիւռքի միւս համայնքներուն նման, լիբանանահայութիւնն ալ իր տեղն ու դերը սահմանելու մարտահրաւէրին դիմաց կը գտնուի:

Հասկնալու համար կեդրոնականութիւն հասկացութիւնը, անհրաժեշտ է հասկնալ «Սփիւռք» յղացքին ըմբռնումը:

Ազգի ինքնաճանաչման իւրայատուկ ըմբռնում մը գոյութիւն ունի, ու հայրենիքի իրական կամ երեւակայածին գոյութիւնը պայման է ազգի գոյութեան շարունակականութեան: Հայութեան համար, անկախ ազատ, անկախ, միացեալ Հայաստանն է, թէեւ խորհրդային տարիներուն, Սփիւռքի հակախորհրդային ճակատը երբեք չէր ժխտեր Խորհրդային Հայաստանի հայրենիք ըլլալու իրողութիւնը: Իսկ խորհրդային իրողութիւնը ընդունող ճակատն ալ, երբեք չէր ժխտած ապագայի Մեծ Երազը: Տէր Ղուկասեան այս բոլորին մէջ կարեւոր նկատեց ամբողջ հայութիւնը համախմբող հայրենիքի գաղափարի գոյութիւնը, որովհետեւ ատկից դուրս «ճերմակ ջարդ»ն էր: Հետեւաբար, անհրաժեշտ էր հայապահպանման միջոցները զօրացնել, *կեթոլիկոսութիւն* ու պատրաստուիլ վերադարձի, երբ պայմանները ներեն: Ը. Համաշխարհային Պատերազմէն ետք, Լիբանանն էր այն երկիրը ուր հայապահպանումը կրնար զօրանալ: 1958ի դժբախտ դէպքերուն բերած քաղաքական հաստութիւնը ծնունդ տուաւ յիսնամեակի գործակցութեան եւ քաղաքաքացիական պատերազմի հայկական միացեալ ճակատին:

Սփիւռքի սահմանման ամբողջական տեսութիւն մը, հակառակ իր թերիներուն անհրաժեշտ է, որովհետեւ մենք եթէ միայն որպէս համայնք դիտենք մենք զմեզ, շատ երկար ճամբայ չենք կրնար կտրել, որովհետեւ 1990ականներէն ի վեր պայմանները արմատականօրէն փոխուած են: Ազգ-հայրենիք կապին եւ Սփիւռքի այս յատուկ մտասեւեռումին, մտահոգիչ «հեղինակը» Ցեղասպանութենէն վերապրող, անկախ հայրենիքը ապրած, ու ազգի զարգացումը հայրենիքին կապող մտաւորականութիւնն էր: Ասոր շնորհիւ, հայ սփիւռքը վերածուած է նպատակաուղղուած հաւաքականութեան:

1975 Օգոստոսին, կը սկսի համասփիւռքեան օժանդակութեան գործը յանուն Լիբանանին՝ «*Սփիւռքի մշակութային միջնաբերդ*»ին՝ ինչպէս գրած է Մուշեղ Իշխան, ուր հայ մշակոյթը, լեզուն կը զարգանան:

Քաղաքական համարկման պայմանները 1950-60-70ականներուն, առիթ կ'ընծեռէին Լիբանանէն համայն հայութեան մասին մտածելու: «*Մեր սերունդին ստացած դաստիարակութիւնը,*- ըսաւ Տէր Ղուկասեան,- *այն էր, որ այս բոլորը ժամանակաւոր հանգրուան մըն է, եւ վերջնական նպատակը, Հայաստան վերադարձն է*»:

1975էն առաջ իսկ, վաթսունականներէն սկսեալ, Լիբանանը վերածուած էր մագնիսի: Պատերազմին, ինքնապաշտպանութեան կազմակերպումը հպարտութեան աղբիւր էր, զորօրինակ Արժանիքինի հայերուն համար:

Ի՞նչ ազդակներ նպաստեցին յանուն լիբանանահայութեան համախմբեան զօրաշարժին,- հարցադրեց Տէր Ղուկասեան, ու նշեց երեք ազդակներ.-

ա. Հայրենիքին աշխարհագրական մօտիկութիւնը,

բ. Հայապահպանման պայմաններու իրայատկութիւնը,

գ. Ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն կազմակերպման առնուազն մտաւորական խարիսխը:

Արժանքիին մամուլին մէջ, այս ազդակներուն իբրեւ հետեւանք, մեծապէս կը լուսաբանուէին Լիբանանի դէպքերը, յատկապէս հայութիւնը յուզող խնդիրները:

Սակայն, ի՞նչ էր պատճառը այս հետաքրքրութեան նուազումին: Դասախօսը հետեւեալ կերպ բանաձեւեց զանոնք.-

ա. Պատերազմի երկարաձգումը լուրջ պատճառ մը պէտք է նկատել: Մամուլին առնչուած ոեւէ անձ, գիտէ, թէ լուրերու կրկնութիւնը ձանձրոյթ կը պատճառէ:

բ. Մշտական զօրաշարժի անհնարութիւնը. գաղութները իրենց ամենօրեայ օրակարգերը, կարիքները ունէին: Փաստ է նաեւ այլ համայնքներու վերաշխուժացումը, ինչ-որ չափով հետեւանք՝ Լիբանանէն արտագաղթին:

գ. Միջազգային կացութեան փոփոխութիւնը. 'Կորպաչեւ' երեւոյթի յառաջացումով ամբողջ աշխարհի մէջ փոփոխութեան գործընթաց մը սկսած էր. մարդիկ իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցած էին աւելի հետեւանքով յառաջացած երեւոյթներուն վրան:

դ. 1980ականներու կէսերէն ետք Հայ Դատի միջազգայնացման աշխատանքներուն մէջ Եւրոպայի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու դերին յաւելումը՝ ի հաշիւ Միջին Արեւելքի դերին նուազումին:

ե. Հայ քաղաքական երեք կուսակցութիւններու կեդրոններուն կամ ղեկավար դէմքերուն Լիբանանէն հեռացումը:

Ասոնց կողքին մասնաւոր կարեւորութիւն ունին դարաբաղեան դէպքերը, երկրաշարժը, եւն.:

Անկախութեամբ Հայաստան դարձաւ կեդրոն, եւ տեսականօրէն բացուեցաւ վերադարձի ճանապարհները:

Հիմնական հետեւութիւն-եզրակացութիւններ պէտք է ընել վերոյիշեալներէն՝ նշեց Տէր Ղուկասեան: Սփիւռքը հիմա այն չէ, ինչ որ էր 70 տարիներէ ի վեր: Կարելի չէ մտածել, թէ Սփիւռքը հանգրուան մըն է, եւ անպայմանօրէն պէտք է վերջանայ Հայաստանով: Նման մտածումի մը հետեւանքով Սփիւռքը կրնայ գոյութիւն չունենալ: Այլ խօսքով, պէտք է արդարացնենք «հանգրուան Սփիւռք»ի գոյութիւնը, երբ այլեւս չկայ վերադարձի արգելք: Իսկ եթէ ընդունինք, թէ Սփիւռքը հանգրուան չէ, ապա ի՞նչ է ան, հարց տուաւ դասախօսը ու ըսաւ, որ Հայաստանի անկախութիւնը կախարդական լուծումներ չբերաւ Սփիւռքի հարցերուն, այլ դուռ բացաւ նոր մարտահրաւէրներու, ինչպէս՝ Հայաստանէն մէկ միլիոն արտագաղթողներու պարագան:

Այս արտագաղթածներուն անդրադառնալով, դասախօսը զանոնք Սփիւռք չնկատեց, այլ հարցադրեց թէ արդեօ՞ք «Նոր Սփիւռք» են անոնք: Ինչո՞ւ համար այս արտագաղթը չէ ստեղծած աշխուժութիւն գաղութներուն մէջ: Արտագաղթողներու այս հաւաքականութիւնը Հայաստան մնացած իր հայրենակիցներուն տնտեսական նեցուկ է, շատ նման՝ Հարաւային Ամերիկայէն Միացեալ Նահանգներ գաղթի ալիքին: Այս արտագաղթը եւ հայապահպանման փոփոխութիւնները հարցականի տակ կը դնեն արեւմտահայերէնի ապագան: Սփիւռքածին չորրորդ-հինգերորդ սերունդներուն համար ի՞նչ է հայեցի դաստիարակութեան յղացքը, հայ դպրոցի մտահորիզոնը ի՞նչ պիտի ըլլայ կեանքի զանազան պարտադրանքներուն դիմաց, ինչպէս՝ ոչ-հայ աշակերտներու ներկայութիւնը հայ դպրոցներէ ներս:

Համաշխարհայնացման գործընթացին մէջ, սփիւռքացումը չի դիտուիր իբր ժխտական երեւոյթ: Այլ երկիրներու օրինակները՝ Արժանթին, Մեքսիքօ, եւն. ցոյց կու տան, թէ Սփիւռքը կրնայ օգտակար երեւոյթ մը ըլլալ: Ուստի, ըստ Տէր Ղուկասեանի, հայրենադարձի չիրականացումը կրնայ չնշանակել Սփիւռքի վախճանը. ան կրնայ ունենալ նոր տեսլական մը, որ պէտք է զարգանայ, ինչպէս տեղի ունեցաւ Սփիւռքի ինքնագիտակցումի զարգացումը տասնամեակներու ընթացքին:

«*Սփիւռքածին չորրորդ սերունդը կը հասնի դեկավար դիրքերու,*- նշեց դասախօսը,- *որ այլ կերպ կը մտածէ, եւ ինքզինք այդքան ալ չ'առնչեր համայնքային կազմակերպութիւններուն, ինչպէս էկոյեան մը, որ այսօր երեւոյթ մըն է: Այս լոյսին տակ, համայնքային կառոյցներ պէտք է գտնեն իրենց տեղն ու դերը ներկայ իրականութեան մէջ*»: Այդպիսով, նոր տեսլականով օժտուած Սփիւռք մը, ըստ Տէր Ղուկասեանի, կրնայ դադրիլ ճերմակ ջարդի ուրուականը ըլլալէ, եւ մեզի կ'ապահովէ հայապահպանման եւ հայազարգացման պայմաններ:

Լիբանանը, համասփիւռքեան իրականութեան մէջ դեռ ունի դերակատարութիւն եւ առաւելութիւններ, ինչպէս՝ հայախօսութիւնը, արեւմտահայերէնի զարգացումը: Քաղաքական կեանքի մէջ ալ, Լիբանանը կրնայ նպաստել իսլամական աշխարհին հետ տիալոգ հաստատելու աշխատանքին:

Դ. «Լիբանանեան Քաղաքական Զարգացումներն Ու
Հայ Համայնքի Ռազմավարութիւնը (Նախնական Հետազօտութիւն)»
(Անգլերէն)
Դասախօս՝ Դոկտ. Նիքոլա Միլհորիճ
15 Սեպտեմբեր 2005

Համագումարի ծիրէն ներս, չորրորդ եւ վերջին հրապարակային դասախօսութիւնը ներկայացուց Էքսիքըզրի Համալսարանէն, Դոկտ. Նիքոլա Միլհորիճ, որ մասնագէտ է միջին արեւելեան քաղաքականութեան: Անոր դոկտորական թեզը նուիրուած է Լիբանանի եւ Սուրիոյ հայկական համայնքներուն:

Միլիորինոյի դասախօսութիւնը նուիրուած էր Լիբանան-հայ համայնք յարաբերութիւններու կազմաւորումին: Ան նշեց, թէ Լիբանանի հայերը յաճախ դէմ յանդիման գտնուած են Լիբանանի հանդէպ իրենց սէրը, նուիրուածութիւնն ու կառչածութիւնը փաստելու անհրաժեշտութեան, հակառակը պնդող անհիմն ամբաստանութիւններու ի լուր: Ո՛չ հայ համայնքը, ո՛չ իսկ Լիբանանը միատարր, անփոփոխ մարմիններ են: «Անպատկանելիութեան» որեւէ մեղադրանքէ առաջ, անհրաժեշտ է ուսումնասիրել համայնքին կազմութիւնն ու ապրած եղափոխութիւնը, նկատի առնել ակնկալիքները, եւ մանաւանդ դիտել այդ բոլորը՝ լիբանանեան քաղաքական դրութեան զարգացող եւ փոփոխուող հոլովոյթին ընդմէջէն, երբ հայկական որեւէ դիրքորոշում կախեալ էր լիբանանեան հասարակութեան փոխակերպումէն: Յամենայնդէպս, համայնքին կրօնական եւ աշխարհիկ առաջնորդները, մամուլով թէ այլապէս, յաճախ անհրաժեշտութիւնը տեսած են յիշեցնելու լիբանանահայութեան ամբողջական կառչածութիւնը՝ Լիբանանին ու անոր համայնքային կառոյցին:

Հայութիւնը իբրեւ Լիբանանի համայնքներէն սոսկ մէկը ներկայացնելու ջանքը, կը վնասէ հայութեան բնորոշ յատկանիշներուն ուսումնասիրութեան, օրինակ՝

- Սփիւռքեան իրականութիւնը եւ հայութեան միջգաղութային յարաբերութիւնները,
- Հայաստանի Հանրապետութեան հետ յատուկ կապերը,
- Հայութեան բերած հարուստ մշակութային այլազանութիւնը միջին արեւելեան մշակոյթին՝ այբուբէնով, ոչ-սեմական լեզուով, իւրայատուկ քրիստոնէութեամբ եւ պատմութեամբ, ինչպէս նաեւ Ցեղասպանութեան ծանր յուշերով:

Վերոյիշեալ առանձնայատկութիւններու լոյսին տակ, պէտք է հարց տալ, ըսաւ դասախօսը, թէ ինչպէ՛ս կարելի է հաշտեցնել հայկական պատկանելիութեան իւրայատկութիւնն ու Լիբանանի հանդէպ ամբողջական եւ միակ պատկանելիութեան զգացումը: Ասոր պատասխանը կը գտնուի ոչ թէ հայկական, այլ աւելին՝ լիբանանեան դրոյթի առանձնայատկութիւններուն մէջ: Համակեցութիւնը Լիբանանի առանձնայատկութիւններէն է. անոր բաղկացուցիչ մասերը միշտ ալ վերածեւած են իրենց համար, թէ ի՞նչ է Լիբանանը: Զորօրինակ՝ ի՞նչ կը ներկայացնէ Լիբանանը արտասահմանի լիբանանցիներուն համար, պատմութեան ընթացքին, Լիբանանը բաղկացնող համայնքները ի՞նչպէս բացատրած են լիբանանեան ինքնութիւնը: Օրինակ, նասրրականները կամ համաարաբականութեան կողմնակիցները, կամ իրանեան թեքում ունեցող շիիները:

Միլիորինօ նշեց, թէ իր դասախօսութեան նպատակն է, ուսումնասիրել հայ համայնքին դիրքը Լիբանանի քաղաքական պատմութեան ընթացքին կատարուած կարգ մը բանալի իրադարձութիւններու պարունակին ընդմէջէն: Դասախօսը յոյս յայտնեց, թէ այս աշխատանքով ինք կը կարենայ բացատրել, թէ «օտար» եւ այլ մշակոյթի պատկանելիութիւնը ժխտական ոչինչ ունի, այլ ընդհակառակը, կրնայ ցուցաբերել մասնակցութեան մէկ այլ տարբերակ:

Առաջին բանալի իրադարձութիւնը 1920ականներուն է. Լիբանանի եւ անոր սահմանադրական համակարգին կազմաւորումի ընթացքին: Լիբանանի ու հայ համայնքի կազմաւորումը ժամանակային առումով կը համընկնին: Լիբանան հասնող գաղթականները ոչ մէկ փափաք ունէին մասնակցելու յետօսմանեան Արեւելքի հասարակական աշխատանքներուն: Լիբանանի եւ շրջանի այդ օրերու քաղաքական եռուն զարգացումներուն մէջ, հայերը մնացած են լուսանցքի վրայ: Սա չի նշանակեր, թէ անոնք կատարելապէս չէզոք մնացած են: Արաբներու նկատմամբ իբրեւ փրկարարներու մօտեցումը, համատարած է, թէեւ ժխտական ազդակներն ալ ունեցած են իրենց ներգործութիւնը. 1915-1918ին Լիբանանն ու Սուրիան հարուածող սովը, համաճարակները, անկանոնութիւնները, եւն. տեղացիներու կողմէ համարուած են հայերու մեղքը: Հայոց հանդէպ ժխտական վերաբերմունքին համար կայ եւս մէկ նկատառելի պատճառ, ըսաւ դասախօսը. հայերը արաբ ազգայնականներու կողմէ նկատուած են ֆրանսացիներուն դաշնակիցները կամ պաշտպանեալները: Հայերը եւ ֆրանսացիները ունէին փոխադարձ շահեր: Շատ հայեր, ֆրանսացիներուն մէջ կը տեսնէին իրենց փրկարարները, իսկ ֆրանսացիները կը փորձէին օգտուիլ հայերէն՝ իրենց իշխանութիւնը ամրապնդելու համար: Պէտք է նշել սակայն, որ համագործակցութիւնը ոչ թէ համայնքը կը ներգրաւէր, այլ հիմնուած էր անհատներու վրայ, թէեւ ֆրանսացիներ կը շարունակէին մարդասիրական օժանդակութիւն տրամադրել հայերուն եւ քաջալերել անոնց մասնակցութիւնը բանակին ու հանրային մարզերու մէջ:

Ֆրանսացիներուն վերաբերմունքին ամէնէն ցայտուն արտայայտութիւնը 1924-25ին հայերուն լիբանանեան քաղաքացիութեան շնորհումն է՝ համաձայն Լոզանի Դաշնագրի թիւ 30 եւ թիւ 32 յօդուածներու տրամադրութիւններուն: Միլիորիսօ նշեց, թէ այս քայլը արժանացաւ քրիստոնեաներու համամտութեան, իսկ մահմետական առաջնորդներու՝ ընդդիմութեան: Ասոնք ֆրանսացիներու այդ արարքին ետին կը տեսնէին «*քրիստոնեայ բնակչութեան թիւի յաւելումի ծրագիր*»:

Երկրորդ բանալի իրադարձութիւնը, ուր հայեր պէտք է կեցուածք ճշդէին, անկախութեան համար պայքարն ու 1943ի Ազգային Ուխտն է: Այս ընթացքին հայոց մասնակցութիւնը լիբանանեան քաղաքական կեանքին աստիճանաբար ձերբազատեցաւ ֆրանսական ազդեցութենէն: Այս անցումը յատկանշուեցաւ համայնքին մէջ կրօնական առանդական իշխանութիւններու դեկավարի դերին լուսանցքայնացումով եւ դեկին քաղաքական կուսակցութիւններուն ստանձնումով: Հ.Յ. Դաշնակցութեան պարագային ասիկա յաջողեցաւ, երբ 1920ականներուն Կուսակցութեան դեկավարութիւնը անդրադարձաւ, թէ Միջին Արեւելքի մէջ հայոց բնակութիւնը պիտի երկարի, եւ անհրաժեշտ է համապատասխան քաղաքականութիւն մշակել ու պատրաստուիլ վերադարձի երկարաժամկէտ պայքարի: Միլիորիսօ նշեց, որ այս առումով «*Ձեռնակալի միջոցներ ներդրուեցան՝ հաստատելու կամ վերահսկելու եկեղեցապատկան հաստատութիւններ եւ համայնքային կրթական հաստատութիւններ*» առանդական իշխանութեան եւ միւս կուսակցութիւններուն դէմ մրցակցելով: Լիբա-

նաեւեան եւ սուրիական հանրային կեանքին մասնակցութեան այս ծրագիրը չի նշանակեր, թէ Դաշնակցութիւնը կը վերածուէր լիբանանեան կամ սուրիական կուսակցութեան մը: Դաշնակցութիւնը կը հաւատար, թէ քաղաքական գործօն ներկայութիւն մը իրեն պիտի ապահովէր գաղութին ղեկավարութիւնը եւ ազգային պայքարը յառաջ տանելու ամուր հիմեր:

Միւս կուսակցութիւններն ալ ունէին նման նկրտումներ, հետեւաբար հայոց վերապահուած պետական պաշտօնները վերածուեցան միջ-կուսակցական մրցակցութեան ասպարէզներու: Սա կը նշանակէ, թէ ֆրանսական իշխանութիւնները ընտրութիւններու ժամանակ այլեւս չէին կրնար ապաւինիլ գաղութի ամբողջական նեցուկին: Հայկական կուսակցութիւնները պէտք է հաշուի առնէին եւ՛ ֆրանսական, եւ՛ տեղական ոյժերուն հետ լաւ յարաբերութեանց պահպանման անհրաժեշտութիւնը, եւ նեցուկ կանգնելով մէկուն կամ միւսին, պէտք է ապահովէին գաղութին մէջ իրենց գերակայութիւնը:

Ֆրանսացիներուն հակադրուող արաբական կեցուածքը ջնջեց հայերուն հետ աշխատելու վերապահումները: Հայերը սկսան դիտուիլ իբրեւ ընտրական նեցուկ, դաշնակից: Գաղափարական համընկնութիւններէ բացի, արաբներ շահագրգռուած էին հայոց ընտրական զօրաշարժի կարողութիւններով: 1938ին ՀՅԴն որդեգրեց արաբ ազգայնականներուն նեցուկ կանգնելու պաշտօնական կեցուածք: Ասոր մէջ դեր ունեցաւ նաեւ Ալեքսանտրէթի Սանճաքի հարցին նկատմամբ ֆրանսական դերակատարութիւնը:

Ֆրանսացիներէն աստիճանաբար հեռանալու եւ արաբներուն մօտենալու քաղաքականութիւնը տուաւ իր պտուղները: Ազգային Ուխտին համայնքային հաւասարակշռութեան սկզբունքին մէջ հայոց ներառումը հայերը նկատեցին Լիբանան կեցութեան «պաշտօնական օրհնութիւն» ըսաւ դասախօսը: Այդուհանդերձ, Ազգային Ուխտէն միւնչեւ անկախութիւն, հայերու մասնակցութիւնը Լիբանանի քաղաքական դիմագիծը կազմաւորող շարժումներուն՝ լուսանցքային մնաց:

Պատճառներէն մէկը, ըստ Միլիտրիոնոյի, լիբանանեան քաղաքական թատերաբեմի դերակատարներուն եւ հայերուն միջեւ համարկումի դժուարութեան, մշակութային տարբերութեան ու լեզուական դժուարութեան մէջ կը կայանայ: Պատճառներ են նաեւ ներքին եւ արտաքին ճնշումները՝ գաղութին վրայ, կուսակցութիւններու միահեծան տիրութիւնը, որ արգելք կը հանդիսանար անհատական քաղաքական կապերու ձեւաւորումին: Որքան դժուար էր համարկումը, նոյնքան դժուար էր ինքնուրոյն հայկական միասնական ոյժի մը գոյացումը լիբանանեան քաղաքական թատերաբեմին վրան: «*Հայկական գաղութային եւ ազգային նկատառումները կը գերիշխէին լիբանանեան հարցերուն վրան*», դիտել տուաւ դասախօսը: Միւս կողմէ, կուսակցութիւններու միջեւ գաղափարական կամ յանուն իշխանութեան պայքարը բաւական սպառիչ էր:

Լիբանանի հանդէպ հայկական կուսակցութիւններուն դիրքորոշումը կը բխէր հիմրընկալ երկիրներուն հանդէպ հաւատարմութեան եւ երախտագիտութեան զգացումներէ: Անոնք միաժամանակ կ'ուզէին կազմակերպել հա-

մայնքային կառոյցները օգտուելով Լիբանանի ընձեռած առիթներէն: *«Ահա է պատճառը,-* ըսաւ Միլիորիճօ,- *որ հայեր հակուած ըլլային քաղաքական բարեփոխումներու. հանդէպ աւելի մեղմ պահպանողական դիրքորոշման, ընդդէմ արմատական կոչերու»*: Խորհրդարանական ընտրութիւններուն իշխանամէտ կամ ընդդիմադիր ոյժերուն հետ դաշնակցումը առաւելաբար կը բխէր միջհայկական ճակատումներու նկատառումներէն:

1958ի տագնապը քննութիւն մըն էր հայոց կողմէ Լիբանանի հանդէպ յանձնառութեան: Ազգային Ուխտէն բխող համայնքային համակեցութեան դրուածքը վտանգուած էր: 1958ի տագնապին զանազան երեսակները ներկայացնելէ ետք, Միլիորիճօ անդրադարձաւ հայոց դերին: Որքան ալ ներհայկական հարցերը մնային ջուրի երես, տեղական, շրջանային եւ միջազգային ճնշումները ունեցան իրենց քաղաքական ազդեցութիւնը քաղաքական կեանքէ ներս հայկական մասնակցութեան վրան. լիբանանեան կուսակցութիւններուն հետ համագործակցութիւնը մտաւ նոր փուլ: Գալով տագնապին արիւնահեղութեան, հայկական «մասնակցութիւնը» դուրս չելաւ ազգային շրջագիծէն:

Միլիորիճօ նշեց, թէ 1958ի տագնապը անկիւնադարձային նշանակութիւն ունեցաւ լիբանանեան քաղաքական կեանքին մէջ հայոց մասնակցութեան առումով: Առաջին կարեւոր երեւոյթը հայկական կեանքին մէջ ոյժերու հաւասարակշռութեան խախտումն էր ի նպաստ ՀՅԴի՝ ի հետեւանք զանազան զարգացումներու: Երկրորդ կարեւոր երեւոյթը ՀՅԴի հակախորհրդային սուր կեցուածքին մեղմացումն էր, ու Պաղ Պատերազմի տրամաբանութենէն հեռացումը: Երրորդ նկատելի երեւոյթը, 1958ի տագնապին յաջորդող օրերուն ընթացքին լիբանանեան քաղաքական ոյժերուն հետ հայոց համարկումի խորացումն էր:

1975-1990 Լիբանանի քաղաքացիական պատերազմը ողբերգութիւն մը ըլլալէ բացի, քաղաքական մեծագոյն տագնապ մըն էր: Համայնքներու խաղաղ համակեցութեան սկզբունքը դրուած էր մեծ հարցականի տակ: Հայկական համայնքը որդեգրեց «դրական չէզոքութեան» սկզբունքը: Սա կը նշանակէր որ հայութիւնը ոչ միայն կողմ չդարձաւ բախումներուն ընթացքին, այլեւ միշտ պատրաստակամ էր խնդրի լուծման հաւանական բոլոր տարբերակներուն:

Հայութեան այս կեցուածքը Լիբանանի նկատմամբ «ոչ-յանձնառութեան» ամբաստանութիւններու նոր դուռ բացաւ: Պատերազմող կողմերու հայկական զօրակցութիւնը մնաց լուսանցքային եւ դուրս չելաւ անհատական դրսեւորումներէ: Նախապատերազմեան շրջանի հայկական քաղաքականութիւնը բնորոշող միջին-պահպանողականութիւնը, համայնքային դրուածքի պահպանումը եւ մանաւանդ իշխանամէտ ոյժերուն հանդէպ ցուցաբերուած ընտրական աջակցութիւնը իր իմաստը կը կորսնցնէր պետական կառոյցներուն տկարացումով կամ կողմի վերածումով: Միլիորիճօ հաստատեց, թէ չէզոքութեան ընտրանքը ձեւով մը շարունակութիւնն էր Լիբանանին նկատմամբ կուսակցութիւններուն վերաբերումին՝ սատար կանգնիլ լիբանանեան

քաղաքական դրուածքին ու մերժել անոր վախճանը: Այս կեցուածքը ամբողջովին հակառակն էր եղած ամբաստանութիւններուն:

Հայկական կեցուածքը նաեւ արդիւնք էր ներ-հայկական քաղաքական փոփոխութիւններու: ՀՅԴի հակա-խորհրդային կեցուածքը մեղմացած էր, փոխարէնը հայկական եւ հակա-թրքական հարցերը մղուած էին առաջին ճակատ, հետեւաբար ներ-լիբանանեան հարցերուն մէջ ՀՅԴ չէր կրնար զօրակցիլ Մարոնիթ Ճակատին, ընդդէմ պաղեստինցիներուն:

Եզրակացնելով, Միլիորիճօ ամփոփեց իր դասախօսութեան հիմնական դրոյթները, ըսելով, թէ առաջին շրջանին հայեր ֆրանսական ոյժերուն կողմէ «բոնի» կցուած էին լիբանանեան քաղաքականութեան, սակայն յետագային ընտելացան լիբանանեան քաղաքական խաղի կանոններուն եւ սկզբունքներուն: Լիբանանեան դրուածքը մեծապէս կը համապատասխանէր հայութեան ազգային շահերը հետապնդելու առաջադրանքին, հետեւաբար, համայնքը, իր կարելիութիւններուն ներածին չափով նպաստեց Լիբանանի համայնքային համակեցութեան կայուն պահպանումին: *«Եթէ վերոյիշեալ մտածելակերպը տրամաբանական է, ապա հայ համայնքի Լիբանանի հանդէպ յանձնառութիւնը կասկածի ենթարկելու փորձերը ապակողմնորոշիչ են,*- նշեց դասախօսը, ապա հաստատեց, թէ,- *հարցը այն չէ, թէ հայերը Լիբանանի համակեցութեան դրուածքին հանդէպ ի՞նչ կեցուածք ունին, այլ այն, թէ՝ ի՞նչ է այդ դրուածքին ապագան: Թաէֆի Ուիտին տրամադրութիւնները կը համապատասխանե՞ն լիբանանահայ համայնքին այսօրուան կարիքներուն եւ պահանջներուն»:*

Ե. «Հայ-Թրքական Երկխօսութիւն. Խոչընդոտներ Եւ Հնարաւորութիւններ»
Դասախօս՝ Դոկտ. Ժիրայր Լիպարիտեան
18 Հոկտեմբեր, 2005

Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնի հրապարակային դասախօսական այս ձեռնարկին հիւր բանախօսն էր Ժիրայր Լիպարիտեան: Նախկին լիբանանահայ՝ Լիպարիտեան իր բարձրագոյն ուսումը ստացած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ: Լոս Անճելոսի Համալսարանէն ստացած է Դոկտորական վկայականը, վկայուելով իբրեւ պատմաբան:

Բազմազան են Լիպարիտեանի գործունէութիւնները. ան եղած է համալսարանական դասախօս, ՀՅԴ կեդրոնական արխիւին վարիչը, խմբագրած է *Ասպարէզ* պաշտօնաթերթն ու *Armenian Review* հանդէսը, հիմնադիրներէն է Զօրեան Հիմնարկին: Խմբագրած եւ հեղինակած է յօդուածներ, գիտական աշխատութիւններ՝ նուիրուած Հայկական Յեղասպանութեան, արցախեան շարժումին, Հայաստանի անկախութեան: 1991-1997 ան պետական եւ դիւանագիտական պաշտօններ վարած է Հայաստանի նորանկախ հանրապետութեան մէջ: Այժմ կը զբաղի դասախօսական եւ գիտահետազօտական աշխատանքով:

Իր խօսքին սկզբնաւորութեան, դասախօսը նշեց, թէ ներկայացուելիք հարցին վերլուծումը բաւականին բարդ, բայց նաեւ անհրաժեշտ է, որովհետեւ անիկա եւ՛ ընդհանուր քաղաքականութիւն է, եւ՛ պատմութիւն է, նաեւ ինչոր տեղ «*մեր ինքնութեան ինքնասահմանման հարցն է*»:

Լիպարիտեան դասախօսութիւնը բաժնեց երկու մասի.-

ա- Հայ-թուրք յարաբերութիւններու պատմութիւնը քաղաքական պարունակի մէջ. մեր փորձն ու այլընտրանքները:

բ- Ներկայ վիճակը հայ-թուրք յարաբերութիւններուն. մեր տարբեր դիրքորոշումները, միշտ այն տեսանկիւնէն, թէ մեր քաղաքականութեամբ ո՛ր հարցին պատասխան կու տանք, ո՛ր խնդիրը կը լուծենք:

Ի՞նչպէս պէտք է սահմանենք հայ-թուրք յարաբերութիւնները:

Թուրքերու հետ մեր մօտ հազար տարուան պատմութեան մէջ մենք ունեցած ենք երկու բնոյթի յարաբերութիւն. պետութենէ-պետութիւն՝ որ կարճ եղած է, եւ ժողովուրդէ-պետութիւն, որ աւելի երկարատեւ եղած է:

Պատմական համառօտ ակնարկ մը նետելէ ետք հայ-թուրք յարաբերութիւններուն վրայ, Լիպարիտեան նշեց, թէ անոնց մեծամասնութիւնը զարգացած է պետութիւն-պետութեան ենթակայ կրօնական համայնք/միլլէթ անհաւասար յարաբերութեան ծիրէն ներս, որուն բոյլատրուած չէր վերածուիլ քաղաքական կառոյցի:

1880ականներուն նոր յատկանիշերով բնորոշուեցան այս յարաբերութիւնները. օսմանեան պարտքի դիմաց եւրոպական պարտադրանքով որդեգրուեցաւ հարկային-տնտեսական նոր քաղաքականութիւն մը, որ հիմնուած էր կանխիկ գումարի վրան: Հայ գիւղացիները իրենց հարկերը կանխիկ վճարելու համար, մտան փոխառութիւններու մէջ, որոնց անտանելի պայմաններուն հետեւանքով քանի մը տարիէն կորսնցուցին իրենց կալուածները: Միւս կողմէն, արեւմտեան, մանաւանդ անգլիական ճարտարարուեստական արդիւնաբերութեան դիմաց բացուեցան օսմանեան սահմանները, որ ցնցեց հայ արհեստաւորներուն տնտեսական հիմքը. այս երկու պատճառները ճակատագրական եղան: Ասոնց հետեւանքով ժողովուրդը սկսաւ լքել պատմական հայրենիքը: Հայերու թիւի նուազումով հայութիւնը դարձաւ աւելի խոցելի, դէպի Անաթոլիա մահմետական ցեղերու ներգաղթ մը սկսաւ: Այս բոլորը հիմք հանդիսացան Ցեղասպանութեան:

Ստեղծուած տագնապին համար յառաջ քաշուեցաւ բարենորոգումներու ծրագիրը, ծնան հայ կուսակցութիւնները: Հայ կուսակցութիւնները ժողովուրդ հասկացութեան տուին քաղաքական սահմանում մը, ի տարբերութիւն կրօնականին, քաղաքականացնելով բարենորոգումներու հարցը:

Նախացեղասպանութեան շրջանի կուսակցական մամուլը հայ-թուրք յարաբերութիւններու եւ բանակցութիւններու իբրեւ հիմք կը դիտէ հողային բարենորոգումներու հարցը: 1908ին՝ Երիտթուրքերու յեղափոխութեան օրերուն հայ ժողովուրդը պէտք չէ դիտել սոսկ իբրեւ հայութիւն, ան գիւղացիութիւնն էր, արհեստաւորներն էին, օսմանեան բնակիչներ՝ ենթակայ հարկերու, պետական վերիվայրումներու, եւն.:

Քաղաքական կուսակցութիւններու ծնունդէն ետք, մենք ժողովուրդ էինք նաեւ որպէս քաղաքական ներկայութիւն, որպէս ձախ թեւ՝ իբրեւ ազատական ընկերվարներ, ընդդէմ՝ պահպանողականներու: Մենք քաղաքական կարծիք ունէինք օսմանեան ապագային մասին: *«Մեր կուսակցութիւնները կը մտածէին որպէս օսմանցի քաղաքացիներ»*, ըսաւ Լիպարիտեան, եւ կարեւոր սեպեց ասիկա՝ հասկնալու Ցեղասպանութիւնը եւ հայ-թուրք յարաբերութիւնները: Այս յարաբերութիւնները կարելի է տեսնել պետութիւն-ժողովուրդ, պետութիւն-քաղաքական ոյժ, եւ կեդրոն-սահմանային շրջաններ պարունակին մէջ:

Պետական համակարգը բարեփոխելու հայկական փորձը չյաջողեցաւ, եւ տագնապ մը ծայր առաւ մեր մէջ: Պահպանողականներու իշխանութեան գլուխ գալով, իշխանութեան ձեւի պահպանումէն աւելի կարեւոր դարձաւ պետութեան պահպանումը: Պահպանողականներու իշխանութիւնը կրցաւ համոզել թուրք պարզուազին, թէ կառավարութիւնը ի զօրու է օրէնքներով պաշտպանելու իրենց տնտեսական շահերը, ուստի խորհրդարանը աւելորդ է: Իսկ հայութեան համար անիկա ամէնէն անհրաժեշտն էր: Հայը օսմանեան բնակչութեան վերջին տարրն էր, որ կը հաւատար ժողովրդավարութեան: Երիտթուրքերը նաեւ այս «վտանգը» կը տեսնէին հայերուն մէջ: *«Այսպիսով,- ըսաւ Լիպարիտեան,- Ցեղասպանութիւնը մաս կը կազմէր ոչ միայն հայ-թուրք ազգայնութիւններու բախումին, այլեւ պետական համակարգի տեսակին հանդէպ տարբեր մօտեցումներու»*: Հետեւաբար, հայ-թուրք հակառակութիւնը բազմակողմանի էր:

Պէտք չէ մոռնալ հայութեան տարբեր շերտերը, որոնք տարբեր կը տեսնէին հայ-թուրք յարաբերութիւնները. կար կուսակցական մօտեցում՝ որ ժողովրդավարութեան պահպանումին մէջ կը տեսնէր բարեկարգումներու իրագործումը, կար պահպանողական խաւին մօտեցումը, կար պատրիարքական մօտեցումը՝ որ Եւրոպայի օգնութեան վրայ յոյս կը դնէր, որ ամէնէն աւելի կը խոցէր թուրքը:

Դասախօսը կարծիք յայտնեց թէ վերոյիշեալ մտայղացմամբ, պատմութիւնը քիչ մը տարբեր կ'երեւի:

1918-1920 Հայաստանի Ա. Հանրապետութեան օրերուն, յարաբերութիւնները զարգացան պետութենէ-պետութիւն հիմունքով: Բանակցութիւններուն մէջ Ցեղասպանութեան հարցը առաջնահերթ չէր, Հանրապետութիւնը ունէր իր խնդիրները: *«1921ի փետրուարեան դէպքերուն ի հետեւանք իշխանութեան վերատիրացած ոյժերուն համար, Թուրքիան դարձաւ կռուան՝ իրենց իշխանութիւնը պահելու համար»*, նշեց Լիպարիտեան:

1920-1991, սովետական-թրքական յարաբերութիւններուն մէջ ոչ մէկ հարց բարձրացուած է սահմաններու կամ Ցեղասպանութեան մասին, բացի 1945ի դէպքէն, երբ սովետները բարձրացուցին Կարս-Արտահանի հարցը, վախցնելու համար Թուրքիան, որ չմիանայ Գերմանիոյ:

Սփիւռքի մէջ, հայ-թրքական յարաբերութիւնները զարգացած են բոլորովին տարբեր ուղղութեամբ: Մինչեւ 60ականները Սփիւռքի քաղաքական

կեանքի հիմնական առանցքը եղած է Սովետական Հայաստանի ընդունելիութեան հարցը: Իսկ Պաղ Պատերազմի տարիներուն, մեր ներքին բաժանումներով, պատրաստ էինք կլլուելու ամերիկեան կամ սովետական քարոզչամեքենային կողմէ:

60ականներուն նկատելի է որոշ փոփոխութիւն, երբ տեղի կ'ունենայ քաղաքականութեան բարեփոխում եւ ՀՅԴի մօտ հողային պահանջքը աւելի կարեւոր կը նկատուի քան անկախութիւնը եւ ժողովրդավարացումը: Այսպիսով կարելի կը դառնայ միջ-կուսակցական մերձեցում մը, եւ Ցեղասպանութիւնը իբրեւ կեդրոնական հարց, կ'արձարծուի աւելի հանդարտ մթնոլորտի մէջ:

1988ին սկսաւ արցախեան հարցը, որ աւարտեցաւ Հայաստանի անկախացումով: Հայաստան ճշդեց իր քաղաքականութիւնը Թուրքիոյ նկատմամբ, որ հիմնուած էր առանց նախապայմանների դիւանագիտական յարաբերութիւններու սահմանման վրան: *«Թուրքին համար, մինչ այդ, հայը սփիւռքահայն էր, որուն համար ինք կը մնար յաւերժական թշնամի, մինչեւ ճանաչում, հատուցում: Գումարենք ասոր նաեւ՝ ահաբեկչութեան գործօնը,-* ըսաւ Լիպարիտեան,- *եւ հայերը կը դիտուէին իբրեւ ահաբեկիչ, ծայրայեղ, եւն.»*: Թուրքիա նախ յստակ պատկերացում չունէր Հայաստանի հետ յարաբերութեան ձեւին: Եղաւ ժամանակ, երբ նոյնիսկ անպաշտօն հարց դրուեցաւ ուրանալու Ցեղասպանութիւնը: Բանակցութիւններու աւարտին, երբ միջ-պետական յարաբերութիւններ սկսելու համար գրեթէ ամէն ինչ պատրաստ էր, հայեր գրաւեցին Քելբաջարը: Բանակցութիւններու նախապայման դրուեցաւ Շուշիէն, Լաչինէն եւ Քելբաջարէն հայերու հեռացումը: Մինչ այդ, երբ յարաբերութիւնները յաւ մակարդակի վրայ էին, Աբխազիոյ պատերազմին հետեւանքով, Վրաստանի վրայով Ռուսիայէն Հայաստան եկող երկաթուղին փակուեցաւ: Թուրքիոյ սահմանը փակ էր, Ատրպէյճանի հետ պատերազմի մէջ էինք: Լիպարիտեան յիշեցուց, թէ՝ օրուան իշխանութիւնները կրցան համոզել Թուրքիան, որ բանայ սահմանը եւ *«Հայաստանին անհրաժեշտ օրական հազար թոն ցորենը կրցանք բերել Թուրքիոյ միջոցով: Ղարաբաղեան պատերազմի օրերուն, կրցանք ապահովել նաեւ Թրքական զինուորական միջամտութեան մը չիրագործումը»*, նշեց ան:

Ի վերջոյ, Ղարաբաղի հարցը բանակցութիւններու վերսկսման պայման դարձաւ: 1997ին Թուրքիա պատրաստ էր բանալու սահմանը, սակայն Ատրպէյճան սպառնաց նաւթամուղերով: Ատրպէյճան կ'ուզէր փակ սահմաններով տնտեսապէս խեղդել Հայաստանը:

Նախագահ Ռոպերթ Քոչարեանի վարչակազմը հիմնական փոփոխութեան չենթարկեց նախկին յարաբերութիւնները. առանց նախապայմանի յարաբերութեան սկզբունքը շարունակուեցաւ, սակայն Ցեղասպանութեան հարցը պիտի բարձրացուէր Թուրքիոյ հետ խօսակցութիւններու ժամանակ, որ *«մենք հաշուարկով չէինք ըներ»*, ըսաւ Լիպարիտեան: Նոր վարչակազմը կը հաւատար, թէ Ցեղասպանութեան հարցին Ղարաբաղի հարցը իբր հակակա-

խապայման դրուիլը, պիտի մղէր Թուրքիան, որ հրաժարի Ղարաբաղի հարցը իբրեւ նախապայման դնելէ: Սակայն կացութիւնը կը մնայ նոյնը:

Սփիւռքի պարագան, որ անպայմանօրէն նոյնը չէ Հայաստանի բաղդատմամբ, ունի մի քանի երես: Ցեղասպանութիւնը 60ականներէն ի վեր բարձրացուած է կուսակցութիւններուն կողմէ, կը խօսուի հատուցումի մասին, որ պիտի յաջորդէ ճանաչումին, եւ կ'արգելակէ Ցեղասպանութեան ճանաչման կարելիութիւնը: Սփիւռք-Թուրքիա յարաբերութիւնը նախկին պետութիւն-ժողովուրդ յարաբերութենէն տարբեր է, որովհետեւ այլեւս ժողովուրդը այն չէ, որ պետութեան սահմաններէն ներս կ'ապրի:

Այս ընթացքին, նաեւ Թուրքիոյ մէջ տեղի ունեցան փոփոխութիւններ: Քեմալական սկզբունքներն էին՝ բրքական տիրապետութիւն, կեդրոնացեալ պետութիւն, (որուն հիմնական կռուանը բանակն էր), սահմանափակ ժողովրդավարութիւն (որ ունի անվտանգութեան խիստ սահմանում մը), վերէն թելադրուող քաղաքակրթութիւն, մանաւանդ կենսական հարցերու շուրջ, եւն.: *«Թուրքիոյ մասնատման վախը, թէեւ ոչ իրական,*- ըսաւ Լիպարիտեան,- *դեռ գոյութիւն ունի մտածողութեան մէջ, եւ ասիկա կ'արդարացնէ ռազմական մտածելակերպը, ռազմական ոյժերու տիրապետումը քաղաքականին վրայ, եւն.»*:

Ըստ դասախօսին, այս համակարգը 15 տարի է սկսած է փուլ գալ: Վերէն թելադրուող ուղղափառութիւնը ընդունելի չէ այսօր: Անվտանգութեան ապահովման վրայ հիմնուած ռազմականացած քաղաքական համակարգի մը արդարացումը սկսած է կասկածով ընդունուիլ:

«2000ին սկսան հայ եւ Թուրք կարգ մը գիտնականներու միջեւ խօսակցութիւններ, տեսնելու համար թէ կրնա՞նք երկխօսութիւն սկսիլ, թէ՞ ոչ: 12 հոգիով սկսած այս չարժումին, տարբեր համալսարաններու մէջ կազմակերպուած ժողովներուն ու սեմինարներուն, արդէն մասնակցած է մօտաւորապէս 200-250 գիտնական: Թուրքեր հասկցան, թէ իրենց իսկական պատմութիւնը գիտնալը պայման է Թուրքիոյ մէջ ժողովրդավարութեան հաստատման համար: Ցառաջացան խումբ մը գիտնականներ, պատմաբաններ, որոնք սկսան վերանայիլ իրենց պատմութեան, ու չատեր գործածելով Ցեղասպանութիւն բառը, կ'արտայայտուին իրենց անցեալին մասին:

Ցեղասպանութեան ճանաչման տեսակէտէ կատարուած քայլերը մեծ են: Ներսէն կատարուող ճնշումը աւելի ազդու է, որովհետեւ եւրոպական ճնշումներն ու պարտադրանքները իրենց կը յիշեցնեն կայսերապաշտական ճնշումները»:

Դասախօսը հաւանական համարեց Ցեղասպանութեան ճանաչման հոլովոյթին շարունակումը Թուրքիոյ մէջ, իսկ Հայաստանի հետ յարաբերութիւնները *«կրնան դեռ դժուարութիւններու հանդիպիլ, որովհետեւ Ղարաբաղի հարցը կայ եւ առանց անոր, Թուրքիան դժուար թէ փոխէ իր քաղաքականութիւնը»*, նշեց Լիպարիտեան:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայկազեան Հայագիտական Հանդէս տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970էն, Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնին կողմէ:

Ան կ'ընդգրկէ Հայաստանի եւ հայութեան պատմական, հնագիտական, աշխարհագրական, բանասիրական, կրօնական, լեզուագիտական, գրական, ազգագրական, մշակոյթի (կրթութեան, թատրոնի, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի, եւն.), տնտեսագիտական, իմաստասիրական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի նիւթեր:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի մէջ կը հրատարակուին գիտական մակարդակով, առարկայական, հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազօտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, վիճակագրական եւ մատենագիտական ցանկեր եւ մահագրականներ:

Ներկայացուած աշխատակցութիւնները պարտին ըլլալ անտիպ եւ հրատարակումի համար այլուր յղուած չըլլան: Անոնք նախընտրաբար ըլլալու են մինչեւ շուրջ 20-25 մեքենագիր էջ: Փափաքելի է աշխատակցութիւններն ստանալ համակարգչային շարուածքի տարբերակով:

Իւրաքանչիւր աշխատակցութեան ծանօթագրութիւններու բաժինին մէջ պէտք է նշուին հեղինակին եւ օգտագործուած գիրքին անունը, հրատարակութեան տարեթիւը, հրատարակիչը եւ կամ տպարանը եւ էջը. յօդուածներու պարագային՝ յօդուածագիրին անունն ու յօդուածին ամբողջական խորագիրը, թերթին անունը, հրատարակութեան տարեթիւը եւ էջաթիւը. իսկ արխիւային փաստաթուղթերու պարագային՝ նշուին փաստաթուղթի հեղինակը եւ խորագիրը, գտնուած վայրը, համարակալումը: Աշխատակցութիւնը պարտի ունենալ համառօտ ներածական մը ուր ներկայացուի նիւթը, անոր կարեւորութիւնը, մօտեցման եղանակը եւ բերած նորութիւնը: Աշխատակցութիւնը պարտի ունենալ նաեւ անգլերէն կամ հայերէն հակիրճ ամփոփում մը, շուրջ 150 բառ: Փափաքելի է որ յօդուածին կցուի նաեւ հեղինակային համառօտ ինքնակենսագրա-

կան եւ հեղինակին նաեւ ելեկտրոնային հասցէն: Հեղինակը նաեւ պարտի գրաւոր հաստատել իր նիւթին անտիպ կամ մասնակի հրատարակուած ըլլալը:

Հրատարակելի բոլոր աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին քերականական եւ ուղղագրական խմբագրումի: Այլ փոփոխութիւններու պարագային տեղեակ կը պահուի նոյնինքն հեղինակը: Հայագիր յօդուածները կը հրատարակուին հայերէնի դասական ուղղագրութեան սկզբունքներով: Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ կարելի լաւագոյնս պատճէնուած կամ լուսանկարուած պատկերներ, գծանկարներ, փաստաթուղթեր եւ քարտէսներ: Հեղինակը պարտի նշել անոնց աղբիւրը եւ ապահովել հրատարակման արտօնութիւնը:

Հրատարակուած նիւթերը կ'արտացոլացնեն հեղինակին տեսակէտը:

Յօդուածներու, թղթակցութիւններու, բաժանորդագրութեան, նախորդ թիւերու ստացումի եւ այլ հարցերով պէտք է գրել հետեւեալ հասցէին .-

Haigazian Armenological Review
P.O.Box 11-1748 Beirut-Lebanon
Fax: 01-349230/1, 01-353010/1/2
Email: review@Haigazian.edu.lb

Իւրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երկու ամիս ետք:

Հեղինակներ կամ հրատարակիչներ, որոնք կը փափաքին իրենց գիրքին գրախօսուիլը *ՀՀՀ*-ի մէջ, խմբագրութեան սկզբունքային համաձայնութենէն ետք, պարտին յղել այդ գիրքի երկու օրինակ, որոնցմէ մին կը յանձնուի գրախօսողին, իսկ երկրորդը՝ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Գրադարանին:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի մէջ հրատարակուած որեւէ նիւթ կարելի է մէջբերում, յղում կատարել:

Հրատարակուած աշխատասիրութեան հեղինակ անվճար կը ստանայ *Հանդէսի* տուեալ հատորէն երկու օրինակ եւ իր յօդուածէն 20 օրինակ առանձնատիպ:

NOTES TO CONTRIBUTORS

Haigazian Armenological Review has been published annually from 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University.

The review is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with history, archaeology, geography, philology, religion, linguistics, literature, ethnography, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, philosophy, politics, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, reviews, briefings, statistical charts and data, bibliographical lists and obituaries in Armenian, Arabic, English and French.

Manuscripts submitted to Haigazian Armenological Review should preferably be 20-25 typewritten pages in length. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published, in any language. It is preferred that manuscripts be submitted for consideration on disc with a hard copy. All discs are acceptable.

Authors should provide in the endnotes: the full name of the author, the title, the year and place of publication, the name of the publisher and the relevant page numbers of all the books they have cited. In the case of cited articles, they should mention: the full name of the author, the title of the article and the book or journal in which the article appears, the numbers of the volume and part, the year of publication, and relevant page numbers. Archival documents should be cited with the full name of the author and the title of the document (if available), plus the full name of the archive where the document is preserved and its archival number.

Submitted manuscripts must include a 150-word summary in Armenian or English. The author should also submit brief autobiographical data, including his/her email address. The author should confirm in writing whether his/her submission is either totally unpublished or partially published before.

The editors reserve the right to copyedit manuscripts to conform to the review's style. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors.

Manuscripts, Correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review
P.0. Box 11-1748
Riad El Solh, Beirut 11072090
Lebanon
Fax: (01) 341230/31 or (01) 352010/11/12
Email: review@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions.

Authors or publishers who wish to have their books considered for review should send two copies of the said publication to the Editor upon receiving his/her consent. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Armenian Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in Haigazian Armenological Review.

Authors are entitled to 20 offprints and two copies of the volume in which their contribution is published.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անտրէա Սքալա 9
Բանասիրական Նկատառումներ՝ Ցովհաննէս Ոսկերերանի Քուղթ Առ Թէոդորոսիի Հայերէն Թարգմանութեան

Տորք Դալալեան 17
Շիրուան Տեղանուան Ստուգաբանութեան Շուրջ

Յասմիկ Ստեփանեան 29
Հայ Միջնադարեան Երաժշտութեան Տեսութեանն Առնչուող Ցիչատակութիւնները Ե.-ԺԵ.դդ Ձեռագրերի Ցիչատակարաններուն

Փաոլոս Ճերանեան 41
Հայ Կաթողիկէ-Մարոնիթ Փոխյարաբերութիւնները Լեռնալիբանանի Մէջ՝ 1720-1840

Շողիկ Ոսկանեան 103
Արեւմտահայ Մամուլը Եւ Նրա Դերը Լուսաւորութեան Եւ Դպրոցի Զարգացման Գործում (1870-1920ԹԹ.)

Մաթիաս Պիտրնիւնտ 141
Հայոց Ցեղասպանութենէն Առաջ. Դանիական Միսիոնարական Եւ Փրկութեան Գործողութիւնները Օսմանեան Կայսրութեան Մէջ, 1900-1914

Բենիամին Մայիլեան 157
Համշէնահայ Համայնքը Վրաստանում, 1918-1920ԹԹ.

Զաւէն Մսըրլեան 195
Հայոց Մասնակցութիւնը Լիբանանի Շարլ Հելուի (1964-1970) Եւ Սլէյման Ֆրանժիէի (1970-1976) Նախագահութեան Ժամանակաշրջանի Խորհրդարանական Ընտրութիւններուն

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Արծուի Բախչինեան 251
Շուէդ Ճանապարհորդ Ֆրեդրիք Հասելքուիսթը Հայերի Մասին

Վաչէ Ղազարեան 263
«Թղթեայ Զաւակներու Հայրը» Թէոդիկ

Վարդան Մատթէոսեան 297
Նիւթեր Կոստան Զարեանի Նաւր Լեռան Վրայ Վէպի Երեւանեան Հրատարակութեան Մասին

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Վարդան Մատթէոսեան 359
Արա Գրիգորեան, Հայկական Հարցի Բառարան

Յասմիկ Ստեփանեան 362
Գէորգ Բամպուքճեան, Հայ Աղբիւրների Ներդրումը
Պատմութեան Մէջ

Աքիքօ Հիքքի 369
Քացումորի Իչիքաուա, Ժիթուսի Նօ Քիթա Միչի

Մ. Ապէ 371
Հիրոյուչի Սեկաուա, Մոռցուած Հայկական Ցեղասպանութիւնը.
Ցեղասպանութեան Ոճիրի Կանխարգիլման Եւ
Պատժումի Պարագայի Սերտողութիւն

Ազատ Բոզոյեան 374
Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան
Մատենադարանի, Հատոր Բ., կազմեցին՝ Օ. Եգանեան,
Ա. Չէլէբեան, Փ. Անթարեան, Ա. Քէօշկարեան,
խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի,
Ա. Չէլէբեանեանի, ցանկերը՝ Վ. Դեւրիկեանի

Գէորգ Գրիգորեան եւ Սեւան Տէյիրմէնճեան 382
Թեսա Հոֆման, Հայերը Ժամանակակից Թուրքիոյ Մէջ.
Հայ Փոքրամասնութիւնը Թուրքիոյ Հանրապետութեան Մէջ.
Կացութեան Քննական Արժեւորում

Յովհաննէս Կէօքճեան 389
Տէյվիտ Ֆիլիփս, Անցեալը Լուսթենէ Հանել. Երկրորդ Ուղիի
Դիւանագիտութիւնը Եւ Թուրք-Հայ Հաշտեցումը

Արծուի Բախչինեան 399
Վարդան Փարթամեան, Սփիւռքի Օտարազիր Բանաստեղծութիւնը

Արմէն Իւրմէզեան 411
Ժամանակակից Իսթանպուլահայ Գրողներ (Ա. Հատոր),
Աշխատասիրեց՝ Կարօ Արրահամեան,
Պատասխանատու Խմբագիր՝ Պէպօ Սիմոնեան

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

417

Ազատ Համբարեան (1926-2003), Ցարուհիւն Գալայեան (1908-2003), Արբակ Մխիթարեան (1911-2004), Լէոնարտօ Ալիչան (1951-2005), Լեւոն Ղազանչեան (1946-2005), Արթիւր Պէյլերեան (1925-2005), Սերգէյ Արրահամեան (1925-2005), Վարդգէս Միքայէլեան (1924-2005), Վալտէր Դիլոյեան (1930-2005), Ատրիանօ Ալփակօ Նովելլօ (1932-2005), Հայր Սահակ Վրդ. Քէշիշեան (1917-2005), Դերենիկ Վարդումեան (1923-2005), Վարդան Փարթամեան (1931-2005), Եուրի Մկրտումեան (1939-2005), Ցարուհիւն Ֆելեքեան (1931-2005), Նինել Ոսկանեան

(1923-2005), *Ռաֆֆիկ Մադոյեան* (1927-2005), *Գէորգ Ջահուկեան* (1920-2005)

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 449

Ընդհանուր Ակնարկ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնի Հրապարակային Գործունէութիւններուն Վրայ
(1 *Յունուար*-31 *Դեկտեմբեր* 2005)

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ 474

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 478

TABLE OF CONTENTS

EDITORIAL

ARTICLES AND STUDIES

Andrea Scala 9
Philological Considerations Regarding the
Armenian Translation Of John Chrysostom's *Letter To Theodore*

Tork Dalalian 17
On the Etymology of the Geographic Name 'Shirvan'

Hasmik Stepanian 29
Souvenirs Related To The Theory Of Medieval Armenian Music
Found In The Colophons Of V-XV Centuries

Panos Jeranian 41
Catholic Armenian-Maronite Relations In Mount Lebanon, 1720-1840

Shoghik Voskanian 103
The Western Armenian Press and Its Role In
The Development Of The Enlightened School

Matthias Bjørnlund 141
Before The Armenian Genocide: Danish Missionary And
Rescue Operations In the Ottoman Empire, 1900-1914

Benyamin Mayilian 157
The Hamshen Armenians' Community In Georgia (1918-1920)

Zaven Messerlian 195
Armenian Participation In The Lebanese Legislative Elections
During The Presidencies Of Charles Helou (1964-1970) And
Suleiman Frangieh (1970-1976)

UNPUBLISHED DOCUMENTS

Artsvi Bakhchinian 251
The Swedish Traveller Fredrick Hasselquist About The Armenians

Vache Ghazarian 263
Theotig, The Father Of The "Paper Children"

Vartan Matiossian 297
Materials About The Yerevan Edition Of
Kostan Zarian's Novel, *The Ship On The Mountain*

BOOK REVIEWS

Vartan Matiossian 359
Ara Krikorian, *Dictionnaire De La Cause Arménienne.*
Hasmik Stepanian 362
Kevork Pamukchian, The Contribution Of Armenian Sources To History
Akiko Hikki 369
Katsumori Ichikawa, *Jipusi No Kita Michi,*
M. Abe 371
Hiroyoshi Segawa, *The Forgotten Armenian Genocide: A Case Study Of The Prevention And Punishment Of Crimes Of Genocide*
Azat Bozoyan 374
Mother List Of Manuscripts of the Mesrop Mashtots Matenadaran In Yerevan, vol. II, compiled by O. Yeganian, A. Zeytountsian, P. Antabian, A. Keoshgerian, edited by A. Mnataskanian, O. Yeganian, A. Zeytountsian, V. Devrikian
Kevork Krikorian, Sevan Deyirmenjian 382
Dr. Tessa Hofmann, *Les Arméniens En Turquie Aujourd'hui. La Minorité Arménienne En République Turque: Évaluation Critique De La Situation*
Ohannes Geokjian 389
David L. Phillips, *Unsilencing The Past: Track Two Diplomacy And Turkish-Armenian Reconciliation*
Artsvi Bakhchinian 399
Vartan Partamian, *The Foreign-language Authors Of The Diaspora*
Armen Urneshlian 411
Contemporary Armenian Authors Of Istambul, compiled by Garo Aprahamian, edited by Bebo Siminian

NECROLOGY

417

Azat Hambarian (1926-2003), Harutiun Kalayan (1908-2003), Arpag Mekhitarian (1911-2004), Leonardo Alishan (1951-2005), Levon Ghazanchyan (1946-2005), Arthur Beylerian (1925-2005), Sergey Abrahamian (1925-2005), Vardges Mikayelian (1924-2005), Valter Diloyan (1930-2005), Adriano Alpago Novello (1932-2005), Father Sahag Keshishian (1917-2005), Derenik Vardumian (1923-2005), Vardan Partamian (1931-2005), Yuri Mkertumian (1939-2005), Harutiun Felekian (1931-2005), Ninel Voskanian (1923-2005), Razmik Madoyan (1927-2005), Gevorg Djahukian (1920-2005)

HAIGAZIAN UNIVERSITY

A General Overview of the Public Activities of the Department of Armenian Studies at Haigazian University (1 January-31 December 2005) 449

NOTE TO CONTRIBUTORS 476

TABLE OF CONTENTS 481

ՀԱՅԿԱԶԵԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՆԴԷՍ

ՏՊԱՔԱՆԱԿ 300

Գին Լիբանան 30.000 Լ.Ոսկի
Արտասահման 20 Տոլար

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW
HAIGAZIAN UNIVERSITY
P.O.BOX 11-1748
BEIRUT-LEBANON
Email: review@haigazian.edu.lb

هايكازيان

مجلة الدراسات الارمنية

بيروت ٢٠٠٦